

«Ռուսաստանի Դաշնությունում մաքսային կարգավորման մասին» 2010 թվականի նոյեմբերի 27-ի թիվ

311-ԴՕ դաշնային օրենք

(2013 թվականի հուլիսի 23-ի խմբագրությամբ)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ԴԱՇՆԱՅԻՆ ՕՐԵՆՔ

Ընդունվել է
Պետական դոմայի
կողմից 2010
թվականի նոյեմբերի
19-ին

Հաստատվել է
Դաշնային խորհրդի
կողմից 2010
թվականի նոյեմբերի
24-ին

(2011 թվականի հունիսի 27-ի թիվ 162-ԴՕ, 2011 թվականի հուլիսի 11-ի թիվ 200-ԴՕ, 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 409-ԴՕ, 2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ԴՕ, 2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 48-ԴՕ, 2013 թվականի հունիսի 28-ի թիվ 134-ԴՕ, 2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185-ԴՕ, 2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 251-ԴՕ դաշնային օրենքների խմբագրությամբ)

Բաժին I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդված 1. Սույն Դաշնային օրենքի նպատակները եւ կարգավորման առարկան

1. Սույն Դաշնային օրենքի նպատակներն են՝

1) Ռուսաստանի Դաշնության կողմից մաքսային կարգավորման եւ մաքսային գործի բնագավառում՝ ԵվրԱզԷՍ–ի (այսուհետ՝ Մաքսային միություն) շրջանակներում Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի, Մաքսային միության մարմինների որոշումների կատարման ապահովումը.

2) Ռուսաստանի Դաշնության տնտեսական անվտանգության ապահովումը ապրանքների արտաքին առևտուր իրականացնելիս.

3) մաքսային գործի ոլորտում պետական կառավարման կատարելագործումը.

4) Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց, մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնություն ներմուծված եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանված ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքներ իրականացնող այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պահպանման ապահովումը.

5) արտաքին տնտեսական գործունեության եւ արտաքին առևտրային գործունեության, մաքսային գործի բնագավառում ենթակառուցվածքի զարգացման համար պայմանների ստեղծումը:

2. Սույն Դաշնային օրենքի կարգավորման առարկան է՝

1) Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման, մաքսային հսկողության ներքո Ռուսաստանի Դաշնության տարածքում

դրանց փոխադրման, Ռուսաստանի Դաշնության տարածքի եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Ռուսաստանի Դաշնության իրավազորության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքների միջեւ ապրանքների տեղափոխման, ժամանակավոր պահպանության, մաքսային հայտարարագրման, մաքսային ընթացակարգերին համապատասխան դրանց բացթողման ու օգտագործման, մաքսային հսկողության իրականացման, մաքսային վճարների գանձման ու վճարման հետ կապված հարաբերությունների կարգավորումը.

2) Ռուսաստանի Դաշնության պետական իշխանության մարմինների իրավասությունների որոշումը՝ ըստ սույն Դաշնային օրենքի իրավական կարգավորման առարկայի.

3) Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքների ու պարտականությունների որոշումը.

4) Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմինների (այսուհետ՝ մաքսային մարմիններ) գործունեության իրավական ու կազմակերպական հիմքերի սահմանումը.

5) մաքսային մարմինների եւ Ռուսաստանի Դաշնություն ներմուծված ու Ռուսաստանի Դաշնությունից արտահանված ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքներ իրականացնող այլ անձանց միջեւ իրավազոր հարաբերությունների կարգավորումը:

Հոդված 2. Մաքսային կարգավորումը եւ մաքսային գործը Ռուսաստանի Դաշնությունում

1. Ռուսաստանի Դաշնությունում մաքսային կարգավորումը՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, ենթադրում է Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործի կարգավորման կարգի ու կանոնների սահմանում: Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործը ենթադրում է մաքսասակագնային կարգավորման միջոցների իրականացումը, ինչպես նաեւ Ռուսաստանի

Դաշնությունն ապրանքներ ներմուծելիս եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքներ արտահանելիս կիրառվող արգելքների ու սահմանափակումների պահպանումն ապահովող միջոցների ու մեթոդների ամբողջություն:

2. Ռուսաստանի Դաշնությունում կիրառվում են մաքսասակագնային կարգավորման միջոցներ, Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով նախատեսված ապրանքների արտաքին առետրին վերաբերող եւ նշված պայմանագրերին, Մաքսային միության մարմինների ակտերին համապատասխան կիրառվող արգելքներ ու սահմանափակումներ (այսուհետ՝ արգելքներ ու սահմանափակումներ):

3. Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով, Մաքսային միության մարմինների ակտերով նախատեսված դեպքերում եւ կարգով Ռուսաստանի Դաշնությունը միակողմանիորեն կիրառում է մաքսասակագնային կարգավորման առանձին միջոցներ, արգելքներ ու սահմանափակումներ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

4. Ռուսաստանի Դաշնության կողմից արգելքների ու սահմանափակումների միակողմանի ներդրման, ինչպես նաեւ Մաքսային միության մեկ կամ մի քանի անդամ պետություններում կիրառվող միջոցներից տարբերվող՝ մաքսասակագնային կարգավորման այլ միջոցներ Ռուսաստանի Դաշնության կողմից կիրառվելու դեպքում կիրառվում են դրանց պահպանումն ապահովող այն միջոցներն ու մեթոդները, որոնք սահմանված են Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով եւ սույն Դաշնային օրենքով: Ռուսաստանի Դաշնության Նախագահի եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով կարող են սահմանվել գործադիր իշխանության այն դաշնային մարմինները, որոնք սահմանված միջոցների պահպանման նկատմամբ իրականացնում են հսկողության ու վերահսկողության գործառույթներ:

5. Ռուսաստանի Դաշնության կողմից միակողմանիորեն սահմանված արգելքների ու սահմանափակումների պահպանման համար անձանց կողմից պարտադիր կատարման ենթակա գործողությունները կարող են սահմանվել այդ արգելքներն ու սահմանափակումները սահմանող՝ Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերով:

Հողված 3. Մաքսային գործի ղեկավարումը Ռուսաստանի Դաշնությունում

1. Մաքսային գործի ընդհանուր ղեկավարումը Ռուսաստանի Դաշնությունում իրականացվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից: Մաքսային գործի բնագավառում խնդիրների անմիջական իրականացումն ապահովում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը:

2. Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն մաքսային գործի բնագավառում իրականացնում է պետական քաղաքականության ու նորմատիվ իրավական կարգավորման գործառույթներ եւ ապահովում է Ռուսաստանի Դաշնության տարածքում բոլոր մաքսային մարմինների կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության միասնական կիրառումը:

3. Ֆինանսների բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, իրականացնում է մաքսային վճարների եւ ապրանքների մաքսային արժեքի սահմանման բնագավառում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ իրավական կարգավորման գործառույթներ:

Հողված 4. Մաքսային գործի բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը

1. Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող պաշտոնապես հրապարակված պայմանագրերը եւ Մաքսային միության մարմինների որոշումները Ռուսաստանի Դաշնությունում գործում են անմիջականորեն, եթե դրանք դրանց կիրառման համար ներպետական ակտերի ընդունման մասին պահանջներ չեն ներառում: Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու Մաքսային միության մաքսային օրենսդրության

ակտերը Ռուսաստանի Դաշնությունում կիրառելու կարգը՝ սույն Դաշնային օրենքին համապատասխան:

3. Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործի բնագավառում հարաբերությունները կարգավորվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությունը կազմված է սույն Դաշնային օրենքից եւ դրան համապատասխան կիրառվող այլ դաշնային օրենքներից: Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով ասպրանքների ու տրանսպորտային միջոցների փաստացի հատման կարգը կարգավորվում է Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, իսկ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ չկարգավորվող դեպքերում՝ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

4. Եթե Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ հարկերին առնչվող մաքսային վճարների գանձման ու վճարման հարաբերությունների առնչությամբ, ապա մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը կիրառվում է հարկերի ու հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ չկարգավորված դեպքերում:

5. Մաքսային միության անդամ պետությունների արժույթը, Ռուսաստանի Դաշնության արժույթը, ներքին արժեթղթերը, արժութային արժեքները, ճանապարհային չեկերը Ռուսաստանի Դաշնություն ներմուծելու եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանելու կարգը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը, Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին, Ռուսաստանի Դաշնության արժութային օրենսդրությանը եւ սույն Դաշնային օրենքին համապատասխան:

6. Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործի բնագավառում իրավահարաբերությունները կարող են կարգավորվել նաեւ Ռուսաստանի Դաշնության Նախագահի հրամանագրերով:

7. Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործի բնագավառում դաշնային օրենքների, Ռուսաստանի Դաշնության Նախագահի հրամանագրերի հիման վրա եւ ի կատարումն դրանց՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն ընդունում է որոշումներ ու կանոնակարգեր

Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործի բնագավառում:

8. Գործադիր իշխանության դաշնային մարմինները սույն Դաշնային օրենքի կարգավորման առարկայի մասին նորմատիվ իրավական ակտեր են ընդունում միայն այն դեպքերում, որոնք ուղղակիորեն նախատեսված են դաշնային օրենքներով, Ռուսաստանի Դաշնության Նախագահի, Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով:

9. Գործադիր իշխանության դաշնային մարմինների նորմատիվ իրավական ակտերը, որոնք այդ մարմինների կողմից ընդունվել են սույն Դաշնային օրենքի կարգավորման առարկայի մասին, եւ որոնք շոշափում են ձեռնարկատիրական եւ տնտեսական այլ գործունեության բնագավառում անձանց իրավունքներն ու օրինական շահերը, կարող են բողոքարկվել արբիտրաժային դատարան՝ արբիտրաժային դատարաններում դատավարության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

10. Եթե Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված են սույն Դաշնային օրենքով նախատեսված կանոններից բացի այլ կանոններ, ապա կիրառվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությունը:

Հոդված 5. Սույն Դաշնային օրենքում օգտագործվող հիմնական տերմինները

1. Սույն Դաշնային օրենքում օգտագործվող հիմնական տերմիններն ունեն հետեւյալ իմաստները՝

1) ապրանքների ներմուծում Ռուսաստանի Դաշնություն՝ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Ռուսաստանի Դաշնության իրավազրոյության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքների սահմաններով ապրանքների փաստացի հատում, ինչի արդյունքում ապրանքները Մաքսային միության այլ անդամ պետություններից կամ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում չընդգրկված տարածքից ներս են բերվել Ռուսաստանի Դաշնության տարածք եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավազրոյության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքներ, ինչպես նաեւ նշված

ապրանքների հետ նախքան մաքսային մարմինների կողմից դրանց բացթողումը կատարվող բոլոր գործողությունները, երբ այդպիսի բացթողումը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) սույն Դաշնային օրենքով.

2) ներքին հարկեր՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում ապրանքաշրջանառության ժամանակ գանձվող ավելացված արժեքի հարկ եւ ակցիզներ.

3) ապրանքների արտահանում Ռուսաստանի Դաշնությունից՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Ռուսաստանի Դաշնության իրավազորության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքներից ցանկացած միջոցով ապրանքների փաստացի տեղափոխում Մաքսային միության այլ անդամ պետություններ կամ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում չընդգրկված տարածք, ինչպես նաեւ անձանց կողմից՝ ապրանքների այդպիսի փաստացի տեղափոխմանն ուղղված գործողությունների իրականացում՝ նախքան Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավազորության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքների սահմաններով ապրանքների փաստացի հատումը.

4) Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանում Մաքսային միության մաքսային տարածքից դուրս՝ ապրանքների արտահանում Ռուսաստանի Դաշնությունից, եթե ապրանքների նշանակման երկիրը, ապրանքների տեղափոխումն իրականացնող անձանց որոշմամբ, Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքն է.

5) ռուսաստանյան անձ՝ իրավաբանական անձ, որի գտնվելու վայրը Ռուսաստանի Դաշնությունում է եւ որն ստեղծվել է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, եւ (կամ) որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված եւ Ռուսաստանի Դաշնությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձ, եթե այլ բան չի բխում սույն Դաշնային օրենքից.

6) Դաշնային գանձապետարանի հաշիվ՝ դրամական մուտքերի հաշվառման եւ Ռուսաստանի Դաշնության բյուջետային համակարգի բյուջեների միջեւ դրանց բաշխման համար նախատեսված Դաշնային գանձապետարանի հաշիվ՝ Ռուսաստանի Դաշնության

բյուջետային օրենսդրությանը համապատասխան.

7) ապրանքներ՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ցանկացած գույք:

2. Սույն Դաշնային օրենքում մաքսային կարգավորման եւ մաքսային գործի բնագավառում տերմիններն օգտագործվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Սույն Դաշնային օրենքում մյուս բոլոր տերմիններն օգտագործվում են հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ, վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության այլ ակտերով սահմանված իմաստներով:

Հոդված 6. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի գործողությունը ժամանակի մեջ

1. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերը, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության Նախագահի հրամանագրերը, Ռուսաստանի Դաշնության Կառավարության որոշումները եւ կանոնակարգերը, սույն Դաշնային օրենքին համապատասխան ընդունված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինների նորմատիվ իրավական ակտերը (այսուհետ՝ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտեր) կիրառվում են դրանք ուժի մեջ մտնելու օրվանից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ եւ չեն ունենում հետադարձ ուժ՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով ուղղակիորեն սահմանված դեպքերի:

2. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի այն դրույթները, որոնք ունեն անձանց դրությունը բարելավող ազդեցություն, հետադարձ ուժ ունեն, եթե դա ուղղակիորեն նախատեսված է: Այլ դեպքերում մաքսային գործի

վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերը, ինչպես նաև մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերը կարող են ունենալ հետադարձ ուժ, եթե դա ուղղակիորեն նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ դաշնային օրենքներով:

3. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվանից հետո ոչ շուտ, քան 30 օրվա ընթացքում, եթե այլ բան սահմանված չէ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ: Մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտեր ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվանից հետո ոչ շուտ, քան 30 օրվա ընթացքում՝ բացառությամբ հետեւյալ դեպքերի՝

1) եթե Մաքսային միության մաքսային օրենսդրության ակտերով կամ սույն Դաշնային օրենքով սահմանված է մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության նշված իրավական ակտերն ուժի մեջ մտնելու հատուկ կարգ.

2) եթե մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության նշված իրավական ակտերով սահմանվում է փաստաթղթեր ու տեղեկություններ ներկայացնելու հետ կապված պահանջների, մաքսային եւ այլ պետական մարմինների կամ վարչական (ընթացակարգային) մյուս սահմանափակումների համար գործող կարգից առավել արտոնյալ կարգ:

Հոդված 7. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի, ինչպես նաև մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի գործողությունը տարածության մեջ

1. Մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերը, ինչպես նաև մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտեր գործում են Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում, Ռուսաստանի Դաշնության բացառիկ տնտեսական գոտում գտնվող տարածքներում եւ Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային շելֆում գտնվող՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան Ռուսաստանի Դաշնության իրավազրոյության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքներում:

2. Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով կարող է նախատեսվել մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի կիրառում Մաքսային միության անդամ պետության տարածքում՝ այն ապրանքների արտահանման դեպքում, որոնց ծագման երկիրը Ռուսաստանի Դաշնությունն է, կամ Մաքսային միության այդ անդամ պետության տարածքից դրանց վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները Մաքսային միության միասնական մաքսային տարածքից դուրս (սույն Դաշնային օրենքի նպատակներով այսուհետ՝ Մաքսային միության մաքսային տարածք) արտահանելու դեպքում:

3. Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով կարող է նախատեսվել մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի կիրառում՝ օտարերկրյա պետության տարածքում կամ օտարերկրյա պետության նորմատիվ իրավական ակտերի կիրառում Ռուսաստանի Դաշնության տարածքում տվյալ օտարերկրյա պետության մաքսային մարմինների հետ Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմինների կողմից համատեղ մաքսային հսկողություն իրականացնելիս:

Հոդված 8. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերին եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի ներկայացվող պահանջները

1. Մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի դրույթները պետք է ձեւակերպվեն այնպես, որ յուրաքանչյուր անձ ճշգրիտ կերպով իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաեւ այն, թե ինչ գործողություններ, երբ եւ ինչ կարգով պետք է իրականացնի ապրանքներ եւ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելիս եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանք արտահանելիս:

2. Մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտը ճանաչվում է սույն Դաշնային օրենքին չհամապատասխանող, եթե՝

1) այդ ակտն ընդունել է այն մարմինը, որը սույն Դաշնային օրենքին համապատասխան, չունի այդպիսի ակտ ընդունելու իրավունք, կամ այն ընդունվել է այդպիսի ակտերի ընդունման համար սահմանված կարգի խախտմամբ.

2) այդ ակտն անձանց զրկում է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով սահմանված իրավունքներից կամ սահմանափակում է այդ իրավունքները.

3) այդ ակտով փոփոխվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով սահմանված՝ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների մասնակիցների, այն անձանց գործողությունների հիմքերը, պայմանները, հաջորդականությունը կամ կարգը, որոնց պարտականությունները սահմանված են սույն Դաշնային օրենքով.

4) այդ ակտով փոփոխվում է սույն Դաշնային օրենքով սահմանված հասկացությունների բովանդակությունը, կամ դրանում այդ հասկացություններն օգտագործվում են սույն Դաշնային օրենքում կիրառվող իմաստներից տարբերվող իմաստներով:

3. Մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտի ճանաչումը՝ որպես սույն Դաշնային օրենքին չհամապատասխանող ակտ, իրականացվում է դատական կարգով:

4. Սույն Դաշնային օրենքի իրավական կարգավորման առարկայի վերաբերյալ՝ գործադիր իշխանության դաշնային մարմինների նորմատիվ եւ այլ իրավական ակտերի դրույթներ չեն կարող հակասել Մաքսային միության մաքսային օրենսդրության, մաքսային գործի բնագավառում դաշնային օրենքների եւ Ռուսաստանի Դաշնության Նախագահի կամ Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերի դրույթներին, սահմանել Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ, մաքսային գործի բնագավառում դաշնային օրենքներով եւ Ռուսաստանի Դաշնության Նախագահի կամ Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով չնախատեսված պահանջներ, պայմաններ եւ սահմանափակումներ:

5. Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել Մաքսային միության մաքսային օրենսդրության ակտերի, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ (կամ) մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի խախտման համար, եթե այդ խախտումը պայմանավորված է այդ

ակտերում առկա իրավական նորմերի ոչ հստակությամբ:

Գլուխ 2. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

§ 1. Մաքսային մարմինների համակարգը

Հոդված 9. Մաքսային մարմինները եւ Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների համակարգում դրանց տեղը: Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք

1. Մաքսային մարմինները կազմում են կենտրոնացված դաշնային միասնական համակարգ:

2. Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական միավորումները չեն կարող միջամտել մաքսային մարմինների գործունեությանն այդ մարմինների կողմից իրենց գործառույթների իրականացման ժամանակ:

3. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք են համարվում Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմինների աշխատողների ու դաշնային պետական քաղաքացիական ծառայողների պաշտոններ զբաղեցնող՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները:

Հոդված 10. Մաքսային մարմինների համակարգը

1. Մաքսային մարմիններ են համարվում՝

1) մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը,

2) տարածաշրջանային (ռեգիոնալ) մաքսային վարչությունները,

3) մաքսատները,

4) մաքսային կետերը:

2. Տարածաշրջանային (ռեգիոնալ) մաքսային վարչությունների, մաքսատների ու

մաքսային կետերի ստեղծումը, վերակազմակերպումը եւ լուծարումն իրականացվում են Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերում նշված կոնկրետ մաքսային մարմինների իրավասությունները՝ կապված կոնկրետ գործառույթների իրականացման, որոշակի մաքսային ձեւակերպումների կատարման հետ, ինչպես նաեւ այդ մաքսային մարմինների գործունեության տարածքը որոշվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

4. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն իրավունք ունի ստեղծելու մասնագիտացված մաքսային մարմիններ, ինչպես նաեւ կառուցվածքային ստորաբաժանումներ (դեպարտամենտներ, վարչություններ), որոնց իրավասությունը սահմանափակվում է մաքսային մարմիններին վերապահված մի քանի գործառույթների կատարման կամ ապրանքների որոշակի տեսակների հետ կապված մաքսային ձեւակերպումների իրականացման առանձին լիազորություններով:

5. Տարածաշրջանային (ռեգիոնալ) մաքսային վարչությունները, մաքսատները եւ մաքսային կետերը գործում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից հաստատվող ընդհանուր կամ առանձին դրույթների հիման վրա: Մաքսային կետերը կարող են չունենալ իրավաբանական անձի կարգավիճակ:

6. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն իր ներկայացուցչություններն ունի օտարերկրյա պետություններում, որոնք ստեղծվում են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 11. Մաքսային մարմինների գործունեության սկզբունքները

Մաքսային մարմինների գործունեությունը հիմնված է հետեւյալ սկզբունքների վրա՝

- 1) օրինականություն,
- 2) օրենքի առջեւ անձանց հավասարություն, հարգանք նրանց իրավունքների ու ազատությունների նկատմամբ եւ դրանց պահպանում,
- 3) մաքսային մարմինների եւ կենտրոնացված ղեկավարման համակարգերի

միասնականություն,

4) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց պրոֆեսիոնալիզմ եւ կոմպետենտություն,

5) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների հստակություն, կանխատեսելիություն, հրապարակայնություն, մաքսային հսկողություն անցկացնելիս եւ մաքսային ձեւակերպումներ իրականացնելիս մաքսային մարմինների պահանջների ըմբռնելիություն, արտաքին տնտեսական գործունեության իրականացման կանոնների, Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մասին տեղեկատվության հասանելիություն,

6) իրավակիրառ պրակտիկայի միօրինակություն՝ մաքսային հսկողություն անցկացնելիս եւ մաքսային ձեւակերպումներ իրականացնելիս,

7) արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներից, մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանցից, փոխադրողներից եւ այլ անձանցից չափից ավելի ու անհիմն ծախսեր պահանջելը թույլ չտալը մաքսային գործի բնագավառում լիազորություններ իրականացնելիս.

8) մաքսային հսկողության կատարելագործում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, մաքսային վարչարարության առաջադեմ մեթոդների ներդրում՝ հիմք ընդունելով նաեւ մաքսային գործի բնագավառում համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային ստանդարտները, Ռուսաստանի Դաշնության առետրային գործընկերներ հանդիսացող օտարերկրյա պետություններում մաքսային գործի կառավարման փորձը:

Հոդված 12. Մաքսային մարմինների գործառույթները (պարտականությունները)

1. Մաքսային մարմինները կատարում են հետեւյալ հիմնական գործառույթները (պարտականությունները)՝

1) անցկացնում են մաքսային հսկողություն, կատարելագործում են մաքսային ձեւակերպումների իրականացման ու մաքսային հսկողության անցկացման մեթոդները, ստեղծում են նպաստավոր պայմաններ՝ Ռուսաստանի Դաշնություն ապրանքներ ներմուծելիս

եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքներ արտահանելիս ապրանքաշրջանառությունն արագացնելու համար.

2) օժանդակում են Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների միջև արտաքին տնտեսական կապերի զարգացմանը, ապրանքաշրջանառության արագացմանը.

3) կատարում են արտաքին առևտրի մաքսային վիճակագրություն եւ հատուկ մաքսային վիճակագրություն.

4) գանձում են մաքսատուրքեր, հարկեր, հակազնագցման, հատուկ եւ փոխհատուցման տուրքեր, մաքսավճարներ, վերահսկում են հաշվարկման ճշտությունը եւ նշված տուրքերի, հարկերի ու հավաքագրումների ժամանակին վճարումը, ձեռնարկում են դրանց հարկադիր բռնագանձման համար միջոցներ.

5) Ռուսաստանի Դաշնության տարածքում ապահովում են ապրանքներն ու միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխելու կարգի պահպանումը.

6) ապահովում են, եթե այլ բան սահմանված չէ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին ու Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան սահմանված՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների հետ կապված արգելքների ու սահմանափակումների պահպանումը.

7) իրենց իրավասության սահմաններում ապահովում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությունը.

8) բացահայտում, կանխարգելում եւ կասեցնում են այն հանցագործություններն ու վարչական իրավախախտումները, որոնք Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ վերապահված են մաքսային մարմինների իրավասությանը, ինչպես նաեւ դրանց հետ կապված այլ հանցագործություններ ու իրավախախտումներ, կատարում են անհետաձգելի քննչական գործողություններ եւ իրականացնում են նախնական քննություն նշված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի հետաքննության ձեռով, մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) գործերով

իրականացնում են վարչական վարույթ, աջակցություն են ցուցաբերում կոռուպցիայի եւ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի հարցում, հակազդում են մտավոր սեփականության օբյեկտների, թմրանյութերի, հոգեմետ նյութերի, զենքի ու զինամթերքի, մշակութային արժեքների եւ այլ առարկաների անօրինական շրջանառությանը, որոնք տեղափոխվում են Մաքսային միության մաքսային սահմանով եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով.

9) աջակցում են պետական անվտանգության ապահովման, հասարակական կարգի պահպանության, բնակչության բարոյականության, մարդու, կենդանիների ու բույսերի կյանքի ու առողջության պահպանման, շրջակա միջավայրի պաշտպանության, Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների սպառողների շահերի պաշտպանության համար ձեռնարկվող միջոցների իրականացմանը.

10) իրենց իրավասության շրջանակում վերահսկողություն են իրականացում Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված արժույթային գործարքների նկատմամբ՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին, Ռուսաստանի Դաշնության արժույթային օրենսդրությանը եւ դրանց համապատասխան՝ արժույթային կարգավորման հարցերով մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան.

11) աջակցում են Ռուսաստանի Դաշնության արտահանման ու տարանցման ներուժի զարգացմանը, արտահանման համակարգի կատարելագործմանը, մաքսային կարգավորման միջոցների օգնությամբ պաշտպանում են հայրենական ապրանք արտադրողների շահերը, մշտապես կատարելագործում են մաքսային հսկողության համակարգը, նպաստում են մաքսային մարմինների ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը.

12) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ապահովում են Մաքսային միության մաքսային սահմանով Մաքսային միության անդամ պետությունների արժույթի, արժեթղթերի եւ (կամ) արժույթային արժեքների, ճանապարհային չեկերի տեղափոխման նկատմամբ հսկողության իրականացման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդեցության միջոցներ,

13) շահագրգիռ անձանց պարզաբանում են իրենց իրավունքներն ու պարտականությունները մաքսային իրավախախտումների բնագավառում, իրենց լիազորությունների շրջանակներում աջակցություն են ցուցաբերում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին ապրանքների եւ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված՝ մաքսային ձեւակերպումներ իրականացնելիս իրենց իրավունքներն իրացնելու հարցում:

14) ապահովում են Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործին առնչվող միջազգային պարտավորությունների կատարումը, համագործակցում են օտարերկրյա պետությունների մաքսային եւ այլ իրավասու մարմինների, մաքսային գործի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ:

15) մաքսային գործի բնագավառում իրականացնում են տեղեկատվական ու խորհրդատվական գործառույթներ, պետական մարմիններին, կազմակերպություններին ու քաղաքացիներին տրամադրում են տեղեկություններ մաքսային գործին առնչվող հարցերի վերաբերյալ:

16) մաքսային գործի բնագավառում կատարում են գիտահետազոտական եւ փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքներ:

2. Դաշնային օրենքներով մաքսային մարմիններին կարող են վերապահվել այլ գործառույթներ (պարտականություններ):

Հոդված 13. Մաքսային մարմինների դրոշ, նավադրոշը եւ խորհրդանշանը

1. Մաքսային մարմիններն ունեն դրոշ եւ խորհրդանշան: Մաքսային մարմինների՝ ծովով նավարկող նավերը, ներքին նավարկության նավերը եւ խառը (գետ-ծով) նավարկության նավերն ունեն նավադրոշ: Մաքսային մարմինների ավտոտրանսպորտային միջոցների եւ օդանավերի վրա տեղադրվում է խորհրդանշան: Մաքսային մարմինների դրոշի ու խորհրդանշանի, ինչպես նաեւ մաքսային մարմինների նավերի նավադրոշի նկարագրությունն ու պատկերը հաստատվում են Ռուսաստանի Դաշնության Նախագահի կողմից:

2. Ռուսաստանի Դաշնությունում արգելվում է օգտագործել մաքսային խորհրդանշանները, ինչպես նաեւ մաքսային մարմինների անվանումներին նման նշագրումները ցուցանակների,

ձեռաթղթերի վրա, հաշիվներում ու այլ փաստաթղթերում, հայտարարություններում ու գովազդում, ապրանքների եւ դրանց փաթեթվածքների վրա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի կողմից առետրային գործունեության իրականացման ժամանակ՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքի 34-րդ հոդվածում նշված իրավաբանական անձանց եւ սույն Դաշնային օրենքի 5-րդ հոդվածում նշված՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց: Առետրային գործունեություն իրականացնող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին արգելվում է օգտագործել «մաքսային» բառը եւ այդ բառով կազմված բառակապակցությունները ցուցանակների, ձեռաթղթերի վրա, հայտարարություններում ու գովազդում, ապրանքների ու դրանց փաթեթվածքների վրա:

Հոդված 14. Մաքսային մարմինների գտնվելու վայրերը

1. Մաքսային մարմինները գտնվում են Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով անցման կետերում (այսուհետ՝ անցման կետ): Մաքսային մարմինների գտնվելու մյուս վայրերը որոշվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ ելնելով ուղեւորների ու ապրանքների հոսքերի ծավալից, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների արտաքին տնտեսական կապերի զարգացման ինտենսիվության աստիճանից, տրանսպորտային միջանցքների եւ տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման մակարդակից, արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների ու տրանսպորտային կազմակերպությունների պահանջներից:

2. Մաքսային մարմինները գտնվում են դաշնային սեփականության տակ գտնվող շինություններում: Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց, արտահանման եւ ներմուծման շրջանակներում ապրանքների կանոնավոր մատակարարում իրականացնող՝ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների, տրանսպորտային եւ բեռնառաքման կազմակերպությունների ու դաշնային փոստային կապի կազմակերպությունների նախաձեռնությամբ՝ մաքսային կետերն ու մաքսատների կառուցվածքային ստորաբաժանումները կարող են գտնվել նշված անձանց պատկանող շինություններում:

§ 2. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց պարտականությունները, իրավունքներն ու պատասխանատվությունը

Հոդված 15. Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջների կատարումը մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց կողմից

1. Մաքսային մարմինները եւ դրանց պաշտոնատար անձինք ընդունում են որոշումներ, կատարում են գործողություններ իրենց իրավասությունների սահմաններում եւ Մաքսային միության մաքսային օրենսդրությանն ու Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց կողմից որոշումների ընդունման, գործողությունների (անգործության) կատարման ժամանակ Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջների կատարումն ապահովվում է մաքսային մարմինների գործունեության դեմ բողոքարկման իրավունքի, դրա նկատմամբ դատախազական հսկողության, ինչպես նաեւ գերատեսչական վերահսկողության միջոցով, այդ թվում՝ վերադաս մաքսային մարմինների եւ մաքսային մարմինների վերադաս պաշտոնատար անձանց կողմից հսկողության միջոցով:

Հոդված 16. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց պարտականությունները

1. Ծառայողական պարտականություններն իրականացնելիս մաքսային մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) պահպանել քաղաքացիների, արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների եւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքներն ու օրինական շահերը.

2) պահպանել ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման մակարդակը.

3) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ կատարել դաշնային

պետական քաղաքացիական ծառայողի կամ մաքսային մարմնի աշխատողի համար սահմանված այլ պարտականություններ:

2. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի ծառայողական պարտականությունների կատարումն ապահովվում է նրա պաշտոնի անձնագրին համապատասխան: Պաշտոնի անձնագիրը հաստատվում է Ռուսաստանի Դաշնության պետական ծառայության վերաբերյալ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի կատարելու իրեն տրված այնպիսի հանձնարարությունը (հրամանը, կարգադրությունը), որը չի համապատասխանում Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը: Այդպիսի հանձնարարություն ստանալու դեպքում նշված պաշտոնատար անձը պետք է ներկայացնի գրավոր հիմնավորում այդ հանձնարարության (հրամանի, կարգադրության)՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրության այն դրույթներին անհամապատասխանության մասին, որոնք կարող են խախտվել իր կողմից դրա կատարման դեպքում եւ ղեկավարից ստանալ այդ հանձնարարության (հրամանի, կարգադրության) գրավոր հաստատումը: Ղեկավարի կողմից այդ հանձնարարության գրավոր հաստատումն ստանալու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է հրաժարվել այն կատարելուց:

4. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը չհամապատասխանող հանձնարարության (հրամանի, կարգադրության) կատարման դեպքում պաշտոնատար անձը եւ այդ հանձնարարությունը տված ղեկավարը կրում են կարգապահական, քաղաքացիաիրավական, վարչական եւ քրեական պատասխանատվություն՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 17. Մաքսային մարմինների աշխատանքային ժամերը

1. Մաքսային մարմնի աշխատանքային ժամերը սահմանվում են մաքսային մարմնի ղեկավարի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

2. Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից

ապրանքների արտահանման վայրերում մաքսային մարմինների աշխատանքային ժամերը պետք է համապատասխանեն այդ վայրերում հսկողություն իրականացնող պետական մարմինների եւ ծառայությունների աշխատանքային ժամերին: Մաքսային ձեւակերպումների իրականացման այլ վայրերում մաքսային մարմինների աշխատանքային ժամերը սահմանվում են՝ հաշվի առնելով տրանսպորտային կազմակերպությունների, արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների պահանջները: Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանման վայրերում այն մաքսային մարմինների աշխատանքային ժամերը, որոնց գտնվելու վայրերը համատեղված են սահմանակից պետությունների անցման կետերի հետ, հնարավորության սահմաններում պետք է համընկնեն այդ սահմանակից պետությունների մաքսային մարմինների աշխատանքային ժամերի հետ:

3. Շահագրգիռ անձի հիմնավորված պահանջի հիման վրա եւ մաքսային մարմինների մոտ հնարավորության առկայության դեպքում մաքսային ձեւակերպումները կարող են իրականացվել մաքսային մարմնի ոչ աշխատանքային ժամերին: Մաքսային ձեւակերպումները ոչ աշխատանքային ժամերին իրականացնելու մաքսային մարմնի մերժումը պետք է լինի հիմնավորված: Շահագրգիռ անձն իրավունք ունի բողոքարկելու մաքսային ձեւակերպումները ոչ աշխատանքային ժամերին իրականացնելու մաքսային մարմնի մերժումը:

Հոդված 18. Մաքսային մարմինների աշխատանքի գնահատումը

1. Մաքսային մարմինների աշխատանքի գնահատման հիմնական չափորոշիչներն են՝

1) Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանման ժամանակ մաքսային ձեւակերպումների իրականացման արագությունը, ինչպես նաեւ՝ մաքսային ձեւակերպումներ իրականացնելիս շահագրգիռ անձանց ծախսերի կրճատումը.

2) մաքսային վճարները ժամանակին եւ ամբողջությամբ մուտքագրելը.

3) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների դեմ հակազդեցության արդյունավետությունը:

2. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, հիմք ընդունելով սույն հոդվածի 1-ին

մասում նշված՝ մաքսային մարմինների աշխատանքի գնահատման հիմնական չափորոշիչները, սահմանում է ցուցանիշների համակարգը, դրանց դիտանցման կարգն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև այդ դիտանցմանը սույն Դաշնային օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձանց մասնակցության կարգը:

Հոդված 19. Մաքսային մարմինների իրավունքները

1. Իրենց վերապահված գործառույթների կատարման համար մաքսային մարմիններն ունեն հետևյալ իրավունքները՝

1) ձեռնարկում են միջոցներ՝ նախատեսված Մաքսային միության մաքսային օրենսդրության ակտերով, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրության այլ ակտերով, որոնց դրույթների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին՝ անձանց կողմից այդ ակտերի դրույթների պահպանումն ապահովելու նպատակով.

2) պահանջում են փաստաթղթեր, տեղեկություններ, որոնք ներկայացնելու պահանջը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրության, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության այլ ակտերի դրույթներով, որոնց պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին.

3) ստուգում են մաքսային ձեակերպումներին մասնակցող քաղաքացիների ու պաշտոնատար անձանց անձը հաստատող փաստաթղթերը.

4) ֆիզիկական ու իրավաբանական անձանցից պահանջում են մաքսային գործի բնագավառում որոշակի գործողությունների կատարման կամ որոշակի գործունեության իրականացման լիազորությունների հաստատում.

5) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ իրականացնում են օպերատիվ հետախուզական գործունեություն՝ այնպիսի հանցագործությունների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման ու բացահայտման նպատակներով, որոնց նկատմամբ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ անհետաձգելի քննչական գործողություններն ու հետաքննությունը պետք է վարեն մաքսային

մարմինները, դրանք նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերման ու հաստատման, ինչպես նաեւ սեփական անվտանգությունն ապահովելու նպատակներով.

6) կատարում են անհետաձգելի քննչական գործողություններ եւ իրականացնում են հետաքննություն իրենց իրավասության շրջանակներում եւ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) անձանց ենթարկում են վարչական պատասխանատվության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան.

8) անհետաձգելի դեպքերում օգտագործում են կազմակերպություններին կամ հասարակական միավորումներին պատկանող կապի միջոցներ կամ տրանսպորտային միջոցներ (բացառությամբ օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների, հյուպատոսական եւ այլ հիմնարկների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների կապի միջոցների եւ տրանսպորտային միջոցների) այնպիսի հանցագործությունների կանխարգելման համար, որոնց քրեական գործերով նախնական քննությունը քրեական դատավարության օրենսդրությամբ վերապահված է մաքսային մարմինների իրավասությանը, այդ հանցագործությունները կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդման ու ձերբակալման համար: Այդպիսի դեպքերում կապի միջոցներ կամ տրանսպորտային միջոցներ տիրապետողների պահանջի հիման վրա մաքսային մարմինները փոխհատուցում են կապի միջոցներ կամ տրանսպորտային միջոցներ տիրապետողների կրած գույքային վնասը դաշնային բյուջեի միջոցների հաշվին՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով.

9) ձերբակալում եւ մաքսային մարմնի ծառայողական շինություններ կամ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմիններ են տեղափոխում մաքսային գործի բնագավառում հանցագործություններ կատարելու մեջ կասկածվող, հանցագործություններ կամ վարչական իրավախախտումներ (մաքսային կանոնների խախտումներ) կատարած կամ կատարող անձանց՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան.

10) իրականացնում են Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանման, փոխադրումների իրականացման, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների պահպանության, դրանց հետ բեռնային եւ այլ

գործողությունների հետ կապված փաստերի ու դեպքերի փաստաթղթավորում, տեսագրում եւ ձայնագրում, կինոնկարահանում եւ լուսանկարահանում.

11) պետական մարմիններից, կազմակերպություններից եւ ֆիզիկական անձանցից ստանում են իրենց գործառույթների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ՝ սույն Դաշնային օրենքին համապատասխան.

12) դատարաններ կամ արբիտրաժային դատարաններ են ներկայացնում հայցեր եւ դիմումներ՝

ա) մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, տոկոսների եւ տուժանքների պարտադիր գանձման մասին,

բ) մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների հաշվին ապրանքների նկատմամբ բռնագանձում տարածելու մասին,

գ) գույքը տիրազուրկ ճանաչելու մասին,

դ) Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության այլ ակտերով նախատեսված այլ դեպքերում.

13) մշակում, ստեղծում եւ գործարկում են տեղեկատվական համակարգեր, կապի համակարգեր եւ տվյալների փոխանակման համակարգեր, մաքսային հսկողության տեխնիկական միջոցներ, ինչպես նաեւ տեղեկատվության պաշտպանության միջոցներ՝ ներառյալ գաղտնագրային պաշտպանության միջոցները՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան.

14) իրացնում են սույն Դաշնային օրենքով եւ դաշնային այլ օրենքներով նախատեսված այլ իրավունքներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մաքսային մարմինների իրավունքները կարող են օգտագործվել բացառապես մաքսային մարմնի կողմից մաքսային գործի բնագավառում գործառույթներ իրականացնելիս: Մաքսային մարմիններին այլ բնագավառներում հսկողական կամ վերահսկողական գործառույթներ վերապահելու դեպքում՝ նշված գործառույթներն իրականացնելու համար՝ մաքսային մարմինների իրավասությունները

սահմանվում են այն դաշնային օրենքով, որին համապատասխան մաքսային մարմիններին վերապահվում են վերահսկողական կամ հսկողական այլ գործառույթներ:

Հոդված 20. Մաքսային մարմինների իրավունքները մաքսային մարմինների նավերի օգտագործմամբ մաքսային հսկողություն իրականացնելիս

1. Մաքսային մարմինների նավերի ու օդանավերի օգտագործմամբ մաքսային հսկողություն իրականացնելիս այդ մարմիններն իրավունք ունեն՝

1) կանգնեցնելու տրանսպորտային միջոցը եւ կատարելու դրա մաքսային զննում, եթե հայտնաբերվում են փաստեր այն մասին, որ տրանսպորտային միջոցում անօրինական կերպով տեղափոխվում են մաքսային հսկողության ենթակա ապրանքներ.

2) ձերբակալելու տրանսպորտային միջոցում գտնվող՝ այնպիսի հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց, որոնց նկատմամբ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ անհետաձգելի քննչական գործողություններն ու հետաքննությունը պետք է վարեն մաքսային մարմինները, եթե այլ բան նախատեսված չէ Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով.

3) Ռուսաստանի Դաշնության տարածքային ծովի սահմաններից դուրս հետապնդելու եւ կալանելու՝ առանց մաքսային մարմինների թույլտվության Ռուսաստանի Դաշնության տարածքից դուրս եկած նավերը Ռուսաստանի Դաշնության հարակից գոտում՝ նախքան դրանք մուտք կգործեն օտարերկրյա պետության տարածքային ծով, եթե հետապնդումն սկսվել է Ռուսաստանի Դաշնության ներքին ջրերում, տարածքային ծովում այնպիսի հեռավորությունից կանգառի մասին լսելի կամ տեսանելի ազդանշան տալուց հետո, որը հնարավոր է տեսնել կամ լսել, եւ եթե այդ հետապնդումն իրականացվել է անընդմեջ.

4) մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների մասին վկայող փաստերի հայտնաբերման դեպքում (մաքսային կանոնների խախտումներ) (այսուհետ՝ մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտում) կալանելու տրանսպորտային միջոցները՝ դրանց առգրավման կամ դրանց վրա արգելանք դնելու համար՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան.

5) Մաքսային միության Մաքսային օրենսգրքով նախատեսված դեպքերում իրականացնել տրանսպորտային միջոցների ուղեկցում՝ դրանց մեջ տեղավորելով նաեւ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց:

2. Մաքսային մարմինների նավերի ու օդանավերի անձնակազմին իրավունք է տրվում՝

1) անհատույց օգտագործելու Ռուսաստանի Դաշնության ջրային եւ օդային տարածքները, ծովի ու գետի նավահանգիստների ջրատարածությունները, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվող օդանավակայանները, աերոդրոմները (վայրէջքի հրապարակները)՝ անկախ դրանց պատկանելությունից եւ նշանակությունից.

2) անհատույց օգտվելու նավահանգիստ մուտքի եւ նավահանգստից ելքի արտոնյալ իրավունքից՝ գործադիր իշխանության լիազորված դաշնային մարմինների հետ համաձայնեցված կարգով.

3) անհատույց ստանալու նավավարական, հիդրոօդերեուֆաբանական, հիդրոգրաֆիկական եւ այլ տեղեկություններ.

4) անհատույց ապահովելու թռիչքներ ու նավավարություններ:

Հոդված 21. Մաքսային մարմինների իրավունքները մաքսային հսկողության տակ գտնվող՝ ապրանքներ փոխադրող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների նկատմամբ

1. Մաքսային մարմիններն իրավունք ունեն կանգնեցնելու ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, այդ թվում՝ ապրանքների միջազգային փոխադրումներ չիրականացնող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, եթե նշված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով փոխադրվում են մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ՝ նպատակ ունենալով ապրանքների ու դրանց առնչվող փաստաթղթերի ստուգման միջոցով ստուգելու Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության դրույթների պահպանումը: Մաքսային մարմիններն ինքնուրույն կարող են կանգնեցնել նշված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները բացառապես մաքսային հսկողության գոտիներում, որոնք ստեղծված են Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնությամբ: Այլ վայրերում

այդպիսի ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները կարող են կանգնեցվել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում լիազորված ներքին գործերի մարմինների կողմից՝ մաքսային մարմինների հետ համագործակցությամբ: Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը վարող անձը պարտավոր է ապրանքները, դրանց առնչվող փաստաթղթերը եւ նշված տրանսպորտային միջոցը ներկայացնել մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձին՝ մաքսային հսկողություն անցկացնելու համար:

2. Այն դեպքերում, երբ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան, կանգնեցվում են մաքսային հսկողության գոտիներից դուրս, մաքսային մարմինների կողմից իրականացվող ապրանքների եւ դրանց առնչվող փաստաթղթերի ստուգման ու ստուգման արդյունքների արձանագրման ժամանակը չի կարող գերազանցել երկու ժամը: Ապրանքների ու դրանց առնչվող փաստաթղթերի ստուգման մասին կազմվում է ակտ՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված ձեւով, որի մեկ օրինակը պետք է հանձնվի փոխադրողին: Նշված տրանսպորտային միջոցի հարկադիր տեղավորումը ժամանակավոր պահպանության պահեստի տարածքում կամ մաքսային հսկողության մշտական գոտի հանդիսացող այլ վայրում թույլատրվում է միայն վարչական իրավախախտման առնչությամբ գործ հարուցելու դեպքում, որի մասին համապատասխան որոշման կամ արձանագրության պատճենը հանձնվում է փոխադրողին կամ տվյալ տրանսպորտային միջոցը վարող անձին: Ընդ որում, այդպիսի տրանսպորտային միջոցը կարող է գտնվել ժամանակավոր պահպանության պահեստի տարածքում կամ մաքսային հսկողության մշտական գոտի հանդիսացող այլ վայրում դրա բեռնաթափման համար անհրաժեշտ ժամանակահատվածի ընթացքում՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ տրանսպորտային միջոցը ենթակա է առգրավման կամ արգելանքի տակ վերցնելու՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը կամ քրեական դատավարության վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 22. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց պահանջների պարտադիր կատարումը

1. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց օրինական պահանջները բոլոր անձանց կողմից ենթակա են պարտադիր կատարման:

2. Մաքսային ձեռակերպումներ իրականացնելիս եւ մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից անձանց ներկայացված պահանջները չեն կարող խոչընդոտ լինել Ռուսաստանի Դաշնություն ապրանքները ներմուծելու, Ռուսաստանի Դաշնությունից ապրանքներն արտահանելու, դրանք բաց թողնելու, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահպանումն ապահովելու համար առավել, քան նվազագույն չափով անհրաժեշտ է՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելու համար:

3. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց օրինական պահանջները չկատարելը հանգեցնում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության:

Հոդված 23. Մաքսային մարմինների համագործակցությունը պետական այլ մարմինների հետ

1. Մաքսային մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են ինքնուրույն եւ պետական այլ մարմինների հետ համագործակցությամբ:

2. Սույն Դաշնային օրենքի եւ դաշնային այլ օրենքների համաձայն՝ մաքսային մարմիններն իրավունք ունեն թույլ տալու, որ պետական մյուս մարմիններն իրենց հսկողության ներքո կատարեն իրենց իրավասությանը վերապահված առանձին գործողություններ: Առանձին դեպքերում Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ՝ սույն Դաշնային օրենքին համապատասխան մաքսային մարմինների իրավասությանը վերապահված առանձին գործառույթների կատարումը կարող է վերապահվել գործադիր իշխանության դաշնային այլ մարմինների:

3. Մաքսային մարմինների կողմից հանցագործության եւ (կամ) վարչական իրավախախտումների մասին վկայող փաստերի հայտնաբերման դեպքում, որոնց գործերով վարույթը Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան վերապահված է պետական այլ մարմինների իրավասությանը, մաքսային մարմինները պարտավոր են դրանց մասին տեղեկություններն անհապաղ տրամադրել համապատասխան պետական

մարմիններին:

Հոդված 24. Մաքսային մարմինների գործունեության գերատեսչական վերահսկողությունը

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Դաշնային օրենքով եւ դաշնային այլ օրենքներով, վերադաս մաքսային մարմինը կամ մաքսային մարմնի վերադաս պաշտոնատար անձը ցանկացած ժամանակ իրավունք ունի գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելու կամ փոփոխելու Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող՝ ստորադաս մաքսային մարմնի կամ մաքսային գործի բնագավառում մաքսային մարմնի ստորադաս պաշտոնատար անձի որոշումը, ինչպես նաեւ ձեռնարկելու Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված միջոցներ՝ ստորադաս մաքսային մարմինների կամ մաքսային գործի բնագավառում մաքսային մարմինների ստորադաս պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) նկատմամբ:

2. Այն դեպքում, երբ ստորադաս մաքսային մարմնի կամ մաքսային գործի բնագավառում մաքսային մարմնի ստորադաս պաշտոնատար անձի որոշումը գերատեսչական վերահսկողության կարգով չեղյալ ճանաչելուց (փոփոխելուց) հետո պահանջվում է մաքսային գործի բնագավառում նոր որոշման ընդունում, այդպիսի որոշումն ընդունվում է լիազոր մաքսային մարմնի կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան մաքսային հսկողության անցկացման համար սահմանված ժամկետներում:

Հոդված 25. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

1. Ոչ իրավաչափ որոշումների, գործողությունների (անգործության) համար մաքսային մարմինների պաշտոնատար անձինք կրում են կարգապահական, վարչական, քրեական եւ քաղաքացիաիրավական պատասխանատվություն՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը

համապատասխան:

2. Իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելիս մաքսային մարմինների պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ որոշումների, գործողությունների (անգործության) հետեւանքով անձանց եւ նրանց գույքին հասցված վնասը ենթակա է փոխհատուցման՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց իրավաչափ գործողությունների արդյունքում անձանց հասցված վնասը փոխհատուցման ենթակա չէ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Դաշնային օրենքով եւ այլ դաշնային օրենքներով:

§ 3. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի կիրառումը եւ ծառայողական շների օգտագործումը

Հոդված 26. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի կիրառման եւ ծառայողական շների օգտագործման պայմանները

1. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն կիրառել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք եւ օգտագործել ծառայողական շներ սույն Դաշնային օրենքով նախատեսված կարգով:

2. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի կիրառմանը պետք է նախորդի դրանք կիրառելու մասին հստակ արտահայտված նախազգուշացում եւ զենքի գործադրման դեպքում պետք է կատարվեն նախազգուշական կրակոցներ: Միեւնույն ժամանակ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) տրամադրել բավարար ժամանակ իրենց օրինական պահանջները կատարելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի կիրառման ուշացումը կարող է առաջացնել անմիջական վտանգ իրենց կյանքի եւ առողջության համար, կարող է հանգեցնել այլ ծանր հետեւանքների, ինչպես նաեւ անակնկալ կամ զինված հարձակումների դեպքում, ռազմական տեխնիկայի, նավերի եւ տրանսպորտային միջոցների օգտագործմամբ հարձակման դեպքում, կամ այլ հանգամանքներում, երբ ստեղծված իրավիճակում նախազգուշացումը անտեղի է կամ անհնարին,

2) մարմնական վնասվածք ստացած անձանց ապահովել առաջին բուժօգնություն եւ անհապաղ տեղեկացնել կատարվածի մասին մաքսային մարմնի ղեկավարին, որը տեղեկացնում է այդ մասին դատախազին 24 ժամից ոչ ուշ ժամանակահատվածում:

3. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի կիրառման դեպքում, կախված իրավախախտման վտանգավորության աստիճանից, ինչպես նաեւ դիմադրության ուժից ելնելով, մաքսային մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են առաջնորդվել նրանով, որ վտանգի վերացման ժամանակ հասցված վնասը լինի նվազագույն:

4. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի կիրառման, ծառայողական շների

օգտագործման դեպքում սահմանված կարգը խախտելիս՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

Հոդված 27. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ֆիզիկական ուժի կիրառումը

1. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն կիրառել ֆիզիկական ուժ, այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ, միայն այն դեպքերում, երբ առանց բռնությունների միջոցները չեն կարող ապահովել մաքսային մարմինների վրա դրված պարտականությունների կատարումը:

2. Ֆիզիկական ուժը կիրառվում է՝

1) իրավախախտման կանխարգելման համար,

2) իրավախախտին ձերբակալելու համար,

3) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց օրինական պահանջներին դիմադրություն ցույց տալը հաղթահարելու համար,

4) մաքսային հսկողության տակ գտնվող շինություններ, տարածք կամ ապրանքների գտնվելու վայր մուտք գործելը արգելելու համար եւ (կամ) արգելելու համար այն ապրանքների գտնվելու վայր մուտքը, որոնց նկատմամբ իրականացվում է մաքսային հսկողություն:

Հոդված 28. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից հատուկ միջոցների կիրառումը

1. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն կիրառել հատուկ միջոցներ հետեւյալ դեպքերում՝

1) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց վրա հարձակման դիմագրավում,

2) մաքսային մարմիններին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող շենքերի, շինությունների կամ տրանսպորտային միջոցների, մաքսային հսկողության տակ գտնվող

ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը դիմագրավելու, ինչպես նաեւ նշված օբյեկտները ազատագրելու համար՝ դրանց զավթման դեպքում,

3) իրավախախտին ձերբակալելու, մաքսային մարմնի ծառայողական տարածք կամ ներքին գործերի մարմնի տարածք նրանց տեղափոխելու համար, եթե նման իրավախախտները ցուցաբերում են անհնազանդություն կամ դիմադրություն, կամ կարող են վնաս հասցնել շրջապատին կամ իրենք իրենց,

4) մաքսային մարմնի պաշտոնատար անձին ցույց տրվող ֆիզիկական դիմադրության կանխարգելում,

5) տրանսպորտային միջոցները կանգնեցնելու համար, եթե դրա վարորդը չի կատարել մաքսային մարմնի պաշտոնատար անձի պահանջները՝ մաքսային հսկողության գոտում կանգնելու առումով:

2. Արգելվում է կիրառել հատուկ միջոցներ հղիության տեսանելի նշաններով կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց եւ դեռահասների նկատմամբ՝ բացառությամբ եթե նրանք զինված դիմադրություն են ցույց տալիս, իրականացնում են խմբակային կամ այլ հարձակում, որը սպառնում է մարդկանց կյանքին եւ առողջությանը, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների պահպանվածությանը:

3. Մաքսային մարմինների կողմից օգտագործվող հատուկ միջոցների ցանկը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

Հոդված 29. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից ծառայողական շների օգտագործումը

1. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն կիրառել ծառայողական շներ հետեւյալ դեպքերում՝

1) թմրամիջոցների, պայթուցիկ նյութերի, զենքի, զինամթերքի եւ այլ ապրանքների որոնում եւ հայտնաբերում, որոնք անօրինական ճանապարհով ներկրվում են Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից եւ ունեն յուրահատուկ հոտ

մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ,

2) թմրամիջոցների, պայթուցիկ նյութերի, զենքի, զինամթերքի եւ այլ ապրանքների որոնում եւ հայտնաբերում, որոնք ունեն յուրահատուկ հոտ քննչական գործողությունների իրականացնելու եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանակ,

3) հոտաբանական փորձաքննության իրականացում,

4) մարդուն իր յուրահատուկ հոտի միջոցով որոնում եւ հայտնաբերում,

5) մաքսային ենթակառուցվածքների օբյեկտների պահպանության իրականացում:

2. Ծառայողական շների օգտագործում արգելվում է մարդու կյանքին, առողջությանը, պատվին եւ արժանապատվությանը սպառնացող վտանգի առաջացման դեպքում, այնպիսի գործողությունների իրականացման ժամանակ, որոնք չեն համապատասխանում ծառայողական շների նշանակությանը, ինչպես նաեւ այնպիսի պայմաններում, որոնք կարող են վնաս հասցնել շան աշխատունակությանը, կյանքին կամ առողջությանը:

3. Ծառայողական շների օգտագործման կարգը մաքսային հսկողության իրականացման, ուսումնական պրոցեսի եւ դրանք պահելու ժամանակ սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

Հոդված 30. Մաքսային միության պաշտոնատար անձանց կողմից զենքի գործադրումը

1. Պաշտպանության համար անհրաժեշտ իրավիճակում, կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն գործադրել զենք, կամ կիրառել ձեռքի տակ գտնվող ցանկացած այլ միջոցներ:

2. Պաշտոնական պարտականությունները իրականացնելիս՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն զենք գործադրել հետեւյալ դեպքերում՝

1) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց վրա հարձակման դիմագրավում, երբ նրանց կյանքին կամ առողջությանը անմիջական վտանգ է սպառնում, եթե հարձակումը հնարավոր չէ կանխել այլ ձեւերով կամ միջոցներով,

2) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց զենքը հափշտակելու փորձի կանխում, այդ թվում՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից կալանավորվող անձի մոտենալու փորձի կանխում, որը մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հրահանգված տարածությունը խախտել է, կամ ձեռք է տվել տվյալ մաքսային պաշտոնատար անձի զենքին,

3) մաքսային մարմիններին պատկանող եւ դրանց կողմից օգտագործվող շենքերի, շինությունների, օդանավերի, ծովային նավերի կամ տրանսպորտային միջոցների, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների, նման ապրանքների գտնվելու վայր հանդիսացող օբյեկտների եւ տրանսպորտային միջոցների վրա խմբակային կամ զինված հարձակման դիմագրավում, ինչպես նաեւ նշված օբյեկտների, նավերի, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների ազատագրում՝ դրանց զինված զավթման դեպքում,

4) զինված դիմադրություն ցույց տվող անձին (անձանց), ինչպես նաեւ զենքը հանձնելու օրինական պահանջը կատարելուց հրաժարվող զինված անձին (անձանց) ձերբակալում,

5) ավտոմոբիլային եւ երկաթուղային տրանսպորտային միջոցների, ծովային նավերի եւ օդանավերի կանգնեցում դրանց վնասվածք հասցնելու միջոցով, եթե դրանք իրական վտանգ են ներկայացնում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կյանքին եւ առողջությանը, կամ եթե չեն ենթարկվում նրանց կողմից բազմիցս կրկնվող՝ նախազգուշական կրակոցներից հետո կանգնելու պահանջներին,

6) կենդանիների վնասազերծում, որոնք վտանգ են ներկայացնում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կյանքին եւ առողջությանը,

7) զենք գործադրելու մտադրության, ահազանգի ազդանշան տալու եւ օգնության կանչելու նախազգուշացում:

3. Ձեռք արգելվում է գործադրել՝

1) հղիության տեսանելի նշաններով կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց եւ դեռահասների նկատմամբ, եթե նրանց տարիքը մաքսային մարմնի աշխատակցի համար ակնհայտ է, կամ հայտնի՝ բացառությամբ, եթե նրանք զինված դիմադրություն են ցույց տալիս, իրականացնում են զինված կամ խմբակային հարձակում, որը սպառնում է մարդկանց կյանքին,

2) մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, եթե դրանից կարող են տուժել կողմնակի անձինք:

4. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքի մասին պարտավոր է անհապաղ գրավոր զեկուցել մաքսային մարմնի ղեկավարին, որն այդ մասին տեղեկացնում է դատախազին՝ զենքը գործադրելու պահից ոչ ուշ, քան 24 ժամ հետո:

5. Մաքսային մարմնի կողմից օգտագործվող զենքի եւ զինամթերքի տեսակների ցանկը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

6. Մաքսային մարմինների պաշտոնատար անձն իրավունք ունի զենքը պատրաստ վիճակում պահել, եթե գտնում է, որ ստեղծված իրավիճակում կարող են ի հայտ գալ դրա գործադրման համար հիմքեր, որոնք նախատեսված են սույն հոդվածի 2-րդ մասով:

§ 4. Մաքսային մարմինների գործունեության ապահովումը

Հոդված 31. Մաքսային մարմինների գործունեության նյութատեխնիկական ապահովումը

Մաքսային մարմինների գործունեության նյութատեխնիկական ապահովումը իրականացվում է դաշնային բյուջեի եւ այլ աղբյուրների հաշվին, որոնք նախատեսված են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

Հոդված 32. Մաքսային մարմինների օբյեկտների տեղակայումը

1. Մաքսային մարմինների օբյեկտները տեղակայվում են դաշնային սեփականության հանդիսացող հողամասերում: Մաքսային մարմինների օբյեկտների տեղակայման համար նախատեսված հողամասերը տրամադրվում են մշտական (անժամկետ) օգտագործման Ռուսաստանի Դաշնության հողային օրենսդրության համաձայն:

2. Մաքսատների եւ մաքսակետերի ստորաբաժանումները Դաշնային սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետում նշված կազմակերպությունների օբյեկտներում տեղակայելու դեպքում այդ կազմակերպությունները մաքսային մարմինների տեղակայման համար տրամադրում են անհրաժեշտ տարածք անհատույց օգտագործման պայմանագրի հիման վրա՝ բացառությամբ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից սահմանված դեպքերի: Այդ տարածքների նյութատեխնիկական բազայի հագեցումը իրականացվում է դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Հոդված 33. Մաքսային մարմինների գործունեության մասին տեղեկությունների պաշտպանությունը

1. Մաքսային մարմինների կադրային կազմի, կազմակերպության, օպերատիվ-հետախուզական գործունեություն ծավալելու տակտիկայի, մեթոդների եւ միջոցների մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերը եւ նյութերը ենթական են պահպանման

մաքսային մարմինների արխիվներում Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

2. Մաքսային մարմինների արխիվների նյութերը, որոնք պատմական եւ գիտական արժեք ունեն, գաղտնի են համարվում Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, պահման են փոխանցվում Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից արխիվների հարցերով լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի մոտ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Պետական, բանկային եւ հարկային գաղտնիքի եւ մաքսային մարմինների մասին սահմանափակ հասանելիության տեղեկությունների պաշտպանությունն ապահովվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

Հոդված 34. Մաքսային մարմինների կազմակերպությունները

(2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185- ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

1. Գործադիր իշխանության դաշնային մարմինը, որն իրավասություն ունի մաքսային գործի ոլորտում, իր տնօրինության տակ ունի կազմակերպություններ, բարձրագույն կրթության կրթական կազմակերպություններ, լրացուցիչ մասնագիտական կրթության կազմակերպություններ, բժշկական կազմակերպություններ, տպագիր հրատարակություններ, տեղեկատվական-հաշվողական կենտրոններ եւ այլ կազմակերպություններ, ինչպես նաեւ պետական ունիտար ձեռնարկություններ, որոնց գործունեությունը նպաստում է մաքսային մարմիններին վերապահված խնդիրների լուծմանը:

(2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185- ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների եւ պետական ունիտար ձեռնարկությունների գործառույթների սահմանումը կատարվում է Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային եւ այլ օրենսդրության պահանջներին համապատասխան:

(2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185- ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

Հոդված 35. Մաքսային մարմինների և մաքսային մարմինների կազմակերպությունների սեփականությունը

Մաքսային մարմինների գույքը և սույն Դաշնային օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում նշված հաստատությունները և պետական ունիտար ձեռնարկությունները գտնվում են դաշնային սեփականության ներքո: Նշված գույքի տնօրինումը իրականացվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

**Գլուխ 3. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ,
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ**

Հոդված 36. Բողոքարկման իրավունքը

1. Ցանկացած անձ իրավունք ունի բողոքարկել մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե, այդ անձի կարծիքով, նման որոշմամբ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են իր իրավունքները, ազատությունները եւ օրինական շահերը, խոչընդոտներ է ստեղծվել դրանց իրականացման, կամ անօրինական կերպով նրա վրա դրվել է ինչ-որ պարտավորություն:

2. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքարկման իրավունքից հրաժարվելն անվավեր է:

Հոդված 37. Բողոքարկման կարգը

1. Մաքսային մարմիններին ուղղված՝ մաքսային գործի ոլորտում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքների ներկայացման, քննարկման եւ լուծման կարգը սահմանվում է սույն գլխով: Սույն գլխով սահմանված կարգը չի կիրառվում մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց՝ վարչական իրավախախտումների հարցերով որոշումների բողոքարկման դեպքում, ինչպես նաեւ մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց այլ որոշումների, գործողության (անգործության) բողոքարկման դեպքում, եթե նրանց նկատմամբ նախատեսված է բողոքարկման հատուկ կարգ:

2. Մաքսային մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկվել մաքսային մարմիններ եւ (կամ) դատարան, արբիտրաժային դատարան: Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքարկումը մաքսային մարմիններ չի բացառում նույն բովանդակությամբ միաժամանակյա կամ հաջորդական բողոքի ներկայացման

հնարավորությունը դատարան, արբիտրաժային դատարան: Մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքարկումը, որը ներկայացվում է մաքսային մարմիններ եւ դատարան, արբիտրաժային դատարան, քննարկվում է դատարանի, արբիտրաժային դատարանի կողմից:

3. Դատարանների եւ արբիտրաժային դատարաններ ուղարկված բողոքները ներկայացնելու, քննարկման եւ լուծման կարգը սահմանվում է քաղաքացիական դատավարության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ եւ արբիտրաժային դատարանում դատավարության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

Հոդված 38. Մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք ներկայացնելու կարգը

1. Մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ներկայացվում է վերադաս մաքսային մարմին: Մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը կարող է ներկայացվել ինչպես անմիջականորեն վերադաս մաքսային մարմին, այնպես էլ այն մաքսային մարմնի միջոցով, որի կամ որի պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է:

2. Այն մաքսային մարմինը, որի կամ որի պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է, ուղարկում է բողոքը վերադաս մաքսային մարմին՝ հիմնավորող նյութերի հետ միասին ոչ ուշ, քան բողոքն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում: Այն դեպքերում, երբ մաքսային մարմինը, որն ստացել է մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը, իրավասու չէ այն քննարկելու, ապա այն պարտավոր է ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրերի ընթացքում ուղարկել բողոքն այն մաքսային մարմին, որը պետք է քննի այն սույն հոդվածի համաձայն՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով բողոք ներկայացնող անձին:

3. Մաքսային գործի ոլորտում իրավասություն ունեցող գործադիր իշխանության դաշնային մարմնի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ներկայացվում է այդ մարմին:

Հոդված 39. Մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքարկելու ժամանակ անձանց իրավասությունները
Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքարկելու ժամանակ ներկայացուցիչների մասնակցությունը

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքարկելու ժամանակ կազմակերպությունները մասնակցում են իրենց մարմինների միջոցով, որոնք գործում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության համաձայն:

2. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքները եւ օրինական շահերը պաշտպանելու համար մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքարկելու ժամանակ հանդես են գալիս նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները եւ հոգաբարձուները, որոնք կարող են բողոքարկելու հետ կապված գործողություններ կատարելու իրավունքը վերապահել իրենց կողմից ընտրված մեկ այլ ներկայացուցչի:

3. Լուծարվող կազմակերպության անունից մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքարկման ժամանակ հանդես է գալիս լուծարման հանձնաժողովի իրավասու նախագահը:

4. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքարկման ժամանակ որպես քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռներեցների եւ կազմակերպություններ ներկայացուցիչներ հանդես են գալիս փաստաբանները եւ իրավաբանական օգնություն ցույց տվող այլ անձինք:

5. Կազմակերպությունների ղեկավարների իրավասությունները, որոնք գործում են տվյալ կազմակերպության անունից դաշնային օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով կամ հիմնադիր փաստաթղթերով նախատեսված իրավասությունների շրջանակում, պետք է հաստատվեն փաստաթղթերով, որոնք հավաստում են նրա ծառայողական դիրքը, ինչպես նաեւ պետք է հաստատվեն հիմնադիր եւ այլ փաստաթղթերով: Օրինական ներկայացուցիչների իրավասությունները հաստատվում են փաստաթղթերով, որոնք հավաստում են նրանց կարգավիճակը եւ իրավասությունները: Փաստաբանի իրավասությունները հավաստվում են դաշնային օրենքին համապատասխան: Մյուս ներկայացուցիչների իրավասությունները պետք է

սահմանվեն լիազորագրով, որը տրվում է ձեռակերպվում է սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, իսկ Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով կամ դաշնային օրենքով սահմանված լինելու դեպքում՝ այլ փաստաթղթով:

6. Կազմակերպության անունից լիազորագիրը պետք է ստորագրվի այդ կազմակերպության ղեկավարի, կամ հիմնադիր փաստաթղթերով նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից եւ պետք է կնքվի կազմակերպության կնիքով: Քաղաքացու անունից լիազորագիրը կարող է հաստատվել նոտարի, կամ դաշնային օրենքով այլ սահմանված կարգով: Անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրվող լիազորագիրը պետք է նրա կողմից ստորագրված լինի եւ կնքվի իր կնիքով, կամ պետք է հաստատված լինի նոտարի կողմից, կամ դաշնային օրենքով սահմանված այլ կարգով:

7. Ներկայացուցիչը իրավունք ունի իր կողմից ներկայացվող անձի անունից կատարել բոլոր այն գործողությունները, որոնք նախատեսված են սույն գլխով, այդ թվում՝ ներկայացնել եւ ստորագրել մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք, եթե այլ բան սահմանված չէ լիազորագրում կամ որեւէ այլ փաստաթղթում: Մաքսային մարմիններ բողոք ներկայացնելիս լիազորագիրը պետք է ներառի մաքսային գործի ոլորտում որոշումների, գործողության (անգործության) բողոքարկման իրավունքը:

Հոդված 40. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք ներկայացնելու ժամկետները

Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը կարող է ներկայացվել երեք ամիսների ընթացքում՝ սկսած՝

1) այն օրվանից, երբ անձը տեղեկանում կամ կարող է տեղեկանալ իր իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի խախտման, դրանք իրականացնելու համար խոչընդոտների ստեղծման, կամ անօրինական կերպով նրա վրա ինչ-որ պարտավորություն դնելու մասին,

2) այն օրվանից, երբ մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրության ակտով, մաքսային գործի վերաբերյալ

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտով, կամ մաքսային գործի ոլորտում Ռուսաստանի Դաշնության որեւէ այլ իրավական ակտով սահմանված որոշում ընդունելու կամ գործողություն կատարելու ժամկետը ավարտվում է:

Հոդված 41. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքարկելու ժամկետների վերականգնումը

1. Բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք ներկայացնող անձի (այսուհետ՝ դիմումատու) դիմումով այդ ժամկետը վերականգնվում է այն մաքսային մարմնի կողմից, որն իրավասու է քննել տվյալ բողոքը:

2. Բողոք ներկայացնելու համար բաց թողնված ժամկետի վերականգնում համարվում է մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը փաստացիորեն քննության առնելը:

Հոդված 42. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի ձեւը եւ բովանդակությունը

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ներկայացվում է գրավոր եւ պետք է անձամբ ստորագրվի այն անձի կողմից, ում իրավունքները, իր կարծիքով, խախտվել են, կամ նրա ներկայացուցիչ կողմից: Եթե բողոքը ներկայացվում է ներկայացուցչի կողմից, ապա բողոքին կից պետք է ներկայացվեն փաստաթղթեր, որոնք հաստատում են նրա իրավասությունները: Անձամբ ստորագրության նմանօրինակ ձեւերի (անալոգների) օգտագործումը բողոքը ստորագրելու համար չի թույլատրվում:

2. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պետք է բովանդակվի՝

1) մաքսային մարմնի անվանումը կամ դրա պաշտոնատար անձի պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայտնի է), որոշումը, գործողությունը (անգործություն), որը

բողոքարկվում է,

2) բողոք ներկայացնողի ազգանունը, անունը, հայրանունը (եթե առկա է) կան անվանումը, նրա բնակության վայրը կամ գտնվելու վայրը,

3) բողոքի ենթակա որոշման, գործողության (անգործության) առարկան:

3. Դիմումատուն կարող է չներկայացնել այն փաստաթղթերը եւ տեղեկությունները, որոնց միջոցով հիմնավորվում են բողոքում նշված հանգամանքները: Եթե նման փաստաթղթերի եւ տեղեկությունների ներկայացումը էական նշանակություն ունի տվյալ բողոքը քննելու համար եւ այդ փաստաթղթերը բացակայում են այն մաքսային մարմնում, որի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է, ապա տվյալ բողոքը քննող մաքսային մարմինն իրավունք ունի պահանջել դրանք բողոք ներկայացնող անձից: Այդ դեպքում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի քննման ժամկետը կասեցվում է մինչեւ մաքսային մարմնի կողմից պահանջ ստացած անձը ներկայացնի փաստաթղթերը եւ տեղեկությունները, բայց ոչ ավելի, քան նման պահանջ ներկայացնելուց երեք ամիս հետո: Եթե մաքսային մարմնի կողմից պահանջ ստացած անձը չի ներկայացնում փաստաթղթեր եւ տեղեկություններ, ապա նշված բողոքի մասին որոշումը ընդունվում է առանց հաշվի առնելու այն պատճառաբանությունները, որոնց հիմքով փաստաթղթերն ու տեղեկությունները չեն ներկայացվել:

Հոդված 43. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք ներկայացնելու հետեւանքները

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք ներկայացնելը չի կասեցնում բողոքի առարկա որոշման, գործողության իրականացումը:

2. Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու համար, որ բողոքարկվող որոշումը, գործողությունը չի համապատասխանում Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը, ինչպես նաեւ այն դեպքում, երբ որոշումը, գործողությունը չկասեցնելը կարող է անդառնալի բնույթ կրել, կամ կարող է դիմումատուին էական վնաս հասցնել, ապա բողոքը քննող մաքսային մարմինը

իրավունք ունի լիովին կամ մասամբ կասեցնել բողոքարկվող որոշման, գործողության իրականացումը, մինչև բողոքի հետ կապված ըստ էության որոշում ընդունելը:

Հոդված 44. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ըստ էության քննելու մերժման հիմքերը

1. Մաքսային մարմինը մերժում է ըստ էության քննել մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը հետեյալ դեպքերում՝

1) եթե պահպանված չեն բողոքարկման սահմանված ժամկետները եւ անձը չի դիմել բողոքարկելու բաց թողնված ժամկետը վերականգնելու դիմումով, կամ բողոքարկելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը մերժվել է,

2) եթե պահպանված չեն սույն Դաշնային օրենքի 42-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված պահանջները,

3) եթե անձը արդեն դիմել է դատարան համանման բովանդակությամբ բողոքով եւ նման բողոքը դատարանի, արբիտրաժային դատարանի կողմից ընդունվել է քննության, կամ դրա առիթով որոշում է ընդունվել,

4) եթե նշված բողոքի առարկան համարվում է այնպիսի մարմնի որոշումը, գործողությունը (անգործությունը), որը մաքսային մարմին չէ, կամ այնպիսի մարմնի պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը), որը մաքսային մարմին չէ,

5) եթե բողոքը ներկայացրել է այն անձը, որի իրավասությունները հաստատված չեն սույն Դաշնային օրենքի 39-րդ հոդվածով սահմանված կարգով,

6) եթե բողոքը ներկայացվել է այն անձի կողմից, որի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը բողոքարկվող որոշմամբ, գործողությամբ (անգործությամբ) չեն շոշափվում,

7) եթե բողոքի առարկա հանդիսանում է մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից ընդունված ակտը (փաստաթուղթը), որը մաքսային գործի ոլորտում որոշում չի հանդիսանում,

8) եթե կա որոշում, որը ընդունվել է սույն Դաշնային օրենքի 48-րդ հոդվածի համաձայն նույն մաքսային մարմնի կողմից միեւնույն դիմումատուի նկատմամբ եւ բողոքի միեւնույն առարկայի շուրջ,

9) եթե բողոքարկման առարկան բացակայում է, այսինքն՝ մաքսային մարմնի կողմից ընդունված որոշման կամ նրա կողմից կատարված գործողության (անգործության) փաստը չի հաստատվել:

2. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ըստ էության քննելու մերժման որոշումը պետք է ընդունվի նշված բողոքը ստանալուց հետո ամենաուշը հինգ աշխատանքային օրերի ընթացքում, եթե այլ բան սահմանված չէ սույն Դաշնային օրենքով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ 8-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ըստ էության քննելու մերժման որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ քան տվյալ բողոքը քննող մաքսային մարմնի կողմից դատարանի, արբիտրաժային դատարանի՝ համանման բովանդակությամբ բողոք քննության ընդունելու մասին որոշում, կամ բողոքը քննելուն խոչընդոտող հիմքերի առկայության մասին հավաստող դատական որոշումներ եւ այլ փաստաթղթեր ստանալուց հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

4. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը ըստ էության քննելու մերժման որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմնի կամ դատարան, արբիտրաժային դատարան:

Հոդված 45. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի հետկանչը

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոք ներկայացնող անձը կարող է հետ կանչել բողոքը ցանկացած ժամանակ նախքան բողոքի հարցով որոշում ընդունելը:

2. Նույն հարցով կրկնակի բողոք կարող է ներկայացվել սույն Դաշնային օրենքի 40-րդ հոդվածով սահմանված ժամկետների սահմանում:

Հոդված 46. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը քննող մաքսային մարմինը

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը քննության է առնվում վերադաս մաքսային մարմնի կողմից

2. Վերադաս մաքսային մարմնի անունից բողոքի հարցով որոշումը ընդունում է այդ մաքսային մարմնի ղեկավարը, կամ նրա կողմից լիազորված մաքսային մարմնի պաշտոնատար անձը: Ընդ որում, մաքսային գործի ոլորտում իրավասություն ունեցող գործադիր իշխանության դաշնային մարմնի, կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի քննումը չի կարող իրականացվել բողոքարկվող որոշումը ընդունող, բողոքարկվող գործողությունը (անգործությունը) կատարող պաշտոնատար անձի կամ նրան ստորադաս պաշտոնատար անձի կողմից:

Հոդված 47. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը քննելու ժամկետները

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պետք է քննվի մաքսային մարմնի կողմից տվյալ բողոքը քննելու իրավասություն ունեցող մաքսային մարմին ներկայացվելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

2. Եթե մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը քննող մաքսային մարմինը անհրաժեշտ է գտնում երկարաձգել տվյալ բողոքը քննելու՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը, ապա այդ ժամկետը կարող է երկարաձգվել այդ մաքսային մարմնի ղեկավարի կամ նրա կողմից իրավասություն ունեցող մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից մեկ ամիսը չգերազանցող ժամանակով, որի մասին գրավոր տեղեկացվում է բողոք ներկայացնող անձին՝ նշելով երկարաձգման պատճառները:

Հոդված 48. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի հարցով մաքսային մարմնի որոշումը

1. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի հարցով մաքսային մարմնի որոշումը ընդունվում է գրավոր, մաքսային գործի ոլորտում իրավասություն ունեցող գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից սահմանված ձևով: Նման որոշման մեջ պետք է նշվի՝

1) բողոքը քննող մաքսային մարմնի անվանումը,

2) որոշման համարը,

3) որոշումը կազմելու ամսաթիվը եւ վայրը,

4) բողոքի հարցով որոշում ընդունող մաքսային մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, ազգանունը եւ անվան սկզբնատառերը, բողոքը քննելու նրա իրավասությունը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները (բացառությամբ մաքսային մարմնի ղեկավարի),

5) բողոք ներկայացնող անձի ազգանունը եւ անվան սկզբնատառերը, կամ անվանումը,

6) բողոքարկվող որոշումների, գործողությունների (անգործության) բովանդակությունը, այդ թվում՝ տեղեկություններ մաքսային մարմնի (պաշտոնատար անձի), բողոքարկվող որոշման, գործողության (անգործության) մասին տեղեկություններ,

7) տվյալ գործով բողոքի համառոտ շարադրանքը,

8) բողոքի հարցով որոշում ընդունելու փաստերը եւ հիմքերը,

9) բողոքի հարցով ընդունված որոշումը,

10) տեղեկություններ բողոքի հարցով ընդունված որոշման բողոքարկման կարգի մասին:

2. Բողոքի հարցով որոշումը պետք է ստորագրվի տվյալ որոշումը ընդունող մաքսային մարմնի պաշտոնատար անձը:

3. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը քննելու արդյունքների հիման վրա մաքսային մարմինը՝

1) մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի բողոքարկվող որոշումը, գործողությունը (անգործությունը) ճանաչում է իրավաչափ եւ չի բավարարում բողոքը,

2) մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի բողոքարկվող որոշումը, գործողությունը (անգործությունը) լիովին կամ մասամբ ճանաչում է ոչ իրավաչափ եւ ընդունում է որոշում բողոքը լիովին կամ մասամբ բավարարելու մասին:

4. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը լիովին կամ մասամբ բավարարելու դեպքում մաքսային մարմինը՝

1) լիովին կամ մասամբ անվավեր է ճանաչում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից ընդունված՝ բողոքարկվող որոշումը,

2) անվավեր է ճանաչում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից ընդունված՝ բողոքարկվող որոշումը եւ մաքսային այդ մարմնի եւ դրա պաշտոնատար անձին պարտավորեցնում է ընդունել նոր որոշում Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, կամ անձամբ ընդունում է նման որոշում, եթե բողոքը վերանայող մաքսային մարմինը ունի նման որոշում ընդունելու իրավասություն,

3) անվավեր է ճանաչում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ բողոքարկվող գործողությունը (անգործությունը) եւ սահմանում է միջոցներ, որոնք պետք է ընդունվեն կատարված խախտումները վերացնելու նպատակով, կամ անձամբ իրականացնում է անհրաժեշտ գործողություններ, եթե դրանց իրականացումը համապատասխանում է բողոքը վերանայող մաքսային մարմնի իրավասությանը, պայմանով, որ նման միջոցներ եւ (կամ) գործողություններ ավելի շուտ ձեռնարկված (իրականացված) չլինեն:

5. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքը բավարարելու մասին որոշում իրականացնելու հետ կապված՝ մաքսային մարմնի գործողությունները պետք է իրականացվեն 10 աշխատանքային օրերի ընթացքում այն մաքսային մարմնի կողմից, որի կամ որի պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը) ճանաչվել է ոչ իրավաչափ՝ սկսած այն օրվանից, երբ տվյալ բողոքի մասին որոշումը ներկայացվել է այդ մարմնին, եթե դրա կատարման համար այլ ժամկետ սահմանված չէ նշված որոշման մեջ:

6. Մաքսային մարմնի կամ մաքսային մարմնի անունից դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքը քննող մաքսային մարմնի պաշտոնատար անձը մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված պաշտոնական պարտավորությունների մեղավոր չկատարում կամ ոչ պատշաճ կատարում հայտնաբերելու դեպքում ձեռնարկում է միջոցներ այդ պաշտոնատար անձին սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

7. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) հարցով բողոքը քննելու արդյունքում ընդունված որոշման պատճենը սույն Դաշնային օրենքի 47-րդ հոդվածով սահմանված ժամկետների սահմանում ուղարկվում է այն անձին, որը դիմել է նշված բողոքով:

8. Մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի հարցով մաքսային մարմնի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմին կամ դատարան, արբիտրաժային դատարան:

Հոդված 49. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) բողոքարկման պարզեցված կարգը

1. Պարզեցված կարգով կարող են բողոքարկվել մաքսատան կամ մաքսակետի պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը) կապված 15 միլիոն ռուբլի արժեքը չգերազանցող ապրանքների եւ (կամ) մեկ տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցների շարժակազմի)՝ Ռուսաստանի Դաշնություն ներկրման եւ (կամ) Ռուսաստանի Դաշնությունից արտահանման հետ:

2. Մաքսատան կամ մաքսակետի պաշտոնատար անձի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու պարզեցված կարգով անձը գրավոր բողոքով դիմում է մաքսատան կամ մաքսակետի վերադաս պաշտոնատար անձին՝ համապատասխանաբար, իսկ մաքսակետի ղեկավարի որոշման, գործողության (անգործության) բողոքարկման դեպքում՝ մաքսատան ղեկավարին, որի գործողության ոլորտում գտնվում է տվյալ մաքսակետը:

3. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքի քննումը պարզեցված կարգով իրականացվում է առանց հապաղման, եւ դրա

վերաբերյալ որոշում ընդունվում է անմիջապես, բայց դրա ներկայացման պահից երեք ժամից ոչ ուշ:

4. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքով դիմող անձի ցանկությամբ պարզեցված կարգով բողոքարկման դեպքում, տվյալ բողոքը քննող մաքսային մարմնի պաշտոնատար անձը կազմում է տվյալ բողոքը պարզեցված կարգով քննելու մասին ակտ, որում նշվում են տեղեկություններ բողոքը քննող մաքսային մարմնի պաշտոնատար անձի, բողոքով դիմող անձի, բողոքի հակիրճ բովանդակության, որոշում ընդունելու համար պատճառների եւ հիմքերի եւ ընդունված որոշման մասին: Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պարզեցված կարգով քննելուց հրաժարվելու դեպքում այդ ակտում նշվում է նման մերժման պատճառները: Նման ակտի ձեւը սահմանվում է գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, որը իրավասություն ունի մաքսային գործի ոլորտում: Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պարզեցված կարգով քննելու մասին ակտը ստորագրվում է բողոքը քննող մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից եւ բողոք ներկայացնող անձի կողմից: Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պարզեցված կարգով քննելու մասին ակտ պատճենը տրվում է բողոքով դիմող անձին:

5. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պարզեցված կարգով քննումը եւ դրան մասին որոշում ընդունումը խոչընդոտ չի հանդիսանում մաքսային մարմնի կամ նրա պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ ընդհանուր կարգով բողոք ներկայացնելու համար:

6. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի որոշման, գործողության (անգործության) դեմ բողոքը պարզեցված կարգով քննելու մասին ակտը կարող է բողոքարկվել ընդհանուր կարգով վերադաս մաքսային մարմին կամ դատարան, արբիտրաժային դատարան:

Գլուխ 4. ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հոդված 50. Ընդունված որոշման, կատարված գործողության (անգործության) պատճառների մասին տեղեկությունների ստացումը

1. Այն անձը, որի առնչությամբ մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից որոշում է ընդունվել կամ գործողություն է կատարվել, ինչպես նաև այն անձը, որի նկատմամբ որոշում չի ընդունվել կամ կատարման ենթակա գործողությունը չի կատարվել սահմանված ժամկետում, իրավունք ունի այդ մաքսային մարմին դիմելու ընդունված որոշման կամ կատարված գործողության պատճառների կամ հիմքերի վերաբերյալ կամ որոշման չընդունման կամ գործողության չկատարման վերաբերյալ հարցմամբ, եթե դա անմիջականորեն եւ առանձին կերպով շոշափում է նշված մարմինների իրավունքները եւ օրինական շահերը:

2. Հարցումը պետք է տրվի որոշման ընդունման, գործողության կատարման (անգործության) օրվանից կամ դրանց ընդունման կամ կատարման ժամկետի ավարտից, կամ այն օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, երբ անձին հայտնի է դարձել ընդունված որոշման կամ կատարված գործողության (անգործության) մասին:

3. Շահագրգիռ անձը կարող է անհրաժեշտ տեղեկություններն ստանալու հարցմամբ դիմել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր: Բանավոր հարցումը ենթակա է մաքսային մարմնի կողմից քննման նշված հարցումն ստանալու օրը: Գրավոր հարցման տրման դեպքում պատասխանը պետք է գրավոր տրամադրվի նշված հարցումն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

Հոդված 51. Մաքսային միության մաքսային օրենսդրության, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկումը

1. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը եւ այլ մաքսային մարմիններ ապահովում են Մաքսային միության մաքսային օրենսդրության, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության

գործող ակտերի եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի վերաբերյալ տեղեկություններից ազատ, անվճար, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, օգտվելու հնարավորությունը:

2. Մաքսային մարմիններն ապահովում են մշակվող՝ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի, ինչպես նաեւ ուժի մեջ չմտած՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերում եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերում փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններից օգտվելու հնարավորությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ մշակվող ակտերի վերաբերյալ նախապես իրազեկումը կխոչընդոտի մաքսային հսկողության իրականացումը կամ կհանգեցնի դրա արդյունավետության նվազեցմանը:

3. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն ապահովում է իր կողմից ընդունված իրավական ակտերի, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային օրենսդրության, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության ակտերի եւ մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերի հրապարակումն իր պաշտոնական հրատարակություններում:

Հոդված 52. Մաքսային գործի հետ կապված հարցերով եւ մաքսային մարմինների իրավասության սահմաններում գտնվող հարցերով խորհրդատվությունը

1. Մաքսային մարմինները շահագրգիռ անձանց խորհրդատվություն են տրամադրում այդ մարմինների իրավասության սահմաններում գտնվող՝ մաքսային գործի վերաբերյալ հարցերով: Մաքսային մարմնի պետը (նրան փոխարինող անձը) որոշում է մաքսային մարմնի պաշտոնատար անձանց, որոնք լիազորված են խորհրդատվություն տրամադրելու:

2. Մաքսային մարմինների կողմից խորհրդատվության տրամադրումն իրականացվում է բանավոր եւ գրավոր՝ անվճար: Շահագրգիռ անձի գրավոր հարցման դեպքում մաքսային մարմինը պարտավոր է տեղեկատվությունը գրավոր ներկայացնել հնարավորինս կարճ ժամկետում, սակայն նշված հարցումը ստանալու օրվան հաջորդող մեկ ամսից ոչ ուշ:

3. Խորհրդատվության ժամանակ շահագրգիռ անձանց տրամադրված տեղեկությունը հիմք չէ՝ ապրանքների եւ (կամ) տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային ձեւակերպումներ իրականացնելու ժամանակ մաքսային մարմինների կողմից որոշման ընդունման կամ գործողությունների կատարման (անգործության) համար:

4. Եթե հարցվող տեղեկությունները տրամադրվել են ոչ ժամանակին կամ ոչ հավաստի ձեւով, ինչը կորուստներ է առաջացրել խորհրդատվություն ստանալու նպատակով դիմած անձի համար, ապա կորուստների համար փոխհատուցումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

5. Մաքսային մարմինները պատասխանատվություն չեն կրում սույն Դաշնային օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ առանց իրենց գիտության եւ հսկողության հրապարակված ակտերի տեքստերի խեղաթյուրման հետեւանքով պատճառված կորուստների համար, ինչպես նաեւ դրա անցկացման համար չլիազորված անձանց կողմից ոչ որակյալ խորհրդատվության հետեւանքով պատճառված կորուստների համար:

6. Մաքսային մարմինների կողմից իրազեկման եւ խորհրդատվության տրամադրման կարգը սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

Հոդված 53. Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց միավորող ոչ առետրային կազմակերպությունների մասնակցությունը մաքսային գործի բնագավառում պետական քաղաքականության ձեւավորման եւ իրականացման գործում

1. Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց՝ հանրային կարեւորության շահերի համաձայնեցման նպատակով մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը մաքսային գործի բնագավառում

պետական քաղաքականության ձեւավորման եւ իրականացման գործում ներգրավում է այդ անձանց միավորող ոչ առետրային կազմակերպություններին:

2. Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց եւ (կամ) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց միավորող ոչ առետրային կազմակերպությունների մասնակցությունը մաքսային գործի բնագավառում պետական քաղաքականության ձեւավորման եւ իրականացման գործում իրականացվում է հետեւյալ ձեւերով.

1) մասնակցություն մաքսային գործի բնագավառում Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերի նախագծերի, Մաքսային միության մաքսային օրենսդրության ակտերի նախագծերի մշակմանը.

2) մասնակցություն արտաքին տնտեսական գործունեության զարգացման ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ ցուցանիշների վերլուծության գործում, այդ թվում՝ տնտեսության առանձին ճյուղերում, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների տարածքներում.

3) մասնակցություն մաքսային վարչարարության միջոցների կիրառման արդյունավետության գնահատմանը.

4) Ռուսաստանի Դաշնության պետական իշխանության մարմինների համար մաքսային գործի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում.

5) նման մասնակցության այլ ձեւեր՝ նախատեսված սույն Դաշնային օրենքով, Ռուսաստանի Դաշնության այլ դաշնային օրենքներով եւ դրանց համապատասխան կիրառվող այլ նորմատիվ իրավական ակտերով:

3. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի նորմատիվ իրավական այն ակտերի մշակման ժամանակ, որոնցով սահմանվում են Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանման, դրանց հայտարարագրման եւ բացթողման հետ կապված մաքսային ձեւակերպումների կարգը եւ տեխնոլոգիաները, որոշվում են լիազորված տնտեսական օպերատորների եւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող այլ անձանց գործունեության պայմանները, խորհրդակցություններ են

անցկացվում Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց միավորող՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված համառուսաստանյան ոչ առետրային կազմակերպությունների հետ: Նշված խորհրդակցությունների անցկացման կարգը սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ այդ կազմակերպությունների հետ համաձայնեցմամբ:

Գլուխ 5. ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 54. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում իրավաբանական անձանց գրանցումը

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում իրավաբանական անձանց գրանցումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 13-րդ, 19-րդ, 24-րդ, 29-րդ, 34-րդ հոդվածներին համապատասխան եւ սույն Դաշնային օրենքի 61-րդ, 67-րդ, 70-րդ, 76-րդ, 82-րդ հոդվածներին համապատասխան սահմանված պայմաններով:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներից մեկում գրանցվելու համար իրավաբանական անձը դիմում է մաքսային մարմին՝ սույն Դաշնային օրենքով նախատեսված տվյալներ պարունակող գրավոր դիմումով, եւ ներկայացնում է այդ տվյալները հաստատող փաստաթղթերը՝ ըստ սույն Դաշնային օրենքի 62-րդ, 68-րդ, 72-րդ, 77-րդ, 83-րդ հոդվածներին համապատասխան սահմանված ցանկերի:

3. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում, մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում եւ անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցվելու համար իրավաբանական անձը տարածքային առումով առանձնացված յուրաքանչյուր շինության եւ (կամ) տարածքային առումով առանձնացված յուրաքանչյուր բաց հրապարակի համար առանձին դիմում է ներկայացնում, որոնք համապատասխանաբար նախատեսված են որպես ժամանակավոր պահպանման պահեստ, մաքսային պահեստ կամ անմաքս առետրի խանութի առետրի սրահ օգտագործվելու համար:

4. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված փաստաթղթերը դիմումատուի կողմից կարող են ներկայացվել բնօրինակներով կամ դրանք ներկայացնող անձի, այդ

փաստաթղթերը տրամադրած լիազոր մարմինների կողմից վավերացված կամ նոտարական վավերացում ունեցող պատճեններով: Փաստաթղթերի՝ դրանք ներկայացնող անձի կողմից վավերացված, պատճենները ներկայացնելու դեպքում մաքսային մարմինն, անհրաժեշտության դեպքում, ստուգում է այդ փաստաթղթերի պատճենների համապատասխանությունը դրանց բնօրինակների հետ, որից հետո այդ փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են դրանք ներկայացնող անձին: Ռեեստրում գրանցելու մասին դիմումն ուսումնասիրելիս մաքսային մարմինը պարտավոր է դիմումատուին՝ նրա պահանջով, վերադարձնել ներկայացված փաստաթղթերի բնօրինակները Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը : մաքսային մարմին ներկայացվում են բնօրինակով:

5. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը կարող են դիմումատուի կողմից ներկայացվել մաքսային մարմին՝ համապատասխան ռեեստրում իրավաբանական անձին գրանցելու այլ պայմանների պահպանման մասին նախնական որոշում կայացվելու վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ծանուցում ուղարկելու օրվանից հետո 30 օրից ոչ ուշ:

6. Ռեեստրում գրանցելու մասին դիմումը մաքսային մարմնի կողմից ուսումնասիրվում է այն ստանալու օրվանից հետո 30 օրը չգերազանցող ժամկետում, բացառությամբ սույն հոդվածի 7–րդ եւ 10–րդ մասերում նշված դեպքերի, եւ որոշում է կայացնում մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում իրավաբանական անձին գրանցելու կամ գրանցելը մերժելու մասին:

7. Եթե ռեեստրում գրանցելու մասին դիմումի հետ դիմումատուի կողմից մաքսային մարմին չեն ներկայացվել մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը, ապա համապատասխան ռեեստրում իրավաբանական անձին գրանցելու՝ Մաքսային միության օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով սահմանված այլ պայմանների պահպանման դեպքում, մաքսային մարմինը նախնական որոշում է կայացնում այդ պայմանների պահպանման մասին եւ դրա մասին դիմումատուին ծանուցում է սույն հոդվածի 6–րդ մասում նշված ժամկետում: Այդ դեպքում մաքսային մարմինն իրավաբանական անձին համապատասխան ռեեստրում գրանցելու մասին որոշում է կայացնում մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան ապահովման

տրամադրումը հաստատող փաստաթղթերը դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացվելու օրվանից հետո 10 օրից ոչ ուշ:

8. Որպես ժամանակավոր պահպանման պահեստ, մաքսային պահեստ կամ անմաքս առևտրի խանութ հայտագրված շինությունների եւ տարածքների՝ սույն Դաշնային օրենքով սահմանված պահանջների եւ պայմանների հետ համապատասխանության ստուգման նպատակով մաքսային մարմնի կողմից անցկացվում է այդ շինությունների եւ (կամ) տարածքների մաքսային տեսազննում:

9. Եթե իրավաբանական անձի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում դրանց կազմման եւ տրամադրման վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջներին, պարունակում են հակասական կամ անհասկանալի տեղեկություններ, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են ուղղումներ, ապա ռեեստրում գրանցման մասին դիմումն ուսումնասիրող մաքսային մարմինն իրավունք ունի երրորդ անձանցից, ինչպես նաեւ պետական մարմիններից հարցմամբ պահանջել իրավաբանական անձի կողմից նշված տվյալները հաստատող փաստաթղթեր: Նշված անձինք եւ պետական մարմինները պարտավոր են հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում տրամադրել հարցման առարկա հանդիսացող փաստաթղթերը:

10. Սույն հոդվածի 9–րդ մասով նախատեսված դեպքում ռեեստրում գրանցման մասին դիմումի քննման ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան մաքսային մարմինն անհրաժեշտ է՝ հարցումն ուղարկելու եւ անձանց կողմից հարցման ենթակա փաստաթղթերը տրամադրելու համար: Ընդ որում, ռեեստրում գրանցման մասին դիմումն ուսումնասիրելու ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել նման դիմումն ստանալուց հետո 40 օրը:

11. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում իրավաբանական անձի գրանցումը ձեւակերպվում է մաքսային մարմնի գրավոր որոշմամբ եւ հաստատվում է նման ռեեստրում գրանցման մասին հավաստագիր տալու միջոցով, իսկ մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավարին կամ իրավաբանական անձի այլ լիազոր ներկայացուցչի մաքսային փոխադրողի կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ստորագրությամբ հանձնման կամ դրա ստացման փաստը եւ ամսաթիվը հաստատող այլ եղանակով տալու միջոցով, նման որոշումը կայացվելուց հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում: Նշված հավաստագիրը ստորագրվում է

մաքսային մարմնի պետի կամ նրա տեղակալի կողմից եւ վավերացվում է կնիքով:

12. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում գրանցումը մերժելու մասին որոշումը մաքսային մարմինն ընդունում է սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետը չգերազանցող ժամկետում՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով եւ սույն Դաշնային օրենքով նախատեսված՝ համապատասխան ռեեստրում գրանցման պայմանները չպահպանելու եւ (կամ) սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքերում: Մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը սույն հոդվածի 5-րդ մասում նշված ժամկետում մաքսային մարմին չներկայացնելու դեպքում մաքսային մարմինը 10 օրվա ընթացքում որոշում է ընդունում համապատասխան ռեեստրում գրանցումը մերժելու մասին: Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում գրանցումը վերաբերյալ որոշման մասին իրավաբանական անձի ղեկավարը կամ այլ լիազոր ներկայացուցիչ իրազեկվում են գրավոր՝ նման որոշումն ընդունելուց հետո երեք աշխատանքային օրից ոչ ուշ:

13. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում իրավաբանական անձանց գրանցելու, այդ ռեեստրներից նրանց հանելու, այդ ռեեստրներում փոփոխություններ կատարելու, նշված անձանց գործունեության կասեցման եւ վերսկսման հետ կապված մաքսային մարմինների կողմից գործողությունների իրականացման կարգը, ինչպես նաեւ մաքսային ներկայացուցիչների ռեեստրում, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում, մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում, անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրում, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման մասին հավաստագրերի ձեւերը եւ դրանց լրացման կարգը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից: Մաքսային փոխադրողի կարգավիճակը հաստատող փաստաթղթի ձեւը, Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, սահմանվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ:

14. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում գրանցման մասին դիմումների ուսումնասիրության եւ նշված ռեեստրներում անձանց գրանցման համար վճար չի գանձվում:

Հոդված 55. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներից մեկում գրանցման մասին դիմումի մեջ տվյալների փոփոխությունը

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում գրանցման մասին դիմումի կամ դրան կից փաստաթղթերի մեջ նշված՝ սույն Դաշնային օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված տվյալների փոփոխության դեպքում, մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներից մեկում գրանցված իրավաբանական անձը (իրավաբանական անձի վերակազմավորման դեպքում՝ նրա իրավահաջորդը) պարտավոր է մաքսային մարմին գրավոր տեղեկացնել այդ փոփոխությունների մասին՝ համապատասխան տվյալների փոփոխություններն առաջ բերած իրադարձությունները վրա հասնելու օրվանից կամ դրանց վրա հասնելու մասին անձին հայտնի դառնալու օրվանից հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում, եւ ներկայացնել փաստաթղթերը, որոնցում փոփոխություններ են կատարվել կամ որոնցով հաստատվում է տվյալների փոփոխությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկություններն ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինը ստուգում է կրկին նշված տվյալների համապատասխանությունը մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում իրավաբանական անձին գրանցելու համար սահմանված պայմանների հետ, որոշում է ընդունում նշված ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին եւ, եթե փոփոխվում են անձանց համապատասխան ռեեստրում անձանց գրանցման մասին հավաստագրում (մաքսային փոխադրողի կարգավիճակը հաստատող փաստաթղթում) նշման ենթակա տվյալները, ապա համապատասխան ռեեստրում գրանցման մասին նոր հավաստագիր է տալիս (մաքսային փոխադրողի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ):

3. Սույն հոդվածին համապատասխան ներկայացված փաստաթղթերը կցվում են մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում գրանցման ժամանակ իրավաբանական անձի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթին:

Հոդված 56. Իրավաբանական անձի՝ որպես մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձի, գործունեության կասեցումը եւ վերսկսումը

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրներում գրանցված իրավաբանական անձանց՝ որպես մաքսային ներկայացուցիչների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների եւ անմաքս առետրի խանութների տիրապետողների գործունեությունը կասեցվում է հետեւյալ դեպքերում.

1) իրավաբանական անձի կողմից իր գործունեության դադարեցման մասին դիմումը ներկայացնելու դեպքում.

2) իր նկատմամբ սնանկության վարույթի հարուցման դեպքում իրավաբանական անձի կողմից դիմումը ներկայացնելու դեպքում.

3) դատարանի կամ լիազոր մարմնի կողմից իրավաբանական անձի գործունեության կասեցման մասին որոշումն ընդունելու դեպքում.

4) որոշակի տեսակի գործունեության իրականացման թույլատրական փաստաթղթի գործողության՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան կասեցման դեպքում, եթե համապատասխան ռեեստրում գրանցված իրավաբանական անձն իրականացնում է գործունեության միայն այդ տեսակը:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներից մեկում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է մաքսային մարմնին գրավոր հաղորդել սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերում նշված իրադարձությունների մասին համապատասխան իրադարձությունը վրա հասնելու օրվանից երեք օրվա ընթացքում:

3. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում գրանցված իրավաբանական անձանց՝ որպես մաքսային ներկայացուցիչների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների եւ անմաքս առետրի խանութների տիրապետողների, գործունեությունը կասեցված է համարվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ

Եւ 4-րդ կետերում նշված իրադարձությունները վրա հասնելու օրվան հաջորդող օրվանից: Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կամ 2-րդ կետով նախատեսված դեպքում մաքսային գործի բնագավառում իրավաբանական անձի գործունեությունը կասեցվում է իրավաբանական անձի՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում կամ 2-րդ կետում նշված դիմումը մաքսային մարմնի կողմից ստանալու օրվան հաջորդող օրվանից:

4. Իրավաբանական անձի՝ որպես մաքսային գործում գործունեություն իրականացնող անձի, գործունեության կասեցման օրվանից մաքսային ձեւակերպումների իրականացում, ժամանակավոր պահպանման պահեստում, ապրանքների հանձնում մաքսային պահեստ, ինչպես նաեւ անմաքս առետրի խանութներում ապրանքների իրացում չի թույլատրվում: Այն դեպքում, երբ իրավաբանական անձի՝ որպես ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի, գործունեության կասեցման ժամկետը գերազանցում է մեկ ամիսը, ժամանակավոր պահպանման պահեստում պահպանվող ապրանքները պետք է գործունեության կասեցմանը հաջորդող օրվանից երկու ամսվա ընթացքում նրա հաշվին հանձնվեն ժամանակավոր պահպանման այլ պահեստ:

5. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում գրանցված իրավաբանական անձանց՝ որպես մաքսային ներկայացուցիչների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների եւ անմաքս առետրի խանութների տիրապետողների, գործունեությունը վերսկսվում է այդ գործունեության կասեցման համար հիմք հանդիսացող՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքների վերացումը հաստատող փաստաթղթերն իրավաբանական անձի կողմից ներկայացվելու օրվան հաջորդող օրվանից:

Հոդված 57. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրից իրավաբանական անձին հանելը

1. Իրավաբանական անձը ենթակա է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից հանման՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 14-րդ, 20-րդ, 25-րդ, 30-րդ եւ 35-րդ հոդվածներին համապատասխան նախատեսված հիմքերով: Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող

անձանց համապատասխան ռեեստրում գրանցված իրավաբանական անձի վերակազմակերպումը վերակազմավորման ձեռով հիմք չէ՝ այդ իրավաբանական անձին տվյալ ռեեստրից հանելու համար:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից իրավաբանական անձին հանելու մասին որոշումը ձեռնարկվում է գրավոր՝ իրավաբանական անձին այդ ռեեստրում գրանցելու մասին որոշումն ընդունած մաքսային մարմնի որոշմամբ, եւ դրա ընդունման օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ այդ մասին գրավոր՝ որոշման պատճառաբանված հիմնավորմամբ, տեղեկացվում է այն իրավաբանական անձին, որի առնչությամբ նման որոշում է ընդունվել: Նշված որոշումը իրավաբանական անձի ղեկավարին կամ իրավաբանական անձի լիազոր ներկայացուցչին է հանձնվում ստորագրությամբ կամ այդ որոշման ստացման փաստը եւ ամսաթիվը հաստատող այլ եղանակով: Եթե նշված անձինք խուսափում են նշված որոշումն ստանալուց, այն ուղարկվում է փոստով՝ պատվիրված նամակով:

3. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից իրավաբանական անձին հանելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում՝

1) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում իրավաբանական անձանց գրանցելու՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով սահմանված պայմանները չպահպանելու դեպքում (բացառությամբ սույն մասի 2-րդ կետում նշված դեպքի) այդ որոշման կայացման օրվանից 15 օրը լրանալուց հետո.

2) իրավաբանական անձին մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցելու՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետով սահմանված պայմանը չպահպանելու դեպքում այդ որոշման կայացման օրվանից մեկ օր լրանալուց հետո.

3) մաքսային փոխադրողի, ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի, մաքսային պահեստի տիրապետողի, անմաքս առետրի խանութի տիրապետողի կողմից Մաքսային միության Մաքսային օրենսգրքի՝ համապատասխանաբար 20-րդ հոդվածի 2-րդ ենթակետում, 25-րդ հոդվածի 2-րդ ենթակետում, 30-րդ հոդվածի 2-րդ ենթակետում, 35-րդ հոդվածի 2-րդ ենթակետում նշված պարտականությունները չկատարելու դեպքում այդ

որոշման կայացման օրվանից 15 օրը լրանալուց հետո.

4) իրավաբանական անձի կողմից իրեն ռեեստրից հանելու մասին դիմում ներկայացվելու դեպքում՝ մաքսային մարմնի կողմից նշված դիմումը գրավոր ստանալու օրվան հաջորդող օրվանից:

4. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից իրավաբանական անձի հանումը՝ նրա լուծարման կամ վերակազմակերպման արդյունքում գործունեության դադարեցման հետ կապված (բացառությամբ իրավաբանական անձի վերակազմավորման), իրականացվում է նշված իրադարձությունները վրա հասնելու ամսաթվից: Վրա հասած իրադարձության մասին տեղեկություններն ստանալուց հետո համապատասխան ռեեստրի վարումն իրականացնող մաքսային մարմինը գրառում է կատարում իրավաբանական անձին տվյալ ռեեստրից հանելու վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նախատեսված դեպքերում մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում գրանցման մասին հաջորդ դիմումը կարող է տրվել համապատասխան ռեեստրից իրավաբանական անձին հանելու համար հիմք հանդիսացած պատճառների վերացումից հետո:

6. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը, մաքսային պահեստի տիրապետողը եւ մաքսային փոխադրողը պարտավոր են ժամանակավոր պահպանման պահեստ կամ մաքսային պահեստ ապրանքներ հանձնած կամ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները փոխադրման համար փոխանցած անձանց, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում իրավաբանական անձին գրանցելու մասին հավաստագիր (մաքսային փոխադրողի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ) տված մաքսային մարմնին իրենց գործունեությունը դադարեցնելու մտադրության մասին տեղեկացնել համապատասխան ռեեստրից հանելու համար դիմում ներկայացնելու օրվանից մեկ ամիս առաջ: Նշված ժամկետի ընթացքում չի թույլատրվում ժամանակավոր պահպանման պահեստ կամ մաքսային պահեստ ապրանքներ հանձնելը կամ մաքսային հսկողության տակ գտնվող փոխադրման համար ընդունելը:

7. Մաքսային ներկայացուցիչը պարտավոր է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից իրեն հանելու

վերաբերյալ դիմում ներկայացնելու մասին՝ նման դիմում ներկայացնելու օրվանից 15 օր առաջ, տեղեկացնել այն անձանց, որոնց հանձնարարությամբ մաքսային ձեւակերպումներ է իրականացնում: Նշված ժամկետի ընթացքում մաքսային ներկայացուցչի կողմից հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ պայմանագրեր կնքելը չի թույլատրվում:

8. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից այլ հիմքերով հանման դեպքում մաքսային ներկայացուցիչը, մաքսային փոխադրողը, ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը եւ մաքսային պահեստի տիրապետողը պարտավոր են անհապաղ, սակայն համապատասխան ռեեստրից հանելու վերաբերյալ մաքսային մարմնի կողմից որոշումն ընդունելու օրվանից ոչ ուշ, քան հինգ օր հետո, դրա մասին տեղեկացնել այն անձանց, որոնց իրենք ծառայություններ են մատուցում:

9. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից իրավաբանական անձին հանելը այդ անձին (նրա իրավահաջորդին) չի ազատում մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրման կամ պահպանման հետ կապված ձեւակերպումներն ավարտելու կամ այլ գործողություններ կատարելու պարտականությունից, որոնց իրականացման պարտականությունն առաջացել է մինչեւ Մաքսային միության Մաքսային օրենսդրության եւ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձին համապատասխան ռեեստրից հանելը:

10. Սույն հոդվածի 8-րդ մասում նշված ժամկետի ավարտից հետո չի թույլատրվում ապրանքների հանձնումը ժամանակավոր պահպանման պահեստ եւ մաքսային պահեստ:

11. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողին հանելու մասին մաքսային մարմնի որոշումն ուժի մեջ մտնելու պահից ժամանակավոր պահպանման պահեստում եւ մաքսային պահեստում գտնվող ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստի եւ մաքսային պահեստի տիրապետողի հաշվին նշված որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից երկու ամսվա ընթացքում ենթակա են հանձնման ժամանակավոր պահպանման կամ մաքսային այլ պահեստ:

12. Անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրից անմաքս առետրի

խանութի տիրապետողին հանելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 15 օրվա ընթացքում «անմաքս առետուր» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ենթակա են ձեւակերպման այլ մաքսային ընթացակարգով, բացառությամբ այն դեպքի, երբ ապրանքները հանձնվում են անմաքս առետուրի այլ խանութում դրանց իրացման համար: Նշված դեպքում, մեկ մաքսային մարմնի գործունեության տարածքում գտնվող անմաքս առետուրի այլ խանութ ապրանքների տեղափոխումն իրականացվում է այդ մաքսային մարմնի վերահսկողությամբ, իսկ այլ մաքսային մարմնի գործունեության տարածքում գտնվող անմաքս առետուրի խանութ ապրանքների տեղափոխումն իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան:

13. Անմաքս առետուրի խանութների տիրապետողների ռեեստրից անմաքս առետուրի խանութի տիրապետողին հանելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից «անմաքս առետուր» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները մաքսային նպատակներով դիտարկվում են որպես ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքներ: Այդ ապրանքների վաճառքը, ինչպես նաեւ այլ ապրանքներ անմաքս առետուրի խանութ հանձնելը չի թույլատրվում:

14. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրից իրավաբանական անձին հանելու դեպքում նշված ռեեստրում գրանցվելու համար այդ անձի կողմից տրամադրված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման վերադարձը (գործողության դադարեցումը) իրականացվում է սույն Դաշնային օրենքի 16-րդ գլխին համապատասխան:

Հոդված 58. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրի վարումը

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրը վարում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրների վարումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ մաքսային գործի բնագավառում

լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից որոշված ձեւերին համապատասխան:

3. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրները ձեւավորվում են մաքսային մարմինների՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող համապատասխան անձանց ռեեստրներում իրավաբանական անձանց գրանցելու մասին որոշումների, նման ռեեստրներից անձանց հանելու մասին որոշումների, այդ ռեեստրներում փոփոխություններ կատարելու մասին որոշումների, իրավաբանական անձանց՝ որպես մաքսային ներկայացուցիչների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների եւ անմաքս առեւտրի խանութների տիրապետողների գործունեության կասեցման եւ վերսկսման մասին որոշումների հիման վրա: Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրների էլեկտրոնային տարբերակներում փոփոխությունները մտցվում են լիազորված մաքսային մարմնի կողմից համապատասխան որոշումն ընդունելուց հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում:

4. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն ամիսը մեկ անգամից ոչ պակաս պարբերականությամբ ապահովում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրների հրապարակումն իր պաշտոնական հրատարակություններում:

Հոդված 59. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից հաշվառման վարումը եւ հաշվետվություններ ներկայացնելը

1. Ապրանքների եւ այդ ապրանքների հետ տնտեսական գործարքների հաշվառման իրականացումը մաքսային փոխադրողների, ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողների, մաքսային պահեստի տիրապետողի, անմաքս առեւտրի խանութի տիրապետողի կողմից իրականացվում է հաշվապահական հաշվառման մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ հարկերի ու հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից

հաշվետվություններ ներկայացնելու ձեւերը եւ կարգը սահմանվում են սույն Դաշնային օրենքի 177-րդ հոդվածին համապատասխան:

§ 2. Մաքսային ներկայացուցիչը

Հոդված 60. Մաքսային ներկայացուցիչը

1. Մաքսային ներկայացուցիչ կարող է լինել մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցված՝ ռուսաստանյան իրավաբանական անձը:

2. Մաքսային ներկայացուցիչն իրավունք ունի սահմանափակելու իր գործունեության ոլորտը Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին (այսուհետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ) համապատասխան առանձին կատեգորիաների ապրանքների հետ կապված կամ մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների որոշակի տեսակներով Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ (կամ) Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների հետ կապված մաքսային ձեւակերպումների իրականացմամբ, ինչպես նաեւ մեկ մաքսային մարմնի (մի քանի մաքսային մարմինների) գործունեության տարածքի շրջանակներում գործունեության տարածքով:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, մաքսային ներկայացուցչի՝ հայտարարատուների եւ այլ շահագրգիռ անձանց հետ հարաբերությունները ձեւավորվում են պայմանագրի հիման վրա: Հայտարարագրման հետ կապված ծառայությունների տրամադրման դեպքում պայմանագիրը կնքվում է անմիջապես հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի միջեւ:

4. Ծառայության տրամադրման կամ աշխատանքի կատարման հնարավորությունն ունենալու դեպքում մաքսային ներկայացուցչին չի թույլատրվում հրաժարվել պայմանագիր կնքելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պայմանագրի կատարումը դուրս է գալու սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային ներկայացուցչի կողմից սահմանափակված գործունեության ոլորտի սահմաններից, ինչպես նաեւ այն դեպքում, երբ մաքսային ներկայացուցիչը բավարար հիմքեր ունի կարծելու, որ հայտարարատուի գործողությունները կամ անգործությունը անօրինական են եւ առաջացնում են մաքսային գործի բնագավառում քրեական կամ վարչական պատասխանատվություն: Մաքսային ներկայացուցիչն իրավունք չունի պայմանագրի կնքման հարցում մեկ անձին նախապատվություն տալ մեկ այլ անձի

նկատմամբ, բացառությամբ ներկայացվող անձանց առանձին կատեգորիաների համար պայմանագրի գնի եւ այլ պայմանների հետ կապված արտոնությունների տրամադրման:

5. Մաքսային ներկայացուցիչը կարող է վճարել մաքսատուրքերը, հարկերը, եթե ապրանքների հայտարարագրման համար սահմանված մաքսային ընթացակարգով նախատեսվում է դրանց վճարումը եւ եթե հայտարարատուի ու մաքսային ներկայացուցչի միջեւ կնքված պայմանագրի պայմաններով նախատեսվում է մաքսային ներկայացուցչի կողմից մաքսատուրքերի, հարկերի վճարումը:

6. Ապրանքների հայտարարագրման եւ (կամ) դրանց բացթողման դեպքում մաքսային ներկայացուցիչը հայտարարատուի հետ համապարտ պարտականություն է կրում վճարման ենթակա մաքսային վճարների գումարի լրիվ չափով վճարման համար, անկախ մաքսային ներկայացուցչի՝ հայտարարատուի եւ իր կողմից ներկայացվող այլ անձանց հետ կնքված պայմանագրի պայմաններից:

Հոդված 61. Իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցելու պայմանները

1. Իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածով:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ ենթակետին համապատասխան ապահովագրական գումարի չափը չի կարող 20 միլիոն ռուբլուց պակաս լինել, որի սահմաններում ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական յուրաքանչյուր պատահարը վրա հասնելու դեպքում վնասի փոխհատուցում տրամադրել այն անձանց, որոնց գույքային շահերին այն հասցվել է (իր քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագրին համապատասխան, որը կարող է առաջանալ ներկայացվող անձանց գույքին վնաս հասցվելու կամ այդ անձանց հետ պայմանագրի խախտման հետեւանքով):

3. Իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցելու լրացուցիչ պայմանները հետեւյալն են՝

- 1) իրավաբանական անձի առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների

աշխատակազմում, որի միջոցով դիմումատուն նախատեսում է որպես մաքսային ներկայացուցիչ իրականացնել իր գործունեությունը, մեկ կամ մի քանի աշխատակիցների առկայություն, որոնցից յուրաքանչյուրն ունի սույն Դաշնային օրենքի 63-րդ եւ 64-րդ հոդվածներին համապատասխան սահմանված՝ որակավորման պահանջներին համապատասխանելու մասին փաստաթուղթ (այսուհետ՝ մաքսային ձեւակերպումների մասնագետ)։

2) իրավաբանական անձը պետական ձեռնարկություն չէ։

3) մաքսային գործի բնագավառում իրավաբանական անձին մի քանի անգամ (երկու կամ ավելի անգամ) վարչական պատասխանատվության ենթարկելու մասին փաստերի բացակայություն, որը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.15, 16.22 հոդվածներով եւ 16.23 հոդվածի 3-րդ մասով այն ժամկետում, որի ընթացքում իրավաբանական անձը համարվում է մաքսային գործի բնագավառում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով վարչական պատժի ենթարկված, պայմանով, որ վարչական տույժերի ընդհանուր գումարը կազմի 250 000 ռուբլի եւ ավելի։

4) 500 000 եւ ավելի ռուբլու չափով մաքսային վճարների մասով պարտքերի բացակայություն։

4. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցման մասին հավաստագիրը պետք է պարունակի՝

1) մաքսային ներկայացուցչի անվանումը, նշում դրա կազմակերպատիրական ձեւի եւ գտնվելու վայրի մասին, հարկ վճարողի հաշվառման համարը։

2) առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների առկայության մասին տեղեկություններ, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված պահանջներին՝ նշելով դրանց անվանումը եւ գտնվելու վայրը։

3) մաքսային ներկայացուցչի գործունեության ոլորտի սահմանափակման մասին տեղեկություններ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան առանձին կատեգորիաների ապրանքների հետ կապված մաքսային ձեւակերպումներ իրականացնելու առնչությամբ կամ կապված մաքսային սահմանով

տրանսպորտային միջոցների որոշակի տեսակներով Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ (կամ) Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների հետ, ինչպես նաեւ կապված մաքսային առանձին ձեւակերպումների իրականացման կամ մեկ մաքսային մարմնի (մի քանի մաքսային մարմինների) գործունեության տարածքի շրջանակներում գործունեության տարածքի սահմանափակման հետ.

4) հավաստագիր տրամադրող մաքսային մարմնի անվանումը.

5) հավաստագրի տրամադրման ամսաթիվը եւ դրա համարը:

Հոդված 62. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցման համար դիմումը

1. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցման համար դիմումը պետք է պարունակի՝

1) դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացված դիմումը մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցվելու մասին.

2) տեղեկություններ մաքսային ներկայացուցչի անվանման, կազմակերպարավական ձեւի, գտնվելու վայրի (փոստային հասցեն եւ այլ կոնտակտային տվյալներ), դիմումատուի կողմից բացված բանկային հաշիվների, ինչպես նաեւ դրա առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների մասին, որոնց միջոցով դիմումատուն նախատեսում է իրականացնել որպես մաքսային ներկայացուցիչ իր գործունեությունը դիմումը ներկայացնելու օրը՝ նշելով դրանց գտնվելու վայրերը.

3) մաքսային ներկայացուցչի գործունեության ոլորտի սահմանափակման մտադրության մասին տեղեկություններ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան առանձին կատեգորիաների ապրանքների հետ կապված մաքսային ձեւակերպումներ իրականացնելու առնչությամբ կամ կապված մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների որոշակի տեսակներով Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ (կամ) Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների հետ, ինչպես նաեւ կապված մաքսային առանձին ձեւակերպումների իրականացման կամ մեկ մաքսային մարմնի (մի քանի մաքսային մարմինների) գործունեության տարածքի շրջանակներում գործունեության տարածքի սահմանափակման հետ, կամ նման գործունեությունը առանց սահմանափակման

իրականացնելու մտադրության մասին.

4) տեղեկություններ դիմումը ներկայացնելու օրը իրավաբանական անձի աշխատակազմում (դրա առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներում) մաքսային ձեռնարկումների մասնագետների առկայության մասին.

5) տեղեկություններ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու վերաբերյալ, որը նախատեսվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ ենթակետին համապատասխան.

6) տվյալներ դիմումատուի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրության մասին պայմանագրի (պայմանագրերի) վերաբերյալ:

2. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրում գրանցման համար դիմումին կցվում են ներկայացված տեղեկությունները հաստատող հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերը.

2) Իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում դիմումատուի մասին գրառում կատարելու փաստը հաստատող փաստաթուղթը.

3) հարկային մարմնում դիմումատուին հաշվառման վերցնելու մասին հավաստագիրը,

4) մաքսային ձեռնարկումների մասնագետների որակավորման վկայագրեր,

5) մաքսային ձեռնարկումների մասնագետներին աշխատանքի ընդունելու հրամաններ կամ նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքում.

6) մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով սահմանված չափով ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը.

7) բանկերից տեղեկանքներ՝ դրանցում դիմումատուի կողմից բացված հաշիվների հաստատման վերաբերյալ.

8) դիմումատուի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրման պայմանագիրը:

Հոդված 63. Մաքսային ձեռակերպումների մասնագետ

1. Մաքսային ձեռակերպումների մասնագետ կարող է լինել Ռուսաստանի Դաշնության քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն, հանձնել է որակավորման քննություն եւ հաստատել է իր գիտելիքների համապատասխանությունը որակավորման քննության ծրագրին: Նշված որակավորման պահանջներին՝ ֆիզիկական անձի համապատասխանությունը հաստատող փաստաթուղթ է մաքսային ձեռակերպումների մասնագետի որակավորման վկայականը:

(2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185-ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

2. Մաքսային ձեռակերպումների մասնագետն իրականացնում է իր գործունեությունը որպես մաքսային ներկայացուցչի աշխատակից:

Հոդված 64. Որակավորման պահանջներին համապատասխանության ատեստավորումը

1. Մաքսային ձեռակերպումների մասնագետի որակավորման վկայական ստանալուն հավակնող անձանց՝ որակավորման պահանջներին համապատասխանության ատեստավորումը (այսուհետ՝ ատեստավորում) իրականացվում է որակավորման քննության ձեռքով: Որակավորման քննություն հաջող հանձնած անձանց տրվում է մաքսային ձեռակերպումների մասնագետի որակավորման վկայական այն ձեռքով, որը հաստատվել է մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից: Մաքսային ձեռակերպումների մասնագետի որակավորման վկայականի գործողության ժամկետը չի սահմանափակվում:

2. Մաքսային մարմինների ատեստավորման իրականացման կարգը, ատեստավորման մասնակցելու դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, որակավորման քննության ծրագիրը, այն հանձնելու կարգը եւ որակավորման վկայականների տրամադրման կարգը սահմանվում են մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից: Ընդ որում, որակավորման քննությանը կարող են մասնակցել բոլոր այն անձինք, որոնք համապատասխանում են սույն Դաշնային օրենքի 63-րդ հոդվածով սահմանված պահանջներին՝ անկախ քննությունը հանձնելու իրենց հատուկ

պատրաստվածությունից:

3. Մաքսային ձեւակերպումների մասնագետը մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայական ստանալու տարվանից հետո յուրաքանչյուր երկու տարին մեկ պարտավոր է անցնել լրացուցիչ մասնագիտական ծրագրի դասընթաց:

(2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185-ՂՕ դաշնային օրենքի 3-րդ մասի խմբագրությամբ)

Հոդված 65. Մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականի չեղարկման հիմքերը եւ կարգը

1. Մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականը չեղարկվում է հետեւյալ դեպքերում՝

1) հաստատվել է մաքսային ձեւակերպումների մասնագետի՝ կեղծ փաստաթղթեր օգտագործելու միջոցով որակավորման վկայական ստացած լինելու փաստը,

2) օրինական ուժի մեջ է մտել մաքսային ձեւակերպումների մասնագետի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձեւով որոշակի ժամկետով պատիժ նախատեսող դատական վճիռը,

3) մաքսային ձեւակերպումների մասնագետի կողմից խախտվել են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները,

4) մաքսային ձեւակերպումների մասնագետը մի քանի անգամ (երկու եւ ավելի անգամ) մաքսային գործի ոլորտում ենթարկվել է վարչական պատասխանատվության վարչական իրավախախտումների համար, որոնք նախատեսված են «Վարչական իրավախախտումների մասին» Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.15 եւ 16.22 հոդվածներով այնպիսի ժամկետով, որի ընթացքում, նշված հոդվածների համաձայն, նա համարվում է վարչական իրավախախտումների մասով վարչական պատասխանատվության ենթարկված անձ,

5) մաքսային ձեւակերպումների մասնագետը խախտել է որակավորման բարձրացման ծրագրով կրթություն ստանալու պահանջը, որը սահմանված է Դաշնային օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. Մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականի չեղարկման մասին որոշումն ընդունվում է մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից եւ (կամ) վերջինիս կողմից լիազորված մաքսային մարմնի կողմից: Նշված մարմինները մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականը չեղարկելու մասին պատճառաբանված որոշում են ընդունում: Նշված որոշման պատճենը տրամադրվում է այն անձին, որի առնչությամբ ընդունվել է այդ որոշումը՝ այն ընդունելու օրվանից երեք օրվա ընթացքում:

3. Այն անձը, որի մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականը չեղարկվել է, սույն Դաշնային օրենքի 3-րդ գլխի համաձայն, իրավունք ունի բողոքարկելու տվյալ որակավորման վկայականի չեղարկման մասին որոշումը:

4. Այն անձը, որի մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականը չեղարկվել է, իրավունք չունի նորից դիմում ներկայացնելու նշված որակավորման վկայական ստանալու համար՝

1) որակավորման վկայականը չեղարկելու մասին որոշումն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում, եթե այդ վկայականը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված հիմքերով,

2) դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ նախատեսված ժամկետի ընթացքում, եթե վկայականը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով,

3) այն ժամկետի ընթացքում, երբ անձը համարվում է մաքսային գործի ոլորտում վարչական իրավախախտումների մասով վարչական պատժի ենթարկված, որը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.15 եւ 16.22 հոդվածներով, այն դեպքում, երբ որակավորման վկայագիրը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով:

§ 3. Մաքսային փոխադրողը

Հոդված 66. Մաքսային փոխադրողը

1. Մաքսային մարմինները ռուսաստանյան իրավաբանական անձանց գրանցում են մաքսային փոխադրողների ռեեստրում:

2. Մաքսային փոխադրողի հարաբերությունները ապրանք առաքողների կամ բեռնառաքողների հետ կարգավորվում են պայմանագրի հիման վրա: Մաքսային փոխադրողը չի կարող հրաժարվել պայմանագիր կնքելուց, եթե այդ մաքսային փոխադրողը հնարավորություն ունի իրականացնելու ապրանքների փոխադրում՝ բացառությամբ այն դեպքի, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ապրանք առաքողի կամ բեռնառաքողի գործողությունները կամ անգործությունն անօրինական են եւ մաքսային գործի բնագավառում կարող են հանգեցնել քրեական կամ վարչական պատասխանատվության: Մաքսային փոխադրողն իրավունք չունի պայմանագրի կնքման հարցում մեկ անձին նախապատվություն տալու մեկ այլ անձի նկատմամբ՝ բացառությամբ ներկայացվող անձանց առանձին կատեգորիաների համար պայմանագրի գնի եւ այլ պայմանների հետ կապված արտոնությունների տրամադրման:

3. Մաքսային փոխադրողը կատարում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսային փոխադրողին մաքսային փոխադրողի ռեեստրում չգրանցելու հիմք է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-3 ենթակետերով նախատեսված՝ իր պարտականությունները չկատարելը: Մաքսային փոխադրողի կողմից նման պարտականությունները չկատարելու ապացույց է նրան վարչական պատասխանատվության ենթարկելը մաքսային գործի բնագավառում այնպիսի վարչական խախտումների համար, որոնք նախատեսված են վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.1 հոդվածով եւ (կամ) 16.9 հոդվածի 1-ին մասով այն ժամանակահատվածում, որի ընթացքում անձը համարվում է մաքսային գործի բնագավառում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով վարչական պատժի ենթարկված,

պայմանով, որ վարչական տույժերի ընդհանուր գումարը կազմի 250 000 ռուբլի եւ ավելի՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ կետով նշված դեպքերի:

5. Այն դեպքում, եթե վերջին վարչական իրավախախտմանը նախորդող տարվա ընթացքում «մաքսային տարանցիկ փոխադրում» ընթացակարգով փոխադրումների թիվը գերազանցել է 4000 փոխադրումները՝ ավտոմոբիլային տրանսպորտով իրականացվող փոխադրումների դեպքում, կամ 300 փոխադրումները՝ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների դեպքում, կամ 5000 փոխադրումները՝ երկաթուղային տրանսպորտով իրականացվող փոխադրումների դեպքում, կամ 100 փոխադրումները՝ ջրային տրանսպորտով իրականացվող փոխադրումների դեպքում, վարչական տուգանքների նշանակված ընդհանուր գումարը պետք է կազմի 800 000 ռուբլի եւ ավելի:

Հոդված 67. Իրավաբանական անձին մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցելու պայմանները

1. Իրավաբանական անձին մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 19-րդ հոդվածով:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ ենթակետին համապատասխան՝ իրավաբանական անձին մաքսային փոխադրողի ռեեստրում գրանցելու պայման է մաքսային մարմին դիմելու օրվանից մեկ տարվա ընթացքում վարչական պատասխանատվության ենթարկելու փաստի բացակայությունը՝ մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների համար, որոնք նախատեսված են վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.9, 16.11, 16.15 հոդվածներով եւ 16.23 հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով:

Հոդված 68. Մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցման համար դիմումը

1. Մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցման համար դիմումը պետք է պարունակի՝

1) դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացված դիմումը մաքսային

փոխադրողների ռեեստրում գրանցվելու մասին.

2) տվյալներ դիմումատուի անվանման, կազմակերպատիրավական ձեռի, գտնվելու վայրի (փոստային հասցեն եւ այլ կոնտակտային տվյալներ), բաց բանկային հաշիվների վերաբերյալ.

3) դիմումատուի կողմից բեռների փոխադրման գործունեություն իրականացնելու ժամկետների մասին տեղեկություն.

4) տվյալներ դիմումատուի տիրապետության տակ գտնվող եւ նրա կողմից օգտագործվող միջազգային փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների մասին (ընդհանուր քանակությունը, տվյալներ նշված տրանսպորտային միջոցներ օգտագործելու թույլտվության մասին մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ), որոնք ենթադրվում են, որ կօգտագործվեն դիմումատուի կողմից՝ որպես մաքսային փոխադրող գործունեություն իրականացնելիս, այդ թվում՝ այն տրանսպորտային միջոցների մասին, որոնք պիտանի են մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար.

5) տեղեկություններ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու վերաբերյալ, որը նախատեսվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետին համապատասխան:

2. Մաքսային փոխադրողների ռեեստրում գրանցման համար դիմումին կից պետք է ներկայացնել բեռների փոխադրման գործունեություն իրականացնելու համար թույլատրական փաստաթղթեր, եթե գործունեության տվյալ տեսակը, Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, իրականացվում է համապատասխան թույլտվությունների (լիցենզիաների) հիման վրա, ինչպես նաեւ կից պետք է ներկայացնել հայտարարված տվյալները հաստատող հետեւյալ փաստաթղթերը՝

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերը.

2) իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում դիմումատուի մասին գրառում կատարելու փաստը հաստատող փաստաթուղթը.

3) հարկային մարմնում դիմումատուին հաշվառման վերցնելու մասին հավաստագիրը.

4) փաստաթղթեր, որոնք հաստատում են դիմումատուի կողմից միջազգային

փոխադրումների համար տրանսպորտային միջոցի տիրապետման եւ օգտագործման իրավունքը, որոնք ենթադրվում է, որ կօգտագործվեն որպես մաքսային փոխադրող գործունեություն իրականացնելիս.

5) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիր, եթե այդպիսի կապարակնիքներ ու կնիքներ կան.

6) մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով սահմանված չափով ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը.

7) բանկերից տեղեկանքներ՝ դրանցում դիմումատուի կողմից բացված հաշիվների հաստատման վերաբերյալ.

8) մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ երկու տարուց ոչ պակաս ժամանակահատվածի ընթացքում դիմումատուի կողմից բեռների փոխադրման գործունեության իրականացումը հաստատող բեռնափոխադրման պայմանագրերը:

§ 4. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը

Հոդված 69. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը

1. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետող կարող է լինել ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողների ռեեստրում գրանցված ռուսաստանյան իրավաբանական անձը:

2. Ժամանակավոր պահպանման պահեստը կարող է լինել բաց կամ փակ տիպի: Ժամանակավոր պահպանման պահեստները բաց տիպի պահեստներ են, եթե դրանք հասանելի են ցանկացած անձի օգտագործման համար: Ժամանակավոր պահպանման պահեստները փակ տիպի պահեստներ են, եթե դրանք նախատեսված են տվյալ պահեստի տիրապետողի կողմից ապրանքներ պահպանելու համար եւ որոշակի կատեգորիայի ապրանքներ պահպանելու համար, այդ թվում՝ այն ապրանքները, որոնք սահմանափակ շրջանառություն ունեն եւ (կամ) որոնց համար պահանջվում են պահպանման հատուկ պայմաններ: Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողն իրավունք ունի սահմանափակելու իր գործունեության ոլորտը՝ ժամանակավոր պահպանման պահեստի տիպը սահմանելու միջոցով:

3. Ապրանքները պահպանության հանձնող անձանց հետ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողի հարաբերությունները կարգավորվում են պայմանագրի հիման վրա: Ապրանքների պահպանման հնարավորությունն ունենալու դեպքում պահեստի տիրապետողին չի թույլատրվում հրաժարվել պայմանագիր կնքելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պայմանագրի կատարումը դուրս է գալու սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն պահեստի տիրապետողի կողմից սահմանափակված գործունեության ոլորտի սահմաններից, ինչպես նաեւ երբ բավարար հիմքեր կան կարծելու, որ ապրանքները պահպանման հանձնող անձի գործողությունները կամ անգործությունն անօրինական են եւ մաքսային գործի բնագավառում հանգեցնում են քրեական կամ վարչական պատասխանատվության: Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողն իրավունք չունի պայմանագրի կնքման հարցում մեկ անձին նախապատվություն տալու մեկ այլ

անձի նկատմամբ, բացառությամբ ներկայացվող անձանց առանձին կատեգորիաների համար պայմանագրի գնի եւ այլ պայմանների հետ կապված արտոնությունների տրամադրման:

4. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողը կատարում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

5. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսային ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողի ռեեստրում չգրանցելու հիմք է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-5, 7 եւ 8 ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելը: Նման պարտականությունները չկատարելը հաստատվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողին վարչական պատասխանատվության ենթարկելով մաքսային գործի բնագավառում այնպիսի վարչական խախտումների համար, որոնք նախատեսված են վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.9 հոդվածի 1-ին մասով եւ (կամ) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողին մի քանի անգամ (երկու եւ ավելի անգամ) վարչական պատասխանատվության ենթարկելով մաքսային գործի բնագավառում այնպիսի վարչական խախտումների համար, որոնք նախատեսված են վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.13, 16.14, 16.15 հոդվածներով, եւ 16.23 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով այն ժամանակահատվածում, որի ընթացքում անձը համարվում է մաքսային գործի բնագավառում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով վարչական պատժի ենթարկված, պայմանով, որ վարչական տույժերի ընդհանուր գումարը կազմի 500 000 ռուբլի եւ ավելի:

Հոդված 70. Իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման պայմանները

1. Իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 24-րդ հոդվածով:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի

համաձայն, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայման է համարվում սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով շինություններ եւ (կամ) բաց հրապարակներ ունենալը, որոնք նախատեսված են որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար եւ համապատասխանում են սույն Դաշնային օրենքի 71-րդ հոդվածով սահմանված պայմաններին:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ ապահովագրական գումարի չափը, որի սահմաններում ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական յուրաքանչյուր պատահարը վրա հասնելու դեպքում վնասի փոխհատուցում տրամադրել այն անձանց, որոնց գույքային շահերին հասցվել է վնասը (իր քաղաքացիական պատասխանատվության դիսկի ապահովագրության պայմանագրին համապատասխան, որը կարող է առաջանալ պահպանության տակ գտնվող՝ այլ անձանց ապրանքին վնաս հասցվելու կամ այդ անձանց հետ պահպանության պայմանագրերի խախտման հետեւանքով), հաշվարկվում է՝ ելնելով հրապարակի օգտակար մակերեսից, եթե որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվում է բաց հրապարակը, եւ (կամ) օգտակար ծավալից, եթե որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվում է շինությունը, եւ 3500 ռուբլու հաշվարկով սահմանվում է օգտակար մակերեսի յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված քառակուսի մետրի համար եւ (կամ) 1000 ռուբլու հաշվարկով՝ յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված քառակուսի մետր օգտակար ծավալի համար, բայց չի կարող կազմել 2 միլիոն ռուբլուց պակաս:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները չեն կիրառվում պահեստի տիրապետողի ապրանքների պահպանման համար նախատեսված ժամանակավոր պահպանման փակ տիպի պահեստների տիրապետողների նկատմամբ:

5. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայման է մաքսային մարմին դիմելու օրվանից մեկ տարվա ընթացքում բազմակի անգամ (երկու եւ ավելի անգամ) վարչական պատասխանատվության ենթարկելու փաստի բացակայությունը մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների համար, որոնք նախատեսված են վարչական

իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.9 հոդվածի 1-ին մասով, 16.13, 16.14, 16.15 հոդվածներով եւ 16.23 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով:

6. Իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու լրացուցիչ պայման է մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը սույն Դաշնային օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան:

7. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման մասին հավաստագիրը պարունակում է՝

1) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետող անվանումը, նշում դրա կազմակերպարավական ձեւի եւ գտնվելու վայրի մասին, հարկ վճարողի հաշվառման համարը.

2) ժամանակավոր պահպանման պահեստի տիպը.

3) ժամանակավոր պահպանման պահեստի շինության եւ (կամ) բաց հրապարակի գտնվելու վայրի մասին տեղեկություններ.

4) շինության օգտակար ծավալի եւ (կամ) բաց հրապարակի օգտակար մակերեսի չափերի մասին տեղեկություններ.

5) հավաստագիր տրամադրող մաքսային մարմնի անվանումը.

6) հավաստագրի տրամադրման ամսաթիվը եւ դրա համարը:

Հոդված 71. Ժամանակավոր պահպանման պահեստի՝ հարմարություններով ապահովվածությանը, սարքավորվածությանը եւ տեղակայման վայրին ներկայացվող պահանջները

1. Որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործման համար նախատեսված շինությունը եւ (կամ) բաց հրապարակը պետք է ապահովված լինի հարմարություններով եւ սարքավորված լինեն այնպես, որպեսզի ապահովվի ապրանքների պահպանվածությունը, կողմնակի անձանց (պահեստի աշխատակից չհանդիսացող, ապրանքների նկատմամբ իրավասություն չունեցող կամ նման իրավասություններ ունեցող անձանց ներկայացուցիչ համարվող անձանց) մուտքը բացառվի, ինչպես նաեւ ապահովվելու համար նման ապրանքների

նկատմամբ մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը:

2. Որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործման համար նախատեսված շինությանը եւ (կամ) բաց հրապարակին պետք է հարակցվի կոշտ ծածկույթով (ասֆալտից, բետոնից կամ նմանատիպ այլ ծածկույթով) պահպանվող տարածք, որը հարմարեցված է ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների կայանման համար, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության տարածքով ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների՝ այնպիսի ժամանակահատվածով, որն անհրաժեշտ է «մաքսային տարանցիկ փոխադրման» մաքսային ընթացակարգն ավարտելու համար: Տվյալ պահանջը չի կիրառվում որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործման համար նախատեսված այն շինությունների եւ (կամ) բաց հրապարակների նկատմամբ, որոնք գտնվում են անցման կետերում եւ որտեղ ապրանքները չեն առաքվի «մաքսային տարանցիկ փոխադրման» մաքսային ընթացակարգի համաձայն: Նշված տարածքը համարվում է մաքսային հսկողության գոտի: Այն տրանսպորտային միջոցները, որոնք փոխադրում են մաքսային հսկողության տակ ապրանքներ, կարող են օրվա ցանկացած ժամի մտնել նշված տարածք:

3. Մաքսային հսկողության տակ ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված տարածք մուտքի համար եւ «մաքսային տարանցիկ փոխադրում» մաքսային ընթացակարգն ավարտելու համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում դրա գտնվելու համար վճար չի գանձվում:

4. Ժամանակավոր պահպանման պահեստի՝ հարմարություններով ապահովվածությանը, սարքավորվածությանը եւ տեղակայման վայրին ներկայացվում են հետեւյալ պահանջները՝

1) մերձատար ուղիների առկայությունը (տրանսպորտի տեսակից կախված).

2) ժամանակավոր պահպանման պահեստի համար նախատեսված շինությունների տեղակայումը վերգետնյա շենքերում եւ կառույցներում, որոնք համարվում են անշարժ գույք.

3) ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային զննում անցկացնելու համար հարմարեցված վայրի առկայություն, որը թույլ է տալիս իրականացնել մաքսային զննում տարվա ցանկացած եղանակի առանց զննման ենթարկվող ապրանքներին վնաս հասցնելու.

4) սույն հոդվածի 2-րդ մասում նշված տարածքին կից պատվարի առկայություն: Եթե ժամանակավոր պահպանման պահեստի շահագործման տեխնոլոգիական բնորոշիչների

հետեանքով անհնար է կամ ողջամիտ չէ պարսպապատել կից տարածքը, ապա տվյալ տարածքի մաքսատան որոշմամբ կարող է կարգ սահմանվել, որի միջոցով մաքսային հսկողության գոտին կսահմանազատվի.

5) բաց հրապարակի պարսպապատում կամ տեղանքի նշում, եթե այն օգտագործվում է որպես ժամանակավոր պահպանման պահեստ (հաշվի առնելով պահեստի առանձնահատկություններ՝ կախված Ռուսաստանի Դաշնության մաքսային սահմանից մինչև ժամանակավոր պահպանման պահեստ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ օգտագործվող տրանսպորտի տեսակից).

6) ժամանակավոր պահպանման պահեստի տարածքում չպետք է լինեն ժամանակավոր պահպանման պահեստի շահագործման հետ կապ չունեցող եւ դրա աշխատանքը չապահովող օբյեկտներ.

7) ժամանակավոր պահպանման պահեստում հարմարություններով եւ հատուկ հարմարանքներով հարմարեցված շինության առկայություն՝ նախատեսված ապրանքների պահպանության համար, որոնք կարող են վնասել այլ ապրանքների կամ պահանջում են պահպանության հատուկ պայմաններ (եթե նշված պահեստում նախատեսվում է պահպանել նման ապրանքներ).

8) հսկիչ անցակետերի եւ ժամանակավոր պահպանման պահեստի տարածքի սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման հսկողությունն ապահովող համապատասխան միջոցների առկայություն.

9) մաքսային հսկողության տեխնիկական միջոցների ապահովում տրոհվող եւ ռադիոակտիվ նյութերի համար, որի անհրաժեշտությունը, քանակությունը եւ տիպը մաքսային մարմինը սահմանում է վերադաս մաքսային մարմնի հետ՝ պահպանելով Ռուսաստանի Դաշնության գործող տեխնիկական կանոնակարգերի եւ ազգային ստանդարտների պահանջները: Ռադիացիոն անվտանգության հսկողություն իրականացնելու համար տեխնիկական միջոցների տիպը, դրանց անհրաժեշտության եւ քանակության մասին որոշում ընդունելու չափանիշները սահմանում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը.

10) զննման ռենտգենային տեխնիկայի առկայություն, որի անհրաժեշտությունը եւ

քանակությունը սահմանում է մաքսային մարմինը՝ վերադաս մաքսային մարմնի հետ համաձայնության պայմաններում: Ձննման ռենտգենային տեխնիկայի տիպը, դրա անհրաժեշտության եւ քանակության մասին որոշում ընդունելու չափանիշները սահմանում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը:

11) կշռող սարքի առկայություն կշռման տարբեր սահմաններով, որն ապահովում է ժամանակավոր պահպանման պահեստում հանձնման ենթակա ապրանքները կշռելու հնարավորություն, մասնավորապես՝ տակդիրների, հենարանների եւ այլ հարմարանքների վրա, որոնք սովորաբար կիրառվում են ժամանակավոր պահպանման պահեստում պահպանման համար նախատեսված ապրանքների տեղափոխման համար:

12) ապրանքների հաշվառման ավտոմատացված համակարգերի առկայություն, որոնք համատեղելի են մաքսային մարմնի կողմից օգտագործման համար թույլատրված ծրագրային արտադրանքի հետ:

13) հեռախոսային եւ ֆաքսիմիլային կապի, օրգտեխնիկայի եւ բազմացնող (պատճենահանող) տեխնիկայի առկայություն:

14) մաքսային մարմինն էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փոխանցման հնարավորության ապահովում, որոնք ներառված են ժամանակավոր պահպանման պահեստում գտնվող ապրանքների մասին հաշվետվությունների մեջ եւ էլեկտրոնային տարբերակով մաքսային մարմնից տեղեկությունների ստացման հնարավորության ապահովում ժամանակավոր պահպանման պահեստում գտնվող ապրանքների բացթողման մասին:

15) բեռնման-բեռնաթափման տեխնիկայի առկայություն (ինքնաբարձիչներ, էլեկտրաբարձիչներ եւ էլեկտրասայլակներ, մեխանիկական սայլակներ, ամբարձիչներ, վերհան մեքենաներ եւ այլ բեռնման-բեռնաթափման տեխնիկա):

16) ապրանքների հաշվեգրման եւ հաշվառման էլեկտրոնային համակարգերի առկայություն (այն ժամանակավոր պահպանման պահեստների համար, որոնք սարքավորված են ապրանքների պահպանման հասցեագրված ավտոմատ համակարգով), որոնք համատեղելի են մաքսային մարմնի կողմից օգտագործվող ծրագրային արտադրանքի հետ եւ որը հնարավորություն է տալիս մաքսային մարմնին վերահսկելու ապրանքների տեղակայումը եւ գտնվելու վայրը խցիկներում, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս պահեստի

աշխատողներին եւ տվյալ ապրանքների նկատմամբ նման իրավասություն ունեցող անձանց կատարել ապրանքների զննում, չափում, վերահաշվարկ, կշռում՝ նշված գործողություններն իրականացնելու ամսաթվի եւ ժամանակի որոշմամբ.

17) բաց տիպի ժամանակավոր պահպանման պահեստը պետք է տեղակայվի տրանսպորտային հանգույցներին եւ տրանսպորտային մայրուղիներին բավականին մոտիկ.

18) ժամանակավոր պահպանման պահեստը պետք է տեղակայվի այնպիսի տարածքի սահմաններում, որի շրջագիծը հատված չէ.

19) ժամանակավոր պահպանման պահեստը չի կարող տեղակայվել շարժական տրանսպորտային միջոցների կամ որեւէ տիպի շարժական տրանսպորտային սարքավորման վրա:

5. Հաշվի առնելով անցման կետի մասնագիտական կողմը, անցման հնարավորությունները եւ սարքավորումները՝ մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն իրավունք ունի սահմանելու լրացուցիչ եւ (կամ) այլ պահանջներ ժամանակավոր պահպանման պահեստի եւ դրան հարակից տարածքի հարմարանքների, սարքավորման, գտնվելու վայրի նկատմամբ, եթե ժամանակավոր պահպանման պահեստը տեղակայված է անցման կետում, կամ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանին կից վայրում, որոնց պահպանման դեպքում ժամանակավոր պահպանման պահեստի տարածքում մաքսային մարմին կտեղակայվի:

6. Մաքսային մարմնի որոշման հիման վրա փակ տիպի պահեստների հարմարությունների, սարքավորումների եւ գտնվելու վայրի նկատմամբ պահանջները, որոնք նշված են սույն հոդվածի 4-րդ մասի 6-րդ, 11-րդ, 15-րդ եւ 18-րդ կետերում, կարող են չկիրառվել, ելնելով պահպանվող ապրանքների առանձնահատկություններից, եթե պահպանվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված չափանիշները:

Հոդված 72. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումը

1. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումը պետք է պարունակի՝

1) դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացված դիմումը՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցվելու մասին.

2) տվյալներ դիմումատուի անվանման, կազմակերպարավական ձեռի, գտնվելու վայրի, բաց բանկային հաշիվների վերաբերյալ.

3) տվյալներ ժամանակավոր պահպանման պահեստի տիպի վերաբերյալ (փակ տիպի ժամանակավոր պահպանման պահեստների համար).

4) տվյալներ դիմումատուի տիրապետության տակ գտնվող եւ որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինությունների եւ (կամ) բաց հրապարակների, դրանց գտնվելու վայրի, հարմարություններով ապահովվածության, սարքավորվածության եւ նյութատեխնիկական հագեցվածության վերաբերյալ.

5) տվյալներ դիմումատուի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրության մասին պայմանագրի (պայմանագրերի) վերաբերյալ.

6) տվյալներ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու վերաբերյալ.

7) տվյալներ որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինության օգտակար մակերեսի եւ (կամ) բաց հրապարակի օգտակար ծավալի չափերի վերաբերյալ:

2. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումին կցվում են ներկայացված տեղեկությունները հաստատող հետեւյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերը.

2) Իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում դիմումատուի մասին գրառում կատարելու փաստը հաստատող փաստաթղթերը.

3) հարկային մարմնում դիմումատուին հաշվառման վերցնելու մասին հավաստագիրը,

4) որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինությունների եւ (կամ) բաց հրապարակների տիրապետման իրավունքը հաստատող փաստաթղթերը.

5) որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինությունների եւ (կամ) բաց հրապարակների հատակագծերն ու գծագրերը.

6) բանկերից տեղեկանքներ՝ դրանցում դիմումատուի կողմից բացված հաշիվների հաստատման վերաբերյալ.

7) դիմումատուի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրման պայմանագիրը.

8) մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը.

9) հաշվարկային փաստաթղթերը, որոնց հիման վրա որոշվել է շինության եւ (կամ) բաց հրապարակի օգտակար ծավալը.

10) թույլատրական փաստաթղթեր, որոնցով հաստատվում է հատուկ կատեգորիայի ապրանքների պահպանում իրականացնելու դիմումատուի իրավունքը, եթե նման փաստաթղթերի առկայությունը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ (այն դեպքում, երբ դիմումատուն ծրագրում է պահպանել այդ ապրանքները, որոնք պահանջում են թույլատրման նման փաստաթղթեր).

11) այլ փաստաթղթեր, որոնք ներկայացվում են դիմումատուի կողմից հայտարարված տեղեկությունները հաստատելու համար՝ ըստ նրա հայեցողության:

Հոդված 73. Ժամանակավոր պահպանման պահեստի օգտակար ծավալի եւ (կամ) օգտակար մակերեսի որոշումը

1. Ժամանակավոր պահպանման պահեստի օգտակար ծավալ եւ (կամ) օգտակար մակերես համարվում է շինության ընդհանուր ծավալը եւ (կամ) բաց հրապարակի ընդհանուր մակերեսը, որը դիմումատուն ծրագրում է օգտագործել մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների պահպանում իրականացնելու համար՝ հաշվի առնելով սանիտարահամաճարակաբանական ստուգման, հրշեջ հսկողության եւ պետական այլ տիպի ստուգման (հսկողության) պահանջները, որոնք սահմանվել են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Ժամանակավոր պահպանման պահեստի օգտակար ծավալի եւ (կամ)

օգտակար մակերեսի տիրույթում չեն ներառվում, մասնավորապես՝

1) այն վայրերը, որոնք նախատեսված են մաքսային զննում իրականացնելու համար, այդ թվում՝ զննման ռենտգենային տեխնիկայի օգտագործմամբ (զննման այլ տեխնիկայի օգտագործմամբ) եւ այն վայրերը, որոնք համալրված են ապրանքները կշռելու հարմարանքներով.

2) վայրեր, որոնք նախատեսված են ապրանքների պահպանման համար այն դեպքերում, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 145-րդ հոդվածով.

3) տեխնոլոգիական անցումները (երթանցերը) եւ շինությունները (հրապարակները), որոնք զբաղեցված են պահեստային տեխնոլոգիական սարքավորումներով:

2. Ժամանակավոր պահպանման պահեստի օգտակար ծավալը եւ (կամ) օգտակար մակերեսը սահմանվում են դիմումատուի կողմից ինքնուրույն՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթեր կազմելու միջոցով, որոնք ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողների ռեեստրում գրանցվելու ժամանակ ներկայացվում են մաքսային մարմին:

Հոդված 74. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման չափը

Որպես ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետող գործունեություն իրականացնելիս, մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման չափը չի կարող լինել ավելի քիչ, քան՝

1) 2,5 միլիոն ռուբլի եւ լրացուցիչ 300 ռուբլի՝ շինության օգտակար ծավալի յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված խորանարդ մետրի համար, եթե որպես ժամանակավոր պահպանման պահեստ՝ շինություն է օգտագործվում, եւ (կամ) 1000 ռուբլի՝ հրապարակի օգտակար ծավալի յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված քառակուսի մետրի համար, եթե որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվում է հրապարակ՝ բաց տիպի ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողների դեպքում.

2) 2,5 միլիոն ռուբլի՝ փակ տիպի ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողների դեպքում:

§ 5. Մաքսային պահեստի տիրապետողը

Հոդված 75. Մաքսային պահեստի տիրապետողը

1. Մաքսային պահեստի տիրապետող կարող է լինել մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցված ռուսաստանյան իրավաբանական անձը:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային պահեստները կարող են լինել բաց կամ փակ տիպի: Մաքսային պահեստի տիրապետողն իրավունք ունի սահմանափակելու իր գործունեության ոլորտը՝ մաքսային պահեստի տիպը սահմանելու միջոցով:

3. Մաքսային պահեստի տիրապետողների՝ հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ հարաբերությունները ձեւավորվում են պայմանագրի հիման վրա: Ապրանքների պահպանման հնարավորությունն ունենալու դեպքում պահեստի տիրապետողին չի թույլատրվում հրաժարվել պայմանագիր կնքելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պայմանագրի կատարումը դուրս է գալու սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն պահեստի տիրապետողի կողմից սահմանափակված գործունեության ոլորտի սահմաններից, ինչպես նաեւ այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան կարծելու, որ ապրանքները պահպանման հանձնող անձի գործողությունները կամ անգործությունը անօրինական են եւ մաքսային գործի բնագավառում քրեական կամ վարչական պատասխանատվություն են առաջացնում:

4. Մաքսային փոխադրողն իրավունք չունի պայմանագրի կնքման հարցում մեկ անձին նախապատվություն տալու մեկ այլ անձի նկատմամբ, բացառությամբ ներկայացվող անձանց առանձին կատեգորիաների համար պայմանագրի գնի եւ այլ պայմանների հետ կապված արտոնությունների տրամադրման:

5. Մաքսային փոխադրողը կատարում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 31-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

6. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսային ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողին

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողի ռեեստրում չգրանցելու հիմք է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-6, 8 եւ 9 ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելը: Նման պարտավորությունները չկատարելու ապացույց է համարվում Մաքսային գործի բնագավառում իրավաբանական անձին մի քանի անգամ (երկու կամ ավելի անգամ) վարչական պատասխանատվության ենթարկելու մասին փաստերի բացակայությունը, որը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.15, 16.22 հոդվածներով այն ժամկետում, որի ընթացքում իրավաբանական անձը համարվում է մաքսային գործի բնագավառում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով վարչական պատժի ենթարկված՝ պայմանով, որ վարչական տույժերի ընդհանուր գումարը կազմի 250 000 ռուբլի եւ ավելի:

Հոդված 76. Իրավաբանական անձին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայմանները

1. Իրավաբանական անձին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 29-րդ հոդվածով:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայման է համարվում սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով շինություններ եւ (կամ) բաց հրապարակներ ունենալը, որոնք նախատեսված են որպես մաքսային պահեստ օգտագործվելու համար եւ համապատասխանում են սույն Դաշնային օրենքի 80-րդ հոդվածով սահմանված պայմաններին:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ ապահովագրական գումարի չափը, որի սահմաններում ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական յուրաքանչյուր պատահարը վրա հասնելու դեպքում վնասի փոխհատուցում տրամադրել այն անձանց, որոնց գույքային շահերին հասցվել է վնասը (իր քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրության

պայմանագրին համապատասխան, որը կարող է առաջանալ պահպանության տակ գտնվող՝ այլ անձանց ապրանքին վնաս հասցվելու կամ այդ անձանց հետ պահպանության պայմանագրերի խախտման հետեանքով), հաշվարկվում է՝ ելնելով հրապարակի օգտակար մակերեսից, եթե որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվում է բաց հրապարակը եւ (կամ), օգտակար ծավալից, եթե որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվում է շինությունը, եւ սահմանվում է 1,000 ռուբլու հաշվարկով օգտակար մակերեսի յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված քառակուսի մետրի համար եւ (կամ) 1000 ռուբլու հաշվարկով յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված քառակուսի մետր օգտակար ծավալի համար, բայց չի կարող կազմել 2 միլիոն ռուբլուց պակաս: Սույն մասով սահմանված պահանջները չեն կիրառվում փակ տիպի մաքսային պահեստի տիրապետողների նկատմամբ, որոնք նախատեսված են տվյալ պահեստի տիրապետողի ապրանքների պահպանության համար:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ իրավաբանական անձին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայման է մաքսային մարմին դիմելու օրվանից մեկ տարվա ընթացքում մի քանի անգամ (երկու եւ ավելի անգամ) վարչական պատասխանատվության ենթարկելու փաստի բացակայությունը մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների համար, որոնք նախատեսված են վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.9 հոդվածի 1-ին մասով, 16.13, 16.14, 16.15 հոդվածներով եւ 16.23 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով:

5. Իրավաբանական անձին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցելու լրացուցիչ պայման է մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը սույն Դաշնային օրենքի 79-րդ հոդվածին համապատասխան:

6. Մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման մասին հավաստագիրը պետք է պարունակի՝

1) մաքսային պահեստի տիրապետողի անվանումը, նշում դրա կազմակերպատիրավական ձեւի եւ գտնվելու վայրի մասին, հարկ վճարողի հաշվառման համարը.

2) մաքսային պահեստի տիպը.

3) մաքսային պահեստի շինության եւ (կամ) բաց հրապարակի գտնվելու վայրը.

4) շինության օգտակար ծավալի եւ (կամ) բաց հրապարակի օգտակար մակերեսի չափերի մասին տեղեկություններ.

5) հավաստագիր տրամադրող մաքսային մարմնի անվանումը.

6) հավաստագրի տրամադրման ամսաթիվը եւ դրա համարը:

Հոդված 77. Մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումը

1. Մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման մասին դիմումը պետք է պարունակի՝

1) տվյալներ դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացված դիմումը մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցվելու մասին.

2) տվյալներ դիմումատուի անվանման, կազմակերպատիրավական ձեւի, գտնվելու վայրի, բաց բանկային հաշիվների վերաբերյալ.

3) տեղեկություններ մաքսային պահեստի տիպի մասին (փակ տիպի պահեստի դեպքում՝ նաեւ այդ տիպի պահեստ ընտրելու անհրաժեշտության եւ նպատակահարմարության հիմնավորում).

4) տվյալներ դիմումատուի տիրապետության տակ գտնվող եւ որպես մաքսային պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինությունների եւ (կամ) բաց հրապարակների, դրանց գտնվելու վայրի, հարմարություններով ապահովվածության, սարքավորվածության եւ նյութատեխնիկական հագեցվածության վերաբերյալ.

5) տվյալներ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու վերաբերյալ.

6) տվյալներ դիմումատուի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրության մասին պայմանագրի (պայմանագրերի) վերաբերյալ, որոնք նախատեսված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ

ենթակետով՝ բաց տիպ մաքսային պահեստ բացելու դեպքում:

2. Մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումին կցվում են ներկայացված տեղեկությունները հաստատող հետեւյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերը.

2) իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում դիմումատուի մասին գրառում կատարելու փաստը հաստատող փաստաթուղթը.

3) հարկային մարմնում դիմումատուին հաշվառման վերցնելու մասին հավաստագիրը.

4) որպես մաքսային պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինությունների եւ (կամ) բաց հրապարակների տիրապետման իրավունքը հաստատող փաստաթղթերը.

5) որպես մաքսային պահեստ օգտագործվելու համար նախատեսված շինությունների եւ (կամ) բաց հրապարակների հատակագծերն ու գծագրերը.

6) մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը.

7) բանկերից տեղեկանքներ՝ դրանցում դիմումատուի կողմից բացված հաշիվների հաստատման վերաբերյալ.

8) հաշվարկային փաստաթղթերը, որոնց հիման վրա որոշվել է շինության օգտակար ծավալը եւ (կամ) բաց հրապարակի օգտակար ծավալը.

9) դիմումատուի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրման պայմանագիրը:

Հոդված 78. Մաքսային պահեստի օգտակար ծավալի եւ օգտակար մակերեսի սահմանումը

1. Մաքսային պահեստի օգտակար ծավալ եւ (կամ) օգտակար մակերես համարվում է շինության ընդհանուր ծավալը եւ (կամ) բաց հրապարակի ընդհանուր մակերեսը, որը դիմումատուն ծրագրում է օգտագործել «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի տակ ձեւակերպված ապրանքների պահպանում իրականացնելու համար՝ հաշվի առնելով

սանիտարահամաճարակաբանական ստուգման, հրշեջ հսկողության եւ պետական այլ տիպի ստուգման (հսկողության) պահանջները, որոնք սահմանվել են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Մաքսային պահեստի օգտակար ծավալի եւ (կամ) օգտակար մակերեսի տիրույթում չեն ներառվում, մասնավորապես՝

1) այն վայրերը, որոնք նախատեսված են մաքսային զննում իրականացնելու համար, այդ թվում՝ զննման ռենտգենային տեխնիկայի օգտագործմամբ (զննման այլ տեխնիկայի օգտագործմամբ), եւ այն վայրերը, որոնք համալրված են ապրանքները կշռելու հարմարանքներով.

2) տեխնոլոգիական անցումները (երթանցերը) եւ շինությունները (հրապարակները), որոնք զբաղեցված են պահեստային տեխնոլոգիական սարքավորումներով:

2. Մաքսային պահեստի օգտակար ծավալը եւ (կամ) օգտակար մակերեսը մաքսային պահեստի տիրապետողի կողմից սահմանվում է ինքնուրույն՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթեր կազմելու միջոցով, որոնք մաքսային պահեստի տիրապետողների ռեեստրում գրանցվելու ժամանակ ներկայացվում են մաքսային մարմին:

Հոդված 79. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման չափը

Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման չափը որպես մաքսային պահեստի տիրապետող գործունեություն իրականացնելիս չի կարող լինել ավելի քիչ, քան՝

1) 2,5 միլիոն ռուբլի եւ լրացուցիչ 300 ռուբլի՝ տարածքի օգտակար ծավալի յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված խորանարդ մետրի համար, եթե որպես մաքսային պահեստ կիրառվում է շինություն՝ բաց տիպի մաքսային պահեստի տիրապետողների դեպքում, եւ (կամ) 1000 ռուբլի՝ հրապարակի օգտակար ծավալի յուրաքանչյուր զբաղված եւ չզբաղված խորանարդ մետրի համար, եթե որպես մաքսային պահեստ կիրառվում է բաց հրապարակ.

2) 2,5 միլիոն ռուբլի՝ փակ տիպի մաքսային պահեստի տիրապետողների դեպքում:

Հոդված 80. Մաքսային պահեստի՝ հարմարություններով ապահովվածությանը, սարքավորվածությանը եւ տեղակայման վայրին ներկայացվող պահանջները

1. Որպես մաքսային պահեստ օգտագործման համար նախատեսված շինությունը եւ (կամ) բաց հրապարակը պետք է ապահովված լինի հարմարություններով եւ սարքավորված լինի այնպես, որ ապահովվի ապրանքների պահպանվածությունը, կողմնակի անձանց (պահեստի աշխատակից չհանդիսացող, ապրանքների նկատմամբ իրավասություն չունեցող կամ նման իրավասություններ ունեցող անձանց ներկայացուցիչ համարվող անձանց) մուտքը բացառվի, ինչպես նաեւ ապահովելու համար նման ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը: Մաքսային պահեստի գտնվելու վայրը սահմանվում է՝ հաշվի առնելով առետրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների եւ այլ շահագրգիռ անձանց շահերը:

2. Մաքսային պահեստի՝ հարմարություններով ապահովվածությանը, սարքավորվածությանը եւ տեղակայման վայրին ներկայացվում են հետեւյալ պահանջները.

1) շինություններ, որոնք նախատեսված են որպես մաքսային պահեստ օգտագործման համար, տեղակայվում են միայն վերերկրյա շենքերում եւ կառույցներում, որոնք համարվում են անշարժ գույք (բաց տիպի մաքսային պահեստների դեպքում): Մաքսային պահեստը չի կարող տեղակայվել շարժական տրանսպորտային միջոցների կամ որեւէ տիպի շարժական տրանսպորտային սարքավորման վրա:

2) մերձատար ուղիների առկայությունը (տրանսպորտի տեսակից կախված)

3) բեռնման-բեռնաթափման հրապարակի առկայություն, որը կցված է մաքսային պահեստի շինությանը.

4) մաքսային պահեստի տարածքը պետք է պարսպապատվի, ունենա հսկիչ անցակետ (հսկիչ անցակետեր) եւ պետք է դրա շրջագիծը հատված չլինի.

5) մաքսային պահեստի տարածքը եւ շինությունը պետք է ունենա անվանում՝ «Մաքսային պահեստ» ռուսերենով եւ անգլերենով.

6) մաքսային պահեստի տարածքում եւ շինությունում չպետք է լինեն մաքսային պահեստի

շահագործման հետ կապ չունեցող եւ դրա աշխատանքը չապահովող օբյեկտներ.

7) մաքսային պահեստում պետք է առանձնացվեն, ապահովված լինեն հարմարություններով եւ հարմարեցվեն շինություններ, որոնք նախատեսված են պահպանման հատուկ պայմաններ պահանջող ապրանքների պահպանման համար (եթե մաքսային պահեստը նախատեսված է նման ապրանքների պահպանման համար).

8) մաքսային պահեստում պետք է առանձնացվեն եւ մաքսային պահեստի տիրապետողի համար ցանկացած ընդունելի եղանակով սահմանազատվեն հրապարակները (սահմանազատող ժապավեն, միջնապատեր, տեխնոլոգիական անցումներ, որոնց վրա կատարված է նշում՝ համապատասխան ցուցանակներով եւ նշումներով)

ա) մաքսային պահեստից ապրանքների դուրսբերումից առաջ պահպանման համար, որոնց նկատմամբ ավարտված է մաքսային պահեստ մաքսային ընթացակարգը.

բ) ապրանքների համար, որոնց առնչությամբ ներկայացված է մաքսային հայտարարագիր մաքսային պահեստ մաքսային ընթացակարգի հայտարարագրմամբ՝ մաքսային տարանցիկ փոխադրում մաքսային ընթացակարգի ավարտից հետո.

գ) արտահանում մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների պահպանության համար՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 234-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

9) կշռող սարքի առկայություն կշռման տարբեր սահմաններով, որը մաքսային պահեստում հանձնման ենթակա ապրանքները կշռելու հնարավորություն է ապահովում, մասնավորապես՝ տակդիրների, հենարանների եւ այլ հարմարանքների վրա, որոնք սովորաբար կիրառվում են ապրանքների տեղափոխման համար.

10) հեռախոսային եւ ֆաքսիմելային կապի, բազմացնող (պատճենահանող) տեխնիկայի առկայություն.

11) ապրանքների հաշվառման ավտոմատացված համակարգերի առկայություն, որոնք համատեղելի են մաքսային մարմնի կողմից օգտագործման համար թույլատրված ծրագրային արտադրանքի հետ.

12) ապրանքների տեղաբաշխման եւ հաշվառման էլեկտրոնային համակարգի

առկայություն (մաքսային պահեստների, որոնք սարքավորված են ապրանքների պահպանման հասցեագրած ավտոմատ համակարգով), որը համապատասխանում է մաքսային մարմինների կողմից օգտագործվող ծրագրային արտադրանքի հետ եւ որը թույլ է տալիս մաքսային մարմնին վերահսկել՝

ա) խցերում ապրանքների տեղաբաշխումն ու դրանց հայտնաբերումը.

բ) պահեստի աշխատակիցների եւ ապրանքների նկատմամբ իրավասություն ունեցող անձանց կողմից ապրանքների զննումների, չափումների, վերահաշվարկների, կշռման իրականացումը՝ նշված գործողությունների ամսաթվի եւ ժամանակի որոշմամբ.

13) պահեստի յուրաքանչյուր վայրի մաքսային պահեստում պահպանվող ապրանքների նույնականացման նպատակներով պետք է կցված լինի տեղեկանք, որում ներառված են հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքի հայտարարագրի գրանցման համարը.

բ) ապրանքների կշիռը.

գ) Մաքսային պահեստում պահելու՝ ապրանքների պահպանության ժամկետը լրանալու մասին տվյալները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված հրապարակների տեղանքի եւ չափսերի փոփոխություն թույլատրվում է մաքսային մարմնի կողմից երեք աշխատանքային օրերի ընթացքում գրավոր տեղեկատվություն ներկայացնելու դեպքում՝ պայմանով, որ շինության (բաց հրապարակի) ընդհանուր չափսը (ընդհանուր մակերեսը), որն օգտագործվում է մաքսային պահեստ մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների պահպանման նպատակով, չգերազանցի այն ծավալը (մակերեսը), որի առնչությամբ տրամադրված է մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում:

§ 6. Անմաքս առեւտրի խանութի տիրապետողը

Հոդված 81. Անմաքս առեւտրի խանութի տիրապետողը

1. Անմաքս առեւտրի խանութի տիրապետող կարող է լինել անմաքս առեւտրի խանութի տիրապետողների ռեեստրում գրանցված ռուսաստանյան իրավաբանական անձը:

2. Անմաքս առեւտրի խանութի տիրապետողը կատարում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 36-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ ենթակետի համաձայն՝ անմաքս առեւտրի խանութի տիրապետողին Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 36-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները չկատարելու համար հանում են անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրից: Այդ պարտականությունները չկատարելու ապացույց է համարվում անմաքս առեւտրի խանութի տիրապետողին վարչական պատասխանատվության ենթարկելը՝ Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.9 հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտման համար եւ (կամ) անմաքս առեւտրի խանութի տիրապետողին բազմակի (երկու եւ ավելի) անգամ Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.2, 16.3, 16.14, 16.15, 16.19 հոդվածներով եւ 16.23 հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով նախատեսված՝ մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների համար, այն ժամկետի ընթացքում, երբ անձը համարվում է նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով վարչական տույժի ենթարկված՝ պայմանով, որ սահմանված վարչական տուգանքների գումարը, ըստ նշված հոդվածների, կազմի, այդ թվում նաեւ ամբողջությամբ՝ 250.000 ռուբլի եւ ավելի:

Հոդված 82. Իրավաբանական անձին անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայմանները

1. Իրավաբանական անձին անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 34-րդ

հողվածով:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցելու պայման է համարվում սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով շինություններ ունենալը, որոնք պիտանի են որպես անմաքս առետրի խանութ օգտագործվելու համար եւ համապատասխանում են սույն Դաշնային օրենքի 84-րդ հոդվածով սահմանված պայմաններին:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ ենթակետին համապատասխան՝ իրավաբանական անձին անմաքս առետրի խանութի տիրապետողների ռեեստրում գրանցելու պայման է մաքսային մարմին դիմելու օրվանից մեկ տարվա ընթացքում բազմակի անգամ (երկու եւ ավելի անգամ) վարչական պատասխանատվության ենթարկվելու փաստի բացակայությունը մաքսային գործի բնագավառում իրավախախտումների համար, որոնք նախատեսված են վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.23 հոդվածի 3-րդ մասով, 16.2, 16.13, 16.14, 16.19 հոդվածներով:

4. Իրավաբանական անձին անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցելու լրացուցիչ պայման է մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը 2,5 միլիոն ռուբլու չափով:

5. Իրավաբանական անձին անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցելուց առաջ անմաքս առետրի խանութի բացումը պետք է համապատասխանի Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը:

6. Անմաքս առետրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցման համար հավաստագիրը պետք է պարունակի՝

1) անմաքս առետրի խանութի տիրապետողի անվանումը, նշում դրա կազմակերպարավական ձեւի եւ գտնվելու վայրի մասին, հարկ վճարողի հաշվառման համարը.

2) անմաքս առետրի խանութի առետրի սրահի գտնվելու վայրը.

- 3) անմաքս առեւտրի խանութի պահեստի գտնվելու վայրը.
- 4) անմաքս առեւտրի խանութի պահեստի մակերեսի մասին տեղեկություններ.
- 5) հավաստագիր տրամադրող մաքսային մարմնի անվանումը.
- 6) հավաստագրի տրամադրման ամսաթիվը եւ դրա համարը:

Հոդված 83. Անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցման պայմանները

1. Անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումը պետք է պարունակի՝

1) դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացված դիմումը՝ անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցվելու մասին.

2) տվյալներ դիմումատուի անվանման, կազմակերպարավական ձեռի, գտնվելու վայրի, բաց բանկային հաշիվների վերաբերյալ.

3) տվյալներ դիմումատուի տիրապետության տակ գտնվող եւ որպես անմաքս առեւտրի խանութ օգտագործվելու համար նախատեսված շինությունների, դրանց գտնվելու վայրի, հարմարություններով ապահովվածության, սարքավորվածության եւ նյութատեխնիկական հագեցվածության վերաբերյալ.

4) տվյալներ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու վերաբերյալ.

5) մանրաձախ առեւտրի գրանցման եւ թույլատրման փաստաթղթերի մասին տեղեկություններ.

6) անմաքս առեւտրի խանութի բացումը անցման կետում ռեժիմ սահմանելու կարգի համաձայն համաձայնեցնելու մասին տեղեկություններ

2. Անմաքս առեւտրի խանութների տիրապետողների ռեեստրում գրանցման համար դիմումին կցվում են ներկայացված տեղեկությունները հաստատող հետեւյալ փաստաթղթերը.

- 1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերը.
- 2) Իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում դիմումատուի մասին գրառում կատարելու փաստը հաստատող փաստաթուղթը.
- 3) հարկային մարմնում դիմումատուին հաշվառման վերցնելու մասին հավաստագիրը.
- 4) դիմումատուի կողմից տարածքները տիրապետելու իրավունքը հաստատող փաստաթղթեր, որոնք նախատեսված են որպես անմաքս առևտրի խանութ օգտագործվելու համար.
- 5) որպես անմաքս առևտրի խանութ օգտագործվելու համար նախատեսված շինությունների հատակագծերն ու գծագրերը.
- 6) մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովող տրամադրումը հաստատող փաստաթղթերը.
- 7) բանկերից տեղեկանքներ՝ դրանցում դիմումատուի կողմից բացված հաշիվների հաստատման վերաբերյալ.
- 8) մանրածախ առևտրի գրանցման եւ թույլատրական փաստաթղթերի մասին տեղեկություններ.

Հոդված 84. Անմաքս առևտրի խանութի՝ հարմարություններով ապահովվածությանը, սարքավորվածությանը եւ տեղակայման վայրին ներկայացվող պահանջները

1. Անմաքս առևտրի խանութի շինությունները կարող են լինել շինությունների, պահեստների օժանդակ մաքսային դահլիճներ: Նշված շինությունները պետք է սարքավորված լինեն այնպես, որ ապրանքների վաճառքը կատարվի բացառապես անմաքս առևտրի խանութի մաքսային դահլիճում եւ ապահովվի ապրանքների պահպանությունն ու նրանց նկատմամբ մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը:

2. Օժանդակ շինությունները եւ անմաքս առևտրի խանութի պահեստը պետք է ապահովված լինեն հարմարություններով եւ սարքավորումներով այնպես, որ կողմնակի անձինք (անմաքս առևտրի խանութի աշխատող չհանդիսացող, ապրանքների նկատմամբ իրավասություն չունեցող կամ իրավասություն ունեցող անձանց ներկայացուցիչ չհանդիսացող

անձինք) չկարողանան մուտք գործել այդ շինություններ, ինչպես նաև այն, որ ապահովվի նշված շինությունների վրա մաքսային նույնականացման միջոցներ սահմանելը:

3. Անմաքս առևտրի խանութի՝ հարմարություններով ապահովվածությանը, սարքավորվածությանը եւ տեղակայման վայրին ներկայացվում են հետտեսյալ պահանջները.

1) անմաքս առևտրի խանութի տարածքում չպետք է լինեն դրա շահագործման հետ կապ չունեցող եւ դրա աշխատանքը չապահովող օբյեկտներ.

2) անմաքս առևտրի խանութի պահեստ կարող է լինել միայն շինությունը: Բաց հրապարակների օգտագործումը՝ որպես անմաքս առևտրի խանութ, չի թույլատրվում: Անմաքս առևտրի խանութի պահեստում չեն կարող տեղակայվել անձանց անցումը ապահովող միջանցքներ, նախամուտքեր, նախասրահներ, վարչական-կենցաղային եւ տեխնոլոգիական շինություններ, ինչպես նաև փաթեթավորման եւ փաթեթման նյութերի, տեխնոլոգիական սարքավորումների, գույքի, տարանների, հավաքող մեքենաների, փաթեթավորումների մնացորդների պահպանման համար նախատեսված տեղանքներ: Անմաքս առևտրի խանութի պահեստում պետք է լինեն կշռող սարքեր՝ կշռման տարբեր սահմանաչափերով, որոնք անմաքս առևտրի խանութում իրացման համար նախատեսված ապրանքների կշռման հնարավորություն են ապահովում.

3) անմաքս առևտրի խանութի շինությունները պետք է տեղակայվեն այնպես, որ հնարավոր չլինի ընդունել կամ դուրս բերել այնպիսի ապրանքներ, որոնք մաքսային հսկողությունից դուրս են.

4) անմաքս առևտրի խանութի վաճառքի սրահները պետք է տեղակայված լինեն այնպես, որ բացառվի անմաքս առևտրի խանութում ձեռք բերված ապրանքների մնալու հնարավորությունը Մաքսային միության մաքսային տարածքում, այդ թվում՝ այդ տարածքում մնացող ֆիզիկական անձանց փոխանցման եղանակով.

5) անմաքս առևտրի խանութների առևտրի սրահները պետք է տեղակայված լինեն այն ապրանքների մաքսային հսկողության անցկացման վայրից դուրս, որոնք դուրս են բերվում ֆիզիկական անձանց կողմից, երբ նրանք անցնում են Մաքսային միության մաքսային սահմանով.

6) անմաքս առևտրի խանութների առևտրի սրահները պետք է տեղակայված լինեն

այնպես, որ բացառվի Մաքսային միության մաքսային տարածք մուտք գործող ֆիզիկական անձանց մուտքն այդ սրահներ.

7) անմաքս առետրի խանութի պահեստը կարող է տեղակայվել Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքների փոխադրման վայրից դուրս, բայց այն պետք է լինի մաքսային մարմնի գործունեության տարածքում, որտեղ գործում է անմաքս առետրի խանութը:

4. Առետրի սրահների, օժանդակ շինությունների եւ անմաքս առետրի խանութի պահեստի օգտագործումն անմաքս առետրի մաքսային ընթացակարգով չհայտարարագրված ապրանքների պահպանման եւ իրացման համար չի թույլատրվում:

5. Սույն հոդվածով սահմանված պահանջները չեն տարածվում սույն Դաշնային օրենքի 294-րդ հոդվածի 1-ին մասում նշված անմաքս առետրի խանութների վրա:

Գլուխ 6. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐԸ

Հոդված 85. Լիազորված տնտեսական օպերատորը

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ լիազորված տնտեսական օպերատորը կարող է լինել Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձ, որն իրականացնում է ապրանքների ներմուծում Ռուսաստանի Դաշնություն՝ արտադրական կամ այլ ձեռնարկատիրական գործունեության մեջ դրանք օգտագործելու համար, եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանում, եւ գրանցված է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում:

Հոդված 86. Լիազորված տնտեսական օպերատորներին՝ հատուկ պարզեցված ընթացակարգերով աշխատելու հնարավորության տրամադրումը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորված տնտեսական օպերատորին կարող է տրամադրվել հետեւյալ հատուկ պարզեցված ընթացակարգերով աշխատելու հնարավորությունը՝

1) ապրանքները ժամանակավորապես պահելը լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում՝ առանց դրանց գրանցումը ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրներում,

2) ապրանքների բացթողումը մինչեւ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով մաքսային հայտարարագիր ներկայացնելը,

3) լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում գտնվող ապրանքների բացթողման հետ կապված մաքսային ձեւակերպումների իրականացում՝ ներառյալ այն ապրանքների մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի եզրափակումը, որոնք Ռուսաստանի Դաշնություն դրանց ներմուծման ժամանակ ուղարկվում են լիազորված տնտեսական օպերատորի հասցեով՝ սույն Դաշնային օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան,

4) Մաքսային միության Մաքսային օրենսդրությամբ նախատեսված այլ հատուկ պարզեցված ընթացակարգեր, ներառյալ ապրանքների նախնական մաքսային հայտարարագրումը, այդ թվում՝ ոչ լրիվ եւ (կամ) պարբերական բնույթ ունեցող մաքսային հայտարարագրի տրամադրմամբ, ոչ լրիվ մաքսային հայտարարագրի տրամադրումը եւ պարբերական մաքսային հայտարարագրումը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 193-րդ եւ 194-րդ հոդվածներին եւ սույն Դաշնային օրենքի 211-215-րդ հոդվածներին համապատասխան:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության կառավարությունն իրավասու է որոշելու այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ չեն կարող կիրառվել լիազորված տնտեսական օպերատորին տրամադրվող հատուկ պարզեցված ընթացակարգերը:

3. Լիազորված տնտեսական օպերատորին տրամադրված հատուկ պարզեցված ընթացակարգերը կիրառելիս՝ առանձին հայտարարագրվող ապրանքների տեղերը, որոնք սահմանվել են սույն Դաշնային օրենքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, չեն սահմանափակվում:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 215-րդ հոդվածի 3-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն՝ ներսբերման վայրի մաքսային մարմնից ներքին մաքսային մարմին օտարերկրյա ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկություն է համարվում լիազորված տնտեսական օպերատորի հասցեով ուղարկված օտարերկրյա ապրանքների առաքման հնարավորությունը լիազորված տնտեսական օպերատորի շինություններ, բաց հրապարակներ եւ այլ տարածքներ, որոնք ունեն մաքսային հսկողության գոտու կարգավիճակ եւ գտնվում են նշանակման վայրի մաքսային մարմնի գործունեության տարածաշրջանում՝ առանց նշված ապրանքները նշանակման մաքսային մարմնի գտնվելու վայր հասցնելը: Մաքսային հսկողության նշված գոտու սահմանները որոշվում են սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված համաձայնագրով եւ պետք է ունենան հատուկ նշաններ: Լիազորված տնտեսական օպերատորն ապահովում է մաքսային հսկողության գոտի մուտք գործելու թույլտվության կարգը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի եզրափակման առանձնահատկություններն այն օտարերկրյա ապրանքների

առնչությամբ, որոնք ուղարկվել են արտադրական գործունեություն իրականացնող՝ լիազորված տնտեսական օպերատորի հասցեով, ապրանքների բացթողման առնչությամբ՝ նախքան մաքսային հայտարարագիրը տրամադրելը կամ ապրանքների նախնական մաքսային հայտարարագրումը կիրառելը, սահմանված են սույն Դաշնային օրենքի 87-րդ հոդվածով:

6. Օտարերկրյա ապրանքների մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի եզրափակման առանձնահատկությունները, որոնք սահմանվել են սույն հոդվածի 4-րդ մասով, չեն կիրառվում օտարերկրյա ապրանքների այնպիսի մաքսային տարանցման ժամանակ, որն իրականացվում է միջազգային պայմանագրերին համապատասխան, որտեղ որպես ապրանքների առաքման վայր ուղակիորեն նշված է մաքսային մարմինը:

7. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերը կիրառվում են միայն այն դեպքերում, երբ լիազորված տնտեսական օպերատորն իրավունք ունի հանդես գալու որպես այն ապրանքների հայտարարատու, որոնց նկատմամբ ենթադրվում է նման հատուկ ընթացակարգերի կիրառումը, այդ թվում՝ լիազորված տնտեսական օպերատորի անունից, եւ նրա հանձնարարությամբ գործող՝ ապրանքների մաքսային ներկայացուցչի կողմից մաքսային հայտարարագրում իրականացնելիս:

8. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ մաքսային ձեւակերպումներ իրականացնող մաքսային մարմինները համագործակցում են լիազորված մաքսային օպերատորի հետ՝ հատուկ պարզեցված ընթացակարգեր կիրառելիս: Նշված համագործակցության կարգը՝ ներառյալ լիազորված տնտեսական օպերատորի եւ մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակման կանոնակարգը, տվյալների կազմն ու ձեւաչափերը, մաքսային կապարակնիքների փոխանցման կարգը, որոնք հանվել են լիազորված տնտեսական օպերատորի կողմից սույն Դաշնային օրենքի 87-րդ հոդվածին համապատասխան, սահմանվում են համապատասխան մաքսային մարմնի եւ լիազորված տնտեսական օպերատորի միջեւ կնքված համաձայնագրով՝ վերջինիս լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ որոշում ընդունելիս: Նշված համաձայնագրի տիպային ձեւը սահմանվում է մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ դա համաձայնեցնելով գործադիր իշխանության այն դաշնային մարմնի հետ, որը պետական քաղաքականության մշակման եւ արտաքին տնտեսական

գործունեության ոլորտում նորմատիվ իրավական գործառույթներ է իրականացնում: Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 244-րդ հոդվածի 4-րդ կետի, 257-րդ հոդվածի 4-րդ կետի եւ 269-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն նշված համաձայնագիրը կարող է օգտագործվել որպես փաստաթուղթ, ով նախատեսվում է լիազորված տնտեսական օպերատորի կողմից մաքսային տարածքում, մաքսային տարածքից դուրս եւ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման մաքսային ընթացակարգերի պայմանների կիրառումը: Մաքսային մարմինը ապրանքների վերամշակման համապատասխան մաքսային ընթացակարգի կիրառման առավելագույն ժամկետը լրանալու դեպքում նոր համաձայնագիր է կնքում լիազորված տնտեսական օպերատորի հետ: Նշված համաձայնագիրը որպես ապրանքների վերամշակման համապատասխան մաքսային ընթացակարգի կիրառման պայմանները նախատեսող փաստաթուղթ օգտագործելը լիազորված տնտեսական օպերատորին չի ազատում ապրանքների վերամշակման համապատասխան մաքսային ընթացակարգի կիրառման եւ եզրափակման հետ կապված այլ պարտականություններ կատարելուց:

9. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ ենթակետի, 94-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի 128-րդ հոդվածի 2-րդ կետի, 4-րդ ենթակետի համաձայն՝ լիազորված տնտեսական օպերատորի կողմից նախնական մաքսային հայտարարագրում կիրառելու դեպքում, այդ թվում՝ ոչ լրիվ պարբերական մաքսային հայտարարագրի տրամադրմամբ, Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման մաքսային ձեւակերպումների իրականացումն արագացնելու նպատակներով՝ մաքսային մարմինները կարող են՝ նախքան ապրանքների ներսբերումը Ռուսաստանի Դաշնության տարածք, տեղեկացնել լիազորված տնտեսական օպերատորին այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային զննում իրականացնելու վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրա մասին նախապես իրազեկելը կխոչընդոտի մաքսային հսկողության իրականացում կամ կհանգեցնի դրա արդյունավետության նվազեցումը: Այդ դեպքում մաքսային զննումը կարող է առանց լիազորված տնտեսական օպերատորին նախապես իրազեկելու, իրականացվել մաքսային մարմինների կողմից:

10. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավունք ունի սահմանելու Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների նկատմամբ ստուգում իրականացնելու մասին լիազորված տնտեսական օպերատորին նախօրոք իրազեկելու կարգը՝ նախքան դրանց բեռնումը տրանսպորտային միջոցի վրա:

11. Եթե ռիսկերի կառավարման համակարգերի համապատասխան մաքսային մարմինը որոշում ընդունի մաքսային հսկողություն իրականացնել լիազորված տնտեսական օպերատորի կամ իր հանձնարարությամբ մաքսային ներկայացուցչի կողմից տրամադրված մաքսային հայտարարագրում հայտարարագրված ապրանքների նկատմամբ, ապա այդ մաքսային հսկողությունն իրականացվում է լիազորված տնտեսական օպերատորի այն շինություններում, բաց հրապարակներում կամ այլ տարածքներում, որտեղ այդ ապրանքները հանձնվել են պահպանման համար՝ առաջնահերթության կարգով:

12. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հատուկ պարզեցված ընթացակարգերը չեն տրամադրվում հետևյալ դեպքերում՝

1) եթե լիազորված տնտեսական օպերատորը Ռուսաստանի Դաշնություն է ներմուծում այնպիսի ապրանքներ, որոնց ուղարկողը կամ վաճառողը իրավաբանական անձ է, որը գրանցված է մի այնպիսի տարածքում, որը ներառված է ֆինանսների ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից հաստատված այն պետությունների եւ տարածքների ցանկում, որոնք տրամադրում են հարկման արտոնյալ ռեժիմ եւ (կամ) չեն նախատեսում ֆինանսական գործառնություններ իրականացնելիս տեղեկատվության բացահայտում եւ տրամադրում (այսուհետ՝ օֆշորային գոտիներ),

2) եթե լիազորված տնտեսական օպերատորի կողմից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների դիմաց վճարումը կատարվում է օֆշորային գոտիների միջով ֆինանսական գործառնությունների իրականացման միջոցով:

(12-րդ մասն ավելացվել է 2013 թվականի հունիսի 28-ի թիվ 134-ԴՕ դաշնային օրենքով)

Հոդված 87. Մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի եզրափակման առանձնահատկություններն այն օտարերկրյա ապրանքների առնչությամբ, որոնք ուղարկվել են արտադրական գործունեություն իրականացնող լիազորված տնտեսական օպերատորի հասցեով, ապրանքների բացթողման առնչությամբ՝ նախքան մաքսային հայտարարագիրը տրամադրելը կամ ապրանքների նախնական մաքսային հայտարարագրումը կիրառելը

1. Արտադրական գործունեություն իրականացնող՝ լիազորված տնտեսական օպերատորի

տարածքում մաքսային տարանցման ընթացակարգի եզրափակման համար, վերջինս՝ տրանսպորտային միջոցի՝ լիազորված տնտեսական օպերատորի գտնվելու վայրը հասնելու պահից ոչ ուշ, քան երեք ժամ հետո, իսկ այն դեպքում, երբ ապրանքները հասնում են մաքսային մարմնի սահմանված ոչ աշխատանքային ժամերին՝ այդ մաքսային մարմնի աշխատանքը ավարտելու ժամից առաջ ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում՝ նշանակման մաքսային մարմին է ուղարկում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են նախքան մաքսային հայտարարագրի տրամադրումը էլեկտրոնային փաստաթղթերի ձեռով ապրանքների բացթողման համար, կամ մաքսային հայտարարագիրը՝ դրանում ընդգրկված լրացուցիչ տվյալներով եւ 193-րդ հոդվածին համապատասխան դրան կցվող փաստաթղթերով:

2. Եթե մաքսային մարմնի եւ լիազորված տնտեսական օպերատորի միջեւ կնքված համաձայնագրով սահմանված ժամկետում, որը չի կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին մասի համաձայն լիազորված տնտեսական օպերատորի կողմից փաստաթղթերի եւ տվյալների տրամադրման պահից հետո հինգ ժամը, նշանակման մաքսային մարմինը չի տեղեկացրել ապրանքների ստուգում իրականացնելու, տրանսպորտային միջոցի մաքսային տեսազննում իրականացնելու եւ (կամ) նույնականացման միջոցների պահպանվածության մեջ համոզվելու մտադրությամբ ապրանքների վրայից նույնականացման միջոցների հեռացումն արգելելու մասին, ապա մաքսային մարմնի կողմից նույնականացման միջոցները հեռացնելու թույլտվությունը համարվում է ստացված եւ առաքման վայր ապրանքների հասնելուց հետո լիազորված տնտեսական օպերատորը փոխադրողից ընդունում է ապրանքները եւ իրավունք ունի հեռացնելու նույնականացման միջոցներն ու բեռնաթափելու ապրանքները: Լիազորված տնտեսական օպերատորի կողմից փոխադրողից ապրանքներն ընդունելու փաստը հաստատվում է տրանսպորտային փաստաթղթերի եւ (կամ) ապրանքներին կից ներկայացված փաստաթղթերի վրա համապատասխան նշումներ կատարելու միջոցով: Այդ նշումները կատարելուց հետո լիազորված տնտեսական օպերատորն անհապաղ մաքսային մարմին է ուղարկում էլեկտրոնային-թվային ստորագրությամբ ստորագրված ծանուցում՝ փոխադրողից ապրանքները ընդունելու ամսաթվի եւ ժամկետի վերաբերյալ: Սույն մասով սահմանված կարգով մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխանցումը փոխադրողի կողմից լիազորված տնտեսական օպերատորին իրականացվում է առանց նշանակման մաքսային մարմնի կողմից թույլտվություն ստանալու: Մաքսային մարմին ուղարկված

ծանուցման մեջ նշված փոխադրողից ապրանքներն ընդունելու պահից սկսած՝ ապրանքները համարվում են մաքսային մարմնի կողմից բաց թողնված: Այդ պահից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորն ստանձնում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածի, 2-րդ կետով նախատեսված մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը: Նախքան մաքսային հայտարարագիր ներկայացնելը՝ այն ապրանքների բացթողումը, որոնց հայտարարատու է հանդես գալիս լիազորված տնտեսական օպերատորը, թույլատրվում է՝ պայմանով, որ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման ենթակա գումարը չի գերազանցում սույն Օրենսգրքի 39-րդ հոդվածին համապատասխան լիազորված տնտեսական օպերատորի կողմից տրամադրվող մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքի գումարը:

3. Եթե նախնական մաքսային հայտարարագրում կիրառելիս՝ տրանսպորտային միջոցի լիազորված տնտեսական օպերատորի գտնվելու վայր հասնելու պահին մաքսային հայտարարագրում չեն ավելացվել թերի տեղեկությունները եւ (կամ) ապրանքների համար չեն վճարվել մաքսատուրքերը, հարկերը, կամ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետի ընթացքում մաքսային մարմինը էլեկտրոնային ծանուցում է ուղարկել լիազորված տնտեսական օպերատորին Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տրամադրված փաստաթղթերում ապրանքների բացթողման համար անհրաժեշտ տվյալների բացակայության մասին՝ այդպիսի ապրանքների վրայից նույնականացման միջոցները հեռացնելուց եւ դրանց բեռնաթափումից հետո, դրանք ձեռք են բերում ժամանակավոր պահպանության մեջ գտնվող ապրանքների կարգավիճակ եւ պահվում են մաքսային հսկողության գոտում, որն ստեղծվել է լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում կամ այլ տարածքներում՝ առանց ապրանքները ժամանակավոր պահպանության պահեստ կամ մաքսային հսկողության այլ գոտի հանձնելու՝ նախքան լիազորված տնտեսական օպերատորի կողմից ապրանքների բացթողման նշված պայմանները կատարելը:

4. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետի ընթացքում մաքսային մարմինը լիազորված տնտեսական օպերատորին տեղեկացրել է ապրանքների ստուգում (այդ թվում՝ մաքսային զննում) իրականացնելու, տրանսպորտային միջոցի մաքսային տեսազննում կատարելու եւ (կամ) նույնականացման միջոցների պահպանվածության մեջ համոզվելու իր մտադրության մասին, ապա այդպիսի գործողությունները պետք է կատարվեն մաքսային

մարմնի կողմից անհապաղ՝ առաջնահերթության կարգով: Նախքան մաքսային մարմնի կողմից նշված գործողությունների իրականացումը՝ նույնականացման միջոցները կարող են հեռացվել, իսկ ապրանքները՝ տրանսպորտային միջոցներից բեռնաթափվել միայն մաքսային մարմնի թույլտվությամբ: Մաքսային տեսազննումը եւ մաքսային զննումը կարող են իրականացվել մաքսային հսկողության գոտում, որն ստեղծվել է լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում կամ այլ տարածքներում՝ առանց ապրանքները ժամանակավոր պահպանության պահեստ կամ մաքսային հսկողության այլ գոտի հանձնելու:

5. Այն բանից հետո, երբ լիազորված տնտեսական օպերատորը հաստատում է տրանսպորտային փաստաթղթերում եւ (կամ) ապրանքներին կից ներկայացված փաստաթղթերում համապատասխան նշումներ կատարելու միջոցով փոխադրողից ապրանքների ընդունման փաստը, փոխադրողը պարտավոր է անհապաղ ներկայանալ նշանակման մաքսային մարմին՝ մաքսային տարանցման մաքսային ընթացակարգը եզրափակելու համար՝ ներկայացնելով լիազորված տնտեսական օպերատորի կողմից կատարված նշումներով փաստաթղթերը, ինչպես նաեւ տարանցման հայտարարագիրն ու իր տրամադրության տակ եղած այլ փաստաթղթեր: Մաքսային տարանցման մաքսային ընթացակարգը եզրափակվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 22-րդ հոդվածի, 4-րդ եւ 5-րդ կետերի ու սույն Դաշնային օրենքի 237-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 88. Իրավաբանական անձի կողմից լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստանալու պայմաններն են՝

1. Իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածով:

2. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ ենթակետի համաձայն՝ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայման է այդ անձին նախքան մաքսային մարմին դիմելը մեկ տարվա ընթացքում մաքսային գործի ոլորտում վարչական իրավախախտումների համար մի քանի անգամ (երկու կամ ավելի անգամներ) վարչական պատասխանատվության ենթարկելու համար փաստերի բացակայությունը, որը

նախատեսված է Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.7, 16.9, 16.15, 16.17, 16.20 եւ 16.22 հոդվածներով՝ պայմանով, որ նշված հոդվածների մասով նշանակված վարչական տույժերի ամբողջ գումարը կազմի 500 000 ռուսական ռուբլի եւ դրանից ավելի:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մաքսային ձեւակերպումներ իրականացնելու ժամանակ մաքսային մարմիններին ներկայացված տվյալները առետրատնտեսական գործառնությունների իրականացման վերաբերյալ տվյալների հետ համադրելու հնարավորություն տվող՝ ապրանքների հաշվառման համակարգի առկայության մասին դրույթը համարվում է կատարված, եթե դիմումատուն պահպանում է հետեւյալ պահանջները՝

1) վարում է հաշվապահական եւ հարկային հաշվառում, ինչպես նաեւ հաշվառում մաքսային նպատակներով՝ սույն Դաշնային օրենքի 96-րդ հոդվածի համաձայն,

2) մաքսային մարմիններին՝ իրենց իրավասության շրջանակներում, տրամադրում է դիմումատուի ավտոմատացված տեղեկատվական համակարգերի մաքսային ձեւակերպումների տվյալների բազաներ եւ բանկեր մուտք գործելու հնարավորություն՝ հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջները տեղեկությունների պաշտպանության վերաբերյալ,

3) ապրանքների փոխադրման եւ պահպանության հետ կապված մատակարարման գործառնությունների հաշվառման՝ իր կողմից կիրառվող համակարգով նախատեսվում է օտարերկրյա ապրանքների եւ Մաքսային միության ապրանքների հետ կատարվող գործառնությունները հաշվառել առանձին,

4) կիրառում է ավտոմատացված տեղեկատվական համակարգ, որը պարունակում է տեղեկատվության պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են տեղեկատվության նկատմամբ չթույլատրված մուտքը կանխարգելելը, տեղեկատվության նկատմամբ չթույլատրված մուտքի հետեւանքով փոփոխված կամ ոչնչացված տեղեկատվության անհապաղ վերականգնման հնարավորությունը, եւ մշտական հսկողություն՝ տեղեկատվության պաշտպանվածության մակարդակն ապահովելու նկատմամբ:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ ենթակետի

համաձայն՝ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու լրացուցիչ պայմաններ են համարվում՝

1) հարկման պարզեցված համակարգը չկիրառելը,

2) նախքան մաքսային մարմին դիմելը՝ մեկ տարուց ոչ պակաս արտաքին առևտրային գործունեություն իրականացնելը,

3) իրավաբանական անձի ղեկավարի, դրա աշխատակիցների, որոնց պաշտոնական պարտականությունները ներառում են մաքսային ձեւակերպումների իրականացումը կազմակերպելը եւ (կամ) դրանց իրականացնելը, ինչպես նաեւ այն ղեկավարի կամ աշխատակիցների, որոնք իրականացնում են այն մաքսային ներկայացուցչի մաքսային ձեւակերպումները, որը՝ իրեն լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու դեպքում, իրավաբանական անձի անունից եւ հանձնարարությամբ կիրառելու է հատուկ պարզեցված ընթացակարգերը՝ տնտեսական գործունեության ոլորտում հանցանքներ գործելու համար դատվածության բացակայությունը,

4) սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով, վարձակալության իրավունքով ունեն լիազորված տնտեսական օպերատորի կողմից օտարերկրյա ապրանքների ժամանակավոր պահպանության համար նախատեսված եւ սույն Դաշնային օրենքի 89-րդ հոդվածով սահմանված պահանջները բավարարող շինություններ, բաց հրապարակներ եւ այլ տարածքներ՝ այն դեպքում, երբ լիազորված տնտեսական օպերատորը սույն Դաշնային օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, կիրառում է ապրանքների ժամանակավոր պահպանության մաքսային ձեւակերպումները:

Հոդված 89. Լիազորված տնտեսական օպերատորի շինությունների, բաց հրապարակների եւ այլ տարածքների կահավորանքին ու սարքավորանքին ներկայացվող պահանջները

1. Լիազորված տնտեսական օպերատորը կարող է իրականացնել ապրանքների ժամանակավոր պահպանություն իրեն պատկանող շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում:

2. Լիազորված տնտեսական օպերատորին պատկանող շինությունները, բաց հրապարակներն ունեն մաքսային հսկողության գոտու կարգավիճակ: Մաքսային հսկողության նշված գոտու սահմանները որոշվում են մաքսային մարմնի եւ լիազորված տնտեսական օպերատորի միջեւ կնքված եւ սույն Դաշնային օրենքի 86-րդ հոդվածի, 8-րդ մասով նախատեսված համաձայնագրով, եւ պետք է ունենան հատուկ նշաններ: Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների դուրսհանումը նշված գոտու սահմաններից իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

3. Լիազորված տնտեսական օպերատորի կողմից օտարերկրյա ապրանքների ժամանակավոր պահպանության համար նախատեսված շինությունները, բաց հրապարակները եւ այլ տարածքներ պետք է կահավորվեն ու սարքավորվեն այնպես, որ ապահովեն ապրանքների պահպանվածությունը, բացառեն կողմնակի անձանց (այն անձանց, որոնք լիազորված տնտեսական օպերատորի աշխատակիցներ չեն) չթույլատրված մուտքն այդ տարածքներ, ինչպես նաեւ այդ ապրանքների նկատմամբ ապահովեն մաքսային հսկողության իրականացումը :

4. Թույլատրվում է մաքսային հսկողության տակ գտնվող, ինչպես նաեւ պահպանության հանձնված այլ ապրանքների պահպանումը մեկ շինության մեջ՝ պայմանով, որ դրանք տեղաբաշխվեն առանձին-առանձին, որն ապահովվում է լիազորված տնտեսական օպերատորի կողմից ընդունելի ցանկացած այնպիսի եղանակով, որը թույլ կտա մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները տեսողականորեն տարբերակել այլ ապրանքներից (պաշտպանիչ ժապավեն, միջնապատեր, տեխնոլոգիական անցքեր՝ համապատասխան ցուցանակներով եւ գրություններով):

5. Թույլատրվում է մաքսային հսկողության տակ գտնվող սորուն, հեղուկ ապրանքները պահել պահպանության տակ գտնվող միեւնույն տեսակի եւ որակի այլ ապրանքների հետ համատեղ:

6. Արտադրական գործունեություն իրականացնող լիազորված տնտեսական օպերատորի շինությունների, բաց հրապարակների եւ այլ տարածքների կահավորանքին ու սարքավորանքին ներկայացվող պահանջները չեն սահմանվում մաքսային մարմինների կողմից:

Հոդված 90. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար դիմումը

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար իրավաբանական անձը դիմում է մաքսային մարմին գրավոր դիմումով, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) դիմումատուի կողմից մաքսային մարմին ներկայացված դիմումը՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու խնդրանքով.

2) տեղեկություններ դիմումատուի անվանման, կազմակերպարավական ձեւի, գտնվելու վայրի, բացված բանկային հաշիվների մասին, ինչպես նաեւ դրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գտնվելու վայրի մասին, որոնց միջոցով դիմումատուն ծրագրում է իրականացնել լիազորված տնտեսական օպերատորի իր գործունեությունը՝ գրանցվելու համար դիմումի օրվա դրությամբ.

3) տեղեկություններ դիմումատուի հիմնադիրների եւ (կամ) մասնակիցների եւ նրա կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում նրանց ունեցած բաժնեմասերի մասին.

4) տեղեկություններ հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառվելու եւ հարկ վճարողի նույնականացման համարի վերաբերյալ.

5) տեղեկություններ հարկման հատուկ ռեժիմներ կիրառելու մասին.

6) տեղեկություններ դիմումատուի տնօրենների խորհրդի անդամների (վերահսկիչ խորհրդի), կոլեգիալ գործադիր մարմնի անդամների վերաբերյալ,

7) տեղեկություններ դիմումատուի առեւտրատնտեսական գործունեության ոլորտի մասին.

8) դիմումատուի կազմակերպական կառուցվածքի նկարագրությունը՝ ներառյալ յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներն ու իրավասությունները.

9) տեղեկություններ դիմումատուի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ նշված պաշտոնատար անձանց ժամանակավոր բացակայության դեպքում նրանց պարտականությունների կատարման կարգի նկարագրությամբ.

10) տեղեկություններ հաստիքների ընդհանուր թվի եւ յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման հաստիքների թվի մասին.

11) տեղեկություններ այն աշխատակիցների մասին, որոնց պաշտոնական պարտականությունները ներառում են մաքսային ձեւակերպումների կազմակերպումը եւ (կամ) դրանց իրականացումը՝ գնահատելով մաքսային ձեւակերպումներ, ինչպես նաեւ ընդհանուր առեւտրային եւ հաշվապահական ու հարկային հաշվառման գործառնություններ իրականացնելիս տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նրանց գիտելիքները եւ հմտությունները.

12) դիմումատուի ավտոմատացված տեղեկատվական համակարգում տեղեկատվության պաշտպանության կիրառվող միջոցների մասին.

13) տեղեկություններ դիմումատուի արտաքին առեւտրային գործունեության մասին.

ա) այն տարին, որից սկսած դիմումատուն իրականացնում է արտաքին առեւտրային գործունեություն, մեկ տարվա ընթացքում ապրանքների տեղափոխման կանոնավորությունը (ապրանքների մատակարարումների միջին քանակությունը մեկ ամսում),

բ) վերջին տարվա ընթացքում իր արտաքին տնտեսական բոլոր գործարքները կատարելիս դիմումատուի կողմից կնքված արտաքին առեւտրային եւ այլ պայմանագրերի քանակը եւ բոլոր պայմանագրերի ընդհանուր գումարը, ինչպես նաեւ ապրանքների ներմուծման նպատակները (սեփական կարիքների համար, առեւտրային եւ այլ կոմերցիոն բնույթի գործունեություն իրականացնելու համար, այդ թվում՝ ապրանքների վերամշակման եւ իրացման, ցուցահանդեսատոնավաճառային գործունեության եւ գործունեության այլ տեսակների իրականացման հետ կապված),

14) տեղեկություններ այն մաքսային մարմինների մասին, որոնցում դիմումը ներկայացնելուն նախորդող տարվա ընթացքում դիմումատուի ապրանքների հետ ամենից ավելի հաճախ են իրականացվել մաքսային ձեւակերպումներ, ինչպես նաեւ այն մաքսային մարմնի (մաքսային մարմինների) մասին, որի (որոնց) գործունեության տարածքում դիմումատուն ծրագրում է իրականացնել լիազորված տնտեսական օպերատորի գործունեություն՝ նշելով այն մաքսային կետերի եւ մաքսատների անվանումները, որոնց ենթարկվում են այդ մաքսային կետերը.

15) տեղեկություններ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ (կամ) Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտի տեսակների մասին.

16) տեղեկություններ օտարերկրյա կապալառուների մասին՝ ներառյալ անվանումը, գտնվելու վայրը, գործունեության հիմնական տեսակը, տեղեկություններ այն մասին, թե արդյոք նրանք դիմումատուի հետ փոխկապակցված անձինք են, թե ոչ.

17) տեղեկություններ դիմումատուի կողմից նախկինում կիրառված մաքսային ձեւակերպման հատուկ եւ այլ պարզեցված ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաեւ այն հատուկ պարզեցված ընթացակարգերի վերաբերյալ, որոնք կիրառվել են եւ (կամ) կիրառվում են սույն Դաշնային օրենքին համապատասխան.

18) տեղեկություններ ստացված թույլատրական փաստաթղթերի մասին, որոնք անհրաժեշտ են արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու սահմանված սահմանափակումները պահպանելու համար, ինչպես նաեւ դրանց ստացման կարգի մասին (ինքնուրույն, միջնորդավորված ծառայությունների օգտագործմամբ).

19) այն ապրանքների անվանացանկի եւ նշանակության մասին, որոնց նկատմամբ դիմումատուն ծրագրում է հատուկ պարզեցված ընթացակարգեր կիրառել.

20) պահանջվող հատուկ պարզեցված ընթացակարգերը.

21) տեղեկություններ այն մաքսային ընթացակարգերի վերաբերյալ, որոնք դիմումատուն պատրաստվում է սահմանել ապրանքների նկատմամբ.

22) տեղեկություններ դիմումատուի տիրապետության տակ գտնվող շինությունների եւ (կամ) բաց հրապարակների մասին, որտեղ պետք է իրականացվի դիմումատուի կողմից ապրանքների ժամանակավոր պահպանումը եւ (կամ) կատարվի ապրանքների մաքսային ձեւակերպումներ (իր գտնվելու վայրի, հարմարություններով ապահովվածության, այդ թվում՝ մերձատար ուղիների, լարափակոցների, հսկիչ-անցումային կետերի առկայության վերաբերյալ), եթե հատուկ պարզեցված ընթացակարգը ենթադրում է լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում ապրանքների ժամանակավոր պահպանում.

23) տեղեկություններ այն առետրային կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ, որոնք

դիմումատուն կարող է ներկայացնել մաքսային մարմին՝ ապրանքների բացթողման համար (ապրանքների նույնականացման եւ ապրանքները շրջանառության համար բացթողնելիս վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարի հաշվարկման ճշտության նկատմամբ հսկողության կամ մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու չափի որոշման նպատակներով), եթե դիմումատուն նման հատուկ պարզեցված ընթացակարգի սահմանման պահանջ է ներկայացնում, որի դեպքում օտարերկրյա ապրանքների բացթողումը (պայմանական բացթողումը) կարող է իրականացվել՝ նախքան մաքսային հայտարարագիրը տրամադրելը.

24) տեղեկություններ այն մաքսային ներկայացուցչի մասին, որը կարող է մաքսային ձեւակերպումներ իրականացնող իր ղեկավարների եւ գործընկերների նկատմամբ կիրառել հատուկ պարզեցված ընթացակարգեր իրավական անձի անունից եւ նրա հանձնարարությամբ, այդ իրավական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու դեպքում.

25) տեղեկություններ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու վերաբերյալ, որը նախատեսվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին ենթակետին համապատասխան.

26) դիմումատուի համաձայնությունը կամ անհամաձայնությունն իրեն լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ տեղեկությունների պաշտոնական հրապարակման համար, որը նախատեսվում է սույն Դաշնային օրենքի 95-րդ հոդվածի 4-րդ մասով.

27) տեղեկություններ այն անձանց մասին, որոնք լիազորված են դիմումը քննարկելիս դիմումատուի շահերը պաշտպանելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունները կարող են ներկայացվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումին կից առանձին հավելվածներով:

3. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար դիմումին կցվում են ներկայացված տեղեկությունները հաստատող հետեւյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերը,

2) իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում դիմումատուի մասին գրառում կատարելու փաստը հաստատող փաստաթուղթը,

3) հարկային մարմնում դիմումատուին հաշվառման վերցնելու մասին հավաստագիրը,

4) մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով սահմանված չափով ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը,

5) բանկերից տեղեկանքներ՝ դրանցում դիմումատուի կողմից բացված հաշիվների հաստատման վերաբերյալ,

6) տարվա ընթացքում դիմումատուի հաշվապահական հաշվետվողականության ճշգրտության վերաբերյալ աուդիտորական եզրակացության պատճեն՝ ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված եւ կնիքով հաստատված, այն դեպքում, եթե Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, դիմումատուն ենթակա է պարտադիր աուդիտի կամ աուդիտն իրականացվում է դիմումատուի նախաձեռնությամբ,

7) դիմումատուի մաքսային փաստաթղթերի պատճենները, որոնցով հաստատվում է, որ դիմումատուն իրականացնում է արտաքին տնտեսական գործունեություն մեկ տարուց ոչ պակաս ժամկետով,

8) եթե լիազորված տնտեսական օպերատորի գործունեությամբ շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում նախատեսվում է ապրանքների ժամանակավոր պահպանություն՝

ա) շինությունների եւ (կամ) բաց հրապարակների նկատմամբ իրավունքների պետական գրանցման հավաստագիր, այն դեպքում, եթե դրանք սեփականության կամ տնտեսավարման իրավունքով պատկանում են դիմումատուին,

բ) համապատասխան կարգով գրանցված շինության վարձակալության (ենթավարձակալության) պայմանագիրը,

գ) այն հողակտորի վարձակալության (ենթավարձակալության) պայմանագիրը, որում տեղակայված է համապատասխան կարգով գրանցված բաց հրապարակը,

դ) պահեստային շինության նախագիծը (գծագիրը)՝ նշելով մաքսային հսկողության տակ եղած ապրանքների գտնվելու ծրագրված վայրը,

ե) բաց հրապարակի նախագիծը (գծագիրը)՝ նշելով այդ հրապարակի չափսերը եւ դիրքը արտադրական տարածքում.

9) այն փաստաթղթերը, որոնք հաստատում են համապատասխանությունը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին ենթակետի 2-րդ պարբերությանը համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ՝ սահմանված չափորոշիչներին ապրանքներ արտադրող եւ (կամ) դրանք արտահանող անձանց համար, որոնց նկատմամբ չեն գանձվում ներմուծման մաքսատուրքեր, եթե դիմումատուն հավակնում է, որ նշված չափորոշիչները կիրառվեն իր նկատմամբ:

4. Դիմումատուն իրավունք ունի լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման մասին դիմումին կցելու ցանկացած այլ փաստաթուղթ, այդ թվում՝ անկախ փորձագետների եզրակացությունները, որոնք, իր կարծիքով, կարող են օգտագործվել նշված ռեեստրում իր գրանցման հարցը քննարկելիս:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը եւ այդ փաստաթղթերը քննարկելուց հետո մաքսային մարմնի կողմից բնօրինակների վերադարձն իրականացվում են սույն Դաշնային օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով:

6. Մաքսային մարմին մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը կարող են դիմումատուի կողմից ներկայացվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրներում իրավաբանական անձի գրանցման այլ պայմանների պահպանումը հաստատելու մասին մաքսային մարմնի կողմից տրամադրվող ծանուցումն ստանալուց հետո՝ գրանցման այլ պայմաններ պահպանելու մասին մաքսային մարմնի նախնական որոշումն ուղարկելու օրվանից սկսած՝ 30 օրից ոչ ուշ:

7. Այն դեպքում, եթե լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումը չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները կամ նշված դիմումի հետ չեն ներկայացվել այս դիմումի մեջ նշված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը՝ ըստ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ցանկի, ապա մաքսային մարմինը դրա մասին տեղեկացնում է դիմումատուին՝ այդպիսի դիմում ստանալու օրվանից սկսած հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

8. Մաքսային մարմինը մերժում է ընդունել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար դիմումը միայն հետեյալ դեպքերում՝

1) մաքսային մարմնի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում դիմումատուի կողմից թերի տեղեկություններ եւ (կամ) փաստաթղթեր չտրամադրելը սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքում,

2) տնտեսական գործունեության ոլորտում հանցանքներ գործելու համար հետեյալ անձանց դատվածության բացակայությունը՝ իրավաբանական անձի ղեկավարի, այն աշխատակիցների, որոնց պաշտոնական պարտականությունները ներառում են մաքսային ձեւակերպումների իրականացումը կազմակերպելը եւ (կամ) դրանց իրականացումը, ինչպես նաեւ այն ղեկավարի կամ աշխատակիցների, որոնք իրականացնում են այն մաքսային ներկայացուցչի մաքսային ձեւակերպումները, որն իրեն լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու դեպքում իրավաբանական անձի անունից եւ հանձնարարությամբ կիրառելու է հատուկ պարզեցված ընթացակարգերը,

3) դիմումի տրամադրման օրվա դրությամբ կամ դրա տրամադրումից հետո դիմումատուի նկատմամբ սնանկության ընթացակարգ սկսելը,

4) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից տվյալ իրավաբանական անձին հանելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչեւ երեք տարին լրանալը դիմում ներկայացնելը՝ սույն Դաշնային օրենքի 94-րդ հոդվածի 10-րդ մասին համապատասխան:

9. Եթե բացակայում են լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումը քննության առնելու մերժման համար հիմքերը, որոնք նախատեսված են սույն հոդվածի 8-րդ մասով, ապա մաքսային մարմինը դիմումատուին տեղեկացնում է նշված դիմումը քննության առնելու օրվա մասին:

Հոդված 91. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար դիմումի քննարկումը

1. Լիազորված մաքսային մարմինը քննության է առնում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումը եւ որոշում է ընդունում իրավաբանական անձին այդ ռեեստրում գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին՝ դիմումը

քննության առնելու օրվանից սկսած 90 օրը չգերազանցող ժամկետում: Այն դեպքում, եթե դիմումատուն նշված դիմումի հետ միասին մաքսային մարմին չի ներկայացրել մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը, ապա իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու հետ կապված այլ պայմանների պահպանման պարագայում, մաքսային մարմինը նշված ժամկետի սահմաններում դրա մասին տեղեկացնում է դիմումատուին: Նշված ծանուցումն ստանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում դիմումատուն լիազորված մաքսային մարմին է ներկայացնում մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը: Այդ դեպքում լիազորված մաքսային մարմինը իրավաբանական անձին համապատասխան ռեեստրում գրանցելու մասին որոշում է կայացնում դիմումատուի կողմից մաքսային մարմին մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը ներկայացվելու օրվանից հետո երեք օրից ոչ ուշ:

2. Իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմանների պահպանման հետ կապված ստուգում իրականացնելու նպատակով լիազորված մաքսային մարմինը դիմումատուի նկատմամբ անցկացնում է արտագնա մաքսային ստուգում՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան:

3. Այն դեպքում, եթե իրավաբանական անձը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումում նշված վայրում փաստացի չի գտնվում, ինչպես նաև եթե ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների ստուգումների կամ շինությունների եւ (կամ) տարածքների մաքսային տեսազննման արդյունքներով մաքսային մարմինը սահմանում է, որ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմաններից մեկը կամ մի քանիսը չեն պահպանվել, բայց իրավիճակը կարող է ուղղվել դիմումատուի կողմից, ապա, նախքան լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցումը մերժելու մասին որոշում ընդունելը, մաքսային մարմինը դիմումատուին տեղեկացնում է բացահայտված փաստերի մասին: Այդպիսի ծանուցում ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում դիմումատուն իրավունք ունի հաստատելու մաքսային մարմին համապատասխան պայմանների կատարման փաստը:

4. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դիմումի քննարկման ընթացքը կասեցվում է դիմումատուի կողմից մաքսային մարմնի ծանուցումն ստանալու օրվանից մինչև լիազորված տնտեսական օպերատորի սահմանած պահանջների եւ (կամ) պայմանների կատարումը հաստատելն ընկած ժամանակահատվածը կամ սույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետի ավարտը:

5. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման մասին դիմումը քննարկող մաքսային մարմինն իրավունք ունի երրորդ անձանցից, ինչպես նաեւ պետական մարմիններից պահանջելու այնպիսի փաստաթղթեր, որոնք հաստատում են դիմումատուի կողմից նշված տեղեկությունները: Նշված անձինք եւ պետական մարմինները պարտավոր են հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում տրամադրել հարցման առարկա հանդիսացող փաստաթղթերը:

6. Իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների կարգավիճակ շնորհելու պայմանների պահպանման փաստը դիմումի քննարկման ժամկետի ընթացքում հաստատելու դեպքում՝ մաքսատունը (մաքսատները), որի (որոնց) գործունեության տարածքում դիմումատուն ծրագրում է լիազորված տնտեսական օպերատորի գործունեություն իրականացնել, եւ դիմումատուն համաձայնեցնում են հատուկ պարզեցված ընթացակարգեր կիրառելիս լիազորված տնտեսական օպերատորի եւ մաքսային ձեւակերպումներ իրականացնող մաքսային մարմինների համագործակցության կարգը, ինչպես նաեւ մաքսային մարմինների ու լիազորված տնտեսական օպերատորի միջեւ տեղեկատվություն փոխանակելու կանոնակարգը՝ սույն Դաշնային օրենքի 86-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված համաձայնագիրը ստորագրելու միջոցով:

7. Իրավաբանական անձի լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին որոշումը ձեւակերպվում է իրավաբանական անձի ղեկավարի կամ նրա այլ լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ կամ այդ որոշման ստացման փաստը եւ ամսաթիվը հաստատող այլ եղանակով՝ սույն Դաշնային օրենքի 92-րդ հոդվածով նախատեսված հավաստագիրը տրամադրելու միջոցով՝ այդպիսի որոշում ընդունելու օրվանից հետո ոչ ուշ, քան 14 աշխատանքային օրերի ընթացքում:

8. Մաքսային մարմինը որոշում է ընդունում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ միայն այն դեպքում, եթե

դիմումատուն չի պահպանել իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու համար Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 39-րդ հոդվածով եւ սույն Դաշնային օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված պայմանները: Իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին որոշումը մերժելու մասին տեղեկացնում են իրավաբանական անձի ղեկավարին կամ նրա այլ լիազորված ներկայացուցչի՝ ստորագրությամբ կամ այդ որոշման ստացման փաստը եւ ամսաթիվը հաստատող այլ եղանակով՝ այդպիսի որոշում ընդունելու օրվանից հետո ոչ ուշ, քան 14 աշխատանքային օրերի ընթացքում:

9. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին դիմումը քննարկելու եւ նշված ռեեստրում գրանցման համար դիմումատուից վճար չի գանձվում:

Հոդված 92. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման հավաստագիր

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման հավաստագիրը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

1) լիազորված տնտեսական օպերատորի անվանումը, կազմակերպարավական ձեռը, ինչպես նաեւ լիազորված տնտեսական օպերատորի եւ դրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գտնվելու վայրը,

2) տեղեկություններ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելու չափի եւ եղանակների վերաբերյալ,

3) լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրված հատուկ պարզեցված ընթացակարգերը,

4) հատուկ պարզեցված ընթացակարգերը կիրառելիս՝ մաքսային ձեւակերպումների իրականացման վայրերը,

5) այն մաքսային մարմինների անվանումները, որոնցում կարող են իրականացվել ապրանքների մաքսային ձեւակերպումները՝ հատուկ պարզեցված ընթացակարգերի կիրառմամբ:

2. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցելու մասին հավաստագիրն ուժի մեջ է մտնում դրա տրամադրման օրվան հաջորդող 10 օրը լրանալուց հետո եւ գործողության ժամկետով չի սահմանափակվում:

Հոդված 93. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար դիմումի մեջ նշված տեղեկությունները փոփոխելը

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար դիմումի մեջ կամ դրան կից փաստաթղթերում նշված տեղեկությունները փոփոխելու մասին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցված իրավաբանական անձը (իրավաբանական անձի վերակազմավորման դեպքում՝ նրա իրավահաջորդը), պարտավոր է հինգ աշխատանքային օրերի ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնել լիազորված մաքսային մարմնին՝ սկսած համապատասխան իրադարձությունները վրա հասնելու օրվանից կամ այն օրվանից, երբ անձին հայտնի է դարձել այդ իրադարձությունները վրա հասնելու մասին:

2. Մաքսային մարմինը հինգ աշխատանքային օրերի ընթացքում ստուգում է նորից նշված տեղեկությունների համապատասխանությունը իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմանների հետ եւ, հավաստագրում նշվելիք տեղեկությունների փոփոխության դեպքում քննարկում է նոր հավաստագիր տրամադրելու հարցը՝ սույն Դաշնային օրենքի 91-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Ներկայացված փաստաթղթերը կցվում են լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման ժամանակ իրավաբանական անձի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթին:

Հոդված 94. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար հավաստագրի գործողությունների կասեցումը եւ լիազորված տնտեսական օպերատորներին ռեեստրից հանելը

1. Մաքսային մարմինները լիազորված տնտեսական օպերատորի կողմից այդ պաշտոնում իր գործունեությունն իրականացնելիս այդպիսի կարգավիճակ շնորհելու պայմանների

պահպանման նկատմամբ մոնիթորինգ են իրականացնում:

2. Լիազորված տնտեսական օպերատորն իրավունք ունի իրականացնելու լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմանների պահպանման կրկնակի ստուգում հետեյալ դեպքերում՝

1) Մաքսային միության Մաքսային օրենսդրության եւ (կամ) մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության էական փոփոխություն, որը հաստատվում է մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության Դաշնային մարմնի համապատասխան որոշմամբ,

2) մաքսային հսկողության ձեւերի կիրառման արդյունքներով այնպիսի տվյալների հայտնաբերումը, որոնք հավաստում են լիազորված տնտեսական օպերատորի կողմից այդ կարգավիճակը շնորհելու հետ կապված մեկ կամ մի քանի պայմանների հնարավոր չպահպանման մասին:

3. Այն դեպքում, եթե լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին հավաստագիրը տրվել է մի իրավաբանական անձի, որը հիմնադրվել է լիազորված տնտեսական օպերատորների՝ ռեեստրում գրանցման մասին դիմումի տրամադրման օրվանից առաջ երեք տարուց պակաս ժամկետում, ապա լիազորված մաքսային մարմինն իրականացնում է լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմանների պահպանման ստուգում՝ նախքան հավաստագրի տրամադրման օրվանից հետո մեկ տարին լրանալը:

4. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման համար հավաստագրի գործողությունը կարող է դադարեցվել լիազորված մաքսային մարմնի կողմից՝

1) սույն Դաշնային օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված դեպքերում,

2) այն դեպքում, երբ բացահայտվել է, որ լիազորված տնտեսական օպերատորը չի պահպանել տվյալ կարգավիճակը շնորհելու մեկ կամ մի քանի պայմաններ,

3) սույն Դաշնային օրենքի 96-րդ հոդվածին համապատասխան նշված ձեւաչափով, կարգով եւ ժամկետներում հաշվետվություններ չտրամադրելու դեպքում,

4) մաքսային գործի ոլորտում վարչական իրավախախտման մասին գործի հարուցման դեպքում, որը նախատեսված է վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.7, 16.9, 16.15, 16.17, 16.20 կամ 16.22 հոդվածներով,

5) լիազորված տնտեսական օպերատորի ղեկավարի եւ (կամ) աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցման դեպքում, որի նախնական քննությունը Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ վերապահված է մաքսային մարմինների իրավասությանը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում լիազորված մաքսային մարմինը եւ (կամ) այն մաքսային մարմինը, որի գործունեության տարածքում լիազորված տնտեսական օպերատորն իրականացնում է իր գործունեությունը, նախքան լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշում ընդունելը, լիազորված տնտեսական օպերատորին տեղեկացնում է բացահայտված խախտումների մասին: Եթե այդպիսի ծանուցում ստանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում լիազորված տնտեսական օպերատորը չի հաստատել խախտումը բացահայտած մաքսային մարմնին իր կողմից համապատասխան պայմանների կատարումը եւ (կամ) չի ներկայացրել համապատասխան հաշվետվությունները, ապա լիազորված տնտեսական օպերատորը 30 օրով կասեցնում է հավաստագրի գործողությունը:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի 4-րդ եւ 5-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ լիազորված մաքսային մարմինը կասեցնում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու մասին հավաստագրի գործողությունը՝ այդպիսի ծանուցում ստանալու օրվանից սկսած՝ մինչեւ համապատասխանաբար՝

1) վարչական իրավախախտումների մասին գործով որոշումն օրինական ուժի մեջ մտնելը,

2) վարչական իրավախախտումների մասին գործով կանոնակարգի կատարումը՝ նախքան նշված որոշումն օրինական ուժի մեջ մտնելը,

3) վարչական իրավախախտման կամ քրեական գործի դադարեցման մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնելը,

4) որոշումը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելը:

7. Սույն հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում լիազորված մաքսային

մարմինն իրավունք ունի չդադարեցնելու լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցելու մասին հավաստագրի գործողությունը, եթե մաքսային գործի ոլորտում մեկ տարվա ընթացքում իրավաբանական անձի կողմից կատարված վարչական իրավախախտումների մասին գործերով որոշումներն, այդպիսի իրավաբանական անձի կողմից կատարվում են վարչական իրավախախտումների համար Ռուսաստանի Դաշնության օրենսգրքով նախատեսված ժամկետներում, իսկ վարչական տույժերի ընդհանուր գումարը նշված ժամանակահատվածում չի գերազանցում նշված անձի կողմից վճարված ներմուծման մաքսատուրքերի եւ հարկերի ընդհանուր գումարի 3 տոկոսը:

8. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման հավաստագիրը չեղարկվում է հետեւյալ դեպքերում՝

1) իրավաբանական անձի կողմից լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրեն հանելու համար դիմումի տրամադրում,

2) իրավաբանական անձի լուծարումը՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան,

3) իրավաբանական անձի վերակազմավորումը՝ բացառությամբ դրա վերափոխման,

4) իրավաբանական անձի կողմից լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ շնորհելու պայմանների պահպանումը չհաստատելը եւ (կամ) սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետում հաշվետվություններ չտրամադրելը. հավաստագրի գործողության դադարեցումից հետո իրավաբանական անձը չի հաստատել պայմանների պահպանումը,

5) լիազորված տնտեսական օպերատորին՝ մաքսային գործի ոլորտում մի քանի անգամ (երկու կամ ավելի անգամներ) վարչական պատասխանատվության ենթարկելը, որը նախատեսված է Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.1, 16.2, 16.3, 16.7, 16.9, 16.15, 16.17, 16.20 եւ 16.22 հոդվածներով այն ժամկետում, որի ընթացքում անձը համարվում է նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով վարչական պատժի ենթարկված՝ պայմանով, որ վարչական տույժերի գումարը հավաքականորեն կազմում է 500 000 ռուբլի եւ դրանից ավելի,

6) լիազորված տնտեսական օպերատորի ղեկավարին եւ (կամ) աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելը՝ այնպիսի

հանցագործություն կատարելու համար, որի նախնական հետաքննությունը Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությանը համապատասխան վերապահված է մաքսային մարմինների իրավասությանը,

7) սույն Դաշնային օրենքի 86-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված համաձայնագիրը չեղյալ հայտարարելը:

9. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու որոշումն ուժի մեջ է մտնում համապատասխան սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված որոշումներն ուժի մեջ մտնելու փաստերի եւ իրադարձությունների վրա հասնելու օրվանից:

10. Սույն հոդվածի 8-րդ մասի 5-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու դեպքում՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու նոր դիմում կարելի է ներկայացնել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի հետո:

11. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու դեպքում՝ այդ անձի կողմից՝ իրեն նշված ռեեստրում գրանցելիս տրամադրված մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը վերադարձնելը (գործողության դադարումը) իրականացվում է սույն Դաշնային օրենքի 16-րդ գլխին համապատասխան:

Հոդված 95. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրի վարման կարգը

1. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության Դաշնային մարմինը վարում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրը:

2. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրը վարվում է մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության Դաշնային մարմնի կողմից սահմանված ձեւով:

3. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրը ձեւավորվում է իրավաբանական անձանց այդ ռեեստրում գրանցելու մասին, ռեեստրում գրանցված տեղեկություններում փոփոխությունների կատարման մասին, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցվելու հավաստագրի գործողության կասեցման եւ վերականգնման մասին, ինչպես նաեւ

իրավաբանական անձանց ռեեստրից հանելու մասին լիազորված մաքսային մարմնի կողմից ընդունված որոշումների հիման վրա:

4. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության Դաշնային մարմինը ապահովում է կանոնավոր, եռամսյակը մեկ անգամից ոչ պակաս, իր պաշտոնական հրատարակություններում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրի հրապարակումը՝ դրանում ընդգրկելով միայն այն իրավաբանական անձանց, որոնք ռեեստրում գրանցվելիս դրա համար տվել են իրենց նախնական համաձայնությունը:

Հոդված 96. Հաշվառման համակարգը եւ լիազորված տնտեսական օպերատորի կողմից հաշվետվությունների տրամադրումը

1. Լիազորված տնտեսական օպերատորը պարտավոր է ներմուծվող եւ արտահանվող ապրանքների հաշվառումը վարել առանձին՝ ապահովելու ապրանքների մասին ամբողջական եւ արժանահավատ տեղեկությունների ձեւավորումն ու դրանց առկայության եւ տեղաշարժի նկատմամբ համապատասխան հսկողությունը՝ հաշվապահական ու հարկային հաշվառումը վարելու վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

2. Լիազորված տնտեսական օպերատորը պարտավոր է եռամսյակը մեկ, մինչեւ հաշվետու եռամսյակին հաջորդող յուրաքանչյուր ամսվա 10-ը, մաքսային մարմին ներկայացնել աճողական կարգով կազմված հաշվետվություններ այն ապրանքների մասին, որոնց նկատմամբ իրականացվել են մաքսային ձեւակերպումներ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերի կիրառմամբ:

3. Լիազորված մաքսային մարմինը որոշում է ընդունում լիազորված տնտեսական օպերատորի կողմից հաշվետվությունները ներկայացնելու մասին յուրաքանչյուր տարի մինչեւ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 1-ը, այդպիսի որոշմանը նախորդող մեկ տարվա ընթացքում լիազորված տնտեսական օպերատորին մաքսային գործի ոլորտում վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու փաստերի բացակայության դեպքում:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի

համաձայն ժամանակավոր պահպանության հանձնված ապրանքների հաշվառման վերաբերյալ Մաքսային մարմին ներկայացվող հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկություններ՝ ապրանքները պահպանության հանձնելու օրվա, տրանսպորտային փաստաթղթի անվանման եւ համարի, ապրանքի անվանման մասին՝ նշելով ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի, համաքաշի եւ զտաքաշի մասին, յուրաքանչյուր անուն ապրանքի հաշիվ-ապրանքագրային արժեքի, ապրանքի հաշիվ-ապրանքագրային արժեքը հաստատող փաստաթղթի համարի եւ տրամադրման ամսաթվի, արտաքին առետրային պայմանագրի վերաբերյալ:

5. Այն ապրանքների հաշվառման հետ կապված հաշվետվությունները, որոնց նկատմամբ կիրառվել են հատուկ պարզեցված ընթացակարգեր՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերին համապատասխան, պետք է պարունակեն տեղեկություններ՝ ապրանքները պահպանության հանձնելու ամսաթվի, հատուկ պարզեցված ընթացակարգեր կիրառելու, այն անձի մասին, որի անունից կատարվում են մաքսային ձեւակերպումները, ապրանքին կից տրանսպորտային փաստաթղթի համարի, ապրանքի անվանման, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, համաքաշի եւ զտաքաշի, ապրանքների հաշիվ-ապրանքագրային արժեքի, վճարված մաքսատուրքերի եւ հարկերի գումարի մասին:

6. Հաշվետվությունները կարող են մաքսային մարմին ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային թվային ստորագրության առկայությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ այդ տեղեկությունները պարտադիր ներկայացնելով նաեւ թղթային կրիչի վրա:

7. Լիազորված տնտեսական օպերատորը, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում մաքսային մարմին սահմանված ժամկետում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվետվությունները չներկայացնելու եւ (կամ) ոչ ժամանակին ներկայացնելու համար, ինչպես նաեւ ոչ արժանահավատ տեղեկություններ պարունակող հաշվետվություններ տրամադրելու համար:

8. Սույն հոդվածով սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կողմից տրամադրված հաշվետվությունների ձեւաչափերը սահմանվում են մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության Դաշնային մարմնի կողմից:

Գլուխ 7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Հոդված 97. Մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերը, տեղեկատվական տեխնոլոգիաները եւ դրանց ապահովման միջոցները

1. Տեղեկատվական համակարգերը եւ տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործվում են մաքսային մարմինների կողմից իրենց վրա դրված պարտականությունների կատարման, այդ թվում նաեւ՝ գործադիր իշխանության դաշնային մարմինների հետ տեղեկությունների փոխանակման, բնակչությանը, արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին էլեկտրոնային տարբերակով տեղեկություններ տրամադրելու առումով պետական ծառայություններ մատուցելու նպատակով:

2. Տեղեկատվական համակարգերի, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ դրանց ապահովման համար միջոցների ստեղծումն իրականացվում է մաքսային մարմինների պատվերով՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային գործում տեղեկատվական համակարգերի օգտագործման կարգը սահմանվում է գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 98. Տեղեկությունների մշակման համար նախատեսվող տեխնիկական միջոցներին ներկայացվող պահանջները

Մաքսային նպատակների համար օգտագործվող տեղեկատվական համակարգերում տեղեկությունների մշակման համար նախատեսվող տեխնիկական միջոցները, այդ թվում նաեւ ծրագրատեխնիկական միջոցները, պետք է համապատասխանեն Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջներին:

Հոդված 99. Մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները

1. Մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները կազմում են մաքսային մարմինների կողմից տնօրինվող՝ փաստաթղթավորված տեղեկությունները, որոնք գտնվում են

Մաքսային մարմինների տնօրինության ներքո՝ միջազգային պայմանագրերի, Մաքսային միության մաքսային օրենսդրության, սույն Դաշնային օրենքի, այլ դաշնային օրենքների համաձայն, այդ թվում նաեւ այն տեղեկությունները.

1) որոնք Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան մաքսային ընթացակարգեր իրականացնելիս տրամադրվում են (տրամադրվում է) անձանց կողմից,

2) որոնք տրամադրվում են (տրամադրվում է) գործադիր իշխանության դաշնային մարմինների կողմից տեղեկությունների փոխանակման մասին միջգերատեսչական համաձայնագրերին համապատասխան,

3) որոնք ուղարկվում են (ուղարկվում է) մաքսային գործի ոլորտում լիազորված օտարերկրյա պետությունների գերատեսչությունների կողմից՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի դիմումի համաձայն եւ (կամ) տեղեկությունների փոխանակման մասին միջազգային պայմանագրերին համապատասխան:

2. Այն փաստաթղթերը, որոնց ներկայացնելը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, կարող են ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի միջոցով՝ կատարելով Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների փաստաթղթավորման առումով պահանջները:

Հոդված 100. Անձանց կողմից մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսներ կազմող տեղեկությունների ստացումը

1. Մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ կապված գործունեություն, կամ էլ մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձն իրավունք ունի օգտվելու մաքսային մարմինների մոտ գտնվող՝ իր մասին փաստաթղթավորված տեղեկություններից, եւ ճշգրտումներ անել այդ տեղեկություններում՝ վերջիններիս ամբողջականությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով: Վերոնշյալ անձանց՝ իրենց մասին առկա տեղեկությունները Մաքսային մարմինները տրամադրում են անվճար:

2. Տեղեկությունները տրամադրվում են մաքսային մարմինների կողմից շահագրգիռ անձի գրավոր դիմումի հիման վրա Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում գրավոր պատասխանի տրամադրման միջոցով՝ անձանց կողմից պետական մարմիններ ներկայացված գրավոր դիմումները քննարկելու նպատակով: Դիմումը քննարկելիս եւ պատասխան ուղարկելիս մաքսային մարմինը պարտավոր է համոզվել, որ անձի մասին սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկությունները փոխանցվում են կոնկրետ այն անձին, որին այդ տեղեկությունները վերաբերում են:

3. Անհրաժեշտ տեղեկություններն ստանալու համար շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու ցանկացած մաքսային մարմին:

Հոդված 101. Մաքսային մարմինների կողմից տեղեկությունների պաշտպանությունը

1. Տեղեկությունների ծրագրատեխնիկական եւ պաշտպանության այլ միջոցների ստեղծումն իրականացվում է մաքսային մարմինների պատվերով Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան: Տեղեկությունների ծրագրատեխնիկական եւ պաշտպանության այլ միջոցների օգտագործման կարգը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

2. Տեղեկությունների պաշտպանության միջոցների օգտագործման մասով պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը եւ գործադիր իշխանության դաշնային այլ մարմինները Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Գլուխ 8. ՄԱՔՍԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 102. Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի մաքսային վիճակագրությունը

1. Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի վիճակի վերլուծության, դաշնային բյուջե մաքսային վճարների մուտքի վերահսկման, արժույթային վերահսկողության, Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի զարգացման դինամիկայի եւ միտումների, վերջինիս առևտրային եւ վճարային հաշվեկշռի ու ընդհանուր առմամբ տնտեսության վերլուծության նպատակով մաքսային մարմինները հավաքում եւ մշակում են տեղեկություններ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն ապրանքների մաքսային ապրանքագրում տրամադրվող՝ Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման մասին:

2. Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի մաքսային վիճակագրությունը վարվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքին, Մաքսային միության արտաքին առևտրի մաքսային վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության վարման մասին միասնական մեթոդաբանությանն ու Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային մարմինները Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալները տրամադրում են Ռուսաստանի Դաշնության Նախագահին, Ռուսաստանի Դաշնության Դաշնային խորհրդին, Ռուսաստանի Դաշնության Կառավարությանն անվճար եւ պարտադիր հիմունքներով: Պետական իշխանության դաշնային այլ մարմինների, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին, դատախազության մարմիններին, Ռուսաստանի Բանկին, պետական արտաբյուջետային հիմնադրամներին, արհմիություններին եւ գործատուների միություններին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին մաքսային մարմինները պետական, առևտրային, բանկային եւ օրենքով պահպանվող այլ գաղտնիք (գաղտնիքներ) չպարունակող՝ Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալները կամ սահմանափակ հասանելիություն ունեցող այլ տեղեկություններ տրամադրում են անվճար եւ Ռուսաստանի

Դաշնության օրենսդրությամբ ու Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

4. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը հրապարակում է Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալներն այն կարգով եւ այնպիսի ժամկետներում, որոնք սահմանվում են Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

5. Այլ շահագրգիռ անձանց մաքսային մարմինները տրամադրում են Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի մաքսային վիճակագրության կողմից պաշտոնապես չհրապարակված եւ պետական, առևտրային, բանկային ու օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք (գաղտնիքներ) չպարունակող տվյալներ կամ սահմանափակ հասանելիություն ունեցող այլ տեղեկություններ այնպիսի կարգով սահմանված վճարի դիմաց, որը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

Հոդված 103. Հատուկ մաքսային վիճակագրությունը

1. Մաքսային մարմինները, իրենց առջեւ դրված խնդիրների լուծումն ապահովելու նպատակով, վարում են հատուկ մաքսային վիճակագրություն՝ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից սահմանված կարգով:

2. Ռուսաստանի Դաշնության Կառավարության եւ պետական այլ մարմինների վրա դրված խնդիրների լուծումն ապահովելու նպատակով մաքսային մարմիններն իրականացնում են տեղեկությունների հավաքում, մշակում եւ փոխանցում, որոնց ցանկը եւ ներկայացնելու հաճախականությունը որոշվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

Հոդված 104. Մաքսային միության անդամ պետությունների հետ փոխադարձ առևտրի վիճակագրությունը

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը եւ Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերին համապատասխան Մաքսային միության անդամ պետությունների հետ Ռուսաստանի Դաշնության փոխադարձ առևտրի վիճակագրությունը վարվում է գործադիր

իշխանության լիազոր դաշնային մարմինների կողմից՝ Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից սահմանված կարգով:

**Գլուխ 9. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ**

Հոդված 105. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը

Ռուսաստանի Դաշնությունում արտաքին առևտրային եւ արտաքին տնտեսական գործունեության այլ տեսակների մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցների իրականացման, մաքսային վիճակագրության վարման համար կիրառվում է Մաքսային միության Հանձնաժողովի կողմից հաստատված Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը:

Հոդված 106. Ապրանքների դասակարգումը

1. Հայտարարագրման ժամանակ ապրանքները ենթակա են դասակարգման այն դեպքերում, երբ մաքսային մարմիններին ներկայացվող մաքսային հայտարարագրում կամ այլ փաստաթղթերում Մաքսային միության օրենսդրության եւ սույն Դաշնային օրենքի համաձայն, պահանջվում է ապրանքների ծածկագրի նշում՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի:

2. Ապրանքների մասին մաքսային հայտարարագրում՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքի, ծածկագիրը նշվում է հայտարարատուի կողմից կամ հայտարարատուի հանձնարարությամբ՝ մաքսային ներկայացուցչի կողմից:

3. Ապրանքների ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում մաքսային մարմինն ինքնուրույն իրականացնում է ապրանքների դասակարգում եւ դրանց դասակարգման վերաբերյալ որոշում է ընդունում:

4. Ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումը պետք է պարունակի հետեւյալ հիմնական տեղեկությունները.

1) ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում ընդունած մաքսային մարմնի

անվանումը,

2) հայտարարատուի անվանումը,

3) ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման գրանցման համարը եւ դրա ընդունման ամսաթիվը,

4) ապրանքի անվանումը,

5) տեղեկություններ ապրանքի մասին, որոնք անհրաժեշտ են դրա դասակարգման համար,

6) դասակարգման ծածկագիրն ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի,

7) ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշում ընդունած՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը:

5. Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումը կարող է պարունակել հետեւյալ հավելյալ տեղեկությունները՝

1) ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման ընդունման հիմնավորում,

2) ապրանքների մասին հայտարարագրի համարը եւ ապրանքի համարը, որի մասով ընդունված է ապրանքի դասակարգման մասին որոշում,

3) հավելվածի կամ լրացուցիչ թերթիկների առկայության մասին տեղեկություններ կամ մաքսային նպատակների համար անհրաժեշտ այլ տեղեկություններ,

4) ապրանքների դասակարգման վերաբերյալ ստորադաս մաքսային մարմնի որոշումը չեղյալ համարելու մասին տեղեկությունները (վերադաս մաքսային մարմնի որոշման ընդունման եւ ստորադաս մաքսային մարմնի որոշման ընդունման անօրինականության կամ այդ որոշման փոփոխության այլ պատճառների կապակցությամբ այդ որոշումը չեղյալ համարելու անհրաժեշտության դեպքում):

6. Ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում ընդունելիս մաքսային մարմինը, մինչ դրանց թողարկումը, այդ որոշումը ներկայացնում է հայտարարատուին: Եթե ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ընդունված որոշումն

ազդում է վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի չափի վրա, ապա ապրանքների բացթողումը չի իրականացվում՝ մինչ ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի որոշման համապատասխան լրացուցիչ հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի վճարումը: Ապրանքի բացթողման համար Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով սահմանված ժամկետներում մաքսատուրքերը, հարկերն ամբողջությամբ չվճարելու դեպքում մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

7. Եթե ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ընդունված որոշումն ազդում է ապրանքների նկատմամբ արգելքների եւ սահմանափակումների կիրառման վրա, ապա ապրանքների բացթողումը չի իրականացվում մինչ սահմանված սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը ներկայացնելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Դաշնային օրենքի 219-րդ հոդվածի համաձայն, նման փաստաթղթերը կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո:

8. Եթե ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի որոշումը չի հանգեցնում վճարման ենթակա մաքսային վճարների չափի ավելացմանը եւ չի ազդում ապրանքների նկատմամբ արգելքների ու սահմանափակումների կիրառման վրա, ապա նման որոշումը ապրանքների բացթողումը մերժելու համար հիմք չէ: Այդ դեպքում հայտարարատուն (մաքսային ներկայացուցիչը) պարտավոր է իրականացնել հայտարարված տեղեկությունների ճշգրտում՝ ամենաուշը ապրանքների թողարկման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերի ժամանակահատվածում:

9. Այն դեպքում, եթե մինչ ապրանքների բացթողումը հայտնաբերվել են այնպիսի հատկանիշներ, որոնք ցույց են տալիս, որ ապրանքների դասակարգումը սխալ է կամ հայտարարված տեղեկությունները պատշաճորեն հաստատված չեն, ապա մաքսային մարմինը կատարում է լրացուցիչ ստուգում: Լրացուցիչ ստուգում անցկացնելու նպատակով մաքսային մարմինը նշանակում է մաքսային փորձաքննություն կամ պահանջում է լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ: Լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ ստանալու համար մաքսային մարմինն անհապաղ գրավոր տեղեկացնում է հայտարարատուին ապրանքների դասակարգման վրա ազդող՝ վերջիններիս բնութագրերի մասին տեղեկությունները ներկայացնելու անհրաժեշտության, ինչպես նաեւ այն մասին, թե կոնկրետ

ինչ փաստաթղթերով տվյալ տեղեկությունները պետք է հաստատվեն: Հայտարարատուն իրավունք ունի ներկայացնելու իր մոտ առկա՝ ապրանքների մասին տեղեկություններ պարունակող այլ փաստաթղթեր:

10. Եթե լրացուցիչ ստուգումը չի կարող ավարտվել ապրանքների բացթողման համար Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, ապա ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից այնպիսի մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու պայմանով, որոնք կարող են լրացուցիչ հաշվարկվել լրացուցիչ ստուգումը կատարելու արդյունքում: Մաքսային մարմինը հայտարարատուին գրավոր տեղյակ է պահում մաքսատուրքերի, հարկերի վճարման պահանջվող ապահովման չափի մասին: Նշված դեպքում ապրանքների բացթողումը կատարվում է մաքսային մարմնի կողմից մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը ներկայացնելուց ոչ ուշ, քան մեկ օր հետո:

11. Լրացուցիչ ստուգումների անցկացման ժամանակահատվածում ապրանքների բացթողում չի իրականացվում, եթե մաքսային հայտարարագրում նշված ապրանքի ծածկագրի փոփոխությունն ազդում է արգելքների եւ սահմանափակումների կիրառման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարատուի կողմից ներկայացվում են սահմանված սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթեր, կամ էլ երբ սույն Դաշնային օրենքի 219-րդ հոդվածի համաձայն, նման փաստաթղթերը կարող են ապրանքները բաց թողնելուց հետո ներկայացվել: Լրացուցիչ ստուգման դեպքում մաքսային փորձաքննության անցկացման ժամկետը, եթե ապրանքների բացթողումը չի իրականացվում մինչ փորձաքննության արդյունքների ստացումը, չպետք է գերազանցի Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ ապրանքների բացթողման առավելագույն ժամկետը:

12. Այն դեպքում, երբ ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմինը ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում է ընդունում, այդ որոշումն ուղարկվում է հայտարարատուին այն ընդունելուց հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում: Մաքսատուրքերի, հարկերի չվճարված գումարների գանձումն իրականացվում է սույն Դաշնային օրենքի համաձայն:

13. Հայտարարատուն իրավունք ունի բողոքարկելու ապրանքների դասակարգման

վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ընդունված որոշումը սույն Դաշնային օրենքի 3-րդ գլխի համաձայն:

Հոդված 107. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում սահմանված ժամանակահատվածում ներկրվող կամ արտահանվող ապրանքների դասակարգման առումով որոշման ընդունման կարգը

1. Ապրանքը չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում, որի ներմուծումը կամ արտահանումը նախատեսվում է տարբեր ապրանքային խմբաքանակներով Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 170-րդ հոդվածով սահմանված ժամկետները չգերազանցող ժամանակահատվածում, կարող է հայտարարագրվել՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգման մեկ ծածկագրի նշումով՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի որոշման առկայության դեպքում:

2. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում այն ապրանքի դասակարգման մասով որոշումը, որի ներմուծումը կամ արտահանումը նախատեսվում է տարբեր ապրանքային խմբաքանակներով որոշակի ժամանակահատվածում (այսուհետ սույն հոդվածում՝ ապրանքի դասակարգման մասին որոշում), ընդունում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը որպես ապրանքների հայտարարատու ներկայանալու իրավասություն ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա:

3. Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման ընդունման մասին հայտարարությունը պետք է պարունակի՝

- 1) տեղեկություններ դիմումատուի մասին,
- 2) տեղեկություններ ապրանքի մասին (ապրանքի անվանում, բաղադրամասերի ցանկ),
- 3) ապրանքի մատակարարման ժամկետ,
- 4) մաքսային ընթացակարգը, որը կսահմանվի ապրանքի նկատմամբ,
- 5) մաքսային մարմնի անվանումը, որտեղ կիրականացվի ապրանքի հայտարարագրումը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) ապրանքի նկատմամբ արտաքին տնտեսական գործարքի կատարումը հավաստող փաստաթղթեր,

2) սահմանված կարգով պետական գրանցում անցած՝ հայտարարատուի հիմնադիր փաստաթղթեր կամ այդ փաստաթղթերում կատարված փոփոխություններ՝ կազմակերպության կանոնադրական (պահուստային) կապիտալում որպես ներդրում՝ ապրանքի բաղադրամասերի ներմուծման դեպքում,

3) հատուկ տնտեսական գոտու ռեզիդենտի դիմումը՝ ապրանքի նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում,

4) ապրանքի բաղադրամասերի ցանկ (որպես աղյուսակ) թղթի կամ էլեկտրոնային կրիչի վրա՝

ա) բաղադրամասերի, այդ թվում նաեւ՝ ապրանքի առանձին բաղադրամաս կազմող մասերի անվանումները,

բ) ապրանքի ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի,

գ) բաղադրամասերի, այդ թվում նաեւ՝ ապրանքի առանձին բաղադրամաս կազմող մասերի քանակը կամ քաշը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում կիրառվող չափման միավորներով,

5) տեխնիկական նկարագրությունը, որտեղ նշվում են նշանակությունը, կատարվող գործառույթները, գործողության սկզբունքը, այդ թվում նաեւ՝ ապրանքի առանձին բաղադրամասերի փոխգործողությունը,

6) ապրանքի առանձին բաղադրամասերի նկարագրությունը, որտեղ նշվում են նշանակությունը, կատարվող գործառույթները, գործողության սկզբունքը, այն նյութը, ինչից դրանք պատրաստված են,

7) հավաքման (մոնտաժային) գծագիրը (սխեման):

5. Եթե հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերը եւ տեղեկությունները

բավարար չեն՝ ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշում ընդունելու համար, ապա գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը տեղեկացնում է հայտարարատուին լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության մասին ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշում ընդունելու համար դիմումը ներկայացնելուց հետո 30 օրացուցային օրերի ընթացքում: Լրացուցիչ տեղեկությունները պետք է ծանուցելուց հետո 60 օրացուցային օրերի ընթացքում գրավոր ներկայացվեն հայտարարատուին:

6. Եթե տեղեկությունները չեն ներկայացվել սահմանված ժամկետում կամ էլ հայտարարատուն հրաժարվել է ներկայացնել ապրանքի դասակարգման համար անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկություններ, ապա ապրանքի դասակարգման մասին որոշում ընդունելու համար դիմումը մերժվում է: Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշում ընդունելու համար դիմումը մերժվում է նաեւ այն դեպքում, եթե այդ դիմումի մեջ եւ դրան կից ներկայացված փաստաթղթերում առկա են հակասող տեղեկություններ կամ եթե ապրանքի բաղադրամասերը՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում, դասակարգման կանոնների համաձայն, չեն կազմում [համարվում] ըստ ավարտուն կամ կոմպլեկտավորված ապրանքի ծածկագրի դասակարգվող ապրանք:

7. Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն ընդունվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն ընդունելու համար դիմումի գրանցման օրվան հաջորդող 90 օրացուցային օրերի ընթացքում: Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ տեղեկությունները ներկայացնելու անհրաժեշտության դեպքում սույն մասում նշված ժամկետը կասեցվում եւ վերականգնվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից հարցվող տեղեկությունները պարունակող վերջին փաստաթուղթն ստանալուց հետո:

8. Ապրանքի դասակարգման մասին որոշումը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

- 1) ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշում ընդունած մաքսային մարմնի անվանումը,
- 2) ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման գրանցման համարը եւ դրա ընդունման ամսաթիվը,

3) տեղեկություններ հայտարարատուի մասին (կազմակերպության անվանումը, փոստային հասցեն, ուր պետք է ուղարկվի ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումը),

4) ապրանքի անվանումը,

5) ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի՝ ապրանքի տասանիշ ծածկագիրը,

6) ապրանքի բաղադրիչների ցանկը.

ա) բաղադրամասերի, այդ թվում նաեւ՝ ապրանքի առանձին բաղադրամաս կազմող մասերի անվանումները,

բ) ապրանքի բաղադրամասի դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի,

գ) բաղադրամասերի, այդ թվում նաեւ՝ ապրանքի առանձին բաղադրամաս կազմող մասերի քանակը կամ քաշը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում կիրառվող չափման միավորներով,

7) արտաքին տնտեսական գործարքի կատարումը հաստատող այնպիսի փաստաթղթերի ռեկվիզիտներ, որոնց համաձայն իրականացվում է ապրանքների բաղադրամասերի ներմուծումը կամ արտահանումը, կամ մաքսային նպատակների համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ռեկվիզիտներ,

8) մաքսային մարմնի անվանումը, որտեղ կիրականացվի ապրանքի հայտարարագրումը,

9) մաքսային ընթացակարգի տեսակը, որը կսահմանվի ապրանքի նկատմամբ,

10) մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը:

9. Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

10. Ապրանքի դասակարգման մասով որոշման փոփոխությունը կատարվում է հետեւյալ դեպքերում՝

1) Մաքսային միության Հանձնաժողովի կամ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից ապրանքների առանձին տեսակների

դասակարգման վերաբերյալ մաքսային մարմինների կողմից կատարման համար պարտադիր որոշման կամ պարզաբանման ընդունում,

2) ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում ընդունելու ժամանակ կամ հայտարարողի կողմից փաստաթղթեր պատրաստելու ընթացքում բաց թողնված սխալների, վրիպակների բացահայտում,

3) արտաքին տնտեսական գործունեության գործարքի պայմանների փոփոխություն, եթե նման փոփոխությունը վերաբերում է ապրանքին կամ դրա առանձին բաղադրամասերին,

4) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի փոփոխությունները:

11. Ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման փոփոխության մասին որոշումն ուժի մեջ է մտնում ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման փոփոխության մասին որոշման մեջ նշված ժամկետում:

12. Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման գործողության դադարեցումը կատարվում է հետևյալ դեպքերում՝

1) եթե մաքսային մարմինը պարզել է, որ հայտարարատուն ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման ընդունման համար ներկայացրել է կեղծ փաստաթղթեր կամ ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ,

2) եթե հանրագումարային մաքսային հայտարարագիրը ներկայացված չէ սույն Դաշնային օրենքի 215-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսվող ժամկետում,

3) եթե հայտարարատուն գրավոր հրաժարվել է ապրանքների մատակարարումից, այդ թվում նաեւ՝ ապրանքի առանձին բաղադրամասերի ներմուծումից կամ արտահանումից հետո:

13. Ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման գործողության դադարեցման մասին որոշումը չի ընդունվում, եթե դասակարգման կանոնների համաձայն, պայմանականորեն բաց թողնված ապրանքի բաղադրամասերը վերաբերում են ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման մեջ ընդունված ավարտուն կամ կոմպլեկտավորված ապրանքի դասակարգման ծածկագրին:

14. Ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման գործողության դադարեցման մասին

որոշումն ուժի մեջ է մտնում ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո:

15. Ապրանքի հայտարարագրումը չհավաքված կամ կազմատված վիճակում, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում, որի արտահանումը կամ ներմուծումը ենթադրվում է ապրանքային տարբեր խմբաքանակներով՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրի նշմամբ, իրականացվում է սույն Դաշնային օրենքի 251-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 108. Ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշում, պարզաբանումներ եւ այլ որոշումներ

1. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը եւ շահագրգիռ անձի հայտով՝ գործադիր իշխանության մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից որոշվող այլ մաքսային մարմիններ ընդունում են ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 53-56-րդ հոդվածների համաձայն: Նման որոշման ընդունման կարգը սահմանվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

2. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինն ընդունում է որոշումներ եւ պարզաբանումներ ապրանքների առանձին տեսակների դասակարգման մասին:

3. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինն ապահովում է Ռուսաստանի Դաշնության տարածքում ցանկացած շահագրգիռ անձանց Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն մաքսային մարմինների կողմից ընդունված նախնական որոշումների եւ պարզաբանումների մասին տեղեկատվությունից ազատ օգտվելու անվճար հնարավորությունը:

Գլուխ 10. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ

Հոդված 109. Ապրանքների ծագման երկրի որոշումը եւ այդ ծագման երկրի վերաբերյալ հայտարարությունը

1. Մաքսային միության անդամ չհանդիսացող պետություններից ծագող ապրանքների ծագման երկրների որոշումը Ռուսաստանի Դաշնություն դրանք ներմուծելիս իրականացվում է Ապրանքների ծագման երկիրը որոշելու մասին միասնական կանոնների վերաբերյալ համաձայնագրի եւ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 7-րդ գլխի համաձայն:

2. Մաքսային միության անդամ պետություններից ծագող ապրանքների ծագման սահմանման անհրաժեշտության դեպքում կիրառվում են Անկախ պետությունների համագործակցության ազատ առևտրի գոտու շրջանակներում կնքված՝ Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերին համապատասխան սահմանված ապրանքների ծագման երկրի սահմանման կանոնները, եթե այլ բան սահմանված չէ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

3. Ապրանքների ծագման երկիրը որոշվում է հայտարարատուի կողմից, իսկ սույն Դաշնային օրենքով սահմանված դեպքերում՝ մաքսային մարմնի կողմից: Ապրանքների ծագման երկիրը հայտարարվում է հայտարարատուի կողմից մաքսային մարմնում ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ: Ապրանքների ծագումը հայտարարատուի կողմից հայտարարվող ծագման երկրից պետք է, Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան, փաստաթղթային հիմնավորում ունենա:

Հոդված 110. Ապրանքների ծագման երկրի որոշման ճշտության նկատմամբ հսկողությունը

1. Մաքսային մարմինները հսկողություն են իրականացնում ապրանքների ծագման երկրի որոշման ճշտության նկատմամբ՝ մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառումն ապահովելու նպատակներով այն դեպքերում, երբ նման միջոցների կիրառումը կախված է ապրանքների ծագման երկրից մինչ ապրանքների բացթողումը եւ դրանից հետո:

2. Ապրանքների ծագման երկրի ճշտության նկատմամբ հսկողության իրականացման արդյունքների հիման վրա մաքսային մարմինն որոշում է ընդունում ապրանքների ծագման երկրի մասին եւ (կամ) սակագնային արտոնությունների տրամադրման մասին այն ձեւով եւ կարգով, որոնք որոշվում են գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

3. Եթե մաքսային մարմինը, ծագման երկրի որոշման ճշտության նկատմամբ հսկողություն իրականացնելու ընթացքում, հայտնաբերում է, որ չեն պահպանվել Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված սակագնային արտոնությունների պայմանները, մաքսային մարմինը սահմանված կարգով որոշում է ընդունում մաքսային արտոնությունների տրամադրումը մերժելու մասին:

4. Այն դեպքում, եթե մինչեւ ապրանքների բացթողումը, հայտնաբերվում են այնպիսի հատկանիշներ, որոնք ցույց են տալիս, որ ապրանքների ծագման երկրի մասին հայտարարված տեղեկությունները, որոնք ազդում են վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի չափի վրա եւ (կամ) ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման վրա, կարող են ոչ հավաստի լինել կամ էլ ոչ պատշաճ կերպով հաստատված, մաքսային մարմինն անցկացնում է լրացուցիչ ստուգում: Լրացուցիչ ստուգում անցկացնելու շրջանակներում մաքսային մարմինը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ: Լրացուցիչ ստուգման անցկացումը ապրանքների բացթողումը մերժելու համար հիմք չէ: Ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի վճարման կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 63-րդ հոդվածի համաձայն՝ վերջիններիս վճարումն ապահովելու պայմանով:

5. Այն դեպքում, եթե մաքսային մարմինն ընդունում է սույն հոդվածի 2-րդ եւ (կամ) 3-րդ մասերում նշված որոշումները, ապրանքների բացթողումից հետո նման որոշումներն ուղարկվում են հայտարարատուին՝ դրանք ընդունելուց հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում: Չվճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների գանձումն իրականացվում է սույն Դաշնային օրենքին համապատասխան:

Հոդված 111. Ապրանքների ծագման երկրի մասին նախնական որոշումը

1. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը եւ

գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից որոշվող այլ մաքսային մարմիններ, դիմումատուի դիմումի համաձայն, ապրանքի ծագման մասին կոնկրետ երկրից նախնական որոշում են ընդունում: Դիմումատու կարող է լինել որպես ապրանքի տիրապետող, ապրանքի գնորդ, հայտարարատու հանդես եկող ռուսաստանյան անձը: Դիմումատու կարող է լինել որպես հայտարարատու հանդես եկող օտարերկրյա անձը:

2. Նախնական որոշման ընդունման հարցում շահագրգռված անձը համապատասխան մարմին նախնական որոշում ընդունելու մասին հարցում է ներկայացնում: Նման հարցման մեջ պետք է նշված լինեն նախնական որոշումն ընդունելու համար անհրաժեշտ՝ ապրանքի մասին բոլոր տեղեկությունները՝ ամբողջական առետրային անվանումը, ֆիրմային անվանումը, հիմնական տեխնիկական եւ կոմերցիոն բնութագրերը (նշանակությունը, սորտը, մակնիշը, մոդելը, ապրանքատեսակը (արտիկուլ), նյութը, որից պատրաստված է ապրանքը, ապրանքի գործառույթները, անհատական եւ տրանսպորտային փաթեթվածքի նկարագրությունը):

3. Հարցմանը կից ներկայացվում են փորձարկումների արձանագրությունները, առետրաարդյունաբերական պալատների կամ երկրի այլ փորձագիտական կազմակերպությունների փորձաքննությունների ակտերը, փորձագիտական կազմակերպությունների մասնագետների եզրակացությունները, որտեղ ներկայացված են ապրանքի ուսումնասիրության արդյունքները, արտաքին տնտեսական գործարքների կատարումն հաստատող փաստաթղթերը, արտադրվող ապրանքի արժեքի հաշվարկը, ապրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի մանրամասն նկարագրությունը եւ այլ փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, որ տվյալ ապրանքն ամբողջությամբ արտադրվել կամ ապրանքի ծագման երկրի տարածքում ենթարկվել է բավարար վերամշակման: Հարցմանը կից կարող են ներկայացվել ապրանքի փորձանմուշները եւ նմուշները:

4. Եթե դիմումատուի կողմից ներկայացված տեղեկությունները նախնական որոշում ընդունելու համար բավարար չեն, ապա մաքսային մարմինը նախնական որոշումն ընդունելու մասին հարցման գրանցման օրվանից հետո 30 օրացուցային օրերի ընթացքում դիմումատուին տեղեկացնում է լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտության մասին: Լրացուցիչ տեղեկությունները պետք է ներկայացվեն դիմումատուին կատարված գրավոր ծանուցումը մաքսային մարմնում գրանցելուց հետո 60 օրացուցային օրերի ընթացքում: Եթե

տեղեկությունները չեն տրամադրվում սահմանված ժամկետում, ապա մաքսային մարմինը մերժում է նախնական որոշումն ընդունելու մասին հարցման քննարկումը:

5. Նախնական որոշումն ընդունվում է մաքսային մարմնում հարցումը գրանցելուց հետո ոչ ուշ, քան 90 օրացուցային օրերի ընթացքում:

6. Սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում, սույն հոդվածի 5-րդ մասում նշված ժամկետը կասեցվում է դիմումատուին կատարված գրավոր ծանուցման գրանցման օրվանից եւ վերականգնվում է մաքսային մարմնի կողմից՝ պահանջվող տեղեկությունները պարունակող վերջին փաստաթղթի ստացման օրվանից:

7. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման ընդունման ձեւը եւ կարգը որոշվում են գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

8. Նախնական որոշումը գործում է այն ընդունելուց հետո երեք տարվա ընթացքում, եթե այն փոփոխված չէ, հետ չի կանչվել կամ վերջինիս գործողությունը չի դադարեցվել: Նախնական որոշումը պարտադիր է Ռուսաստանի Դաշնության բոլոր մաքսային մարմինների համար:

9. Մաքսային մարմինը կարող է որոշում ընդունել իր կամ ստորադաս մաքսային մարմնի կողմից ընդունած նախնական որոշման գործողության դադարեցման, փոփոխության կամ հետկանչի մասին: Նախնական որոշման գործողության դադարեցման մասին որոշումն ընդունվում է, եթե մաքսային մարմինը պարզել է, որ դիմումատուն նախնական որոշումն ընդունելու համար ներկայացրել է կեղծ փաստաթղթեր եւ (կամ) հայտնել ոչ հավաստի եւ (կամ) ոչ ամբողջական տեղեկություններ:

10. Նախնական որոշման գործողության դադարեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ նախնական որոշումն ընդունելու օրվանից:

11. Նախնական որոշման փոփոխությունը կատարվում է մաքսային մարմնի կամ դիմումատուի կողմից նախնական որոշման ընդունման ժամանակ թույլ տրված սխալների դեպքում:

12. Նախնական որոշման փոփոխության մասին մաքսային մարմնի որոշումն ուժի մեջ է մտնում նախնական որոշման փոփոխության մասին որոշման մեջ նշված ժամկետում:

13. Նախնական որոշման կայացումը մերժվում է այն դեպքերում, եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով կամ Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերով սահմանվում են ապրանքների ծագման երկրի որոշման այլ պահանջներ եւ պայմաններ:

14. Նախնական որոշման հետկանչի մասին որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի եւ սույն հոդվածի 13-րդ մասում նշված՝ Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերի հրապարակումից 30 օրացուցային օրերի ընթացքում եւ ուժի մեջ է մտնում դրանց հետ միասին:

15. Նախնական որոշման գործողության դադարեցման, այդ որոշման փոփոխության կամ հետկանչի մասին որոշումն ուղարկվում է դիմումատուին ոչ ուշ, քան նախնական որոշման գործողության դադարեցման, այդ որոշման փոփոխության կամ հետկանչի մասին որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Գլուխ 11. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Հոդված 112. Ապրանքների արժեքի որոշումը, հայտարարագրումը, հսկողությունը և ճշգրտումը

1. Մաքսային միության մաքսային սահմանով Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշումն իրականացվում է Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման հարցերը կարգավորող Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով Մաքսային միության Մաքսային օրենսգրքի սահմանված դեպքերում վերջինիս կիրառման առանձնահատկությունները:

2. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը սահմանում է Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման կարգը:

3. Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները Ռուսաստանի Դաշնությունն ներմուծելու դեպքում, այդ ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրումը, հսկողությունը և ճշգրտումն իրականացվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 8-րդ գլխի համաձայն:

4. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը գործադիր իշխանության՝ ֆինանսների ոլորտում լիազորված դաշնային մարմնի հետ համաձայնությամբ, սահմանում է Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգը:

5. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը սահմանում է.

1) Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգը և ձևերը,

2) Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ հայտարարագրի լրացման ձևերը և կանոնները Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված դեպքերում ապրանքների մաքսային արժեքը որոշելիս,

3) ապրանքների ներմուծվող խմբաքանակի մաքսային ընդհանուր արժեքի մեծությունը, որի դեպքում առանց մաքսային արժեքի վերաբերյալ հայտարարագրի լրացման, ապրանքների մաքսային արժեքը հայտարարվում է ապրանքների հայտարարագրում,

4) այն դեպքերը, երբ ապրանքների մաքսային արժեքի հսկողությունն իրականացվում է մաքսային մարմինների մասնագիտացված (ֆունկցիոնալ) ենթաբաժինների կողմից՝ ըստ մաքսային արժեքի,

5) մաքսային մարմինների ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումները չեղյալ համարելու կարգը:

6. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների հայտարարված մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից մաքսային արժեքի հսկողություն իրականացնելիս ապրանքների բացթողումից ինչպես առաջ, այնպես էլ հետո, եթե մաքսային մարմինը կամ հայտարարատուն հայտնաբերում է, որ ապրանքների մաքսային արժեքի մասին հայտարարագրվել են ոչ հավաստի տեղեկություններ, այդ թվում նաև՝ սխալ է ընտրված ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդը եւ (կամ) սխալ է որոշվել ապրանքների մաքսային արժեքը: Ապրանքների հայտարարված մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից՝ մինչև ապրանքների բացթողումը՝ մաքսային արժեքի հսկողություն իրականացնելու ժամանակ եւ առանց լրացուցիչ ստուգում անցկացնելու՝ հետեւյալ դեպքերում՝

1) ապրանքների մաքսային արժեքի մեծության վրա ազդեցություն ունեցած՝ ապրանքների մասին հայտարարագրված տեղեկությունների՝ մաքսային հսկողության անցկացման գործընթացում մաքսային մարմնի կողմից սահմանված փաստացի տեղեկությունների անհամապատասխանության բացահայտում (որակական եւ կոմերցիոն բնութագրեր, քանակություն, առանձնահատկություններ, ծագում, արժեք եւ այլ տեղեկություններ),

2) մաքսային արժեքի հայտարարված մեծության եւ դրա բաղադրիչների՝ դրանց հաստատման համար ներկայացված փաստաթղթերին անհամապատասխանության բացահայտում,

3) մաքսային արժեքի մեծության վրա ազդեցություն ունեցած տեխնիկական սխալների բացահայտում (վրիպակներ, թվաբանական սխալներ, սխալ փոխարժեքի կիրառում եւ այլ

սխալներ):

Հոդված 113. Ապրանքների մաքսային արժեքի հարցերով խորհրդատվությունը

Սույն Դաշնային օրենքի 52-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային մարմինները շահագրգիռ անձանց խորհրդատվություն են տրամադրում ապրանքների մաքսային արժեքի հարցերով: Նշված խորհրդակցություններն անցկացնելիս մաքսային մարմինն իրավունք չունի իրականացնելու փաստաթղթերի ստուգում եւ մաքսային արժեքի վերաբերյալ ընդունելու նախնական որոշումներ:

Մաս II: ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

Գլուխ 12. ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 114. Մաքսատուրքեր, հարկեր վճարողները

Մաքսատուրքեր, հարկեր վճարողներ են համարվում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց վրա, Մաքսային միության Մաքսային օրենսգրքի համաձայն, դրված է մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականությունը՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով եւ սույն Դաշնային օրենքով:

Հոդված 115. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետները

1. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի համաձայն:

2. Այն ապրանքների առումով մաքսատուրքերը, հարկերը, որոնց մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները նշված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ ենթակետերում, վճարվում են՝ մինչ մաքսային հայտարարագիրը ներկայացնելը կամ մաքսային հայտարարագիրը ներկայացնելու հետ մեկտեղ:

Հոդված 116. Մաքսատուրքերի, հարկերի վճարման կարգը եւ ձեւերը

1. Ներմուծման մաքսատուրքերը, բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, վճարվում են Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով որոշված հաշվին: Ներմուծման մաքսատուրքերը չեն կարող հաշվանցվել այլ վճարների վճարային հաշվին:

2. Վճարողի ցանկությամբ ներմուծման մաքսատուրքերը կարող են վճարվել մինչ մաքսային հայտարարագիրը ներկայացնելը: Մինչ մաքսային հայտարարագիրը ներկայացնելը

վճարված մաքսատուրքերի գումարների տնօրինումն իրականացվում է սույն Դաշնային օրենքի 121-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի դրույթները:

3. Մաքսային միության Հանձնաժողովի կողմից սահմանված հատուկ, հակազնագցման (հակադեմփինգային) եւ փոխհատուցման տուրքերը վճարվում են Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով որոշված հաշվին:

4. Մաքսային միության Հանձնաժողովի կողմից սահմանված հատուկ, նախնական հակազնագցման (հակադեմփինգային) եւ նախնական փոխհատուցման տուրքերը վճարվում են Դաշնային գանձապետարանի հաշվին: Եթե հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցները սահմանելուն նախորդող ուսումնասիրությունների արդյունքներով պարզվում է, որ հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքեր սահմանելու համար հիմքերը բացակայում են, ապա նախնական հատուկ, նախնական հակազնագցման եւ նախնական փոխհատուցման տուրքերի վճարված գումարները ենթակա են վերադարձի վճարողին՝ սույն Դաշնային օրենքի 143-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե նշված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ընդունված է հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման վերաբերյալ որոշում, ապա նախնական հատուկ, նախնական հակազնագցման եւ նախնական փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են հաշվառման՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով որոշված հաշվին:

5. Միակողմանի կարգով Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքերը, ինչպես նաեւ միակողմանի կարգով Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող նախնական հատուկ, նախնական հակազնագցման եւ նախնական փոխհատուցման տուրքերը վճարվում են Դաշնային գանձապետարանի հաշվին: Եթե հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցներին նախորդող ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքեր մտցնելու համար հիմքերը բացակայում են, ապա նախնական հատուկ, նախնական հակազնագցման եւ նախնական փոխհատուցման տուրքերի վճարված գումարները ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Դաշնային օրենքի 148-րդ հոդվածով սահմանված կարգով:

6. Արտահանման մաքսատուրքերը վճարվում են Դաշնային գանձապետարանի հաշվին:

7. Հարկերը, ինչպես նաև մաքսատուրքերը, անձնական օգտագործման ապրանքների համար հարկերը վճարվում են Դաշնային գանձապետարանի հաշվին: Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի վճարումը կարող է իրականացվել մաքսային մարմնի դրամարկղ:

8. Մաքսատուրքերի, հարկերի վճարումը կարող է իրականացվել կենտրոնացված կարգով մաքսատուրքերի, հարկերի գումարների՝ սույն հոդվածի 1-ին, 3-7-րդ մասերում նշված հաշիվներին մուտքագրելու միջոցով՝ որոշակի ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնություն ներմուծման կամ Ռուսաստանի Դաշնությունից արտահանման համար նախատեսված ապրանքների համար՝ անկախ նրանից, թե որ մաքսային մարմին կներկայացվի այդ ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը:

9. Մաքսատուրքերի, հարկերի վճարումը կենտրոնացված կարգով կարող է իրականացվել գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի հետ կամ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից որոշված մաքսային մարմինների հետ մաքսատուրքերի, հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառման մասին համաձայնագիր կնքած՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողների կողմից: Նշված համաձայնագիրը չի կարող պարունակել այնպիսի դրույթներ, որոնք ազատում են անձանց մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ եւ (կամ) Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների եւ պայմանների կատարումից մաքսային վճարների լրիվ եւ ժամանակին վճարելու առումով, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի պահպանումից: Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից կարող է հաստատվել մաքսատուրքերի հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառման մասին համաձայնագրի տիպային ձևը:

10. Մաքսատուրքեր, հարկեր վճարողների եւ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի միջեւ մաքսատուրքերի, հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառման մասին համաձայնագիրը կնքվում է հետեւյալ դեպքերում՝

1) եթե նշված համաձայնագրի կնքմանը նախորդող տարվա ընթացքում վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարը գերազանցում է 100 միլիարդ ռուբլին,

2) մաքսատուրքերի, հարկերի վճարման առումով պարտքերի բացակայություն,

3) երեք տարուց ավելի արտաքին տնտեսական գործունեության իրականացում,

4) ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելուն առնչվող մաքսային ընթացակարգերի իրականացումը երկու կամ ավելի այնպիսի մաքսային մարմիններում, որոնք տեղակայված են երկու եւ ավելի ռեգիոնալ մաքսային վարչությունների գործունեության տարածքներում, կամ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից սահմանված մաքսային մարմիններում,

5) Վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.7 եւ 16.22 հոդվածներով նախատեսված նշված համաձայնագրի կնքմանը նախորդող մեկ տարվա ընթացքում մաքսային գործի ոլորտում բազմիցս (երկու եւ ավելի անգամ) կատարված վարչական իրավախախտումների բացակայություն,

6) եթե ապրանքների ներմուծումը եւ (կամ) արտահանումն իրականացվում է ամիսն առնվազն մեկ անգամ:

11. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից որոշված մաքսային մարմնի եւ մաքսատուրքերի, հարկեր վճարողի միջեւ մաքսատուրքերի, հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառման մասին համաձայնագիրը կնքվում է հետեւյալ դեպքերում՝

1) եթե նշված համաձայնագրի կնքմանը նախորդող տարվա ընթացքում վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարը կազմում է 50 մլրդ-ից մինչեւ 100 մլրդ ռուբլի ներառյալ,

2) մաքսատուրքերի, հարկերի վճարման առումով պարտքերի բացակայություն,

3) երեք տարուց ավելի արտաքին տնտեսական գործունեության իրականացում,

4) ռեգիոնալ մաքսային վարչության գործունեության տարածքում տեղակայված երկու եւ ավելի մաքսային մարմիններում ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելուն առնչվող՝ մաքսային ընթացակարգերի իրականացում,

5) Վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.7 եւ 16.22 հոդվածներով նախատեսված նշված համաձայնագրի կնքմանը նախորդող մեկ տարվա ընթացքում մաքսային գործի ոլորտում բազմիցս (երկու եւ ավելի անգամ) կատարված

վարչական իրավախախտումների բացակայություն,

6) եթե ապրանքների ներմուծումը եւ (կամ) արտահանումն իրականացվում է ամիսն առնվազն մեկ անգամ:

12. Մաքսատուրքերի, հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառման մասին համաձայնագիրը կնքվում է ընթացիկ օրացուցային տարվա համար: Կողմերի համաձայնությամբ նշված համաձայնագիրը կարող է կնքվել պակաս երկար ժամկետով:

13. Այնպիսի ապրանքներ հայտարարագրելիս, որոնց նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառմամբ, չի պահանջվում մաքսատուրքերի, հարկերի վճարումը հաստատող վճարային փաստաթղթերը ներկայացնել մաքսային մարմին:

14. Սույն Դաշնային օրենքի համաձայն՝ մաքսային վճարների, կանխավճարների, տուգանքների, տոկոսների, տուժանքների վճարումը կարող է իրականացվել էլեկտրոնային վճարային միջոցների կիրառմամբ՝ գործառնությունների կատարման համար նախատեսված հարմարանքների օգտագործմամբ՝ առանց կանխիկ վճարային միջոցների ընդունման (տրամադրման) հնարավորության, ինչպես նաեւ վճարային տերմինալների կամ բանկոմատների միջոցով:

(թիվ 162-ԴՕ դաշնային օրենքի (2011 թվականի հունիսի 27-ի խմբագրությամբ) 14-րդ մաս)

15. Էլեկտրոնային տերմինալների, վճարային տերմինալների եւ բանկոմատների օգտագործմամբ մաքսատուրքերը, կանխավճարները, տուժանքները, տույժերի վճարման ժամանակ վճարումների մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխանակումն իրականացնում են իրավաբանական անձինք, որոնք պատասխանատու են Դաշնային գանձապետարանի հաշվին եւ (կամ) էլեկտրոնային տերմինալների, վճարային տերմինալների եւ բանկոմատների օգտագործմամբ վճարված դրամական միջոցների՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով որոշված հաշվին մուտքի (հաշվեգրման) համար, ինչպես նաեւ ապահովում են իրենց կողմից ստանձնվող պարտավորությունների պատշաճ կատարումը Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ բանկային երաշխիքների տրամադրման եւ (կամ) Դաշնային գանձապետարանի հաշվին դրամական միջոցների (դրամական գումարների) մուտքագրման

միջոցով: Իրավաբանական անձանց ներկայացվող պահանջները, այդ անձանց, մաքսատուրքեր, հարկեր վճարողների եւ մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի միջեւ համագործակցության կարգը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

(2011 թվականի հունիսի 27-ի խմբագրությամբ թիվ 162-ԴՕ դաշնային օրենքի 15-րդ մաս)

16. Էլեկտրոնային տերմինալների, վճարային տերմինալների եւ բանկոմատների օգտագործմամբ մաքսային վճարների, կանխավճարների, տուժանքների, տուգանքների վճարման մասով գործառնությունների կատարման կարգը եւ տեխնոլոգիաները որոշվում են գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

(2011 թվականի հունիսի 27-ի խմբագրությամբ թիվ 162-ԴՕ դաշնային օրենքի 16-րդ մաս)

Հոդված 117. Մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունների կատարումը

1. Մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ վճարողի պարտավորությունը համարվում է կատարված, եթե սույն հոդվածում նշված դրամական միջոցների չափը պակաս չէ վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարից՝

1) բանկում վճարողի հաշվից դրամական միջոցների դուրս գրման պահից, այդ թվում նաեւ՝ մաքսատուրքերի, հարկերի՝ էլեկտրոնային տերմինալների, բանկոմատների միջոցով վճարելիս,

2) մաքսային մարմնի դրամարկղ կանխիկ դրամական միջոցները մուտքագրելու պահից կամ էլ վճարային տերմինալների, բանկոմատների միջոցով կանխիկ դրամական միջոցների վճարման պահից,

3) հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի գանձված մաքսատուրքերի, հարկերի վճարային հաշվին հաշվանցման պահից, իսկ եթե նման հաշվանցումը կատարվում է վճարողի նախաձեռնությամբ՝ մաքսային մարմնի կողմից հաշվանցման մասին հայտարարությունն ստանալու պահից,

4) մաքսատուրքերի, հարկերի վճարային հաշվին կանխավճարների կամ դրամական

միջոցների գրավի հաշվանցման պահից, իսկ եթե այդ հաշվանցումը կատարվում է վճարողի նախաձեռնությամբ՝ հաշվանցման մասին մաքսային մարմնի կողմից կարգադրությունն ստանալու պահից,

5) բանկային երաշխիքին համապատասխան՝ բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության, ինչպես նաև երաշխավորության պայմանագրին համապատասխան երաշխավորողի կողմից դրամական միջոցների մաքսատուրքերի, հարկերի վճարային հաշվին հաշվանցման պահից,

6) սույն Դաշնային օրենքի 116-րդ հոդվածում նշված հաշիվներին դրամական միջոցների հաշվանցման պահից՝ հետեյալ կետերի հաշվին մաքսային վճարների բռնագանձման դեպքում՝

ա) ապրանքներ, որոնց համար վճարված չեն մաքսատուրքերը, հարկերը,

բ) մաքսատուրքեր, հարկեր վճարողի գույքի գրավ:

2. Անկանխիկ կարգով մաքսատուրքեր, հարկեր վճարելու դեպքում ապրանքների բացթողման նպատակներով մաքսատուրքերի, վճարողի՝ հարկերի վճարման պարտավորությունների կատարման հաստատումը համարվում է սույն Դաշնային օրենքի 116-րդ հոդվածում նշված հաշիվներում մաքսատուրքերի, հարկերի գումարների ստացումը, իսկ սույն Դաշնային օրենքի 116-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն էլեկտրոնային տերմինալների, վճարային տերմինալների կամ բանկոմատների օգտագործմամբ մաքսատուրքեր, հարկեր վճարելու դեպքում նման հաստատում է համարվում էլեկտրոնային տերմինալի, վճարային տերմինալի կամ բանկոմատի միջոցով կազմած փաստաթուղթը՝ նաև էլեկտրոնային տարբերակով, որը հաստատում է դրամական միջոցների փոխանցման իրականացումը սույն Դաշնային օրենքի 116-րդ հոդվածում նշված հաշիվներին: Նշված փաստաթղթի կազմման պահից մաքսատուրքերի, հարկերի վճարման նպատակներով իրականացվող դրամական միջոցների փոխանցումը դառնում է անհետկանչելի:

(2011 թվականի հունիսի 27-ի խմբագրությամբ թիվ 162-ԴՕ դաշնային օրենքի 2-րդ մաս)

3. Մաքսատուրքերը, հարկերը համարվում են ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների համար վճարված՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

4. Մաքսատուրքեր, հարկեր վճարողի, ինչպես նաև սույն Դաշնային օրենքի 119-րդ

հողվածի 1-ին մասում, 168-րդ հողվածի 5-րդ մասում նշված անձանց պահանջով մաքսային մարմինները պարտավոր են գրավոր մաքսատուրքերի, հարկերի վճարման հաստատում տրամադրել՝ սակայն ոչ ավելի, քան այդ պահանջին նախորդող երեք օրացուցային տարիները չգերազանցող ժամանակահատվածի համար: Մաքսատուրքերի, հարկերի վճարման հաստատման ձեռք հաստատվում է գործադիր իշխանության մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից: Մաքսային մարմիններն իրավունք չունեն պահանջելու մաքսատուրքեր հարկեր վճարողներից, ինչպես նաև սույն Դաշնային օրենքի 119-րդ հողվածի 1-ին մասում, 168-րդ հողվածի 5-րդ մասում նշված անձանցից Դաշնային գանձապետարանի հաշվին կամ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով որոշված հաշվին դրամական միջոցների մուտքի հաստատում: Մաքսատուրքեր, հարկեր վճարողի, ինչպես նաև սույն Դաշնային օրենքի 119-րդ հողվածի 1-ին մասում, 168-րդ հողվածի 5-րդ մասում, նշված անձանց գրավոր դիմումի համաձայն, մաքսային մարմինը պարտավոր է դրամական միջոցների մուտքի մասին ինքնուրույն տեղեկություններ ներկայացնել Դաշնային գանձապետարանի հաշվին կամ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով որոշված հաշվին:

5. Սույն Դաշնային օրենքի 116-րդ հողվածում նշված հաշիվներին բանկում մաքսատուրքեր, հարկեր վճարողի հաշվից մաքսային վճարների, տույժերի, տոկոսների գումարների փոխանցման գործառնությունների դիմաց բանկի կողմից ծառայության վճար չի գանձվում:

Հողված 118. Արտարժույթի փոխարժեքի կիրառումը

Այն դեպքերում, երբ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման, այդ թվում նաև՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման նպատակներով, պահանջվում է կատարել արտարժույթի վերահաշվարկ, կիրառվում է Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից սահմանված եւ մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող՝ Ռուսաստանի Դաշնության արժույթի նկատմամբ արտարժույթի փոխարժեքը, եթե Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Հոդված 119. Պայմանականորեն բաց թողնված՝ Ռուսաստանի Դաշնությունում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի վճարման կարգը

1. Այն դեպքերում, երբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում պայմանականորեն բաց թողնված ապրանքների համար Մաքսային միության ապրանքների կարգավիճակի ձեռքբերման նպատակով պահանջվում է մաքսատուրքերի, հարկերի վճարումը (Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին եւ 3-րդ ենթակետեր, 5-րդ կետ), նման վճարումը կարող է կատարվել հայտարարատուի կողմից (վերջինիս իրավահաջորդի կողմից) կամ այլ անձի կողմից, որի մոտ այդ ապրանքները գտնվում են օրինական տիրապետման ներքո:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված մաքսատուրքերի, հարկերի գումարների վճարումը կատարվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց դիմումի հիման վրա, որը ներկայացվել է ապրանքների պայմանական բացթողում իրականացնող մաքսային մարմին՝ այն մաքսային հայտարարագրի համարի նշումով, որի հիման վրա իրականացվում է ապրանքների պայմանական բացթողում եւ այն վճարային փաստաթղթի վավերապայմանների, որի հիման վրա կատարվել է մաքսատուրքերի, հարկերի վճարում:

3. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների համար մաքսատուրքերը, հարկերը վճարվում են ապրանքների պայմանական բացթողման համար հիմք ծառայած մաքսային հայտարարագրում հաշվարկված եւ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնությունների տրամադրման հետ կապված՝ չվճարված գումարների չափով:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների համար մաքսատուրքերը վճարվում են Միասնական մաքսային սակագնով սահմանված ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերով հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարի եւ ապրանքների բացթողման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Դաշնային օրենքի 116-րդ հոդվածի 1-ին, 3-7-րդ մասերով որոշված հաշիվներին:

6. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարի նկատմամբ տուժանքներ չեն հաշվարկվում եւ չեն վճարվում:

Հոդված 120. Տոկոսների վճարումը

1. Տոկոսները վճարվում են հետեւյալ դեպքերում՝

1) մաքսատուրքերի, հարկերի վճարման հետաձգման կամ մաս առ մաս վճարման հնարավորության տրամադրում,

2) Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 250-րդ հոդվածի 5-րդ կետով, 251-րդ հոդվածի 3-րդ կետով, 263-րդ հոդվածի 2-րդ կետով, 276-րդ հոդվածի 2-րդ կետով, 284-րդ հոդվածի 3-րդ կետով եւ 291-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում,

3) սույն Դաշնային օրենքի 288-րդ հոդվածով նախատեսված դեպքում:

2. Տոկոսները վճարվում են հետեւյալ չափերով՝

1) մաքսատուրքերի, հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարման հնարավորության տրամադրման համար տոկոսները հաշվարկվում են մաքսատուրքերի, հարկերի այն գումարների նկատմամբ, որոնց վճարման ժամկետը փոփոխվել է՝ ելնելով Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման այն տոկոսադրույքից, որը գործում է ապրանքների բացթողման օրվան հաջորդող օրվա եւ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարելու օրվա միջեւ ընկած ժամանակահատվածում:

2) Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 250-րդ հոդվածի 5-րդ կետով, 251-րդ հոդվածի 3-րդ կետով, 263-րդ հոդվածի 2-րդ կետով, 276-րդ հոդվածի 2-րդ կետով, 284-րդ հոդվածի 3-րդ կետով եւ 291-րդ հոդվածի 2-րդ կետով ու սույն Դաշնային օրենքի 288-րդ հոդվածով նախատեսվող դեպքերում մաքսատուրքերի, հարկերի վճարման ենթակա գումարի նկատմամբ տոկոսները հաշվարկվում են՝ ելնելով սահմանված ժամկետում գործող՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքից, եթե սույն մասի 3-րդ կետով այլ բան նախատեսված չէ,

120-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթների գործողությունը տարածվում է 2010 թվականի հուլիսի 1-ից առաջացած իրավահարաբերությունների վրա (սույն փաստաթղթի 325-րդ հոդվածը):

3) ժամանակավորապես արտահանված բնական գազի՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվելու դեպքում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող տոկոսները հաշվարկվում են մաքսատուրքերի վճարման ենթակա գումարի նկատմամբ՝ ելնելով զրո տոկոս դրույթաչափից:

3. Տոկոսները վճարվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ:

4. Տոկոսների վճարումը, բռնագանձումը եւ վերադարձն իրականացվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքով եւ սույն Դաշնային օրենքով նախատեսված՝ համապատասխանաբար մաքսատուրքերի ու հարկերի վճարման, բռնագանձման եւ վերադարձին վերաբերող կարգով:

5. Սույն Դաշնային օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասով եւ 155-րդ հոդվածի 19-րդ մասով նախատեսված դեպքերում տոկոսների վճարումը կատարվում է նշված հոդվածներին համապատասխան:

Գլուխ 13. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԸ

Հոդված 121. Կանխավճարների վճարումը

1. Կանխավճար են ճանաչվում նախատեսվող արտահանման մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների վճարային հաշվին մուտք արված եւ վճարողի կողմից կոնկրետ ապրանքների համար արտահանման մաքսային տուրքերի, հարկերի, մաքսավճարների կոնկրետ տեսակների եւ գումարների կտրվածքով չնույնականացված դրամական միջոցները:

2. Կանխավճարները վճարվում են Դաշնային գանձապետարանի հաշվին Ռուսաստանի Դաշնության արժույթով:

3. Որպես կանխավճար վճարված դրամական միջոցները համարվում են կանխավճարներ կատարած անձի սեփականությունը եւ չեն կարող դիտարկվել որպես մաքսային վճարներ կամ դրամական միջոցների գրավ՝ մինչեւ նշված անձը մաքսային մարմինն դրա մասին հանձնարարական չտա կամ էլ մաքսային մարմինը հետ չկանչի կանխավճարների գանձումը: Որպես կանխավճար կատարած անձի հանձնարարական է դիտարկվում վերջինիս կողմից կամ անունից մաքսային հայտարարագիր, կանխավճարները վերադարձնելու կամ այլ գործողություններ կատարելու համար դիմումը ներկայացնելը, որոնք վկայում են տվյալ անձի՝ որպես մաքսային վճարների կամ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում իր դրամական միջոցներն օգտագործելու մտադրության մասին:

4. Կանխավճարներ վճարած անձի՝ դրանց օգտագործման մասին հանձնարարականի հիման վրա, բացառությամբ կանխավճարները վերադարձնելու համար դիմումի, մաքսային մարմինը, որը կառավարում է նշված դրամական միջոցները, կատարում է կանխավճարների նույնականացում մաքսային վճարներին կամ դրամական միջոցների գրավին՝ ըստ դրանց տեսակների եւ գումարների:

5. Կանխավճարները վճարած անձի գրավոր դիմումի հիման վրա մաքսային մարմինը նշված դիմումն ստանալուց հետո 30 օրվանից ոչ ուշ, պարտավոր է, նշված անձին՝ որպես կանխավճար՝ նշված դիմումին նախորդող երեք տարին չգերազանցող ժամանակահատվածում մուտք արված դրամական միջոցները ծախսելու մասին գրավոր հաշվետվություն տրամադրել:

Որպես կանխավճարներ մուտք արված դրամական միջոցների ծախսի մասին հաշվետվությունը, որի ձեւը հաստատվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից, պետք է մաքսային եւ այլ վճարների տեսակների մասին անձի հայտարարության մեջ նշված ժամանակահատվածի համար պարունակի տեղեկություններ՝

1) դիմումի մեջ նշված ժամանակահատվածի համար մուտք արված կանխավճարների գումարների մասին, այդ թվում նաեւ՝ եթե վճարողի դիմումի համաձայն, կանխավճարի կարգավիճակ են ձեռք բերել նրա կողմից նախկինում դրամական միջոցներ՝ որպես գրավ մուտք արված դրամական միջոցները կամ հաշվարկվածից ավելի վճարված կամ բռնագանձված մաքսային վճարները,

2) մաքսային եւ այլ վճարների վճարման, դրամական միջոցների գրավի մուտքագրման վրա ծախսված կանխավճարների գումարների մասին՝ այնպիսի փաստաթղթերի վավերապայմանների նշումով, որոնց հիման վրա իրականացվել է մաքսատուրքերի, հարկերի անվիճելի կարգով գանձում՝ կանխավճարների չծախսված մնացորդի հաշվին,

3) անձին վերադարձված կանխավճարների գումարների մասին՝ վերադարձի համար դիմումի եւ վերադարձի մասին որոշումների վավերապայմանների նշումով:

6. Կանխավճարներ մուտք արած անձի՝ մաքսային մարմնի հաշվետվության արդյունքների հետ անհամաձայնության դեպքում կատարվում է այդ անձի դրամական միջոցների ծախսման համատեղ ճշտում: Նման ստուգման արդյունքները ձեւակերպվում են ակտով գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից հաստատվող ձեւով: Ակտը կազմվում է երկու օրինակով, ստորագրվում է մաքսային մարմնի եւ կանխավճար կատարած անձի միջեւ: Ակտի մեկ օրինակն այն ստորագրելուց հետո տրվում է նշված անձին:

Հոդված 122. Կանխավճարները վերադարձնելը

1. Կանխավճարների վերադարձն իրականացվում է հաշվարկվածից շատ վճարված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու համար նախատեսվող կանոններով, եթե դրանք վերադարձնելու մասին հայտարարությունը ներկայացված է կանխավճար մուտք արած անձի

(վերջինիս իրավահաջորդի) կողմից կանխավճարներն օգտագործելու մասին վերջին հանձնարարականի օրվանից հետո երեք տարվա ընթացքում: Եթե նշված անձի կողմից կանխավճարների օգտագործման մասին հանձնարարական չի կատարվել, դրանք վերադարձնելու համար դիմումը ներկայացնելու նշված ժամկետը հաշվարկվում է Դաշնային գանձապետարանի հաշվին դրամական միջոցների մուտքի օրվանից: Կանխավճարների վերադարձի համար դիմումի ձեւը հաստատվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

2. Նշված ժամկետը լրանալուց հետո կանխավճարների չպահանջված գումարները հաշվառվում են դաշնային բյուջեի այլ ոչ հարկային եկամուտների կազմում եւ ենթակա չեն վերադարձի:

3. Կանխավճարները վերադարձնելու համար դիմումին կից ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը՝

1) կանխավճարների փոխանցումը հաստատող վճարային փաստաթուղթ,

2) սույն հոդվածի 4-7-րդ մասերում նշված փաստաթղթերը՝ կախված անձի կարգավիճակից,

3) այլ փաստաթղթեր, որոնք կարող են ներկայացվել վերադարձի հիմնավորվածության հաստատման համար կանխավճարների վերադարձի համար դիմում ներկայացրած անձի կողմից:

4. Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան ստեղծված իրավաբանական անձինք ներկայացնում են՝

1) փաստաթղթի բնօրինակը ներկայացնելիս՝ նոտարի կամ մաքսային մարմնի կողմից վավերացված մաքսային մարմնում հաշվառման դնելու մասին վկայականի պատճեն,

2) փաստաթղթի բնօրինակը ներկայացնելիս՝ նոտարի կամ մաքսային մարմնի կողմից վավերացված պետական գրանցման մասին վկայականի պատճեն,

3) փաստաթղթի բնօրինակը ներկայացնելիս՝ նոտարի կամ մաքսային մարմնի կողմից վավերացված կանխավճարները վերադարձնելու համար դիմումը ստորագրած անձի լիազորությունները հաստատող փաստաթուղթ,

4) հայտարարություն ստորագրած անձի՝ անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը ներկայացնելիս՝ նոտարի կամ մաքսային մարմնի կողմից վավերացված կանխավճարները վերադարձնելու համար դիմումը ստորագրած անձի ստորագրության նմուշը,

5) եթե կանխավճարների վերադարձի համար դիմումը ներկայացվում է փաստաթղթի բնօրինակը ներկայացնելիս, իրավահաջորդությունը հաստատող փաստաթղթի պատճենը՝ նոտարի կամ մաքսային մարմնի կողմից վավերացված կանխավճարներ մուտք արած իրավահաջորդի կողմից:

5. Իրավաբանական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձանց, ներկայացնում են՝

1) իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթի պատճենը՝ ըստ այն երկրի օրենսդրության, որի տարածքում ստեղծվել է տվյալ իրավաբանական անձը (ռուսերեն թարգմանությամբ)՝ վավերացված նոտարի կողմից,

2) կանխավճարները վերադարձնելու համար դիմումն ստորագրած անձի լիազորությունները հաստատող՝ նոտարի կողմից վավերացված փաստաթղթի պատճենը (ռուսերեն թարգմանությամբ),

3) նոտարի կողմից վավերացված՝ կանխավճարները վերադարձնելու համար դիմումը ստորագրած անձի ստորագրության նմուշը:

6. Որպես անհատ ձեռներեց գրանցված ֆիզիկական անձինք ներկայացնում են՝

1) մաքսային մարմնում հաշվառվելու մասին վկայագրի պատճենը՝ նոտարի կամ մաքսային մարմնի կողմից վավերացված փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու դեպքում,

2) պետական գրանցման մասին վկայականի պատճենը՝ վավերացված նոտարի կամ մաքսային մարմնի կողմից՝ փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու դեպքում,

3) Ռուսաստանի Դաշնության քաղաքացու անձնագրի պատճենը՝ վավերացված նոտարի կամ մաքսային մարմնի կողմից՝ փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու դեպքում :

7. Ֆիզիկական անձինք ներկայացնում են՝

1) Ռուսաստանի Դաշնության քաղաքացու անձնագրի կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված

նոտարի կամ մաքսային մարմնի կողմից՝ փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու դեպքում,

2) կանխավճարների գումարի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե ներկայացվող կանխավճարները վերադարձնելու համար դիմումը ներկայացվում է փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու դեպքում՝ վավերացված նոտարի կամ մաքսային մարմնի կողմից՝ կանխավճար կատարած անձի ժառանգի կողմից:

8. Եթե մաքսային մարմին նախկինում ներկայացվել են սույն հոդվածի 4-7-րդ մասերում նշված փաստաթղթերը, ապա անձն իրավունք ունի չներկայացնելու նման փաստաթղթեր՝ կրկին հաղորդելով տեղեկություններ մաքսային մարմին նման փաստաթղթեր ներկայացնելու եւ դրանցում փոփոխությունների բացակայության մասին:

9. Կանխավճարները վերադարձնելու մասին դիմումը՝ կից ներկայացվող փաստաթղթերով, որոնց ցանկը սահմանված է սույն հոդվածով, ներկայացվում է մաքսային մարմին, որը կառավարում է տվյալ դրամական միջոցները:

Գլուխ 14. ՄԱՔՍԱՎՃԱՐՆԵՐ

Հոդված 123. Մաքսավճարների տեսակները

1. Մաքսավճարները պարտադիր վճարներ են, որոնք գանձվում են մաքսային մարմինների կողմից՝ վերջիններիս կողմից ապրանքների թողարկման, ապրանքների մաքսային ուղեկցության, ապրանքների պահպանման հետ կապված գործողությունների կատարման համար:

2. Մաքսավճարներին վերաբերում են՝

1) ապրանքների բացթողման հետ կապված գործողությունների կատարման համար մաքսավճարներ (հետայսու՝ մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարներ),

2) մաքսային ուղեկցման համար մաքսավճարներ,

3) պահպանման համար մաքսավճարներ:

Հոդված 124. Մաքսավճարներ վճարողները

1. Մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարներ եւ մաքսային ուղեկցման համար մաքսավճարներ վճարողներ են համարվում սույն Դաշնային օրենքի 114-րդ հոդվածում նշված անձինք:

2. Պահպանման համար մաքսավճարներ վճարողներ են համարվում մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստ ապրանքներ հանձնած անձինք:

Հոդված 125. Մաքսավճարների հաշվարկման կարգը

1. Մաքսավճարները հաշվարկվում են վճարողների կողմից՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Մաքսավճարները հաշվարկվում են մաքսային մարմինների կողմից՝ մաքսավճարների վճարման մասին պահանջներ ներկայացնելիս, ինչպես նաեւ՝ անձնական օգտագործման

ապրանքների նկատմամբ մաքսային վճարները հաշվարկելիս:

3. Մաքսավճարների վճարման ենթակա գումարների հաշվարկումը կատարվում է Ռուսաստանի Դաշնության արժույթով: Այդ դեպքերում, եթե մաքսատուրքերի գումարների հաշվարկման նպատակներով պահանջվում է կատարել արտարժույթի վերահաշվարկ, ապա կիրառվում է Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից սահմանվող եւ մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող՝ Ռուսաստանի Դաշնության արժույթի նկատմամբ արտարժույթի փոխարժեքը:

Հոդված 126. Մաքսավճարների դրույքաչափերի կիրառումը

1. Մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների գումարների հաշվարկման նպատակների համար կիրառվում են մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող դրույքաչափերը:

2. Մաքսային ուղեկցման համար մաքսավճարների գումարների հաշվարկման նպատակներով կիրառվում են մաքսային մարմնի կողմից տարանցիկ հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող դրույքաչափերը:

3. Պահպանման համար մաքսավճարների գումարների հաշվարկման նպատակներով կիրառվում են մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստում ապրանքների պահպանման ժամանակահատվածում գործող դրույքաչափերը:

Հոդված 127. Մաքսավճարների վճարման ժամկետները

1. Մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարները պետք է վճարվեն մաքսային հայտարարագիրը ներկայացնելու հետ միաժամանակ:

2. Մաքսային ուղեկցման համար մաքսավճարները պետք է վճարվեն մինչեւ մաքսային ուղեկցման փաստացի իրականացման սկիզբը:

3. Պահպանման համար մաքսավճարները պետք է վճարվեն մինչեւ մաքսային մարմնի պահեստից ապրանքները փաստացի հանելը:

Հոդված 128. Մաքսավճարների վճարման կարգը եւ ձեւերը

1. Մաքսավճարները վճարվում են՝

1) մաքսային ընթացակարգերի համար՝ ապրանքները հայտարարագրելիս, այդ թվում նաեւ՝ ոչ լրիվ մաքսային հայտարարագիր, պարբերական մաքսային հայտարարագիր, ժամանակավոր մաքսային հայտարարագիր, ամբողջական մաքսային հայտարարագիր՝ մաքսային մարմին ներկայացնելիս,

2) մաքսային ուղեկցման համար՝ մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի համաձայն ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցներ ուղեկցելիս,

3) պահպանման համար՝ մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստում ապրանքներ պահելիս:

2. Մաքսավճարների վճարումն իրականացվում է այն կանոններով եւ ձեւերով, որոնք սահմանված են մաքսատուրքերի, հարկերի վճարման նկատմամբ սույն Դաշնային օրենքով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ մասի դրույթները:

3. Մաքսավճարների վճարումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության արժույթով՝ Դաշնային գանձապետարանի հաշվին: Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների համար մաքսավճարների վճարումը կարող է իրականացվել մաքսային մարմնի դրամարկղում:

Հոդված 129. Մաքսավճարների գանձումը եւ վերադարձը

1. Մաքսավճարների գանձումը եւ վերադարձն իրականացվում են մաքսավճարների, հարկերի գանձման ու վերադարձի համար սույն Դաշնային օրենքով նախատեսվող կարգին համապատասխան՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսվող դեպքերի:

2. Եթե մաքսային հայտարարագրի գրանցումից հետո վերջինիս ստուգման ընթացքում մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների մեծության վրա ազդող այդ հայտարարագրում առկա տեղեկությունների ճշգրտում է իրականացվել, ապա ապրանքները

հայտարարագրելիս մաքսային ընթացակարգերի համար հայտարարված մաքսավճարների գումարը չի վերահաշվարկվում, մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների գումարների լրացուցիչ գանձում եւ վերադարձ չի կատարվում:

3. Սույն Դաշնային օրենքի 148-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դեպքերում մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների վերադարձ չի կատարվում:

Հոդված 130. Մաքսավճարների դրույքաչափերը

1. Մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների դրույքաչափերը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

2. Մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների չափը սահմանափակվում է մաքսային մարմինների ծառայությունների մոտավոր արժեքով եւ չի կարող գերազանցել 100 000 ռուբլին:

3. Արտահանման մաքսատուրքերով չհարկվող ապրանքները Ռուսաստանի Դաշնությունից արտահանելու ժամանակ՝ մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների դրույքաչափերը չեն կարող կախված լինել նման ապրանքների արժեքից:

4. Ժամանակավոր մաքսային հայտարարագիր ներկայացնելով՝ ապրանքներ հայտարարագրելու դեպքում մաքսավճարների դրույքաչափերը չեն կարող կախված լինել այդպիսի ապրանքների արժեքից: Եթե նույն ապրանքների համար հետագայում ներկայացվում է ամբողջական մաքսային հայտարարագիր, ապա մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարները վճարվում են սույն հոդվածի 2-րդ մասում սահմանված չափերով:

5. Մաքսային ուղեկցման համար մաքսավճարները վճարվում են հետեւյալ չափերով՝

1) յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի եւ երկաթուղային շարժակազմի յուրաքանչյուր միավորի հետեւյալ հեռավորության վրա մաքսային ուղեկցումն իրականացնելու համար՝

ա) մինչեւ 50 կմ՝ ներառյալ 2000 ռուբլին,

բ) 51-ից մինչեւ 100 կմ՝ ներառյալ 3000 ռուբլին,

զ) 101-ից 200 կմ՝ ներառյալ 4000 ռուբլին,

դ) 200 կմ-ից բարձր՝ 1000 ռուբլի ճանապարհի յուրաքանչյուր 100 կիլոմետրի համար, սակայն 6000 ռուբլուց ոչ պակաս,

2) յուրաքանչյուր նավի կամ օդանավի մաքսային ուղեկցումն իրականացնելու համար՝ 20 000 ռուբլի՝ անկախ տեղափոխման հեռավորությունից:

6. Մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստում պահպանման համար մաքսավճարները վճարվում են օրական 1 ռուբլու չափով՝ ապրանքների քաշի յուրաքանչյուր 100 կիլոգրամի դիմաց, մինչդեռ հատուկ հարմարեցված (կահավորված եւ սարքավորված)՝ ապրանքների առանձին տեսակների պահպանման համար շինություններում՝ օրական 2 ռուբլու չափով՝ ապրանքների քաշի յուրաքանչյուր 100 կիլոգրամի դիմաց: Ապրանքների ոչ լրիվ 100 կիլոգրամ քաշը հավասարեցվում է լրիվ 100 կիլոգրամներին, իսկ ոչ լրիվ օրը՝ լրիվ օրվան:

Հոդված 131. Մաքսավճարի գանձումներից ազատելը

1. Մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարները չեն գանձվում հետեւյալ կետերի նկատմամբ՝

1) Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան անհատույց օգնության (աջակցությանը) առնչվող՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքներ,

2) դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հաստատությունների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների, այդ ներկայացուցչությունների, հաստատությունների եւ կազմակերպությունների անձնակազմի կողմից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքներ, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի համապատասխան արտոնություններից, առավելություններից եւ (կամ) անձեռնմխելիությունից օգտվող օտարերկրյա անձանց առանձին կատեգորիաների անձնական օգտագործման ապրանքներ,

3) ռուսաստանյան պետական կամ մունիցիպալ թանգարանների, պահոցների,

գրադարանների, մշակութային արժեքների պետական այլ պահեստարանների կողմից «ժամանակավոր արտահանում» կամ «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված մշակութային արժեքներ՝ դրանց ցուցադրման նպատակով, ինչպես նաեւ նշված ընթացակարգերի գործողության ժամկետի ավարտի դեպքում՝ ապրանքները համապատասխանաբար «վերաարտահանում» եւ «վերաներմուծում» ընթացակարգերով ձեւակերպելու միջոցով,

4) Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող եւ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքներ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշմամբ ավիացիոն տիեզերական սալոնների եւ այլ նման միջոցառումների՝ օտարերկրյա մասնակցությամբ ցուցահանդեսների եւ (կամ) համաժողովների անցկացման ժամանակ ցուցադրման նպատակներով,

5) Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական բանկերի կողմից ներմուծվող կամ արտահանվող՝ Մաքսային միության անդամ պետությունների կանխիկ արժույթ՝ բացառությամբ հուշադրամների,

6) Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող կամ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների (բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների) մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ուղարկողից մեկ ստացողի հասցեին, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում մաքսային հայտարարագրի մաքսային մարմնի կողմից գրանցման պահին գործող՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի փոխարժեքով 200 եվրոյին համարժեք գումարը,

7) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքներ,

8) Ռուսաստանի միջազգային ավտոմոբիլային փոխադրողների ասոցիացիայի եւ Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության միջեւ տեղափոխվող միջազգային ճանապարհային փոխադրումների (ՄՃՓ) գրքույկների բլանկներ, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքում տրամադրման համար նախատեսվող ժամանակավոր ընդունման թույլտվության (ATA Carnet) բլանկներ,

9) Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ակցիզային դրոշմանիշներ,

10) անձնական, ընտանեկան, տնային եւ ձեռնարկատիրական գործունեության

իրականացման հետ չկապված այլ կարիքների համար ֆիզիկական անձանց կողմից փոխադրվող ապրանքներ, որոնց համար տրամադրվում է մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ ազատում,

11) միջազգային փոստային առաքումներով փոխադրվող ապրանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված ապրանքների հայտարարագրումն իրականացվում է առանձին մաքսային հայտարարագիր ներկայացնելու միջոցով,

12) որպես պաշարներ՝ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող եւ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքներ,

13) հատուկ մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքներ, այդ թվում նաեւ՝ ապրանքները հատուկ ընթացակարգեր ավարտելու համար անհրաժեշտ ընթացակարգերով ապրանքները ձեւակերպելիս,

14) «ոչնչացում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ օտարերկրյա ապրանքների ոչնչացման հետեւանքով առաջացած թափոններ (մնացորդներ), որոնց համար վճարման ենթակա չեն մաքսատուրքերը, հարկերը,

15) ապրանքներ, որոնք պարզվել է, որ ոչնչացրած, անվերադարձ կորած կամ վնասված են՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի գործողության հետեւանքով եւ ձեւակերպվել են «ոչնչացում» մաքսային ընթացակարգով,

16) Ռուսաստանի Դաշնության տարածք ներս բերված, ներսբերման վայրում կամ ներսբերման վայրին անմիջականորեն մոտ գտնվող մաքսային հսկողության այլ գոտում տեղակայված, որեւէ մաքսային ընթացակարգով չձեւակերպված՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող եւ Ռուսաստանի Դաշնության տարածքից ուղարկվող ապրանքներ,

17) ժամանակավոր ընդունման թույլտվության կիրառմամբ Ռուսաստանի Դաշնություն ժամանակավոր ներմուծվող ապրանքներ՝ ժամանակավոր ընդունման թույլտվության կիրառմամբ ապրանքների ժամանակավոր ներմուծման պայմանների պահպանման դեպքում եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց հետադարձ արտահանման դեպքում, ինչպես նաեւ ժամանակավոր ընդունման թույլտվության կիրառմամբ Ռուսաստանի Դաշնությունից ժամանակավորապես արտահանվող ապրանքներ՝ ժամանակավոր ընդունման թույլտվության

կիրառմամբ ապրանքների ժամանակավոր արտահանումը պահպանելու դեպքում եւ Ռուսաստանի Դաշնություն դրանց հետադարձ ներմուծելու դեպքում,

18) պահեստամասեր եւ սարքավորումներ, որոնք ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից տրանսպորտային միջոցի հետ միաժամանակ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 349-րդ հոդվածին համապատասխան,

19) միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներ, այդ թվում նաեւ՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգին կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված եւ հետագայում որպես միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոց օգտագործվող,

20) մասնագիտական սարքավորումներ, որոնց ցանկը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից եւ որոնք օգտագործվում են զանգվածային լրատվական միջոցների արտադրության եւ հրատարակման նպատակներով, որոնք ձեւակերպվում են «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, ինչպես նաեւ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգի ավարտի դեպքում՝ ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու միջոցով,

21) կինոնկարահանումների, ներկայացումների եւ նմանատիպ միջոցառումների անցկացման համար նախատեսվող ապրանքների (թատերական կոստյումներ, կրկեսային կոստյումներ, կինոկոստյումներ, բեմական սարքավորումներ, պարտիտուրա, երաժշտական գործիքներ եւ այլ թատերական ռեկվիզիտներ ու կրկեսային ռեկվիզիտներ, կինոռեկվիզիտներ), որոնք ձեւակերպվում են «ժամանակավոր ներկրում (ընդունում)» մաքսային ընթացակարգով կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով եւ դրանց հետադարձ արտահանման (վերաարտահանման) կամ հետադարձ արտահանման (վերաարտահանում) դեպքում, եթե նման ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարումից կիրառվում է լրիվ պայմանական ազատում,

22) սպորտային մրցումների, ցուցադրական սպորտային միջոցառումների կամ մարզումների համար նախատեսվող ապրանքներ, որոնք ձեւակերպվում են «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով եւ

նշված ընթացակարգերն ավարտվելու դեպքում՝ ապրանքները համապատասխանաբար «վերաարտահանում» եւ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու միջոցով, եթե նման ապրանքների համար կիրառվում է մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատում,

23) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի համաձայն՝ Կալինինգրադի շրջանի տարածք ներմուծված ապրանքները եւ դրանց վերամշակումից ստացվող արդյունքները, որոնք ձեւակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերաներմուծման համար բացթողում» մաքսային ընթացակարգերով,

24) գիտական կամ առեւտրային նմուշներ, որոնք ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգով մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ եւ որոնք արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան,

25) այլ ապրանքներ՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանվող դեպքերում:

2. Պահպանման համար մաքսավճարներ չեն գանձվում՝

1) մաքսային մարմինների կողմից ապրանքները՝ մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստ հանձնելու դեպքում,

2) Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից որոշվող որոշ այլ դեպքերում:

3. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավունք ունի որոշելու մաքսային ուղեկցման համար մաքսավճարներ վճարելուց ազատման դեպքերը:

Գլուխ 15. ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 132. Մաքսատուրքերի վճարման ժամկետների փոփոխությունը

1. Մաքսատուրքերի վճարման ժամկետների փոփոխությունը կատարվում է վճարման հետաձգման կամ մաս առ մաս վճարման ձեռով՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով որոշվող հիմքերով, պայմաններով եւ կարգով:

2. Ռուսաստանի Դաշնության կառավարությունն իրավունք ունի որոշելու գործադիր իշխանության՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսվող մաքսատուրքերի վճարումը երկարաձգելու կամ մաս առ մաս վճարումը տրամադրելու համար նման հիմքերի առկայությունը հաստատելու լիազորություն ունեցող՝ դաշնային մարմիններին:

3. Այն դեպքում, երբ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը որոշումներ է ընդունում Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված՝ մաքսավճարների վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրելու համար նման հիմքերի առկայությունը հաստատելու լիազորություն ունեցող՝ գործադիր իշխանության դաշնային մարմիններ որոշելու մասին, այդպիսի հաստատման առկայությունը պարտադիր է այն դեպքում, երբ որեւէ անձ վճարման հետաձգման կամ մաս առ մաս վճարման հնարավորություն տրամադրելու համար դիմում է ներկայացնում:

Հոդված 133. Հարկերի վճարման ժամկետների փոփոխության ընդհանուր պայմանները

1. Սույն Դաշնային օրենքի 134-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը կամ վերջինիս կողմից որոշվող այլ մաքսային մարմիններ մաքսատուրքեր, հարկեր վճարողի դիմումի հիման վրա գրավոր կարող են փոփոխել հարկերի վճարման ժամկետը՝ դրանց վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրելու ձեռով:

2. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը կարող է տրամադրվել հարկերի մեկ կամ մի քանի տեսակների, ինչպես նաև վճարման ենթակա ամբողջ գումարի կամ դրա մի մասի համար:

3. Հարկերի վճարումը հետաձգելը կամ տարժամկետումը տրամադրվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքով եւ սույն Դաշնային օրենքով նախատեսվող կարգով՝ հարկերի գումարի վճարումն ապահովելու պայմանով: Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրման կամ դրա տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունվում է դրա համար դիմումը ներկայացնելու օրվանից հետո 15 օրը չգերազանցող ժամանակահատվածում: Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրումը կարող է մերժվել՝ բացառապես սույն Դաշնային օրենքի 135-րդ հոդվածով նախատեսվող հանգամանքների առկայության դեպքում:

4. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրվում է մեկից մինչև վեց ամիս ժամկետով:

5. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարումը տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու մասին գրավոր որոշումը ներկայացվում է այն տրամադրելու համար դիմումը ներկայացրած անձին: Որոշման մեջ նշվում է այն ժամկետը, որով տրամադրվում է հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը, իսկ հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրումը մերժելու դեպքում՝ այդ որոշման պատճառները:

Հոդված 134. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրելու համար հիմքերը

1. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրվում է մաքսատուրքեր, հարկեր վճարողին հետեւյալ հիմքերից առնվազն մեկի առկայության դեպքում՝

1) տարերային աղետի, տեխնոլոգիական աղետի կամ անհաղթահարելի ուժի այլ հանգամանքների հետեւանքով այդ անձին վնասի պատճառման,

2) դաշնային բյուջեից այդ անձին ֆինանսավորման կամ այդ անձի կողմից կատարված

պետպատվերի դիմաց վճարման ուշացման,

3) եթե Ռուսաստանի Դաշնության տարածք ներմուծվող ապրանքները արագ փչացող ապրանքներ են,

4) անձի կողմից Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով առաքումների իրականացման,

5) եթե Ռուսաստանի Դաշնության տարածք ներմուծվող ապրանքները համարվում են առանձին տեսակի ներկրվող օտարերկրյա օդանավերի եւ դրանց համալրող՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված ապրանքներ, որոնց նկատմամբ կարող է տրամադրվել հարկերի վճարման հետաձգում կամ տարժամկետում:

2. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է որոշելու գործադիր իշխանության այն դաշնային մարմիններին, որոնք լիազորված են հաստատելու սույն Դաշնային օրենքով նախատեսվող հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրման համար հիմքերի առկայությունը:

3. Այն դեպքում, երբ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը որոշումներ է ընդունում սույն Դաշնային օրենքով նախատեսված՝ հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրման համար հիմքերի առկայությունը հաստատելու լիազորություն ունեցող՝ գործադիր իշխանության դաշնային մարմիններ որոշելու մասին, այդպիսի հաստատման առկայությունը պարտադիր է այն դեպքում, երբ որեւէ անձ վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորություն տրամադրելու համար դիմում է ներկայացնում:

Հոդված 135. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրումը բացառող հանգամանքները

1. Հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորություն չի տրամադրվում, եթե նշված հետաձգման կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրմանը հավակնող անձի նկատմամբ՝

1) հարուցված է քրեական գործ, որի նախնական հետաքննություն, Ռուսաստանի

Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ, վերապահված է մաքսային մարմինների իրավասությանը,

2) հարուցված է սնանկության վարույթ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքների առկայության դեպքում հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրելու մասին որոշումը կարող է ընդունվել, իսկ ընդունված որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, որի մասին հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորություն ստանալու համար դիմումը ներկայացրած անձը գրավոր տեղեկանում է մաքսային մարմնի կողմից երեք աշխատանքային օրերի ընթացքում:

Հոդված 136. Հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրելու համար տոկոսները

Մաքսատուրքերի, հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորությունը տրամադրելու համար վճարվում են տոկոսներ՝ սույն Դաշնային օրենքի 120-րդ հոդվածով սահմանված չափով եւ կարգով:

Գլուխ 16. ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼԸ

Հոդված 137. Մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու ընդհանուր պայմանները

1. Մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու ընդհանուր պայմանները որոշվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 12-րդ հոդվածով:

2. Մաքսատուրքերի, հարկերի վճարման մասով պարտավորությունների կատարումն ապահովվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև հետևյալ դեպքերում՝

1) Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 88-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով ու պայմաններով ապրանքների բացթողում,

2) սույն Դաշնային օրենքի 106-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ ստուգում անցկացնելու ժամանակ ապրանքների բացթողում,

3) Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի եւ սույն Դաշնային օրենքի 222-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի համաձայն՝ ապրանքների պայմանական բացթողում՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով սահմանված դեպքերի,

4) առանց ապրանքները մաքսային պահեստ փաստացի հանձնելու «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպում, «մաքսային տարածքում վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերով ապրանքների ձեւակերպում՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով սահմանված դեպքերի,

5) սույն Դաշնային օրենքով նախատեսված դեպքերում՝ մաքսային գործի ոլորտում անձանց կողմից գործունեության իրականացման ժամանակ,

6) որպես նավահանգստային առանձնահատուկ տնտեսական գոտու ղեզիդենտ գործունեության իրականացում, եթե դա սահմանված է ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգի սահմանման եւ կիրառման մասով իրավախախտումները կարգավորող՝

Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով,

7) սույն Դաշնային օրենքով, այլ դաշնային օրենքներով, Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով նախատեսվող այլ դեպքերում:

3. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը կարող է տրամադրվել ապրանքների բացթողման նպատակներով մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների Դաշնային գանձապետարանի հաշվին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով որոշված հաշվին՝ մուտքի բացակայության եւ (կամ) ոչ լրիվ ծավալով մուտքի դեպքում:

4. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը չի տրամադրվում միջազգային պայմանագրերով, Մաքսային միության Մաքսային օրենսգրքով, Ռուսաստանի Դաշնության Նախագահի կամ Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով սահմանված դեպքերում, ինչպես նաեւ այն դեպքում, եթե մաքսային մարմինն հիմքեր ունի ենթադրելու, որ իր առջեւ ստանձնած պարտավորությունները կատարվելու են:

5. Անկախ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով նախատեսվող դրույթներից՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը չի տրամադրվում՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, ստորեւ բերված կետերի նկատմամբ՝

1) տեխնոլոգիական սարքավորումների (այդ թվում նաեւ դրանց համալրող արտադրատեսակների եւ պահեստամասերի), որոնց ներմուծումը ենթակա չէ ավելացված արժեքի հարկով հարկման հարկերի եւ գանձումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան,

2) օդանավերի եւ նավերի, որոնք ներմուծվում են կազմակերպությունների կողմից «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգին համապատասխան տնտեսական գործունեության իրականացման, տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակներով կամ էլ որոնք ներմուծվում են օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների կանոնադրական (պահեստային) կապիտալում, ինչպես նաեւ վերանորոգման իրականացման նպատակներով ձեւակերպվում են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով,

3) որպես Ռուսաստանի Դաշնությանն անհատույց օգնություն (օժանդակություն) ներմուծվող ապրանքների (բացառությամբ ակցիզային հարկով հարկվող ապրանքների),

4) առետրային եւ գիտական նմուշների՝ գիտական կազմակերպությունների կողմից դրանց ժամանակավոր ներմուծման (ընդունման) եւ ժամանակավոր արտահանման ժամանակ,

5) ժամանակավոր արտահանման մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից դուրս տեղակայված՝ ստորգետնյա պահեստներում ժամանակավոր պահպանման համար խողովակաշարային տրանսպորտով արտահանվող բնական գազի:

6. Մաքսային մարմինները սույն հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերում թվարկված ապրանքների նկատմամբ իրավասու են մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրման անհրաժեշտության մասին որոշում ընդունելու հետեւյալ դեպքերում՝

1) եթե հայտարարատուն իրականացնում է արտաքին առետրային գործունեություն մեկ տարուց պակաս ժամանակահատվածում,

2) եթե հայտարարատուն ունի չկատարված պահանջներ մաքսավճարների վճարման պարտավորությունների առումով՝ տվյալ պահանջներով սահմանված ժամկետներում:

3) եթե հայտարարատուն մինչ մաքսային մարմին դիմելը մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.20 հոդվածի համաձայն,

4) եթե հայտարարատուն ունի մաքսային գործի ոլորտում վարչական իրավախախտումների մասին գործերով չկատարված որոշումներ,

5) այլ դեպքերում, երբ մաքսային մարմինը հիմքեր ունի ենթադրելու, որ իր առջեւ ստանձնած պարտավորությունները չեն կատարվելու:

7. Ժամանակավոր արտահանման մաքսային ընթացակարգի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից դուրս տեղակայված ստորգետնյա պահեստում ժամանակավոր պահպանման համար խողովակաշարային տրանսպորտով արտահանվող բնական գազի նկատմամբ ապահովումը տրամադրելու անհրաժեշտության մասին որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից՝ սույն Դաշնային օրենքի 314-րդ հոդվածի համաձայն:

8. Ապրանքների բացթողման համար մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրման անհրաժեշտության մասին որոշումն ընդունվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով նախատեսվող՝ ապրանքների բացթողման ժամկետներում:

9. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրվում է Ռուսաստանի Դաշնության արժույթով: Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման գումարի մեջ ներառման ենթակա են մաքսային ընթացակարգերի համար մաքսավճարների եւ տոկոսների գումարները:

10. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինն իրավունք ունի սահմանելու առանձին տեսակի ապրանքների նկատմամբ մաքսատուրքի, հարկերի վճարման ապահովման հաստատագրված չափ:

Հոդված 138. Մաքսատուրքերի, հարկերի վճարման համալիր ապահովումը

1. Մաքսատուրքերի, հարկերի վճարման համալիր ապահովումը (հետայսու՝ համալիր ապահովումը) կիրառվում է, եթե միեւնոյն անձի կողմից Ռուսաստանի Դաշնության տարածքում սահմանված ժամկետում կատարվում են մի քանի մաքսային ընթացակարգեր:

2. Համալիր ապահովումը կարող է կիրառվել նման ապահովում տրամադրած անձանց կողմից եւ ներկայացվել մեկ կամ մի քանի մաքսային մարմին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձի ընտրությամբ համալիր ապահովումը կարող է տրամադրվել դրամական միջոցների գրավի, երաշխավորության կամ բանկային երաշխիքի միջոցով:

4. Համալիր ապահովումը տրամադրվում է մեկ տարուց ոչ պակաս ժամկետով: Սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձի ցանկությամբ համալիր ապահովման գումարը կարող է ավելացվել հետեւյալ եղանակներով՝

1) դրամական միջոցների լրացուցիչ գրավի մուտքագրում,

2) բանկային երաշխիքի վերաձեւակերպում (փոխարինում), որի գործողության ժամկետը

չպետք է լինի որպես համալիր ապահովում մաքսային մարմնի կողմից նախկինում ընդունված բանկային երաշխիքի գործողության ժամկետից պակաս,

3) երաշխավորության պայմանագրում համապատասխան փոփոխություններ մտցնելը:

5. Համալիր ապահովման օգտագործման հսկողությունն իրականացվում է այդ ապահովումն ընդունած մաքսային մարմնի կողմից:

6. Բռնագանձումն իրականացնող մաքսային մարմինը համալիր ապահովման վրա բռնագանձումը տարածելու դեպքում տեղեկացնում է դրա մասին համալիր ապահովում տրամադրած անձին՝ բռնագանձումը տարածելու օրվանից երեք աշխատանքային օրերի ընթացքում:

7. Մաքսային մարմինը, որը հայտնաբերել է անձի պարտավորության կատարման խախտում, ինչը հանգեցնում է մաքսատուրքերի, հարկերի վճարման առումով պարտավորության, որի կատարումն ապահովվում է երաշխավորությամբ կամ բանկային երաշխիքով, իրավասու է հանդես գալու որպես պարտատեր (բենեֆիցիար) պարտատերի (բենեֆիցիարի) իրավունքների ամբողջ ծավալով, նույնիսկ եթե երաշխավորության կամ բանկային երաշխիքի պայմանագրում որպես պարտատեր (բենեֆիցիար) նշված է այլ մաքսային մարմին:

8. Մաքսատուրքերի, հարկերի վճարման համալիր ապահովման չափը որոշվում է՝ ելնելով մաքսատուրքերի, հարկերի՝ վճարման ենթակա գումարից՝ հաշվի առնելով Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված պահանջները: Առանձին տեսակի ապրանքների նկատմամբ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է որոշելու այն դեպքերը եւ պայմանները, որոնց ժամանակ տրամադրվող համալիր ապահովման չափը կարող է լինել այդպիսի համալիր ապահովման միջոցով ապահովվող մաքսատուրքերի, հարկերի գումարի չափից ցածր, ինչպես նաեւ տրամադրվող համալիր ապահովման չափի եւ այնպիսի մաքսատուրքերի, հարկերի գումարի չափի հետ հարաբերակցության որոշման կարգը, որոնց վճարումն ապահովվում է այդպիսի համալիր ապահովմամբ:

Հոդված 139. Համալիր ապահովման կիրառումը մաքսային ընթացակարգեր իրականացնելու ժամանակ

1. Համալիր ապահովում տրամադրած անձի դիմումի հիման վրա համալիր ապահովում ընդունած մաքսային մարմինը համալիր ապահովման տրամադրման մասին հաստատում է տալիս (հետայսու սույն հոդվածում՝ հաստատում) գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված՝ դաշնային մարմնի կողմից հաստատվող ձեռով:

2. Հաստատումը փաստաթուղթ է, որը վկայում է մաքսային մարմնի կողմից համալիր ապահովման ընդունման եւ այնպիսի մաքսային մարմնում այն օգտագործելու հնարավորության մասին, որը նշված է հաստատման մեջ որպես մաքսային մարմին, որտեղ սահմանված ժամկետում կատարվում է մի քանի մաքսային ընթացակարգ:

3. Հաստատումը տրվում է յուրաքանչյուր մաքսային մարմնի համար, որտեղ սահմանված ժամկետում կատարվում է մի քանի մաքսային ընթացակարգ՝ ընդունված համալիր ապահովման գումարի սահմաններում:

4. Հաստատման մեջ նշվում են՝

1) համալիր ապահովումն ընդունած մաքսային մարմինը,

2) համալիր ապահովում տրամադրած անձը,

3) ընդունված համալիր ապահովման գումարը,

4) ընդունված համալիր ապահովման գործողության ժամկետը, որի ընթացքում հնարավոր է համալիր ապահովման նկատմամբ բռնագանձման շրջանառության եղանակով մաքսավճարների վճարման մասով պարտքի գանձման առումով միջոցների ժամանակին ընդունումը,

5) մաքսային ընթացակարգեր, որոնց կատարման համար ընդունված է համալիր ապահովում,

6) մաքսային մարմին, որտեղ կատարվում է սահմանված ժամկետում մի քանի մաքսային ընթացակարգ,

7) համալիր ապահովման գումարը, որը կարող է օգտագործվել մաքսային մարմնում, որտեղ սահմանված ժամկետում կատարվում է մի քանի մաքսային ընթացակարգ:

5. Բոլոր միաժամանակ տրված եւ գործող հաստատումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ընդունված համալիր ապահովման գումարը՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքի 138-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն սահմանված դեպքերի:

6. Համալիր ապահովումն ընդունելու եւ հաստատումը տրամադրելու մասին համալիր ապահովում ընդունած մաքսային մարմինը տեղեկացնում է այն մաքսային մարմնին, որտեղ կատարվելու են մաքսային ընթացակարգերը:

7. Մաքսային մարմինը, որտեղ սահմանված ժամկետում կատարվում է մի քանի մաքսային ընթացակարգ, պահեստավորում է մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման մաքսային ընթացակարգերի իրականացման ժամանակ անհրաժեշտ գումարը չպահեստավորված համալիր ապահովման գումարից կամ գումարի մի մասից՝ պայմանով, որ համալիր ապահովման գործողության ժամկետը բավարար կլինի՝ մաքսային մարմին պարտավորությունների կատարման այնպիսի պահանջներ ժամանակին ներկայացնելու համար, որոնք ստանձնվել են այդ մաքսային մարմնի առջեւ՝ նման պարտավորությունը չկատարելու դեպքում:

8. Համալիր ապահովման միջոցով ապահովված պարտավորության կատարման դեպքում համալիր ապահովման պահեստավորված գումարն ազատվում է (ապապահեստավորվում է)՝ պայմանով, որ մաքսային մարմինը կհամոզվի ապահովված պարտավորության կատարման մեջ:

9. Համալիր ապահովման միջոցով ապահովված պարտավորությունը չկատարելու դեպքում մաքսային մարմինը, որի առջեւ կա չկատարված պարտավորություն, բռնագանձումը տարածում է տրամադրված համալիր ապահովման վրա՝ սույն Դաշնային օրենքի 18-րդ հոդվածի համաձայն:

10. Մաքսային մարմինների մոտ տեխնիկական հնարավորության դեպքում եւ համալիր ապահովում տրամադրած անձի ցանկությամբ համալիր ապահովման հաշվառումը եւ հսկողությունը կարող են իրականացվել տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ առանց հաստատման: Այդ դեպքում մաքսային մարմինը, որտեղ սահմանված ժամկետում

կատարվում է մի քանի մաքսային ընթացակարգ, մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի միջոցով մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման մաքսային ընթացակարգերի կատարման համար անհրաժեշտ գումարը պահեստավորում է չպահեստավորված համալիր ապահովման գումարից կամ դրա մի մասից՝ պայմանով, որ համալիր ապահովման գործողության ժամկետը կբավարարի մաքսային մարմնի կողմից պարտավորության կատարման մասին պահանջը՝ ժամանակին ներկայացնելու համար, որն ստանձնած է այդ մաքսային մարմնի առջեւ, այդ պարտավորությունը չկատարելու դեպքում:

Համալիր ապահովում տրամադրած անձի գրավոր դիմումի համաձայն՝ ամիսն առնվազն մեկ անգամ համալիր ապահովում ընդունած մաքսային մարմինը նշված անձին ներկայացնում է համալիր ապահովման մասին հաշվետվություն, սակայն դիմումին նախորդող երեք տարուց ավելի վաղ ժամանակահատվածի համար: Համալիր ապահովման օգտագործման մասին զեկույցի ձեւը հաստատվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

Հոդված 140. Գույքի գրավ

1. Գույքի գրավը ձեւակերպվում է գույքի գրավի մասի պայմանագրով մաքսային մարմնի եւ մաքսատուրքեր, հարկեր վճարողի միջեւ: Մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի համաձայն ապրանքներ փոխադրելիս գույքի գրավը կարող է ներկայացվել նաեւ այլ անձի կողմից, եթե տվյալ անձը իրավունք ունի տիրապետել, օգտագործել եւ (կամ) տնօրինել ապրանքները, որոնց նկատմամբ կատարվում է մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում:

2. Գույքի գրավի մասին պայմանագիր կնքելու, գրավով ապահովված պարտավորությունների կատարման, գրավադրված գույքի վրա բռնագանձման տարածման, գրավի դադարեցման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության եւ սույն Դաշնային օրենքի դրույթները:

3. Գրավի առարկա կարող է լինել այն գույքը, որը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության համաձայն, կարող է համարվել գրավի առարկա՝

բացառությամբ

- 1) Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս գտնվող գույքի,
- 2) այլ պարտավորության ապահովման համար արդեն գրավադրված գույքի, կամ երրորդ անձանց օգտին այլ նախորդ պարտավորություններով ծանրաբեռնված գույքի,
- 3) արագ փչացող ապրանքների, կենդանիների,
- 4) էլեկտրական, ջերմային եւ այլ տեսակի էներգիայի,
- 5) ձեռնարկությունների,
- 6) գույքային իրավունքների,
- 7) արժեթղթերի,
- 8) տիեզերական օբյեկտների,
- 9) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի,
- 10) արտադրանքի եւ արտադրական թափոնների, որոնց ազատ իրացումը, Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, արգելվում է,
- 11) գույքի, որի վրա բռնագանձումը, Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, տարածվում է բացառապես դատարանի որոշմամբ:

4. Գրավի առարկան գույքի գրավի մասին պայմանագրի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում պետք է գտնվի Ռուսաստանի Դաշնության տարածքում:

5. Գրավի առարկայի շուկայական արժեքը որոշելու համար իրականացվում է գրավի առարկայի գնահատում՝ Ռուսաստանի Դաշնությունում գնահատման գործունեությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

6. Այն անձը, որին պատկանում է գրավադրված գույքը, որպես մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում՝ գույքի գրավ ընտրելիս, մաքսային մարմին առաջարկ է ներկայացնում գույքի գրավի մասին պայմանագիր կնքելու մասին: Նշված առաջարկի հետ մեկտեղ ներկայացվում են երկու նույնական օրինակով Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ անձի կողմից ստորագրված եւ

հաստատված գույքի գրավի մասին պայմանագրի նախագիծը, ինչպես նաև գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը եւ դրա շուկայական արժեքը հաստատող փաստաթղթեր, որոնք կարող են ներկայացվել բնօրինակով կամ նոտարի կողմից վավերացված պատճեններով:

7. Գույքի գրավի մասին պայմանագրի նախագծում պետք է ներառվեն դրույթներ այն մասին, որ՝

1) մաքսային մարմնի առջեւ պարտավորությունների ապահովման համար գրավադրված՝ գույքի հետագա գրավը գույքի գրավի մասին պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում չի թույլատրվում.

2) այն անձը, որին պատկանում է գրավադրված գույքը (գրավատու), առանց մաքսային մարմնի համաձայնության իրավունք չունի տնօրինելու գրավի առարկան,

3) գրավատուն պարտավոր է ապահովագրել իր միջոցներով գրավ փոխանցած գրավի առարկան՝ անկախ այն բանից, թե գրավի առարկան մնում է գրավատուի մոտ, թե փոխանցվում է մաքսային մարմին,

4) գրավատուն իր հաշվին գրավի առարկայի գնահատում է կատարում,

5) գրավատուն եւ մաքսային մարմինը արտադատարանային կարգով գրավադրված գույքի վրա բռնագանձման տարածման մասին համաձայնության են եկել՝ գույքի գրավով ապահովված պարտավորությունները չկատարելու դեպքում,

6) գրավի առարկան փոխարինելը թույլատրվում է մաքսային մարմնի գրավոր համաձայնությամբ արժեքով հավասար այլ գույքով, ինչը ձեւակերպվում է գույքի գրավի պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագրով,

7) գրավի առարկայի վրա բռնագանձման տարածման դեպքում դրա իրացման մասով ծախսերը ծածկվում են գրավի առարկայի իրացումից ստացված դրամական միջոցների հաշվին, իսկ դրանց ոչ բավարար լինելու դեպքում՝ գրավատուի հաշվին:

8. Գույքի գրավի մասին պայմանագիրը կարող է կնքվել, եթե գրավի առարկայի շուկայական արժեքը գերազանցում է մաքսատուրքերի, հարկերի վճարման անհրաժեշտ ապահովման չափն ավելի քան 20 տոկոսով:

9. Գույքի գրավի մասին պայմանագիրը կարող է կնքվել՝ գրավատուի մոտ գրավի առարկան թողնելով կամ գրավադրված գույքը մաքսային մարմնին փոխանցելով: Գույքի գրավի մասին պայմանագիրը կնքվում է, գրավատուի մոտ գրավի առարկան թողնելով, եթե մաքսային մարմինը հիմքեր չունի ենթադրելու, որ գրավի առարկայի օգտագործման, տնօրինման եւ պահման պայմանները չեն պահպանվելու:

10. Գույքի գրավի մասին պայմանագիր կնքելու մասին առաջարկն ուսումնասիրվում է մաքսային մարմնի կողմից մաքսային մարմին տվյալ առաջարկի եւ կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

11. Գույքի գրավի մասին պայմանագիր կնքելու դեպքում մաքսային մարմինը գրավատուին մաքսային մուտքի օրդեր է ներկայացնում:

12. Գույքի գրավի մասին պայմանագիր կնքելը մերժելու դեպքում մաքսային մարմինը սույն հոդվածի 10-րդ մասում սահմանված ժամկետում տեղեկացնում է դրա մասին գույքի գրավի մասին պայմանագիր կնքելն առաջարկած անձին՝ նշելով մերժման համար հիմք հանդիսացած պատճառները:

13. Գույքի գրավով ապահովված պարտավորությունները չկատարելու դեպքում մաքսատուրքերի, հարկերի՝ վճարման ենթակա գումարները, փոխանցվում են Դաշնային գանձապետարանի հաշվին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով որոշված հաշվին՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների հաշվին:

14. Գույքի գրավի մասին պայմանագրի կնքման եւ գրավադրված գույքի վրա բռնագանձումը տարածելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է գրավատուն:

Հոդված 141. Բանկային երաշխիք

1. Մաքսային մարմինները՝ որպես մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում, ընդունում են բանկային երաշխիքներ, որոնք տրվում են բանկերի կողմից, բանկերի ռեեստրում ընդգրկված այլ վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից, որոնք իրավասու են տրամադրելու մաքսատուրքերի,

հարկերի վճարման բանկային երաշխիքներ. այդ ռեեստրը վարում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը (այսուհետ սույն գլխում՝ ռեեստր):

2. Բանկային երաշխիքների տրամադրման բանկային երաշխիքների մասով պահանջները ներկայացնելու, երաշխավորողի կողմից պարտավորություններ կատարելու եւ բանկային երաշխիքը դադարեցնելու հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են Բանկերի եւ բանկային գործունեության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության ու սույն Դաշնային օրենքի դրույթները:

3. Բանկային երաշխիքն ընդունվում է մաքսային մարմնի կողմից, եթե այն մաքսային մարմին ներկայացնելու պահին երաշխավորողն ընդգրկված է ռեեստրում տվյալ երաշխավորողի համար ռեեստրում՝ նշված մեկ բանկային երաշխիքի առավելագույն գումարը եւ բոլոր միաժամանակ գործող բանկային երաշխիքների առավելագույն գումարը չգերազանցելու պայմանով:

4. Բանկային երաշխիքը պետք է լինի անհետկանչելի: Դրանում պետք է նշվեն՝

1) մաքսատուրքեր, հարկեր վճարողի պարտականությունները, որոնց պատշաճ կատարումն ապահովվում է բանկային երաշխիքով,

2) երաշխավորողից մաքսային մարմնի կողմից՝ սահմանված գումարի անվիճելի դուրսգրման իրավունքը՝ երաշխավորողի կողմից բանկային երաշխիքի մասով պարտավորությունները չկատարելու դեպքում,

3) ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար գումարի 0.1 տոկոսի չափով մաքսային մարմնին տուժավճար վճարելու երաշխավորողի պարտավորությունը,

4) պայման, որի համաձայն, բանկային երաշխիքի մասով երաշխավորողի պարտավորությունների կատարում է համարվում դրամական միջոցների փաստացի մուտքը՝ Դաշնային գանձապետարանի հաշվին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով որոշված հաշվին,

5) բանկային երաշխիքի գործողության ժամկետը:

5. Տրամադրված բանկային երաշխիքի գործողության ժամկետը չի կարող գերազանցել 36

ամիսը եւ պետք է բավարար լինի՝ բանկային երաշխիքով ապահովված պարտավորությունները չկատարելու դեպքում, մաքսային մարմնի կողմից երաշխավորողին բանկային երաշխիքի մասով պահանջ ժամանակին ներկայացնելու համար:

6. Բանկային երաշխիքը մաքսային մարմին ներկայացնելու պահին պետք է ուժի մեջ մտնի: Թույլատրվում է բանկային երաշխիքի ընդունումը մինչ վերջինիս ուժի մեջ մտնելը՝ պայմանով, որ բանկային երաշխիքը տրամադրվում է ըստ գործող պարտավորության՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման անընդհատության նպատակներով եւ այն մաքսային մարմին ներկայացնելու օրվա եւ բանկային երաշխիքն ուժի մեջ մտնելու օրվա միջեւ տարբերությունը չի գերազանցում 15 օրը: Նման բանկային երաշխիքն օգտագործվում է որպես մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո:

7. Մաքսատուրքեր, հարկեր վճարողը, որպես մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում բանկային երաշխիք ընտրելիս, մաքսային մարմին նամակով բանկային երաշխիք է ներկայացնում: Բանկային երաշխիքը նաեւ կարող է մաքսային մարմին ներկայացվել այդ երաշխիքը տրամադրած այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության (երաշխավորողի) կողմից: Բանկային երաշխիքի հետ մեկտեղ բնօրինակով կամ նոտարի կողմից վավերացված պատճեններով ներկայացվում են բանկային երաշխիքը ստորագրած անձի համապատասխան իրավասությունները հաստատող փաստաթղթեր: Այդ դեպքում, եթե նշված փաստաթղթերը նախկինում ներկայացվել են մաքսային մարմին՝ դրանց լրացուցիչ ներկայացնելը չի պահանջվում:

8. Մաքսային մարմինն ուսումնասիրում է մուտք արված բանկային երաշխիքն այն մուտք անելու օրվանից հետո երեք աշխատանքային օրերը չգերազանցող ժամկետում:

9. Բանկային երաշխիքն ընդունելու դեպքում մաքսային մարմինը մաքսատուրքեր, հարկեր վճարողին մուտքի օրդեր է տալիս:

10. Բանկային երաշխիքի ընդունումը մերժելու դեպքում մաքսային մարմինը սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում տեղեկացնում է դրա մասին բանկային երաշխիք տրամադրած անձին՝ նշելով մերժման համար հիմք հանդիսացած պատճառները:

11. Բանկային երաշխիքի վերադարձն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի գրավոր հայտարարության հիման վրա՝ պայմանով, որ

մաքսային մարմինը հավաստիացրել է ապահովված պարտավորությունների կատարման, դադարեցման մեջ կամ այն պայմանով, որ նման պարտավորություն չի առաջացել: Բանկային երաշխիքի վերադարձի փոխարեն թույլատրվում է, որ մաքսային մարմինը երաշխավորողին իր պարտավորություններից ազատման մասին նամակ ուղարկի՝ մաքսային մարմնի կողմից բանկային երաշխիքով վերջինիս իրավունքներից հրաժարվելու հետ կապված:

12. Մաքսատուրքեր, հարկեր վճարողի գրավոր հայտարարության ուսումնասիրության ժամկետը չպետք է գերազանցի մաքսային մարմին այն ներկայացնելու օրվանից հետո հինգ աշխատանքային օրը: Բանկային երաշխիքի վերադարձը մերժելու դեպքում մաքսային մարմինը սահմանված ժամկետում գրավոր տեղեկացնում է դրա մասին մաքսատուրքեր, հարկեր վճարողին՝ նշելով մերժման համար հիմք հանդիսացած պատճառները:

13. Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից բանկային երաշխիքներ տրամադրած բանկից, այլ վարկային կազմակերպությունից բանկային գործառնություններ իրականացնելու կամ ապահովագրական կազմակերպությունից ապահովագրական գործունեության անցկացման իրավունքի լիցենզիայի հետկանչի դեպքում մաքսատուրքեր, հարկեր վճարողը, որի պարտավորություններն ապահովվել են նշված բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության բանկային երաշխիքով, պարտավոր է համապատասխան լիցենզիայի հետկանչի ամսաթվից հետո մեկ ամսից ոչ ուշ մաքսային մարմին ներկայացնել մաքսատուրքերի, հարկերի վճարման այլ ապահովում: Սույն մասում նշված ժամկետը լրանալուն պես բանկային երաշխիքը համարվում է ուժը կորցրած եւ ենթակա է մաքսատուրքեր, հարկեր վճարողին վերադարձման՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

(թիվ 251-ԴՕ դաշնային օրենքի 2013 թվականի հուլիսի 23-ի խմբագրությամբ)

14. Գործադիր իշխանության՝ ֆինանսների ոլորտում լիազորված դաշնային մարմինը գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի հետ համաձայնությամբ, սահմանում է բանկերի, այլ վարկային կազմակերպությունների եւ ապահովագրական կազմակերպությունների համար մեկ բանկային երաշխիքի առավելագույն գումարը եւ մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու նպատակով մաքսային մարմինների կողմից բանկային երաշխիքների ընդունման համար մեկ բանկի կամ մեկ այլ վարկային կազմակերպության, մեկ ապահովագրական կազմակերպության կողմից

տրամադրված բոլոր միաժամանակ գործող բանկային երաշխիքների առավելագույն գումարը:

15. Բանկի, այլ վարկային կազմակերպության եւ դրանց մասնաճյուղերի համար որոշվում է մեկ բանկային երաշխիքի միեւնույն առավելագույն գումարը եւ բոլոր միաժամանակ գործող բանկային երաշխիքների միասնական առավելագույն գումարը:

Հոդված 142. Մաքսատուրքերի, հարկերի վճարման բանկային երաշխիքներ տալու իրավունք ունեցող բանկերի, այլ վարկային կազմակերպությունների եւ ապահովագրական ընկերությունների ռեեստրի վարումը

1. Բանկերի, այլ վարկային կազմակերպությունների եւ ապահովագրական ընկերությունների ընդգրկումը ռեեստր իրականացվում է սույն հոդվածով նախատեսվող պայմանների պահպանմամբ: Ռեեստրում լրացուցիչ կարող են ընդգրկվել բանկերի, այլ վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը, որոնք բանկի անունից իրականացնում են բանկային երաշխիքների տրամադրում: Ռեեստրում ընդգրկվելու համար վճար չի գանձվում:

2. Բանկի, այլ վարկային կազմակերպության ռեեստրում ընդգրկվելու պայմաններն են՝

1) Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից բանկային գործառնություններ իրականացնելու համար լիցենզիայի առկայություն, որտեղ նշված է բանկային երաշխիքներ տրամադրելու իրավունքը,

2) հինգ տարուց ոչ պակաս բանկային գործունեության իրականացում,

3) 200 մլն ռուբլուց ոչ պակաս չափով գրանցված կանոնադրական կապիտալի առկայություն,

4) մեկ միլիարդ ռուբլուց ոչ պակաս ռուբլու չափով սեփական միջոցների (կապիտալի) առկայություն,

5) բանկերի եւ բանկային գործունեության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսվող պարտադիր նորմատիվների պահպանում՝ վերջին վեց ամսվա ընթացքում բոլոր հաշվետու ամսաթվերի դրությամբ,

6) Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի՝ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման մասով միջոցառումների իրականացման մասով պահանջների

բացակայություն,

7) մաքսավճարների վճարման մասով պարտքի բացակայություն:

3. Բանկի մասնաճյուղը, այլ վարկային կազմակերպության մասնաճյուղը ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

1) բանկի, այլ վարկային կազմակերպության ընդգրկումը ռեեստրում,

2) մասնաճյուղի ընդգրկումը վարկային կազմակերպությունների Պետական գրանցման գրքում,

3) մասնաճյուղի մասին դրույթով նախատեսված՝ մասնաճյուղի կողմից երաշխիքներ տրամադրելու իրավունքի գոյությունը:

4. Ապահովագրական կազմակերպության ռեեստրում ընդգրկվելու պայմաններն են՝

1) Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի՝ ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունքի մասին գործող մշտական լիցենզիայի առկայություն,

(թիվ 251-ԴՕ դաշնային օրենք՝ 2013 թվականի հուլիսի 23-ի խմբագրությամբ)

2) 500 միլիոն ռուբլուց ոչ պակաս չափով գրանցած կանոնադրական կապիտալի առկայություն,

3) հինգ տարուց ոչ պակաս որպես ապահովագրական ընկերություն գործունեության իրականացում,

4) վերջին օրացուցային տարվա ընթացքում կորուստների բացակայություն,

5) նորմատիվ չափից ոչ պակաս չափով ազատ ակտիվների առկայություն՝ վերջին հաշվետու ամսաթվի դրությամբ,

6) վերջին հաշվետու ժամանակահատվածի ավարտին զուտ ակտիվների առկայություն, որոնց արժեքը պետք է կազմի վճարված կանոնադրական կապիտալի չափից ոչ պակաս,

7) մաքսավճարների վճարման գծով պարտքի բացակայություն:

5. Ռեեստրում ընդգրկվելու համար բանկը, այլ վարկային կազմակերպություն կամ ապահովագրական ընկերություն գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում

լիազորված դաշնային մարմին են ներկայացնում գրավոր դիմում եւ հետեւյալ փաստաթղթերը՝

1) բանկը, այլ վարկային կազմակերպություն՝

ա) հիմնադիր փաստաթղթերը,

բ) իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստր՝ իրավաբանական անձի մասին գրառումը կատարելու փաստը հաստատող փաստաթուղթ,

գ) Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի վարկային կազմակերպության գրանցման մասին վկայական (եթե այն տրվել է),

դ) բանկային գործառնություններ իրականացնելու՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի լիցենզիա, որտեղ նշված է բանկային երաշխիքներ տալու իրավունքը,

ե) սահմանված կարգով հաստատված քարտ՝ բանկերի, այլ վարկային կազմակերպությունների այն պաշտոնատար անձանց ստորագրությունների նմուշներով, որոնց բանկային երաշխիքները ստորագրելու իրավունք է տրված, եւ բանկի, այլ վարկային կազմակերպության դրոշմակնիքով,

զ) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված ու կնիքով վավերացված՝ վերջին վեց ամսվա ընթացքում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ սեփական միջոցների (կապիտալի) հաշվարկներ պարունակող փաստաթուղթ,

է) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված ու կնիքով վավերացված՝ վերջին հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշիվների մասով շրջանառության մասին ամփոփագիր,

ը) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված եւ կնիքով վավերացված՝ վերջին հաշվետու ամսաթվի դրությամբ եկամուտների ու կորուստների մասին հաշվետվություն,

թ) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված ու կնիքով վավերացված՝ վերջին վեց ամսվա ընթացքում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պարտադիր նորմատիվների կատարման մասին տեղեկանք,

ժ) անցած տարվա համար հաշվապահական հաշվետվության հավաստիության մասին աուդիտորական եզրակացություն,

2) ապահովագրական կազմակերպություն՝

ա) հիմնադիր փաստաթղթերը,

բ) իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրում իրավաբանական անձի մասին գրառումը կատարելու փաստը հաստատող փաստաթուղթ,

գ) ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունքի՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի մշտական լիցենզիա (կից հավելվածներով),

(թիվ 251-ԴՕ դաշնային օրենք՝ 2013 թվականի հուլիսի 23-ի խմբագրությամբ)

դ) սահմանված կարգով վավերացված քարտ՝ ապահովագրական ընկերությունների այն պաշտոնատար անձանց ստորագրությունների նմուշներով, որոնց բանկային երաշխիքները ստորագրելու իրավունք է տրված, եւ ապահովագրական կազմակերպության կնիքի դրոշմվածքով,

ե) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված եւ կնիքով վավերացված՝ վերջին երկու եռամսյակի համար հաշվեկշիռներ,

զ) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված եւ կնիքով վավերացված՝ վերջին օրացուցային տարվա ընթացքում յուրաքանչյուր եռամսյակի համար եկամուտների ու կորուստների մասին հաշվետվություններ,

է) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված եւ կնիքով վավերացված՝ վերջին օրացուցային տարվա ընթացքում յուրաքանչյուր եռամսյակի համար ակտիվների ու պարտավորությունների հարաբերակցության հաշվարկներ,

ը) ղեկավարի եւ գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված ու կնիքով վավերացված՝ վերջին երկու եռամսյակի համար գործունեության հիմնական ցուցանիշների մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթեր,

թ) անցած տարվա համար հաշվապահական հաշվետվության ճշգրտության մասին աուդիտորական եզրակացություն:

6. Բանկի մասնաճյուղը, այլ վարկային կազմակերպության մասնաճյուղը ռեեստրում ընդգրկելու համար սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված փաստաթղթերի հետ ներկայացվում են՝

1) մասնաճյուղի մասին դրույթ,

2) Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի՝ մասնաճյուղը Վարկային կազմակերպությունների պետական գրանցամատյան մտցնելու մասին տեղեկատվական նամակ,

3) սահմանված կարգով վավերացված քարտ՝ մասնաճյուղերի այն պաշտոնատար անձանց ստորագրությունների նմուշներով, որոնց բանկային երաշխիքները ստորագրելու իրավունք է տրված եւ մասնաճյուղի կնիքի դրոշմվածքով:

7. Սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերով նախատեսվող փաստաթղթերը կարող են ներկայացվել բնօրինակով կամ նոտարի կողմից վավերացված պատճենով: Դիմումն ուսումնասիրելուց հետո գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը պարտավոր է դիմումատուին, վերջինիս պահանջով, վերադարձնել ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

8. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինն ուսումնասիրում է ռեեստրում ընդգրկելու մասին դիմումը եւ վերջինս ստանալու օրվանից 30 օրը չգերազանցող ժամկետում ընդունում է բանկը, այդ վարկային կազմակերպությունը կամ ապահովագրական ընկերությունը ռեեստրում ընդգրկելու կամ ռեեստրում ընդգրկելու մերժման մասին որոշում: Ռեեստրում ընդգրկելու մերժման մասին որոշումն ընդունվում է բացառապես սույն հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսվող՝ ռեեստրում ընդգրկվելու պայմանները չպահպանելու եւ սույն հոդվածի 5-րդ ու 6-րդ մասերով նախատեսվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում: Ընդունված որոշման մասին դիմումատուն գրավոր տեղեկացվում է նման որոշումն ընդունելուց հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում: Ռեեստրում ընդգրկելը մերժելու դեպքում լրացուցիչ նշվում են մերժման պատճառները:

9. Գործադիր իշխանությունների՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը՝ որպես հաստատում դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների, իրավունք ունի երրորդ կողմերից, ինչպես նաեւ պետական մարմիններից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունները պարունակող փաստաթղթեր: Նշված անձինք հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր են ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Փաստաթղթերի եւ տեղեկությունների հարցումը չի երկարաձգում եւ չի կասեցնում սույն հոդվածի 8-րդ մասում նշված ժամկետների ընթացքը:

10. Բանկը, այլ վարկային կազմակերպություն կամ ապահովագրական ընկերություն ռեեստրում ընդգրկվում են երեք տարի ժամկետով՝ սկսած ռեեստրում ընդգրկվելու մասին որոշմանը հաջորդող ամսվա 1-ից:

11. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված՝ դաշնային մարմինը ռեեստրում առկա տեղեկությունները փոփոխելու մասին՝ բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության դիմումի համաձայն, այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ փոփոխություններ է մուտքագրում ռեեստր:

12. Ռեեստրի վարման ձեւը եւ կարգը հաստատվում են մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանությունների դաշնային մարմնի կողմից:

13. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինն ապահովում է ռեեստրի պարբերական, սակայն առնվազն եռամսյա հրապարակում՝ իր պաշտոնական կայքում եւ իր պաշտոնական հրատարակություններում:

Հոդված 143. Ռեեստրում ընդգրկված բանկերի, այլ վարկային կազմակերպությունների եւ ապահովագրական կազմակերպությունների պարտավորությունները

Ռեեստրում ընդգրկված բանկերը, այլ վարկային կազմակերպություններ եւ ապահովագրական ընկերություններ պարտավոր են՝

1) պահպանել մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման նպատակներով մաքսային մարմինների կողմից նման բանկային երաշխիքներ ընդունելու համար մեկ բանկի, մեկ այլ վարկային կազմակերպության կողմից կամ մեկ ապահովագրական ընկերության կողմից տրված մեկ բանկային երաշխիքի առավելագույն գումարի եւ բոլոր միաժամանակ գործող բանկային երաշխիքների մասով սահմանափակումը,

2) ներկայացնել սահմանված ժամկետում պատշաճ կերպով ձեւակերպված հաշվետու փաստաթղթեր եւ այլ տեղեկություններ՝ ռեեստրի վարման կարգին համապատասխան,

3) կատարել բանկային երաշխիքի պայմանները եւ դրանց նկատմամբ

պարտավորությունները:

Հոդված 144. Բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության հեռացումը ռեեստրից

1. Բանկը, այլ վարկային կազմակերպություն կամ ապահովագրական կազմակերպություն հանվում են ռեեստրից՝ գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի որոշմամբ հետեյալ դեպքերում՝

1) բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության լուծարում,

2) Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից բանկից, այլ վարկային կազմակերպությունից բանկային գործունեության իրականացման լիցենզիայի, ապահովագրական կազմակերպությունից ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիայի հետկանչ,

(թիվ 251-ԴՕ դաշնային օրենք՝ 2013 թվականի հուլիսի 23-ի խմբագրությամբ)

3) ռեեստրում ընդգրկվելու պայմաններից առնվազն մեկը չկատարելը,

4) սույն Դաշնային օրենքի 143-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները չկատարելը,

5) ռեեստրում ընդգրկվելու ժամկետի լրանալը, եթե մինչ նշված ժամկետի լրանալը սահմանված կարգով դիմում չի ներկայացվել՝ ռեեստրում նորից ընդգրկվելու մասին,

6) բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության գրավոր դիմումի հիման վրա:

2. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմինը ռեեստրից բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության հեռացման օրվանից երեք աշխատանքային օրերի ընթացքում դրա մասին տեղեկացնում է բանկին, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերությանը՝ նշելով հեռացման պատճառները:

3. Ռեեստրից բանկը, այլ վարկային կազմակերպություն կամ ապահովագրական կազմակերպություն հանելու հետեւանքով չի դադարեցվում դրանց կողմից տրված եւ մաքսային մարմինների կողմից ընդունված բանկային երաշխիքների գործողությունը եւ նման բանկային երաշխիքների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վերջիններիս պատասխանատվությունից չի ազատում:

4. Բանկային երաշխիքի մասով պարտավորությունները չկատարելու հետ կապված բանկը, այլ վարկային կազմակերպություն կամ ապահովագրական կազմակերպություն կարող են կրկնակի ընդգրկվել ռեեստրում՝ մաքսային վճարների, տույժերի եւ տոկոսների վճարման մասով պարտավորությունների մարման պայմանով այդ պարտավորությունները մարելուց հետո մեկ տարի անց:

5. Տվյալ բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության համար ռեեստրում որոշված մեկ բանկային երաշխիքի մասով առավելագույն գումարի եւ (կամ) բոլոր միաժամանակ գործող բանկային երաշխիքների առավելագույն գումարի մասով սահմանափակումը չպահպանելու հետ կապված՝ ռեեստրից հանված բանկը, այլ վարկային կամ ապահովագրական կազմակերպություն կարող են կրկին ընդգրկվել ռեեստրում՝ ռեեստրից հեռացվելու պատճառները վերացնելու պայմանով:

Հոդված 145. Որպես մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում՝ դրամական միջոցների (դրամի) մուտքագրումը

1. Որպես մաքսատուրքերի, հարկերի (դրամական միջոցների գրավ) վճարման ապահովում՝ դրամական միջոցները (դրամը) մուտք են արվում Դաշնային գանձապետարանի հաշվին: Դրամական միջոցների գրավը կարող է մուտքագրվել անձնական օգտագործման համար մաքսային սահմանից տեղափոխվող ֆիզիկական անձանց կողմից, ինչպես նաեւ մաքսային մարմնի դրամարկղ:

2. Դրամական միջոցների գրավի գումարի վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

3. Դրամական միջոցների գրավով ապահովված պարտավորությունները չկատարելու դեպքում մաքսատուրքերի, տույժերի, տոկոսների՝ վճարման ենթակա գումարները ենթակա են բռնագանձման մաքսային մարմինների կողմից դրամական միջոցների գրավի գումարից՝ սույն

Դաշնային օրենքով սահմանված կարգով:

4. Դրամական ավանդով ապահովված պարտավորությունը կատարելիս, դադարեցնելիս, կամ եթե այդ պարտավորությունը չի առաջացել, դրամական ավանդը ենթակա է վերադարձի՝ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով մաքսատուրքերի վճարման կամ կանխավճարների հաշվին հաշվանցելու նպատակով:

5. Որպես հաստատում դրամական միջոցների գրավի՝ մաքսային մարմնի դրամարկղ մուտքի կամ Դաշնային գանձապետարանի հաշվին մուտքի դրամական միջոցների գրավ մուտք արած անձին տրվում է մաքսային անդորրագիր, որի օգտագործման ձեւը եւ կարգը որոշվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից՝ գործադիր իշխանության՝ ֆինանսների ոլորտում լիազորված դաշնային մարմնի հետ համաձայնությամբ: Մաքսային անդորրագիրն այլ անձի չի կարող փոխանցվել: Մաքսային անդորրագրի կորստի դեպքում այն տրամադրած մաքսային մարմինը դրամական միջոցների գրավ մուտք արած անձի (վերջինիս իրավահաջորդի) դիմումի հիման վրա տրամադրում է մաքսային անդորրագրի կրկնօրինակ:

6. Դրամական միջոցների գրավը կարող է օգտագործվել այն ապրանքների մասով հաշվարկված մաքսային վճարների վճարման համար, որոնց նկատմամբ պարտավորություններն ապահովվում էին այդ դրամական միջոցների գրավը՝ ներկայացնելով մաքսային անդորրագիր եւ պահպանելով հետեւյալ պայմաններից մեկը՝

1) եթե սույն մասում նշված ապրանքների մասով պարտավորությունները կատարված կամ դադարեցված են,

2) եթե մաքսային վճարների վճարային հաշվին դրամական միջոցների գրավի օգտագործումը հանգեցնում է սույն մասում նշված ապրանքների մասով իր կողմից ապահովված պարտավորությունների դադարեցմանը,

7. Դրամական միջոցների գրավի մաքսային վճարների վճարման համար չօգտագործած մնացորդը ենթակա է վերադարձի կամ կանխավճարների հաշվին հաշվանցման՝ սույն Դաշնային օրենքի 149-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 146. Երաշխավորություն

1. Երաշխավորությունը ձեւակերպվում է երաշխավորության պայմանագրով մաքսային մարմնի եւ երաշխավորողի միջեւ: Երաշխավորության պայմանագիրը կնքելու, երաշխավորությամբ ապահովված պարտավորությունները կատարելու երաշխավորին պահանջները ներկայացնելու, երաշխավորության դադարեցման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության եւ սույն Դաշնային օրենքի դրույթները:

2. Որպես մաքսատուրքեր, հարկեր վճարելու ապահովում մաքսատուրքեր՝ հարկեր վճարողի կողմից երաշխավորություն ընտրելիս երաշխավոր դառնալու մտադրություն ունեցող անձը մաքսային մարմին է ուղարկում երաշխավորության պայմանագիր կնքելու մասին առաջարկ: Նշված առաջարկի հետ ներկայացվում են երկու նման օրինակներով՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ անձի կողմից ստորագրված եւ հաստատված պայմանագրի նախագիծը, ինչպես նաեւ մաքսատուրքեր, հարկեր վճարողի համաձայնությունն այն մասին, որ երաշխավոր դառնալու մտադրություն ունեցող անձը կարող է որպես նրա համար երաշխավոր հանդես գալ:

3. Երաշխավորության պայմանագրի նախագիծը պետք է պարունակի դրույթներ այն մասին, որ՝

1) մաքսատուրքեր, հարկեր վճարողը եւ երաշխավորը միասնական պատասխանատվություն են կրում ապահովվող պարտավորության կատարման համար,

2) երաշխավորության պայմանագրի գործողության ժամկետը չի գերազանցում երկու տարին:

4. Երաշխավորությունն ընդունվում է մաքսային մարմինների կողմից հետեւյալ ցանկացած պայման պահպանելու դեպքում՝

1) եթե երաշխավոր դառնալու մտադրություն ունեցող անձը համապատասխանում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից որոշվող չափորոշիչներին,

2) եթե երաշխավոր դառնալու մտադրություն ունեցող անձը երաշխավորության

պայմանագրում իր վրա է ստանձնում պարտավորություն՝ որպես փաստաթուղթ, որն ապահովում է մաքսային մարմնի առջև երաշխավորողի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարումը, ներկայացնելու բանկային երաշխիք, որով բենեֆիցիար է հանդես գալիս մաքսային մարմինը, երաշխավորության պայմանագրով երաշխավորողի կողմից իր վրա ստանձնած պարտավորություններից ոչ պակաս չափով: Ընդ որում, երաշխավորության պայմանագիրն ուժի մեջ է մտնում նշված բանկային երաշխիքի տրամադրման ամսաթվից:

5. Երաշխավորության պայմանագիր կնքելու առաջարկն ուսումնասիրվում է մաքսային մարմնի կողմից՝ մաքսային մարմին տվյալ առաջարկի եւ կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից՝ 15 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

6. Երաշխավորության պայմանագիր կնքելու դեպքում մաքսային մարմինը մաքսատուրքեր, հարկեր վճարողին է տրամադրում է մաքսային մուտքի օրդեր:

7. Երաշխավորության պայմանագրի կնքումը մերժելու դեպքում մաքսային մարմինը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում տեղեկացնում է դրա մասին երաշխավորության պայմանագիրն առաջարկած անձին՝ նշելով մերժման համար հիմք հանդիսացած պատճառները:

8. Մի քանի անձանց՝ մաքսատուրքեր. հարկեր վճարելու պարտավորությունների կատարումն ապահովելու համար նման անձանց պարտավորությունների առումով՝ երաշխավորի հետ երաշխավորության պայմանագիր կնքելը կարող է իրականացվել գործադիր իշխանության՝ մաքսային գործի ոլորտում լիազորված դաշնային մարմնի կողմից:

9. Մաքսային մարմինը երաշխավորության պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը չի հոգում:

**Գլուխ 17. ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ
(ՀԱՇՎԱՆՑՈՒՄԸ)**

Հոդված 147. Մաքսատուրքերի, հարկերի՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված գումարների եւ այլ դրամական միջոցների վերադարձը (հաշվանցումը)

1. Մաքսատուրքերի, հարկերի՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման մաքսային մարմնի որոշմամբ՝ վճարողի (նրա իրավահաջորդի) դիմումի համաձայն: Նշված դիմումը եւ դրան կցված փաստաթղթերը ներկայացվում են այն մաքսային մարմին, որտեղ կատարվել է ապրանքների մաքսային հայտարարագրումը, իսկ մաքսատուրքերի, հարկերի վճարման կենտրոնացված կարգի կիրառման դեպքում՝ այն մաքսային մարմին, որի հետ կնքվել է դրա կիրառման մասին համաձայնագիրը, կամ այն մաքսային մարմին, որը կատարել է բռնագանձումը՝ դրանց վճարման կամ բռնագանձման օրվանից ոչ ուշ, քան երեք տարի հետո:

2. Մաքսատուրքերի, հարկերի՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված գումարների վերադարձման մասին դիմումին պետք է կցվեն հետեւյալ փաստաթղթերը՝

1) վերադարձման ենթակա մաքսատուրքերի, հարկերի վճարումը կամ բռնագանձումը հաստատող վճարային փաստաթուղթը.

2) վերադարձման ենթակա մաքսատուրքերի, հարկերի հաշվանցումը հաստատող փաստաթղթերը.

3) մաքսատուրքերի, հարկերի՝ հաշվարկվածից ավելի վճարվելու կամ հաշվարկվածից ավելի բռնագանձվելու փաստը հաստատող փաստաթղթերը.

4) սույն Դաշնային օրենքի 122-րդ հոդվածի 4-7 մասերում նշված փաստաթղթերը՝ կախված դիմումատուի կարգավիճակից եւ հաշվի առնելով վերադարձվող դրամական միջոցների կարգավիճակը.

5) փաստաթուղթ, որով հաստատվում է մաքսատուրքեր, հարկեր վճարած անձի

համաձայնությունը դրանք վերադարձնելու այն անձին, որի վրա դրված է մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտականություն, այն դեպքում, երբ անձը, որի վրա դրված է մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտականություն, դրանց վերադարձման մասին դիմում է ներկայացնում:

6) այլ փաստաթղթեր, որոնք կարող են ներկայացվել անձի կողմից՝ վերադարձման հիմնավորվածությունը հաստատելու համար:

3. Եթե մաքսային մարմին նախկինում ներկայացվել են սույն Դաշնային օրենքի 122-րդ հոդվածի 4-7-րդ մասերում նշված փաստաթղթերը, ապա վճարողն իրավասու է կրկին ներկայացնելու այդ փաստաթղթերը՝ հայտնելով մաքսային մարմին նման փաստաթղթերը ներկայացնելու եւ դրանց մեջ փոփոխությունների բացակայության մասին տեղեկություններ:

4. Վերադարձման մասին դիմումի մեջ պահանջվող տեղեկությունների բացակայության եւ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում նշված դիմումը ենթակա է վերադարձման վճարողին (ներա իրավահաջորդին) առանց քննարկման՝ տվյալ դիմումի քննարկման անհնարինության մասին գրավոր հիմնավոր բացատրության տրամադրմամբ: Նշված դիմումի վերադարձը կատարվում է այն մաքսային մարմին ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Մաքսային մարմնի կողմից տվյալ դիմումն առանց քննարկման վերադարձվելու դեպքում վճարողը (ներա իրավահաջորդը) իրավասու է կրկին դիմելու հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի վերադարձման մասին դիմումը ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում:

5. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի վերաբերյալ փաստ հայտնաբերելու դեպքում մաքսային մարմինը նման փաստ հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում պարտավոր է տեղեկացնել վճարողին հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարների մասին:

6. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքեր, հարկեր վերադարձնելը կատարվում է այն մաքսային մարմնի կողմից, որն իրականացնում է տվյալ դրամական միջոցների վարչարարությունը: Վերադարձման մասին դիմումը քննարկելու, վերադարձնելու մասին որոշումը կայացնելու եւ հաշվարկվածից ավելի

վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել մեկ ամիս ժամկետը՝ սկսած վերադարձման մասին դիմումը ներկայացնելու եւ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելու օրվանից: Նշված ժամկետը խախտելու դեպքում հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի՝ սահմանված ժամկետում չվերադարձված գումարին հաշվեգրվում են տոկոսներ՝ վերադարձման խախտված ժամկետի յուրաքանչյուր օրվա համար: Սույն Դաշնային օրենքի 18-րդ գլխի դրույթների համաձայն՝ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու դեպքում, հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարին տոկոսները հաշվեգրվում են՝ սկսած բռնագանձման օրվան հաջորդող օրվանից մինչեւ փաստացի վերադարձման օրը: Տոկոսադրույքը ընդունվում է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման այն դրույթին հավասար, որը գործում էր վերադարձման ժամկետի խախտման ժամանակահատվածում:

7. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելը կատարվում է վճարողի (նրա իրավահաջորդի) այն հաշվին, որը նշված է վերադարձի մասին դիմումի մեջ:

8. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելը կատարվում է Ռուսաստանի Դաշնության արժույթով:

9. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու դեպքում վերադարձման են ենթակա նաեւ վերադարձվող մաքսատուրքերի, հարկերի գումարից վճարված կամ բռնագանձված տուժանքների եւ տոկոսների գումարները՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքի 148-րդ հոդվածին համապատասխան իրականացվող մաքսային վճարների վերադարձի:

10. Վճարողի (նրա իրավահաջորդի) ցանկությամբ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված արտահանման մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելը կարող է կատարվել մաքսատուրքերի, հարկերի, տուժանքների, տոկոսների վճարման պարտականությունների կատարման հաշվին հաշվանցելու միջոցով: Վճարողի (նրա իրավահաջորդի) ցանկությամբ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի

բռնագանձված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելը կարող է կատարվել ներմուծման մաքսատուրքերի վճարման պարտականությունների կատարման հաշվին հաշվանցելու միջոցով: Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի հաշվանցումը արտահանման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման հաշվին չի թույլատրվում:

11. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի հաշվանցումն իրականացվում է վերադարձման կարգի նկատմամբ կիրառելի սույն հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով սույն հոդվածի 12-րդ մասի դրույթները:

12. Հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելը չի իրականացվում՝

1) եթե վճարողն ունի մաքսատուրքերի, հարկերի վճարման ենթակա պարտք՝ նշված պարտքի չափով: Նշված դեպքում վճարողի (նրա իրավահաջորդի) դիմումի համաձայն, կարող է իրականացվել հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի հաշվանցում նշված պարտքը մարելու հաշվին՝ հաշվի առնելով սույն հոդվածի 10-րդ մասի դրույթները.

2) եթե վերադարձման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարը 150 ռուբլի արժեքից պակաս է՝ բացառությամբ ֆիզիկական անձանց կողմից մաքսատուրքերի, հարկերի հաշվարկվածից ավելի վճարման կամ նշված անձանցից դրանց բռնագանձման դեպքերի:

3) սահմանված ժամկետները լրանալուց հետո մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձման մասին դիմումը ներկայացնելու դեպքում:

13. Մաքսատուրքերի, հարկերի, տուժանքների եւ տոկոսների վճարման ենթակա պարտքի առկայության դեպքում մաքսային մարմինն իրավասու է իրականացնելու դրա բռնագանձումը՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարների հաշվին՝ սույն Դաշնային օրենքի 158-րդ հոդվածի համաձայն: Մաքսային մարմինը պարտավոր է տեղեկացնել վճարողին (նրա իրավահաջորդին) իրականացված հաշվանցման մասին դրա իրականացման օրվանից հետո եռօրյա ժամկետում:

14. Մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու դեպքում դրանցից տոկոսներ չեն վճարվում՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի, եւ գումարները

չեն ինդեքսավորվում:

15. Վճարողի՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու (հաշվանցման) մասին դիմումի ձեռք էլ մաքսային մարմնի՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու (հաշվանցման) մասին որոշման ձեռք հաստատվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

Հոդված 148. Մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելու այլ դեպքեր

1. Մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելն իրականացվում է նաեւ հետեւյալ դեպքերում՝

1) հայտարարված մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների բացթողումը մերժելու դեպքում՝ կապված ապրանքների նկատմամբ այդ մաքսային ընթացակարգի սահմանման մասին մաքսային հայտարարագրի մուտքագրման ժամանակ վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների հետ.

2) մաքսային հայտարարագիրը չեղարկելու դեպքում.

3) ազգերի առավել բարենպաստության կամ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի վերականգնման դեպքում.

4) եթե Մաքսային միության Մաքսային օրենսգրքով եւ (կամ) սույն Դաշնային օրենքով նախատեսվում է մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարները վերադարձնելը՝ ապրանքների նկատմամբ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգ սահմանելիս կամ ապրանքների նկատմամբ «ոչնչացում» կամ «հրաժարում՝ հոգուտ պետության» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգեր սահմանելիս.

5) մաքսային մարմնի թույլտվությամբ նախկինում հայտարարված մաքսային ընթացակարգի փոփոխման դեպքում, եթե ապրանքների նկատմամբ նորից ընտրված մաքսային ընթացակարգ սահմանելիս վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարները պակաս են նախնական մաքսային ընթացակարգի ժամանակ վճարված

մաքսատուրքերի, հարկերի գումարներից՝ բացառությամբ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 282-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքի:

6) ժամանակավոր հատուկ տուրքի, ժամանակավոր հակազնագցման տուրքի եւ ժամանակավոր փոխհատուցման տուրքի վերադարձման (ամբողջությամբ կամ մասնակիորեն) դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության՝ ապրանքների ներմուծման ժամանակ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների մասին օրենսդրության համաձայն:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում մաքսատուրքերը, հարկերը վերադարձնելն իրականացվում է, երբ դրա մասին դիմում է ներկայացվում ոչ ուշ, քան այն պայմանների ծագման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում, որոնք հանգեցնում են մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների վերադարձման՝ սույն հոդվածի համաձայն, որը կիրառելի է հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված մաքսային վճարների վերադարձման նկատմամբ: Ընդ որում, սույն Դաշնային օրենքի 147-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթները չեն կիրառվում:

Հոդված 149. Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձը (հաշվանցումը)

1. Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձը կամ դրանց հաշվանցումը կանխավճարների հաշվին իրականացվում է գրավի առարկա դրամական միջոցներով երաշխավորված պարտավորության կատարման կամ դադարեցման դեպքում, եթե գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին դիմումը մաքսային մարմին է ներկայացվել դրամական միջոցները գրավ դրած անձի (ներա իրավահաջորդի) կողմից պարտավորության կատարման կամ դադարեցման օրվան հաջորդող օրվանից հետո եռամյա ժամկետում: Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձն (հաշվանցումը) իրականացվում է նաեւ այն դեպքում, երբ գրավի առարկա դրամական միջոցներով երաշխավորված պարտավորությունները չեն ծագել, ընդ որում՝ գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին դիմումը ներկայացնելու նշված ժամկետը հաշվարկվում է մաքսային մարմնի կողմից մաքսային ստացագրի ձեւակերպման օրվանից: Նշված ժամկետները լրանալուն պես գրավի առարկա դրամական միջոցների չպահանջված գումարներն ընդգրկվում են դաշնային բյուջեի ոչ հարկային այլ եկամուտների մեջ եւ

վերադարձման ենթակա չեն:

2. Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դրամական միջոցների գրավադրումը հաստատող վճարման փաստաթուղթը.

2) մաքսային անդորրագիրը.

3) գրավի առարկա դրամական միջոցներով երաշխավորված պարտավորության կատարումը (դադարեցումը) հաստատող փաստաթղթերը.

4) սույն Դաշնային օրենքի 122-րդ հոդվածի 4-7-րդ մասերում նշված փաստաթղթերը՝ ելնելով դիմողի կարգավիճակից եւ հաշվի առնելով վերադարձվող (հաշվանցվող) դրամական միջոցները.

5) այլ փաստաթղթեր, որոնք կարող են ներկայացվել վերադարձման՝ (հաշվանցման) հիմնավորվածությունը հաստատելու համար:

3. Եթե մաքսային մարմին նախկինում ներկայացվել են սույն Դաշնային օրենքի 122-րդ հոդվածի 4-7-րդ մասերում նշված փաստաթղթերը, ապա վճարողը կարող է կրկին չներկայացնել այդ փաստաթղթերը՝ հայտնելով մաքսային մարմին տվյալ փաստաթղթերը ներկայացնելու եւ դրանց մեջ փոփոխությունների բացակայության մասին տեղեկություններ:

4. Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին դիմումը եւ դրան կցվող փաստաթղթերը ներկայացվում են այն մաքսային մարմին, որն իրականացնում է գրավի առարկա տվյալ դրամական միջոցների վարչարարությունը: Նշված դիմումի մեջ պահանջվող տեղեկությունների բացակայության, մաքսային անդորրագրի եւ (կամ) անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, այդ դիմումը ենթակա է վերադարձման դրամական միջոցները գրավ դրած անձին (նրա իրավահաջորդին)՝ առանց քննարկման՝ տվյալ դիմումի քննարկման անհնարինության պատճառների մասին գրավոր հիմնավորված բացատրության տրամադրմամբ: Նշված դիմումի վերադարձն իրականացվում է վերջինս մաքսային մարմնի կողմից ստանալու օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Մաքսային մարմնի կողմից նշված դիմումն առանց քննարկման վերադարձվելու դեպքում դրամական միջոցները գրավ դրած անձը (նրա իրավահաջորդը) իրավասու է գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին կրկին դիմում

ներկայացնելու՝ սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետների սահմաններում:

5. Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձն (հաշվանցումը) իրականացվում է գրավի առարկա տվյալ դրամական միջոցների վարչարարությունն իրականացնող մաքսային մարմնի որոշմամբ: Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին դիմումի քննարկման, գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին որոշման կայացման, գրավի առարկա դրամական միջոցների գումարների վերադարձման (հաշվանցման) ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել նշված դիմումը ներկայացնելու եւ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից սկսած մեկամսյա ժամկետը:

6. Գրավի առարկա դրամական միջոցները վերադարձվում են Ռուսաստանի Դաշնության արժույթով անկանխիկ եղանակով այն անձի (նրա իրավահաջորդի) հաշվին, որը գրավ է դրել գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման մասին դիմումի մեջ նշված դրամական միջոցները: Կանխավճարների հաշվին գրավի առարկա դրամական միջոցների հաշվանցումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության արժույթով:

7. Գրավի առարկա դրամական միջոցների վերադարձը (հաշվանցումը) չի իրականացվում այն դեպքում, երբ դրամական միջոցները գրավ դրած անձն ունի մաքսային վճարների, տուժանքների կամ տոկոսների վճարման պարտք՝ նշված պարտքի չափով: Մաքսային մարմինը կարող է բռնագանձում տարածել գրավի առարկա դրամական միջոցների վրա՝ սույն Դաշնային օրենքի 158-րդ հոդվածի համաձայն:

8. Գրավի առարկա դրամական միջոցների գումարների վերադարձման (հաշվանցման) դեպքում դրանցից տոկոսներ չեն վճարվում, գումարները չեն ինդեքսավորվում եւ բանկային գործառույթների համար միջնորդավճարը վճարվում է փոխանցվող միջոցների հաշվին:

9. Վճարողի՝ գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին դիմումի ձեւը եւ մաքսային մարմնի՝ գրավի առարկա դրամական միջոցների վերադարձման (հաշվանցման) մասին որոշման ձեւը հաստատվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

Գլուխ 18. ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԲՈՒԱԳԱՆՁՈՒՄԸ

Հոդված 150. Ընդհանուր կանոններ՝ մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձման վերաբերյալ

1. Մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձումն իրականացվում է մաքսատուրքեր, հարկեր վճարողից կամ այն ապրանքների արժեքի հաշվին, որոնց համար մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվել:

2. Իրավաբանական անձանցից եւ անհատ ձեռնարկատերերից մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձումն իրականացվում է այն դրամական միջոցների հաշվին, որոնք առկա են բանկերում վճարողի հաշիվներին, մաքսային վճարների կատարումն ապահովելու հաշվին, չօգտագործված կանխավճարների մնացորդների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների եւ վճարողի այլ գույքի հաշվին, ինչպես նաեւ դատական կարգով: Ֆիզիկական անձանցից մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձումը՝ բացառությամբ անհատ ձեռնարկատերերի, իրականացվում է դատական կարգով՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի:

3. Նախքան մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձման միջոցների ձեռնարկումը՝ մաքսային մարմինը մաքսատուրքերի, հարկերը վճարողին ներկայացնում է մաքսային վճարների կատարման մասին պահանջները՝ սույն Դաշնային օրենքի 152-րդ հոդվածի համաձայն՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքի 154-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով ու 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, ինչպես նաեւ այն դեպքում, երբ մաքսատուրքեր, հարկեր վճարողը մաքսային մարմին է:

4. Հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման համապարտ պարտականության առկայության դեպքում, մաքսային վճարների կատարման առումով պահանջներ են սահմանվում միաժամանակ հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի համար՝ դրա մասին նշելով տվյալ պահանջների մեջ: Մաքսային վճարների կատարման պահանջը ներկայացվում է այն անձին, որը՝ որպես մաքսային ներկայացուցիչ, իրականացրել է ապրանքների հայտարարագրումը, ինչպես նաեւ այն դեպքում, երբ տվյալ

անձը դադարեցրել է իր գործունեությունը որպես մաքսային ներկայացուցիչ: Այն դեպքում, եթե սույն մասում նշված երկու անձանց միաժամանակ մաքսային վճարների կատարման պահանջները ներկայացնելու հնարավորությունը բացակայում է, մաքսային մարմինը մաքսային վճարների կատարման մասին պահանջը ներկայացնում է այս երկու անձանցից մեկին: Մաքսավճարների, հարկերի կատարման համապարտ պարտականության դեպքում մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձման առումով միջոցներ կիրառելիս, մաքսային մարմինները համապարտ պարտականության դեպքում օգտվում են պարտապանի իրավունքներից՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կանոնների համաձայն:

5. Մաքսային վճարների հարկադիր բռնագանձում չի իրականացվում՝

1) եթե մաքսային վճարների կատարման մասին պահանջներ չեն ներկայացվել երեք տարվա ընթացքում՝ սկսած դրանց վճարման ժամկետը լրանալու օրվանից, կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն իրականացնելիս մաքսատուրքեր, հարկեր չվճարելու մասին փաստը հայտնաբերելու օրվանից, կամ այն իրադարձության վրա հասնելու օրվանից, որի հետեանքով անձը պարտականություն է ձեռք բերել վճարելու մաքսատուրքերը, հարկերը՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ (կամ) մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն.

2) եթե Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան դադարել է մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականությունը:

6. Եթե սույն Դաշնային օրենքին համապատասխան մաքսատուրքեր, հարկեր վճարողը մաքսային մարմինն է, ապա մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից սահմանված կարգով:

7. Մաքսային փոխադրողից մաքսատուրքերի, հարկերի հարկադիր բռնագանձումը, Մաքսային օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն, իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով:

8. Մաքսային միության այլ անդամ պետության տարածքում մաքսատուրքերի, հարկերի

վճարման պարտականության ծագման դեպքում վճարման ենթակա մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով սահմանված փաստաթղթերի հիման վրա՝ առանց տուժանքների հաշվեգրման:

Հոդված 151. Տուժանքներ

1. Տուժանքներ են համարվում սույն հոդվածով սահմանված այն դրամական գումարները, որոնք մաքսատուրքեր, հարկեր վճարողը պարտավոր է վճարել Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մաքսատուրքերը, հարկերը չվճարելու կամ ոչ ամբողջությամբ վճարելու դեպքում:

2. Սույն հոդվածի 5–8 մասերով նախատեսված դեպքերից բացի՝ տուժանքները հաշվեգրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարումն ուշացնելու յուրաքանչյուր օրացուցային օրվա համար՝ սկսած մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետները լրանալու օրվան հաջորդող օրվանից մինչեւ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման օրը, կամ մինչեւ մաքսատուրքերի, հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու թույլտվության մասին որոշումը կայացնելու օրը, այդ թվում՝ չվճարված մաքսատուրքերի, հարկերի գումարներից առաջացած տոկոսներում՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումն ուշացնելու ժամանակահատվածում գործող վերաֆինանսավորման դրույքի մեկ երեքհարյուրերորդականի չափով: Տուժանքների հաշվեգրման նպատակով կիրառվում է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումն ուշացնելու ժամանակահատվածում գործող վերաֆինանսավորման դրույքը:

3. Տուժանքներ չեն հաշվեգրվում հետեւյալ դեպքերում՝

1) եթե մաքսային մարմինը չի սահմանել մաքսատուրքեր, հարկեր վճարողին.

2) եթե մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են սույն Դաշնային օրենքի 150–րդ հոդվածի 8–րդ մասին համապատասխան.

3) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված անվճարունակության (սնանկության) դեպքում.

4) Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան ապրանքների մաքսային արժեքը որոշելու դեպքում.

5) սույն Դաշնային օրենքով նախատեսված այլ դեպքերում:

4. Հաշվեգրված տուժանքների նվազեցումը, ինչպես նաև տուժանքների վճարումը հետաձգելը կամ մաս առ մաս վճարելը չի թույլատրվում:

5. Երաշխավորին կամ երաշխիք տված անձին երաշխավորման պայմանագրի համաձայն պարտապանի պահանջները կամ բանկային երաշխիքի համաձայն շահառուի պահանջները ներկայացնելիս տուժանքները հաշվեգրվում են սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ մինչև նշված պահանջը ներկայացնելու օրը՝ ներառյալ, եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

6. Վճարողին մաքսային վճարների կատարման մասին պահանջներ ներկայացնելիս տուժանքները հաշվեգրվում են մինչև տվյալ պահանջը ներկայացնելու օրը ներառյալ: Տվյալ պահանջում նշված ժամկետներում մաքսային վճարների, հարկերի չվճարման դեպքում կամ դրանց՝ սույն Դաշնային օրենքով սահմանված հարկադիր կարգով ոչ ամբողջական չափով բռնագանձման դեպքում, տուժանքները հաշվեգրվում են սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

7. Այն դեպքերում, երբ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվեգրված տուժանքների գումարը չի բռնագանձվելու ամբողջ չափով վճարողի այլ գույքի հաշվին կամ դատական կարգով, չվճարված տուժանքների գումարների առումով մաքսատուրքեր, հարկեր վճարողին է ուղարկվում մաքսային վճարներ կատարելու պահանջ, իսկ սահմանված ժամկետներում տվյալ պահանջը չկատարելու դեպքում, ձեռնարկվում են հարկադիր բռնագանձման միջոցներ՝ սույն գլխով նախատեսված կարգով:

8. Գրավի առարկա դրամական միջոցներով երաշխավորված պարտավորությունը չկատարելու դեպքում, տուժանքները հաշվեգրվում են՝ մինչև գրավի առարկա դրամական միջոցներով երաշխավորված եւ դրա հաշվին մարված պարտավորությունը չկատարելու մասին փաստի հայտնաբերման օրը:

9. Տուժանքները վճարվում են ապառքների գումարների հետ միասին՝ անկախ Մաքսային միության մաքսային օրենսդրությունը եւ (կամ) մաքսային գործի մասին Ռուսաստանի

Դաշնության օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության այլ միջոցները կիրառելուց:

10. Տուժանքները վճարվում են մաքսատուրքերի, հարկերի չվճարված գումարների վճարման հետ միաժամանակ կամ այդ գումարները վճարելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մաքսատուրքերի, հարկերի գումարները վճարելու օրվանից մեկ ամիս հետո:

11. Մաքսատուրքերի, հարկերի վճարումը հետաձգելու կամ մաս առ մաս վճարելու հնարավորության տրամադրման մասին դիմումը ներկայացնելը չի կասեցնում ապառքի գումարի վրա տուժանքների հաշվեգրումը:

12. Տուժանքների վճարումը, բռնագանձումը եւ վերադարձն իրականացվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսգրքով՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման, բռնագանձման եւ վերադարձման առումով սահմանված կանոնների համաձայն:

Հոդված 152. Մաքսային վճարների կատարման մասին պահանջ

1. Մաքսային վճարների կատարման մասին պահանջը մաքսային մարմնի գրավոր ծանուցումն է սահմանված ժամկետում չվճարված մաքսային վճարների, ինչպես նաեւ տվյալ պահանջով սահմանված ժամկետում մաքսային վճարների, տուժանքների եւ (կամ) տոկոսների չվճարված գումարները վճարելու պարտականության մասին:

2. Եթե այն մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականությունը, որոնց առումով սույն Դաշնային օրենքի համաձայն, ներկայացվում է մաքսային վճարների կատարման պահանջ, փոխվել է տվյալ պահանջն ուղղելուց հետո, ապա մաքսային մարմինն ներկայացվում է մաքսային վճարների կատարման ճշգրտված պահանջը՝ նշելով պարտականության փոփոխման հիմքերը: Ընդ որում, մաքսային վճարների կատարման մասին ներկայացված նախնական պահանջը չեղարկվում է մաքսային վճարների կատարման մասին ճշգրտված պահանջ ներկայացնելու հետ միաժամանակ:

3. Մաքսատուրքեր, հարկեր վճարողների համապարտ պարտականության դեպքում, մաքսային վճարների կատարման մասին ճշգրտված պահանջն ներկայացվում է այն նույն անձանց (անձին), որոնց (որին) ներկայացվել էր մաքսային վճարները կատարելու մասին

չեղարկված պահանջը:

4. Մաքսային վճարների կատարման մասին պահանջը (մաքսային վճարների կատարման մասին ճշգրտված պահանջը) պետք է պարունակի տեղեկություններ վճարման ենթակա մաքսային վճարների գումարի, պահանջը ներկայացնելու օրը հաշվեգրված տուժանքների եւ (կամ) տոկոսների չափի, մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետների, պահանջի կատարման ժամկետի, ինչպես նաեւ մաքսատուրքերի, հարկերի հարկադիր կարգով բռնագանձման եւ դրանց բռնագանձման ապահովման այնպիսի միջոցների մասին, որոնք կիրառվում են վճարողի կողմից՝ տվյալ պահանջը չկատարելու դեպքում, ինչպես նաեւ տվյալ պահանջը ներկայացնելու հիմքերի մասին: Մաքսային վճարների կատարման մասին պահանջի ձեւը եւ դրա լրացման կարգը հաստատվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

5. Մաքսային վճարների կատարման մասին պահանջը պետք է ներկայացվի մաքսատուրքեր, հարկեր վճարողին մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու մասին փաստերի հայտնաբերումից հետո ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրերի ընթացքում, այդ թվում, եթե նշված փաստերը հայտնաբերվել են ապրանքների բացթողումից հետո մաքսային վերահսկողության իրականացման, այդ թվում՝ ապրանքների բացթողման հետ կապված մաքսային ձեւակերպումների իրականացման ընթացքում հայտարարված տեղեկությունների հավաստիության ստուգման ընթացքում:

6. Մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու փաստի հայտնաբերումն ամրագրվում է մաքսային մարմնի՝ մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու փաստի հայտնաբերման մասին ակտով իրավասու անձի կողմից՝ համապատասխան ձեւով այնպիսի մաքսային վերահսկողության իրականացման արդյունքների համաձայն որոշում կայացնելու օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որի միջոցով հայտնաբերվել են այն խախտումները, որոնց հետեւանքով ծագել է մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականություն:

7. Մաքսային ստուգման ձեւով մաքսային հսկողություն իրականացնելու դեպքում մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու մասին փաստի հայտնաբերումն ամրագրվում է մաքսային մարմնի ակտով ապրանքի բացթողումն իրականացրած մաքսային մարմնի կողմից մաքսային ստուգման ակտի պատճենը եւ մաքսային

գործի բնագավառում համապատասխան որոշումն (համապատասխան որոշումները) ստանալու օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

8. Մաքսային արժեքի ճշգրտման, ապրանքների բացթողումից հետո ապրանքների մասին հայտարարագրում պարունակվող տվյալների փոփոխման եւ դրա էլեկտրոնային պատճենի ճշգրտման մասին որոշում կայացվելու դեպքում, մաքսային վճարներ չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու մասին փաստի հայտնաբերման օր է համարվում մաքսային արժեքի եւ մաքսային վճարների ճշգրտման ձեւի, ապրանքների մասին հայտարարագրի ճշգրտման ձեւի լրացման օրը:

9. Մաքսային մարմնի՝ մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու մասին փաստի հայտնաբերման մասին ակտում, որի ձեւը եւ լրացման կարգը հաստատվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, պետք է նշված լինեն՝

1) մաքսային հսկողության իրականացման արդյունքներով ձեւակերպված մաքսային մարմնի համապատասխան փաստաթղթի ամսաթիվն ու համարը.

2) այն փաստաթղթերի համարները, որոնց միջոցով հնարավոր է նույնականացնել ապրանքը՝ կցելով նշված փաստաթղթերը.

3) վճարման (հավելավճարման) ենթակա մաքսային վճարների հաշվարկը.

4) համապատասխան ձեւով մաքսային հսկողության իրականացման արդյունքներով հայտնաբերված այն խախտումները, որոնց հետեւանքով մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականություն է առաջանում :

10. Մաքսային ընթացակարգերի պահանջների եւ պայմանների խախտման դեպքում, որի հետեւանքով, Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ (կամ) մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, վրա է հասնում մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետը, մաքսային վճարները կատարելու մասին պահանջը պետք է ներկայացվի նշված խախտման հայտնաբերման օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում: Մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու մասին փաստի հայտնաբերման օրն ամրագրվում է մաքսային մարմնի՝ մաքսային վճարները չկատարելու կամ ոչ ամբողջությամբ կատարելու փաստի հայտնաբերման մասին ակտով՝ սույն հոդվածի 6–8–րդ

մասերին համապատասխան:

11. Մաքսային վճարները կատարելու մասին պահանջի կատարման ժամկետը կազմում է նշված պահանջն ստանալու օրվանից հետո ոչ պակաս, քան 10 աշխատանքային օր եւ ոչ ավելի, քան 20 օրացուցային օր:

12. Մաքսային վճարները կատարելու մասին ճշգրտված պահանջը պետք է ներկայացվի մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության փոփոխման մասին վկայող փաստի հաստատման օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Ճշգրտված պահանջի կատարման ժամկետը կազմում է մաքսային վճարները կատարելու մասին ճշգրտված պահանջն ստանալու օրվանից հետո ոչ ավելի, քան 10 աշխատանքային օր:

14. Սույն հոդվածով սահմանված ժամկետները լրանալուց հետո մաքսային վճարներ կատարելու մասին պահանջն (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջն) ներկայացնելը հիմք չէ՝ տվյալ պահանջն անօրինական ճանաչելու համար:

15. Սույն հոդվածով սահմանված ժամկետները լրանալուց հետո մաքսային վճարներ կատարելու մասին պահանջը (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջը) ներկայացնելու դեպքում, վճարման ենթակա տուժանքները եւ (կամ) տոկոսները հաշվեգրվում են մինչեւ նշված ժամկետները լրանալու օրը ներառյալ:

16. Մաքսային վճարներ կատարելու մասին պահանջը (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջը) կարող է փոխանցվել կազմակերպության ղեկավարին կամ այլ լիազոր ներկայացուցչին կամ անմիջապես ֆիզիկական անձին՝ ստորագրությամբ կամ այդ պահանջի ստացման փաստը եւ ամսաթիվը հաստատող այլ եղանակով: Եթե նշված անձինք խուսափում են նշված պահանջն ստանալուց, այն ուղարկվում է փոստով՝ պատվիրված նամակով: Մաքսային վճարներ կատարելու մասին պահանջը (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջը) համարվում է ստացված՝ պատվիրված նամակի ուղարկման օրվանից հետո վեցօրյա ժամկետը լրանալուն պես:

17. Սույն հոդվածով սահմանված ժամկետներում մաքսային վճարներ կատարելու մասին պահանջը (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջը) չկատարելու դեպքում մաքսային մարմինները միջոցներ են ձեռնարկում՝ մաքսատուրքեր, հարկեր հարկադիր

կարգով բռնագանձելու առումով՝ սույն գլխի համաձայն:

18. Մաքսային վճարներ կատարելու մասին պահանջն (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջը) ուղղվում է մաքսատուրքեր, հարկեր վճարողին՝ անկախ նրան քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու փաստից:

Հոդված 153. Մաքսային վճարների բռնագանձումը բանկերում վճարողի հաշիվներին առկա դրամական միջոցների հաշվին (անվիճելի կարգով բռնագանձում)

1. Սահմանված ժամկետներում մաքսային վճարներ կատարելու մասին պահանջը (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջը) չկատարելու դեպքում մաքսային մարմինը դրամական միջոցները՝ բանկերում վճարողի հաշիվներին առկա դրամական միջոցների հաշվին անվիճելի կարգով բռնագանձելու վերաբերյալ որոշում է կայացնում մաքսային վճարներ կատարելու մասին պահանջի (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջի) մեջ նշված մաքսային վճարների գումարների, ինչպես նաև նման որոշում կայացնելու օրը հաշվեգրված տուժանքների գումարների սահմաններում:

2. Անվիճելի կարգով դրամական միջոցների բռնագանձման մասին որոշումը (այսուհետ՝ անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշում), որի ձեւը եւ լրացման կարգը հաստատվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, պետք է տեղեկություններ պարունակի մաքսային վճարների՝ բռնագանձման ենթակա գումարի, որոշման կայացման օրը հաշվեգրված տուժանքների եւ (կամ) տոկոսների չափի, անվիճելի կարգով բռնագանձման, մաքսային վճարներ կատարելու մասին չկատարված պահանջի (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված չկատարված պահանջի) վավերապայմանների վերաբերյալ:

3. Անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշումը կայացվում է մաքսային մարմնի կողմից մաքսային վճարներ կատարելու մասին պահանջի (մաքսային վճարներ կատարելու մասին ճշգրտված պահանջի) կատարման ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 60 օրացուցային օրվա ընթացքում, եթե մաքսային մարմնի մոտ առկա են տեղեկություններ բանկում վճարողի հաշիվների մասին:

4. Անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշումը հիմք է՝ մաքսային մարմնի կողմից

ինկաստ հանձնարարական ուղարկելու համար այն բանկ, որտեղ վճարողն ունի հաշիվներ՝ վճարողի հաշիվներից գումարների դուրսգրման եւ Դաշնային գանձապետարանի հաշիվն կամ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով սահմանված հաշիվն անհրաժեշտ դրամական միջոցների փոխանցման նպատակով:

5. Անվիճելի կարգով մաքսային վճարների բռնագանձումն իրականացվում է վճարողի բանկային հաշիվներից՝ բացառությամբ վարկային հաշիվների, եթե հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Արտարժույթով բացված բանկային հաշիվներից մաքսային վճարների բռնագանձումն իրականացվում է վճարման ենթակա մաքսային վճարների գումարին համարժեք գումարի չափով՝ Ռուսաստանի Դաշնության արժույթով՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից փաստացի բռնագանձման օրվա համար սահմանված փոխարժեքով: Արտարժույթով բացված բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների բռնագանձման դեպքում, մաքսային մարմնի պետը (պետի տեղակալը) հաջորդ օրվանից ոչ ուշ ինկաստ հանձնարարականի հետ միասին վճարողի բանկ է ուղարկում վճարողի՝ արտարժույթով պահվող դրամական միջոցների վաճառքի մասին հանձնարարական :

6. Մաքսային մարմնի ինկաստ հանձնարարականն ուղարկվում է այն բանկ, որտեղ վճարողն ունի բացված հաշիվներ անվիճելի կարգով բռնագանձելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում, եւ բանկի կողմից այն իրականացվում է մաքսային մարմնի ինկաստ հանձնարարականի կատարման համար հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:

7. Այն դեպքում, երբ մաքսային վճարների կատարման պարտականությունը դադարեցվել կամ վճարողի կողմից ինքնուրույն ամբողջությամբ կատարվել է, կամ մաքսային վճարների կատարման գծով պարտքի գումարը բռնագանձվել է վճարողի գույքի հաշիվն՝ սույն Դաշնային օրենքի համաձայն, անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշում կայացրած մաքսային մարմինը մաքսային վճարների կատարման առումով պարտականության դադարեցման կամ ամբողջությամբ կատարման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում չեղյալ է հայտարարում տվյալ որոշումը եւ ինկաստ հանձնարարականի չեղարկման մասին գրավոր ծանուցում բանկին:

8. Եթե մաքսային վճարների կատարման գծով պարտքը մասամբ է մարվում

(դադարեցվում կամ վճարվում), ապա անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշում կայացրած մաքսային մարմինը մաքսային վճարների կատարման գծով պարտականությունը մասամբ կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրերի ընթացքում, բանկ է ուղարկում նոր ինկասո հանձնարարական՝ մաքսային վճարների կատարման գծով պարտքի չմարված գումարի չափով՝ բանկին գրավոր ծանուցելով նախորդ ինկասո հանձնարարականի չեղարկման մասին: Ընդ որում, մաքսային մարմինն անվիճելի կարգով բռնագանձման մասին նոր որոշում չի կայացնում:

Հոդված 154. Բռնագանձման տարածումը մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման վրա

1. Մաքսային մարմինն իրավասու է պահանջելու բանկային երաշխիք տված անձից, երաշխավորից վճարելու դրամական միջոցների գումարները չվճարված մաքսային վճարների չափով՝ ներառյալ տուժանքները եւ տոկոսները, կամ իրականացնելու բռնագանձում գրավի առարկայից: Մաքսային մարմինը, որը հայտնաբերել է անձի կողմից այնպիսի պարտավորության կատարման խախտում, որի հետեւանքով ծագում է մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ գույքային գրավով, բանկային երաշխիքով, երաշխավորությամբ երաշխավորվող պարտականություն, իրավասու է հանդես գալու որպես պարտատեր (շահառու)՝ օգտվելով պարտատիրոջ (շահառուի) բոլոր իրավունքներից, նույնիսկ եթե գույքի գրավադրման, բանկային գրավի մասին պայմանագրում կամ երաշխավորության մասին պայմանագրում որպես պարտատեր (շահառու) նշված է այլ մաքսային մարմին:

2. Այն դեպքում, երբ մաքսավճարներ, հարկեր վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) հաստատված չէ կամ մաքսատուրքեր, հարկեր վճարողն օտարերկրյա անձ է, մաքսային մարմինն իրավասու է իրականացնելու սույն հոդվածի 1–ին մասում նշված գործողությունները՝ առանց այդ անձին մաքսային վճարների կատարման առումով պահանջ ներկայացնելու: Եթե մաքսատուրքեր, հարկեր վճարողն օտարերկրյա անձ է, ապա մաքսային մարմինը սույն հոդվածի 1–ին մասում նշված գործողությունները կատարելու հետ, ծանուցում է այդ անձին մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման վրա բռնագանձում տարածելու մասին:

3. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման նպատակով գրավի առարկա դրամական միջոցների օգտագործման դեպքում գրավի առարկա դրամական միջոցների

գումարների վրա բռնագանձում տարածելը կատարվում է առանց մաքսային վճարների կատարման մասին պահանջ ուղարկելու եւ առանց բանկերում վճարողի հաշիվներին առկա դրամական միջոցների հաշվին մաքսային վճարների բռնագանձում իրականացնելու, եթե մաքսատուրքերի, հարկերի վճարման առումով պարտականությունը ծագել է գրավի առարկա դրամական միջոցներով երաշխավորված պարտավորությունը չկատարելու արդյունքում: Բռնագանձումն իրականացվում է պարտավորության չկատարման փաստը հայտնաբերելու օրվանից հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում: Մաքսային մարմինը տեղեկացնում է վճարողին իրականացված բռնագանձման մասին գրավի առարկա դրամական միջոցների գումարի վրա բռնագանձում տարածելու օրվանից հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում: Եթե գրավի առարկա դրամական միջոցների գումարը չի բավարարում մաքսային վճարների, տուժանքների վճարման հետ կապված պարտքը մարելու համար, ապա մաքսային վճարների, տուժանքների վճարման հետ կապված պարտքի չմարված գումարի առումով սահմանվում է մաքսային վճարների կատարման պահանջ եւ կիրառվում են հարկադիր բռնագանձման միջոցներ՝ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով:

Հոդված 155. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը

1. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումն իրականացվում է անվիճելի բռնագանձման մասին որոշման կատարումն ապահովելու նպատակով: Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չի տարածվում այն վճարների վրա, որոնց կատարման հերթականությունը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության համաձայն, նախորդում է մաքսատուրքերի, հարկերի վճարման հետ կապված պարտականության կատարմանը, ինչպես նաեւ մաքսային դրամական միջոցների դուրսգրման եւ դրանք Ռուսաստանի Դաշնության բյուջետային համակարգ՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման եւ այլ պարտադիր վճարների կատարման հաշվին փոխանցելու հետ կապված գործառնությունների վրա:

2. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը կայացվում է այն մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի) կողմից, որը ներկայացրել է մաքսային վճարների կատարման պահանջը (մաքսային վճարների կատարման ճշգրտված պահանջը), եթե նշված վճարողը չի կատարել տվյալ պահանջը: Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը չի կարող կայացվել նախքան անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշումը կայացնելը:

3. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը նշանակում է բանկի կողմից տվյալ հաշիվներով (հաշվով) կատարվող ծախսերի հետ կապված գործառնությունների դադարեցում՝ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշման մեջ նշված գումարի սահմաններում, եթե սույն հոդվածի 1-ին մասով այլ բան նախատեսված չէ:

4. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ է հայտարարվում բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշմամբ, մաքսային մարմնի կողմից մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման փաստը հաստատող փաստաթղթերը (դրանց պատճենները) ստանալու օրվան հաջորդող մեկ գործառական օրվանից ոչ ուշ:

5. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը բանկ է փոխանցվում մաքսային մարմնի կողմից թղթային կրիչով կամ էլեկտրոնային եղանակով՝ դրա ընդունման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:

6. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ստորագրությամբ հանձնվում է

բանկի ներկայացուցչին կամ ուղարկվում բանկ էլեկտրոնային եղանակով՝ դրա ընդունման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:

7. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշման եւ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին որոշման ձեւերի էլեկտրոնային տարբերակը եւ նշված որոշումները մաքսային մարմնի կողմից բանկ ուղարկելու կարգը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից՝ համաձայնեցնելով դրանք մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ:

8. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշման եւ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին որոշման՝ թղթային կրիչներով ներկայացվող ձեւերը եւ նշված որոշումները մաքսային մարմնի կողմից բանկ ուղարկելու կարգը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից :

9. Բանկում՝ մաքսատուրքերի, վճարող (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը պետք է պարունակի չկատարված մաքսային վճարների կատարման պահանջի (մաքսային վճարների կատարման ճշգրտված պահանջի) եւ անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշման վավերապայմանների մասին, բանկի ամբողջական անվանման մասին, բանկի նույնականացման կոդի մասին, մաքսատուրքեր, հարկեր վճարողի հաշիվների տեսակի եւ հաշվեհամարների մասին նշում:

10. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին որոշումը պետք է պարունակի բանկի ամբողջական անվանման, բանկի նույնականացման կոդի, մաքսատուրքեր, հարկեր վճարողի հաշիվների տեսակի եւ հաշվեհամարների մասին նշում:

11. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշման պատճենը կամ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին որոշումը փոխանցվում է վճարողին՝ ստորագրությամբ կամ այլ այնպիսի եղանակով, որը ցույց է տալիս վերջինիս կողմից համապատասխան որոշման պատճենն ստանալու ամսաթիվը:

12. Բանկը պարտավոր է տեղեկացնել մաքսային մարմնին բանկում մաքսատուրքերի, հարկերի վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) այն հաշիվներին (հաշվին) առկա դրամական միջոցների մնացորդի մասին, որոնցով (որով) կատարվող գործառնությունները կասեցվել են, բանկում՝ մաքսատուրքերի, հարկերի վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումն ստանալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ:

13. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը ենթակա է բանկի կողմից պարտադիր կատարման:

14. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը գործում է նման գործառնությունների կասեցման մասին որոշումը բանկի կողմից ստանալու օրվանից եւ մինչեւ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին որոշումը բանկի կողմից ստանալու օրը:

15. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին մաքսային մարմնի որոշումը բանկի կողմից ստացվելու ամսաթիվը եւ ժամը նշվում են հանձնման մասին ծանուցման կամ նման որոշումն ստանալու մասին ստացականում: Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը էլեկտրոնային եղանակով բանկ ուղարկելու դեպքում բանկի կողմից դրա ստացման ամսաթիվն

ու ժամը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ համաձայնեցնելով դրանք մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ:

16. Այն դեպքում, երբ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի)՝ բանկում առկա հաշիվներին (հաշվին) գտնվող դրամական միջոցների ընդհանուր գումարը, որոնցով (որով) կատարվող գործառնությունները կասեցվել են բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշման հիման վրա, գերազանցում է տվյալ որոշման մեջ նշված գումարը, ապա տվյալ վճարողն իրավունք ունի գրավոր դիմում ներկայացնելու մաքսային մարմին՝ բանկում առկա դրա հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին՝ պարտադիր նշելով Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվող բանկում առկա այն հաշիվները (հաշիվը), որոնց (որի) վրա առկա են բավականաչափ դրամական միջոցներ՝ անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշումը կատարելու համար:

17. Նախքան բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին որոշում կայացնելը՝ մաքսային մարմինը մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) նշված դիմումն ստանալու օրվան հաջորդող օրվա ընթացքում հայց է ուղարկում այն բանկ, որտեղ բացված են վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) կողմից նշված հաշիվները (հաշիվը), այդ հաշիվների (հաշվի) վրա դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ:

18. Բռնագանձման մասին որոշումը կատարելու համար բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներին (հաշվին) բավականաչափ չափով դրամական միջոցների առկայության մասին տեղեկությունը բանկից ստանալուց հետո մաքսային մարմինը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցումը չեղյալ հայտարարելու մասին՝ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով

(հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին մաքսային մարմնի որոշման մեջ նշված դրամական միջոցների գումարը գերազանցելու մասով:

19. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը մաքսային մարմնի կողմից չեղյալ հայտարարելու ժամկետի կամ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը բանկի ներկայացուցչին հանձնելու (բանկ ուղարկելու) ժամկետի խախտման դեպքում այն դրամական միջոցների գումարի վրա, որի առումով գործում էր կասեցման ռեժիմը, նշված ժամկետների խախտման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար հաշվեգրվում են տոկոսներ, որոնք մաքսատուրքեր, հարկեր վճարողին (կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին) ենթակա են վճարման: Տոկոսադրույքն ընդունվում է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման այն դրույքին հավասար, որը գործում էր բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը մաքսային մարմնի կողմից չեղյալ հայտարարելու ժամկետի կամ բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշումը բանկի ներկայացուցչին հանձնելու (բանկ ուղարկելու) ժամկետի խախտման ժամանակահատվածում:

20. Բանկը պատասխանատվություն չի կրում բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման հետեւանքով մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) կողմից կրած վնասների համար:

21. Բանկում՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով (հաշվով) կատարվող գործառնությունների կասեցման մասին որոշման առկայության դեպքում բանկն իրավունք չունի տվյալ վճարողի համար բացելու նոր հաշիվներ:

Հողված 156. Գույքի վրա արգելանք դնելը

1. Գույքի վրա արգելանք դնելը՝ որպես վճարողի այլ գույքի հաշվին մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման մասին մաքսային մարմնի որոշման կատարումն ապահովելու միջոց, համարվում է մաքսատուրքեր, հարկեր վճարողի (կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի)՝ վերջինիս գույքի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակման առումով մաքսային մարմնի կողմից դատախազի սանկցիայով իրականացվող գործողություն: Գույքի վրա արգելանք դնելն իրականացվում է սահմանված ժամկետներում մաքսատուրքեր, հարկեր վճարողի կողմից մաքսավճարների, հարկերի, տուժանքների վճարման առումով պարտականության չկատարման դեպքում, եւ եթե մաքսային մարմինների մոտ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ նշված անձը միջոցներ է ձեռնարկելու՝ թաքնվելու կամ իր գույքը թաքցնելու նպատակով:

2. Գույքի վրա արգելանքը կարող է դրվել ամբողջական կամ մասնակի:

3. Գույքի վրա ամբողջական արգելանք է համարվում մաքսավճարներ, հարկեր վճարողի գույքի նկատմամբ վերջինիս իրավունքների այնպիսի սահմանափակում, որի դեպքում նա իրավունք չունի տնօրինելու արգելանքի տակ դրված գույքը, իսկ այդ գույքի տիրապետումն ու օգտագործումն իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ եւ նրա հսկողության ներքո:

4. Մասնակի արգելանք է համարվում մաքսավճարներ, հարկեր վճարողի գույքի նկատմամբ վերջինիս իրավունքների այնպիսի սահմանափակումը, որի դեպքում տվյալ գույքի տիրապետումը, օգտագործումը եւ տնօրինումն իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ եւ հսկողության ներքո:

5. Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում նշված թույլտվությունները ձեւակերպվում են գրավոր՝ մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից հաստատված ձեւով, եւ պետք է պարունակեն տեղեկություններ գույքի անվանման, գույքի առանձին հատկանիշների, նախնական արժեքի, թույլտվության տրամադրման հիմքերի մասին:

6. Արգելանքի տակ կարող է վերցվել միայն այն գույքը, որն անհրաժեշտ եւ բավարար է մաքսատուրքերի, հարկերի, տուժանքների վճարման գծով պարտականության կատարման

համար:

7. Մաքսատուրքեր, հարկեր վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումն ընդունվում է մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի) կողմից համապատասխան որոշման միջոցով՝ մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից հաստատված ձեւաչափով:

8. Մաքսատուրքեր, հարկեր վճարողի գույքի վրա արգելանք դնելն իրականացվում է ընթերակաների մասնակցությամբ:

9. Գույքի արժեքը որոշելու անհնարինության դեպքում դրա արժեքը որոշվում է արգելանքը դնող պաշտոնատար անձի կողմից՝ հաշվի առնելով մաքսային փորձագետի եզրակացությունը: Մաքսային փորձագետ ներգրավելու անհնարինության դեպքում գույքի արժեքը որոշվում է գնահատման գործունեության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

10. Գույքն արգելանքի տակ վերցնելն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձինք իրավունք ունեն մերժելու մաքսատուրքեր, հարկեր վճարողին (նրա օրինական եւ (կամ) լիազոր ներկայացուցչին) գույքը արգելանքի տակ վերցնելու ժամանակ ներկա գտնվելու հարցում:

11. Գույքն արգելանքի տակ վերցնելու գործընթացին մասնակցող անձանց բացատրվում են իրենց իրավունքներն ու պարտականությունները:

12. Նախքան գույքն արգելանքի տակ վերցնելը՝ արգելանքն իրականացնող լիազոր պաշտոնատար անձինք պարտավոր են արգելանքի իրականացման գործընթացին ներկա անձանց ներկայացնել արգելանք դնելու մասին որոշումը, դատախազի սանկցիան եւ իրենց լիազորությունը հաստատող փաստաթղթերը:

13. Գույքը, որի վրա դրվում է արգելանքը, ներկայացվում է արգելանքի իրականացման գործընթացին ներկա ընթերականերին եւ անձանց:

14. Արգելանքի տակ վերցնելը գիշերային ժամին չի թույլատրվում՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի:

15. Արգելանքի տակ վերցնելիս կազմվում է գույքն արգելանքի տակ վերցնելու մասին

արձանագրություն՝ մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից հաստատված ձեւաչափով: Գույքն արգելանքի տակ վերցնելու մասին արձանագրության մեջ պետք է նշված լինեն հետեւյալ տեղեկությունները՝

1) գույքն արգելանքի տակ վերցնելու ընթացքում ներկա գտնվող անձանց ազգանունները, անունները եւ հայրանունները.

2) ակտում ներառված յուրաքանչյուր իրի անվանումը, նշված իրի տարբերակիչ հատկանիշները.

3) արձանագրության մեջ ներառված յուրաքանչյուր իրի նախնական գնահատված արժեքը եւ ամբողջ գույքի ընդհանուր արժեքը, որի վրա դրված է արգելանքը.

4) գույքից օգտվելու իրավունքի սահմանափակման տեսակը, չափը եւ ժամկետը.

5) այն անձի մասին տեղեկություններ, որի հսկողությանը կամ պահպանությանն է հանձնվել գույքը մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից, տվյալ անձի գտնվելու վայրը (բնակության վայրը).

6) գույքն արգելանքի տակ վերցնելու ընթացքում ներկա գտնվող անձանց դիտողություններն ու հայտարարությունները:

16. Գույքն արգելանքի տակ վերցնելու մասին արձանագրության մեջ պետք է կատարվեն նաեւ հետեւյալ նշումները՝

1) գույքի բռնագանձման մասին,

2) այն մասին, որ տվյալ անձին, որին մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից հսկողության կամ պահպանության նպատակով հանձնվել է արգելանքի տակ դրված գույքը, բացատրվել են իր պարտականությունները եւ զգուշացվել տվյալ գույքը ծախսելու, օտարելու, թաքցնելու կամ անօրինական եղանակով փոխանցելու համար պատասխանատվության ենթարկվելու մասին՝ իր պարտականությունների առումով բացատրություն ստանալու մասին վերջինիս ստորագրությամբ:

17. Պարտապանի գույքն արգելանքի տակ վերցնելու մասին արձանագրությունը ստորագրվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի, ընթերակաների, այն անձի կողմից, որի հսկողությանը կամ պահպանությանն է հանձնվել տվյալ գույքը մաքսային մարմնի

պաշտոնատար անձի կողմից, ինչպես նաև արգելանքի տակ վերցնելու ընթացքում ներկա գտնված այլ անձանց կողմից: Նշված անձանցից որեւիցե մեկի՝ արձանագրությունը ստորագրելու առումով հրաժարվելու դեպքում, դրանում կատարվում է համապատասխան նշում:

18. Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշում կայացրած մաքսային մարմնի պետը (պետի տեղակալը) որոշում է այն գույքի գտնվելու վայրը, որի վրա արգելանք է դրվել:

19. Գույքի վրա արգելանք դնելու մասին արձանագրություն կազմելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ մաքսային մարմնի պետը (պետի տեղակալը) ուղարկում է նշված արձանագրության պատճենը մաքսատուրքեր, հարկեր վճարողին, ինչպես նաև գույքի վրա արգելանք դնելու մասին դիմումի հետ այն դատական ակտերի հարկադիր կատարողին, որը հարուցել է կատարողական վարույթ՝ մաքսային մարմնի կողմից՝ սույն Դաշնային օրենքի 158–րդ հոդվածի համաձայն՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողի այլ գույքի հաշվին բռնագանձելու մասին կայացված որոշման հիման վրա:

20. Արգելանքի տակ դրված գույքի օտարումը (բացառությամբ, երբ դա իրականացվում է այն մաքսային մարմնի թույլտվությամբ եւ հսկողության ներքո, որը դրել է արգելանքը), վատնելը կամ թաքցնելը չի թույլատրվում: Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված՝ արգելանքի տակ դրված գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը չպահպանելը հիմք է՝ մեղավոր անձանց Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության ենթարկելու համար:

21. Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը չեղյալ է հայտարարվում մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի որոշմամբ) համապատասխան որոշման միջոցով մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից հաստատված ձեւաչափով՝ կատարողական վարույթի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից կայացրած որոշման հիման վրա, ինչպես նաև մաքսատուրքերի, հարկերի վճարման առումով պարտականությունը դադարեցնելու դեպքում, կամ վճարողի այլ գույքի հաշվին մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման մասին մաքսային մարմնի կողմից՝ սույն Դաշնային օրենքի 158–րդ հոդվածի համաձայն կայացված որոշման հիման վրա հարուցված կատարողական վարույթի դադարեցման կամ ավարտի դեպքում:

22. Սույն հոդվածի 21-րդ մասում նշված համապատասխան որոշման միջոցով գույքի վրա դրված արգելանքը չեղյալ հայտարարելու մասին որոշումը փոխանցվում է մաքսատուրքեր, հարկեր վճարողին (նրա օրինական եւ (կամ) լիազորված ներկայացուցչին), դատական ակտերի հարկադիր կատարողին եւ դատախազին՝ դրա ընդունման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ:

23. Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը գործում է արգելանք դնելու պահից մինչեւ տվյալ որոշումը կայացրած մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի) կողմից այդ որոշման չեղյալ հայտարարելը, կամ մինչեւ վերադաս մաքսային մարմնի կամ դատարանի կողմից նշված որոշումը չեղյալ հայտարարելը:

Հոդված 157. Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումն այն ապրանքների հաշվին, որոնց առումով մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվել

1. Սույն Դաշնային օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ վճարողի հաշիվներին դրամական միջոցների բացակայության կամ վճարողի հաշիվների մասին տեղեկությունների բացակայության դեպքում մաքսային մարմինները իրավասու են գանձելու մաքսատուրքեր, հարկեր վճարողի այն ապրանքների հաշվին, որոնց առումով մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվել, եթե տվյալ ապրանքները ձեռք չեն բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Առանց մաքսային վճարներ կատարելու մասին պահանջ ուղարկելու բռնագանձում տարածելը այն ապրանքների նկատմամբ, որոնց առումով մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվել, թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 21-րդ գլխի համաձայն մաքսային մարմինների կողմից կալանված ապրանքների պահպանման վերջնաժամկետները լրացել են կամ եթե մաքսատուրքեր, հարկեր վճարողը սահմանված չէ մաքսային մարմինների կողմից:

3. Ապրանքների նկատմամբ բռնագանձում տարածելը մաքսատուրքերի, հարկերի վճարման հաշվին իրականացվում է դատարանի որոշման հիման վրա այն դեպքում, երբ

մաքսատուրքեր, հարկեր վճարողը ֆիզիկական անձ է կամ մաքսատուրքեր, հարկեր վճարողը հաստատված չէ մաքսային մարմինների կողմից, կամ արբիտրաժային դատարանի որոշման հիման վրա այն դեպքում, երբ մաքսատուրքեր, հարկեր վճարողը իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ապրանքները փոխանցվել են մաքսային մարմիններին որպես գրավի առարկա՝ սույն Դաշնային օրենքի 140-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև երբ բռնագանձումը տարածվում է այն ապրանքների նկատմամբ, որոնց՝ սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահպանման վերջնաժամկետները սպառվել են՝ մաքսային մարմինների կողմից դրանք կալանելու ժամանակ:

4. Բռնագանձում տարածվում է միայն այն ապրանքների նկատմամբ, որոնց առումով մաքսատուրքերը, հարկերը չեն վճարվել կամ ոչ ամբողջությամբ են վճարվել, Մաքսային միության Մաքսային օրենսգրքով եւ սույն Դաշնային օրենքով նախատեսված կարգով եւ ժամկետներում:

5. Ապրանքների իրացումից ստացված գումարների տնօրինումը իրականացվում է սույն Դաշնային օրենքի 191-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 158. Մաքսային վճարների բռնագանձումը կանխավճարների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների չծախսված մնացորդի եւ վճարողի այլ գույքի հաշվին

1. Մաքսային վճարների կատարման առումով պահանջը (մաքսային վճարների կատարման ճշգրտված պահանջը) չկատարելու դեպքում մաքսային մարմինները իրավասու են բռնագանձելու վճարման ենթակա մաքսային վճարները կանխավճարների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների չծախսված մնացորդի հաշվին:

2. Կանխավճարների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների գումարների նկատմամբ բռնագանձում տարածելն իրականացվում է Դաշնային գանձապետարանի հաշվին կամ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով որոշված հաշվին՝ տվյալ միջոցները

պահելու ժամկետների ընթացքում՝ մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի) որոշմամբ: Մաքսային մարմինը կանխավճարների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների հաշվին մաքսային վճարների գումարների բռնագանձման մասին գրավոր հայտնում է մաքսատուրքեր, հարկեր վճարողին (նրա իրավահաջորդին) բռնագանձումից հետո մեկ օրվա ընթացքում: Կանխավճարների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների գումարների նկատմամբ բռնագանձում տարածելն իրականացվում է առանց անվիճելի կարգով բռնագանձման մասին որոշում կայացնելու մաքսային վճարների կատարման մասին պահանջի (մաքսային վճարների կատարման մասին ճշգրտված պահանջի) կատարման ժամկետը լրանալու օրվանից հետո 10 օրացուցային օրվա ընթացքում: Մաքսային վճարների կատարման մասին պահանջի (մաքսային վճարների կատարման մասին ճշգրտված պահանջի) կատարման ժամկետը լրանալուց հետո կանխավճարների, գրավի առարկա դրամական միջոցների, հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) մաքսային վճարների չծախսված մնացորդի առաջացման դեպքում բռնագանձումն իրականացվում է դրա առաջացման օրվանից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում:

3. Մաքսային վճարների կատարման մասին պահանջը (մաքսային վճարների կատարման մասին ճշգրտված պահանջը) չկատարելու եւ վճարողի հաշիվներին ոչ բավարար դրամական միջոցների առկայության կամ դրանց բացակայության, կամ վճարողի հաշիվների մասին տեղեկությունների բացակայության դեպքում, մաքսային մարմիններն իրավասու են բռնագանձելու վճարման ենթակա մաքսային վճարները վճարողի այլ գույքի, այդ թվում՝ կանխիկ դրամական միջոցների հաշվին:

4. Մաքսային վճարների բռնագանձումը վճարողի այլ գույքի հաշվին իրականացվում է մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի) կողմից համապատասխան որոշումը կայացվելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում դատական ակտերի հարկադիր կատարողին այն ուղարկելու միջոցով՝ հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կարգով: Մաքսային մարմնի որոշման կատարումն իրականացվում է դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ կատարողական վարույթի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

Հոդված 159. Մաքսային վճարների բռնագանձման մասին մաքսային մարմնի որոշումների կատարման առումով բանկերի եւ այլ վարկային կազմակերպությունների պարտականությունները

1. Բանկերը եւ այլ վարկային կազմակերպություններ պարտավոր են կատարել մաքսային վճարների անվիճելի կարգով բռնագանձման մասին մաքսային մարմնի որոշումները:

2. Մաքսային վճարների անվիճելի կարգով բռնագանձման մասին մաքսային մարմնի որոշումն իրականացվում է բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից նման որոշում ստանալու օրվան հաջորդող մեկ գործառական օրվա ընթացքում:

3. Վճարողի հաշվին դրամական միջոցների առկայության դեպքում բանկերը եւ այլ վարկային կազմակերպություններ իրավունք չունեն ուշացնելու մաքսային վճարների անվիճելի կարգով բռնագանձման մասին մաքսային մարմնի որոշման կատարումը:

4. Բանկերը եւ այլ վարկային կազմակերպություններ պատասխանատվություն են կրում սույն հոդվածով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

5. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաեւ տուժանքների եւ տոկոսների գումարների անվիճելի կարգով բռնագանձման մասին մաքսային մարմինների որոշումների կատարման հետ կապված՝ բանկերի եւ այլ վարկային կազմակերպությունների պարտականությունների նկատմամբ:

Հոդված 160. Մաքսային վճարների կատարման առումով առաջացած պարտքի (ապառքի), ինչպես նաեւ տուժանքների, տոկոսների վճարման հետ կապված պարտքի բռնագանձումն անհուսալի ճանաչելը եւ դուրս գրելը

1. Անհուսալի է ճանաչվում մաքսային վճարների կատարման առումով առաջացած պարտքի (ապառքի), ինչպես նաեւ տուժանքների, տոկոսների վճարման հետ կապված պարտքի բռնագանձումը, որը համարվում է մաքսատուրքերի, հարկերի առանձին վճարողների պարտք, եւ որի վճարումը եւ (կամ) բռնագանձումն անհնար է եղել հետեւյալ դեպքերում՝

1) մաքսատուրքեր, հարկեր վճարող կազմակերպության լուծարման պատճառով՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն պարտքի այն մասի առումով, որը մաքսային մարմնի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված բռնագանձման բոլոր միջոցների ձեռնարկումից հետո մնացել է չմարված:

2) անհատ ձեռնարկատիրոջ սնանկացման դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն պարտքի այն մասի առումով, որը մաքսային մարմնի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված բռնագանձման բոլոր միջոցների ձեռնարկումից հետո մնացել է չմարված՝ պարտապանի ոչ բավարար գույք ունենալու պատճառով:

3) ֆիզիկական անձի մահվան կամ նրան մահացած հայտարարելու դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով, պարտքի այն մասի առումով, որը ֆիզիկական անձի մահվան կամ նրան մահացած հայտարարելու ամսաթվի դրությամբ մարված չէ:

4) դատարանի կողմից ակտի ընդունման դեպքում, որի համաձայն մաքսային մարմինները կորցնում են ապառքի եւ տուժանքների, տոկոսների պարտքի բռնագանձման հնարավորությունը դրանց բռնագանձման համար նախատեսված ժամկետը սպառվելու պատճառով, այդ թվում՝ դատարան ապառքի եւ տուժանքների, տոկոսների պարտքի բռնագանձման մասին դիմումը ներկայացնելու համար բաց թողնված ժամկետի վերականգնումը մերժելու մասին որոշումը կայացնելու դեպքում:

2. Մաքսատուրքերի, հարկերի վճարման համապարտ պարտականություն ունեցող անձանցից որեւիցե մեկի պարտքի բռնագանձման անհուսալի ճանաչելը չի հանգեցնում համապարտ պարտավորություն ունեցող այլ անձանց պարտքի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման՝ նրանց մոտ սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքի (հանգամանքների) բացակայության դեպքում:

3. Բռնագանձման համար անհուսալի ճանաչված՝ մաքսային վճարների կատարման առումով առաջացած պարտքի (ապառքի), ինչպես նաեւ տուժանքների, տոկոսների վճարման հետ կապված պարտքի դուրսգրման կարգը, ինչպես նաեւ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերի ցանկը հաստատվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի

կողմից:

Մաս III. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 19. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 161. Մաքսային հսկողության իրականացումը

1. Մաքսային հսկողությունը մաքսային մարմինների կողմից իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային հսկողության օբյեկտները եւ դրա իրականացման վայրը սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածում:

3. Մաքսային մարմինները մաքսային հսկողության իրականացման ժամանակ կիրառում են ընտրողականության սկզբունքը եւ սահմանափակվում մաքսային հսկողության միայն այն ձեւերով, որոնք բավարար են՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահպանումն ապահովելու համար: Մաքսային հսկողության ձեւերի եւ մեթոդների ընտրության ժամանակ մաքսային մարմինները պարտավոր են օգտագործել մաքսային հսկողության տեխնիկական միջոցները, տեղեկությունների նախնական վերլուծությունը՝ մաքսային հսկողություն իրականացնելիս հայտարարատուներին, փոխադրողներին եւ այլ անձանց՝ ապրանքների պահպանման, տրանսպորտային միջոցների պարապորդի, ապրանքների բացթողման ժամկետն ավելացնելու առումով վնաս չհասցնելու նպատակով, եթե դա պայմանավորված չէ այնպիսի հանգամանքներով, որոնք կապված են մաքսային գործի բնագավառում լուրջ խախտումներով արտահայտված նշանների եւ տվյալ խախտումների բացահայտման ու կանխարգելման առումով սպառիչ միջոցների ձեռնարկման անհրաժեշտության հետ:

4. Մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինները փոխգործակցում են հսկողություն իրականացնող պետական այլ մարմինների հետ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաեւ սույն

հողվածի 3-րդ մասում նշված անձանց հետ:

5. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի եւ սույն Դաշնային օրենքի համաձայն մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության առանձին ձեւերի իրականացման ընթացքում կազմվող ակտերի, որոշումների, արձանագրությունների եւ ընթացակարգային այլ փաստաթղթերի ձեւերը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Մաքսային օրենսգրքով նշված լիազորությունները վերապահված են Մաքսային միության Հանձնաժողովին:

Հոդված 162. Ռիսկերի կառավարման համակարգը

1. Ռիսկերի կառավարման համակարգը հիմնվում է մաքսային մարմինների ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության խախտումները կանխարգելելու եւ մաքսային մարմիններին վերապահված հսկողության այլ ձեւեր իրականացնելիս այնպիսի խախտումներին հակազդելու նպատակով, որոնք

1) ունեն տեսական բնույթ.

2) կապված են զգալի չափերով մաքսատուրքեր, հարկեր վճարելուց խուսափելու, ինչպես նաեւ օֆշորային գոտիների տարածքում գրանցված ռեզիդենտների հետ ֆինանսական գործառնությունների իրականացման հետ.

3) խաթարում են հայրենական ապրանք արտադրողների մրցունակությունը.

4) կապված են ռեզիդենտների կողմից զգալի չափով արտարժույթի կամ Ռուսաստանի Դաշնության արժույթի վերադարձման (հայրենադարձման) առումով պարտականությունները չկատարելու հետ, որոնք սահմանված են Ռուսաստանի Դաշնության արժույթային օրենսդրությամբ.

5) առնչվում են Մաքսային միության եւ Ռուսաստանի դաշնության այլ կարեւոր շահերին, որոնց ապահովումը վերապահված է մաքսային մարմիններին:

(2013 թվականի հունիսի 28-ի թիվ 134-ԴՕ դաշնային օրենքի 1-ին մասի խմբագրությամբ)

2. Ռիսկերի կառավարման համակարգերի կիրառման ռազմավարությունը եւ մարտավարությունը, տեղեկությունների հավաքման ու մշակման, ռիսկերի վերլուծության եւ գնահատման, ռիսկերի գնահատմանն ուղղված միջոցների մշակման ու իրականացման կարգը սահմանում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը:

3. Մաքսային մարմինների կողմից ռիսկի սահմանված պրոֆիլներում պարունակվող տեղեկությունների օգտագործման կարգը կանոնակարգվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

4. Ռիսկի սահմանված պրոֆիլներում պարունակվող սահմանափակ հասանելիության տեղեկությունները չեն կարող բացահայտվել (տարածվել) կամ փոխանցվել երրորդ անձանց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկություններն անհրաժեշտ են նշված անձանց՝ իրենց վրա Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ դրված խնդիրները լուծելու համար: Եթե դաշնային օրենքներով այլ բան սահմանված չէ, նման տեղեկությունների փոխանցման կարգը որոշվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

Հոդված 163. Մաքսային հսկողության գոտիները

1. Մաքսային հսկողության գոտիներ հանդիսացող վայրերը սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի եւ սույն Դաշնային օրենքի համաձայն:

2. Մաքսային հսկողության գոտիներ կարող են ստեղծվել Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնությամբ, Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով անցման կետերում, մաքսային ձեւակերպումների իրականացման վայրերում, ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման (վերաբեռնման) գործողությունների իրականացման, դրանց մաքսային զննման վայրերում, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների կայանման վայրերում:

3. Մաքսային հսկողության գոտիները կարող են լինել մշտական հետեւյալ դեպքերում՝

1) եթե հողակտորի, շինության տերն առաջարկում է օգտագործել նշված տարածքները բացառապես դրանցում մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ պահելու

նպատակով կամ այդ ապրանքների համար այլ մաքսային ձեւակերպումներ իրականացնելու համար.

2) եթե տարածքի առանձին հատվածներ հիմնականում տեղափոխվում կամ այնտեղ պահվում են մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ, կամ եթե տվյալ ապրանքների համար իրականացվում են մաքսային այլ ձեւակերպումներ եւ մաքսային հսկողության գոտիների սահմաններով այդ ապրանքների տեղափոխման սահմանափակումը կամ տվյալ ապրանքների հասանելիության սահմանափակումն անհրաժեշտ է՝ Մաքսային միության օրենսդրության եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի դաշնության օրենսդրության դրույթների պահպանման համար:

4. Ապրանքների, տրանսպորտային միջոցների, անձանց, այդ թվում՝ այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց տեղափոխումը մաքսային հսկողության գոտիների սահմաններով եւ դրանց սահմաններում թույլատրվում է մաքսային մարմինների թույլտվությամբ ու վերահսկողությամբ՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքով եւ այլ դաշնային օրենքներով սահմանված դեպքերի:

5. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը, այն մաքսային մարմնի ներկայացմամբ, որի գործունեության տարածքում է գտնվում Ռուսաստանի Դաշնության տարածքի համապատասխան հողակտորը, որոշում է Ռուսաստանի Դաշնության պետական սահմանների այն հատվածները, որոնց երկայնքով անհրաժեշտ է ստեղծել մաքսային հսկողության գոտիներ, եւ որոշում կայացնում նման գոտիներ ստեղծելու մասին: Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնքով մաքսային հսկողության գոտիներ ստեղծելու մասին որոշումը ձեւակերպվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի նորմատիվ իրավական ակտով՝ համաձայնեցնելով այն Ռուսաստանի Դաշնության անվտանգության ապահովման բնագավառի գործադիր իշխանության դաշնային մարմնի եւ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների գործադիր իշխանության մարմինների հետ, որոնց տարածքում ստեղծվում են նշված գոտիները:

6. Ռուսաստանի Դաշնության տարածքի ցամաքային հատվածում Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնքով մաքսային հսկողության գոտի կարող է ստեղծվել տեղանքի այնպիսի շերտագծի սահմաններում, որը Ռուսաստանի Դաշնության պետական

սահմանագծից ծավալվում է դեպի Ռուսաստանի Դաշնության տարածքի խորքը՝ մինչև 30 կիլոմետր լայնությամբ:

7. Ռուսաստանի Դաշնության տարածքի ծովի, գետի եւ լճի հատվածներում Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնությամբ մաքսային հսկողության գոտի կարող է ստեղծվել համապատասխանաբար Ռուսաստանի դաշնության տարածքային ծովի սահմաններում, սահմանային գետերի, լճերի եւ այլ ջրամբարների ջրերի ռուսական մասի, ինչպես նաեւ տեղանքի այնպիսի շերտագծի սահմաններում, որը ջրափնյա գծից ծավալվում է դեպի Ռուսաստանի Դաշնության տարածքի խորքը՝ մինչև 15 կիլոմետր լայնությամբ:

8. Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնությամբ մաքսային հսկողության գոտիները նշվում են դրա սահմաններին՝ տրանսպորտային ուղիների հետ դրանց հատման վայրերում, անձանց, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կողմից պետական սահմանը հատելու վայրերում կանաչ ֆոնի վրա «Մաքսային հսկողության գոտի» սպիտակ գույնի գրառում պարունակող նշաններով, որոնք պատրաստվում են ճանապարհային տեղեկատվական նշանների համար սահմանված տեխնիկական պայմաններին եւ ստանդարտներին համապատասխան:

9. Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան սահմանված եւ բացված անցման կետերում մաքսային հսկողության գոտիներ ստեղծելու մասին որոշումը կայացվում է այն մաքսատան պետի կողմից, որի գործունեության տարածքում է գտնվում տվյալ անցակետը, եւ ձեւակերպվում է մաքսատան պետի հրամանով՝ համաձայնեցնելով այն մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ: Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի անցման կետում ստեղծվող մաքսային հսկողության գոտու մեջ ընդգրկվում են այն տարածքի հատվածները (ջրատարածություններ), շենքերը, կառույցները, հրապարակները, որոնց սահմաններում իրականացվում են մաքսային ձեւակերպումները, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների պահպանությունը, բեռնաթափումը եւ փոխաբեռնումը (վերաբեռնումը), դրանց մաքսային տեսազննումն ու մաքսային զննումը, նման ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների կայանման վայրերը:

10. Մաքսային հսկողության գոտու սահմանը որոշելիս պետք է հաշվի առնվի այն տրանսպորտային ենթակառուցվածքի օբյեկտի ադմինիստրացիայի կարծիքը, որի

սահմաններում հաստատվել է Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի անցման կետը, մասնավորապես՝ նավահանգստի ադմինիստրացիայի ղեկավարի, ներքին ջրային տրանսպորտի գծով պետական կառավարման ջրավազանային մարմնի, օդանավակայանի (աերոդրոմի) ղեկավարի, երկաթուղային կայանների պետի կարծիքը: Տրանսպորտային ենթակառուցվածքի օբյեկտի ադմինիստրացիայի՝ գրավոր ձեակերպված կարծիքը կցվում է մաքսատան պետի հրամանի նախագծին, որը ներկայացվում է մաքսային գործի բնագավառում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնին՝ համաձայնեցման նպատակով:

11. Անցման կետում մաքսային հսկողության գոտի ստեղծելու մասին մաքսատան պետի հրամանի մեջ պետք է նշվեն՝

1) անցման կետի գտնվելու վայրը.

2) մաքսային հսկողության գոտու սահմանը եւ անձանց, ապրանքների ու տրանսպորտային միջոցների հետ դրա հատման վայրը:

Սույն հոդվածի 5–րդ մասում նշված վայրերում մաքսային հսկողության գոտի ստեղծելու մասին որոշման մեջ պետք է նշվեն՝

1) անցման կետի գտնվելու վայրը.

2) մաքսային հսկողության գոտու սահմանը եւ անձանց, ապրանքների ու տրանսպորտային միջոցների հետ դրա հատման վայրը:

12. Անցման կետում մաքսային հսկողության գոտի ստեղծելու մասին մաքսատան պետի հրամանի մեջ պետք է ներկայացվի մաքսային հսկողության նշված գոտու սահմանի եւ տարածքի գրաֆիկական պատկերը՝ նախագծերի կամ քարտեզների միջոցով:

13. Այլ վայրերում մաքսային հսկողության գոտիներ ստեղծելու մասին որոշումներ կայացնում է այն մաքսատան պետը, որի գործունեության տարածքում են գտնվում այն վայրերն ու տարածքները, որտեղ ստեղծվում են մաքսային հսկողության նման գոտիներ:

14. Մաքսային հսկողության գոտիների ստեղծման մասին որոշումը, որը նախատեսված է սույն հոդվածի 13–րդ մասով, ձեակերպվում է մաքսատան պետի կողմից, որում պետք է նշվեն՝

1) մաքսային հսկողության գոտու գտնվելու վայրը.

2) մաքսային հսկողության գոտու սահմանը եւ անձանց, ապրանքների ու

տրանսպորտային միջոցների հետ դրա հատման վայրը:

3) նշման համար օգտագործվող միջոցները:

15. Սույն հոդվածի 14-րդ մասում նշված՝ մաքսատան մաքսային հսկողության գոտու ստեղծման մասին պետի հրամանի հավելվածում պետք է ներկայացվի մաքսային հսկողության նշված գոտու սահմանի եւ տարածքի գրաֆիկական պատկերը՝ նախագծերի կամ քարտեզների միջոցով:

16. Մաքսային հսկողության ժամանակավոր գոտի կարող է ստեղծվել մաքսակետի պետի որոշմամբ: Նշված որոշումը ձեւակերպվում է մաքսակետի պետի հանձնարարությամբ՝ նշելով մաքսային հսկողության ժամանակավոր գոտու ստեղծման նպատակը, մաքսային հսկողության ժամանակավոր գոտու գտնվելու վայրը, գործողության ժամկետը, սահմանը, անձանց, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների հետ դրա հատման վայրերը, ինչպես նաեւ նշման համար օգտագործված միջոցները:

17. Մաքսային հսկողության գոտու սահմանը նշվում է ուղղանկյան ձեւ ունեցող նշաններով, որոնց կանաչ ֆոնի վրա սպիտակ գույնով կատարված է «Մաքսային հսկողության գոտի» ռուսերեն եւ անգլերեն գրառումը: Նշված նշանները մաքսային հսկողության գոտին նշելու հիմնական միջոցն են: Մաքսային հսկողության գոտին կարող է նշվել՝ «Մաքսային հսկողության գոտի» գրառումը ռուսերենով եւ անգլերենով կատարելով անմիջապես դրա երկայնքում գտնվող պաշտպանական կառույցներին եւ շինությունների պատերին: Թույլատրվում է անգլերենով գրառման փոփոխումը ցանկացած այն լեզվով, որը նպատակահարմար է կիրառման մաքսային հսկողության կոնկրետ գոտի ստեղծելու համար:

18. Մաքսային հսկողության գոտու նշումը կատարվում է դրա սահմանի երկայնությամբ տրանսպորտային ուղիների հետ դրա հատման վայրերում, ինչպես նաեւ անձանց, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների կողմից մաքսային հսկողության գոտու սահմանները հատելու վայրերում: Մաքսային հսկողության գոտին նշելիս հավելյալ կարող են օգտագործվել դրա սահմանի, դրա սահմանի հատման սահմանված վայրերի, մաքսային հսկողության գոտի մուտք ունեցող անձանց ցուցակի, դրա նշման միջոցների եւ դրա գործելու հետ կապված այլ հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ցուցատախտակներ:

19. Մաքսային հսկողության ժամանակավոր գոտու սահմանը կարող է նշվել պաշտպանիչ ժապավենով, ինչպես նաև ժամանակավոր տեղակայված նշաններով: Ընդ որում, թույլատրվում է օժանդակ նյութերի եւ միջոցների օգտագործումը:

20. Մաքսային հսկողության գոտիները վերացվում են մաքսային մարմնի գտնվելու վայրի փոփոխման դեպքում, Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի անցման կետի փակման, մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների պահման վայրի փոփոխման, մաքսային ձեւակերպումների, ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման (վերաբեռնման), դրանց մաքսային տեսազննման ու մաքսային զննման իրականացման վայրերի, մաքսային հսկողության տակ գտնվող՝ ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների կայանման վայրերի տեղակայության փոփոխման դեպքերում: Մաքսային հսկողության գոտու վերացման մասին որոշումը ձեւակերպվում է նման գոտի ստեղծած մաքսային մարմնի հրամանով:

21. Մաքսային հսկողության ժամանակավոր գոտին վերացվում է այն միջոցառումներն ավարտվելուն պես, որոնք հիմք են եղել դրա ստեղծման համար, կամ դրա գործողության ժամկետը լրանալու պահից, որը նշված է մաքսային հսկողության ժամանակավոր գոտի ստեղծելու մասին մաքսային մարմնի որոշման մեջ:

22. Իր գործունեության տարածքում գտնվող մաքսային հսկողության գոտու վերացումից հետո մաքսային մարմինը միջոցներ է ձեռնարկում՝ դրա նշման միջոցները հանելու եւ դրա վերացման մասին շահագրգիռ անձանց տեղեկացնելու առումով:

23. Մաքսային հսկողության գոտիներում, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի երկայնքով Ռուսաստանի Դաշնության պետական սահմանից հինգ կիլոմետր հեռավորությամբ ձգվող գոտու սահմաններում ստեղծված գոտիներում իրականացվող արտադրական եւ այլ առետրատնտեսական գործունեությունը, որը կապված է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրման, բեռնաթափման եւ փոխաբեռնման (վերաբեռնման) հետ, նման ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների կայանատեղիների կազմակերպման եւ սպասարկման հետ, Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով ապրանքներ եւ տրանսպորտային միջոցներ տեղափոխող իրավաբանական ու ֆիզիկական անձանց սպասարկման, մաքսային ձեւակերպումների իրականացման համար շենքերի եւ կառույցների, ինչպես նաև ճարտարագիտական ցանցերի

կառուցման, վերակառուցման հետ, դեպի անցման կետեր ճանապարհների եւ մերձատար ուղիների, Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով ապրանքների ու տրանսպորտային միջոցների տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային եւ ճարտարագիտական կառույցների կառուցման ու վերակառուցման հետ (ներառյալ ավտոմոբիլների կայանատեղերի կառուցումը, ճանապարհային ցանկապատի, ճանապարհային նշանների տեղադրումը), թույլատրվում է մաքսային մարմինների թույլտվությամբ եւ նրանց վերահսկողության ներքո:

24. Արտադրական եւ այլ առետրատնտեսական գործունեությունը, որն իրականացվում է մաքսային հսկողության գոտու սահմաններում, չպետք է խոչընդոտներ առաջացնի մաքսային մարմինների պաշտոնատար անձանց անարգել աշխատանքի համար:

25. Մաքսային հսկողության գոտում արտադրական եւ այլ առետրատնտեսական գործունեության իրականացման թույլտվությունը տրվում է այն մաքսային մարմնի պետի կողմից, որի գործունեության տարածքում է ստեղծվել մաքսային հսկողության գոտին՝ շահագրգիռ անձի գրավոր դիմումի համաձայն:

26. Մաքսային հսկողության գոտում արտադրական եւ այլ առետրատնտեսական գործունեության իրականացումը թույլատրելու համար դիմումը պետք է պարունակի տեղեկություններ այն գործունեության տեսակի եւ բնույթի մասին, որը ենթադրվում է իրականացնել մաքսային հսկողության գոտու սահմաններում, այն անձանց ցուցակը, որոնք իրականացնելու են այդ գործունեությունը, ինչպես նաեւ տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված ժամկետի մասին տեղեկություններ:

27. Մաքսային մարմնի պետը քննում է դիմումը եւ սույն հոդվածի 23 եւ 24 մասերի հետ ենթադրվող գործունեության համապատասխանության դեպքում դիմումի վրա կատարում է հետեւյալ մակագրությունը՝ «Մաքսային հսկողության գոտում արտադրական եւ այլ առետրատնտեսական գործունեություն թույլատրվում է մինչեւ (նշվում է ամսաթիվը)»: Թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում դիմումի վրա կատարվում է հետեւյալ մակագրությունը՝ «Հայտարարված գործունեություն իրականացնելու համար թույլտվության տրամադրումը մերժված է»՝ նշելով մերժման պատճառները:

28. Դիմումի բնօրինակը վերադարձվում է շահագրգիռ անձին, դիմումի պատճենը պահվում է մաքսային մարմնում:

29. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում ապրանքների ժամանակավոր պահպանության վրա՝ սույն Դաշնային օրենքի 89-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 164. Մաքսային հսկողության իրականացման ժամկետները

1. Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության դրույթները պահպանելու առումով ստուգումը պայմանականորեն բացթողնված ապրանքների նկատմամբ, ինչպես նաեւ այն ապրանքների նկատմամբ, որոնք արտահանվել են Ռուսաստանի Դաշնությունից պարտադիր ներմուծման պարտավորությամբ կամ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան, թույլատրվում է ապրանքները մաքսային հսկողության տակ գտնվելու ժամկետների ընթացքում, կամ մինչեւ «ժամանակավոր արտահանում» կամ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերի գործողության եզրափակումը:

2. Ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողություն է իրականացվում ապրանքների՝ մաքսային հսկողության տակ գտնվելու ավարտի պահից երեք տարվա ընթացքում:

Հոդված 165. Հսկողության եւ վերահսկողության գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության այլ դաշնային մարմինների պաշտոնատար անձանց ներգրավումը մաքսային հսկողության իրականացմանը

Ռուսաստանի Դաշնության գործադիր իշխանության՝ հսկողության եւ վերահսկողության գործառույթներ իրականացնող այլ դաշնային մարմինների պաշտոնատար անձանց ներգրավումը մաքսային հսկողության իրականացմանը կատարվում է Ռուսաստանի Դաշնության նախագահի, Ռուսաստանի Դաշնության կառավարության համապատասխան դաշնային օրենքներով, նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ինչպես նաեւ մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի եւ գործադիր իշխանության համապատասխան դաշնային մարմինների համատեղ ակտերով:

Հոդված 166. Մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների տրամադրումը

1. Հայտարարատուն, մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք եւ շահագրգիռ այլ անձինք պարտավոր են մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ տեղեկությունները մաքսային մարմիններին տրամադրել՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 98-րդ հոդվածին համապատասխան:

2. Մաքսային մարմիններն իրավասու են իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմիններից եւ այլ պետական մարմիններից ստանալու այնպիսի տեղեկություններ, որոնք իրենց անհրաժեշտ են՝ մաքսային հսկողություն իրականացնելու համար: Տեղեկությունների փոխանակման կարգը սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից գործադիր իշխանության այն դաշնային մարմնի հետ, որի ենթակայության տակ են գտնվում նշված պետական մարմինները:

3. Մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը պետք է պահվեն հայտարարատուների եւ շահագրգիռ անձանց կողմից, ինչպես նաեւ մաքսային մարմինների կողմից առնվազն երեք օրացուցային տարվա ընթացքում այն տարուց հետո, որի ընթացքում ապրանքները կորցնում են մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների կարգավիճակը: Լիազորված տնտեսական օպերատորները, մաքսային ներկայացուցիչները, ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը, մաքսային պահեստների տիրապետողները, անմաքս առետրի խանութների տիրապետողները եւ մաքսային փոխադրողները պետք է պահպանեն նշված փաստաթղթերը հինգ օրացուցային տարի ժամկետով այն տարուց հետո, որի ընթացքում կատարվել են մաքսային ձեւակերպումները:

Հոդված 167. Բանկերի կողմից մաքսային ստուգումն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների տրամադրումը

1. Մաքսային ստուգում իրականացնող մաքսային մարմինն իրավասու է պահանջելու այն բանկերից, որոնք տնօրինում են ստուգվող կազմակերպությունների (անհատ

ձեռնարկատերերի) գործունեությանը վերաբերող փաստաթղթերը եւ տեղեկությունները, ստուգման առարկայի մասին պայմանագրերի վավերացված պատճենները, գործարքների անձնագրի վավերացված պատճենները, բանկային հսկողության ամփոփագրերը, հաստատող փաստաթղթերի մասին տեղեկանքները, ստորագրությունների նմուշներով եւ կնիքների դրոշմվածքներով քարտերի վավերացված պատճենները, ինչպես նաեւ կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) հաշիվներով կատարվող գործառույթների մասին քաղվածքները՝ ներառյալ գաղտնիք պարունակող քաղվածքները՝ բանկերի եւ բանկային գործունեության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան: Փաստաթղթերի եւ տեղեկությունների տրամադրման մասին հիմնավորված պահանջ ստացած բանկը կատարում է այն՝ վերջինս ստանալու օրվանից հետո հնգօրյա ժամկետում կամ նույն ժամկետում հայտնում է, որ չի տիրապետում պահանջված փաստաթղթերին եւ տեղեկություններին:

2. Չի թույլատրվում մաքսային մարմին ներկայացվող փաստաթղթերի պատճենների նոտարական հաստատման պահանջ ներկայացնել, եթե Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Մաքսային մարմինն անհրաժեշտության դեպքում իրավասու է ծանոթանալու փաստաթղթերի բնօրինակների հետ:

3. Մաքսային մարմնի կողմից բանկ պահանջ ներկայացնելու ձեւը եւ կարգը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

4. Մաքսային մարմինների պահանջով բանկերի կողմից փաստաթղթերի եւ տեղեկությունների տրամադրման ձեւն ու կարգը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ համաձայնեցնելով այն Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի հետ:

Հոդված 168. Այն մաքսային մարմինների լրացուցիչ լիազորությունները, որոնք հայտնաբերել են Ռուսաստանի Դաշնություն անօրինական ճանապարհով ներմուծված ապրանքներ կամ այնպիսի ապրանքներ, որոնց նկատմամբ խախտվել են մաքսային ընթացակարգերի կիրառման կամ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակման պայմանները

1. Այն դեպքում, երբ մաքսային մարմինները մաքսային հսկողության շրջանակներում հայտնաբերում են Ռուսաստանի Դաշնություն անօրինական ճանապարհով ներմուծված ապրանքներ կամ ապրանքներ, որոնց նկատմամբ խախտվել են մաքսային ընթացակարգերի կիրառման կամ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակման պայմանները, որոնց առումով տրամադրված են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ, ինչի հետեւանքով չի կատարվել մաքսատուրքերի, հարկերի վճարումը կամ չեն պահպանվել արգելքները եւ սահմանափակումները, ապա այն անձանցից, որոնք ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում ձեռք են բերել ապրանքներ Մաքսային միության մաքսային տարածքում, այդ ապրանքները ենթակա են առգրավման մաքսային մարմինների կողմից, եթե դրանք չեն առգրավվել եւ դրանց վրա չի դրվել արգելանք՝ վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը կամ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությանը համապատասխան: Նշված ապրանքները մաքսային նպատակներով դիտարկվում են որպես մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ մաքսային մարմնի պետի կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի հիմնավորված որոշման հիման վրա ապրանքների առգրավումն իրականացվում է այն անձի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ, որի մոտ հայտնաբերվել են տվյալ ապրանքները, ինչպես նաեւ առնվազն երկու ընթերակաների ներկայությամբ:

3. Այդ ապրանքների առգրավման մասին կազմվում է ակտ՝ երկու ընթերակաների ներկայությամբ: Ակտում կամ դրան կցվող վերգրության մեջ առգրավված ապրանքները մանրամասնորեն նկարագրվում են՝ նշելով դրանց անվանումը, քանակը եւ առանձին հատկանիշները: Նշված ակտը ստորագրվում է մաքսային մարմնի՝ առգրավում իրականացնող

պաշտոնատար անձի կողմից, այն անձի կամ նրա ներկայացուցչի կողմից, որի մոտ հայտնաբերվել են առգրավվող ապրանքները, ինչպես նաև ընթերակաների կողմից: Ակտի պատճենը հանձնվում է այն անձին, որից առգրավվել են ապրանքները, կամ նրա ներկայացուցչին:

4. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան առգրավված ապրանքները տեղաբաշխվում են ժամանակավոր պահպանության համար նախատեսված պահեստներում՝ սույն Դաշնային օրենքի 202-րդ հոդվածին համապատասխան, կամ այլ վայրերում՝ սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված կանոններով: Առգրավված ապրանքների պահպանության ժամկետը կազմում է մեկ ամիս:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք իրավունք ունեն վճարելու մաքսատուրքերը, հարկերը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 81-րդ հոդվածին, սույն Դաշնային օրենքի 119-րդ հոդվածին համապատասխան, ներկայացնելու սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը, եւ իրականացնելու ապրանքների հայտարարագրումը՝ սույն Դաշնային օրենքի 217-րդ հոդվածին համապատասխան: Մաքսային վճարների նշված գումարների վրա տուժանքներ չեն հաշվեգրվում: Այն դեպքում, երբ տվյալ անձինք կատարում են մաքսային վճարները սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները իրենց մոտ հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, ապա այդ ապրանքները չեն առգրավվում՝ պայմանով, որ կատարվեն տվյալ ապրանքների նկատմամբ սահմանափակումների պահպանման առումով պահանջները:

6. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան առգրավված ապրանքները վերադարձվում են սույն հոդվածի 5-րդ մասում սահմանված պահանջները կատարած անձին՝ նախքան սույն հոդվածի 4-րդ մասում սահմանված առգրավված ապրանքների պահպանության ժամկետի լրանալը: Տվյալ ապրանքները վերադարձնելն իրականացվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, կազմվում է ակտ՝ երեք օրինակից, որը ստորագրվում է ապրանքների առգրավումն իրականացրած մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից, այն անձի կամ նրա ներկայացուցչի կողմից, որին վերադարձվում են առգրավված ապրանքները, ինչպես նաև ապրանքների պահպանումն իրականացրած անձի կամ նրա ներկայացուցչի կողմից: Նշված ակտի երկրորդ օրինակը հանձնվում է այն անձին կամ նրա ներկայացուցչին, որին վերադարձվել են առգրավված ապրանքները, երրորդ

օրինակը՝ ապրանքների պահպանումն իրականացրած անձին կամ նրա ներկայացուցչին:

7. Սույն հոդվածի 5-րդ մասում սահմանված պահանջները կատարելիս սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց կողմից ապրանքները մաքսային նպատակներով դիտարկվում են որպես «մաքսային հսկողության տակ գտնվող» կարգավիճակը կորցրած ապրանքներ, որը չի խոչընդոտում մաքսային կամ այլ պետական մարմիններին իրականացնելու անհրաժեշտ գործողությունները՝ Ռուսաստանի Դաշնություն անօրինական եղանակով ապրանքների ներմուծման գործընթացին մասնակցություն ունեցած անձանց բացահայտելու առումով:

8. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները ձեռք բերած անձինք հրաժարվում են կատարել սույն հոդվածի 5-րդ մասում նշված պահանջները, պահպանության ժամկետը լրանալուն պես տվյալ ապրանքների տնօրինումն իրականացվում է սույն Դաշնային օրենքի 190-րդ հոդվածին համապատասխան:

9. Սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերում սահմանված դրույթները չեն տարածվում այն ապրանքների վրա, որոնց ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն արգելված է, այն ապրանքների նկատմամբ, որոնց շրջանառությունը արգելված է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, թեթեւ արդյունաբերության այն ապրանքների նկատմամբ, որոնց ցանկը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից, ինչպես նաեւ այն ապրանքների նկատմամբ, որոնց առումով սահմանված են քանակական սահմանափակումներ՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան դրանց ներմուծման ժամանակ: Նշված ապրանքները ենթակա են ոչնչացման Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից սահմանվող դեպքերում եւ կարգով այն անձանց հաշվին, որոնք իրականացրել են նշված ապրանքների ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն, եթե նրանք հաստատված են, այն անձանց հաշվին, որոնցից տվյալ ապրանքները առգրավվել են, եթե նշված անձինք տեղյակ են եղել կամ պետք է տեղյակ լինեին առգրավված ապրանքների՝ Ռուսաստանի Դաշնություն անօրինական եղանակով ներմուծման մասին, կամ այլ դեպքերում՝ դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Հոդված 169. Մաքսային հսկողություն իրականացնելիս տեխնիկական միջոցների եւ նավերի ու օդանավերի օգտագործումը

1. Մաքսային հսկողության իրականացման ժամանակի կրճատման եւ դրա արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինների կողմից կարող են կիրառվել մաքսային հսկողության տեխնիկական միջոցներ, որոնց ցանկը եւ կիրառման կարգը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

2. Մաքսային գործառույթներն իրականացնելիս տեխնիկական միջոցների օգտագործմամբ չափումների միասնականության եւ պահանջվող ճշգրտության ապահովումն ու չափագիտական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացվում են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով չափագիտական ստորաբաժանումների կողմից, որոնք ստեղծվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնում եւ դրան ենթակա մաքսային մարմիններում: Մաքսային գործառույթներ իրականացնելիս թույլատրվում է օգտագործել փաստաթղթերով ձեւակերպված այն չափումների արդյունքները, որոնք իրականացվել են այլ անձանց կողմից՝ չափումների միասնականության ապահովման մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային հսկողության նպատակով մաքսային մարմինների նավերի եւ օդանավերի օգտագործման կարգը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝ սույն Դաշնային օրենքին համապատասխան:

Հոդված 170. Ապրանքների եւ տրանսպորտային միջոցների, շինությունների ու այլ վայրերի նույնականացումը

Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների, շինությունների, տարողությունների եւ այլ այն վայրերի նույնականացման միջոցների կիրառման կարգը, որտեղ գտնվում կամ կարող են գտնվել մաքսային հսկողությանը ենթակա ապրանքները, սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր

իշխանության դաշնային մարմնի կողմից:

Հոդված 171. Մաքսային հսկողության արդյունքների կիրառումը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթներ սկսելիս, քաղաքացիական եւ քրեական գործերը քննելիս

Սույն բաժնի դրույթներին համապատասխան ձեւակերպված մաքսային հսկողության իրականացման արդյունքներն այլ ապացույցների հետ կարող են ընդունվել որպես ապացույց՝ քրեական, քաղաքացիական գործերով եւ վարչական իրավախախտումների մասին գործերով եւ ենթակա են գնահատման դատարանի, արբիտրաժային դատարանի կամ պաշտոնատար անձի կողմից տվյալ գործերի, որոշումների, մաքսային մարմինների եւ նրանց պաշտոնատար անձանց գործողության (անգործության) դեմ բերված բողոքների, ինչպես նաեւ արբիտրաժային դատարանի կողմից լուծվող տնտեսական վեճերի վերաբերյալ գործերի քննման ժամանակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությանը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության, արբիտրաժային դատավարության օրենսդրությանը կամ վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 172. Մաքսային փորձաքննությունը մաքսային հսկողության իրականացնելիս Մասնագետների եւ փորձագետների մասնակցությունը մաքսային հսկողություն իրականացնելիս

1. Մաքսային հսկողության իրականացման գործընթացին մասնագետներին եւ փորձագետներին ներգրավելն իրականացվում է այն դեպքերում եւ այնպիսի կարգով, որոնք սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 101-րդ, 102-րդ հոդվածներով եւ 20-րդ գլխով

2. Մաքսային հսկողության իրականացման ընթացքում մաքսային փորձաքննությունն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 20-րդ գլխին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

3. Մաքսային փորձաքննության իրականացման ժամկետը, որը նախատեսված է

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ կետով, կարող է երկարաձգվել մաքսային փորձաքննություն իրականացնող մաքսային մարմնի պետի (պետի տեղակալի) գրավոր թույլտվությամբ՝ նշելով փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ ժամկետով նման երկարաձգման պատճառները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Դաշնային օրենքին համապատասխան՝ բացթողումը չի իրականացվում՝ նախքան փորձաքննության արդյունքները ստանալը: Տվյալ դեպքում փորձաքննությունը պետք է իրականացվի ապրանքների բացթողման ժամկետը չգերազանցող ժամկետներում՝ հաշվի առնելով տվյալ ժամկետի երկարաձգումը, Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

4. Լիազորված այլ կազմակերպությունում մաքսային փորձաքննության իրականացման դեպքում մաքսային փորձաքննության իրականացման ժամկետը կարող է երկարաձգվել լիազորված կազմակերպության ղեկավարի գրավոր թույլտվությամբ մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմնի հետ համաձայնեցմամբ՝ նշելով փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ ժամկետով նման երկարաձգման պատճառները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Դաշնային օրենքին համապատասխան՝ բացթողումը չի իրականացվում նախքան փորձաքննության արդյունքների ստացումը: Տվյալ դեպքում փորձաքննությունը պետք է իրականացվի ապրանքների բացթողման ժամկետը չգերազանցող ժամկետներում՝ հաշվի առնելով տվյալ ժամկետի երկարաձգումը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

5. Մաքսային փորձաքննության իրականացման ժամկետը կասեցվում է ներկայացված օբյեկտների՝ մաքսային փորձաքննության նշանակման մասին որոշման մեջ նշված՝ դրանց ցանկի հետ անհամապատասխանության դեպքում, սակայն ոչ ավելի, քան 10 աշխատանքային օր տեւողությամբ: Մաքսային փորձաքննության իրականացման ժամկետների կասեցման կարգը սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

6. Մաքսային փորձաքննության իրականացումը կարող է մերժվել Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 138-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև եթե մաքսային փորձաքննություն իրականացնող մաքսային մարմնում կամ այլ լիազորված կազմակերպությունում բացակայում է պահանջվող որակավորում ունեցող մաքսային

փորձագետ (փորձագետ):

7. Մաքսային փորձաքննության իրականացման համար ապրանքների փորձանմուշների ու նմուշների ընտրության կարգը սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 144–րդ հոդվածով նախատեսված դրույթների հիման վրա:

8. Մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշման, մաքսային փորձագիտություն իրականացնելիս մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունների ձեւերը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից: Մաքսային փորձաքննություն իրականացնելիս մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացության յուրաքանչյուր էջ՝ ներառյալ հավելվածները, ստորագրվում են մաքսային փորձաքննություն իրականացնող մաքսային փորձագետի (փորձագետի) կողմից եւ վավերացվում մաքսային փորձաքննություն իրականացնող մաքսային մարմնի կամ մաքսային փորձաքննություն իրականացնող՝ լիազորված այլ կազմակերպության կնիքով:

9. Այն դեպքում, երբ Մաքսային միության Մաքսային օրենսգրքին համապատասխան՝ մասնագետների եւ փորձագետների ծառայությունների համար վարձատրությունն իրականացվում է դաշնային բյուջեի միջոցների հաշվին, նման ծախսերի փոխհատուցման կարգը որոշվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

Հոդված 173. Լիազորված այլ կազմակերպության փորձագետի (մասնագետի) ներգրավումը մաքսային փորձաքննության իրականացման գործընթացում

1. Լիազորված այլ կազմակերպության փորձագետներին (մասնագետներին) մաքսային փորձաքննությունը հանձնարարվում է միայն այն դեպքում, երբ այդպիսի փորձաքննության իրականացումն անհնար է մաքսային փորձագետների կողմից:

2. Լիազորված այլ կազմակերպության փորձագետը (մասնագետը) ներգրավվում է մաքսային փորձաքննության իրականացման գործընթացին պայմանագրային հիմունքներով:

3. Այն դեպքում, երբ մաքսային փորձաքննության իրականացումը մաքսային մարմնի կողմից հանձնարարվում է լիազորված այլ կազմակերպության փորձագետին (մասնագետին),

ապա այդ փորձագետը (մասնագետը) պետք է փորձաքննություն նշանակած մաքսային մարմին ներկայացնի անհրաժեշտ մասնագիտական իր գիտելիքները հաստատող փաստաթղթեր:

4. Լիազորված այլ կազմակերպության փորձագետի (մասնագետի) իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 20-րդ գլխում:

5. Մաքսային փորձաքննության իրականացման գործընթացին լիազորված այլ կազմակերպության փորձագետի (մասնագետի) ներգրավման կարգը սահմանվում է մաքսային գործում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

Գլուխ 20. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Հոդված 174. Մաքսային հսկողության իրականացման ձեւերը եւ կարգը

Մաքսային հսկողությունն իրականացվում է մաքսային մարմինների կողմից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 16-րդ եւ 19-դ գլուխներում նախատեսված ձեւերով եւ կարգով՝ հաշվի առնելով սույն Դաշնային օրենքով սահմանված դրույթները:

Հոդված 175. Շինությունների եւ տարածքների մաքսային տեսազննումը

1. Շինությունների եւ տարածքների մաքսային տեսազննումն անցկացվում է շինությունների ու տարածքների մաքսային տեսազննում իրականացնելու համար հանձնարարագրի հիման վրա: Արտագնա մաքսային ստուգման անցկացման դեպքում շինությունների եւ տարածքների մաքսային տեսազննումն իրականացվում է արտագնա մաքսային ստուգման մասին որոշման հիման վրա:

2. Շինությունների եւ տարածքների մաքսային տեսազննումն իրականացվում է հնարավորինս նվազագույն ժամկետում, որն անհրաժեշտ է դրա իրականացման համար, եւ որը չի կարող շարունակվել մեկ աշխատանքային օրվանից ավելի՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Շինությունների եւ տարածքների մաքսային տեսազննումը չի կարող իրականացվել գիշերը:

3. Մաքսային տեսազննումը հետեւյալ դեպքերում կարող է շարունակվել երեք աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում՝

1) մաքսային տեսազննման ենթակա շինություններ եւ տարածքներ մուտք գործելու հնարավորության մերժման եւ (կամ) ապրանքները մաքսային տեսազննման կամավոր ներկայացնելուց հրաժարվելու դեպքում,

2) եթե ապրանքների նույնականացման համար պահանջվում է գործողությունների իրականացում՝ մաքսային տեսազննման ենթակա շինություններում կամ տարածքում, եւ այդ գործողությունները չեն կարող ավարտվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում,

3) եթե տեսազննման ենթակա շինության եւ տարածքի մակերեսի չափը գերազանցում է 1 000 քառակուսի մետրը:

Հոդված 176. Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հաշվառումը մաքսային մարմինների կողմից

Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հաշվառման կարգը եւ ձեւերը սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

Հոդված 177. Ապրանքների հաշվառման համակարգի եւ հաշվետվությունների ստուգումը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքների հաշվառման համակարգի եւ հաշվետվությունների ստուգումը՝ որպես մաքսային հսկողության ձեւ, իրականացվում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց, լիազորված տնտեսական օպերատորների նկատմամբ, ինչպես նաեւ այն ապրանքների նկատմամբ, որոնց համար սահմանվել են «մաքսային տարածքում վերամշակում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ազատ մաքսային գոտի» , «ազատ պահեստ» եւ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգերը՝ այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման սահմանափակումներին զուգակցվող՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնությունների տրամադրմամբ:

2. Միեւնույն ժամանակահատվածի համար ապրանքների հաշվառման համակարգի ստուգումն իրականացվում է մեկ անգամ: Ստուգման արդյունքներն արձանագրվում են ակտում:

3. Ապրանքների հաշվառման համակարգի ստուգումն իրականացվում է մաքսային մարմիններին ներկայացվող հաշվետվությունում պարունակվող տեղեկությունները մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տեղեկությունների հետ համեմատությամբ ստուգման միջոցով, ինչպես նաեւ այն տեղեկությունների՝ մաքսային մարմնին պատճառաբանված

պահանջով ներկայացված՝ հաշվապահական հաշվառման հաշիվներում եւ հաշվետվությունում արտացոլված ու նախնական փաստաթղթերում պարունակվող տվյալների հետ համադրության միջոցով:

4. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող՝ հատուկ պարզեցված ընթացակարգերով աշխատելու հնարավորություններից օգտվող անձինք, ինչպես նաեւ այն անձինք, որոնք օգտագործում եւ (կամ) տիրապետում են օտարերկրյա ապրանքներ՝ «մաքսային պահեստ», «անմաքս առետրի խանութ», «մաքսային տարածքում վերամշակում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ազատ մաքսային գոտի», «ազատ պահեստ» կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման գծով այնպիսի արտոնությունների տրամադրմամբ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելուն առնչվող՝ օգտագործմանը եւ (կամ) տնօրինմանը վերաբերող սահմանափակումներով, պարտավոր են հաշվետվություն ներկայացնել պահպանվող, փոխադրվող, իրացվող, վերամշակվող եւ (կամ) օգտագործվող ապրանքների, ինչպես նաեւ իրականացվող մաքսային ձեւակերպումների վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված հաշվետվությունը կարող է մաքսային մարմին ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային թվային ստորագրության առկայության դեպքում, կամ առանց էլեկտրոնային թվային ստորագրության՝ էլեկտրոնային եղանակով՝ թղթային կրիչի վրա կազմակերպության ղեկավարի, գլխավոր հաշվապահի կամ դրանց կողմից լիազորված անձի ստորագրությամբ եւ կնիքով հաստատված՝ տեղեկատվության պարտադիր տրամադրմամբ: Սույն հոդվածով նախատեսված հաշվետվության ձեւերը սահմանվում են գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

6. Մաքսային ներկայացուցիչը պարտավոր է, մինչեւ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրը՝ եռամսյակային կտրվածքով մաքսային մարմին ներկայացնել աճողական կարգով պատրաստված հաշվետվություն այն ապրանքների մասին, որոնց նկատմամբ իրականացվել են մաքսային ձեւակերպումներ: Այդ հաշվետվության մեջ յուրաքանչյուր

ձեռակերպման համար պետք է նշված լինեն.

- 1) մաքսային ձեռակերպումն իրականացրած մաքսային մարմնի անվանումը,
 - 2) մաքսային հայտարարագրի համարը,
 - 3) հայցված մաքսային ընթացակարգը,
 - 4) ուղարկողի (ստացողի) անվանումը, հարկ վճարողի նույնականացման համարը,
 - 5) ներկայացվող անձի եւ մաքսային ներկայացուցչի միջեւ պայմանագրի համարն ու ամսաթիվը,
 - 6) մաքսային վճարները եւ հարկերը վճարած անձը,
 - 7) վճարված մաքսային վճարների եւ հարկերի գումարը,
 - 8) ապրանքի անվանումը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրի նշումով,
 - 9) ապրանքի մաքսային արժեքը,
 - 10) ապրանքի զտաքաշը,
 - 11) կատարված աշխատանքների եւ տրամադրված ծառայությունների մասին ակտի ամսաթիվն ու համարը,
 - 12) մաքսային հայտարարագիրը լրացրած անձի (նրա գոյության դեպքում) ազգանունը, անունը, հայրանունը. նրա անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի) սերիան եւ համարը:
7. Հայտարարատուն, առնվազն երեք ամիսը մեկ, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման հսկողությունն իրականացնող մաքսային մարմին հաշվետվություն է ներկայացնում՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառմանն առնչվող պահանջների եւ պայմանների կատարման վերաբերյալ՝ վերամշակումից հետո ստացված արդյունքների, թափոնների եւ մնացորդների քանակը ճշտելու նպատակով: Հաշվետվության մեջ, այն մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ, պետք է նշված լինեն.

- 1) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեռակերպված եւ

արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքների անվանումներն ու քանակը՝ համապատասխան մաքսային հայտարարագրերի համարների հետ,

2) վերամշակումից հետո ստացվող այնպիսի արդյունքների անվանումները եւ քանակը, որոնք արտահանվել են Մաքսային միության տարածքից կամ բաց են թողնվել ազատ շրջանառության համար, կամ, համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի, ձեւակերպվել են այլ մաքսային ընթացակարգով՝ համապատասխան մաքսային հայտարարագրերի համարների հետ,

3) մաքսային ընթացակարգով չձեւակերպված՝ վերամշակումից հետո ստացվող արդյունքների անվանումներն ու քանակը,

4) ապրանքների վերամշակման արդյունքում գոյացած թափոնների անվանումները եւ քանակը:

8. Վերամշակումից հետո ստացվող արդյունքների, թափոնների եւ մնացորդների՝ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշված քանակի վերջնական ճշտման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի ավարտից հետո՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, սակայն վերամշակումից հետո ստացվող արդյունքների վերջին խմբաքանակի բացթողման օրվանից ամենաուշը 30 օր անց:

9. Հայտարարատուն, առնվազն երեք ամիսը մեկ, «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի հսկողությունն իրականացնող մաքսային մարմին է ներկայացնում «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման պահանջների եւ պայմանների կատարման վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվության մեջ, այն մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ, պետք է նշված լինեն.

1) վերամշակման համար տրված թույլտվության համաձայն՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքների անվանումներն ու քանակը՝ համապատասխան մաքսային հայտարարագրերի համարների հետ,

2) Մաքսային միության մաքսային տարածք ներմուծված եւ համապատասխան մաքսային

ընթացակարգով ձեւակերպված՝ վերամշակումից հետո ստացվող արդյունքների անվանումներն ու քանակը՝ դրանց առնչվող մաքսային հայտարարագրերի համարների հետ,

3) Մաքսային միության մաքսային տարածք ներմուծված՝ վերամշակումից հետո ստացվող այնպիսի արդյունքների անվանումները եւ քանակը, որոնք չեն ձեւակերպվել մաքսային ընթացակարգով,

4) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ Մաքսային միության այնպիսի ապրանքների անվանումները եւ քանակը, որոնք վերամշակումից ստացվող արդյունքները չեն ներմուծվել Մաքսային միության մաքսային տարածք:

10. Վերամշակումից հետո ստացվող արդյունքների՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշված քանակի վերջնական ճշտման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի ավարտից հետո՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 260-րդ հոդվածին համապատասխան՝ սակայն վերամշակումից հետո ստացվող արդյունքների վերջին խմբաքանակի բացթողման օրվանից ամենաուշը 30 օր անց:

11. Հայտարարատուն, առնվազն երեք ամիսը մեկ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի հսկողությունն իրականացնող մաքսային մարմին է ներկայացնում «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման պահանջների եւ պայմանների կատարման վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվության մեջ այն մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ, պետք է նշված լինեն.

1) ներքին սպառման համար վերամշակման նպատակով տրված թույլտվության համաձայն «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքների անվանումները եւ քանակը՝ համապատասխան մաքսային հայտարարագրերի համարների հետ,

2) ազատ շրջանառության համար բաց թողնված կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի համաձայն այլ մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ վերամշակումից հետո ստացվող արդյունքների անվանումները եւ քանակը՝ համապատասխան մաքսային

հայտարարագրերի համարների հետ,

3) մաքսային ընթացակարգով չձեւակերպված՝ վերամշակումից հետո ստացվող արդյունքների անվանումները եւ քանակը,

4) վերամշակման արդյունքում ստացված թափոնների անվանումները եւ քանակը:

12. Վերամշակումից հետո ստացվող արդյունքների, թափոնների եւ մնացորդների՝ ներքին սպառման համար նախատեսված ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշված քանակի վերջնական ճշտման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի ավարտից հետո՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 273-րդ հոդվածին համապատասխան՝ սակայն վերամշակումից հետո ստացվող արդյունքների վերջին խմբաքանակի բացթողման օրվանից ամենաուշը 30 օր անց:

13. «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ազատ մաքսային գոտի», «ազատ պահեստ» կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքներ օգտագործող եւ (կամ) դրանք տնօրինող անձինք՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման գծով այնպիսի արտոնությունների տրամադրմամբ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելուն առնչվող՝ օգտագործմանը եւ (կամ) տնօրինմանը վերաբերող սահմանափակումներով, ապրանքների բացթողումից հետո, առնվազն վեց ամիսը մեկ կամ մաքսային մարմնի պահանջով պարտավոր են ներկայացնել հաշվետվություն՝ նշված մաքսային ընթացակարգերի կիրառման պահանջների եւ պայմանների կատարմանը, ինչպես նաեւ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինմանն առնչվող սահմանափակումների պահպանման վերաբերյալ: Օտարերկրյա ապրանքներ պահպանող անձինք պարտավոր են պահպանվող ապրանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից սահմանված ժամկետներում: Սույն մասում նշված հաշվետվությունը ներկայացնելու կարգը սահմանվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

14. Լիազորված տնտեսական օպերատորների կողմից հաշվառումն իրականացնելու եւ

մաքսային մարմիններին հաշվետվությունը ներկայացնելու կարգը սահմանվում է սույն Դաշնային օրենքի 96-րդ հոդվածով:

15. Ժամանակավոր պահպանման պահեստների, մաքսային պահեստների, անմաքս առևտրի խանութների տիրապետողների, մաքսային փոխադրողների կողմից մաքսային մարմիններին հաշվետվությունը ներկայացնելու կարգը սահմանում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը:

16. Սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը մաքսային մարմին սահմանված ժամկետում չներկայացնելու եւ (կամ) ոչ ճիշտ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաեւ ոչ հավաստի տեղեկություններ պարունակող հաշվետվություն ներկայացնելու համար պատասխանատվություն են կրում սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձինք՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության օրենսդրության:

Հոդված 178. Մաքսային ստուգման արդյունքների ձեակերպումը եւ դրա արդյունքների հիման վրա որոշումների ընդունումը

1. Մաքսային ստուգման արդյունքները ձեակերպվում են.

1) ներքին (կամերալ) մաքսային ստուգման ակտով՝ ներքին (կամերալ) մաքսային ստուգում իրականացնելու դեպքում,

2) արտագնա մաքսային ստուգման ակտով՝ արտագնա մաքսային ստուգում իրականացնելու դեպքում:

2. Մաքսային ստուգման ակտը կազմվում է երկու օրինակից եւ ստորագրվում է մաքսային ստուգումն անցկացրած՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից:

3. Մաքսային ստուգման ակտը պետք է բովանդակի.

1) տեղեկություններ ստուգման ենթակա անձի մասին,

2) տեղեկություններ մաքսային ստուգումն անցկացրած՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մասին (պաշտոն, ազգանուն, անուն, հայրանուն),

3) Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ (կամ) մաքսային գործի մասին

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության խախտման վերաբերյալ բացահայտված փաստերի (խախտման հատկանիշների) համակարգված նկարագրություն՝ հղում կատարելով այն նորմատիվ իրավական ակտերին, որոնց պահանջները խախտվել են, կամ տեղեկություններ՝ խախտումների բացահայտված փաստերի (հատկանիշների) բացակայության վերաբերյալ,

4) բացահայտված խախտումների կամ դրանց հետեւանքների վերացման, ինչպես նաեւ լրացուցիչ հաշվեգրման եւ լրացուցիչ բռնագանձման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների վերաբերյալ եզրակացություններ եւ առաջարկություններ:

4. Մաքսային ստուգման ավարտի ամսաթիվ է համարվում մաքսային ստուգման ակտը կազմելու ամսաթիվը: Մաքսային ստուգման ակտը հաստատվում է մաքսային ստուգումն անցկացրած՝ մաքսային մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից:

5. Եթե բացահայտվում է մաքսատուրքեր, հարկեր չվճարելու կամ ոչ ամբողջությամբ վճարելու փաստ, ապա ստուգումն իրականացրած մաքսային մարմնի ղեկավարը (ղեկավարի տեղակալը), կամ նրա կողմից լիազորված անձը, մաքսային ստուգման ակտի հիման վրա, միաժամանակ ընդունում է մաքսային գործի բնագավառին առնչվող համապատասխան որոշում (համապատասխան որոշումներ), եթե այդպիսի որոշման (այդպիսի որոշումների) ընդունումը մտնում է նրա իրավասության մեջ: Ընդ որում, մաքսային ստուգման ակտի առաջին օրինակը կցվում է մաքսային ստուգման նյութերին, իսկ մաքսային ստուգման ակտի երկրորդ օրինակը եւ որոշումը (որոշումները) հանձնվում են ստուգման ենթակա անձին եւ (կամ) մաքսատուրքերը, հարկերը վճարողին կամ պատվիրված փոստով (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկվում են նրանց հասցեով՝ մաքսային ստուգումն ավարտվելու օրվանից հետո ամենաուշը հինգ աշխատանքային օր անց: Ակտի եւ որոշման (որոշումների) պատճենները՝ ստուգումն անցկացրած մաքսային մարմնի կողմից այն (դրանք) ընդունելու դեպքում, Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ՝ Ռուսաստանի Միության օրենսդրությամբ նախատեսված գործողություններ իրականացնելու նպատակով, մաքսային ստուգման ավարտից եւ սույն Դաշնային օրենքի համաձայն մաքսային վճարները վճարելու պահանջները ներկայացնելուց հետո ամենաուշը հինգ աշխատանքային օր անց ուղարկվում են այն մաքսային մարմին, որի գործունեության տարածքում իրականացվել է ապրանքի բացթողումը:

6. Մաքսային ստուգումն անցկացրած մաքսային մարմնի որոշման (որոշումների)

իրականացման ժամանակ մաքսային մարմինների համագործակցության կարգը սահմանում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմինը:

7. Այն դեպքում, եթե ստուգման արդյունքների վերաբերյալ որոշման (որոշումների) ընդունումը չի գտնվում մաքսային ստուգումն անցկացրած մաքսային մարմնի իրավասության սահմաններում, ապա մաքսային ստուգման ակտի պատճենն, այդպիսի որոշման (որոշումների) ընդունման նպատակով, ուղարկվում է լիազոր մաքսային մարմին:

Հոդված 179. Արտազնա մաքսային ստուգումների նշանակումը

Արտազնա մաքսային ստուգումն անցկացվում է մաքսային մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից ստորագրված՝ արտազնա մաքսային ստուգման անցկացման մասին որոշման հիման վրա:

Հոդված 180. Արտազնա մաքսային ստուգումը կասեցնող ժամկետը եւ կարգը

1. Արտազնա մաքսային ստուգման կասեցումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված դեպքերում:

2. Արտազնա մաքսային ստուգման դադարեցումը եւ վերսկսումը ձեւակերպվում են նշված ստուգումն անցկացնող մաքսային մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կամ նրա կողմից լիազորված՝ նշված ստուգումն անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից:

3. Արտազնա մաքսային ստուգումը կասեցնելու ժամկետը չի կարող գերազանցել վեց ամիսը: Այն դեպքում, եթե ստուգումը կասեցվել էր Մաքսային միության անդամ պետությունների կամ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններ հարցումներ ուղարկելու անհրաժեշտության հետ կապված՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի, եւ ստուգման արդյունքների համար էական նշանակություն ունեցող՝ հարցվող տեղեկությունները չեն ստացվել վեց ամսվա ընթացքում, ապա նշված ստուգումը կասեցնող ժամկետը կարող է երկարաձգվել երեք ամսով:

Հոդված 181. Մաքսային մարմնի պաշտոնատար անձանց մուտքը ստուգման ենթակա անձի օբյեկտ՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու նպատակով

1. Ստուգման ենթակա անձն իրավունք ունի մերժելու մաքսային մարմինների պաշտոնատար անձանց իր օբյեկտներ մուտք գործելու հնարավորությունը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 133-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան: Եթե ստուգման ենթակա անձը անհիմն կերպով մերժում է արտագնա մաքսային ստուգումն անցկացնող՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց իր օբյեկտ մուտքի հնարավորությունը, ապա կազմվում է ակտ՝ երկու ընթերակաների ներկայությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ակտը ստորագրում են մաքսային մարմնի՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնող պաշտոնատար անձինք, ստուգման ենթակա անձը կամ նրա ներկայացուցիչը, ինչպես նաև ընթերակաները: Այդ ակտի պատճենը հանձնվում է ստուգման ենթակա անձին կամ նրա ներկայացուցչին:

3. Այն դեպքում, եթե ստուգման ենթակա անձը կամ նրա ներկայացուցիչը հրաժարվում են սույն հոդվածին 1-ին մասում նշված ակտը ստորագրելուց, ապա մաքսային մարմնի՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնող պաշտոնատար անձը նշված ակտում դրա մասին համապատասխան գրառում է կատարում: Ստուգման ենթակա անձն իրավունք ունի ակտը ստորագրելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր բացատրություն տրամադրել:

Հոդված 182. Արտագնա մաքսային ստուգման ընթացքում ապրանքների գույքագրման անցկացում

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից անցկացվող՝ ապրանքների գույքագրումն իրականացվում է հարկային մարմինների կողմից ապրանքների գույքագրման համար սահմանված կարգին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության՝ հարկերի եւ հավաքագրումների մասին օրենսդրության համաձայն:

Հոդված 183. Արտագնա մաքսային ստուգման ժամանակ ապրանքների վրա արգելանք դնելու, ապրանքները եւ փաստաթղթերը առգրավելու կարգը

1. Ապրանքների վրա արգելանք դնելը եւ ապրանքների առգրավումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով նախատեսված նպատակներով:

2. Ապրանքների վրա արգելանք դնելու հիմքերն են.

1) հատուկ դրոշմանիշեր, նույնականացման նշաններ կամ այլ եղանակներով կատարված նշագրում չունեցող ապրանքների հայտնաբերումը, եթե ապրանքների այդպիսի դրոշմանիշները, նույնականացման նշանները, նշագրումը պետք է, համաձայն Մաքսային միության մաքսային օրենսդրության կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, զետեղվեն Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների վրա, կամ կեղծ լինելու հատկանիշներ ունեցող՝ դրոշմանիշներով կամ նույնականացման միջոցներով ապրանքների հայտնաբերման դեպքում,

2) ստուգման ենթակա անձի առեւտրային փաստաթղթերում ապրանքների մաքսային հայտարարագրման եւ (կամ) բացթողման փաստերը հաստատող տեղեկությունների բացակայությունը, եթե, Մաքսային միության մաքսային օրենսդրության կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, առեւտրային փաստաթղթերում այդպիսի տեղեկությունների նշումը պարտադիր է Ռուսաստանի Դաշնության տարածքում ապրանքների շրջանառության դեպքում, ինչպես նաեւ՝ տեղեկությունների ոչ հավաստի լինելու բացահայտումը կամ այնպիսի փաստաթղթերի բացակայությունը, որոնցում պետք է նշված լինեին այդպիսի տեղեկությունները, եթե այդպիսի փաստաթղթերի առկայությունը պարտադիր է՝ համաձայն Մաքսային միության մաքսային օրենսդրության կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության,

3) այնպիսի փաստերի բացահայտումը, որոնք կարող են վկայել, որ ստուգման ենթակա ապրանքները կարող են լինել պայմանականորեն բաց թողնված եւ օգտագործվում են այդ ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների խախտմամբ կամ առանց հետեւելու այն նպատակներին, որոնք համապատասխանում են

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնությունների տրամադրման պայմաններին,

4) այնպիսի փաստերի բացահայտումը, որոնք կարող են վկայել ստուգման ենթակա ապրանքների առումով մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնությունների տրամադրման պայմանների եւ (կամ) կարգի չպահպանման մասին,

5) այնպիսի փաստերի բացահայտումը, որոնք կարող են վկայել ստուգման ենթակա ապրանքների՝ մաքսային ընթացակարգի պայմանների եւ պահանջների խախտմամբ օգտագործման մասին:

3. Ապրանքների արգելանքը դրանց տնօրինման եւ օգտագործման արգելքն է: Այն ապրանքները, որոնց վրա արգելանք է դրված, փոխանցվում են դրանք տիրապետողին կամ այդպիսի ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի պահպանման: Արգելանքի տակ դրված ապրանքների օգտագործումը կարող է թույլ տրվի արտագնա մաքսային ստուգումն անցկացնող մաքսային մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կամ նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ այդպիսի ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի դիմումի հիման վրա: Արգելանքի տակ դրված ապրանքների փոխանցումն այլ անձանց, դրանց օտարումը կամ որեւէ այլ կերպ տնօրինումը չի թույլատրվում:

4. Եթե հայտնաբերվում են ստուգման ենթարկվող ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման համար կամ Ռուսաստանի Դաշնության տարածքում շրջանառության համար արգելված լինելու վերաբերյալ փաստեր, ինչպես նաեւ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ապրանքների արգելանքը դրանց պահպանվածության ապահովման բավարար միջոց չէ, մաքսային մարմինները կատարում են ապրանքների առգրավում: Առգրավված ապրանքները տեղավորվում են ժամանակավոր պահպանման պահեստներում՝ սույն Դաշնային օրենքի 202-րդ հոդվածին համապատասխան, կամ այլ վայրերում՝ սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնների համաձայն:

5. Այն դեպքում, եթե մաքսային ստուգումն անցկացնելու համար ստուգման ենթակա անձի փաստաթղթերի պատճենները ներկայացնելը համարվում է անբավարար, եւ մաքսային մարմինները բավարար հիմքեր ունեն ենթադրելու, որ փաստաթղթերի բնօրինակները կարող

են ոչնչացված, թաքցված, ուղղումներով կամ փոխարինված լինել, մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի առգրավելու փաստաթղթերի բնօրինակները: Փաստաթղթերի բնօրինակների առգրավման ժամանակ կազմվում է փաստաթղթերի բնօրինակների առգրավման ակտ՝ երկու օրինակից: Այդ ակտի երկրորդ օրինակը՝ առգրավված փաստաթղթերի կից պատճեններով փոխանցվում է այն անձին, որից առգրավվել են այդ փաստաթղթերը: Փաստաթղթի պատճենում նշվում է փաստաթղթի բնօրինակի առգրավման ակտի համարը եւ ամսաթիվը եւ դրվում է մաքսային մարմնի՝ դրա առգրավումն անցկացրած պաշտոնատար անձի ստորագրությունը:

6. Ապրանքների, փաստաթղթերի առգրավումը եւ ապրանքների վրա արգելանք դնելը կատարվում է մաքսային մարմնի՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնող պաշտոնատար անձի հիմնավորված որոշման հիման վրա՝ ստուգման ենթակա այն անձի ներկայությամբ, որի մոտ հայտնաբերվել են այդպիսի ապրանքներ, փաստաթղթեր, կամ՝ նրա ներկայացուցչի, ինչպես նաեւ առնվազն երկու ընթերակաների ներկայությամբ:

7. Բոլոր առգրավվող ապրանքները, փաստաթղթերը կամ այն ապրանքները, որոնց վրա արգելանք է դրվում, ներկայացվում են ընթերականերին եւ ապրանքների, փաստաթղթերի առգրավմանն ու ապրանքների վրա արգելանք դնելուն մասնակցող այլ անձանց, եւ, անհրաժեշտության դեպքում՝ փաթեթավորվում, կնքվում կամ կապարակնքվում են: Առգրավված փաստաթղթերը պետք է համարակալվեն, ժապավենվեն եւ դրանց վրա պետք է դրվի ստուգման ենթակա անձի (նրա ներկայացուցչի) կնիքը կամ ստորագրությունը: Այն դեպքում, եթե ստուգման ենթակա անձը (նրա ներկայացուցիչը) հրաժարվում է իր կնիքը կամ ստորագրությունը դնել առգրավվող փաստաթղթերի վրա, ապա փաստաթղթերի առգրավման ակտում այդ մասին հատուկ նշում է արվում:

8. Ապրանքների, փաստաթղթերի առգրավման, ապրանքների վրա արգելանք դնելու մասին ակտ է կազմվում: Այդ ակտում կամ դրան կից վերգրություններում մանրամասն նկարագրվում են առգրավված ապրանքները, փաստաթղթերը կամ այն ապրանքները, որոնց վրա արգելանք է դրվել՝ դրանց անվանումների, քանակի եւ անհատական հատկանիշների նշումով: Նշված ակտը ստորագրվում է մաքսային մարմնի՝ առգրավումը կամ արգելանքը իրականացրած պաշտոնատար անձը, այն անձը, որի մոտ հայտնաբերվել են առգրավվող ապրանքները, փաստաթղթերը կամ արգելանքի տակ դրված ապրանքները, կամ այդ անձի

ներկայացուցիչը, ինչպես նաև՝ ընթերակաները: Ակտի պատճենը հանձնվում է այն անձին, որի մոտ հայտնաբերվել են ապրանքները, փաստաթղթերը, կամ այդ անձի ներկայացուցչին:

9. Առգրավված ապրանքները, փաստաթղթերը վերադարձնելը եւ դրված արգելանքը հանելն իրականացվում է արտագնա մաքսային ստուգման ավարտի օրվանից ոչ ուշ, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները ենթակա են կալանման՝ սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածին համապատասխան, կամ այն դեպքում, երբ ապրանքները, փաստաթղթերը ենթակա են առգրավման կամ արգելանքի տակ վերցնելու՝ Ռուսաստանի Դաշնության՝ վարչական իրավախախտումների մասին օրենսդրությանը, Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության վերաբերյալ օրենսդրությանը կամ սույն Դաշնային օրենքի 168-րդ հոդվածին համապատասխան: Առգրավված ապրանքների, փաստաթղթերի վերադարձը եւ դրված արգելանքը հանելն իրականացվում է մաքսային մարմնի՝ արտագնա մաքսային ստուգումն անցկացրած պաշտոնատար անձի որոշման հիման վրա: Առգրավված ապրանքները, փաստաթղթերը վերադարձնելու, դրված արգելանքը հանելու մասին որոշումը կազմվում է երկու օրինակից: Նշված որոշման երկրորդ օրինակը հանձնվում է այն անձին, որի մոտ հայտնաբերվել են ապրանքները, փաստաթղթերը, կամ՝ այդ անձի ներկայացուցչին: Առգրավված ապրանքները ենթակա են վերադարձվելու այն անձին, որից դրանք առգրավվել են: Առգրավված ապրանքները վերադարձնելու դեպքում երեք օրինակից ակտ է կազմվում, որը ստորագրվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից, այն անձի կողմից, որին վերադարձվում են առգրավված ապրանքները, կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև առգրավված ապրանքների պահպանումն իրականացնող անձի, կամ դրա ներկայացուցչի կողմից: Նշված ակտի երկրորդ օրինակը հանձնվում է այն անձին, որին վերադարձվել են առգրավված ապրանքները, կամ նրա ներկայացուցչին, իսկ երրորդ օրինակը՝ առգրավված ապրանքների պահպանումն իրականացնող անձին կամ նրա ներկայացուցչին: Առգրավված փաստաթղթերը ենթակա են վերադարձման ստուգման ենթակա անձին կամ նրա ներկայացուցչին: Առգրավված փաստաթղթերի վերադարձի դեպքում երկու օրինակից ակտ է կազմվում, որը ստորագրվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի եւ ստուգման ենթակա անձի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից: Նշված ակտի երկրորդ օրինակը հանձնվում է ստուգման ենթակա անձին կամ նրա ներկայացուցչին:

10. Առգրավված ապրանքների պահպանումն իրականացվում է այն անձի հաշվին, որից առգրավվել են ապրանքները: Եթե մաքսային ստուգումն անցկացնելու ընթացքում չի

բացահայտվում, որ այդպիսի ապրանքների նկատմամբ խախտվել է Մաքսային միության օրենսդրությունը եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությունը, ապա այդպիսի պահպանման հետ կապված ծախքերը վերաբերում են դաշնային բյուջեի ծախսային պարտավորություններին: Նշված միջոցները դաշնային բյուջեից փոխհատուցելու կարգը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

11. Ապրանքների վրա արգելանք դնելու, ապրանքների եւ փաստաթղթերի առգրավման բոլոր փաստերի մասին տեղեկությունները նշվում են արտագնա մաքսային ստուգման արդյունքներն արտացոլող ակտում:

12. Այն դեպքերում, երբ առգրավված ապրանքները, կամ այն ապրանքները, որոնց վրա արգելանք է դրվել, ժամանակավորապես պահվում են սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածին համապատասխան, կամ երբ ապրանքները կամ փաստաթղթերն առգրավվում են կամ արգելանքի տակ են դրվում վարչական իրավախախտումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը, Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության վերաբերյալ օրենսդրությանը կամ սույն Դաշնային օրենքի 168-րդ հոդվածին համապատասխան, ապա ապրանքները, փաստաթղթերը չեն վերադարձվում, ապրանքների, փաստաթղթերի՝ սույն հոդվածին համապատասխան իրականացված առգրավումը կամ արգելանքը համարվում է հանված, իսկ արտագնա մաքսային ստուգման ակտում նշվում է այն փաստաթղթի համարը, որի հիման վրա ապրանքները, փաստաթղթերը ժամանակավորապես պահվել, առգրավվել կամ կալանվել են:

13. Արտագնա մաքսային ստուգման ավարտի օրվան հաջորդող երկու ամսվա ընթացքում չպահանջված՝ առգրավված ապրանքները փոխանցվում են դաշնային սեփականությանը դատարանի (արբիտրաժի դատարանի) որոշման հիման վրա՝ սույն Դաշնային օրենքի 21-րդ գլխին համապատասխան:

Հոդված 184. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց իրավունքները մաքսային ստուգում անցկացնելիս

Մաքսային ստուգում անցկացնելիս՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձինք օգտվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածով նախատեսված

իրավունքներից, ինչպես նաև նրանք իրավունք ունեն.

1) լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստանալուն հավակնող՝ ստուգման ենթակա անձից պահանջելու եւ նրանից էլեկտրոնային տարբերակով ստանալու տեղեկություններ ապրանքների հաշվառման համակարգից, ինչպես նաև՝ ստանալու այդ համակարգից թղթային կրիչի վրա կատարված քաղվածքներ՝ ստուգման ենթակա անձի ղեկավարի, գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված եւ ստուգման ենթակա անձի կնիքով հաստատված,

2) արտագնա մաքսային ստուգման անցկացման ժամանակ ստանալու, իրենց իրավասության շրջանակում, ստուգման ենթակա անձի՝ ավտոմատացված տեղեկատվական համակարգերի տվյալների բազաներ եւ բանկեր մուտքի հնարավորություն՝ հաշվի առնելով տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջները,

3) արտագնա մաքսային ստուգման անցկացման ժամանակ ստուգելու ստուգման ենթակա անձի ներկայացուցիչների անձը եւ (կամ) լիազորությունները հաստատող փաստաթղթերը,

4) որոշում ընդունելու մաքսային փորձաքննության նշանակման մասին, եթե մաքսային ստուգման անցկացման ընթացքում ծագող հարցերի պարզաբանման համար պահանջվում են մասնագիտական գիտելիքներ:

5) իրականացնելու սույն Դաշնային օրենքով եւ դաշնային այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 185. Ստուգման ենթակա անձի պարտականությունները մաքսային ստուգումն անցկացնելու ժամանակ

Ստուգումն անցկացնելու ժամանակ ստուգման ենթակա անձը պետք է կատարի Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված պարտականությունները, ինչպես նաև.

1) փաստաթղթերի (տեղեկատվության) բացակայության եւ (կամ) այլ այնպիսի

հանգամանքների առաջացման դեպքում, որոնք խոչընդոտում են այդ փաստաթղթերը (տեղեկատվությունը) սահմանված ժամկետներում ներկայացնելը, պետք է՝ մինչև փաստաթղթերը (տեղեկատվությունը) ներկայացնելու սահմանված ժամկետի լրանալը՝ ներկայացնի հարցումը չկատարելու մասին գրավոր բացատրություն,

2) պետք է մաքսային մարմինների՝ արտագնա մաքսային ստուգումն անցկացնող պաշտոնատար անձանց համար ապահովի արտագնա մաքսային ստուգումն անցկացնելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերից (տեղեկատվությունից), ստուգման ենթակա անձի ավտոմատացված տեղեկատվական համակարգերի տվյալների բազաներից եւ բանկերից օգտվելու հնարավորությունը՝ անհրաժեշտ տեղեկատվությանը ծանոթանալու եւ դրանից ընտրություն կատարելու հնարավորությամբ, ինչպես նաեւ թղթային եւ էլեկտրոնային կրիչներով անհրաժեշտ փաստաթղթերի պատճեններն (տեղեկատվության) ստանալը,

3) պետք է ապրանքների փորձանմուշներ եւ նմուշներ ներկայացնի՝ դրանց հետազոտության համար անհրաժեշտ քանակությամբ, այն դեպքում, եթե արտագնա մաքսային ստուգումն անցկացնելու ընթացքում մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային փորձաքննություն նշանակելու վերաբերյալ որոշում են ընդունում,

4) մաքսային մարմնի՝ մաքսային ստուգում անցկացնող պաշտոնատար անձանց պետք է բացատրություններ տա մաքսային ստուգման ուղղություններին առնչվող՝ այդ ստուգման անցկացման ընթացքում ծագող հարցերի վերաբերյալ,

5) պետք է կատարի մաքսային մարմինների՝ մաքսային ստուգումն անցկացնող պաշտոնատար անձանց օրինական պահանջները,

6) պետք է կատարի սույն Դաշնային օրենքով եւ դաշնային այլ օրենքներով նախատեսված այլ պարտականություններ:

**Գլուխ 21. ԴԱՇՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ
ԿԱԼԱՆՎԱԾ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՐԿԱ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ:
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԼԱՆՈՒՄԸ**

Հոդված 186. Ապրանքները դաշնային սեփականությանը փոխանցելը

Ապրանքները դաշնային սեփականության են փոխանցվում.

1) քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով դատարանի որոշման հիման վրա՝ գույքի բռնագրավումը կիրառելու դեպքում՝ դատարանի տվյալ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից,

2) մաքսային մարմնի կամ այլ լիազոր մարմնի դիմումի (հայցի) հիմքով կայացված՝ գույքը տիրագուրկ ճանաչելու կամ առգրավված ապրանքները դաշնային սեփականությանը փոխանցելու մասին դատական ակտի հիման վրա՝ սույն Դաշնային օրենքով սահմանված դեպքերում՝ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից,

3) ապրանքները «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու հիման վրա՝ սկսած ապրանքները «ընդունման եւ հանձնման մասին» ակտի միջոցով մաքսային մարմիններին փոխանցելու օրվանից:

Հոդված 187. Դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքների տնօրինումը

1. Դատական ակտի հիման վրա դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքների տնօրինումն իրականացվում է դրանց իրացման, ոչնչացման կամ օգտահանման եղանակով՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու հիման վրա դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքները ենթակա են փոխանցման գործադիր իշխանության այն դաշնային մարմնին, որը Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից լիազորված է կազմակերպելու պետության սեփականությանը

փոխանցված գույքն իրացնելու, ոչնչացնելու կամ վերամշակելու (օգտահանելու) համար, բացառությամբ այն ապրանքների, որոնց նկատմամբ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված է տնօրինման հատուկ կարգ:

3. Դաշնային սեփականությանը փոխանցված՝ թեթեւ արդյունաբերության այն ապրանքները, որոնց ցանկը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից, ենթակա են ոչնչացման Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 188. Դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքներն անհատույց փոխանցելու՝ գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի իրավունքը

1. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմինն իրավասու է դաշնային սեփականությանը փոխանցված դեղորայքը, սանիտարիայի, հիգիենայի առարկաները, վիրակապական միջոցները, բժշկական նշանակության արտադրատեսակները, արագ փչացող սննդամթերքը, մանկական եւ բուժական սննդի մթերքը, ինչպես նաեւ հագուստը, կոշիկեղենը եւ առաջին անհրաժեշտության այլ առարկաներ անհատույց փոխանցելու սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության ոլորտների հաստատություններին, մանկական հաստատություններին, բնակչության սոցիալական ապահովության մարմիններին. պատմական առարկաները, գիտական նշանակության օբյեկտները եւ մշակութային արժեք չունեցող՝ արվեստի ստեղծագործությունները՝ թանգարաններին. ֆլորայի եւ ֆաունայի տարրերը՝ կենդանաբանական այգիներին, թանգարաններին. պաշտամունքի առարկաները՝ կրոնական կազմակերպություններին:

2. Առետրային գործունեություն իրականացնելու նպատակով դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքների անհատույց փոխանցումը չի թույլատրվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված մարմնի, հաստատության, կազմակերպության՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները առետրային գործունեության նպատակով չօգտագործելու պարտավորությամբ դրանց անհատույց փոխանցման մասին գրավոր դիմումի

առկայության դեպքում, մաքսային մարմինը, նշված ապրանքները դաշնային սեփականությանը փոխանցելու վերաբերյալ փաստաթուղթն ստանալուց հետո, դիտարկում է այդ ապրանքներն անհատույց փոխանցելու հնարավորությունը:

4. Մաքսային մարմինը, սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների անհատույց փոխանցման մասին որոշումն ընդունելու նպատակով, մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմին է ուղարկում իր կողմից հաստատված հետեւյալ փաստաթղթերի պատճենները.

- 1) ապրանքները դաշնային սեփականությանը փոխանցելու վերաբերյալ փաստաթղթեր,
- 2) սույն հոդվածի 1-ին մասում նշված մարմինների, հաստատությունների, կազմակերպությունների՝ ապրանքների անհատույց փոխանցման մասին դիմումները,
- 3) ապրանքի արժեքի մասին տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը,
- 4) անհատույց փոխանցվող ապրանքների որակը եւ անվտանգությունը հաստատող փաստաթղթերը,
- 5) անհատույց փոխանցման ենթակա ապրանքների մշակութային արժեքներ չլինելու մասին վկայող եզրակացությունները (մշակութային արժեքների հատկանիշներ ունեցող ապրանքների առնչությամբ),
- 6) մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող՝ ապրանքներին առնչվող այլ փաստաթղթեր:

5. Միաժամանակ, սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների անհատույց փոխանցման նպատակով փաստաթղթերը գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմին ուղարկելու մասին տեղեկատվությունը հաղորդվում է այն մարմնին, որը Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից լիազորված է տնօրինելու դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքները:

6. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմինը, մաքսային մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, դրանք ստանալուց հետո ամենաուշը 30 օր անց որոշում է կայացնում դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքների անհատույց փոխանցման մասին կարգադրություն ընդունելու կամ

մաքսային մարմնի կողմից ապրանքների փոխանցումն իրականացնելու պատճառաբանված մերժման մասին:

7. Մաքսային մարմինը, գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կարգադրության հիման վրա, «ընդունման եւ հանձնման մասին» ակտի միջոցով կազմակերպում է ապրանքների փոխանցումը սույն հոդվածի 1-ին մասում նշված մարմնի, հաստատության, կազմակերպության այն ներկայացուցչին, որի՝ գույքի ընդունման գործողությունների կատարման լիազորությունները հաստատված են՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ ձեւակերպված համապատասխան փաստաթղթով եւ լիազորագրով:

Հոդված 189. Վարչական իրավախախտումների կամ հանցագործությունների առարկա չհանդիսացող ապրանքները եւ դրանց վերաբերյալ փաստաթղթերը կալանելը

1. Մաքսային մարմինները կալանում են վարչական իրավախախտումների կամ հանցագործությունների առարկա չհանդիսացող ապրանքները եւ դրանց վերաբերյալ փաստաթղթերը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով:

2. Վարչական իրավախախտումների կամ հանցագործությունների առարկա չհանդիսացող ապրանքները եւ այդ ապրանքների վերաբերյալ փաստաթղթերը կալանելու դեպքում Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանվող ձեւով կազմվում է արձանագրություն, որի պատճենները ենթակա են հանձնման փոխադրողին, ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողին կամ որեւէ այլ անձի, որը տիրապետում է կալանված ապրանքներին, ինչպես նաեւ այդ ապրանքներն ստացողին կամ ուղարկողին, եթե այդ անձինք բացահայտվել են մաքսային մարմինների կողմից:

3. Մաքսային մարմիններն առգրավում են սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները եւ փաստաթղթերն այն օրվանից ոչ ուշ, որը հաջորդում է ժամանակավոր պահպանման կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով սահմանված՝ Մաքսային միության մաքսային տարածքից դուրս արտահանումն իրականացնելու, ապրանքների մաքսային հայտարարագրման ժամկետների կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի

152-րդ, 170-րդ, 185-րդ, 192-րդ, 208-րդ, 231-րդ, 234-րդ, 305-րդ եւ 354-րդ հոդվածներով նախատեսված՝ այլ գործողությունների կատարման համար սահմանված ժամկետները լրանալու օրվան՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ կալանելու մասին արձանագրության հիման վրա:

4. Կալանված ապրանքները տեղավորվում են ժամանակավոր պահպանման պահեստներում՝ սույն Դաշնային օրենքի 202-րդ հոդվածին համապատասխան կամ պահպանման համար փոխանցվում են մաքսային մարմնի գործունեության տարածքում պահեստավորման ծառայություններ տրամադրող կազմակերպությանը: Այն ապրանքները, որոնց համար պահանջվում են պահպանման հատուկ պայմաններ, փոխանցվում են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին (հաստատություններին) կամ պետական մարմիններին: Նշված ապրանքները պահպանման փոխանցելու ժամանակ կազմվում է «ընդունման եւ հանձնման մասին» ակտ, որի մեկ օրինակը մնում է մաքսային մարմնի, իսկ երկրորդը՝ ապրանքների պահպանումն իրականացնող կազմակերպության (հաստատության) մոտ: Այդպիսի ակտի պատճենն ուղարկվում է ապրանքների օրինական տիրապետողին, եթե այդ անձը բացահայտված է մաքսային մարմնի կողմից:

5. Կալանված ապրանքները եւ այդ ապրանքների վերաբերյալ փաստաթղթերը ենթակա են վերադարձման միայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված դեպքերում: Նշված ապրանքները վերադարձնելու ժամանակ երեք օրինակից ակտ է կազմվում, որն ստորագրվում է այդ ապրանքների վերադարձն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից, այն անձի կողմից, որին վերադարձվում են կալանված այդպիսի ապրանքները, կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաեւ այդ ապրանքների պահպանում իրականացրած անձի կամ նրա ներկայացուցչի կողմից: Նշված ակտի առաջին օրինակը մնում է մաքսային մարմնում, երկրորդ օրինակը հանձնվում է այն անձին, որին վերադարձվել են կալանված ապրանքները, կամ նրա ներկայացուցչին, իսկ երրորդ օրինակը՝ ապրանքների պահպանությունն իրականացրած անձին, կամ նրա ներկայացուցչին: Կալանված ապրանքների պահպանման ծախսերը փոխհատուցում են այն անձինք, որոնց այդ ապրանքները վերադարձվում են:

6. Կալանված փաստաթղթերը ենթակա են վերադարձման այն անձին, որին վերադարձվում են կալանված ապրանքները, կամ նրա ներկայացուցչին: Կալանված

ապրանքները վերադարձնելու ժամանակ երկու օրինակից ակտ է կազմվում, որը ստորագրում են մաքսային մարմնի՝ փաստաթղթերի վերադարձն իրականացնող պաշտոնատար անձինք եւ այն անձը, որին դրանք վերադարձվում են, կամ նրա ներկայացուցիչը: Նշված ակտի երկրորդ օրինակը հանձնվում է այն անձին, որին վերադարձվում են փաստաթղթերը, կամ նրա ներկայացուցիչն:

7. Մաքսային մարմինները, համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 146-րդ հոդվածի, իրականացնում են կալանված ապրանքների պահպանումը՝ դրանց կալանելու օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ արագ փչացող մթերքների, որոնց պահպանման ժամկետը՝ սկսած կալանելու պահից, կազմում է 24 ժամ, եւ սկսած կալանելու պահից երեք օրվա պահպանման ժամկետ ունեցող այն ապրանքների, որոնց ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք կամ արտահանումն այդ տարածքից արգելված է:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված ժամկետները լրանալուց հետո կալանված չպահանջված ապրանքները ենթակա են իրացման, ոչնչացման կամ օգտահանման՝ սույն Դաշնային օրենքի 190-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 190. Դաշնային սեփականությանը չփոխանցված ապրանքների տնօրինումը

1. Սույն Դաշնային օրենքի 168-րդ հոդվածին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից առգրավված՝ կալանված ապրանքների տնօրինումը՝ դրանց իրացման, ոչնչացման կամ օգտահանման եղանակով՝ իրականացվում է գործադիր իշխանության այնպիսի դաշնային մարմնի կողմից, որին Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը լիազորել է կազմակերպելու պետության սեփականությանը փոխանցված գույքի իրացումը, ոչնչացումը կամ օգտահանումը (այսուհետ սույն հոդվածում՝ լիազոր մարմին):

2. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինը, նախօրոք, սակայն սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ կալանված ապրանքների պահպանման ժամկետի, կամ՝ սույն Դաշնային օրենքի 168-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ առգրավված ապրանքների պահպանման ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ, հայտարարատուին, իսկ, եթե ապրանքները չեն հայտարարագրվել՝ ապրանքների սեփականատիրոջը, իսկ, այն դեպքերում, երբ

սեփականատերը օտարերկրյա անձ է, կամ՝ մաքսային մարմնում ապրանքների սեփականատիրոջ մասին տեղեկությունների բացակայության դեպքում՝ այն անձին, որն ապրանքների տիրապետող էր դրանց կալանելու պահին, կամ այն անձին, որից առգրավվել էին ապրանքները, գրավոր ծանուցում է այն իրադարձության վրա հասնելու ամսաթվի մասին, որը թույլ է տալիս կալանված կամ առգրավված ապրանքները տնօրինել սույն գլխի համաձայն, ինչպես նաև՝ լիազոր մարմնին այդ ապրանքներն առաջիկայում փոխանցելու մասին: Այդպիսի գրավոր ծանուցագիրը կարող է հանձնվել անձամբ սույն մասում նշված անձանց՝ ստորագրությամբ, կամ՝ այդ ծանուցագրի ստացման փաստը եւ ամսաթիվը հաստատող այլ եղանակով: Արագ փչացող ապրանքը կալանվելու դեպքում ծանուցումն իրականացվում է այդպիսի ապրանքը կալանելու օրը օպերատիվ կապի հնարավոր միջոցներով, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փոխանցման միջոցով:

3. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինը սույն Դաշնային օրենքի 189-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ ապրանքների պահպանման ժամկետը լրանալու կամ սույն Դաշնային օրենքի 168-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ առգրավված ապրանքների պահպանման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, երկու օրինակից պահպանման ժամկետները լրանալու մասին ակտ է կազմում:

4. Մաքսային մարմնի՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ակտի օրինակը, այդ ակտը կազմելուց հետո երեք աշխատանքային օրից ոչ ուշ, պատվիրված նամակով (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց: Ակտի երկրորդ օրինակը մնում է մաքսային մարմնում: Ակտի՝ մաքսային մարմնի կողմից հաստատված պատճենը մնում է ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի կամ մաքսային պահեստի տիրապետողի, կամ այլ այնպիսի անձի մոտ, որը պահպանում է կալանված կամ առգրավված ապրանքները:

5. Մաքսային մարմնի՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ակտը հիմք է ծառայում կալանված կամ առգրավված ապրանքները սույն հոդվածին համապատասխան տնօրինելու համար:

6. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինը կատարում է մաքսատուրքերի, հարկերի գումարների հաշվարկը.

1) կալանված ապրանքների նկատմամբ՝ ելնելով մաքսատուրքերի, հարկերի այն գումարներից, որոնք ենթակա կլինեն Վճարման այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեռակերպելու դեպքում՝ այդ ապրանքները կալանելու օրվա դրությամբ հաշվարկված,

2) առգրավված ապրանքների նկատմամբ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 81-րդ հոդվածին համապատասխան:

7. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինը, կալանված կամ առգրավված ապրանքների պահպանման ժամկետը լրանալուց հետո առնվազն երեք աշխատանքային օր անց, լիազոր մարմնին ծանուցում է այդ ապրանքների պահպանման ժամկետները լրանալու, ապրանքների գտնվելու վայրի, դրանց քանակի եւ այլ բնութագրերի մասին, որոնք լիազոր մարմնին անհրաժեշտ են՝ ապրանքների ընդունումն ու արտահանումը կազմակերպելու համար՝ կից ներկայացնելով կալանելու մասին արձանագրության, ինչպես նաեւ սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան կատարված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ենթակա գումարների հաշվարկի պատճենը: Այն դեպքում, երբ կալանված կամ առգրավված ապրանքներն արագ փչացող են, ծանուցումն իրականացվում է ապրանքները կալանելու կամ առգրավելու օրը, այդ թվում՝ օպերատիվ կապի հնարավոր միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փոխանցման եղանակով՝ նշելով որ տվյալ ապրանքները արագ փչացող են: Մաքսային մարմինը կալանված կամ առգրավված ապրանքների պահպանման ժամկետները լրանալու մասին նաեւ ծանուցում է, համապատասխանաբար, ապրանքների հայտարարատուին կամ դրանց սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողի՝ եթե այդ անձինք բացահայտված են, կամ այն անձին, որից առգրավվել են ապրանքները:

8. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինն այդպիսի ապրանքները լիազոր մարմնին է փոխանցում «ընդունման եւ հանձնման մասին» ակտի միջոցով:

9. Լիազոր մարմինը կամ դրա ներկայացուցիչը մաքսային մարմնից ընդունում է եւ հաշվառման, գնահատման եւ տնօրինման նպատակով դուրս է տանում կալանված կամ առգրավված ապրանքները՝ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ մաքսային մարմնի ծանուցագիրն ստանալուց հետո առնվազն 10 աշխատանքային օր անց: Ապրանքները

կալանած կամ առգրաված մաքսային մարմինն իրավասու է երկարաձգելու ապրանքների ընդունման եւ դուրս բերման ժամկետը՝ լիազոր մարմնի կողմից հիմնավորված դիմումի հիման վրա՝ սակայն ոչ ավելի, քան մեկամսյա ժամկետով: Լիազոր մարմինը պետք է տնօրինման նպատակով ընդունի արագ փչացող ապրանքները մաքսային մարմնի՝ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված ծանուցագիրն ստանալուց հետո առնվազն երեք աշխատանքային օր անց:

10. Կալանված կամ առգրավված ապրանքների իրացումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից՝ շուկայական գներով:

11. Վճարման ենթակա եւ մաքսային մարմնի կողմից՝ սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի ամբողջ գումարը դաշնային բյուջե փոխանցումն ապահովելու նպատակով լիազոր մարմինն այդպիսի ապրանքների տնօրինումն իրականացնում է հնարավորինս կարճ ժամկետում, սակայն «ընդունման եւ հանձնման մասին» ակտի ամսաթվից հետո ամենաուշը երեք ամիս անց:

12. Եթե սույն հոդվածի 11-րդ մասում նշված ժամկետի ընթացքում կալանված կամ առգրավված ապրանքները չեն իրացվում, ապա լիազոր մարմինը մաքսային մարմնի հետ համաձայնեցնում է իրացման ժամկետի երկարաձգումը՝ սակայն ոչ ավելի, քան լրացուցիչ երկու ամսով:

13. Այն դեպքում, եթե կալանված կամ առգրավված ապրանքների պահպանման եւ իրացման ծախսերը գերազանցում են դրանց արժեքը, այդպիսի ապրանքները ենթակա են լիազոր մարմնի կողմից ոչնչացման (օգտահանման):

14. Կալանված կամ առգրավված ապրանքների ոչնչացումը կամ վերամշակումը (օգտահանումը), ինչպես նաեւ այդպիսի ապրանքների պահպանմանը եւ փոխադրմանն առնչվող ծախսերի փոխհատուցումն իրականացվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց հաշվին, իսկ այդպիսի անձանց բացակայության դեպքում՝ դաշնային բյուջեի միջոցների հաշվին, եթե առանձին կատեգորիայի ապրանքների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

15. Լիազոր մարմինն ապահովում է կալանված կամ առգրավված ապրանքների պահպանվածությունը՝ սկսած «հանձնման եւ ընդունման մասին» ակտի միջոցով փաստացի

ընդունման պահից մինչև դրանց իրացման, ոչնչացման կամ վերամշակման (օգտահանման) պահը եւ, այդ ապրանքների կորստի դեպքում, պատասխանատվություն է կրում.

1) մաքսային մարմինների առջեւ՝ կորսված ապրանքների մասով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով դաշնային բյուջե կատարվող դրամական միջոցների փոխհատուցման համար,

2) տնօրինման նպատակով իրեն փոխանցված ապրանքները տիրապետողների առջեւ՝ կորսված ապրանքների արժեքն այդ անձանց փոխհատուցելու համար՝ բացի Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 149-րդ հոդվածին համապատասխան պահման ենթակա գումարներից:

16. Այն դեպքում, եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձինք մինչև ապրանքների փոխանցման պահը կատարում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված՝ Մաքսային միության մաքսային տարածքից դուրս ապրանքներն արտահանելուն, այդ ապրանքների մաքսային հայտարարագրմանը կամ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 152-րդ, 170-րդ, 185-րդ, 192-րդ, 208-րդ, 231-րդ, 234-րդ, 305-րդ եւ 354-րդ հոդվածներով նախատեսված այլ գործողություններ կատարելուն առնչվող պարտականությունները, ապա մաքսային մարմինն իրավասու չէ խոչընդոտելու կալանված կամ առգրավված ապրանքներն այդպիսի անձանց հանձնումը:

Հոդված 191. Ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների տնօրինումը

1. Դաշնային սեփականությանը փոխանցված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցները փոխանցվում են դաշնային բյուջե:

2. Լիազոր մարմինը Դաշնային գանձապետարանի հաշվին է փոխանցում կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցները, իր կողմից այդ ապրանքներն ստանալուց հետո ամենաուշը երեք օր անց՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն այդպիսի դրամական միջոցների տնօրինման նպատակով՝ միաժամանակ՝ ապրանքները կալանելը կամ առգրավումն իրականացրած մաքսային մարմին տեղեկություններ ներկայացնելով այդպիսի ապրանքների իրացմանն

առնչվող ծախսերի վերաբերյալ:

3. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինը, սույն հոդվածի 2-րդ մասում նշված դրամական միջոցները Դաշնային գանձապետարանի հաշվին մուտք կատարելուց հետո ամենաուշը հինգ աշխատանքային օր անց, իրականացնում է սույն Դաշնային օրենքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հաշվարկված՝ մաքսատուրքերի, հարկերի գումարների, ինչպես նաև ապրանքների փոխադրման, պահպանման ծախսերի եւ ապրանքների իրացմանն առնչվող այլ ծախսերի գումարների պահում:

4. Մաքսային մարմինը հայտարարատուին է վերադարձնում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն հաշվարկված՝ կալանված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների մնացորդը, իսկ այն դեպքում, եթե հայտարարագրում չի կատարվել՝ ապրանքների սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողի՝ մաքսային մարմնում նրանց մասին տեղեկությունների առկայության դեպքում: Առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների մնացորդը վերադարձվում է այն անձին, որից այդպիսի ապրանքներն առգրավվել էին:

5. Ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմինը, սույն հոդվածի 3-րդ մասում նշված պահումները կատարելուց հետո ամենաուշը հինգ աշխատանքային օր անց՝ պատվիրված փոստով (հանձնման մասին ծանուցմամբ) ծանուցում է սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձանց կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների մնացորդը ստանալու հնարավորության մասին: Եթե մաքսային մարմինը հնարավորություն ունի այդ անձանց ծանուցելու կապի առավել օպերատիվ միջոցներով, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկությունները փոխանցելու միջոցով, ապա այն ծանուցումն իրականացնում է այդ եղանակով՝ միաժամանակ պատվիրված նամակ ուղարկելով:

6. Կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված՝ վերադարձման ենթակա դրամական միջոցների առկայության մասին ծանուցագրի ձեւը սահմանվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

7. Կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական

միջոցների մնացորդի վերադարձն իրականացվում է հայտարարատուի կամ սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձի կողմից ապրանքները կալանած կամ առգրաված մաքսային մարմին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցները Դաշնային գանձապետարանի հաշվին մուտքագրվելուց հետո ամենաուշը երեք ամիս անց:

8. Կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների մնացորդը վերադարձնելու մասին դիմումի՝ մաքսային մարմնի կողմից ուսումնասիրության ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել 10 աշխատանքային օրը՝ սկսած մաքսային մարմնի կողմից վերադարձի մասին դիմումը գրանցելու օրվանից:

9. Կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների մնացորդի վերադարձն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության արժույթով՝ դրամական միջոցների մնացորդը վերադարձնելու մասին դիմումի մեջ նշված հաշվին:

10. Այն դեպքում, եթե կալանված կամ առգրավված ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների մնացորդը վերադարձնելու մասին դիմումը սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված ժամկետում չի ներկայացվում ապրանքները կալանելը կամ դրանց առգրավումն իրականացրած մաքսային մարմին, ապա նշված դրամական միջոցների չպահանջված գումարները հաշվառման են ենթարկվում դաշնային բյուջեի այլ ոչ հարկային եկամուտների կազմում եւ ենթակա չեն վերադարձման:

Հոդված 192. Առանձին տեսակի ապրանքները տնօրինելու առանձնահատկությունները

Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ դրանցից պատրաստված արտադրատեսակների, մշակութային արժեքների, մականշման ենթակա ապրանքների, արժեթղթերի, արժույթային արժեքների, շրջանառությունից հանված այլ ապրանքների եւ Ռուսաստանի Դաշնության տարածքում սահմանափակված շրջանառությամբ ապրանքների տնօրինումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

**Բաժին IV. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԻՑ**

**Գլուխ 22. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Հոդված 193. Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման վայրերը

1. Ապրանքների ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն անմիջապես Մաքսային միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքից պետք է իրականացվի Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 165-րդ հոդվածում նշված ներսերման վայրերում, որոնք Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով անցման կետերն են, մաքսային մարմինների աշխատանքային ժամերին: Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների ներսերման համար Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով անցման կետեր, ինչպես նաև, Ռուսաստանի Դաշնության՝ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին օրենսդրության համաձայն, սահմանել այն դեպքերը եւ կարգը, երբ ապրանքները կարող են Ռուսաստանի Դաշնություն ներս բերվել ներսերման վայրեր չհանդիսացող այլ վայրերից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքին համապատասխան:

2. Մաքսային միության անդամ չհանդիսացող պետություններից Մաքսային միության անդամ պետությունների տարածքով Ռուսաստանի Դաշնություն այնպիսի ապրանքների ներմուծումը, որոնք Մաքսային միության մաքսային տարածք ներս բերվելուց հետո ձեւակերպվում են «տարանցում» մաքսային ընթացակարգով, կարող է իրականացվել փոխադրողի՝ դեպի ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ապրանքների առաքման վայր երթուղու ցանկացած վայրում, բացառությամբ այն դեպքի, երբ ապրանքների փոխադրման երթուղին սահմանվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 217-րդ հոդվածին համապատասխան՝ որպես մաքսային տարանցման պայմանների կատարումն ապահովող միջոց:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում չնշված դեպքում Մաքսային միության անդամ պետությունների տարածքից ապրանքների ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն կարող է իրականացվել ցանկացած վայրում:

4. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված դրույթները փոխադրողին չեն ազատում ճանապարհային երթելեկության, փոխադրման հատուկ կանոնների կիրառմամբ այն սահմանափակումները պահպանելուց, որոնք Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված են ճանապարհային երթելեկության, փոխադրման հատուկ կանոնների կիրառմամբ բեռների տեղափոխման անվտանգության ապահովման նպատակներով, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությանը չառնչվող այլ նպատակներով:

Հոդված 194. Փոխադրողի պարտականությունները Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքից ապրանքների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծման դեպքում

1. Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքից ապրանքների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծման դեպքում փոխադրողը պարտավոր է.

1) ապրանքներն առաքել ներսերման վայր կամ սույն Դաշնային օրենքի 193-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան սահմանված այլ վայր,

2) ապրանքները ներկայացնել մաքսային մարմին,

3) մաքսային մարմին ներկայացնել այն փաստաթղթերը եւ տեղեկությունները, որոնց ցանկը սահմանված է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 159-րդ հոդվածով,

4) ներկայացնել սահմանված արգելքների եւ սահմանափակումների պահպանումը հաստատող հավաստագրեր, թույլտվություններ, լիցենզիաներ կամ այլ փաստաթղթեր, եթե Մաքսային միության մաքսային օրենսդրության կամ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն՝ այդպիսի փաստաթղթերը պետք է մաքսային մարմին ներկայացվեն ներսերման վայրում,

5) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելուն կամ դրանց մաքսային

հայտարարագրմանը առնչվող մաքսային ձեւակերպումներ իրականացնել՝ համաձայն մաքսային ընթացակարգի, Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրության համաձայն:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ եւ 5-րդ կետերում նշված գործողությունները կարող են կատարվել ցանկացած շահագրգիռ անձի կողմից:

3. Վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ ներսբերման վայր ապրանքների առաքումը ընդհատող այլ իրադարձությունների դեպքում փոխադրողը պարտավոր է ձեռնարկել Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված միջոցները:

4. Փաստաթղթերը եւ տեղեկությունները ներսբերման վայրում փոխադրողի անունից կարող են ներկայացվել փոխադրողի հանձնարարությամբ գործող ցանկացած այլ անձի կողմից:

5. Այն դեպքում, երբ ներսբերման վայրում մաքսային մարմին են ներկայացվում ստանդարտ փոխադրագրեր (տրանսպորտային փաստաթղթեր), որոնց ձեւը եւ բովանդակությունը սահմանված է տրանսպորտի բնագավառում միջազգային այնպիսի համաձայնագրերով, որոնց մասնակից է Ռուսաստանի Դաշնությունը, ապա այդպիսի փաստաթղթերը ռուսերենով թարգմանել չի պահանջվում, եթե փաստաթղթերը կազմված են անգլերենով կամ որպես փոխադրագրերի (փոխադրման փաստաթղթերի) կազմման միջազգային չափանիշ նախատեսված այլ օտար լեզվով:

Հոդված 195. Ապրանքների արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից

1. Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի՝ ապրանքների արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից՝ Մաքսային միության մաքսային տարածքից դուրս պետք է իրականացվի մաքսային մարմինների աշխատանքային ժամերին Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 162-րդ հոդվածում նշված դուրսհանման այնպիսի վայրերում, որոնք Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով անցման կետերն են: Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է Ռուսաստանի Դաշնությունից առանձին կատեգորիայի ապրանքների դուրսհանման համար սահմանելու Ռուսաստանի Դաշնության

պետական սահմանով անցման կետերը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության՝ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի վերաբերյալ օրենսդրության համաձայն, սահմանելու այն դեպքերը եւ կարգը, երբ ապրանքների դուրսհանումը Ռուսաստանի Դաշնությունից կարող է իրականացվել այլ՝ համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի դուրսհանման վայրեր չհանդիսացող վայրերում:

2. Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների դուրսհանման դեպքում փոխադրողը պարտավոր է մաքսային մարմին ներկայացնել Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 159-րդ եւ 163-րդ հոդվածներով սահմանված փաստաթղթերը եւ տեղեկությունները: Փաստաթղթերը եւ տեղեկությունները փոխադրողի անունից կարող են ներկայացվել փոխադրողի հանձնարարությամբ գործող՝ ցանկացած այլ անձի կողմից:

3. Այն դեպքերում, երբ Մաքսային միության տարածքի սահմաններից դուրս դուրսհանումն իրականացվում է Մաքսային միության այլ անդամ պետությունների տարածքից, այդպիսի ապրանքների տեղափոխումը Ռուսաստանի Դաշնությունից դեպի Մաքսային միության անդամ պետության տարածք կարող է իրականացվել ցանկացած վայրում, եթե այլ բան նախատեսված է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

4. Սույն հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանումը թույլատրվում է դրանց մաքսային հայտարարագրումը եւ այնպիսի այլ գործողություններ իրականացնելուց հետո, որոնք անհրաժեշտ են՝ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու եւ ապրանքները բաց թողնելու համար, բացառությամբ սույն Դաշնային օրենքի 313-րդ հոդվածին համապատասխան էլեկտրահաղորդման գծերով էլեկտրաէներգիայի արտահանման:

5. Ռուսաստանի Դաշնությունից Մաքսային միության անդամ պետություններ Մաքսային միության ապրանքների կարգավիճակ ունեցող ապրանքների արտահանումը, համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի, իրականացվում է առանց Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների, եթե այլ բան սահմանված չէ Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Սույն մասի դրույթները Ռուսաստանի Դաշնությունից ապրանքներ արտահանող անձանց չեն ազատում արտահանման վերահսկողության բնագավառում

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, Ռուսաստանի Դաշնության արժույթային օրենսդրության պահանջների եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների պահպանումից:

Հոդված 196. Մաքսային մարմինների գործողությունները նախնական տեղեկությունների օգտագործման դեպքում

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային մարմիններին տրամադրվող նախնական տեղեկություններն օգտագործվում են դրանց ուսումնասիրության, վերլուծության եւ ստուգողական միջոցառումների անցկացման համար մինչեւ ապրանքները մաքսային մարմիններ ներկայացնելը՝ հսկողության օբյեկտներ ընտրելու եւ ապրանքների բացթողումն իրականացնելու կամ, ռիսկերի կառավարման համակարգին համապատասխան, հսկողության օբյեկտ չհանդիսացող ապրանքների վերաբերյալ այլ պարտադիր որոշումներ ընդունելու նպատակով՝ ավելի կարճ ժամկետներում, քան Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված ժամկետները:

2. Նախնական տեղեկությունների օգտագործման դեպքում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների կարգը սահմանվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ:

Գլուխ 23. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հոդված 197. Ապրանքների ժամանակավոր պահպանման մասին ընդհանուր դրույթներ

Ապրանքների ժամանակավոր պահպանման էությունը, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց իրավունքները եւ պարտականությունները, ժամանակավոր պահպանման ժամկետները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 167-րդ, 170-րդ եւ 171-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 198. Ապրանքների ժամանակավոր պահպանման վայրերը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 168-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավոր պահպանման վայրերը ժամանակավոր պահպանման պահեստները եւ ժամանակավոր պահպանման հետեւյալ մյուս վայրերն են.

1) մաքսային մարմնի պահեստը,

2) ապրանքներն ստացողի պահեստը՝ սույն Դաշնային օրենքի 200-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

3) լիազորված տնտեսական օպերատորի շինությունը, բաց հրապարակը կամ այլ տարածք՝ համաձայն սույն Դաշնային օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,

4) առանձին շինություններ միջազգային փոստափոխանակման վայրերում՝ համաձայն սույն Դաշնային օրենքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի,

5) օդային կամ երկաթուղային տրանսպորտով ուղեւորի փոխադրման վերաբերյալ պայմանագրի շրջանակում փոխադրվող՝ չստացված կամ չպահանջված ուղեբեռի պահպանման վայրերը,

6) ծովային (գետային) նավահանգստի տարածքի սահմաններում ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման (վերաբեռնման) վայրը,

7) օտարերկրյա ապրանքների բեռնաթափման եւ փոխաբեռնման (վերաբեռնման)

հատուկ սարքավորումներով զինված վայր՝ օդանավակայանի՝ հսկողության տարածքի սահմաններում՝ այն պայմանով, որ Ռուսաստանի Դաշնություն այդպիսի ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման վայրերը համընկնում են,

8) երկաթուղիները եւ կոնտեյներային հրապարակները, որոնք տեղակայված են մաքսային մարմինների հետ համաձայնեցված վայրերում՝ երկաթուղային կայարանների տարածքի սահմաններում, եւ նախատեսված են ապրանքների ժամանակավոր պահպանման համար՝ առանց դրանք տրանսպորտային միջոցներից բեռնաթափելու,

9) այլ դաշնային օրենքներով եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով սահմանված վայրերը:

2. Ապրանքների ժամանակավոր պահպանման վայրը սույն Դաշնային օրենքի 163-րդ հոդվածին համապատասխան ստեղծվող՝ մաքսային հսկողության մշտական կամ ժամանակավոր գոտի է:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-8-րդ կետերով նախատեսված դեպքերում ապրանքների ժամանակավոր պահպանումը դրանց ժամանակավոր պահպանման այլ վայրերում իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի հիման վրա տրվող՝ մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ: Այլ վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանման թույլտվությունը կարող է լինել մեկանգամյա (ապրանքների որոշակի խմբաքանակի ժամանակավոր պահպանման համար) կամ համալիր (որոշակի ժամանակահատվածում օտարերկրյա ապրանքների պարբերական ժամանակավոր պահպանման համար):

4. Ապրանքների՝ այլ վայրերում ժամանակավոր պահպանման թույլտվության պայմանները եւ կարգը, այդ թվում՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելուն ներկայացվող պահանջները սահմանվում են գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

5. Ապրանքների ժամանակավոր պահպանման այլ վայրերում դրանց ժամանակավոր պահպանման համար թույլտվություն ստացված անձի վրա դրվում են սույն Դաշնային օրենքի 200-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված՝ ստացողի պահեստում ապրանքների ժամանակավոր պահպանման իրականացման ժամանակ ապրանքներն ստացողի պարտականությունները:

6. Մաքսային մարմինը հրաժարվում է անձին թույլտվություն տալ ապրանքների ժամանակավոր պահպանման այլ վայրերում դրանց ժամանակավոր պահպանման համար, այն դեպքում, եթե այդ անձը մինչ մաքսային մարմին դիմելու օրը մեկ տարվա ընթացքում բազմիցս (երկու եւ ավելի անգամ) ենթարկվել է վարչական պատասխանատվության Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 16.1 եւ 16.2 հոդվածներով, 16.9 հոդվածի 1-ին մասով, 16.11, 16.13, 16.14, 16.19 հոդվածներով եւ 16.23 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված՝ մաքսային գործի բնագավառին առնչվող վարչական իրավախախտումների համար, բացառությամբ երկաթուղային տրանսպորտի միջոցով ներմուծվող ապրանքների, եթե դրանց ժամանակավոր պահպանումն երկաթուղիների վրա իրականացվում է փոխադրողի կողմից:

7. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմինը սահմանում է ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստ եւ ապրանքների ժամանակավոր պահպանման այլ վայրեր հանձնելու դեպքում մաքսային մարմին փաստաթղթերը եւ տեղեկությունները ներկայացնելու, մաքսային հսկողություն ապահովելու նպատակով ապրանքները ժամանակավոր պահեստ հանձնելու (պահեստից հանելու) կարգն ու ապրանքների ժամանակավոր պահպանման համար նախատեսված՝ դրանց ժամանակավոր պահպանման այլ վայրեր:

Հոդված 199. Ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային ձեւակերպումները

1. Ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստ հանձնելու դեպքում ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները մաքսային մարմին են ներկայացնում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված փաստաթղթերը:

2. Ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստ հանձնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը մաքսային մարմին են ներկայացվում «մաքսային տարանցում» ընթացակարգն (ժամանման վայրում ապրանքները մաքսային մարմին ներկայացնելու) ավարտվելուց հետո ամենաուշը երեք ժամ անց:

3. Մաքսային մարմինը գրանցում է ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը՝ այդ փաստաթղթերն ընդունելուց հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում: Ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը Մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից համարվում է, որ ապրանքները գտնվում են ժամանակավոր պահպանման տակ:

Հոդված 200. Ստացողի պահեստում ապրանքների ժամանակավոր պահպանումը

1. Ստացողի պահեստում ապրանքների ժամանակավոր պահպանումը կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

1) այն ապրանքների ժամանակավոր պահպանման դեպքում, որոնց համար պահանջվում են պահպանման հատուկ պայմաններ, եթե ապրանքների ստացման վայրին բավականին մոտ չկա ապրանքների ժամանակավոր պահպանման համար հարմարեցված՝ ժամանակավոր պահպանման պահեստ,

2) եթե ապրանքներն ստացողները պետական մարմիններ կամ հաստատություններ են:

2. Ապրանքներն ստացողի պահեստում ժամանակավոր պահպանման համար թույլտվությունը տրամադրելիս՝ մաքսային մարմինն իրավասու է պահանջելու մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքներն ստացողները պետական մարմիններ կամ հաստատություններ են:

3. Ապրանքներն ստացողի պահեստում երրորդ անձանց պատկանող օտարերկրյա ապրանքների պահպանումը չի թույլատրվում:

4. Ապրանքներն ստացողը պարտավոր է ապահովել ապրանքների պահպանվածությունը, առանց մաքսային մարմինների թույլտվության՝ ապրանքների նկատմամբ գործողությունների կատարումը թույլ չտալը: Մաքսային մարմինները, ապրանքներն այլ ապրանքներով թաքուն փոխարինելը կամ դրանց նկատմամբ չթույլատրված գործողություններ կատարելը կանխելու նպատակով, իրավասու են ապրանքների փաթեթվածքի կամ այդ ապրանքների պահպանման համար նախատեսված շինության վրա կապարակնիքներ եւ կնիքներ դնելու:

5. Ապրանքներն ստացողը սույն Դաշնային օրենքի 177-րդ հոդվածի 4-8-րդ մասերի

համաձայն ժամանակավոր պահպանման տակ գտնվող ապրանքների մասին պարտավոր է մաքսային մարմինների հաշվետվություն ներկայացնել: Ապրանքների կորստի, դրանք առանց մաքսային մարմինների թույլտվության երրորդ անձանց փոխանցելու դեպքում ապրանքներն ստացողը պարտավոր է վճարել մաքսատուրքերը, հարկերը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 172-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 201. Ապրանքների պահպանումը մաքսային մարմինների ժամանակավոր պահպանման պահեստներում

1. Մաքսային մարմինների ժամանակավոր պահպանման պահեստները բաց տեսակի պահեստներ են եւ պետք է համապատասխանեն սույն Դաշնային օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին:

2. Մաքսային մարմինների ժամանակավոր պահպանման պահեստներում ապրանքների պահպանման ժամանակ մաքսային մարմինների փոխհարաբերությունները՝ ապրանքներն այդ պահեստներ հանձնող անձանց հետ, կառուցվում են համաձայն սույն Դաշնային օրենքի եւ Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգրքի: Մաքսային մարմնի կողմից՝ ապրանքների մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստ հանձնող անձի հետ կնքվող պայմանագրի վրա տարածվում են հրապարակային պայմանագրի համար սահմանված՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրության պահանջները: Ապրանքների պահպանումն իրականացնելու հնարավորության առկայության դեպքում մաքսային մարմնի կողմից այդպիսի պայմանագիր կնքվելուց հրաժարվելը չի թույլատրվում: Ապրանքները մաքսային մարմնի կողմից պահպանման ընդունելը հավաստվում է մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստ ապրանքները հանձնած անձին այնպիսի ձեռով անդորրագիր տրամադրելով, որը սահմանվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

3. Մաքսային մարմինների կողմից ապրանքների պահպանումն իրականացնելու հետ կապված՝ այդ մարմինների իրավունքները, պարտականությունները եւ պատասխանատվությունը բխում են պարտավորությունների բնույթից՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված՝ պահպանման վերաբերյալ ընդհանուր դրույթների՝ հաշվի առնելով սույն Դաշնային օրենքով սահմանված

դրույթները:

4. Մաքսային մարմնի ժամանակավոր պահպանման պահեստում ապրանքների պահպանման համար գանձվում են մաքսավճարներ՝ սույն Դաշնային օրենքի 14-րդ գլխին համապատասխան:

Հոդված 202. Մաքսային մարմինների կողմից ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը

1. Մաքսային մարմինները կարող են ապրանքները հանձնել ժամանակավոր պահպանման պահեստներ սույն Դաշնային օրենքի 168-րդ, 183-րդ եւ 189-րդ հոդվածներին համապատասխան:

2. Այն դեպքում, երբ մաքսային մարմիններն ապրանքները հանձնում են ժամանակավոր պահպանման պահեստ, պահեստը տիրապետողի հետ կնքվում է պայմանագիր՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով:

3. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողին տրվող՝ ապրանքների պահպանման դիմաց վարձատրությունը եւ կորուստների փոխհատուցումն իրականացվում են սույն Դաշնային օրենքի 168-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 10-րդ մասով եւ 189-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անձանց հաշվին:

4. Այն դեպքերում, երբ ապրանքների պահպանման ծախսերը փոխհատուցվում են ապրանքների իրացումից ստացված գումարներից կամ դաշնային բյուջեի միջոցների հաշվին, ծախսերը փոխհատուցվում են՝ ելնելով պահպանման ժամանակահատվածում գործող՝ ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի կողմից սահմանված՝ պահպանման այն գներից (սակագներից), որոնք հայտարարվել են հրապարակային օՖերտայում կամ օգտագործվում են պահպանման համանման պայմաններ պահանջող ապրանքների պահպանման վերաբերյալ պայմանագրեր կնքելիս, իսկ նշված գների (սակագների) փաստաթղթային հիմնավորման բացակայության դեպքում՝ ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի կողմից ապրանքների պահպանման ժամանակ կատարած՝ փաստաթղթային հիմնավորում ունեցող ծախսերի սահմաններում: Ժամանակավոր պահպանման պահեստները տիրապետողին ծախսերի փոխհատուցման կարգը սահմանում է

Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը:

5. Եթե այն անձը, որի ապրանքները մաքսային մարմինները հանձնել են ժամանակավոր պահպանման պահեստ, ապրանքները պահեստից հանելու պահին փոխհատուցել է դրանց պահպանման ծախսերը, իսկ պահպանման ծախսերը, սույն Դաշնային օրենքի 183-րդ հոդվածին համապատասխան, պետք է փոխհատուցվեն դաշնային բյուջեի միջոցների հաշվին, ապա մաքսային մարմինները նշված անձին փոխհատուցում են ծախսերը Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով՝ սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանվող գումարների սահմաններում: Մաքսային մարմինների կողմից ծախսերը փոխհատուցելուց հրաժարվելը կամ դրանք մասնակիորեն մարելը կարող է բողոքարկվել Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Բաժին V. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ**

Գլուխ 24. ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

Հոդված 203. Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն՝ մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները

Մաքսային միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքները, այդ թվում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն Մաքսային միության անդամ պետությունների կողմից տեղափոխվող ապրանքները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից՝ Մաքսային միության մաքսային տարածքից դուրս արտահանվող ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 27-րդ հոդվածի եւ սույն գլխի դրույթների համաձայն՝ այդ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու եւ մաքսային ընթացակարգը փոփոխելու ժամանակ:

Հոդված 204. Ապրանքների մասին հայտարարագիրը

1. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով: Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը սահմանում է ապրանքների, մաքսային ընթացակարգի ցանկերը, ինչպես նաև այն դեպքերը, երբ հայտարարագրումը կարող է գրավոր կատարվել:

2. Ապրանքների մասին հայտարարագրի մեջ նշման ենթակա տեղեկությունները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 181-րդ հոդվածով:

3. Ապրանքների մասին հայտարարագրի լրացման կարգը սահմանվում է Մաքսային միության Հանձնաժողովի որոշմամբ: Մաքսային միության Հանձնաժողովի որոշմամբ սահմանվող դեպքերում ապրանքների մասին հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունների ծավալը կարող է, կախված մաքսային ընթացակարգից, ապրանքների

կատեգորիաներից, դրանք տեղափոխող անձանցից, տրանսպորտի տեսակից, կրճատվել գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

4. Որպես ապրանքների մասին հայտարարագիր՝ կարող են օգտագործվել տրանսպորտային (փոխադրման), առետրային եւ (կամ) այնպիսի այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են «ներքին սպառման համար բացթողում» կամ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների բացթողման համար անհրաժեշտ տեղեկություններ՝ այն ապրանքների հայտարարագրման դեպքում, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 1 000 եվրոյին համարժեք գումարը՝ Մաքսային միության Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, բացառությամբ.

1) ենթակցիզային ապրանքների,

2) լիցենզավորման եւ (կամ) քվոտավորման ենթակա ապրանքների,

3) այն ապրանքների, որոնք, համաձայն Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, ազատվում են մաքսատուրքերի, հարկերի վճարումից՝ բացառությամբ սակագնային առանձնաշնորհումների տրամադրման, ինչպես նաեւ օտարերկրյա պետությունների դիվանագիտական կամ դրանց հավասարեցված ներկայացուցչությունների հասցեներով ներմուծվող կամ արտասահմանում Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչությունների հասցեներով արտահանվող ապրանքների,

4) արժույթի, արժեթղթերի, թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի:

5. Ապրանքների մասին հայտարարագիրը գրավոր ներկայացնելու դեպքում այդպիսի հայտարարագրին զուգահեռ պետք է ներկայացվի նաեւ դրա էլեկտրոնային տարբերակը: Մաքսային միության Հանձնաժողովի որոշմամբ նախատեսված դեպքերում գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված մարմինը սահմանում է, որ մաքսային հայտարարագրի թղթային տարբերակին զուգահեռ դրա էլեկտրոնային պատճենը կարող է չներկայացվել:

6. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու, այն գրանցելու կարգը, դրանում հայտարարագրված տեղեկությունների փոփոխության եւ ապրանքների մասին ներկայացված հայտարարագիրը հետ կանչելու կարգը սահմանվում է Մաքսային միության

Մաքսային օրենսգրքի 190-192-րդ հոդվածներով:

Հոդված 205. Ապրանքների հայտարարագրման վայրը

1. Ապրանքների մասին հայտարարագիրը կարող է ներկայացվել ցանկացած մաքսային մարմին, որը մաքսային հայտարարագրերի գրանցման լիազորություն ունի:

2. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմինն իրավասու է առանձին տեսակի ապրանքների հայտարարագրման համար որոշել որոշակի մաքսային մարմիններ միայն այն դեպքերում, երբ համաձայն սույն Դաշնային օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի, որոշակի կատեգորիայի ապրանքների նկատմամբ մաքսային ձեակերպումների կատարման համար ստեղծվում են մասնագիտացված մաքսային մարմիններ՝ ելնելով մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մոտ այնպիսի ապրանքների մասին մասնագիտական գիտելիքների առկայության անհրաժեշտությունից, ինչպիսիք մշակութային արժեքները, թանկարժեք մետաղներից եւ թանկարժեք քարերից պատրաստված արտադրատեսակները, սպառազինությունը, ռազմական տեխնիկան եւ զինամթերքը, ռադիոակտիվ եւ տրոհվող նյութերն ու մյուս առանձնահատուկ ապրանքներն են, կամ՝ ելնելով այնպիսի ապրանքների արագացված բացթողման պայմանների ստեղծման անհրաժեշտությունից, ինչպիսիք են էքսպրես բեռները, ցուցանմուշները, հատուկ տնտեսական գոտի ներմուծվող եւ հատուկ տնտեսական գոտուց արտահանվող ապրանքները, մյուս ապրանքներն են:

3. Այն դեպքում, երբ ապրանքների հայտարարագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված մաքսային մարմնից տարբեր մեկ այլ մաքսային մարմին, մաքսային մարմինը պետք է հրաժարվի գրանցել այդպիսի հայտարարագիրը՝ Մաքսային օրենսգրքի 190-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Հոդված 206. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելը գրանցելը

1. Մաքսային մարմինը պարտավոր է գրանցել ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու ամսաթիվը եւ ժամանակը գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից սահմանվող կարգով: Այն դեպքում, երբ

ապրանքները էլեկտրոնային եղանակով են հայտարարագրվում, ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու ամսաթվի եւ ժամանակի գրանցումն ու նշված ամսաթվի եւ ժամանակի մասին հայտարարատուին էլեկտրոնային հաղորդագրության ուղարկումն իրականացվում է ավտոմատ կերպով՝ այդպիսի հայտարարագիրը մաքսային մարմինների էլեկտրոնային համակարգում մուտքագրելու օրը:

2. Հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի պահանջով մաքսային մարմինը պարտավոր է տրամադրել գրավոր հաստատում՝ ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու եւ ժամանակի վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարագիրը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, որը թույլ է տալիս ծրագրային միջոցներով գրանցել նշված հայտարարագիրը ներկայացնելու ամսաթիվը եւ ժամանակը:

3. Որպես սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված գործողությունները չկատարելու վերաբերյալ ապացույցներ՝ հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչն իրավունք ունի օգտագործելու ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելը հաստատող ցանկացած եղանակ, այդ թվում՝ տեսա- եւ լուսանկարահանումը, վկաների ցուցմունքները, տեսահսկման խցիկների ցուցմունքները, եթե դրանք տեղադրված են այդպիսի հայտարարագիրը ներկայացնելու վայրերում:

Հոդված 207. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող՝ ապրանքների մասին հայտարարագրի վավերացումը

Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման ժամանակ ապրանքների մասին հայտարարագրի վրա՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ դրվում է թվային ստորագրություն:

Հոդված 208. Ապրանքների մասին հայտարարագիրը լրացնելու հիմք հանդիսացող փաստաթղթերը ներկայացնելը

1. Այն փաստաթղթերի ցանկերը, որոնց հիման վրա լրացվել է ապրանքների մասին հայտարարագիրը եւ որոնք պետք է մաքսային մարմին ներկայացվեն ապրանքների մասին հայտարարագրի հետ, սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 183-րդ,

240-րդ, 253-րդ, 265-րդ, 294-րդ, 299-րդ եւ 308-րդ հոդվածներով: Ելնելով մաքսային ընթացակարգից՝ ապրանքների կատեգորիաներից եւ անձանցից փաստաթղթերի համապատասխան կրճատված ցանկը հաստատվում է՝ սույն Դաշնային օրենքի 232-րդ հոդվածին, 248-րդ հոդվածի 3-րդ մասին, 269-րդ հոդվածի 4-րդ մասին, 279-րդ եւ 283-րդ հոդվածներին համապատասխան:

2. Գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմինն իրավասու է լրացուցիչ կրճատելու ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ ելնելով մաքսային հայտարարագրման եղանակից (գրավոր, էլեկտրոնային), մաքսային ընթացակարգից, ապրանքների եւ անձանց կատեգորիաներից:

3. Մաքսային մարմինն իրավասու է ստուգելու մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված փաստաթղթերի պատճենների համապատասխանությունը դրանց բնօրինակներին, այն դեպքում, եթե այդ պատճենները հաստատված են դրանք ներկայացրած անձի, հայտարարատուի կամ այդպիսի փաստաթղթերը տրամադրած մարմնի կողմից: Ստուգումից հետո փաստաթղթերն անհապաղ վերադարձվում են դրանք ներկայացրած անձին:

4. Հայտարարատուն ապրանքների մասին հայտարարագրեր ընդունելու լիազորություն ունեցող մարմին է ներկայացնում տվյալ անձի՝ մաքսային ձեւակերպումներ կատարելու իրավունակությունը հաստատող փաստաթղթեր՝ առաջին անգամ դիմելիս՝ մեկ անգամ, այդ թվում՝ մինչ այն մաքսային հայտարարագիրը ներկայացնելը, որը կազմելու ժամանակ այդ փաստաթղթերը կօգտագործվեն: Նշված փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում հայտարարատուն պարտավոր է դրա մասին տեղեկացնել այն մաքսային մարմնին, որին այդ փաստաթղթերը ներկայացվել են առաջին անգամ դիմելիս:

5. Անձանց՝ մաքսային ձեւակերպումներ իրականացնելու իրավունակությունը հաստատող փաստաթղթերի շարքին են դասվում.

1) ռուսաստանյան իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերը,

2) օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության հավատարմագրման հավաստագիրը, եթե օտարերկրյա անձն իրավունակ է ներկայանալ որպես ապրանքների հայտարարատու՝ համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի

186-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ ենթակետերի,

3) անձնագիր, եթե ապրանքների հայտարարատուն ֆիզիկական անձ է,

4) իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը կամ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականը,

5) փաստաթղթերը, որոնք Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, վկայում են որպես հայտարարատու ներկայացող անձի հարկային մարմիններում հաշվառման վերցվելու մասին:

6. Հայտարարատուի պահանջով մաքսային մարմինը, որին ներկայացվել են փաստաթղթերը, գրավոր հաստատում է այդպիսի փաստաթղթերի ընդունումը:

7. Եթե ապրանքները հայտարարագրվելու են այն մաքսային մարմնում, որն ապրանքների մասին հայտարարագրեր ընդունելու լիազորություն ունի՝ ապրանքների մասին հայտարարագիրը էլեկտրոնային եղանակով ներկայացնելով, ապա սույն հոդվածի 5-րդ մասում նշված փաստաթղթերը ներկայացվում են մաքսային մարմին, իսկ մաքսային մարմինը այդպիսի փաստաթղթերի ստացման հաստատումը՝ էլեկտրոնային եղանակով է տրամադրում:

8. Եթե առանձին փաստաթղթերը, որոնց հիման վրա կարող է լրացվել ապրանքների մասին հայտարարագիրը, չեն կարող ներկայացվել ապրանքների մասին հայտարարագրի հետ միաժամանակ, ապա, հայտարարատուի գրավոր հիմնավորված դիմումից ելնելով՝ մաքսային մարմինները գրավոր թույլատրում են այդպիսի փաստաթղթերը ներկայացնելը ապրանքների ստացման համար անհրաժեշտ ժամկետում՝ վերջինների բացթողումից հետո, սակայն ապրանքների մասին հայտարարագրի գրանցումից հետո ամենաուշը 45 օր անց: Հայտարարատուն ներկայացնում է փաստաթղթերը սահմանված ժամկետում տրամադրելու մասին գրավոր պարտավորություն: Ապրանքների բացթողման համար անհրաժեշտ արգելքների եւ սահմանափակումների կատարումը հաստատող լիցենզիաները, հավաստագրերը, թույլտվությունները եւ (կամ) այլ փաստաթղթերը ներկայացնելու կարգը սահմանված է սույն Դաշնային օրենքի 219-րդ հոդվածով:

Հոդված 209. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու ժամկետները

1. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու ժամկետները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 185-րդ հոդվածով:

2. Սույն Դաշնային օրենքի 212-217-րդ հոդվածներով սահմանված դեպքերում գործում են ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու հատուկ ժամկետներ:

Հոդված 210. Հայտարարատուն

1. Ապրանքների հայտարարատուն կարող է լինել Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն ստեղծված՝ այն իրավաբանական անձը, որի գտնվելու վայրը Ռուսաստանի Դաշնությունում է, որպես անհատ ձեռներեց գրանցված եւ Ռուսաստանի Դաշնությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձը, ինչպես նաեւ այն ֆիզիկական անձը, որի մշտական բնակության վայրը Ռուսաստանի Դաշնությունում է, որն ունի Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին ենթակետով սահմանված հատկանիշներ:

2. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի դեպքում ապրանքների հայտարարատուներ կարող են լինել Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի 3-րդ ենթակետով նախատեսված հատկանիշներ ունեցող անձինք:

3. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելիս օտարերկրյա անձն իրավունք ունի հանդես գալու որպես ապրանքների հայտարարատու միայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում:

4. Մաքսային հայտարարագրման եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու համար անհրաժեշտ այլ մաքսային ձեւակերպումների իրականացման ժամանակ հայտարարատուի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 187-րդ եւ 188-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 211. Ապրանքների նախնական մաքսային հայտարարագրումը

1. Ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելը (այդ թվում՝ լիազորված տնտեսական օպերատոր չհանդիսացող անձի կողմից) մինչև ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 193-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների նախնական մաքսային հայտարարագրման կարգով: Եթե օտարերկրյա ապրանքների Մաքսային միության մաքսային տարածք ներմուծումն իրականացվում է ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտով, դրանց նախնական հայտարարագրումը կարող է իրականացվել մինչև առաքման վայր տրասպորտային միջոցների ժամանումը:

2. Այն ապրանքները, որոնց հայտարարագրումն իրականացվել է ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու եղանակով, եւ որոնց համար վճարվել են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպման ժամանակ վճարման ենթակա մաքսատուրքերը, հարկերը, Ռուսաստանի Դաշնություն ներսբերվելուց հետո կարող են ներկայացվել Ռուսաստանի Դաշնության պետական սահմանին մոտ գտնվող վայրում տեղակայված մաքսային մարմին՝ մինչ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 193-րդ հոդվածի 6-րդ ենթակետով սահմանված ժամկետը լրանալը:

3. Ապրանքների բացթողման եւ դրանց նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ ապրանքների մասին նախնական հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնի, անցակետում տեղակայված մաքսային մարմնի եւ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանին մոտ գտնվող վայրում տեղակայված մաքսային մարմնի միջև համագործակցության կարգը սահմանվում է գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից:

4. Մաքսատուրքերը, հարկերը վճարողի ցանկությամբ նախնական մաքսային հայտարարագրման ժամանակ վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարները կարող են օգտագործվել այն ապրանքների փոխադրման ժամանակ, որոնց հայտարարագրումն իրականացվել է ապրանքների մասին նախնական հայտարարագիր ներկայացնելու միջոցով՝ որպես մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու գումարներ:

5. Ապրանքների մասին նախնական հայտարարագիրն ընդունած մաքսային մարմինը, մաքսատուրքերը, հարկերը վճարողի դիմումի հիման վրա վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարի չափով տրամադրում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու ապահովման ընդունումն հաստատող այնպիսի փաստաթուղթ, որը նախատեսված է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 85-րդ հոդվածով:

6. Այն դեպքում, եթե օտարերկրյա ապրանքները չեն առաքվել մաքսային մարմնի կողմից սահմանված առաքման վայր, մաքսատուրքերը, հարկերը վճարելու ապահովման վրա տարածվում է բռնագանձում՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 93-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 212. Ապրանքների մասին ոչ լրիվ հայտարարագիրը

1. Եթե հայտարարատուն (այդ թվում՝ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ չունեցող հայտարարատուն) նրանից անկախ պատճառներով չունի մաքսային հայտարարագիրը լրացնելու համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, ապա թույլատրվում է ներկայացնել ապրանքների մասին ոչ լրիվ հայտարարագիր՝ այն պայմանով, որ դրանում հայտարարագրված են ապրանքների բացթողման, մաքսային վճարների հաշվարկի եւ վճարման համար անհրաժեշտ՝ արգելքների եւ սահմանափակումների պահպանումը հաստատող, ինչպես նաեւ ըստ ապրանքների քանակական եւ որակական բնութագրերի համակցության դրանց նույնականացումը թույլ տվող տեղեկությունները:

2. Ապրանքների մասին ոչ լրիվ հայտարարագիր ներկայացնելու դեպքում հայտարարատուն մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում թերի տեղեկությունները ներկայացնելու գրավոր պարտավորություն է ստանձնում. օտարերկրյա ապրանքների համար այդ ժամկետը չի կարող գերազանցել 45 օրը՝ սկսած մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին ոչ լրիվ հայտարարագիրը գրանցելուց օրվանից:

3. Մաքսային միության ապրանքների համար այն ժամկետը, որում հայտարարատուն պարտավոր է ներկայացնել թերի տեղեկությունները, սահմանվում է, ելնելով ապրանքները դուրսհանման վայր փոխադրելու համար անհրաժեշտ ժամանակից, նավագնացական ու այլ պայմաններից, եւ չի կարող գերազանցել ութ ամիսը՝ սկսած մաքսային մարմնի կողմից

ապրանքների մասին ոչ լրիվ հայտարարագիրը գրանցելու օրվանից:

4. Եթե մաքսային մարմինը գրանցում է ապրանքների մասին ոչ լրիվ հայտարարագիրը, ապա կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրության նույն պահանջները եւ պայմանները՝ ներառյալ մաքսային վճարների հաշվարկի եւ վճարման կարգը, որոնք պետք է կիրառվեն ի սկզբանե ապրանքների մասին ամբողջական եւ պատշաճ կերպով լրացված հայտարարագիրը ներկայացնելու դեպքում:

Հոդված 213. Ապրանքների պարբերական մաքսային հայտարարագրումը

1. Այն դեպքում, երբ միեւնույն անձը միեւնույն ապրանքները Մաքսային միության սահմանով կանոնավոր տեղափոխում է սույն հոդվածով նախատեսված կարգին եւ պայմաններին համապատասխան, ապա ցանկացած անձի, որը կարող է որպես հայտարարատու հանդես գալ, Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող (Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող) ապրանքների համար թույլատրվում է ներկայացնել պարբերական հայտարարագիր՝ 30 օրացուցային օրը չգերազանցող առաքման ժամանակահատվածում:

2. Սույն հոդվածի կիրառման նպատակների համար առաքման ժամանակահատվածը հայտարարատուի կողմից հայտարարված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում նախատեսվում է.

1) մաքսային մարմին ներկայացնել Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքները,

2) բեռնել Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքները (ապրանքները հանձնել այն փոխադրողին, որն իրականացնելու է ապրանքների միջազգային փոխադրումը, կամ՝ դրանք հանձնել առաջին փոխադրողին՝ ապրանքների արտահանման նպատակով տրանսպորտային միջոց փոխաբեռնելու (վերաբեռնելու) միջոցով դրանց միջազգային փոխադրումն իրականացնելիս):

3. Սույն հոդվածի կիրառման նպատակներով ապրանքները դիտարկվում են որպես միեւնույնը, եթե, ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, դրանք ունեն միեւնույն անվանումը եւ միեւնույն դասակարգման ծածկագիրը:

4. Ապրանքները դիտարկվում են որպես անձի կողմից մաքսային սահմանով կանոնավոր կերպով տեղափոխվող, եթե 30 օրացուցային օրվա ընթացքում այդ անձն իրականացնում է միեւնույն ապրանքի երեք եւ ավելի առաքում:

5. Ապրանքների խմբաքանակը, որը կարող է հայտարարագրվել ապրանքների մասին պարբերական հայտարարագրում, սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում նշված այն ապրանքներն են, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվում է միեւնույն մաքսային մարմնի կողմից եւ որոնք Ռուսաստանի Դաշնություն են ներմուծվում կամ Ռուսաստանի Դաշնությունից են արտահանվում արտաքին տնտեսական գործարքի կատարման ժամանակ կնքված մեկ պայմանագրով կամ վերամշակումից հետո ստացվող արդյունքների հայտարարագրման ժամանակ ապրանքների վերամշակման համար մեկ թույլտվությամբ կամ արտաքին տնտեսական միակողմանի գործարքով կամ առանց որեւէ գործարքի կատարման՝ անկախ 30 օրացուցային օրը չգերազանցող առաքման ժամանակահատվածում առանձին առաքումների թվից:

6. Պարբերական հայտարարագիր ներկայացնելու միջոցով ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում ներմուծման մաքսատուրքերը վճարվում են այդպիսի հայտարարագիրը ներկայացնելու հետ միաժամանակ՝ ելնելով հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող դրույքաչափերից:

7. Պարբերական հայտարարագիր ներկայացնելու միջոցով ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում կիրառվում են մաքսային մարմնի կողմից հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող արտարժույթների փոխարժեքները, սահմանափակումները:

8. Պարբերական մաքսային հայտարարագրումն իրականացվում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ ապրանքների մեկ խմբաքանակի համար պարբերական հայտարարագիր ներկայացնելով՝ առաքման հայտարարվող ժամանակահատվածի սկզբից առավելագույնը 15 օր առաջ:

9. Ապրանքների մասին պարբերական հայտարարագրում տեղեկությունները հայտարարվում են՝ ելնելով ապրանքների այն քանակից, որը նախատեսվում է ներմուծել կամ արտահանել առաքման հայտարարված ժամանակահատվածում: Ապրանքների մասին պարբերական հայտարարագրում պետք է հայտարարվեն այնպիսի տեղեկություններ, որոնք

անհրաժեշտ են ապրանքների բացթողման, մաքսային վճարների հաշվարկի եւ վճարման համար անհրաժեշտ՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված արգելքների եւ սահմանափակումների պահպանումը հաստատող, ինչպես նաեւ ըստ ապրանքների քանակական եւ որակական բնութագրերի համակցության դրանց նույնականացումը թույլ տվող տեղեկությունները:

10. Հայտարարատուն պարտավոր է ապրանքների մասին պարբերական հայտարարագրում հայտարարված ապրանքների մասին մաքսային մարմին տեղեկություններ ներկայացնել գործադիր իշխանության՝ մաքսային գործի բնագավառում լիազորված դաշնային մարմնի կողմից սահմանված ձեով.

1) ոչ ուշ, քան ներմուծվող ապրանքների առաքման ժամանակահատվածի ավարտից 10 աշխատանքային օր անց,

2) ոչ ուշ, քան արտահանվող ապրանքների հայտարարագրման դեպքում՝ ապրանքների մասին պարբերական հայտարարագրում հայտարարագրված ապրանքների ամբողջ խմբաքանակի փաստացի արտահանումից երկու ամիս անց:

11. Ապրանքների մասին պարբերական հայտարարագրում հայտարարագրված՝ արտահանվող ապրանքները պետք է փաստացիորեն արտահանվեն առաքման ժամանակահատվածի ավարտի օրվան հաջորդող երեք ամսվա ընթացքում: Ապրանքների դուրսհանումը ապրանքների պարբերական հայտարարագրում նշված ծավալը գերազանցող ծավալով, չի թույլատրում:

12. Ապրանքների համար պարբերական հայտարարագիրը համարվում է չներկայացված, եթե այդպիսի հայտարարագրում հայտարարագրվող՝ ապրանքների խմբաքանակի մաս կազմող ապրանքները.

1) փաստացիորեն չեն արտահանվել սույն հոդվածի 8-րդ մասում նշված ժամանակահատվածում,

2) առաքման համար հայտարարված ժամանակահատվածում չեն ներկայացվել ապրանքների մասին պարբերական հայտարարագիրն ընդունած մաքսային մարմին:

13. Պարբերական մաքսային հայտարարագրումը չի կիրառվում այն արտահանվող ապրանքների նկատմամբ, որոնք ենթակա են արտահանման մաքսատուրքերով հարկման եւ

որոնց նկատմամբ սահմանափակումներ են կիրառվում:

14. Արտադրական գործունեություն իրականացնող՝ լիազորված տնտեսական օպերատորն իրավունք ունի օտարերկրյա ապրանքների Ռուսաստանի Դաշնություն ներմուծումից հետո իրականացնելու պարբերական մաքսային հայտարարագրում՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան՝ հետեյալ առանձնահատկություններով.

1) ապրանքների մասին պարբերական հայտարարագրում կարող են նշված լինել լիազորված տնտեսական օպերատորի հասցեով ժամանած բոլոր ապրանքները՝ սկսած ապրանքների առաջին առաքումից եւ մինչեւ դրանց ժամանակավոր պահպանման ժամկետների ավարտը, իսկ ապրանքները, մինչեւ դրանց համար հայտարարագիրը ներկայացնելը բաց թողնելու դեպքում՝ մինչեւ այդ հայտարարագիրը ներկայացնելու ժամկետների ավարտը,

2) ապրանքների մասին պարբերական հայտարարագիրը կարող է ներկայացվել «մաքսային տարածքում վերամշակում» կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող ապրանքների համար:

Հոդված 214. Մաքսային միությունից արտահանվող ապրանքների ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրում

1. Այն դեպքում, երբ Մաքսային միության տարածքից արտահանվում են Մաքսային միության ապրանքներ, որոնց նկատմամբ չեն կարող ներկայացվել դրանց քանակի եւ (կամ) մաքսային արժեքի մասին ստույգ տեղեկություններ, թույլատրվում է այդ ապրանքների ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրումը ժամանակավոր մաքսային հայտարարագիր ներկայացնելու միջոցով (այդ թվում՝ լիազորված տնտեսական օպերատոր չհանդիսացող անձի կողմից): Խողովակաշարերով եւ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նկատմամբ ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրումը կիրառվում է սույն Դաշնային օրենքի 312-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները հաշվի առնելով:

2. Ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրման կիրառումը հայտարարատուին չի ազատում Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ

Ռուսաստանի Դաշնության՝ մաքսային գործի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների եւ պայմանների կատարումից՝ մաքսային վճարներն ամբողջությամբ եւ ժամանակին վճարելու, արգելքները եւ սահմանափակումները, ինչպես նաեւ մաքսային ընթացակարգերի եւ մաքսային հսկողության անցկացման պայմանները պահպանելու առումով:

3. Ներմուծման մաքսատուրքերով հարկվող ապրանքների եւ(կամ) այն ապրանքների նկատմամբ, որոնց առնչությամբ սահմանափակումներ են կիրառվում Ռուսաստանի Դաշնության տարածքից արտահանման ժամանակ, ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրումը թույլատրվում է այն մաքսային մարմնի կողմից, որին ներկայացվում է ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը՝ այդ հայտարարագիրը գրանցելու միջոցով՝ հետեւյալ պայմանների միաժամանակ կատարմամբ.

1) եթե ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ հայտարարատուի վերաբերյալ չկան մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով ուժի մեջ մտած եւ չկատարված որոշումներ,

2) եթե ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ հայտարարատուն այնպիսի արտաքին տնտեսական գործունեություն է իրականացնում մեկ տարուց ոչ պակաս ժամկետում, որի շրջանակներում նա կատարել է ապրանքների ներմուծում Ռուսաստանի Դաշնություն (արտահանում Ռուսաստանի Դաշնությունից) 12 անգամից ոչ պակաս:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված պայմանների կատարումը պարտադիր չէ խողովակաշարերով տեղափոխվող ապրանքների, ինչպես նաեւ այն ապրանքների համար, որոնց հայտարարատուներն են լիազորված տնտեսական օպերատորները կամ այն անձինք, որոնք ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը ներկայացնելու ամսաթվին նախորդող տարվա համար վճարել են 100 միլիոն ռուբլին գերազանցող գումարի չափով մաքսատուրքեր, հարկեր:

5. Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումից հետո հայտարարատուն պարտավոր է ներկայացնել Մաքսային միության մաքսային տարածքից դուրս արտահանված բոլոր ապրանքների մասին՝ մեկ կամ մի քանի ամբողջական եւ պատշաճ կերպով լրացված մաքսային հայտարարագիր: Ապրանքների մասին՝ ամբողջական եւ պատշաճ կերպով լրացված մեկ կամ մի քանի հայտարարագիր ներկայացվում է

հայտարարատուի գրավոր դիմումի հիման վրա մաքսային մարմնի կողմից սահմանվող ժամկետում: Այդպիսի ժամկետ սահմանելու ժամանակ հաշվի է առնվում ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքից փաստացի արտահանման եւ ապրանքների մասին ամբողջական ու պատշաճ կերպով լրացված հայտարարագիր ներկայացնելու համար բավարար տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ ժամկետը: Մաքսային մարմնի կողմից սահմանվող՝ ապրանքների մասին ամբողջական հայտարարագիրը ներկայացնելու ժամկետը կարող է երկարաձգվել հայտարարատուի գրավոր հիմնավորված դիմումի հիման վրա՝ մաքսային մարմնի թույլտվությամբ: Արտահանման մաքսատուրքերով չհարկվող ապրանքների եւ այն ապրանքների մասին ամբողջական հայտարարագիրը, որոնց նկատմամբ սահմանափակումներ չեն կիրառվում, ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել ութ ամիսը՝ սկսած ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագրի գրանցման օրվանից, իսկ այն ապրանքների համար, որոնք հարկվում են արտահանման մաքսատուրքերով կամ որոնց նկատմամբ սահմանափակումներ են կիրառվում, նշված ժամկետը չի կարող գերազանցել վեց ամիսը:

6. Ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագրում թույլատրվում է տեղեկությունների հայտարարում՝ ելնելով ապրանքների մոտավոր քանակ արտահանելու վերաբերյալ մտադրություններից, ապրանքների՝ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխման համար նախատեսվող քանակին համապատասխան որոշվող պայմանական մաքսային արժեքից (գնահատումից), ինչպես նաեւ ապրանքի՝ արտաքին տնտեսական գործարքի պայմաններով նախատեսված սպառողական հատկություններից եւ ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ ապրանքների գինը որոշելու վերաբերյալ կարգից: Ապրանքների դուրսհանումը՝ դրանց մասին ժամանակավոր հայտարարագրում նշված ծավալը գերազանցող ծավալով, չի թույլատրվում:

7. Ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիր կիրառելու դեպքում սահմանափակումները կիրառվում են մաքսային մարմինների կողմից այդ հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ: Արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը կիրառվում են Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման օրվա դրությամբ: Ապրանքների փաստացի արտահանման օր է համարվում Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների դուրսհանման վայրում տեղակայված մաքսային մարմնի կողմից տրանսպորտային փաստաթղթերում (փոխադրագրերում) կամ ապրանքների

դուրսհանումը թույլատրող այլ փաստաթղթերում տեխնոլոգիական նշումների կատարման ամսաթիվը:

8. Սույն հոդվածին համապատասխան հայտարարագրվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերի վճարման պարտավորությունը հայտարարատուի մոտ ծագում է մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը գրանցելու, ինչպես նաեւ ապրանքների մասին ամբողջական հայտարարագիրը գրանցելու պահից:

9. Հայտարարատուի՝ սույն հոդվածին համապատասխան հայտարարագրվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերի վճարման պարտավորությունը դադարում է՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված, ինչպես նաեւ՝ արտահանման մաքսատուրքերի գումարներն ամբողջությամբ վճարելու դեպքերում:

10. Արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման.

1) ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ մինչեւ հայտարարված մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը,

2) ապրանքների մասին ամբողջական հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ապրանքների մասին ամբողջական հայտարարագիրը ներկայացնելու հետ միաժամանակ:

11. Արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման.

1) ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ արտահանվող ապրանքների՝ ժամանակավոր մաքսային հայտարարագրում հայտարարված ծավալի եւ (կամ) արժեքի հիման վրա՝ այդ հայտարարագիրը ներկայացնելու պահի դրությամբ հաշվարկված գումարի չափով,

2) ապրանքների մասին ամբողջական հայտարարագիր ներկայացնելու դեպքում՝ ապրանքների փաստացի արտահանված ծավալի եւ(կամ) փաստացի արտահանված ապրանքների արժեքի հիման վրա հաշվարկված գումարի չափով՝ հաշվի առնելով ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը ներկայացնելու ժամանակ վճարված արտահանման մաքսատուրքերի գումարները:

12. Արտահանման մաքսատուրքերը վճարվում են՝ ելնելով ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող դրույքաչափերից: Ապրանքների համար ամբողջական հայտարարագիրը ներկայացնելիս արտահանման մաքսատուրքերի գումարների լրացուցիչ վճարումն իրականացվում է այն դեպքում, եթե վճարման ենթակա արտահանման մաքսատուրքերի գումարն ավելանում է սույն հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկությունների ճշգրտման եւ (կամ) սույն հոդվածի 7-րդ մասին համապատասխան կիրառման ենթակա մաքսատուրքի դրույքաչափն ավելանալու կամ ապրանքների մասին ամբողջական հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում: Նշված դեպքում տուժանքներ չեն հաշվարկվում: Արտահանման մաքսատուրքերի՝ հաշվարկվածից ավելի վճարված կամ հաշվարկվածից ավելի բռնագանձված գումարները վերադարձնելը, այդ թվում՝ այն դեպքում, երբ վճարման ենթակա արտահանման մաքսատուրքերի գումարները նվազել են՝ սույն հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկությունները ճշգրտելու եւ (կամ) սույն հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ կիրառման ենթակա մաքսատուրքի դրույքաչափը նվազելու կամ ապրանքների մասին ամբողջական հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում, իրականացվում է սույն Դաշնային օրենքի 17-րդ գլխին համապատասխան:

13. Եթե ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրման կիրառման ժամանակ փոփոխվում են ապրանքներն ստացողների մասին տեղեկությունները, ապա հայտարարատուն ապրանքների մասին հայտարարագիրը ներկայացնում է այդպիսի փոփոխություններին համապատասխան: Այդ դեպքում ապրանքների մասին ներկայացվող ամբողջական հայտարարագրերի թիվը պետք է համապատասխանի արտաքին առևտրային պայմանագրերի թվին:

14. Եթե մինչեւ ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագրի օրվան հաջորդող ութամսյա ժամկետի լրանալը, իսկ այն ապրանքների դեպքում, որոնց նկատմամբ կիրառվում են արտահանման մաքսատուրքեր եւ սահմանափակումներ՝ մինչեւ վեցամսյա ժամկետի լրանալը, այդպիսի ապրանքները չեն արտահանվում Մաքսային միության մաքսային տարածքից, ապա ապրանքների մասին ժամանակավոր հայտարարագիրը, որում այդպիսի ապրանքները հայտարարագրվել են արտահանման համար, համարվում է չներկայացված:

Հոդված 215. Սահմանված ժամանակահատվածում ապրանքը՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում հայտարարագրելու առանձնահատկությունները

1. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ապրանքը, որի ներմուծումը կամ արտահանումը նախատեսվում է ապրանքների մի քանի խմբաքանակներով՝ սույն հոդվածի համաձայն սահմանված ժամանակահատվածում, կարող է հայտարարագրվել (նաեւ լիազորված տնտեսական օպերատոր չհանդիսացող անձի կողմից) մեկ դասակարգման ծածկագրի նշումով՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքի՝ սույն հոդվածով նախատեսված հայտարարագրումը կիրառելու պայմանները հետեւյալն են.

1) մինչեւ ապրանքի կամ դրա բաղադրամասերի հայտարարագրումը՝ որպես ապրանքի հայտարարատու հանդես գալու իրավունք ունեցող անձին մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից տրված ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման առկայությունը, որով հաստատվում է չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ապրանքի դասակարգումը՝ ըստ վերջնական տեսքով կամ կոմպլեկտավորված ապրանքի դասակարգման ծածկագրի (սույն հոդվածում այսուհետ՝ դասակարգման վերաբերյալ որոշում),

2) ապրանքի ներմուծման դեպքում՝ դրա բաղադրամասերի մատակարարումը մեկ ստացողի հասցեով այդ անձի կողմից կնքված արտաքին տնտեսական գործարքի շրջանակներում կամ որպես ներդրում ստացողի կանոնադրական կապիտալ, իսկ ապրանքի արտահանման դեպքում՝ ապրանքի բաղադրամասերի մատակարարումը մեկ ուղարկողի կողմից՝ այդ անձի կողմից կնքված արտաքին տնտեսական գործարքի շրջանակներում,

3) ներմուծվող ապրանքի մաքսային հայտարարագրումն իրականացվում է մեկ մաքսային մարմնին՝ «ներքին սպառման կամ ազատ մաքսային գոտու համար բացթողում» մաքսային ընթացակարգերի համաձայն:

3. Մինչեւ ապրանքի հայտարարագրումը, որի ներմուծումը կամ արտահանումն

իրականացվելու է չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում, հայտարարատուն ուղարկում է մաքսատուն, որի գործունեության տարածքում իրականացվելու է ապրանքի հայտարարագրումը, գրավոր ծանուցում ծրագրված մատակարարումների վերաբերյալ (սույն հոդվածում այսուհետ՝ ծանուցում)՝ դրան կցելով հայտարարատուի կողմից հաստատված՝ դասակարգման վերաբերյալ որոշումը: Ծանուցման մեջ նշվում են տվյալներ՝

1) հայտարարատուի վերաբերյալ,

2) դասակարգման վերաբերյալ որոշման մասին (փաստաթղթի համարն ու տրամադրման ամսաթիվը),

3) ապրանքի ներմուծման կամ արտահանման համար նախատեսվող ժամկետների վերաբերյալ,

4) Ռուսաստանի Դաշնության տարածքում ապրանքի գտնվելու վայրի վերաբերյալ, որտեղ իրականացվելու է ապրանքի պահպանումը, մոնտաժը կամ հավաքումը (ներմուծվող ապրանքի դեպքում):

4. Հայտարարատուն իրավունք ունի ծանուցման մեջ նշելու այլ տվյալներ, որոնք նշանակություն ունեն ներմուծվող ապրանքի նկատմամբ մաքսային հսկողությունն իրականացնելու համար:

5. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաեւ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ներմուծվող (արտահանվող) ապրանքի յուրաքանչյուր առանձին խմբաքանակ պետք է ներկայացվի այն մաքսային մարմին, որտեղ իրականացվելու է մաքսային հայտարարագրումը:

6. Արտահանվող ապրանքի բաղադրամասերը ենթակա են բացթողման ներմուծվող ապրանքի բաղադրամասերի բացթողման դիմումի, դրան կցված՝ մաքսային հայտարարագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի, դասակարգման վերաբերյալ որոշման պատճենի եւ ծանուցման հիման վրա:

7. Ներմուծվող ապրանքի բաղադրամասերը ենթակա են պայմանական բացթողման՝ հայտարարատուի կողմից ներկայացված պայմանական բացթողման դիմումի, դրան կցված՝ մաքսային հայտարարագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի, դասակարգման

վերաբերյալ որոշման պատճենի եւ ծանուցման հիման վրա: Պայմանական բացթողման դիմումը (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմումը) կազմվում ու լրացվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի՝ ապրանքների հայտարարագրման վերաբերյալ 180-րդ հոդվածի համաձայն սահմանված ձևով եւ կարգով: Պայմանական բացթողման դիմումի (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմումի) մեջ նշվում է դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին գործունեության ապրանքային անվանացանկի՝ դասակարգման վերաբերյալ որոշման համաձայն:

8. Ոչ ուշ, քան ապրանքի բոլոր բաղադրամասերի ներմուծումից (արտահանման) 30 օր անց մաքսային մարմին պետք է ներկայացվի տվյալ ապրանքի մասին հանրագումարային հայտարարագիր, որի մեջ պետք է նշվի դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին գործունեության ապրանքային անվանացանկի՝ դասակարգման վերաբերյալ որոշման համաձայն: Ապրանքի մասին հանրագումարային հայտարարագիրը ներկայացնելու ժամկետը չպետք է գերազանցի մեկ օրացուցային տարին՝ ապրանքի առաջին խմբաքանակի պայմանական բացթողման դիմումի (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմումի) գրանցման օրվանից: Մաքսային մարմինը կարող է երկարաձգել ապրանքի մասին հանրագումարային հայտարարագիրը ներկայացնելու ժամկետը հայտարարատուի կողմից հիմնավորված գրավոր դիմումի հիման վրա, որի մեջ նշվում է նաեւ ապրանքի մասին հանրագումարային հայտարարագիրը ներկայացնելու համար հայտարարատուին անհրաժեշտ ժամկետը: Ապրանքի մասին հանրագումարային հայտարարագիրը ներկայացնելու ընդհանուր ժամկետը տվյալ դեպքում չի կարող գերազանցել մեկ տարին՝ ապրանքի առաջին խմբաքանակի պայմանական բացթողման դիմումի (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմումի) գրանցման օրվանից:

9. Պայմանական բացթողման դիմումի (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմումի) եւ ապրանքի մասին հայտարարագրի լրացման առանձնահատկությունները սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

10. Ապրանքի հայտարարագրման համար վճարվող մաքսատուրքերն ու հարկերը, սույն հոդվածի դրույթների համաձայն, վճարվում են այն դրույթաչափերով, որոնք կիրառվում են տվյալ ապրանքի նկատմամբ Արտաքին գործունեության ապրանքային անվանացանկի

դասակարգման ծածկագրին համապատասխան՝ դասակարգման վերաբերյալ որոշման եւ ներկայացնելու օրվա դրությամբ գործող ապրանքի մասին հայտարարագրի համաձայն:

11. Սույն Դաշնային օրենքի 107-րդ հոդվածի 11-րդ մասին համապատասխան՝ դասակարգման վերաբերյալ որոշման փոփոխման մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո պայմանական բացթողման դիմումը (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմումը) եւ ապրանքի մասին հանրագումարային հայտարարագիրը լրացվում է դասակարգման վերաբերյալ որոշման փոփոխման հաշվառմամբ:

12. Սույն Դաշնային օրենքի 107-րդ հոդվածի 12-րդ մասին համապատասխան՝ դասակարգման վերաբերյալ որոշման գործողության դադարեցման դեպքում ապրանքի յուրաքանչյուր առանձին խմբաքանակով ներմուծված (արտահանված) ապրանքի բաղադրամասերը ենթակա են հայտարարագրման՝ սահմանված կարգով ներկայացնելով ապրանքի բաղադրամասերի մասին առանձին հայտարարագիր: Ընդ որում, ապրանքի առանձին բաղադրամասեր դասակարգվում են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան եւ ապրանքների դասակարգման կանոնների համաձայն նշված բաղադրամասերի նկատմամբ կիրառվող ծածկագրերով: Ապրանքի առանձին բաղադրամասերի մասին հայտարարագրերը ներկայացնելու ժամկետները չեն կարող գերազանցել 30 օրը՝ դասակարգման վերաբերյալ որոշման գործողությունը դադարեցնելու մասին շահագրգիռ անձին ծանուցելու օրվանից:

13. Սույն հոդվածի 12-րդ մասում նշված ապրանքի առանձին բաղադրամասերի մասին հայտարարագրում մաքսատուրքերի, հարկերի գումարի հաշվարկման դեպքում կիրառվում են մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը, ինչպես նաեւ այդ հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքները: Ապրանքի առանձին բաղադրամասերի մասին հայտարարագրով հավելագրված՝ մաքսային վճարների գումարների վճարումը հետաձգելու յուրաքանչյուր օրվա համար գանձվում են տուժանքներ՝ սկսած պայմանական բացթողման յուրաքանչյուր դիմումը (արտահանվող ապրանքի բաղադրամասի բացթողման դիմում) ներկայացնելու օրվանից՝ մինչեւ հավելագրված գումարների վճարումը կամ անվիճելի կարգով դրանց գանձումը:

14. Սույն հոդվածի դրույթները տարածվում են ցանկացած ապրանքի վրա, որը դասակարգվում է հետեւյալ ապրանքային դիրքերով՝ 7308, 7309 00, 8701, 8702, 8704 10,

8705, 8709, 9301, 9406 00 (բացառությամբ՝ 9406 00 110 0 ենթադիրքերով շարժական տների) եւ 84-86, 88-90 խմբերի դիրքերով՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի:

Հոդված 216. Մեկ ապրանքային խմբաքանակում ներառված՝ տարբեր անվանումներ ունեցող ապրանքների հայտարարագրման առանձնահատկությունները՝ մեկ դասակարգման ծածկագրի նշումով

1. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող կամ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող՝ մեկ ապրանքային խմբաքանակում ներառված՝ տարբեր անվանումներ ունեցող ապրանքները կարող են, հայտարարատուի ցանկությամբ, հայտարարագրվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրի նշումով եւ սույն հոդվածով նախատեսված պայմանների բավարարման դեպքում:

2. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը սահմանում է այն դեպքերը, երբ արտահանվող ապրանքները կարող են հայտարարագրվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրի նշումով: Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու այն դեպքերը, երբ ներմուծվող ապրանքները չեն կարող հայտարարագրվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրի նշումով:

3. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքները կարող են դասակարգվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրի նշումով, եթե այդ դասակարգման ծածկագրին համապատասխանում է մաքսատուրքի ամենաբարձր դրույքաչափը: Եթե մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքներին համապատասխանում են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մաքսատուրքերի միեւնույն դրույքաչափերով մի քանի դասակարգման ծածկագրեր, ապա նշվում է ապրանքի այն դասակարգման ծածկագիրը, որին համապատասխանում է ակցիզների ամենաբարձր դրույքաչափը, իսկ ակցիզների հավասար դրույքաչափերի դեպքում՝ ավելացված արժեքի հարկի ամենաբարձր դրույքաչափը:

4. Այն ապրանքների խմբաքանակներում, որոնք կարող են հայտարարագրվել Արտաքին

տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրով, պետք է ներառված լինեն այնպիսի ապրանքներ, որոնց նկատմամբ սահմանված են միայն մաքսատուրքի կամ ակցիզի արժեքային (ադվալորային) (այդ թվում՝ զրոյական) կամ սպեցիֆիկ (յուրահատուկ)(այդ թվում՝ զրոյական) դրույքաչափեր, ինչպես նաև այդ ապրանքների նկատմամբ պետք է կիրառվի միեւնույն արտոնյալ ռեժիմը՝ կախված ապրանքների ծագման երկրից:

5. Եթե մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքների դեպքում հարկվում են մաքսատուրքի ու ակցիզի սպեցիֆիկ (յուրահատուկ) դրույքաչափեր, ապա չափման միավորները, որոնցով կիրառվում են մաքսատուրքի կամ ակցիզի սահմանված դրույքաչափերը, պետք է լինեն նույնը՝ ըստ մաքսային վճարների յուրաքանչյուր տեսակի:

6. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքները, որոնց դեպքում համապատասխանաբար ներմուծման կամ արտահանման մաքսային վճարներ չեն հարկվում, կարող են հայտարարագրվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի այն դասակարգման ծածկագրի նշումով, որի արժեքն ամենաբարձրն է տվյալ ապրանքային խմբաքանակում:

7. Մեկ ապրանքային խմբաքանակում ներառված բոլոր ապրանքների անվանումների ու քանակի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են հայտարարատուի կողմից ապրանքների ցուցակի տրամադրման միջոցով: Որպես նման ցուցակ կարող են օգտագործվել բեռնառաքման բնութագրերը, փաթեթավորման թերթիկները, վերգրությունները (զույքացուցակները) եւ նմանատիպ այլ փաստաթղթեր: Ապրանքների ցուցակն ուսումնասիրվում է մաքսային նպատակներով՝ որպես ապրանքների մասին հայտարարագրի անբաժանելի մաս:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխանելու փաստը ստուգելու նպատակով՝ մաքսային մարմինն իրավասու է պահանջել հայտարարատուից տեղեկություններ ներկայացնելու հայտարարագրվող առանձին ապրանքների վերաբերյալ :

9. Եթե մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքների նկատմամբ կիրառվում են արգելքներ ու սահմանափակումներ, ապա դրանց հայտարարագրումն իրականացվում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկ դասակարգման ծածկագրի նշումով, եւ նշված ապրանքների նկատմամբ չեն կիրառվում սույն

հողվածի 1–7–րդ մասերը:

Հոդված 217. Ապրանքների հայտարարագրման լրացուցիչ դեպքեր

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի եւ սույն Դաշնային օրենքի համաձայն՝ ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման հետեւյալ դեպքերում.

1) ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքների հայտնաբերումը գնորդի մոտ՝ սույն Դաշնային օրենքի 168–րդ հոդվածի 5–րդ մասի համաձայն,

2) թափոնների ու մնացորդների համար մաքսային վճարների վճարման անհրաժեշտությունը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 246–րդ, 247–րդ, 271–րդ, 272–րդ, 309–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն:

2. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը սահմանում է պարզեցված կարգ՝ ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքների հայտարարագրման համար՝ մաքսային վճարները վճարելու եւ ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքների նկատմամբ սահմանված այլ պահանջներ կատարելու նշված անձանց՝ սույն Դաշնային օրենքի 168–րդ հոդվածով նախատեսված իրավունքի ապահովման նպատակով, եւ այդ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները: Ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքների մաքսային հայտարարագրումը կարող է ներկայացվել մաքսային հայտարարագրումներ ընդունելու իրավունք ունեցող ցանկացած մաքսային մարմին՝ ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքները տիրապետողի ընտրությամբ:

3. Ռուսաստանի Դաշնություն ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքների մասին հայտարարագրին կից պետք է ներկայացվեն.

1) ապրանքների մասին հայտարարագիր ներկայացնող անձի լիազորությունները հաստատող փաստաթղթեր,

2) տիրապետողի մոտ եղած առետրային եւ այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան նույնականացնել ոչ օրինական ճանապարհով ներմուծված ապրանքները եւ դրանք դասել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի տասնանիշ

դասակարգման ծածկագրին,

3) սահմանված սահմանափակումների կիրառումը հաստատող թույլտվություններ, հավաստագրեր եւ այլ փաստաթղթեր,

4) մաքսային վճարների վճարումը հաստատող փաստաթղթեր,

5) ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները հաստատող փաստաթղթեր:

4. Մաքսային միության անդամ պետության տարածքից Ռուսաստանի Դաշնություն օտարերկրյա ապրանքների ներմուծման դեպքում, եթե Մաքսային միության անդամ պետության տարածքում կատարվել են այդ ապրանքների վերամշակման գործողություններ՝ ներառյալ հավաքման պարզ գործողությունների կատարումը, մաքսային պահեստի մաքսային ընթացակարգի համաձայն կատարված պահեստավորումը, ինչպես նաեւ ապրանքների միջազգային փոխադրումներն ընդհատող այլ գործողություններ՝ բացառությամբ վերաբեռնման գործողությունների (մեկ տրանսպորտային միջոցից մյուսը փոխաբեռնման գործողությունների) եւ ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգ սահմանելու ժամանակահատվածում ժամանակավոր պահեստավորման, նման ապրանքներն ենթակա են հայտարարագրման ապրանքներն ստացողի կողմից վերջինիս գործունեության տարածքում գտնվող՝ մաքսային հայտարարագրեր ընդունելու իրավասություն ունեցող մաքսային մարմնում Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծումից հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

5. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինն ապահովում է ապրանքների մասին հայտարարագրեր ընդունելու իրավասություն ունեցող մաքսային մարմինների, նրանց գործունեության տարածաշրջանների, ինչպես նաեւ նրանց աշխատանքային ժամերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը կամ այդ տեղեկությունների տրամադրումը շահագրգիռ անձանց տեղեկատվական այլ միջոցներով:

6. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու, որ Մաքսային միության անդամ պետության տարածքից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների առանձին կատեգորիաները հայտարարագրվեն մաքսային մարմիններում հետեւյալ դեպքերում.

1) եթե Մաքսային միության անդամ պետության տարածք ներքին սպառման համար այս ապրանքների բացթողման ժամանակ ներմուծման մաքսատուրքերը վճարվել են այն դրույքաչափերով, որոնք ավելի ցածր են, քան Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող դրույքաչափերը,

2) Մաքսային միության անդամ պետության տարածքում Մաքսային միության անդամ պետություն չհանդիսացող պետություններից ապրանքների, ինչպես նաև այդ ապրանքներից պատրաստված ապրանքների ներմուծման ժամանակ ներկայացվել են ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնություններ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված է , որ նման ապրանքներն առանց ներմուծման մաքսատուրքերի վճարման կարող են տեղափոխվել Մաքսային միության մաքսային տարածքով.,

3) եթե ներմուծվում են Մաքսային միության անդամ չհանդիսացող պետություններից ծագող ապրանքներ, որոնց նկատմամբ կիրառվում են Ռուսաստանի Դաշնության կողմից միակողմանիորեն ներմուծված սահմանափակումները՝ ներառյալ հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցները, նույնիսկ եթե այդ ապրանքները, Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում ապրանքների հայտարարագրման ձեւն ու կարգը, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման (հավելավճարի) կամ սահմանված սահմանափակումների կիրառման կարգը սահմանում է Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը:

8. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու հսկողության այլ ընթացակարգեր ու միջոցներ եւ հսկող (վերահսկող) այլ մարմիններ՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում Ռուսաստանի Դաշնության տնտեսական շահերի պահպանումն ապահովելու նպատակով:

Գլուխ 25. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄԸ

Հոդված 218. Ապրանքների բացթողումը

1. Ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմինների կողմից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 28-րդ գլխի համաձայն:

2. Այն դեպքում, երբ մեկ ապրանքային խմբաքանակում ներառված են մի քանի ապրանքներ, մաքսային մարմինն իրականացնում է այն ապրանքների բացթողումը, որոնց նկատմամբ սահմանվել են բացթողման պայմաններ: Հայտարարատուն իրավունք ունի չիրականացնելու բաց թողնված ապրանքների արտահանումը ժամանակավոր պահպանման պահեստից մինչև ապրանքային խմբաքանակում մնացած ապրանքների բացթողման վերաբերյալ որոշման ընդունումը:

Հոդված 219. Փաստաթղթերը ներկայացնելն ապրանքների բացթողումից հետո

1. Այն դեպքում, երբ ապրանքի բացթողման ժամանակ մաքսային մարմին չեն կարող ներկայացվել սահմանափակումների կիրառումը հաստատող լիցենզիաներ, հավաստագրեր, թույլտվություններ կամ այլ փաստաթղթեր, մաքսային մարմինները, հայտարարատուի հիմնավորված գրավոր կամ էլեկտրոնային դիմումի հիման վրա, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով թույլ են տալիս, որ այդ փաստաթղթերը ներկայացվեն դրանց ստացման համար պարտադիր ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ապրանքների բացթողումից 45 օր հետո, եթե դրանց ստացման համար մեկ այլ պարտադիր ժամկետ չի սահմանվել: Ապրանքների բացթողումն իրականացվում է, եթե հայտարարատուն գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պարտավորվում է ներկայացնել փաստաթղթերը սահմանված ժամկետում:

(2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 48-ՂՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

2. Արգելված է սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների փոխանցումը երրորդ անձանց, այդ թվում՝ դրանց վաճառքի կամ այլ եղանակով օտարման միջոցով, իսկ այն դեպքում, երբ նշված ապրանքների ներմուծման սահմանափակումները սահմանված են՝ կապված այդ ապրանքների որակի ստուգման եւ անվտանգության հետ, ապա արգելված է

դրանց՝ ցանկացած ձեռով օգտագործումը (շահագործումը, սպառումը):

3. Մաքսային մարմիններն իրավունք ունեն հայտարարատուից պահանջելու, որ վերջինս պարտավորվի կիրառել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները, կապարակնիքներ ու կնիքներ դնի ապրանքների փաթեթվածքների եւ այն շինությունների վրա, որտեղ պահվելու են ապրանքները մինչեւ փաստաթղթերի տրամադրումը, ինչպես նաեւ ձեռնարկի նշված սահմանափակումների կիրառումն ապահովող այլ միջոցներ:

4. Մաքսային մարմինները հրաժարվում են թույլտվություն տրամադրել, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերը տրամադրվեն ապրանքների բացթողումից հետո, եթե հայտարարատուն մաքսային մարմին դիմելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում մաքսային գործի բնագավառում ենթարկվել է վարչական պատասխանատվության Ռուսաստանի Դաշնության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 16.20 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար:

(2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 48-ԴՕ դաշնային օրենքի 4-րդ մասի խմբագրությամբ)

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու թույլտվության տրամադրումը մերժելու մասին մաքսային մարմինը, ապրանքների բացթողումից հետո, սակայն ոչ ուշ, քան դիմելու հաջորդ օրը, գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է հայտարարատուին՝ նշելով մերժման պատճառը:

(2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 48-ԴՕ դաշնային օրենքի 5-րդ մասի խմբագրությամբ)

Հոդված 220. Ապրանքների բացթողման ժամկետները

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Դաշնային օրենքի 232-րդ հոդվածի 9-րդ մասով, 279-րդ հոդվածի 8-րդ մասով եւ 283-րդ հոդվածի 6-րդ մասով, ապա ապրանքների բացթողումն իրականացվում է հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետներում: Նշված ժամկետներում մաքսային մարմինները, անհրաժեշտության դեպքում, ստուգում են ապրանքների մասին մաքսային հայտարարագրերն ու դրանց վերաբերող փաստաթղթերը:

2. Մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրերի ընթացքում ապրանքների բացթողման ժամկետների երկարաձգումը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա թույլատրվում է միայն հետեւյալ դեպքերում.

1) եթե Մաքսային միության Մաքսային օրենսգրքի եւ սույն Դաշնային օրենքի դրույթների համաձայն՝ բացթողումը կարող է իրականացվել հայտարարատուի կողմից մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիք ներկայացնելու դեպքում, ապա՝ մինչեւ նշված երաշխիքի տրամադրումը,

2) եթե սույն Դաշնային օրենքի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատուն չի ներկայացնում սահմանափակումների կիրառումը հաստատող լիցենզիաներ, հավաստագրեր, թույլտվություններ կամ այլ փաստաթղթեր, ապա՝ մինչեւ հայտարարատուի կողմից նշված փաստաթղթերի կամ գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով դիմումը ներկայացնելը,

(2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 48-ՂՕ դաշնային օրենքի 5-րդ մասի խմբագրությամբ)

3) եթե անցկացվում է լրացուցիչ ստուգում՝ սույն Դաշնային օրենքի 106-րդ հոդվածի 9-րդ եւ 10-րդ մասերի համաձայն՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկով ապրանքների դասակարգման նպատակով, ապա՝ մինչեւ ստուգման ավարտը,

4) Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն լրացուցիչ ստուգում անցկացնելու դեպքում՝ մինչեւ մաքսատուրքերի, հարկերի վճարման համապատասխան երաշխիք ներկայացնելը,

5) այն ապրանքներին վերաբերող փաստաթղթերի ու տեղեկությունների հարցման դեպքում, որոնց վերաբերյալ տեղեկությունները նշված են մաքսային հայտարարագրում, կամ մաքսային զննմամբ ապրանքների ստուգման դեպքում մաքսային հայտարարագրում ու ներկայացված փաստաթղթերում եւ (կամ) դրոշմավորման մեջ նշված՝ հայտարարագրվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունների կամ ապրանքերի փաթեթվածքների վրա նշված այլ տեղեկությունների եւ (կամ) ապրանքների արտաքին տեսքի անհամապատասխանության հայտնաբերման, մաքսային հայտարարագրման ժամանակ հնարավոր խախտումների

վերաբերյալ նախնական տեղեկատվության առկայության դեպքում, ինչպես նաև ապրանքները՝ որպես Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող կամ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքներ՝ սույն Դաշնային օրենքի 162-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության, ինչպես նաև մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության հնարավոր խախտումներով նույնականացնելու դեպքում՝ մինչև պահանջված լրացուցիչ փաստաթղթերն ստանալը կամ ապրանքների մաքսային զննման ավարտը,

6) մաքսային մարմնի որոշման համաձայն լրացուցիչ հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի վճարման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հայտարարատուի կողմից ապրանքի բացթողման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ գրավոր դիմումը ներկայացնելու դեպքում՝ մինչև մաքսատուրքերի, հարկերի վճարումը:

3. Մաքսային մարմինն իրավասու է երկարաձգելու ապրանքների բացթողման ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված հիմունքներով, եթե Մաքսային միության Մաքսային օրենսգրքով ուղղակիորեն սահմանված չէ, որ ապրանքների բացթողումն իրականացվում է մինչև լրացուցիչ փաստաթղթերն ու տեղեկությունները ստուգելը կամ եթե ստուգման համար ներկայացված ապրանքները չեն բաժանվել փաթեթավորման համար՝ ըստ առանձին տեսակների եւ (կամ) ապրանքների անվանումների եւ (կամ) փաթեթավորման ու դրոշմավորման վերաբերյալ տեղեկությունները նշված չեն ապրանքների առետորային եւ (կամ) տրանսպորտային փաստաթղթերում: Ապրանքների ստուգման ժամկետը երկարաձգվում է, եթե մաքսային մարմինները, նշված հանգամանքների բերումով, չեն կարող կատարել անհրաժեշտ գործողություններ՝ ապրանքների՝ դրանց վերաբերյալ տեղեկություններին համապատասխանության սահմանման ուղղությամբ: Ապրանքների ստուգման ժամկետն երկարաձգվում է այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է՝ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձին ապրանքային խմբաքանակը առանձին ապրանքների բաժանելու համար:

Հոդված 221. Ապրանքների բացթողումը՝ մինչև ապրանքների մասին հայտարարագիր ներկայացնելը

Մինչև ապրանքների մասին հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման

հիմքերն ու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով:

Հոդված 222. Պայմանական բացթողումը

1. Պայմանականորեն բաց թողնված ապրանքներ են համարվում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված դեպքերում բաց թողնված ապրանքները, ինչպես նաև հետեյալ ապրանքները.

1) սահմանված ժամկետում առանձին ապրանքային խմբաքանակներով չհավաքված կամ կազմատված, այդ թվում նաև չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ներմուծվող ապրանքի բաղադրամասերը,

2) այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվել է «մաքսային պահեստ» (այդ թվում՝ ապրանքների՝ առանց մաքսային պահեստում փաստացիորեն տեղավորելու), «անմաքս առետուր», «մաքսային տարածքում ապրանքների վերամշակում», «ներքին սպառման համար ապրանքների վերամշակում», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «վերաարտահանում», «մաքսային տարանցում», «ոչնչացում» մաքսային ընթացակարգերը, Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող հատուկ մաքսային ընթացակարգը,

3) այլ ապրանքներ՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանվող դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված՝ ապրանքի բաղադրամասերի փոխանցումն երրորդ անձանց արգելված է, այդ թվում՝ դրանց վաճառքի կամ այլ եղանակով օտարման միջոցով, եւ դրանք համարվում են պայմանականորեն բաց թողնված՝ մինչեւ մաքսային մարմնի կողմից, սահմանված մաքսային ընթացակարգի համաձայն, ապրանքի բացթողման վերաբերյալ որոշում ընդունելու պահը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված ապրանքները համարվում են պայմանականորեն բաց թողնված՝ մինչեւ Մաքսային միության ապրանքների կարգավիճակ ստանալը, դրանց փաստացի ոչնչացումը կամ Ռուսաստանի Դաշնությունից Մաքսային միության սահմաններից դուրս դրանց արտահանումը կամ դրանց նկատմամբ «հրաժարում՝

հոգուտ պետության» մաքսային ընթացակարգի կիրառումը:

Հոդված 223. Ապրանքների բացթողումը մերժելը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների բացթողումը մերժելու դեպքում մաքսային մարմինը հայտարարատուին վերադարձնում է մաքսային հայտարարագրի իր օրինակը, ինչպես նաև մաքսային վճարների վճարված գումարները (բացառությամբ մաքսային ձեակերպումների համար վճարված մաքսավճարների)՝ սույն Դաշնային օրենքի 17-րդ գլխի համաձայն:

2. Ապրանքների բացթողման մերժումը կարող է բողոքարկվել՝ սույն Դաշնային օրենքի 3-րդ գլխի համաձայն:

3. Եթե ապրանքների բացթողման մերժման վերաբերյալ որոշումը ճանաչվի ոչ իրավաչափ, ապա կրկնակի մաքսային հայտարարագրման դեպքում հայտարարատուն իրավունք ունի պահանջելու կիրառել մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը եւ արժույթների այն փոխարժեքները, որոնք գործել են ապրանքների մասին նախնական հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ:

4. Եթե ապրանքների բացթողման պայմանները չեն կիրառվում միայն մեկ ապրանքային խմբաքանակում ներառված առանձին ապրանքների նկատմամբ, ապա մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների մնացած մասի բացթողումը: Նշված դեպքում մաքսային մարմինը վերադարձնում է միայն այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են այն ապրանքներին, որոնց բացթողումը մերժվել է: Եթե հնարավոր չէ առանձնացնել այդ փաստաթղթերը, ապա մաքսային մարմինը պատրաստում է դրանց պատճենները, որոնք հաստատում է սահմանված կարգով: Հայտարարատուն իրավունք ունի օգտագործելու փաստաթղթերի հաստատված պատճեններն այն ապրանքների կրկնակի մաքսային հայտարարագրման դեպքում, որոնց բացթողումը մերժվել է:

Բաժին VI. ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Գլուխ 26. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 224. Ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելը

1. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանվում է մաքսային ընթացակարգերից որեւէ մեկը՝ Մաքսային միության Մաքսային ընթացակարգով եւ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով ու պայմաններով՝ բացառությամբ այն ապրանքների, որոնք.

1) ծագում են Մաքսային միության մաքսային տարածքից (Մաքսային միության անդամ պետությունների տարածքից),

2) բաց են թողնվել Մաքսային միության մաքսային տարածքում ազատ շրջանառության համար: Սույն Դաշնային օրենքի կիրառման նպատակով՝ Մաքսային միության մաքսային տարածքում ազատ շրջանառության համար բաց թողնված ապրանքներ են համարվում այն ապրանքները, որոնց համար ներմուծման մաքսատուրքերը վճարվում են այն դրույքաչափերով, որոնք սահմանված են նաեւ Ռուսաստանի Դաշնությունում, եւ որոնց նկատմամբ կիրառվում են այն արգելքներն ու սահմանափակումները, որոնք կիրառվում են նաեւ Ռուսաստանի Դաշնությունում,

3) պատրաստված են Մաքսային միության տարածքից ծագող կամ Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում ազատ շրջանառության համար բաց թողնված ապրանքներից:

2. Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների նկատմամբ սահմանվում է մաքսային ընթացակարգերից որեւէ մեկը, եթե այդ ապրանքները նախատեսված են Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանման համար: Այլ դեպքերում Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների նկատմամբ սահմանվում է մաքսային ընթացակարգ, եթե դա նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ կամ Ռուսաստանի Դաշնության Կառավարության ակտերով:

3. Ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգի սահմանումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքով եւ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով ու պայմաններով:

4. Մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, սահմանում է մաքսային մարմինների կողմից՝ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգեր սահմանելու թույլտվությունների տրամադրման հետ կապված գործողությունների կատարման կարգը, նշված թույլտվությունների ձեւերը, ինչպես նաեւ մաքսային ձեւակերպումների իրականացման կարգն ու տեխնոլոգիաները՝ կախված Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխվող ապրանքների կատեգորիաներից, տրանսպորտային միջոցների որոշակի տեսակներից, ինչպես նաեւ ապրանքները տեղափոխող անձանց կատեգորիաներից:

Հոդված 225. Մաքսային ընթացակարգերի տեսակները

1. Մաքսային ընթացակարգերի տեսակները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 202-րդ հոդվածով:

2. «Ազատ մաքսային գոտի» եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերը սահմանվում են՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի համաձայն:

Հոդված 226. Ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգերի սահմանման հետ կապված՝ մաքսային վճարների վճարման պարտավորությունների առաջացումն ու դադարեցումը:

Ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգերի սահմանման եւ մաքսային ընթացակարգերի գործողության դադարեցման հետ կապված մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունների առաջացման ու դադարեցման կարգը սահմանվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքով:

Հոդված 227. Մաքսային ընթացակարգերի պայմանների սահմանման երաշխիքները

1. Եթե մաքսային ընթացակարգով նախատեսվում է մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ կամ մասնակի ազատելը, ապա մաքսային մարմիններն իրավունք ունեն պահանջելու ներկայացնել մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքներ՝ համաձայն սույն Դաշնային օրենքի 16-րդ գլխի:

2. Եթե մաքսային ընթացակարգի պայմաններով ու պահանջներով նախատեսվում են որոշակի սահմանափակումներ ապրանքների օգտագործման ու տնօրինման համար, ապա մաքսային մարմիններն իրավունք ունեն հայտարարատուից եւ այլ անձանցից պահանջելու սահմանված սահմանափակումները կիրառելու պարտավորություն ստանձնել, նույնականացնել ապրանքները, կապարակնիքներ ու կնիքներ դնել ապրանքների փաթեթվածքների եւ այն շինությունների վրա, որտեղ պահվելու են ապրանքները, ինչպես նաեւ ձեռնարկել նշված սահմանափակումների կիրառումն ապահովող միջոցներ:

Գլուխ 27. «ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՑԹՈՂՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 228. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

1. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 210-րդ եւ 211-րդ հոդվածների համաձայն:

2. Եթե Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինները տվյալ ապրանքների նկատմամբ սահմանել են «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգը, ապա Ռուսաստանի Դաշնություն այդ ապրանքների ներմուծման դեպքում այդ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգի կրկնակի սահմանում չի պահանջվում:

3. Այն դեպքում, երբ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության անդամ պետություններում ապրանքների ներմուծման մաքսատուրքերը վճարվում են այն դրույքաչափերով, որոնք ավելի ցածր են, քան Ռուսաստանի Դաշնությունում այդ ապրանքների կամ նյութերի (որոնցից պատրաստված են այդ ապրանքները)՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն սահմանված ներմուծման մաքսատուրքերը, եթե տրամադրվում են ներմուծման մաքսատուրքերի համար սահմանված արտոնություններ կամ եթե ապրանքների նկատմամբ չեն կիրառվում Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող սահմանափակումները, ապա ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարումը (հավելավճարը) եւ Ռուսաստանի Դաշնությունում սահմանափակումների կիրառումը հաստատող փաստաթղթերը ներկայացնելն իրականացվում են դրանց հայտարարագրման ժամանակ՝ սույն Դաշնային օրենքի 217-րդ հոդվածի 4-րդ եւ 6-րդ մասերի համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝ սույն Դաշնային օրենքի 217-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն:

Հոդված 229. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի կիրառումը ապրանքների պայմանական բացթողման դեպքում

1. Ապրանքների նկատմամբ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի սահմանման դեպքում եւ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված ու ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով զուգակցվող արտոնությունների տրամադրման ժամանակ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելու համար ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգի կրկնակի սահմանում չի պահանջվում:

2. Մաքսային միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելու համար մաքսատուրքերի, հարկերի վճարման կարգը սահմանված է սույն Դաշնային օրենքի 119-րդ հոդվածով:

3. Այն փաստաթղթերը, որոնց բացակայության պատճառով ապրանքները պայմանականորեն բաց էին թողնվել՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն, հայտարարատուի կողմից ներկայացվում են այն մաքսային մարմին, որի կողմից իրականացվել է ապրանքների պայմանական բացթողումը: Մաքսային մարմինն ընդունում է այդ փաստաթղթերը հայտարարատուի՝ կամայական ձեռով ձեւակերպված դիմումի հիման վրա: Դիմումի մեջ նշվում է ապրանքների մասին հայտարարագրի համարը, որով մաքսային մարմնի կողմից իրականացվում է ապրանքների պայմանական բացթողումը: Մաքսային մարմինը պարտավոր է փաստաթղթերի ընդունման վերաբերյալ հայտարարատուի խնդրանքով տրամադրել գրավոր հավաստում:

4. Եթե մաքսային մարմնի կողմից իրականացվել է պայմանական բացթողում՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված ու ապրանքների օգտագործման եւ (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով զուգակցվող արտոնությունների տրամադրմամբ, ապա ապրանքների բացթողման օրվանից 5 (հինգ) տարի ժամկետը լրանալու պահից օգտագործման եւ (կամ) տնօրինման հետ կապված՝ նշված սահմանափակումների գործողությունը դադարեցվում է:

5. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու սույն հոդվածի

4-րդ մասով նախատեսված սահմանափակումների գործողության ավելի կարճ կամ ավելի տևական ժամկետներ:

Գլուխ 28. «ԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 230. «Արտահանում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Արտահանում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանվում են՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 212-րդ եւ 213-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 231. Ապրանքների առանձին կատեգորիաների արտահանման ժամանակ ապրանքի ծագման վերաբերյալ հավաստագիր, որը ներկայացվում է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմնի կողմից

Եթե Ռուսաստանի Դաշնությունից ծագող եւ Մաքսային միության անդամ պետությունների՝ Երրորդ երկրների նկատմամբ արտահանման մաքսատուրքերի կիրառման հետ կապված հարցերը կարգավորող միջազգային պայմանագրերին համապատասխան Մաքսային միության Հանձնաժողովի կողմից ձեւավորվող ապրանքների համահավաք ցանկում ներառված ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանման դեպքում Ռուսաստանի Դաշնության կամ Մաքսային միության այլ անդամ պետությունների մաքսային մարմիններ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի ծագման վերաբերյալ հավաստագիր, ապա նման հավաստագիրը տրվում է Ռուսաստանի Դաշնության առևտրաարդյունաբերական պալատի կողմից՝ Անկախ պետությունների համագործակցության ազատ առևտրի առևտրային ռեժիմի տրամադրման դեպքում կիրառվող՝ ապրանքի ծագման երկրի սահմանման կանոնների համաձայն:

Հոդված 232. Այն ապրանքների արտահանումը, որոնց դեպքում արտահանման մաքսատուրքեր չեն հարկվում

1. Այն ապրանքների արտահանման ժամանակ, որոնց դեպքում արտահանման

մաքսատուրքեր չեն հարկվում, հայտարարագրումն ու բացթողումն իրականացվում են պարզեցված կարգով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային մարմինները պահանջները սահմանափակվում են որոշակի արտաքին տնտեսական գործարքի կատարման հաշվին Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների արտահանման փաստի հաստատման եւ արգելքների ու սահմանափակումների կիրառման ապահովման համար անհրաժեշտ պահանջներով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային մարմին ներկայացվում են.

1) հաշիվ-ապրանքագիր,

2) տրանսպորտային փաստաթղթեր (փոխադրագրեր) (առկայության դեպքում),

3) սահմանված սահմանափակումների կիրառումը հաստատող լիցենզիաներ, հավաստագրեր, թույլտվություններ կամ այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում),

4) փաստաթղթեր, որոնցով հաստատվում են հայտարարատուի վերաբերյալ տեղեկությունները, եթե դրանք ավելի վաղ չեն ներկայացվել այլ ապրանքների հայտարարագրման ժամանակ, մաքսային ներկայացուցչի վերաբերյալ տեղեկությունները, եթե մաքսային հայտարարագիրը ներկայացվում է նշված անձի կողմից, ինչպես նաեւ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնող անձի լիազորությունները՝ բացառությամբ մաքսային հայտարարագիրն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքերի,

5) մաքսավճարների վճարումը հաստատող վճարման փաստաթուղթ:

4. Եթե հայտարարագրման ժամանակ ներկայացված հաշիվ ապրանքագրում ներառված չեն տեղեկություններ՝ արտաքին տնտեսական գործարքը կնքած անձանց, պայմանագրի համարի ու կնքման ամսաթվի, ապրանքների անվանումների, քանակի, քաշի կամ արժեքի վերաբերյալ (եթե ապրանքների տեղափոխումը Մաքսային միության մաքսային սահմանով իրականացվում է գործարքի հիման վրա), ապա հայտարարատուն ներկայացնում է այլ առետրային փաստաթղթեր կամ պայմանագրի պատճենը (դրանից մի քաղվածք), որում ներառված են նշված տեղեկությունները:

5. Հայտարարատուի վերաբերյալ տեղեկությունները հաստատող փաստաթղթեր են համարվում.

1) հիմնադիր փաստաթղթերը,

2) իրավաբանական անձի պետական գրանցման կամ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները,

3) հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի միջեւ կնքված պայմանագիրը,

4) իրավաբանական անձի կողմից գործողություններ կատարելու լիազորագիր՝ անձը հաստատող փաստաթղթերը ներկայացնելով,

5) մաքսային ներկայացուցչի հետ աշխատանքային հարաբերությունների եւ մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման ատեստատի առկայության հաստատում, եթե մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մաքսային ներկայացուցչի կողմից:

6. Այն ապրանքների հայտարարագրման դեպքում, որոնք արտաքին նմանություն ունեն այն ապրանքներին, որոնց նկատմամբ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերը, ներկայացվում են փաստաթղթեր, որոնց հիման վրա հայտարարագրվել է ապրանքի դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի:

7. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված փաստաթղթեր են համարվում այն փաստաթղթերը.

1) որոնցում ներառված են տեղեկություններ ապրանքի կազմի վերաբերյալ (եթե Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում ապրանքի խմբին, դիրքին վերաբերող ծանոթագրությամբ կամ դիրքի տեքստով սահմանված են պահանջներ՝ ապրանքներում որոշակի նյութերի (տարրերի) պարունակության նկատմամբ),

2) տեխնոլոգիական սխեմաները, տեխնոլոգիական հրահանգները, տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը եւ ապրանքի վերամշակման գործընթացների ու ձեւերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող այլ փաստաթղթեր (եթե Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում ապրանքի խմբին, դիրքին վերաբերող ծանոթագրությամբ կամ դիրքի տեքստով սահմանված հատկանիշը ապրանքի մշակման տեսակը կամ աստիճանն է),

3) գծագրերը, բլոկ-սխեմաները, տեխնիկական անձնագիրը, շահագործման հրահանգը, տեխնոլոգիական սխեմաները, օգտագործողի ուղեցույցը եւ ապրանքի տեխնիկական բնութագրերի ու դրա գործողության սկզբունքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող այլ տեխնիկական փաստաթղթեր (եթե Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում ապրանքի խմբին, դիրքին վերաբերող ծանոթագրությամբ կամ դիրքի տեքստով սահմանված հատկանիշը, քաշը, չափսը, հզորությունը, արտադրողականությունը եւ այլ բնութագրերն են):

8. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային արժեքը չի սահմանվում, չի ներկայացվում եւ չի հաստատվում:

9. Այն ապրանքների բացթողման ժամկետը, որոնց նկատմամբ արտահանման մաքսատուրքեր չեն կիրառվում, կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի գրանցման պահից, եթե մաքսային հայտարարագրի հետ ներկայացվեն նաեւ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, համաձայն սույն Դաշնային օրենքի, առանձին փաստաթղթեր կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո: Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը կարող է կազմել այն ապրանքների ցանկը, որոնց բացթողման ժամկետը կարող է մինչեւ մեկ աշխատանքային օր լինել՝ մաքսային հայտարարագրման գրանցման օրվանից: Նշված ժամկետներում մաքսային մարմինները, անհրաժեշտության դեպքում, ստուգում են ապրանքների մասին մաքսային հայտարարագրերն ու դրանց վերաբերող փաստաթղթերը:

10. Մաքսային մարմինն իրավասու է ստուգելու սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները եւ պահանջել լրացուցիչ փաստաթղթեր ու տեղեկություններ.

1) մաքսային հայտարարագրում ու ներկայացված փաստաթղթերում եւ (կամ) դրոշմավորման մեջ նշված՝ հայտարարագրվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունների կամ ապրանքների փաթեթվածքների վրա նշված այլ տեղեկությունների եւ (կամ) ապրանքների արտաքին տեսքի անհամապատասխանության հայտնաբերման դեպքում,

2) մաքսային հայտարարագրման ժամանակ հնարավոր խախտումների վերաբերյալ այլ հսկող կամ վերահսկող մարմինների կողմից ստացված նախնական տեղեկատվության առկայության դեպքում:

11. Ապրանքների ստուգումը թույլատրվում է մաքսային մարմնի պետի գրավոր թույլտվությամբ:

12. Մաքսային հայտարարագրում ու ներկայացված փաստաթղթերում ապրանքների վերաբերյալ նշված տեղեկությունների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում մաքսային մարմինը հայտարարատուին տեղեկացնում է ներկայացված տեղեկությունների ճշգրտման (ճշտման) անհրաժեշտության մասին: Եթե հայտնաբերված անհամապատասխանությունները չեն ազդում արտահանման արգելքների ու սահմանափակումների կիրառման վերաբերյալ մաքսային մարմնի որոշման վրա, ապա հայտարարատուի կողմից տեղեկությունների ճշգրտումը հիմք չէ՝ ապրանքների բացթողումը մերժելու համար:

Գլուխ 29. «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 233. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի էությունը և ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի էությունը և ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանվում են՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 215-րդ և 216-րդ հոդվածների համաձայն:

2. Ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգ սահմանելիս «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտարարատուն մաքսային մարմին է ներկայացնում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված տարանցիկ փոխադրման հայտարարագիրը:

3. Ծովային կամ օդային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային տարանցման, ինչպես նաև ապրանքների ներսերման վայրի մաքսային մարմնից ներքին մաքսային մարմինն օտարերկրյա ապրանքների փոխադրման առանձնահատկությունները սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ տրանսպորտի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ համաձայնեցմամբ: Մեկ ներքին մաքսային մարմնից մինչև մյուս ներքին մաքսային մարմին օտարերկրյա ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկությունները սահմանվում են մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ պետական քաղաքականության մշակման և արտաքին տնտեսական գործունեության ոլորտում նորմատիվ իրավական կարգավորման ուղղությամբ գործառույթներ իրականացնող՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ համաձայնեցմամբ:

Հոդված 234. Մաքսային տարանցման պայմանների կատարումն ապահովող միջոցները

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ մաքսային տարանցման կիրառման ապահովման միջոցներին դասվում են

մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքները, մաքսային ուղեկցումն ու ապրանքների փոխադրման երթուղու սահմանումը:

2. Մաքսային տարանցման ժամանակ մաքսային մարմինները չեն պահանջում մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքներ միայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 217-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում:

3. Այն դեպքերը, երբ մաքսային մարմինն իրավասու է որոշում ընդունելու «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների մաքսային ուղեկցման վերաբերյալ, սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետով: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն՝ ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների մաքսային ուղեկցումն իրականացվում է մաքսային մարմինների կողմից: Մաքսային ուղեկցման մաքսավճարները գանձվում են սույն Դաշնային օրենքի 14-րդ գլխով նախատեսված կարգով:

4. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների մաքսային ուղեկցումը կարող է իրականացվել Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից լիազորված կազմակերպությունների կողմից: Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը սահմանում է այն պայմանները, որոնց բավարարման դեպքում կազմակերպությունները կարող են իրականացնել մաքսային ուղեկցումը, եւ այդ կազմակերպությունների կողմից մաքսային ուղեկցման իրականացման սակագների առավելագույն մակարդակները:

5. Մաքսային մարմինները կարող են սահմանել ապրանքների փոխադրման երթուղիները Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով եւ պայմաններով: Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու Ռուսաստանի Դաշնության տարածքով այն ապրանքների փոխադրման երթուղիները, որոնց նկատմամբ սահմանվել է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը: Մաքսային մարմնի կողմից սահմանված երթուղու փոփոխություն թույլատրվում է ուղարկող մաքսային մարմնի կամ ընթացուղում գտնվող այլ մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ:

Հոդված 235. Ապրանքների առաքման վայրը

1. Ապրանքների առաքման վայրը սահմանվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն:

2. Ուղարկող մաքսային մարմինն իրավասու է սահմանելու առաքման վայրը՝ անկախ տրանսպորտային փաստաթղթերում (փոխադրագրերում) նշված տեղեկություններից հետեւյալ դեպքերում.

1) եթե մաքսային հայտարարագրումը, սույն Դաշնային օրենքի համաձայն, իրականացվում է մասնագիտացված մաքսային մարմնի կողմից,

2) եթե որպես առաքման վայր սահմանված՝ մաքսային մարմնի գործունեության տարածքում սահմանվել է արտակարգ իրավիճակների ռեժիմ կամ ապրանքների առանձին կատեգորիաների ներմուծման համար սահմանվել են այլ սահմանափակումներ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն,

3) Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում:

Հոդված 236. Փոխադրողի պարտականություններն ու պատասխանատվությունը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների փոխադրման ժամանակ

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների փոխադրման ժամանակ փոխադրողի պարտականությունները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 223-րդ հոդվածով:

2. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն ապրանքների փոխադրման ժամանակ իր պարտականությունները չկատարելու համար փոխադրողը պատասխանատվություն է կրում, որը սահմանված է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Ապրանքները եւ դրանց վերաբերյալ փաստաթղթերը նշանակման մաքսային մարմին չառաքելու դեպքում փոխադրողը կարող է պատասխանատվություն կրել Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային

մարմինն ապրանքները ձեւակերպել է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, եթե դա նախատեսված է Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով:

Հոդված 237. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումը

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 225-րդ հոդվածով սահմանված կարգով՝ սույն հոդվածի դրույթների հաշվառմամբ:

2. Ապրանքների ներսբերման վայրի մաքսային մարմնից ներքին մաքսային մարմին Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերով նախատեսված հատուկ պարզեցումների կիրառմամբ լիազորված տնտեսական օպերատորի կողմից ներմուծվող ապրանքների «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակման առանձնահատկությունները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով:

3. Երկաթուղային տրանսպորտով ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողի կողմից նշանակման վայրի մաքսային մարմին տարանցիկ փոխադրման հայտարարագիր, ինչպես նաեւ իր մոտ եղած այլ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել 12 ժամը տրանսպորտային միջոցի՝ ապրանքների առաքման վայր ժամանման պահից: Սույն մասով սահմանված ժամկետների հաշվարկման նպատակով հաշվի են առնվում մաքսային մարմնի աշխատանքային ժամերը: Այլ տրանսպորտային միջոցներով ապրանքների փոխադրման ժամկետը, որի ընթացքում փոխադրողը պարտավոր է մաքսային մարմին ներկայացնել տարանցիկ փոխադրման հայտարարագիրն ու այլ փաստաթղթեր, սահմանված է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ կետով:

4. Փոխադրողի կողմից Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու պահից մեկ ժամվա ընթացքում նշանակման վայրի մաքսային մարմինը պարտավոր է գրանցել հայտարարագրի տրամադրումն ու տրանսպորտային միջոցի՝ ապրանքների առաքման վայր ժամանումը եւ գրանցումից անմիջապես հետո փոխադրողին տրանսպորտային միջոցի ժամանման մասին ներկայացնել գրավոր հավաստում:

5. Տրանսպորտային միջոցի ժամանման մասին հավաստման մեջ պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

1) տրանսպորտային միջոցի ժամանման մասին հավաստման գրանցման համարը,

2) փոխադրողի կողմից նշանակման վայրի մաքսային մարմին տարանցիկ փոխադրման հայտարարագիրն ու իր մոտ եղած այլ փաստաթղթեր ներկայացնելու ամսաթիվը եւ ժամը,

3) նշանակման վայրի մաքսային մարմնի կողմից առաքման վայր տրանսպորտային միջոցի ժամանում գրանցելու ամսաթիվը եւ ժամը,

4) փոխադրողին տրանսպորտային միջոցի ժամանման մասին հավաստումը ներկայացնելու ամսաթիվը եւ ժամը,

5) փոխադրողի անվանումը եւ հասցեն,

6) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի համարը,

7) տարանցիկ փոխադրման համարը, փոխադրողի կողմից ներկայացված փաստաթղթերի համարը, ամսաթիվը եւ քանակը,

8) տրանսպորտային միջոցների մաքսային զննման արդյունքները,

9) նույնականացման միջոցները հեռացնելու եւ ապրանքների բեռնաթափման հնարավորությունը,

10) ապրանքները նշանակման վայրի մաքսային մարմնի գտնվելու վայրից ժամանակավոր պահպանման պահեստ տեղափոխելու հնարավորությունը,

11) այն փաստաթղթերի համարներն ու ամսաթվերը, որոնցով իրականացվելու է ապրանքների փոխադրումը ժամանակավոր պահպանման պահեստ,

12) նշանակման մաքսային մարմնի անվանումը եւ հասցեն,

13) ժամանակավոր պահպանման պահեստի անվանումը, հասցեն եւ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում գրանցման մասին հավաստագրի համարը,

14) մաքսային տարանցման կիրառման ապահովման ուղղությամբ միջոցների

ձեռնարկումը հավաստող փաստաթղթի համարը,

15) մաքսային տարանցման ժամկետը

16) ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստ հանձնելու ամսաթիվն ու ժամը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի 11-16-րդ կետերում ներկայացված տեղեկությունները նշվում են տրանսպորտային միջոցի ժամանման մասին հավաստման մեջ ապրանքները նշանակման վայրի մաքսային մարմնի գտնվելու վայրից ժամանակավոր պահպանման պահեստ տեղափոխելու դեպքում:

7. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 225-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն:

8. Փոխադրողը կամ այլ շահագրգիռ անձ պարտավոր է իրականացնել ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու կամ մաքսային ընթացակարգին համապատասխան՝ դրանց մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային ձեւակերպումներ՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումից հետո երեք ժամվա ընթացքում, իսկ երկաթուղային կամ ջրային տրանսպորտով փոխադրվող ապրանքների դեպքում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումից հետո 12 ժամվա ընթացքում: Սույն մասի դրույթները չեն կիրառվում մաքսային ընթացակարգը Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար՝ դուրսհանման վայրում եզրափակելիս:

Գլուխ 30. «ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 238. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի էությունը, ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները եւ մաքսային պահեստում ապրանքների պահպանության ժամկետները

«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի էությունը, ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելը եւ մաքսային պահեստում ապրանքների պահպանության ժամկետները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 229-231-րդ հոդվածներով:

Հոդված 239. Ապրանքների նկատմամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները առանց փաստացիորեն մաքսային պահեստ հանձնելու

1. Մաքսային պահեստում իրենց չափերի պատճառով չտեղակայվող ապրանքների նկատմամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգ սահմանելն առանց փաստացիորեն մաքսային պահեստ դրանք հանձնելու թույլատրվում է մաքսային մարմնի գրավոր թույլտվության եւ մաքսատուրքերի, հարկերի վճարում կատարելու դեպքում՝ սույն Դաշնային օրենքի 16-րդ գլխով սահմանված կարգով:

2. Թույլտվություն ստանալու համար հայտարարատուն գրավոր դիմում է մաքսային մարմին, որի գործունեության տարածքում նախատեսվում է կատարել ապրանքների պահպանություն դրանց նկատմամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգ սահմանելուց հետո՝ նախքան մաքսային հայտարարագիր ներկայացնելը: Դիմումի մեջ հայտարարատուն նշում է ապրանքի անվանումը եւ դրա հատկանիշները, «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգ սահմանելու պատճառները, ապրանքների պահպանման ճշգրիտ վայրը, այդ թվում՝ փոստային հասցեն, ինչպես նաեւ այն միջոցները, որոնք կձեռնարկվեն հայտարարատուի կողմից՝ ապրանքների պահպանվածությունն ապահովելու համար:

3. Մաքսային մարմինը թույլտվություն է տալիս ապրանքների նկատմամբ «մաքսային

պահեստ» մաքսային ընթացակարգ սահմանելու համար, կամ մերժում է նման թույլտվության տրամադրումը հայտարարատուի կողմից մաքսային մարմին դիմելուց հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում: Թույլտվության մեջ նշվում է ապրանքների պահպանման վայրը, տեղեկություններ մաքսային վճարների ապահովման անհրաժեշտության մասին:

4. Մաքսային մարմինն իրավասու է մերժելու թույլտվության տրամադրումը միայն հետեյալ դեպքերում՝

1) մաքսային վճարների կատարման գծով առաջացած պարտքերի առկայություն,

2) մաքսային մարմին դիմելու օրվանից մեկ տարվա ընթացքում երկու եւ ավելի անգամ անձին վարչական պատասխանատվության ենթարկելը մաքսային գործի ոլորտում վարչական իրավախախտումների համար, որոնք նախատեսված են «Վարչական իրավախախտումների մասին» Ռուսաստանի Դաշնության օրենսգրքի 16.9 հոդվածի 1-ին մասով, 16.13, 16.14 հոդվածներով եւ 16.23 հոդված 2-րդ եւ 3-րդ մասերով:

5. Առանց ապրանքները մաքսային պահեստում փաստացիորեն տեղակայելու՝ դրանց նկատմամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգ սահմանող անձը պարտավոր է ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքների մասին մաքսային մարմին հաշվետվություն ներկայացնել՝ սույն Դաշնային օրենքի 177-րդ հոդվածի 4-րդ եւ 15-րդ մասերին համապատասխան:

Հոդված 240. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հանձնումը մաքսային պահեստ

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 234-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ թույլատրվում է «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների պահպանումը Մաքսային միության մաքսային պահեստում վեց ամսվա ընթացքում:

2. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ Մաքսային միության ապրանքները մաքսային պահեստ հանձնելիս կիրառվում է ավելացած արժեքի հարկի եւ ակցիզների վճարից ազատում, ավելացած արժեքի հարկի եւ ակցիզների՝ ավելի շուտ վճարված գումարների փոխհատուցում կամ վերադարձ, եթե նման ազատումը, փոխհատուցումը կամ վերադարձը նախատեսված են Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների փաստացի

արտահանման դեպքում հարկերի եւ վճարների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

3. Եթե մաքսային պահեստ հանձնելուց հետո վեց ամսվա ընթացքում ապրանքների փաստացի արտահանում չի կատարվում, ապա նշված գումարները գանձվում են տոկոսների ավելացմամբ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման դրույթներով, որոնք գործել են մաքսային պահեստում ապրանքների պահպանման ժամանակահատվածում՝ Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներկրման դեպքում հարկերի գանձման առումով սույն Դաշնային օրենքով նախատեսված կարգով:

Հոդված 241. Մաքսային պահեստները եւ դրանց տեսակները

1. Մաքսային պահեստ է համարվում հատուկ սահմանված ու կահավորված կառույցը, շինությունը, եւ (կամ) բաց հրապարակը, որոնք համապատասխանում են սույն Դաշնային օրենքի 80-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

2. Մաքսային պահեստը կարող է լինել բաց կամ փակ տիպի:

3. Մաքսային պահեստները համարվում են բաց տիպի պահեստներ, եթե դրանք հասանելի են ցանկացած տեսակի ապրանքների եւ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող բոլոր անձանց կողմից օգտագործման համար:

4. Մաքսային պահեստները համարվում են փակ տիպի պահեստներ, եթե դրանք նախատեսված են մաքսային պահեստի տիրապետողի ապրանքների պահպանության համար:

5. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու ապրանքների տեսակները, որոնք կարող են պահպանվել բացառապես փակ տիպի մաքսային պահեստներում:

Հոդված 242. Այն ապրանքների ձեւակերպումները, որոնց նկատմամբ սահմանված է «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգ

1. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների ձեւակերպումների ցանկը սահմանվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 232-րդ

հողվածով:

2. Այն դեպքերում, երբ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձեակերպված ապրանքների ձեակերպումներ իրականացնելու համար պահանջվում է մաքսային մարմնի թույլտվությունը, ապա նման թույլտվությունը տրամադրվում է շահագրգիռ անձի գրավոր դիմումի հիման վրա՝ դիմում ներկայացնելու օրը: Թույլտվությունը տրամադրվում է գրավոր՝ առանձին փաստաթղթով, կամ իրավասու պաշտոնատար անձի կողմից շահագրգիռ անձի գրավոր դիմումի վրա համապատասխան գրություն կատարելու միջոցով: Թույլտվության տրամադրումը կարող է մերժվել միայն այն դեպքերում, եթե ապրանքների ձեակերպում իրականացնելու արդյունքում կարող են փոխվել արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի համաձայն՝ ապրանքների դասակարգման հետ կապված հատկանիշները:

Հոդված 243. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակումը

1. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակման կարգը եւ ժամկետները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 236-րդ հոդվածով:

2. Ցանկացած անձ, որը կարող է հանդես գալ որպես հայտարարատու՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի համաձայն, իրավունք ունի կատարելու մաքսային ձեակերպումներ, որոնք անհրաժեշտ են մաքսային ընթացակարգի գործողության եզրափակման համար՝ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն:

3. Մաքսային պահեստում պահպանվող ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգը կարող է հայտարարագրվել մաքսային պահեստի սեփականատիրոջ կողմից:

4. «Ներքին սպառման համար բացթողում» ընթացակարգով ձեակերպված ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի գանձումը մաքսային պահեստում դրանց պահպանությունից հետո իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 238-րդ

հողվածով սահմանված առանձնահատկությունները հաշվի առնելու միջոցով:

Գլուխ 31. «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԱԳԸ

Հոդված 244. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի էությունը եւ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները

1. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի էությունը եւ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 239-րդ եւ 240-րդ հոդվածների համաձայն:

2. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման համար մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման համար թույլտվություն ստացած անձի կողմից, ինչպես նախատեսված է սույն Դաշնային օրենքի 248-րդ հոդվածով, կամ անմիջականորեն ապրանքների վերամշակման գործողություն իրականացնող անձի կողմից:

Հոդված 245. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացումը

1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացման նպատակով օգտագործվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 242-րդ հոդվածում նշված միջոցները:

2. Հայտարարագրված նույնականացման միջոցի ընդունելի լինելը սահմանվում է մաքսային մարմնի կողմից ապրանքների վերամշակման թույլտվություն տրամադրելիս՝ հաշվի առնելով ապրանքի հատկանիշները եւ ապրանքների վերամշակման համար իրականացվող գործողությունների բնույթը: Եթե մաքսային մարմինը հայտարարատուի կողմից առաջարկվող՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացման միջոցը ընդունելի չհամարի, ապա մաքսային մարմինն իրավասու է ինքնուրույն որոշելու ապրանքների նույնականացման միջոցը:

Հոդված 246. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետները

1. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետները սահմանվում են մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետում եւ մաքսային մարմնի հետ համաձայնության հիմքով, երբ վերջինս քննում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու դիմումը:

2. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի պատճառաբանման դեպքում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը կարող է սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետով երկարաձգվել:

3. Մաքսային մարմինը քննում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելու դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում եւ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին տեղեկացնում է վերամշակման ժամկետի երկարաձգման կամ նման երկարաձգումը մերժելու մասին: Մաքսային մարմինն իրավասու է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետի երկարաձգումը մերժել այն դեպքում, եթե հայտարարատուն չի պահպանում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման մաքսային ընթացակարգի համար կիրառելի պահանջները, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Ապրանքների վերամշակման ժամկետի երկարաձգման մասին մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը նշված մերժման մասին գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին:

Հոդված 247. Մաքսային տարածքում վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակները

1. Մաքսային տարածքում վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակները սահմանվում են մաքսային տարածքում ապրանքների վերամշակման

թույլտվություն ստացած անձի կողմից, ելնելով փաստացի պայմաններից, որոնց ներքո իրականացվում է ապրանքների վերամշակումը եւ որոնք համաձայնեցվում են մաքսային մարմնի հետ, երբ վերջինս քննում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն տրամադրելու դիմումը՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Մաքսային մարմինների հետ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակների համաձայնության ժամանակ հաշվի է առնվում փորձագիտական կազմակերպությունների եզրակացությունները, որոնք հենվում են ապրանքների վերամշակման կոնկրետ տեխնոլոգիական պրոցեսի վրա:

2. Եթե պահպանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 2-րդ կետի 245-րդ հոդվածով սահմանված պայմանները, ապա գործադիր մարմնի դաշնային օրգանները, որոնք իրավասություն ունեն Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից, կարող են սահմանել վերամշակման արդյունքների ստանդարտ չափաքանակներ:

Հոդված 248. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 240-րդ եւ 244-րդ հոդվածներով նախատեսված՝ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ է համարվում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը: Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշվում են այն տեղեկությունները, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 244-րդ հոդվածով:

2. Օտարերկրյա ապրանքների, դրանց վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, մնացորդների եւ թափոնների արժեքի մասին տեղեկությունների բացակայության դեպքում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշվում է արժեքների համապատասխան տիրույթը: Եթե արտաքին տնտեսական գործարքների կատարումը հաստատող կամ արտաքին տնտեսական գործարքների շրջանակից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթերի մասին տեղեկությունները բացակայում են, ապա այդ տեղեկությունները նշվում են մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով՝ ոչ ուշ, քան ապրանքների հայտարարագրման

օրը:

3. Այն դեպքում, երբ ապրանքները մաքսային տարածքում ձեւակերպվում են «վերամշակում» ընթացակարգով իրավասու տնտեսական օպերատորի կողմից, ապա որպես մաքսային տարածքում վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ կարող է օգտագործվել իրավասու տնտեսական օպերատորների եւ մաքսային մարմնի միջեւ կնքված համաձայնագիրը, որը ստորագրված է սույն Դաշնային օրենքի 8-րդ մասի 86-րդ հոդվածի համաձայն՝ պայմանով, որ նշված համաձայնագրում ներառվեն այնպիսի տեղեկություններ, որոնք նախատեսված են սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով:

4. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի գրավոր դիմումով եւ մաքսային մարմնի թույլտվությամբ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման տրված թույլտվության մեջ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք չեն հակասում Մաքսային միության մաքսային օրենսդրությանը, ինչպես նաեւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը: Թույլտվություն տված մաքսային մարմինը քննում է դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում, իսկ բացառապես սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների նշման դեպքում՝ երեք աշխատանքային օրերի ընթացքում ու համաձայնության դեպքում կատարում է փոփոխությունները եւ լրացումները: Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու՝ մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը նշված մերժման մասին գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին :

5. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության ժամկետի գործողության ընթացքում թույլտվություն ստացած անձն իրավունք ունի մաքսային մարմնի գրավոր թույլտվության դեպքում այն փոխանցելու ռուսաստանյան որեւէ այլ անձի՝ պայմանով, որ այդ անձը պարտավորություն ստանձնի պահպանելու մաքսային տարածքում «վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման պահանջները եւ պայմանները, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Ընդ որում, մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն փոխանցող անձը պետք է մաքսային մարմին

ներկայացնի Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ հաստատված՝ մաքսային տարածքում «վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման պահանջների եւ պայմանների պահպանման մասին հաշվետվություն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ապրանքներն օգտագործվել են մաքսային տարածքում «վերամշակում» մաքսային ընթացակարգի համաձայն, ինչպես նաեւ պարտավոր է վճարել մաքսատուրքեր, հարկեր, եթե այդ ժամանակահատվածում տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք ենթադրում են մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորություն:

6. Եթե մաքսային ընթացակարգի պահպանումն ապահովվում է սույն Դաշնային օրենքի 227-րդ հոդվածով սահմանված երաշխիքներով, ապա այն անձը, որին փոխանցվում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը, պետք է համապատասխան փաստաթղթերն իր անունով ձեւակերպի:

7. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունն ընդունող անձն ունի իրավունքներ եւ կրում է պարտավորություններ մաքսային տարածքում «վերամշակման» մաքսային ընթացակարգի կիրառման առումով, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ այն օրվա դրությամբ, երբ մաքսային մարմինը որոշում է ընդունում փոխանցել ապրանքների վերամշակման թույլտվությունը:

Հոդված 249. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրումը

1. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն կարող է ստանալ ցանկացած ռուսաստանյան անձ, այդ թվում՝ ապրանքների վերամշակման գործողություն անմիջականորեն չիրականացնող անձ, որը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի հիմքով կարող է հանդես գալ որպես հայտարարատու՝ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշված ապրանքների համար:

2. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու համար շահագրգիռ անձը գրավոր դիմում է ներկայացնում մաքսային մարմին, որի գործունեության

տարածքում այն գրանցված է որպես հարկատու՝ հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

3. Դիմումի մեջ ներառվում են տեղեկություններ՝

1) դիմումատուի մասին,

2) ապրանքների վերամշակման գործողությունն անմիջականորեն իրականացնող անձի (անձանց) մասին,

3) վերամշակման համար նախատեսված ապրանքների եւ նման վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների մասին (անվանումը, դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն չափման հիմնական կամ լրացուցիչ միավորների քանակը, արժեքը կամ դրա տիրույթը),

4) թափոն-ապրանքների մասին, որոնք ստեղծվում են օտարերկրյա ապրանքների վերամշակման գործողություններ կատարելու արդյունքում՝ բացառությամբ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների (անվանումը, դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն՝ չափման հիմնական կամ լրացուցիչ միավորների քանակը, արժեքը կամ դրա տիրույթը) եւ օտարերկրյա ապրանքների մնացորդ-մասերի մասին, որոնք չեն օգտագործվում արտադրանքի ամբողջական պատրաստման համար (վերամշակման արդյունք)՝ վերամշակման ապրանքի (ապրանքների) նորմի (նորմերի) համաձայն (անվանումը, դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն՝ չափման հիմնական կամ լրացուցիչ միավորների քանակը, արժեքը կամ դրա տիրույթը),

5) ապրանքների վերամշակման գործողությունների մասին, այդ թվում՝ տեխնոլոգիան եւ գործողությունների կատարման ժամկետները,

6) արտադրական հզորությունների գտնվելու վայրի մասին, որոնց միջոցով իրականացվում են ապրանքների վերամշակման գործողությունները,

7) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակների մասին,

8) վերամշակման արդյունքներում ներկրված ապրանքների նույնականացման համար առաջարկվող եղանակների մասին,

9) ներկրված ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելու մասին,

10) նախքան օտարերկրյա ապրանքների ներկրումը՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների՝ նախօրոք կատարված մատակարարման մասին,

11) առեւտրային նպատակներով թափոնների հետագա օգտագործման հնարավորության մասին,

12) ապրանքների վերամշակման ժամկետի մասին:

4. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման մասին դիմումին կցվում են փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում են դիմումի մեջ նշված տեղեկությունների իսկությունը:

5. Մաքսային մարմինը քննում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման մասին դիմումը եւ դրան կից փաստաթղթերը՝ դրանք ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Մաքսային մարմինն իրավասու է երրորդ անձանցից, ինչպես նաեւ պետական մարմիններից պահանջելու այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում են սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունների իսկությունը: Նշված անձինք պարտավոր են հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում տրամադրել հարցման առարկա հանդիսացող փաստաթղթերը: Ընդ որում, մաքսային մարմինն իրավասու է երկարաձգելու դիմումը քննելու ժամկետը, բայց ոչ ավելի, քան այն ընդունելուց հետո 30-րդ օրը:

6. Եթե ապրանքների նկատմամբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգ սահմանելու նպատակը դրանց վերանորոգումն է, ապա որպես մաքսային տարածքում ապրանքների վերամշակման դիմում՝ հայտարարատուն իրավունք ունի օգտագործելու ներկրվող օտարերկրյա ապրանքների մաքսային հայտարարագիրը: Մաքսային մարմինների կողմից ապրանքների վերամշակման նման դիմումը քննելու ժամկետը չպետք է գերազանցի մաքսային հայտարարագրի ստուգման ժամկետը, որը սահմանված է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին կետով:

7. Մաքսային մարմինը մերժում է ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրումը միայն այն դեպքում, երբ դիմում ներկայացնելիս չեն պահպանվել «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառության պահանջները եւ

պայմանները, որոնք սահմանվել են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, ինչպես նաեւ եթե մաքսային մարմինը որոշում է ընդունել վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների հայտարարագրված չափաքանակների եւ ապրանքների վերամշակման ժամկետի վերաբերյալ համաձայնեցումը մերժելու մասին: Ապրանքների վերամշակման թույլտվություն տրամադրելու մասին մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը նշված մերժման մասին գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին:

Հոդված 250. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկումը եւ չեղյալ հայտարարելը

1. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման տրամադրված թույլտվությունը կարող է չեղարկվել մաքսային մարմնի կողմից:

2. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղարկվում է մաքսային մարմնի կողմից, եթե՝

1) Մաքսային միության հանձնաժողովի ընդունած որոշման համաձայն, չի թույլատրվում ապրանքների նկատմամբ սահմանել «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգը,

2) այն ստանալու ժամանակ տեղեկություններ են հաղորդվել օտարերկրյա ապրանքների, վերամշակման արդյունքների, մնացորդների եւ թափոնների, չափաքանակների մասին, որոնց հայտարարումը հանգեցրել է մաքսային վճարների գումարի նվազեցման՝ բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքերի:

3. Նախքան սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին որոշում ընդունելը՝ մաքսային մարմինը հայտարարատուին գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության հնարավոր չեղարկման մասին՝ նշելով չեղարկման պատճառները: Եթե ծանուցում ստանալուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում հայտարարատուն (մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն

ստացած անձը) միջոցներ չի ձեռնարկում՝ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման պատճառների վերացման հարցում, ապա ապրանքների վերամշակման նման թույլտվությունը չեղարկվում է մաքսային մարմնի կողմից:

4. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշումը, որն ընդունվել է սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, ուժի մեջ է մտնում Մաքսային միության հանձնաժողովի կողմից ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից: Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշումը, որն ընդունվել է սույն հոդվածի 2-րդ մասի 2-ին կետի համաձայն, ուժի մեջ է մտնում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշման ընդունման ամսաթվից:

5. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման դեպքում օտարերկրյա ապրանքների նկատմամբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի սահմանում՝ չեղարկված թույլտվության համաձայն, չի թույլատրվում իսկ նախքան մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկումը, սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ թույլատրվում է ավարտել նշված մաքսային ընթացակարգը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 34-րդ գլխի համաձայն:

6. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման դեպքում սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնց վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների նկատմամբ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման օրը «վերաարտահանում» մաքսային ընթացակարգը սահմանված չէ, ենթակա են մաքսատուրքի, հարկերի վճարման՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն:

7. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ է համարվում մաքսային մարմնի կողմից, եթե այն ստանալիս տրամադրվել են ակնհայտ ոչ արժանահավատ տեղեկություններ այն ապրանքների, վերամշակման արդյունքների, մնացորդների եւ թափոնների, չափաքանակների մասին, որոնց հայտարարումը հանգեցրել է

մաքսային վճարների նվազեցման:

8. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշումը գործում է մաքսային տարածքում՝ ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրման ամսաթվից:

9. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշումը ընդունելու օրվանից մաքսային մարմինները դադարեցնում են մաքսային գործողությունների կատարումը օտարերկրյա ապրանքների, վերամշակման արդյունքների, մնացորդների եւ թափոնների նկատմամբ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղյալ հայտարարելու հետ կապված:

10. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելիս այդ մասին որոշումը ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում վճարման ենթակա են՝

1) մաքսատուրքերը եւ հարկերը մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու հետ կապված՝ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների նկատմամբ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 251-րդ հոդվածի դրույթներով սահմանված կարգով:

2) ներմուծման մաքսատուրքերը՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված վերամշակման արդյունքների համար:

11. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման ձեւը եւ կարգը, չեղյալ հայտարարելու ձեւն ու կարգը սահմանվում են գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, որն իրավասու է մաքսային գործի ոլորտում:

Հոդված 251. Օտարերկրյա ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելը (համարժեք փոխհատուցում)

1. Մաքսային մարմնի թույլտվությամբ՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները կարելի է փոխարինել համարժեք

ապրանքներով՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն: Համարժեք փոխհատուցման կիրառման թույլտվության մասին մաքսային մարմինը նշում է մաքսային տարածքում ապրանքների թույլտվության մեջ:

2. Եթե թույլատրվում է օտարերկրյա ապրանքների փոխարինումը համարժեք ապրանքներով, ապա համարժեք ապրանքներից ստացված՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների արտահանումը հնարավոր է՝ նախքան Մաքսային միության մաքսային տարածք օտարերկրյա ապրանքների ներմուծումը, որի մասին նշվում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ: Ընդ որում, օտարերկրյա ապրանքների ներկրման ժամկետը որոշվում է այն անձի կողմից, որն ստացել է կամ ստանում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն՝ այն համաձայնեցնելով մաքսային մարմնի հետ:

3. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրավասու է սահմանելու ապրանքների որոշ կատեգորիաների նկատմամբ համարժեք փոխհատուցում կիրառելու կարգը:

Հոդված 252. Ապրանքների հաշվառումը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում: «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառության մասին հաշվետվություն

1. Հայտարարատուն, ինչպես նաև «մաքսային տարածքում վերամշակում» ընթացակարգով ձեռակերպված ապրանքների վերամշակում կատարող անձինք պարտավոր են վարել ապրանքների հաշվառում:

2. Ապրանքների հաշվառումը վարվում է հաշվապահական եւ հարկային հաշվառում վարելու մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջների համաձայն:

3. Եթե ապրանքների վերամշակման ժամկետի ընթացքում միեւնույն օտարերկրյա ապրանքները ներկրվում են մի քանի ապրանքների խմբաքանակով, ապա նման ապրանքների հաշվառումը մաքսային նպատակներով վարվում է՝ ելնելով այն ենթադրությունից, որ ավելի վաղ ներկրված ապրանքները առաջնահերթորեն են վերամշակվում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնը չի կիրառվում, եթե վերամշակման թույլտվության մեջ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա

ապրանքների նույնականացման եղանակով ենթադրվում է, որ կոնկրետ օտարերկրյա ապրանքը պետք է համադրվի վերամշակումից հետո ստացվելիք այն արդյունքի հետ, որի պատրաստման ժամանակ տվյալ օտարերկրյա ապրանքն օգտագործվել է: Հայտարարատուն իրավունք ունի հրաժարվելու այս կանոնի կիրառությունից, եթե այն համատեղելի չէ հաշվապահական հաշվառման՝ իրենց կողմից օգտագործվող մեթոդների հետ:

5. Ապրանքների հայտարարատուն ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ մաքսային մարմին հաշվետվություն է ներկայացնում, որում «մաքսային տարածքում վերամշակում» ընթացակարգի կիրառման պահանջների եւ պայմանների կատարման մասին տեղեկություններ են ներառվում՝ Դաշնային օրենքի 177-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերի համաձայն:

6. Եթե օտարերկրյա ապրանքները ներկրվում են Ռուսաստանի Դաշնություն եւ (կամ) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներն արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից մի քանի ապրանքների խմբաքանակով, ապա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների քանակության վերջնական հաշվարկը, որը նշված է ապրանքների վերամշակման թույլտվության մեջ, իրականացվում է մաքսային տարածքում՝ վերամշակման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 30 օր հետո:

Հոդված 253. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը եւ կասեցումը

1. «Վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն:

2. Վերամշակման գործողությունների չենթարկված՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների եւ (կամ) օտարերկրյա ապրանքների նկատմամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգ սահմանելիս մաքսատուրքերը եւ հարկերը վճարվում են՝ հաշվի առնելով Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

3. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ նախքան ապրանքների վերամշակման ժամկետի ավարտը (ապրանքների վերամշակման ժամկետի ընթացքը) կարող է կասեցվել: «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային

ընթացակարգի գործողության կասեցման եւ վերսկսման կարգը սահմանվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ:

**Գլուխ 32. «ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Հոդված 254. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի էությունը եւ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները

1. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի էությունը եւ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 252-րդ եւ 253-րդ հոդվածների համաձայն:

2. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման համար մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման համար թույլտվություն ստացած անձի կողմից, ինչպես նախատեսված է սույն Դաշնային օրենքի 258-րդ հոդվածով:

Հոդված 255. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը

1. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը սահմանվում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 256-րդ հոդվածով սահմանված ժամկետում եւ մաքսային մարմնի հետ համաձայնության հիմքով, երբ վերջինս քննում է ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու դիմումը:

2. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի պատճառաբանման դեպքում մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետով:

3. Մաքսային մարմինը քննում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելու դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում եւ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին

տեղեկացնում է վերամշակման ժամկետի երկարաձգման կամ նման երկարաձգումը մերժելու մասին: Մաքսային մարմինն իրավասու է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետի երկարաձգումը մերժելու այն դեպքում, եթե հայտարարատուն չի պահպանում մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման մաքսային ընթացակարգի համար կիրառելի պահանջները, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ: Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելու մասին մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը գրավոր է տեղեկացնում հայտարարատուին նշված մերժման մասին:

Հոդված 256. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքում ապրանքների նույնականացումը

1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքում ապրանքների նույնականացման նպատակով օգտագործվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 255-րդ հոդվածում նշված միջոցները:

2. Հայտարարատուի կողմից առաջարկվող՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում արտահանված ապրանքների նույնականացման հայտարարված միջոցի նպատակահարմարությունը սահմանվում է մաքսային մարմնի կողմից՝ հաշվի առնելով ապրանքների վերամշակման գործողությունների եւ ապրանքների հատկանիշները: Եթե մաքսային մարմինը հայտարարատուի կողմից առաջարկվող՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում ապրանքների նույնականացման միջոցը ընդունելի չհամարի, ապա մաքսային մարմինն իրավասու է ինքնուրույն որոշելու ապրանքների նույնականացման միջոցը:

Հոդված 257. Մաքսային տարածքից դուրս վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակները

1. Մաքսային տարածքում վերամշակումից ստացվելիք արդյունքների չափաքանակները

սահմանվում են մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից, ելնելով փաստացի պայմաններից, որոնց ներքո իրականացվում է ապրանքների վերամշակումը եւ որոնք համաձայնեցվում են մաքսային մարմնի հետ, երբ վերջինս քննում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն տրամադրելու դիմումը՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Մաքսային մարմինների հետ արդյունքների չափաքանակների համաձայնության ժամանակ հաշվի են առնվում փորձագիտական կազմակերպությունների եզրակացությունները, որոնք հիմնվում են ապրանքների վերամշակման կոնկրետ տեխնոլոգիական պրոցեսի վրա:

2. Եթե պահպանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 250-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանները, ապա գործադիր իշխանության դաշնային մարմինները, որոնք իրավասություն ունեն Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից, կարող են սահմանել վերամշակման արդյունքների ստանդարտ չափաքանակները:

Հոդված 258. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 253-րդ եւ 257-րդ հոդվածներով նախատեսված՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ է համարվում մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը: Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը պետք է ներառի այն տեղեկությունները, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 257-րդ հոդվածով:

2. Օտարերկրյա ապրանքների, դրանց վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, մնացորդների եւ թափոնների արժեքի մասին տեղեկությունների բացակայության դեպքում մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշվում է արժեքների համապատասխան տիրույթը: Եթե արտաքին տնտեսական գործարքների կատարումը հաստատող կամ արտաքին տնտեսական գործարքների շրջանակից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթերի մասին տեղեկություններ բացակայում են, ապա այդ տեղեկությունները նշվում են մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության մեջ՝ սույն

հողվածի 4-րդ մասով նախատեսված կարգով ոչ ուշ, քան ապրանքների հայտարարագրման օրը:

3. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը գործում է ապրանքների վերամշակման սահմանված ժամկետում

4. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի գրավոր դիմումով եւ մաքսային մարմնի թույլտվությամբ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման համար տրված թույլտվության մեջ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք չեն հակասում Մաքսային միության մաքսային օրենսդրությանը, ինչպես նաեւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը: Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն տված մաքսային մարմինը քննում է դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում, իսկ բացառապես սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների նշման դեպքում՝ երեք աշխատանքային օրերի ընթացքում ու, համաձայնության դեպքում, կատարում է փոփոխությունները եւ լրացումները: Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու՝ մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին՝ նշված մերժման մասին:

Հոդված 259. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրումը

1. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն կարող է ստանալ ցանկացած ռուսաստանյան անձ:

2. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու համար շահագրգիռ անձը գրավոր դիմում է ներկայացնում մաքսային մարմին՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման մասին, որի գործունեության տարածքում այն գրանցված է որպես հարկատու՝ հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

3. Ապրանքների վերամշակման դիմումի մեջ նշվում են հետեյալ տեղեկությունները՝

1) դիմումատուի (հայտարարատուի) մասին.

2) ապրանքների վերամշակման գործողություն անմիջականորեն իրականացնող անձի (անձանց) եւ նրա (նրանց) գտնվելու վայրի մասին,

3) վերամշակման համար նախատեսված ապրանքների եւ նման վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների մասին (անվանումը, դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն չափման հիմնական կամ լրացուցիչ միավորների քանակը, մոտավոր արժեքը կամ դրա տիրույթը),

4) ապրանքների վերամշակման գործողությունների մասին, այդ թվում՝ տեխնոլոգիան եւ գործողությունների կատարման ժամկետները,

5) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակների մասին,

6) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների մասին (անվանումը, դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն չափման հիմնական կամ լրացուցիչ միավորների ենթադրվող քանակը, արժեքը կամ դրա տիրույթը),

7) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում՝ Մաքսային միության ապրանքների նույնականացման եղանակների մասին,

8) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները օտարերկրյա ապրանքներով փոխարինելու մասին,

9) ապրանքների վերամշակման ժամկետի մասին:

4. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման մասին դիմումին կցվում են փաստաթղթեր, որոնք հիմնավորում են դիմումի մեջ նշված տեղեկությունների իսկությունը:

5. Մաքսային մարմինը քննում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման մասին դիմումը եւ դրան կից փաստաթղթերը՝ դրանք ստանալուց հետո 15 օրերի ընթացքում: Մաքսային մարմինն իրավասու է երրորդ անձանցից, ինչպես նաեւ պետական մարմիններից պահանջելու այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում են դիմումի

մեջ նշված տեղեկությունների իսկությունը: Ընդ որում, մաքսային մարմինն իրավասու է երկարաձգելու մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման մասին դիմումը քննելու ժամկետը, բայց ոչ ավելի, քան այն ընդունելուց հետո 30-րդ օրը:

6. Եթե ապրանքների նկատմամբ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգ սահմանելու նպատակը դրանց վերանորոգումն է, ապա որպես սույն մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման մասին դիմում՝ կարող է օգտագործվել մաքսային հայտարարագիրը: Նման դիմումը քննելու ժամկետը չպետք է գերազանցի Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով սահմանված ժամկետը:

7. Մաքսային մարմինը մերժում է ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրումը մաքսային տարածքից դուրս միայն այն դեպքում, երբ մաքսային տարածքից դուրս վերամշակում անցկացնելու մասին դիմում ներկայացնելիս հայտարարատուն չի պահպանել «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառության պահանջները եւ պայմանները, որոնք սահմանվել են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, ինչպես նաեւ եթե մաքսային մարմինը որոշում է ընդունել վերամշակման արդյունքների հայտարարագրված չափաքանակների եւ ապրանքների վերամշակման ժամկետի համաձայնեցումը մերժելու մասին: Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության՝ մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը նշված մերժման մասին գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին:

Հոդված 260. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկումը եւ չեղյալ հայտարարելը

1. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը կարող է չեղարկվել մաքսային մարմնի կողմից հետեւյալ դեպքերում՝

1) եթե մաքսային միության հանձնաժողովի ընդունած որոշման համաձայն՝ չի թույլատրվում ապրանքների նկատմամբ սահմանել «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգ,

2) եթե հայտարարատուն չի պահպանում «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման պահանջները եւ պայմանները, որոնք սահմանված են Մաքսային միության օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ,

3) եթե այն ստանալու ժամանակ տեղեկություններ են տրամադրվել Մաքսային միության ապրանքների, վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, չափաքանակների մասին, որոնց հայտարարումը հանգեցրել է մաքսային վճարների գումարի նվազեցման՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի:

2. Նախքան սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին որոշում ընդունելը՝ մաքսային մարմինը հայտարարատուին գրավոր տեղեկացնում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության հնարավոր չեղարկման մասին՝ նշելով չեղարկման պատճառները: Եթե 10 աշխատանքային օրերի ընթացքում հայտարարատուն միջոցներ չի ձեռնարկում՝ մաքսային տարածքից դուրս վերամշակման թույլտվության չեղարկման պատճառները վերացնելու համար, ապա մաքսային տարածքից դուրս վերամշակման նման թույլտվությունը չեղարկվում է մաքսային մարմնի կողմից:

3. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշումը, որն ընդունվել է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, գործում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից ընդունված համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից: Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշումը, որն ընդունվել է սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն, գործում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշման ընդունման ամսաթվից:

4. Սույն հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի համաձայն՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման դեպքում Մաքսային միության ապրանքների՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպում չի թույլատրվում, իսկ այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվել է «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգ՝ նախքան մաքսային

տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկումը, թույլատրվում է ավարտել նշված մաքսային ընթացակարգը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 35-րդ գլխի համաձայն:

5. Սույն հոդվածի 1-ին մասի, 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման դեպքում Մաքսային միության ապրանքների՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպում չի թույլատրվում մաքսային տարածքում վերամշակման չեղարկված թույլտվության համաձայն, իսկ Մաքսային միության այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվել է «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգ, որոնց վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման օրը ձեւակերպված չեն «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով, կամ «ներքին սպառման համար բացթողում» ընթացակարգով, նախքան մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկումը, ենթակա են արտահանման մաքսատուրքերի վճարման: Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման օրը չեն ձեւակերպվել «վերաարտահանում» կամ «բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, ենթակա են ներմուծման մաքսատուրքերի եւ հարկերի վճարման:

6. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը կարող է չեղյալ համարվել մաքսային մարմնի կողմից, եթե այն ստանալիս տրամադրվել են ակնհայտ ոչ արժանահավատ տեղեկություններ՝ Մաքսային միության այն ապրանքների, վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, չափաքանակների մասին, որոնց հայտարարումը հանգեցրել է մաքսային վճարների նվազեցման:

7. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշումը գործում է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրման ամսաթվից:

8. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշումը ընդունելու օրվանից մաքսային մարմինները դադարեցնում են մաքսային գործողությունների կատարումը Մաքսային միության

ապրանքների, վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների նկատմամբ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղյալ հայտարարման համաձայն:

9. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելիս այդ մասին որոշում ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում վճարման ենթակա են՝

1) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ Մաքսային միության ապրանքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության համաձայն, որը չեղյալ է հայտարարվել մաքսային մարմնի կողմից,

2) ներկրման մաքսատուրքերը, հարկերը Մաքսային միության տարածք ներկրված՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների նկատմամբ՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության համաձայն, որը չեղյալ է հայտարարվել մաքսային մարմնի կողմից:

10. Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման ձեւը եւ կարգը, չեղյալ հայտարարելու ձեւն ու կարգը սահմանվում է գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, որն իրավասու է մաքսային գործի ոլորտում:

Հոդված 261. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարինումը օտարերկրյա ապրանքներով

1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարինումը օտարերկրյա ապրանքներով թույլատրում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 259-րդ հոդվածի համաձայն:

2. Եթե վերամշակումը կատարվել է անհատույց (երաշխիքային) վերանորոգման նպատակով, որն իրականացվում է երաշխիքային ժամանակահատվածում, ապա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարինումը օտարերկրյա ապրանքներով թույլատրվում է հայտարարատուի դիմումի հիման վրա, եթե ապրանքի օտարերկրյա արտադրողը պնդում է, որ անհրաժեշտ է անսարք ապրանքը փոխարինել համարժեք

ապրանքով եւ որ նման փոխարինման հնարավորությունը նախատեսված է արտադրողի հետ կնքված պայմանագրով կամ նրա կողմից տրամադրված երաշխիքով եւ այդ ապրանքները ձեւակերպվում են «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով վերամշակման ժամկետի ընթացքում: Սույն մասի դրույթները չեն կիրառվում եթե Ռուսաստանի Դաշնություն առաջին անգամ ներկրման ժամանակ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, հաշվի է առնվել խոտանի (խոտանների) առկայությունը, որը պատճառ է եղել այդ ապրանքների անհատույց (երաշխիքային) վերանորոգման համար: Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները օտարերկրյա ապրանքներով փոխարինելու թույլտվության մասին մաքսային մարմինը նշում է մաքսային տարածքից դուրս ապրանքների թույլտվության մեջ: Այն դեպքերում, երբ որպես մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն օգտագործվում է ապրանքների հայտարարագիրը, ապա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները օտարերկրյա ապրանքներով փոխարինելու թույլտվությունը տրամադրում է առանձին փաստաթղթով, որի ձեւը եւ տրամադրման կարգը սահմանվում է մաքսային գործի ոլորտում իրավասու գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից: Թույլտվությունը տրամադրվում է ապրանքների բացթողման ժամկետներում, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով՝ կամայական ձեւաչափով, համարժեք օտարերկրյա ապրանքներով վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարինում պահանջող պատճառների շարադրմամբ՝ հայտարարատուի գրավոր դիմումի հիման վրա եւ դրան կից փաստաթղթերով, որոնք հաստատում են դիմումի մեջ նշված տեղեկությունները եւ սույն մասով նախատեսվող պայմանների կատարումը:

3. Համարժեք օտարերկրյա ապրանքներով վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարինման կարգը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերից զատ այլ դեպքերում սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

Հոդված 262. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառության մասին հաշվետվություն

1. Հայտարարատուն ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ մաքսային մարմին է ներկայացնում հաշվետվություն, որում ներառվում են տեղեկություններ «մաքսային տարածքից

դուրս վերամշակում» ընթացակարգի կիրառման պահանջների եւ պայմանների կատարման մասին՝ Դաշնային օրենքի 177-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերի համաձայն:

2. Եթե վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները ներկրվում են Մաքսային միության մաքսային տարածք մի քանի խմբաքանակով, ապա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների քանակության վերջնական հաշվարկը, որը նշված է մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվության մեջ, իրականացվում է մաքսային տարածքային տարածքից դուրս վերամշակման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 30 օր հետո:

Հոդված 263. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը

1. Ապրանքների վերամշակման ժամկետի ավարտից ոչ ուշ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները եւ վերամշակման գործողությունների չենթարկված ապրանքները պետք է ձեւակերպվեն «վերաներմուծում», «ներքին սպառման համար բացթողում» կամ «արտահանում» մաքսային ընթացակարգերով (բացառությամբ, եթե Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, նշված ապրանքները պետք է պարտադիր հետ ներկրվեն Ռուսաստանի Դաշնություն)՝ Մաքսային միության Մաքսային օրենսդրությամբ նախատեսված կարգի եւ պայմանների համաձայն:

2. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների նկատմամբ կարող է սահմանվել «վերաներմուծում» կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգերը մեկ կամ մի քանի խմբաքանակներով (առաքումներով):

3. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների նկատմամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգ սահմանելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 262-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ «արտահանում» մաքսային ընթացակարգ սահմանելիս մաքսատուրքերի, հարկերի հաշվարկն ու վճարումն իրականացվում են՝ հաշվի

առնելով Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Գլուխ 33. «ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 264. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի էությունը եւ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները

1. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի էությունը եւ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 264-րդ եւ 265-րդ հոդվածների համաձայն:

2. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման համար մաքսային հայտարարագիրը ներկայացվում է ներքին սպառման համար վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից, ինչպես նախատեսված է սույն Դաշնային օրենքի 269-րդ հոդվածով:

Հոդված 265. Ապրանքներ, որոնց նկատմամբ թույլատրվում է իրականացնել ներքին սպառման համար վերամշակում

Ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ թույլատրվում է իրականացնել ներքին սպառման համար վերամշակում, սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

Հոդված 266. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացումը

1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացման նպատակով օգտագործվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 267-րդ հոդվածում նշված միջոցները:

2. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքում օտարերկրյա ապրանքների նույնականացման՝ հայտարարատուի կողմից հայտարարված միջոցի նպատակահարմարությունը սահմանվում է մաքսային մարմնի կողմից՝ հաշվի առնելով ապրանքների վերամշակման գործողությունների եւ ապրանքների առանձնահատկությունները:

Հոդված 267. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը

1. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը սահմանվում են ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 268-րդ հոդվածով սահմանված ժամկետում եւ մաքսային մարմնի հետ համաձայնության հիմքով, երբ վերջինս քննում է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու դիմումը:

2. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի պատճառաբանման դեպքում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետով:

3. Մաքսային մարմինը քննում է ներքին սպառման համար վերամշակման ժամկետը երկարաձգելու դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում եւ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին տեղեկացնում է վերամշակման ժամկետի երկարաձգման կամ դրա երկարաձգումը մերժելու մասին: Մաքսային մարմինն իրավասու է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետի երկարաձգումը մերժել այն դեպքում, եթե հայտարարատուն չի պահպանում «մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման» մաքսային ընթացակարգի համար կիրառելի պահանջները, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 36-րդ հոդվածով եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

4. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետի երկարաձգման մասին մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը նշված մերժման մասին գրավոր տեղեկացնում է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին:

Հոդված 268. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակները

1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակները սահմանվում են

ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի կողմից, ելնելով այն փաստացի պայմաններից, որոնց համաձայն, իրականացվում է ապրանքների վերամշակումը՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են սույն հոդվածի 2-րդ մասով եւ համաձայնեցվում են մաքսային մարմնի հետ, երբ վերջինս քննում է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու դիմումը: Մաքսային մարմինների հետ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակների համաձայնության ժամանակ հաշվի են առնվում փորձագիտական կազմակերպությունների եզրակացությունները, որոնք հիմնվում են վերամշակման կոնկրետ տեխնոլոգիական պրոցեսի վրա:

2. Եթե պահպանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 270-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանները, ապա գործադիր իշխանության դաշնային մարմինները, որոնք իրավասություն ունեն Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից, կարող են սահմանել վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ստանդարտ չափաքանակները:

Հոդված 269. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 265-րդ եւ 269-րդ հոդվածներով նախատեսված՝ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ է համարվում ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը: Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշվում են տեղեկություններ, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 269-րդ հոդվածով:

2. Օտարերկրյա ապրանքների, վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, մնացորդների եւ թափոնների արժեքի մասին տեղեկությունների բացակայության դեպքում ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության մեջ նշվում է արժեքների համապատասխան տիրույթը:

3. Եթե արտաքին տնտեսական գործարքների կատարումը հաստատող կամ արտաքին տնտեսական գործարքների շրջանակից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման եւ

(կամ) տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթերի մասին տեղեկություններ բացակայում են, ապա այդ տեղեկությունները նշվում են ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության մեջ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով ոչ ուշ, քան ապրանքների հայտարարագրման օրը:

4. Այն դեպքում, երբ ապրանքները մաքսային տարածքում ձեւակերպվում են «ներքին սպառման համար վերամշակում» ընթացակարգով իրավասու տնտեսական օպերատորի կողմից, ապա, որպես մաքսային տարածքում վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ, կարող է օգտագործվել իրավասու տնտեսական օպերատորների եւ մաքսային մարմնի միջեւ կնքված համաձայնագիրը, որը ստորագրված է սույն Դաշնային օրենքի 86-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պայմանով, որ նշված համաձայնագրում ներառվեն այն տեղեկությունները, որոնք նախատեսված են սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով:

5. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման տրամադրված թույլտվությունը չի կարող փոխանցվել այլ անձի:

6. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձի գրավոր դիմումով եւ մաքսային մարմնի թույլտվությամբ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման տրված թույլտվության մեջ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք չեն հակասում Մաքսային միության մաքսային օրենսդրությանը, ինչպես նաեւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը: Նման թույլտվություն տված մաքսային մարմինը քննում է դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում, իսկ բացառապես սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունների նշման դեպքում՝ երեք աշխատանքային օրերի ընթացքում ու համաձայնության դեպքում կատարում է փոփոխությունները եւ լրացումները: Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու՝ մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը նշված մերժման մասին գրավոր տեղեկացնում է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստացած անձին:

Հոդված 270. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրման կարգը

1. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն կարող է ստանալ ցանկացած ռուսաստանյան անձ:

2. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվություն ստանալու համար շահագրգիռ անձը գրավոր դիմում է ներկայացնում մաքսային մարմին, որի գործունեության տարածքում այն գրանցված է որպես հարկատու՝ հարկերի եւ հավաքագրումների մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

3. Ապրանքների վերամշակման դիմումի մեջ նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

1) դիմումատուի (հայտարարատուի) մասին.

2) ապրանքների վերամշակման գործողությունն անմիջականորեն իրականացնող անձի (անձանց) մասին,

3) վերամշակման համար նախատեսված ապրանքների եւ նման վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, ինչպես նաեւ թափոնների ու մնացորդների մասին (անվանումը, դասակարգման ծածկագիրը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն չափման հիմնական կամ լրացուցիչ միավորների քանակը, արժեքը կամ դրա տիրույթը),

4) ապրանքների վերամշակման գործողությունների, դրանց կատարման եղանակների եւ ժամկետների մասին,

5) արտադրական հզորությունների գտնվելու վայրի մասին, որոնց միջոցով իրականացվում են ապրանքների վերամշակման գործողությունները,

6) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակների մասին,

7) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում՝ օտարերկրյա ապրանքների նույնականացման եղանակների մասին,

8) ապրանքների վերամշակման ժամկետի մասին,

9) առեւտրային նպատակներով թափոնների հետագա օգտագործման հնարավորության մասին:

4. Ապրանքների վերամշակման մասին դիմումին կցվում են այն փաստաթղթերը, որոնք հիմնավորում են դիմումի մեջ նշված տեղեկությունների իսկությունը:

5. Մաքսային մարմինը քննում է դիմումը եւ դրան կից փաստաթղթերը դրանք ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Մաքսային մարմինն իրավասու է երրորդ անձանցից, ինչպես նաեւ պետական մարմիններից պահանջելու այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում են սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունների իսկությունը: Նշված անձինք պարտավոր են հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում տրամադրել հարցման առարկա հանդիսացող փաստաթղթերը: Ընդ որում, մաքսային մարմինն իրավասու է երկարաձգելու դիմումը քննելու ժամկետը, բայց ոչ ավելի, քան այն ընդունելուց հետո 30-րդ օրը:

6. Մաքսային մարմինը մերժում է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրումը միայն այն դեպքում, երբ դիմում ներկայացնելիս հայտարարատուն չի պահպանել «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառության պահանջները եւ պայմանները, որոնք սահմանվել են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, ինչպես նաեւ եթե մաքսային մարմինը որոշում է ընդունել մերժել վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների չափաքանակների եւ ժամկետի համապատասխանեցումը:

7. Ներքին սպառման համար ապրանքների ժամկետը երկարաձգելու մասին մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված լինի եւ պատճառաբանվի: Մաքսային մարմինը գրավոր է տեղեկացնում հայտարարատուին նշված մերժման մասին:

Հոդված 271. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկումը եւ չեղյալ հայտարարելը

1. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը կարող է չեղարկվել մաքսային մարմնի կողմից հետեւյալ դեպքերում՝

1) հայտարարատուն չի պահպանում «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման պահանջները եւ պայմանները, որոնք սահմանված են Մաքսային միության օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ,

2) այն ստանալու ժամանակ տեղեկություններ են հաղորդվել օտարերկրյա ապրանքների, վերամշակման արդյունքների, մնացորդների եւ թափոնների, չափաքանակների մասին, որոնց հայտարարումը հանգեցրել է մաքսատուրքերի գումարի նվազեցման՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի:

2. Նախքան ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման մասին որոշում ընդունելը՝ մաքսային մարմինը հայտարարատուին գրավոր տեղեկացնում է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության հնարավոր չեղարկման մասին՝ նշելով չեղարկման պատճառները: Եթե ծանուցումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում հայտարարատուն միջոցներ չի ձեռնարկում՝ ներքին սպառման համար ապրանքների թույլտվության չեղարկման պատճառները վերացնելու համար, ապա նշված թույլտվությունը չեղարկվում է մաքսային մարմնի կողմից:

3. Ներքին սպառման համար ապրանքների թույլտվության չեղարկման մասին մաքսային մարմնի որոշումը գործում է մաքսային մարմնի կողմից ներքին սպառման համար ապրանքների թույլտվության չեղարկման մասին որոշում ընդունելու օրվանից:

4. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման դեպքում օտարերկրյա ապրանքների նկատմամբ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի սահմանում վերամշակման չեղարկված թույլտվության համաձայն չի թույլատրվում:

5. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման դեպքում հայտարարատուն պարտավոր է «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ նշված թույլտվության չեղարկման օրը դեռեւս չվերամշակված օտարերկրյա ապրանքների համար վճարել ներկրման մաքսատուրքեր, կամ պետք է դուրս բերի այդ ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքից դուրս «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի համաձայն: «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ ապրանքների վերամշակման

նշված թույլտվության չեղարկման օրը վերամշակված օտարերկրյա ապրանքների նկատմամբ թույլատրվում է ավարտել «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգը՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 36-րդ գլխով սահմանված կարգով:

6. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը կարող է չեղյալ համարվել մաքսային մարմնի կողմից, եթե այն ստանալիս տրամադրվել են ակնհայտ ոչ արժանահավատ տեղեկություններ այն ապրանքների, վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, մնացորդների եւ թափոնների, չափաքանակների մասին, որոնց հայտարարումը հանգեցրել է մաքսային վճարների նվազեցման:

7. Մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշումը գործում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվության տրամադրման ամսաթվից:

8. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին մաքսային մարմնի որոշում ընդունելու օրվանից մաքսային մարմինները դադարեցնում են մաքսային գործողությունների կատարումը օտարերկրյա ապրանքների, վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, մնացորդների եւ թափոնների նկատմամբ՝ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելու հետ կապված:

9. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվությունը չեղյալ հայտարարելիս՝ չեղյալ հայտարարելու մասին որոշման ընդունման օրվանից 10 օրվա ընթացքում «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ նշված որոշման ընդունման օրը դեռեւս չվերամշակված օտարերկրյա ապրանքների համար պետք է վճարվեն ներկրման մաքսատուրքեր:

10. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության չեղարկման ձեւը եւ կարգը, չեղյալ հայտարարելու ձեւն ու կարգը սահմանվում են գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, որն իրավասու է մաքսային գործի ոլորտում:

Հողված 272. Ապրանքների հաշվառումը «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառության մասին հաշվետվություն

1. Հայտարարատուն, ինչպես նաև «ներքին սպառման համար վերամշակում» ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակում կատարող անձինք, պարտավոր են վարել ապրանքների հաշվառում:

2. Ապրանքների հաշվառումը վարվում է հաշվապահական եւ հարկային հաշվառում վարելու մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջների համաձայն:

3. Եթե ապրանքների վերամշակման ժամկետի ընթացքում միեւնույն օտարերկրյա ապրանքները ներկրվում են մի քանի ապրանքի խմբաքանակով, ապա նման ապրանքների հաշվառումը մաքսային նպատակներով վարվում է՝ ելնելով այն ենթադրությունից, որ ավելի վաղ ներկրված ապրանքներն առաջնահերթորեն են վերամշակվում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնը չի կիրառվում, եթե վերամշակման թույլտվության մեջ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացման եղանակով ենթադրվում է, որ կոնկրետ օտարերկրյա ապրանքը պետք է համադրվի վերամշակումից հետո ստացվելիք այն արդյունքի հետ, որի պատրաստման ժամանակ տվյալ օտարերկրյա ապրանքն օգտագործվել է: Հայտարարատուն իրավունք ունի հրաժարվելու այս կանոնի կիրառությունից, եթե այն համատեղելի չէ հաշվապահական հաշվառման՝ իրենց կողմից օգտագործվող մեթոդների հետ:

5. Ապրանքների հայտարարատուն ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ մաքսային մարմին հաշվետվություն է ներկայացնում, որում ներառվում են տեղեկություններ «ներքին սպառման համար վերամշակում» ընթացակարգի կիրառման պահանջների եւ պայմանների կատարման մասին՝ Դաշնային օրենքի 177-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ մասերի համաձայն:

6. Եթե օտարերկրյա ապրանքները ներկրվում են Ռուսաստանի Դաշնություն մի քանի ապրանքների խմբաքանակով, ապա վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների քանակության վերջնական հաշվարկը, որը նշված է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման թույլտվության մեջ, իրականացվում է ներքին սպառման համար վերամշակման

Ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 30 օր հետո:

Հոդված 273. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակումը

Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները եւ վերամշակման գործողության չենթարկվող ապրանքները պետք է ձեւակերպվեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 273-րդ, 275-րդ եւ 276-րդ օրենքներով նախատեսված կարգով՝ ոչ ուշ, քան ապրանքների վերամշակման ժամկետի ավարտը:

Գլուխ 34. «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ (ԸՆԴՈՒՆՈՒՄ)» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 274. «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 277-րդ եւ 278-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 275. Ժամանակավոր ներմուծված ապրանքների օգտագործումը եւ տնօրինումը

1. Այն ապրանքների օգտագործումը եւ տնօրինումը, որոնց նկատմամբ սահմանվել է «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգ, իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 279-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները պահպանելով:

2. Ժամանակավոր ներմուծված ապրանքները պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման տակ եւ օգտագործվեն նրա կողմից՝ բացառությամբ սույն Դաշնային օրենքի 276-րդ եւ 277-րդ հոդվածներով սահմանված դեպքերի:

Հոդված 276. Առանց մաքսային մարմինների թույլտվության՝ հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխանցումն այլ անձի տիրապետմանը եւ օգտագործմանը

1. Հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխանցումն այլ անձի տիրապետմանը եւ օգտագործմանը առանց մաքսային մարմինների թույլտվության՝ հնարավոր է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նպատակներով, ինչպես նաեւ.

1) իրացման եւ շրջանառության համար ենթադրվող ապրանքների փաթեթավորման եւ պաշտպանության համար նախատեսված բազմաշրջանառու (վերադարձման) տարայի

ժամանակավոր ներմուծման դեպքում, եթե, արտաքին առևտրային պայմանագրի համաձայն, այդ կամ նույնանման տարան (միեւնույն տեսակի կամ մոտավորապես հավասար արժեքի) ենթակա է վերադարձման,

2) ժամանակավոր ներմուծված ապրանքների հետ փորձարկումներ, ուսումնասիրություններ, փորձաստուգումներ, ստուգումներ անցկացնելու, դրանց հետ փորձեր կամ գիտափորձեր կատարելու կամ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների անցկացման, փորձերի եւ գիտափորձերի կատարման ընթացքում օգտագործելու նպատակով,

3) Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված այլ նպատակներով:

2. Ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձի տիրապետմանը եւ օգտագործմանը փոխանցելիս՝ հայտարարատուն պարտավոր է կամայական ձեւաչափով գրավոր ծանուցել այն մաքսային մարմնին, որտեղ իրականացվել է այդ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգի սահմանումը, նշելով այն անձի անվանումը եւ հասցեն, որին փոխանցվում են ապրանքները, դրանք փոխանցելու նպատակը, ինչպես նաեւ այդ ապրանքների գտնվելու վայրը, եթե այդ ապրանքների արժեքը գերազանցում է 500 000 ռուբլին:

3. Առանց մաքսային մարմնի թույլտվության՝ ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը եւ օգտագործմանը փոխանցելը «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի հայտարարատուին չի ազատում Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 37-րդ գլխով սահմանված պահանջները եւ պայմանները պահպանելուց: Այն անձինք, որոնց հայտարարատուն փոխանցել է ժամանակավոր ներմուծված ապրանքները, հայտարարատուի հետ համատեղ կրում են մաքսային վճարների կատարման պարտավորությունը՝ մաքսային վճարների կատարման ենթակա գումարների չափով:

4. Մաքսային մարմինը, Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, իրավունք ունի պահանջելու ժամանակավոր ներմուծված ապրանքների փաստացի գտնվելու վայրի վերաբերյալ փաստաթղթեր եւ տեղեկություններ եւ, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, այդպիսի ապրանքներն այլ անձի փոխանցելու դեպքում՝ այդ անձի մասին տեղեկություններ՝ գրավոր եւ (կամ) էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաեւ սահմանել դրանք ներկայացնելու ժամկետը, որը պետք է պահանջվող փաստաթղթերը եւ

տեղեկությունները ներկայացնելու համար բավարար լինի:

Հոդված 277. Հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխանցումն այլ անձի տիրապետման եւ օգտագործման համար՝ մաքսային մարմինների թույլտվությամբ

1. Մաքսային մարմինների թույլտվությամբ՝ հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխանցումն այլ անձի տիրապետմանը եւ օգտագործմանը թույլատրվում է սույն Դաշնային օրենքի 276-րդ հոդվածում չնշված դեպքերում:

2. Հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխանցումն այլ անձի տիրապետմանը եւ օգտագործմանը թույլատրվում է մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ՝ այն պայմանով, որ անձը ստանձնում է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված պահանջներն ու պայմանները հետագայում պահպանելու պարտավորությունը:

3. Ժամանակավորապես ներմուծված ապրանքները փոխանցող հայտարարատուն պետք է վճարի այն ժամանակահատվածի մաքսատուրքերը, հարկերը, որի ընթացքում նա օգտագործել է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի համաձայն, եթե այդ ժամանակահատվածում տեղի են ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք հանգեցրել են մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությանը:

4. Եթե «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգի պահպանումը ապահովվում է սույն Դաշնային օրենքի 227-րդ հոդվածով սահմանված երաշխիքներով՝ այն անձը, որին փոխանցվում են ժամանակավոր ներմուծված ապրանքները, պետք է համապատասխան փաստաթղթերը ձեւակերպի իր անունով:

5. Այն անձը, որին փոխանցվում են ժամանակավոր ներմուծված ապրանքները, օգտվում է իրավունքներից եւ կրում է ժամանակավոր ներմուծման մաքսային ընթացակարգը կիրառելու պարտավորությունները, որոնք սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 37-րդ գլխով եւ մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ՝ մաքսային մարմնի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքները փոխանցելու մասին

որոշումը կայացնելու օրվանից:

Հոդված 278. Ապրանքների ժամանակավոր ներմուծման ժամկետը

1. Ապրանքների ժամանակավոր ներմուծման (ընդունման) ժամկետը մաքսային մարմնի կողմից սահմանվում է հայտարարատուի դիմումի հիման վրա՝ ելնելով այդ ներմուծման նպատակներից եւ հանգամանքներից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 280-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

2. Հայտարարատուի հիմնավորված դիմումի համաձայն՝ ապրանքների ժամանակավոր ներմուծման (ընդունման) ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի սահմաններում:

3. Մաքսային մարմինը ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դիմումն ուսումնասիրում է 10 աշխատանքային օրերի ընթացքում եւ հայտնում է հայտարարատուին ժամկետը երկարաձգելու կամ երկարաձգումը մերժելու մասին: Մաքսային մարմինն իրավունք ունի մերժելու ժամանակավոր ներմուծման (ընդունման) ժամկետը երկարաձգել, եթե հայտարարատուն չի պահպանում մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված՝ «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգը սահմանելու պահանջները եւ պայմանները:

4. Մաքսային մարմնի ժամանակավոր ներմուծման (ընդունման) ժամկետը երկարաձգելը մերժելու մասին որոշումը պետք է հիմնավորված եւ պատճառաբանված լինի: Մաքսային մարմինը գրավոր ծանուցվում է հայտարարատուի նշված մերժման մասին:

Հոդված 279. Գիտական կամ առետրային նմուշների ժամանակավոր ներմուծումը (ընդունումը)

1. Այն ապրանքները, որոնք ժամանակավոր ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն՝ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, դրանց հետ փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու համար կամ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների

ենթարկելու, դրանց հետ փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու ընթացքում օգտագործելու համար (այսուհետ՝ գիտական կամ առետրային նմուշներ), ենթակա են պարզեցված կարգով մաքսային հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթների համաձայն:

2. Ռուսաստանի Դաշնության կառավարությունն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների առավելագույն քանակը եւ (կամ) առավելագույն արժեքը, որոնք միեւնույն անձի կողմից՝ միաժամանակ կամ սահմանված ժամանակահատվածում ժամանակավոր ներմուծվում են որպես գիտական կամ առետրային նմուշներ՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության ակտերի համաձայն:

279-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները կիրառվում են Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝ Օրենքի 279-րդ հոդվածի 4-րդ մասում (սույն փաստաթղթի 322-րդ հոդված) նշված ապրանքերի ցանկը սահմանելու օրվանից:

3. Հայտարարատուն իրավունք ունի հայտարարելու «ոչնչացում» մաքսային ընթացակարգ ժամանակավոր ներմուծված գիտական կամ առետրային նմուշների նկատմամբ՝ սույն Դաշնային օրենքի 39-րդ գլխի դրույթներին համաձայն, այդ թվում նաեւ՝ այն դեպքում, երբ գիտական կամ առետրային նմուշները ոչնչացվել կամ վնասվել են դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, դրանց հետ փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու ընթացքում կամ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու ընթացքում օգտագործելիս:

4. Ռուսաստանի Դաշնության կառավարությունը սահմանում է այն ապրանքների ցանկը, որոնք որպես գիտական կամ առետրային նմուշներ ժամանակավոր ներմուծելու դեպքում «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի եզրափակումը՝ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելու միջոցով, չի թույլատրվում՝ սույն Դաշնային օրենքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե դրանք ոչնչացվել կամ վնասվել են դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, դրանց հետ փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու ընթացքում կամ դրանք

փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու ընթացքում օգտագործելիս:

5. Ուղեւորների անձնական ուղեբեռներում, էքսպրես փոստով Ռուսաստանի Դաշնություն ժամանակավոր ներմուծվող գիտական կամ առետրային նմուշները, ինչպես նաեւ այն գիտական կամ առետրային նմուշները, որոնց արժեքը չի գերազանցում 300 000 ռուբլին, հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ որպես մաքսային հայտարարագիր գիտական կամ առետրային նմուշներն ստացող կազմակերպության գրավոր դիմումը կիրառելով: Նման դիմումի ձեւը սահմանվում է մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

6. Գիտական հաստատությունները եւ դրանց կողմից ստեղծված տնտեսական ընկերություններն իրավունք ունեն գիտական կամ առետրային նմուշների նկատմամբ սահմանել «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգ՝ որպես նախանշման ապացույց օգտագործելով գիտական հաստատության այն գրավոր դիմումը, որը կազմվում է կամայական ձեւաչափով եւ պարունակում է գիտական կամ առետրային նմուշների մասին տեղեկություններ ու Մաքսային միության մաքսային սահմանով գիտական կամ առետրային նմուշների տեղափոխման հանգամանքների նկարագրություն: Այլ անձինք հաստատում են գիտական կամ առետրային նմուշների նշանակությունը՝ օտարերկրյա անձի հետ պայմանագիրը մաքսային մարմին ներկայացնելով, եթե այն տեղեկություններ է պարունակում գիտական կամ առետրային նմուշների ներմուծման նպատակի, ուսումնասիրությունների հաստատված նախագծերի (ծրագրերի) մասին՝ դրանց առկայության դեպքում, կամ ներկայացնել անձի առետրատնտեսական գործունեության վերաբերյալ այլ պայմանագրեր, որոնք պարունակում են տեղեկություններ փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների իրականացման, փորձերի, գիտափորձերի կամ ցուցադրման անցկացման մասին:

7. Գիտական հաստատության կարգավիճակը հաստատվում է դրա հիմնադիր փաստաթղթերով: Ռուսաստանի Դաշնության կառավարությունն իրավունք ունի սահմանելու կազմակերպությունները գիտական հաստատություններ համարելու չափորոշիչները կամ որոշել գործադիր իշխանության դաշնային մարմինը, որն իրավասու է կազմակերպության գիտական հաստատության կարգավիճակը հաստատելու:

8. Ժամանակավոր ներմուծման (ընդունման) դեպքում գիտական կամ առևտրային նմուշների բացթողման ժամկետը կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի ընդունման պահից՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու պայմանով, բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայն սույն Դաշնային օրենքի՝ առանձին փաստաթղթեր կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո: Ռուսաստանի Դաշնության կողմից կարող է սահմանվել այն ապրանքների ցանկը, որոնց բացթողման ժամկետը կարող է կազմել մինչև մեկ աշխատանքային օր, որը հաջորդում է մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվան: Մաքսային մարմինները, անհրաժեշտության դեպքում, նշված ժամկետներում իրականացնում են մաքսային հայտարարագրի, ապրանքների և դրանց փաստաթղթերի ստուգում:

Հոդված 280. «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակումը և կասեցումը

«Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակումը և կասեցումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն:

Գլուխ 35. «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 281. Ժամանակավոր արտահանում մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

Ժամանակավոր արտահանում մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 285-րդ եւ 286-րդ հոդվածներին համաձայն:

Հոդված 282. Ապրանքների առանձին կատեգորիաների ժամանակավոր արտահանման ժամկետը

1. Ապրանքների ժամանակավոր արտահանման ժամկետը մաքսային մարմնի կողմից սահմանվում է հայտարարատուի դիմումի հիման վրա՝ ելնելով այդ արտահանման նպատակներից եւ հանգամանքներից՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի: Հայտարարատուի գրավոր դիմումի համաձայն՝ ապրանքների ժամանակավոր արտահանման ժամկետը կարող է մաքսային մարմնի կողմից երկարաձգվել՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի դրույթները:

2. Մաքսային մարմինն ուսումնասիրում է ժամանակավոր արտահանման ժամկետի երկարաձգման մասին դիմումը 10 աշխատանքային օրերի ընթացքում եւ հայտարարատուին տեղեկացնում է ժամկետի երկարաձգման կամ նման երկարաձգումը մերժելու մասին: Մաքսային մարմինն իրավունք ունի ժամանակավոր արտահանման ժամկետի երկարաձգումը մերժել այն դեպքում, եթե հայտարարատուն չի պահպանում ժամանակավոր արտահանման մաքսային ընթացակարգը կիրառելու պահանջները եւ պայմանները, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրության 38-րդ գլխով եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

3. Ժամանակավոր արտահանման ժամկետի երկարաձգման մասին մաքսային մարմնի մերժումը պետք է հիմնավորված եւ պատճառաբանված լինի: Մաքսային մարմինը հայտարարատուին գրավոր ծանուցում է նշված մերժման մասին:

4. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-դ կետի համաձայն՝ ապրանքների առանձին կատեգորիաների համար, ելնելով Մաքսային միության մաքսային տարածքից դրանք արտահանելու նպատակներից, ինչպես նաև այն ապրանքների համար, որոնց հետադարձ ներմուծումը ժամանակավոր արտահանման դեպքում պարտադիր է՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, ժամանակավոր արտահանման վերջնաժամկետները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

5. Օտարերկրյա անձին ժամանակավոր արտահանված այն ապրանքների նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում, որոնց համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ չի սահմանվել դրանք՝ Ռուսաստանի Դաշնության տարածք վերադարձնելու պարտավորությունը, այդ ապրանքների ժամանակավոր արտահանման ժամկետը ենթակա չէ երկարաձգման, իսկ ապրանքների նկատմամբ պետք է սահմանվի «արտահանում» մաքսային ընթացակարգ:

Հոդված 283. Գիտական կամ առևտրային նմուշների ժամանակավոր արտահանումը

1. Գիտական կամ առևտրային նմուշները, որոնք ժամանակավոր արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից եւ Մաքսային միության սահմաններից դուրս՝ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, դրանց հետ փորձեր, գիտափորձեր կատարելու եւ ցուցադրելու կամ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների անցկացման, փորձերի, գիտափորձերի կատարման եւ ցուցադրման ընթացքում օգտագործելու համար, ենթակա են պարզեցված կարգով մաքսային հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթների համաձայն:

2. Ուղեւորների անձնական ուղեբեռներում, էքսպրես փոստով Ռուսաստանի Դաշնությունից եւ Մաքսային Միության սահմաններից դուրս ժամանակավոր արտահանվող գիտական կամ առևտրային նմուշները, ինչպես նաև այն գիտական կամ առևտրային նմուշները, որոնք արժեքը չի գերազանցում 300 000 ռուբլին, հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ գիտական կամ առևտրային նմուշներն ստացող կազմակերպության գրավոր դիմումը որպես մաքսային հայտարարագիր կիրառելով: Նման դիմումի ձեւը սահմանվում է մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

3. Գիտական հաստատությունները եւ դրանց կողմից ստեղծված տնտեսական ընկերություններն իրավունք ունեն գիտական կամ առետրային նմուշների նկատմամբ սահմանելու «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգ՝ գիտական հաստատության գրավոր դիմումը որպես ապրանքների նախանշման ապացույց օգտագործելով, որը կազմվում է կամայական ձեւաչափով եւ տեղեկություններ է պարունակում գիտական կամ առետրային նմուշների մասին եւ Մաքսային միության մաքսային սահմանով գիտական կամ առետրային նմուշների տեղափոխման հանգամանքների նկարագրությունը:

4. Այլ անձինք հաստատում են գիտական կամ առետրային նմուշների նշանակությունը՝ օտարերկրյա անձի հետ պայմանագիրը մաքսային մարմին ներկայացնելով, եթե այն պարունակում է տեղեկություններ գիտական կամ առետրային նմուշների արտահանման նպատակի մասին, ուսումնասիրությունների հաստատված նախագծերի (ծրագրերի) մասին՝ դրանց առկայության դեպքում, կամ ներկայացնելով անձի առետրատնտեսական գործունեության վերաբերյալ այլ պայմանագրեր, որոնք պարունակում են տեղեկություններ փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների իրականացման, փորձերի, գիտափորձերի կամ ցուցադրման անցկացման մասին:

5. Գիտական հաստատության կարգավիճակը հաստատվում է սույն Դաշնային օրենքի 279-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգով:

6. Ժամանակավոր արտահանման դեպքում գիտական կամ առետրային նմուշների բացթողման ժամկետը կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի ընդունման պահից՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու պայմանով, բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայն սույն Դաշնային օրենքի՝ առանձին փաստաթղթեր կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո: Ռուսաստանի Դաշնության կողմից կարող է սահմանվել այն ապրանքների ցանկը, որոնց բացթողման ժամկետը կարող է կազմել մինչեւ մեկ աշխատանքային օր, որը հաջորդում է մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվան: Մաքսային մարմինները անհրաժեշտության դեպքում նշված ժամկետներում իրականացնում են մաքսային հայտարարագրի, ապրանքների եւ դրանց փաստաթղթերի ստուգում:

Հոդված 284. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակումը

1. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության եզրափակումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 289-րդ հոդվածին համաձայն:

2. Հայտարարատուի դիմումով ապրանքները ժամանակավոր արտահանելու դեպքում մաքսային մարմինը սահմանում է ապրանքների նույնականացման նշանները եւ նշում է դրանք հայտարարատուի փաստաթղթերում: Հետադարձ արտահանման (վերաներմուծման) դեպքում ժամանակավոր արտահանված ապրանքներից առաջ մաքսային մարմինը ստուգում է նույնականացման նշանների համընկնումը: Նշված հատկանիշները համընկնելու եւ ապրանքների նենգափոխության ուղղակի ապացույցների բացակայության դեպքում մաքսային մարմինն իրավունք չունի մերժելու ապրանքների նկատմամբ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգ սահմանելը:

Գլուխ 36. «ՎԵՐԱՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 285. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Վերաներմուծում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 292-րդ եւ 293-րդ հոդվածներին համաձայն:

Հոդված 286. Ապրանքների վերաներմուծման ժամկետը երկարաձգելու կարգը

1. Թույլատրվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված այն ապրանքների կատեգորիաների վերաներմուծման ժամկետի երկարաձգումը, որոնց նկատմամբ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգ սահմանելու ժամկետը կարող է գերազանցել Մաքսային միության Մաքսային օրենսգրքով սահմանված ժամկետը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների կատեգորիաների նկատմամբ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգ սահմանելու ժամկետի երկարաձգման համար հայտարարատուն մաքսային մարմնում ապրանքների հայտարարագրման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ կամայական ձեւաչափով կազմված հիմնավորված հարցմամբ դիմում է մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմին՝ Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հանգամանքների շարադրմամբ՝ «արտահանում» մաքսային ընթացակարգի կամ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի համաձայն:

3. Հարցմանը պետք է կցված լինեն հետեւյալ փաստաթղթերը՝

1) մաքսային հայտարարագիրը, որն ընդունված է Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմնի կողմից՝ ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու դեպքում,

2) այն փաստաթղթերը, որոնք հաստատում են ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու հանգամանքները,

3) այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում է Մաքսային միության մաքսային տարածքը ապրանքների հատման ամսաթիվը ,

4) այն փաստաթղթերը, որոնք պարունակում են տեղեկություններ ապրանքների վերանորոգման գործողությունների մասին, եթե նմանատիպ գործողությունները ապրանքների հետ իրականացվել են Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս:

4. Վերաներմուծման ժամկետի երկարաձգման վերաբերյալ հարցումն ուսումնասիրվում է մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ 30 օրից ոչ ավելի: Եթե չեն ներկայացվել սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունները պարունակող բոլոր փաստաթղթերը՝ մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումը, որի իրավասության մեջ են մտնում մաքսային ընթացակարգեր սահմանելու հարցերը, հարցումն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում հայտարարատուին գրավոր ծանուցում է նշված տեղեկությունները պարունակող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին: Մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմին լրացուցիչ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ապրանքների վերաներմուծման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ հարցումն ուսումնասիրվում է դրանք ներկայացնելու օրվանից 15 օրվա ընթացքում:

5. Ապրանքների վերաներմուծման ժամկետի երկարաձգման վերաբերյալ որոշումը կայացվում է այն մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից, որի իրավասության մեջ են մտնում մաքսային ընթացակարգեր սահմանելու հարցերը:

6. Հայտարարատուն եւ այն մաքսային մարմինը, որի գործունեության տարածքում է իրականացվելու ապրանքների հայտարարագրումը, տեղեկացվում են ապրանքների վերաներմուծման ժամկետի երկարաձգման վերաբերյալ որոշման մասին՝ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգի համաձայն:

7. Ապրանքների վերաներմուծման ժամկետի երկարաձգումը մերժելու դեպքում հայտարարատուին ուղարկվում է նամակ՝ մերժման պատճառի (պատճառների) շարադրմամբ:

Հոդված 287. Արտահանման մաքսատուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը)

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված այն ապրանքների համար, որոնց նկատմամբ սահմանվել է «վերաներմուծում» մաքսային ընթացակարգ, կատարվում է արտահանման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձ (հաշվանցում), եթե նշված ապրանքների նկատմամբ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգը սահմանվել է վեց ամսից ոչ ուշ՝ այդ ապրանքների նկատմամբ «արտահանում» մաքսային ընթացակարգ սահմանելու հաջորդ օրվանից:

2. Մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձն (հաշվանցումն) իրականացվում է մաքսային մարմինների կողմից՝ սույն Դաշնային օրենքի 17-րդ գլխով սահմանված կարգով:

Հոդված 288. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, լրավճարների գումարների եւ այլ գումարների վճարումը՝ ապրանքների նկատմամբ վերաներմուծում մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում

1. Ապրանքների նկատմամբ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում Դաշնային գանձապետարանի հաշվին, իսկ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում՝ այդ միջազգային պայմանագրով սահմանված հաշվին վճարման են ենթակա.

1) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները եւ (կամ) դրանց տոկոսները, եթե այդպիսի մաքսատուրքերի, հարկերի գումարները եւ (կամ) դրանց տոկոսները չեն գանձվել կամ վերադարձվել են՝ կապված Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հետ:

2) ներքին հարկերի, լրավճարների գումարները եւ այլ գումարներ, որոնք չեն վճարվել կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել են որպես վճարումներ, արտոնություններ կամ Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքները արտահանելու հետ կապված փոխհատուցում:

2. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, ներքին հարկերի, լրավճարների կամ այլ

գումարների վճարման պարտավորությունն այն ապրանքների համար, որոնց նկատմամբ սահմանվել է «վերաներմուծում» մաքսային ընթացակարգ, հայտարարատուի համար առաջանում է մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու պահից:

3. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, ներքին հարկերի, լրավճարների կամ այլ գումարների վճարման պարտավորությունն հայտարարատուի համար դադարում է.

1) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, ներքին հարկերը, լրավճարները կամ այլ գումարներ՝ սույն Դաշնային օրենքի համաձայն սահմանված չափերով վճարելու դեպքում,

2) վերաներմուծում մաքսային ընթացակարգի համաձայն ապրանքների բացթողումը մերժելու դեպքում:

4. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները հաշվարկվում են ապրանքների նկատմամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում՝ վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարները որոշելու համար՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված կանոններով:

5. Ներքին հարկերի գումարները հաշվարկվում են՝ ելնելով մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող դրույքաչափերից՝ Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելիս, եւ ապրանքների մաքսային արժեքից եւ (կամ) դրանց քանակությունից, որոնք սահմանվել են Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքները արտահանելիս: Եթե արտահանվող ապրանքների նկատմամբ «արտահանում» մաքսային ընթացակարգ հայտարարելիս ապրանքների մաքսային արժեքը չի սահմանվել եւ չի հայտարարվել՝ ներքին հարկերի հաշվարկման համար օգտագործվում է այն ապրանքների դիմաց փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը, որը նշված է հաշիվ-ապրանքագրում (ինվոյսում), որը ձեւակերպվել է ապրանքները արտահանելիս առուվաճառքի գործարքի հետ կապված, վերահաշվարկված է Ռուսաստանի Դաշնության արժույթի՝ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով, մաքսային հայտարարագրի գրանցմանը օրը՝ Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելիս: Այլ գործարքների հետ կապված՝ նշված ապրանքների նկատմամբ «արտահանում» մաքսային ընթացակարգ հայտարարելիս՝ օգտագործվում է այդ ապրանքների արժեքը, որը ներկայացված է առեւտրային կամ այլ փաստաթղթերում, որոնք վերաբերում են այդ ապրանքներին՝ դրանք արտահանելիս, վերահաշվարկված է Ռուսաստանի Դաշնության արժույթի՝ սույն Դաշնային օրենքով

սահմանված կարգով, մաքսային հայտարարագրի գրանցմանը օրը՝ Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելիս:

6. Սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերում նշված լրավճարների գումարների եւ այլ գումարների հաշվարկման կարգը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից: Ռուսաստանի Դաշնության կառավարությունը իրավունք ունի որոշելու այն դեպքերը, երբ նշված գումարներից բացի գանձվում են նաեւ դրանց տոկոսները՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման դրույթներով:

7. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, ներքին հարկերը, լրավճարները եւ այլ գումարներ՝ մինչեւ ապրանքների բացթողումը, ենթակա են վճարման՝ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգի համաձայն:

8. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, ներքին հարկերի, լրավճարների գումարներն ու այլ գումարներ եւ սույն հոդվածով նախատեսված դրանց տոկոսները վճարվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքով ու մաքսային վճարումների գանձման մասով՝ սույն Դաշնային օրենքով սահմանված կարգով:

Գլուխ 37. «ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 289. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի էությունը և ապրանքները նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի էությունը և ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 296-րդ և 297-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 290. Այն ապրանքների փոխադրման առանձնահատկությունները, որոնց նկատմամբ սահմանվել է «վերաարտահանում» մաքսային ընթացակարգ

Այն ապրանքների արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից, որոնց նկատմամբ սահմանվել է «վերաարտահանում» ընթացակարգ, իրականացվում է «մաքսային տարանցում» ընթացակարգի նկատմամբ կիրառելի մաքսային հսկողության ներքո՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 32-րդ գլխով և սույն Դաշնային օրենքի 29-րդ գլխով սահմանված կարգով ու պայմաններով:

Հոդված 291. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձը (հաշվանցումը)

Այն ապրանքների համար, որոնց նկատմամբ ավելի վաղ սահմանվել է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգ և որոնց նկատմամբ սահմանվում է «վերաարտահանում» մաքսային ընթացակարգ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ ենթակետով սահմանված պայմանների համաձայն, և որոնք փաստացիորեն արտահանվել են Մաքսային միության մաքսային տարածքից, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների վերադարձ (հաշվանցում)՝ սույն Դաշնային օրենքի 17-րդ գլխով սահմանված կարգով:

Գլուխ 38. «ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՈՒՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 292. «Անմաքս առետուր» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Անմաքս առետուր» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 302-րդ եւ 303-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 293. Անմաքս առետուրի խանութները

1. Անմաքս առետուրի խանութի շինությունները կարող են բաղկացած լինել առետուրասրահներից, օժանդակ զետեղարաններից, պահեստներից:

2. Անմաքս առետուրի խանութի տեղակայմանը, կահավորանքին եւ սարքավորանքին ներկայացվող պահանջները սահմանված են սույն Դաշնային օրենքի 84-րդ հոդվածով:

3. Անմաքս առետուրի խանութի տիրապետողը պարտավոր է հաշվառում անցկացնել եւ հաշվետվություններ ներկայացնել այն ապրանքների մասին, որոնց նկատմամբ սահմանվել է «անմաքս առետուր» մաքսային ընթացակարգ՝ սույն Դաշնային օրենքի 59-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 294. Անմաքս առետուրի կազմակերպումը անձանց առանձին կատեգորիաների համար

1. Անմաքս առետուրի կազմակերպման կարգը օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությանների, հյուպատոսական հիմնարկների, ինչպես նաեւ դրանց հավասարեցված դիվանագիտական գործակալների, հյուպատոսական պաշտոնատար անձանց եւ նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքների անդամների համար սահմանվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից:

2. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը սահմանում է սույն հոդվածի 1-ին մասում նշված անմաքս առեւտրի խանութի տեղակայմանը, կահավորանքին եւ սարքավորանքին ներկայացվող պահանջները:

Գլուխ 39. «ՈՂՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 295. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Ոչնչացում» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 302-րդ եւ 303-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 296. Ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելու մաքսային մարմնի թույլտվությունը

1. Ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելը թույլատրվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

2. Ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելու թույլտվություն ստանալու համար այն անձը, որը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի համաձայն, կարող է լինել ապրանքների հայտարարատու, ներկայացնում է գրավոր դիմում, որտեղ նշում է ոչնչացման ենթակա ապրանքների անվանումը եւ ծածկագրերը՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկով, դրանց քանակությունը, արժեքը, գտնվելու վայրը, ոչնչացման համար ենթադրվող միջոցը, վայրը եւ ամսաթիվը, ինչպես նաեւ ապրանքները շրջանառությունից հանելու պատճառների համառոտ նկարագիրը:

3. Այն դեպքում, երբ սահմանվում է «ոչնչացում» մաքսային ընթացակարգ այն ապրանքների նկատմամբ, որոնք ոչնչացվել, անվերադարձ կորել կամ վնասվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով կամ գիտական կամ առետրային նմուշների հետ սույն հոդվածի 5-րդ մասում նշված գործողությունները կատարելու հետեւանքով՝ հայտարարատուն դիմումի մեջ տեղեկացնում է նշված իրադարձությունների տեղի ունենալու վայրի եւ ամսաթվի մասին, ինչպես նաեւ տեղեկացնում է ոչնչացման հետեւանքով գոյացած թափոնների մասին (դրանց անվանումը, քանակը, արժեքը (թափոնների հետագա առետրային օգտագործման հնարավորության դեպքում) եւ այդ ապրանքների առետրային օգտագործման

հնարավորության մասին:

4. Մաքսային պահեստում պահպանվող ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգը կարող է հայտարարագրվել մաքսային պահեստի սեփականատիրոջ կողմից:

5. Ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելու վերաբերյալ դիմումին հայտարարատուի կողմից կցվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի՝ ապրանքների ոչնչացման հնարավորության, ոչնչացման միջոցի եւ վայրի մասին եզրակացությունը, բացառությամբ այն դեպքի, երբ ապրանքներն անվերադարձ կորել կամ վնասվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով: Որպես ապրանքների ոչնչացման հնարավորություն՝ ոչնչացման միջոցի եւ վայրի մասին եզրակացություն կարող են օգտագործվել:

1) այն դեպքում, երբ ապրանքները ոչնչացվել կամ վնասվել են դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների ենթարկելու, դրանց հետ փորձեր, գիտափորձեր կամ ցուցադրում անցկացնելու ընթացքում կամ դրանք փորձարկումների, ուսումնասիրությունների, փորձաստուգումների, ստուգումների, փորձերի, գիտափորձերի կամ ցուցադրման ընթացքում օգտագործելիս՝ ոչնչացման մասին ակտը, որը տրամադրվում է այն կազմակերպության կողմից, որն անցկացնում է սույն ապրանքների հետ նշված փորձարկումները, ուսումնասիրությունները, փորձաստուգումները, ստուգումները, փորձերը, գիտափորձերը կամ ցուցադրումը:

2) ապրանքների համապատասխան կատեգորիայի հետ ոչնչացման (օգտահանման) գործողություններ կատարելու լիցենզիան, որը տրամադրված է այն կազմակերպությանը, որի հետ հայտարարատուն կնքել է նշված ապրանքների ոչնչացման (վերամշակման) պայմանագիր:

6. Հայտարարատուն դիմումի հետ միաժամանակ ներկայացնում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված հանգամանքները հաստատող փաստաթղթերը: Այն գիտական կամ առետրային նմուշների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելիս, որոնք ոչնչացվել կամ վնասվել են՝ դրանց հետ սույն հոդվածի 5-րդ մասում նշված գործողությունները կատարելու ընթացքում, այդպիսի փաստաթղթերին են վերաբերում հաշվապահական հաշվառումը վարելու համար կազմված փաստաթղթերը եւ հաշվապահական փաստաթղթերից

քաղվածքները:

7. Մաքսային մարմինն ուսումնասիրում է հայտարարատուի դիմումը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 196-րդ հոդվածով սահմանված ապրանքների բացթողման ժամկետները չգերազանցող ժամկետում:

8. Մաքսային մարմինն իրավունք ունի մերժելու ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգ սահմանելն այն դեպքում, երբ՝

1) սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել մաքսային մարմին,

2) սույն հոդվածի 3-րդ մասում նշված ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվել է «ոչնչացում» մաքսային ընթացակարգ, հայտնաբերվել են առանց հայտարարատուի կողմից ներկայացված վնասվածքների կամ ապրանքների իրացման կամ դրանք երրորդ անձանց փոխանցելու փաստերը հաստատվել են:

Հոդված 257. Ապրանքների ոչնչացումը

1. Ապրանքները ոչնչացնելու ամսաթիվը սահմանվում է մաքսային մարմնի կողմից՝ հայտարարատուի դիմումի հիման վրա՝ ելնելով ապրանքների տվյալ տեսակի համար ներկայացված միջոցներով ոչնչացման գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածից եւ ապրանքներն իրենց գտնվելու վայրից ոչնչացման վայր փոխադրելու համար անհրաժեշտ ժամանակահատվածից:

2. Ապրանքների ոչնչացման վայրը որոշվում է հայտարարատուի կողմից՝ շրջակա միջավայրի պաշտպանության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության պահանջներին համաձայն:

3. Ապրանքների ոչնչացումից հետո հայտարարատուն պարտավոր է մաքսային մարմին ներկայացնել հաստատող փաստաթղթերը (ոչնչացման կամ օգտահանման մասին ակտեր կամ հաշվետվություններ, այլ փաստաթղթեր, որոնք կազմվում են ոչնչացման կամ օգտահանման դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության կամ ընդունված պրակտիկայի համաձայն):

Հոդված 298. Մաքսային մարմինների կողմից հսկողության իրականացումը

1. Մաքսային մարմինները, Մաքսային միության Մաքսային օրենսգրքի կամ սույն Դաշնային օրենքի դրույթների համաձայն, իրականացնում են մաքսային հսկողություն այն ապրանքների նկատմամբ, որոնց նկատմամբ սահմանվել է «ոչնչացում» մաքսային ընթացակարգ՝ կիրառելով ռիսկերի կառավարման համակարգը:

2. Այն դեպքում, երբ մաքսային մարմնի պաշտոնատար անձինք իրականացնում են ապրանքների ոչնչացման (օգտահանման) գործընթացի նկատմամբ տեսահսկողություն՝ ապրանքների ոչնչացումը հաստատելու նպատակով կազմվում է ակտ՝ մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից սահմանված ձեով:

Գլուխ 40. «ՀՐԱԺԱՐՈՒՄ՝ ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 299. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

«Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ նշված ընթացակարգը սահմանելու պայմանները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 310-րդ եւ 311-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 300. Ապրանքների նկատմամբ «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ սահմանելու կարգը

1. Ապրանքների նկատմամբ «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ սահմանելը թույլատրվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

2. Ապրանքների նկատմամբ «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ սահմանելու թույլտվություն ստանալու համար այն անձը, որը Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածի համաձայն, կարող է լինել ապրանքների հայտարարատու, գրավոր դիմում է ներկայացնում, որի մեջ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկով նշում է ոչնչացման ենթակա ապրանքների անվանումն ու ծածկագրերը, դրանց քանակությունը, արժեքը, գտնվելու վայրը, ինչպես նաեւ ապրանքները շրջանառությունից հանելու պատճառների համառոտ նկարագիրը:

3. Մաքսային մարմինն ուսումնասիրում է ապրանքների նկատմամբ «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ սահմանելու դիմումը եւ դրան կից փաստաթղթերն ու թույլտվության տրամադրման կամ տրամադրման մերժման մասին որոշում է կայացնում՝ դիմումն ընդունելու օրվանից 10 օրվա ընթացքում:

Հոդված 301. Այն ապրանքների տնօրինումը, որոնց նկատմամբ սահմանվել է «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ

1. Ապրանքներից հրաժարումը՝ հոգուտ պետության՝ Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների համար, չպետք է հանգեցնի ցանկացած ծախսի, որոնք չեն կարող փոխհատուցվել ապրանքների իրացումից ստացված միջոցների հաշվին:

2. Այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվել է «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ, փոխանցվում են այն գործադիր իշխանության դաշնային մարմին, որը Ռուսաստանի Դաշնության կողմից լիազորված է այն գույքի իրացումը, ոչնչացումը կամ վերամշակումը (օգտահանումը) կազմակերպելու, որը Պետության սեփականություն է դարձել՝ սույն Դաշնային օրենքի 187-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 302. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ կիրառելու համար պատասխանատվությունը

Ապրանքների նկատմամբ «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ սահմանելու եղանակով՝ ապրանքների տնօրինման իրավաչափության համար պատասխանատվությունը կրում է հայտարարատուն: Մաքսային մարմինները չեն փոխհատուցում այն անձանց գույքային պահանջները, որոնք լիազորություններ ունեն այն ապրանքների նկատմամբ, որոնցից հայտարարատուն հրաժարվել է՝ հոգուտ պետության:

Գլուխ 41. «ՀԱՏՈՒԿ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոդված 303. «Հատուկ» մաքսային ընթացակարգի էությունը եւ ապրանքների նկատմամբ մաքսային ընթացակարգ սահմանելու պայմանները

1. «Հատուկ» մաքսային ընթացակարգ՝ ընթացակարգ, որի դեպքում Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված ցանկով ապրանքների առանձին կատեգորիաները ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն կամ արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից՝ այդ ապրանքների մաքսատուրքերից, հարկերից լրիվ ազատումով, ինչպես նաեւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

2. Ապրանքների նկատմամբ «հատուկ» մաքսային ընթացակարգ սահմանելու պահանջները եւ պայմանները, ինչպես նաեւ այն ապրանքների օգտագործման ու տնօրինման վերաբերյալ սահմանափակումները, որոնց նկատմամբ սահմանվել է «հատուկ» մաքսային ընթացակարգ, սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից, եթե Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

3. Մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների վերադարձը, ինչպես նաեւ ներքին հարկերի վճարումից ազատումը, վերադարձը կամ փոխհատուցումը ապրանքների նկատմամբ «հատուկ» մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում չի իրականացվում՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված «հատուկ» մաքսային ընթացակարգը փոխարինված է «արտահանում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 304. Ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ դրանց նկատմամբ «հատուկ» մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում

Ապրանքների մաքսային հայտարարագրման կարգը, այն տեղեկությունների ցանկը, որոնք ապրանքների մասին հայտարարագրում ենթակա են նշման՝ դրանց նկատմամբ հատուկ մաքսային ընթացակարգ սահմանելու դեպքում, ինչպես նաեւ այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն հայտարարատուի կողմից ապրանքների մասին հայտարարագրի հետ միաժամանակ, սահմանվում են մաքսային գործի ոլորտում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի եւ

մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն:

**Բաժին VII. ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Գլուխ 42. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Հոդված 305 Մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներ ընդունելու հիմքը

1. Մաքսային մարմինները ձեռնարկում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության միջոցներ, որոնք ուղղված են ապրանքների բացթողումը կանխարգելելուն՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 46-րդ գլխի եւ սույն գլխի համաձայն:

2. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության միջոցները ձեռնարկվում են հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների օբյեկտներ, ապրանքային նշաններ, սպասարկման նշաններ եւ ապրանքների ծագման տեղանուններ (այսուհետ՝ «մտավոր սեփականության օբյեկտ») պարունակող ապրանքների մասով, որոնք, իրավատիրոջ դիմումի համաձայն, ներառված են մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում: Մաքսային մարմինները, սույն գլխի համաձայն, առանց իրավատիրոջը դրա մասին հայտնելու, իրավունք ունեն մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ պաշտպանական միջոցներ ձեռնարկելու:

Հոդված 306 Իրավատիրոջ կողմից դիմումը ներկայացնելը եւ դրա քննարկման կարգը

1. Իրավատերը, որը բավարար հիմքեր ունի կարծելու, որ կարող է խախտվել Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ ամրագրված իր իրավունքները Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ Ռուսաստանի Դաշնությունից դրանց արտահանման կամ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների նկատմամբ այլ գործողություններ

իրականացնելու ժամանակ, իրավունք ունի մաքսային գործում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմին դիմում ներկայացնելու համապատասխան մտավոր սեփականության օբյեկտը մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում ներառելու վերաբերյալ: Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով նախատեսված միջոցները իրավատիրոջ անունից կարող է իրականացնել նրա ներկայացուցիչը:

2. Մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտները ներառելու մասին դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) իրավատիրոջ, իսկ նրա ներկայացուցչի կողմից այն ներկայացնելու դեպքում՝ նաեւ նրա ներկայացուցչի մասին,

2) մտավոր սեփականության օբյեկտի մասին,

3) ապրանքների մասին, որոնց ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն կամ արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից կամ մաքսային հսկողության տակ գտնվելու ժամանակ դրանց նկատմամբ այլ գործողությունների կատարումը, իրավատիրոջ կարծիքով, խախտում է իր իրավունքները, որը բավարար է, որ մաքսային մարմինները կարողանան վերհանել նման ապրանքները,

4) այն ժամանակահատվածի մասին, որի ընթացքում մաքսային մարմինները կիրականացնեն ապրանքների բացթողումը կանխարգելող միջոցներ:

3. Դիմումին կից ներկայացվում են փաստաթղթեր, որոնք հավաստում են մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքի առկայությունը (ապացույց, բացառիկ իրավունքի օտարման մասին պայմանագիր, բացառիկ արտոնագիրը ներկայացնելու մասին պայմանագիր, այլ փաստաթղթեր, որոնք իրավատերը կարող է ներկայացնել՝ ի հավաստումն մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքի), իսկ եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի կողմից, ապա նշված դիմումին իրավատիրոջ կողմից տվյալ անձին տրված լիազորագիր է կցվում: Իրավատերը կարող է դիմումին կից ներկայացնել այն ապրանքների նմուշները, որոնք, նրա կարծիքով, կարող են հիմք ծառայել իր իրավունքների խախտման փաստը հաստատելու համար:

4. Դիմումը ներկայացնելու կարգը, հայտարարված տեղեկությունների եւ փաստաթղթերի նկատմամբ կիրառվող պահանջները, կախված մտավոր սեփականության օբյեկտի տեսակից, սահմանվում են մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

5. Դիմումի հետ ներկայացվում է իրավատիրոջ գրավոր պարտավորությունը՝ այն նյութական վնասը փոխհատուցելու մասին, որը նա կարող է պատճառել հայտարարատուին, սեփականատիրոջը, ապրանքներն ստացողին կամ այլ անձանց ապրանքների բացթողումը կասեցնելու դեպքում:

6. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինը քննում է դիմումը՝ այն ստանալուց հետո ոչ ավելի, քան մեկ ամիս ժամանակահատվածում եւ ընդունում է որոշում՝ ապրանքների բացթողումը կասեցնելուն ուղղված միջոցների ձեռնարկման կամ նման միջոցներ ձեռնարկելը եւ մտավոր սեփականության օբյեկտը մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում ներառելը մերժելու մասին:

7. Իրավատիրոջ կողմից ներկայացված տեղեկությունների արժանահավատությունն ստուգելու նպատակով, մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինն իրավունք ունի պահանջելու իրավատիրոջից (նրա ներկայացուցչից), երրորդ անձանցից, ինչպես նաեւ պետական մարմիններից ներկայացված տեղեկությունները հավաստող փաստաթղթեր: Պահանջված փաստաթղթերը պետք է ներկայացվեն պահանջը/հարցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Ընդ որում, մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինն իրավունք ունի երկարաձգելու դիմումը քննելու ժամկետը, սակայն ոչ ավելի, քան մեկ ամիս ժամանակահատվածով:

8. Դիմումի քննումը կարող է կասեցվել իրավատիրոջ (նրա ներկայացուցչի) կողմից պահանջվող եւ էական նշանակություն ունեցող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում: Ընդ որում, դիմումը քննելու ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել երեք ամիսը: Իրավատիրոջ (նրա ներկայացուցչի) կողմից պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, դիմումը հետ է կանչվում կամ ենթակա չէ հետագա քննման, որի մասին իրավատիրոջը ծանուցվում է գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով:

9. Ապրանքների բացթողումը կասեցնելու հետ կապված միջոցների ձեռնարկումը եւ

մտավոր սեփականության օբյեկտները մաքսային ռեեստրում ներառելը մերժելու մասին որոշումն ընդունվում է, եթե ներկայացված փաստաթղթերը չեն հավաստում հայտարարատուի՝ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքը կամ հայտարարատուի կողմից ներկայացվել են ոչ հավաստի տեղեկություններ: Մտավոր սեփականության օբյեկտը մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում ներառելը մերժելու մասին որոշումն ընդունվում է իրավատիրոջ կողմից՝ սույն Դաշնային օրենքի 307-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չկատարելու դեպքում:

10. Որոշման ընդունման մասին իրավատիրոջը տեղեկացվում է գրավոր կամ էլեկտրոնային նման որոշում ընդունելու օրվանից երեք օրվա ընթացքում:

11. Դիմումում կամ դրան կից ներկայացված փաստաթղթերում նշված տեղեկությունների փոփոխման դեպքում, իրավատերը (նրա ներկայացուցիչը) պարտավոր է անհապաղ տեղեկացնել դրա մասին մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմին:

Հոդված 307. Մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրը

1. Մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր) ներառվում են հեղինակային իրավունքի օբյեկտներ, հարակից իրավունքների օբյեկտներ, ապրանքային նշաններ, սպասարկման նշաններ եւ ապրանքների ծագման տեղանուններ, որոնց վերաբերյալ մաքսային գործի ոլորտի գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից ապրանքների բացթողումը կասեցնելուն ուղղված միջոցների մասին որոշում է ընդունվել: Ռեեստրում ներառելու համար գումար չի գանձվում: Ռեեստրը վարում է մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինը՝ տվյալ մարմնի կողմից սահմանված կարգով:

2. Մտավոր սեփականության օբյեկտները, որոնց վերաբերյալ մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինն ապրանքների բացթողումը կասեցնելուն ուղղված միջոցների ընդունման մասին որոշում է ընդունել, ներառվում են ռեեստրում այն պայմանով, որ իրավատերն ապահովում է սույն դաշնային օրենքի 306-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պարտականությունները՝ Ռուսաստանի Դաշնության

քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված միջոցներով: Իրավատերն իրավունք ունի պարտավորությունների կատարումն ապահովելու փոխարեն, ներկայացնել սույն Դաշնային օրենքի 306-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց նկատմամբ վնաս պատճառելու համար պատասխանատվության ռիսկի ապահովագրության պայմանագիր: Ընդ որում, պարտավորության ապահովման գումարը կամ ապահովագրական գումարը պետք է լինի 300 000 ռուբլուց ոչ պակաս:

3. Ապրանքների բացթողումը կասեցնելուն ուղղված միջոցների մասին որոշում ընդունելու մասին ծանուցումն ուղարկելու օրվանից մեկ ամսվա ընթացքում իրավատիրոջ կողմից պարտավորությունների կատարումը հավաստող փաստաթղթերը կամ վնաս պատճառելու դեպքում պարտավորության ռիսկերի ապահովագրության պայմանագիր չներկայացնելու դեպքում, մաքսային գործի լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինը մտավոր սեփականության օբյեկտը ռեեստրում ներառելու մասին որոշում է ընդունում:

4. Մտավոր սեփականության իրավունքի օբյեկտը հանվում է ռեեստրից հետեւյալ դեպքերում՝

1) իրավատիրոջ դիմումի համաձայն.

2) իրավատիրոջ կողմից չի կատարվել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները.

3) մտավոր սեփականության օբյեկտի իրավական պաշտպանությունը սահմանված կարգով դադարեցնելու դեպքում.

4) եթե իրավատերը ապրանքների բացթողումը կասեցնելու ժամկետի ընթացքում չի դիմել իրավասու մարմին՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն իր իրավունքների պաշտպանության հարցով կամ չի դիմել մաքսային մարմին՝ ապրանքների բացթողումը կասեցնելու մասին որոշումը հետ կանչելու դիմումով.

5) ռեեստրում մտավոր սեփականության իրավունքի օբյեկտը ներառելու մասին դիմումը ներկայացնելիս ներկայացված ոչ հավաստի ապացույցների վերհանման դեպքում:

5. Ռեեստրում կարող են կատարվել փոփոխություններ այլ տեղեկությունների հիման վրա, որոնք ստացվել են՝

1) իրավատիրոջ (իր ներկայացուցչի) կողմից մտավոր սեփականության օբյեկտը ռեեստրում ներառելու մասին դիմումում կամ դրան կից ներկայացվող փաստաթղթերում նշված տեղեկությունները փոփոխելու մասին.

2) իրավապահ կամ այլ պետական մարմինների, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից այն մասին, որ ռեեստրում որպես իրավատեր նշված անձինք զրկվել են մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքից կամ սահմանափակում է դրվել այդ իրավունքը վրա:

6. Ռեեստրում փոփոխությունները կատարվում են մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի որոշման համաձայն:

7. Ռեեստրում փոփոխություններ կատարելուց առաջ կարող է իրականացվել ստացված տեղեկատվության ստուգում՝ մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր մարմնի դաշնային մարմնի որոշման հիման վրա, որի մասին իրավատերը եւ մաքսային մարմինները տեղեկացվում են համապատասխան որոշումն ընդունելուց հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Ստուգումների իրականացման ժամանակահատվածում նման մտավոր սեփականության օբյեկտ պարունակող ապրանքների բացթողումը կանխարգելելու նպատակով միջոցներ մաքսային մարմինների կողմից չեն ձեռնարկվում:

8. Այն ժամանակահատվածը, որի ընթացքում մտավոր սեփականության օբյեկտը ներառվել է ռեեստրում, կարող է կասեցվել՝ ժամանակավոր ստուգումներ իրականացնելու նպատակով, սակայն ոչ ավելի, քան երկու ամիս ժամանակահատվածով:

9. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինն ապահովում է ռեեստրի տվյալների՝ իր պաշտոնական հրատարակումներում հրապարակումը եւ «Համացանց» տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում իր պաշտոնական կայքում դրանց տեղադրումը իր կողմից սահմանված կարգով:

(2011 թվականի հուլիսի 11-ի թիվ 200-ՂՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

Հոդված 308. Ռեեստրում չներառված՝ մտավոր սեփականության օբյեկտներ ներառող ապրանքների բացթողման կասեցումը

1. Մաքսային մարմիններն իրավունք ունեն կասեցնելու ռեեստրում չներառված՝ մտավոր սեփականության օբյեկտներ ներառող, ապրանքների բացթողումը՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում մտավոր սեփականության իրավունքների խախտման նշաններ հայտնաբերելու եւ իրավատիրոջ մասին տեղեկատվության առկայության դեպքում: Մաքսային մարմիններն իրավունք ունեն իրավատիրոջից պահանջելու տեղեկություններ՝ սույն հոդվածով նախատեսված լիազորությունները կատարելու համար: Սույն հոդվածի համաձայն ապրանքների բացթողումը կասեցնելու դեպքում մաքսային մարմիններն ապրանքների բացթողումը կասեցնելու օրվանից հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը, տեղեկացնում են դրա մասին իրավատիրոջը եւ հայտարարատուին:

2. Ապրանքների բացթողումը կասեցվում է յոթ աշխատանքային օրով: Մաքսային մարմինն իրավունք ունի երկարաձգելու նշված ժամանակահատվածը, սակայն ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով, եթե իրավատերը գրավոր մաքսային մարմին է դիմել ժամկետը երկարաձգելու խնդրանքով եւ մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմին դիմում է ներկայացրել համապատասխան մտավոր սեփականության օբյեկտը մտավոր սեփականության ռեեստրում ներառելու մասին սույն Դաշնային օրենքի 306-րդ հոդվածի համաձայն:

3. Իրավատերն իրավունք ունի մաքսային մարմնից ստանալու այն ապրանքների վերաբերյալ տեղեկությունները, որոնց նկատմամբ, սույն հոդվածի համաձայն, բացթողումը դադարեցնելու մասին որոշում է ընդունվել :

4. Ապրանքների բացթողումը կասեցնելու մասին որոշումը ենթակա է չեղարկման՝ մինչեւ ապրանքների բացթողումը կասեցնելու ժամկետի լրանալը, եթե մաքսային մարմնի տեղեկությունները իրավատիրոջ մասին չեն հաստատվել կամ իրավատերը (նրա ներկայացուցիչը) դիմել է մաքսային մարմին՝ նման որոշումը չեղարկելու խնդրանքով, ինչպես նաեւ սույն դաշնային օրենքի 310-րդ հոդվածով սահմանված դեպքերում: Եթե իրավատիրոջ կողմից մինչեւ ապրանքների բացթողումը կասեցնելու ժամանակահատվածի ավարտը, չեն կատարվել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները, կամ իրավասու մարմինը

ապրանքները հանելու, կալանք դնելու կամ բռնագրավման մասին որոշում չի ընդունել, ապա ապրանքների բացթողումն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն դաշնային օրենքով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով սահմանված միջոցները չեն կիրառվում մտավոր սեփականության օբյեկտներ ներառող ապրանքների նկատմամբ, որոնց վերաբերյալ նախկինում, սույն հոդվածի համաձայն, միջոցներ են ընդունվել:

Հոդված 309. Ապրանքների բացթողումը կասեցնելու հետ կապված միջոցներ ձեռնարկելիս մաքսային մարմինների կողմից որոշումների ընդունման ժամկետները

Մաքսային մարմինների՝ ապրանքների բացթողումը կասեցնելու, ապրանքների բացթողումը կասեցնելու ժամանակահատվածը երկարաձգելու, ապրանքների բացթողումը կասեցնելու մասին որոշումը չեղարկելու, ինչպես նաեւ տեղեկատվություն ստանալու իրավունքները տրամադրելու եւ նմուշառման մասին որոշումները ընդունում է մաքսային մարմինը՝ մտավոր սեփականության իրավունքի խախտման նշաններ հայտնաբերելու, համապատասխան գրավոր դիմում ստանալու կամ նման որոշում ընդունելու համար հիմք հանդիսացող այլ գործողության կատարման օրվանից ոչ ուշ, քան մինչեւ հաջորդ աշխատանքային օրը:

Հոդված 310. Բացթողումը կասեցված ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգի կիրառումը

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 331-րդ հոդվածի կամ սույն դաշնային օրենքի 308-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների բացթողումը կասեցնելու ժամանակահատվածի ընթացքում հայտարարատուն, ապրանքների ոչնչացման համար գրավոր համաձայնություն ունենալու դեպքում, կարող է հայտարարել բացթողումը կասեցված ապրանքների ոչնչացման մաքսային ընթացակարգ: Տվյալ դեպքում մաքսային մարմնի՝ ապրանքների բացթողումը կասեցնելու մասին որոշումը ենթակա է չեղարկման:

**Գլուխ 43. ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՂՈՐԴԻՉ ԳԾԵՐՈՎ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 311. Խողովակաշարային տրանսպորտով եւ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերը

1. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ պետական քաղաքականության մշակման եւ իրացման ու վառելիքաէներգետիկ համալիրի ոլորտում նորմատիվաիրավական կարգավորման գործառույթն իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ համատեղ, մաքսային նպատակներով որոշվում է տեխնոլոգիապես պայմանավորված վայրերի անվանացանկը, որտեղ տեղակայված են հաշվառման սարքերը, որոնք ֆիքսում են Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների տեղափոխումը խողովակաշարային տրանսպորտով ու էլեկտրահաղորդման գծերով:

2. Չարտոնագրված մուտքը եւ խողովակաշարային տրանսպորտով ու էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման սարքերի ցուցմունքների տեղեկատվության փոփոխությունը կանխելու նպատակով այդպիսի սարքերի վրա, եթե դրանք տեղակայված են Ռուսաստանի Դաշնության տարածքում, մաքսային մարմինների կողմից կարող են դրվել նույնականացման միջոցներ՝ մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից սահմանված կարգով՝ պետական քաղաքականության մշակման եւ իրացման ու վառելիքաէներգետիկ համալիրի ոլորտում նորմատիվային-իրավական կարգավորման գործառույթն իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ համատեղ:

3. Էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների քանակի որոշման կարգը սահմանվում է մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ պետական քաղաքականության մշակման եւ իրացման ու վառելիքաէներգետիկ համալիրի ոլորտում նորմատիվաիրավական կարգավորման գործառույթն իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ համատեղ:

Հոդված 312. Խողովակաշարային տրանսպորտով ապրանքների փոխադրման դեպքում հայտարարագրման եւ մաքսային տուրքերի, հարկերի վճարման առանձնահատկությունները

1. Ռուսաստանի Դաշնություն խողովակաշարային տրանսպորտով ապրանքներ ներմուծելիս եւ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքներ արտահանելիս, թույլատրվում է իրականացնել դրանց ժամանակավոր հերթական մաքսային հայտարարագրումը սույն դաշնային օրենքի 214-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները: Ժամանակավոր հերթական հայտարարագրումն իրականացվում է ժամանակավոր մաքսային հայտարարագիր ներկայացնելու ճանապարհով:

2. Ժամանակավոր մաքսային հայտարարագրման ժամանակ թույլ է տրվում ներկայացնել տեղեկություններ՝ ելնելով ապրանքների կողմնորոշիչ քանակի արտահանման եւ ներմուծման նպատակից հայտարարատուի կողմից ներկայացված ժամանակահատվածում, որը չի գերազանցում արտաքին առետրի պայմանագրի գործողության ժամկետը, պայմանական մաքսային արժեքից (գնահատականից), որը որոշվում է այն ապրանքների քանակով, որը պլանավորվում է ներմուծվել Ռուսաստանի Դաշնություն կամ արտահանվել Ռուսաստանի Դաշնություն եւ դրանց սպառողական հատկություններով եւ (կամ) նախատեսված պայմաններով:

3. Թույլ է տրվում մեկ ժամանակավոր մաքսային հայտարարագրի տրամադրումը նույն անձի կողմից ներմուծվող եւ արտահանվող ապրանքների համար, որը տեղափոխում է ապրանքները մեկ մաքսային ընթացակարգի պայմանների համաձայն մի քանի արտաքին-առետրային պայմանագրերով պարտավորությունների կատարման շրջանակում (այդ թվում՝ մատակարարման, գնանշման եւ վճարման տարբեր պայմաններով):

4. Ժամանակավոր մաքսային հայտարարագիրը ներկայացվում է հայտարարատուի կողմից մեկ եռամսյակը չգերազանցող ժամանակահատվածի համար, իսկ բնական գազի համար՝ մեկ օրացուցային տարվա համար՝ ոչ ուշ, քան տվյալ ժամանակահատվածին նախորդող ամսվա 20-րդ օրը:

5. Եթե ժամանակավոր հայտարարագրում նշված ժամանակահատվածում փոփոխվում է մաքսային մարմնի կողմից ընդունված ժամանակավոր մաքսային հայտարարագրում նշված ապրանքների քանակը, ապա թույլ է տրվում ներկայացնել լրացուցիչ մաքսային

հայտարարագիր՝ մինչեւ լրացուցիչ ժամանակավոր մաքսային հայտարարագրով հայտարարագրված ապրանքների տեղափոխում սկսելը:

6. Ժամանակավոր մաքսային հայտարարագրի մեջ նշված ժամանակահատվածում ժամանակավոր մաքսային հայտարարագրում նշվածից ավելի քանակով ապրանքների արտահանումը, առանց լրացուցիչ ժամանակավոր մաքսային հայտարարագիր ներկայացնելու, չի թույլատրվում:

7. Հայտարարատուն պարտավոր է ներկայացնել ապրանքների մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսում ներմուծվող կամ արտահանվող ապրանքների համար մեկ կամ մի քանի սահմանված կարգով լրացված ամբողջական մաքսային հայտարարագիր: Ամբողջական մաքսային հայտարարագիրը պետք է ներկայացվի մինչեւ ապրանքների մատակարարման օրացուցային ամսվան հաջորդող ամսվա 20-ը: Մաքսային մարմինը, հայտարարատուի հիմնավորված դիմումի համաձայն, երկարաձգում է ամբողջական մաքսային հայտարարագիրը ներկայացնելու ժամկետը, սակայն ոչ ավելի, քան 90 օրով: Ամբողջական մաքսային հայտարարագիրը ներկայացնելու ժամկետի երկարաձգումը սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետը չի երկարաձգում:

8. Եթե օրացուցային ամսվա ընթացքում ժամանակավոր մաքսային հայտարարագրման ժամանակ արտահանման կամ ներմուծման հայտարարված ապրանքները չեն ներմուծվել կամ փաստացիորեն չեն արտահանվել, ապա հայտարարատուն պարտավոր է գրավոր տեղեկացնել դրա մասին մաքսային մարմին՝ մինչեւ ամբողջական մաքսային հայտարարագիր ներկայացնելու ժամկետը լրանալը:

9. Մաքսատուրքերը վճարվում են Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների համար մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար՝ ապրանքների մատակարարման ամսվա 15-ին գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերով:

10. Ժամանակավոր մաքսային հայտարարագրի ժամանակ նշված տեղեկությունների հիման վրա հաշվարկված արտահանման մաքսատուրքերի գումարների առնվազն 50 տոկոսը վճարվում է ոչ ուշ, քան մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվան նախորդող ամսվա 20-րդ օրը: Ընդ որում, արտահանման մաքսատուրքերի գումարները հաշվարկվում են՝ ելնելով մատակարարման մեկ օրացուցային ամսվան համարժեք ապրանքների քանակից, եթե

ժամանակավոր մաքսային հայտարարագրում նշված մատակարարման ժամկետը գերազանցում է մեկ օրացուցային ամիսը:

11. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետը լրանալիս ժամանակավոր մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում, արտահանման մաքսատուրքերի գումարները ենթակա են վճարման ոչ ուշ, քան մաքսային մարմնի կողմից տվյալ մաքսային հայտարարագիրը գրանցելու օրը՝ ամբողջ ծավալով՝ այն արտահանման մաքսատուրքերի գումարի չափով, որը վճարման ենթակա կլիներ ապրանքների նկատմամբ «արտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում, որը հաշվարկվում է մաքսային մարմնի կողմից ժամանակավոր մաքսային հայտարարագիրը գրանցելու օրը:

12. Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ ժամանակավոր մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարվում են լրիվ՝ մատակարարման առաջին օրացուցային ամսվա համար՝ ոչ ուշ, քան այդ հայտարարագիրն ընդունելու օրը, եթե ժամանակավոր մաքսային հայտարարագիրը ներկայացվում է ապրանքների մատակարարման օրացուցային ամսում կամ սույն հոդվածի 4-րդ մասում սահմանված ժամկետի լրանալը: Մնացած դեպքերում, Ռուսաստանի Դաշնությանից արտահանվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման՝ սույն հոդվածի 10-րդ եւ 13-րդ մասերի համաձայն:

13. Մինչեւ մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվան հաջորդող ամսվա 20-րդ օրը վճարվում է արտահանված ապրանքների վերաբերյալ ճշտված տեղեկությունների եւ մատակարարման ամսվա 15-րդ օրը գործող արտահանման մաքսատուրքի դրույքաչափի հիման վրա հաշվարկված արտահանման մաքսատուրքերի գումարի մնացած մասը: Ընդ որում, կիրառվում է մաքսային մարմնի կողմից ժամանակավոր մաքսային հայտարարագիրը գրանցելու պահին գործող՝ Ռուսաստանի Դաշնության արժույթի նկատմամբ արտարժույթի փոխանակման կուրսը: Ընդ որում, այն արտահանման մաքսատուրքերի հաշվարկը, ելնելով մաքսային արժեքից եւ քանակից, որոնք, պարզվել է, որ ավելի են, քան ժամանակավոր մաքսային հայտարարագրում նշվածները, չի համարվում խախտում եւ չի առաջացնում տույժերի վճարում եւ(կամ) վարչական պատասխանատվության ենթարկում, եթե չի խախտվել սույն հոդվածի 6-րդ կետում սահմանված կանոնը:

14. Հայտարարատուի՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների

համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ժամանակավոր կամ ամբողջական մաքսային հայտարարագիրը գրանցելու պահից:

15. Հայտարարատուի՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված դեպքերում:

16. Խողովակաշարային տրանսպորտով ապրանքները ներմուծելիս մաքսատուրքերը, հարկերը վճարվում են ոչ ուշ, քան մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվան նախորդող ամսվա 20-րդ օրը՝ ելնելով ժամանակավոր մաքսային հայտարարագրում նշված տեղեկություններից: Մաքսային վճարների հաշվարկման եւ վճարման նպատակով կիրառվում են մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մատակարարման ամսվան նախորդող ամսվա 15-րդ օրվա դրությամբ:

17. Մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսում ներմուծվող ապրանքների վերաբերյալ հստակեցված տեղեկությունները ներկայացվում են մաքսային մարմին ոչ ուշ, քան մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվան հաջորդող ամսվա 20-ը: Եթե վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարներն ավելանում են տեղեկությունները հստակեցնելու արդյունքում, ապա ավելացված գումարների վճարումը պետք է իրականացվի հստակեցված տեղեկությունները ներկայացնելու հետ միաժամանակ: Տվյալ դեպքում տույժեր չեն հաշվարկվում:

18. Չափից ավելի վճարված գումարների վերադարձն իրականացվում է սույն Դաշնային օրենքի 17-րդ գլխի համաձայն:

19. Խողովակաշարային տրանսպորտով ապրանքները տեղափոխելու դեպքում սահմանափակումները կիրառվում են ժամանակավոր մաքսային հայտարարագիր կիրառելու օրը:

20. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող բնական գազի մաքսային հայտարարագրման ժամանակ՝ դրա քանակի եւ որակի հավաստման համար օգտագործվում են ապրանքների փաստացի մատակարարումների մասին ակտերը, որոնք կազմվում են նման

տեղափոխումն իրականացնելու համար հիմք հանդիսացող արտաքին առևտրային պայմանագրերի պայմաններով սահմանված վայրերում տեղադրված հաշվառքի սարքերի ցուցմունքների հիման վրա:

Հոդված 313. Էլեկտրահաղորդիչ գծերով ապրանքների ներմուծման եւ արտահանման ժամանակ մաքսատուրքերի, հարկերի հայտարարագրման եւ վճարման առանձնահատկությունները

1. Հայտարարագրմանն են ենթակա ներմուծված եւ արտահանված էլեկտրաէներգիայի փաստացի քանակը եւ (կամ) սալդո-հոսքը որպես էլեկտրաէներգիայի՝ էլեկտրահաղորդման միջպետական գծերով հակառակ ուղղությամբ հոսքի հանրահաշվային գումար՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար: Ներմուծված եւ արտահանված էլեկտրաէներգիայի քանակը մաքսային հայտարարագրում (հայտարարագրերում) յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար նշվում է որպես էլեկտրաէներգիայի սալդո-հոսք (բոլոր միջպետական էլեկտրահաղորդման գծերով բոլոր դասերի լարման, էլեկտրաէներգիայի՝ հակառակ ուղղությամբ հոսքի հանրահաշվային գումար, ճշգրտված՝ էլեկտրացանցերում առկա էլեկտրական էներգիայի կորստի չափը տեղափոխման ժամանակ) կամ առանձին փաստացի ներմուծված եւ արտահանված էլեկտրաէներգիայի քանակը, ճշգրտված էլեկտրացանցերում առկա էլեկտրական էներգիայի կորստի չափը տեղափոխման ժամանակ:

2. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ պետական քաղաքականության մշակման եւ իրացման ու վառելիքաէներգետիկ համալիրի ոլորտում նորմատիվային-իրավական կարգավորման գործառույթն իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ համաձայնությամբ, սահմանում է տեղեկատվությունների ցուցակ, որոնք ենթակա են մաքսային մարմիններին ներկայացման էլեկտրահաղորդման գծերով էլեկտրաէներգիայի՝ Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխման ժամանակ՝ էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի պայմաններում՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 339-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

3. Ռուսաստանի Դաշնություն էլեկտրահաղորդիչ գծերով ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների մաքսային վճարները կատարվում են սույն Դաշնային օրենքի 2-րդ բաժնով սահմանված կանոններով:

Հոդված 314. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը

1. Խողովակաշարային տրանսպորտով եւ էլեկտրահաղորդիչ գծերով ապրանքները տեղափոխելիս մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու ներկայացնել մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում հետեւյալ դեպքերում՝

1) եթե հայտարարատուն մեկ տարուց պակաս ժամկետում է իրականացնում արտաքին առևտրային գործունեությունը.

2) եթե հայտարարատուն չկատարված պահանջներ ունի մաքսային վճարների կատարման մասով տվյալ պահանջներով սահմանված ժամկետներում.

3) եթե հայտարարատուն մաքսային ոլորտում վարչական իրավախախտումների գործերով չկատարված որոշում ունի:

2. Ապահովման չափը սահմանվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն:

Գլուխ 44. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների ներմուծումը

Հոդված 315 Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների, պահեստային մասերի եւ սարքավորումների ու պաշարի՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծումը եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանումը

1. Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների Ռուսաստանի Դաշնություն ներմուծումը եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանումն իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 48-րդ գլխի համաձայն: Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների կայանման տեւողությունը Ռուսաստանի Դաշնություն ժամանելու վայրերում եւ Ռուսաստանի Դաշնությունից մեկնելու վայրերում օդային եւ երկաթգծի տրանսպորտի հետ մաքսային գործառնություններ անցկացնելու համար չպետք է գերազանցի տվյալ տիպի օդանավի սպասարկման տեխնոլոգիական գրաֆիկայով սահմանված ժամանակը կամ երկաթգծի կայանի աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսով, եթե փոխադրողը կատարել է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ մաքսային գործի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված պայմանները:

2. Այն պահեստամասերը եւ սարքավորումները, որոնք նախատեսված են միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերանորոգման, տեխնիկական սպասարկման կամ շահագործման համար, ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանվում Ռուսաստանի Դաշնությունից Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 349-րդ հոդվածի համաձայն: Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներից հեռացված պահեստամասերը եւ սարքավորումները, ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանվում Ռուսաստանի Դաշնությունից միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի հետ միաժամանակ, որի վրայից դրանք հեռացվել են: Նման պահեստամասերի եւ սարքավորումների, ինչպես նաեւ կատարված վերանորոգման մասին տեղեկատվությունը նշվում է միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագրման մեջ: Այլ դեպքերում փոխանակման արդյունքում միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներից հեռացված պահեստամասերը եւ սարքավորումները ներմուծվում են Ռուսաստանի Դաշնություն՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 349-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ

պարբերության համաձայն, եւ արտահանվում են Ռուսաստանի Դաշնությունից առանց արտահանման մաքսատուրքերի վճարման, որը կիրառելի է վերաարտահանման մաքսային ընթացակարգի նկատմամբ:

3. Տրանսպորտային միջոցի վերանորոգման, տեխնիկական սպասարկման կամ շահագործման համար պահեստամասերի եւ սարքավորումների ժամանակավոր ներմուծման (թույլատրման) եւ ժամանակավոր արտահանման նկատմամբ մաքսային ընթացակարգերն ավարտվում են փոխարինման արդյունքում տրանսպորտային միջոցից հեռացված պահեստամասերը եւ սարքավորումները, որոնք նախկինում ենթարկվել են ժամանակավոր ներմուծման (թույլատրման) եւ ժամանակավոր արտահանման մաքսային ընթացակարգին, համապատասխանաբար Ռուսաստանի Դաշնությունից արտահանելիս եւ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելիս, կամ նշված ապրանքները ենթարկելով մեկ այլ մաքսային ընթացակարգի, որով չի նախատեսվում համապատասխանաբար դրանց արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից կամ ներմուծումը Մաքսային միության տարածք:

4. Տրանսպորտային միջոցների նորմալ շահագործումն ու տեխնիկական սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ պաշարների ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 50-րդ գլխի համաձայն:

Հոդված 316. Պայմանականորեն թողարկված տրանսպորտային միջոցների օգտագործումը՝ որպես միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներ

1. Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 279-րդ հոդվածի 5-րդ կետի եւ 345-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծված տրանսպորտային միջոցների օգտագործումը՝ ժամանակավոր ներմուծման (թույլատրման) մաքսային ընթացակարգի համաձայն, ինչպես նաեւ այն տրանսպորտային միջոցների, որոնք Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, պայմանականորեն են թողարկված, այդ թվում՝ որպես միջազգային փոխադրման տրանսպորտային միջոց՝ ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգի համաձայն Մաքսային միության մաքսային տարածք ներմուծված տրանսպորտային միջոցների՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից դրանց ժամանակավոր արտահանմամբ եւ

Ռուսաստանի Դաշնություն կրկին ներմուծմամբ՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված կարգով:

2. Բեռնման, բեռնաթափման, մշակման ու բեռների պաշտպանության համար կամ ուղեւորների եւ (կամ) բեռի սպասարկման համար նախատեսված հատուկ սարքավորման նկատմամբ ու պահեստամասերի նկատմամբ, որոնք նախատեսված են սույն հոդվածի 1-ին մասում նշված տրանսպորտային միջոցների վերանորոգման, տեխնիկական սպասարկման կամ շահագործման ժամանակ օգտագործման համար, ինչպես նաեւ սույն հոդվածի 1-ին մասում նշված տրանսպորտային միջոցներից անցկացված վերանորոգման շրջանակներում փոխարինման արդյունքում հեռացված պահեստամասերի եւ սարքավորումների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 48-րդ գլխի դրույթներն ու սույն Դաշնային օրենքի 315-րդ հոդվածը:

**Գլուխ 45. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ**

**Հոդված 317. Միջազգային փոստային առաքումներում ապրանքների եւ ֆիզիկական
անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների ներմուծումն ու արտահանումը**

1. Միջազգային փոստային առաքումներում ապրանքների ներմուծումը Ռուսաստանի
Դաշնություն եւ արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից իրականացվում է Մաքսային
միության Մաքսային օրենսգրքի 44-րդ գլխի եւ Մաքսային միության անդամ պետությունների
միջեւ միջազգային պայմանագրերի համաձայն:

2. Միջազգային փոստային առաքումներում փոխանցվող ապրանքների նկատմամբ
մաքսային գործառնություններն իրականացվում են միջազգային փոստային փոխանակման
վայրերում կամ մաքսային մարմնի կողմից որոշված այլ վայրերում: Միջազգային փոստային
փոխանակման վայրերը, որոնք փոստային կապի օբյեկտ են, որոշվում են մաքսային գործի
ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից՝ պետական
քաղաքականության մշակման եւ փոստային կապի ոլորտում նորմատիվաիրավական
կարգավորման գործառույթն իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ
համատեղ:

3. Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների ներմուծումը
Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից իրականացվում է
Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 49-րդ գլխի եւ Մաքսային միության անդամ
պետությունների միջեւ Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց
կողմից ապրանքները տեղափոխելու վերաբերյալ միջազգային պայմանագրերի համաձայն:

4. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, սույն հոդվածի 3-րդ մասում նշված
միջազգային պայմանագրերի համաձայն, իրավասու է սահմանելու լրացուցիչ
սահմանափակումներ՝ ֆիզիկական անձանց կողմից ապրանքների ներմուծման եւ
արտահանման համար:

5. Մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմինը եւ

այլ մաքսային մարմիններ ապահովում են ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխման կանոնների մասին տեղեկատվության մատչելիությունը, այդ թվում՝ տրանսպորտային եւ տուրիստական կազմակերպություններում ռուսերեն եւ օտար լեզուներով կազմված տեղեկատվական թերթիկների տարածման միջոցով, ինչպես նաեւ մաքսային գործառնությունների կատարման վայրերում ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվական ցուցանակների տեղադրման միջոցով:

6. Չուղեկցվող ուղեբեռներում տեղափոխվող կամ փոխադրողի միջոցով առաքվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումը կարող է կատարվել հայտարարատուի ընտրությամբ՝ մաքսային մարմնում, որտեղ գտնվում են այդպիսի ապրանքները կամ որի գործունեության շրջանում (տարածքում) մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է ֆիզիկական անձը՝ անկախ նրանից, թե ուր են առաքվել նման ապրանքները:

7. Ավիափոխադրողի կողմից չուղեկցվող ուղեբեռներում տեղափոխման համար (որի ուղարկման վայրը Ռուսաստանի Դաշնությունն է եւ նշանակման վայրը Մաքսային միության մաքսային տարածքից դուրս գտնվող վայրն է, եւ միջանկյալ վայրէջքը՝ Ռուսաստանի Դաշնությունից մեկնելու վայրը) ընդունված ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները կարող են կատարվել Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված՝ պարզեցված կարգով եւ պայմաններով:

8. Մաքսային մուտքի օրդերի ձեւաթղթերը, որոնց հիման վրա վճարվում են անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը, խիստ հաշվետվության ձեւաթղթեր են:

Հոդված 318. Օտարերկրյա անձանց առանձին տեսակների կողմից ապրանքների ներմուծումն ու արտահանումը

1. Դիվանագիտական, հյուպատոսական եւ օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների, նշված ներկայացուցչությունների եւ կազմակերպությունների անձնակազմերի կողմից ապրանքների, ինչպես նաեւ առավելություններից, արտոնություններից եւ (կամ) անձեռնմխելիությունից

օգտվող օտարերկրյա անձանց առանձին տեսակների կողմից անձնական եւ ընտանեկան օգտագործման համար նախատեսված ապրանքների ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն եւ արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից իրականացվում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 45-րդ գլխի համաձայն:

2. Այն դեպքերում, եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով սույն հոդվածի 1-ին մասում նշված օտարերկրյա անձանց համար նախատեսված են ապրանքների՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծելու եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանելու համար ավելի արտոնյալ կանոններ, քան սահմանված են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 45-րդ գլխում, ապա կիրառվում են Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի կանոնները:

3. Միջազգային, միջպետական եւ միջկառավարական կազմակերպությունների, դրանց կից օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաեւ այդ կազմակերպությունների եւ ներկայացուցչությունների անձնակազմերի ու նրանց ընտանիքների անդամների համար մաքսային արտոնությունները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության համապատասխան միջազգային պայմանագրերով:

4. Պաշտոնական օգտագործման համար դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների, նշված ներկայացուցչությունների եւ կազմակերպությունների անձնակազմերի, հիմնարկների ու կազմակերպությունների (հետագայում՝ Ներկայացուցչություններ) կողմից ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է մաքսային մարմին գրավոր դիմում ներկայացնելու միջոցով, որը կազմված է ազատ ձեւաթղթով երկու օրինակից (հետագայում՝ դիմում), կնքված է Ներկայացուցչության կնիքով եւ ստորագրված է Ներկայացուցչության ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից ու պարունակում է հետեւյալ տեղեկատվությունը.

- 1) մաքսային մարմնի անվանումը,
- 2) ապրանքներն ուղարկողի անվանումը եւ գտնվելու վայրը,
- 3) ապրանքներն ստացողի անվանումը եւ գտնվելու վայրը,
- 4) տրանսպորտային փաստաթղթի համարն ու ամսաթիվը, որի համաձայն, ապրանքը

տեղափոխվում է Մաքսային միության մաքսային սահմանով,

5) ապրանքի անվանումը, որը թույլ է տալիս ճանաչել նրան մաքսային նպատակների համար, ապրանքի քանակը (քաշը, ծավալը եւ այլ քանակական բնութագրեր)՝ նշելով չափման միավորի եւ արժեքի միավորի կրճատ անվանումը (ըստ ապրանքին կից ներկայացված փաստաթղթի):

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված դիմումի հետ միաժամանակ ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը՝

1) տրանսպորտային (փոխադրման) եւ առեւտրային փաստաթղթերը.

2) սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը:

6. Ներկայացուցչության պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքների ուղարկումն (ստացումը) իրականացնող անձը մաքսային մարմին է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաեւ անձի կարգավիճակը հաստատող փաստաթուղթը կամ լիազորագիր (տարեկան կամ միանվագ), որի վրա պետք է դրվի Ներկայացուցչության կնիքի դրոշմվածքը եւ Ներկայացուցչության ղեկավարի կամ դրա համար Ներկայացուցչության կողմից լիազորված պաշտոնատար անձի ստորագրությունը:

Գլուխ 46. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Հոդված 319. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների վերահսկելի մատակարարման ապահովումը

1. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների վերահսկելի մատակարարման ապահովումն օպերատիվ-հետախուզական միջոցառում է, որի ժամանակ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների գիտությամբ եւ վերահսկողությամբ թույլատրվում է ներմուծված ապրանքների ներմուծումը Ռուսաստանի Դաշնություն, արտահանումը Ռուսաստանի Դաշնությունից կամ տեղափոխումը Ռուսաստանի Դաշնության տարածքով: Ներմուծվող եւ արտահանվող ապրանքների վերահսկելի մատակարարում իրականացնելու մասին որոշումը կայացնում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարը (նրան փոխարինող անձը) կամ նշված մարմնի՝ օպերատիվ-հետախուզական աշխատանքները վերահսկող ղեկավարի տեղակալը: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմիններ ապրանքների վերահսկելի մատակարարումն իրականացնում են մաքսային մարմինների հետ համաձայնեցմամբ: Նման համաձայնեցման կարգը որոշվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի եւ գործադիր իշխանության դաշնային մարմնի՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմնի միջեւ համաձայնության միջոցով:

2. Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների վերահսկելի մատակարարում իրականացնելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի կամ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հետ պայմանավորվածության հիման վրա, Ռուսաստանի Դաշնությունում քրեական գործ չի հարուցվում, իսկ ապրանքների վերահսկելի մատակարարումն իրականացնող մարմնի ղեկավարն ընդունված որոշման մասին անհապաղ տեղեկացնում է դատախազին՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 320. Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների առգրավումն ու փոխարինումը վերահսկելի մատակարարում իրականացնելիս

Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող այն ապրանքների նկատմամբ, որոնց ազատ իրացումն արգելվում է կամ որոնց շրջանառությունը թույլատրվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն տրվող հատուկ թույլտվությամբ, վերահսկելի մատակարարում իրականացնելիս այդ ապրանքները կարող են ամբողջությամբ կամ մասամբ առգրավվել կամ փոխարինվել Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով: Մարդկանց առողջության, շրջակա միջավայրի համար մեծ վտանգ ներկայացնող կամ զանգվածային ոչնչացման զենք պատրաստելու համար հիմք հանդիսացող ապրանքները ենթակա են փոխարինման՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով:

Բաժին VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 47. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 321. Մաքսային միության անդամ պետություններից Ռուսաստանի Դաշնություն ապրանքներ ներմուծելու եւ Ռուսաստանի Դաշնությունից այդ պետություններ ապրանքներ արտահանելու ժամանակավոր կանոնները

1. Մաքսային միության անդամ պետությունների տարածքից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների դեպքում ներկրվող ապրանքների համար պետք է վճարվեն ներմուծման մաքսատուրքեր՝ Ռուսաստանի Դաշնությունում գործող դրույքաչափերով, ինչպես նաեւ այդ ապրանքների դեպքում պետք է պահպանվեն Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման դեպքում կիրառվող արգելքներն ու սահմանափակումները, եթե այդ ապրանքները չեն համարվում՝

1) Մաքսային միության մաքսային տարածքի (Մաքսային միության անդամ պետության տարածքից) ծագում ունեցող,

2) Մաքսային միության մաքսային տարածքում ազատ շրջանառության համար բաց թողնված,

3) Մաքսային միության մաքսային տարածքից ծագող կամ Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում ազատ շրջանառության համար բաց թողնված ապրանքներից պատրաստված:

2. Եթե Մաքսային միության անդամ պետության տարածք ապրանքների ներմուծման ժամանակ ներմուծման մաքսատուրքերը վճարվել են այն դրույքաչափերով, որոնք ավելի ցածր են, քան Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող դրույքաչափերը, ապա Ռուսաստանի Դաշնություն այդ ապրանքների ներմուծման դեպքում ներմուծման մաքսատուրքերը կարող են վճարվել այն չափով, որը համապատասխանում է նույնանման ապրանքի ներմուծման դեպքում Ռուսաստանի Դաշնությունում վճարման ենթակա գումարի եւ Մաքսային միության անդամ պետության տարածք ներմուծման ժամանակ վճարվող գումարի միջեւ ներմուծման

մաքսատուրքերի գումարների տարբերությանը, եթե շահագրգիռ անձը ներմուծման մաքսատուրքի վճարման փաստը եւ վճարված գումարի չափը հաստատող փաստաթղթերը ներկայացնի մաքսային մարմին:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված չափանիշներին ապրանքների կարգավիճակի համապատասխանությունը հաստատելու նպատակով մաքսային մարմիններն իրականացնում են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների մաքսային հսկողություն: Նշված նպատակներով Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման եւ (կամ) ապրանքներն ստացողների կողմից այդ ապրանքները փոխադրողներից ստանալու ժամանակ մաքսային մարմինները նաեւ իրավասու են անմիջապես պահանջելու առանձին ապրանքների՝ Մաքսային միության անդամ պետություններից ծագելու կամ Մաքսային միության անդամ պետությունների տարածքներով ազատ շրջանառության համար դրանց բաց թողնված լինելու փաստը հաստատող փաստաթղթեր: Փոխադրողը Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմնի պաշտոնատար անձի պահանջով պարտավոր է մաքսային հսկողության իրականացման վայրում ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

4. Մաքսային միության անդամ պետությունների տարածքներից Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու կարգը եւ վայրերը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

5. Այն դեպքերում, երբ մաքսային մարմինների կողմից հայտնաբերված փաստերը վկայում են այն մասին, որ ապրանքները չեն համապատասխանում սույն հոդվածի 1-ին կետում նշված չափանիշներին, մաքսային մարմիններն իրավասու են ստուգելու այն փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ապրանքների ծագման երկիրը որոշելու եւ արգելքների ու սահմանափակումների պահպանումը հաստատելու համար, ինչպես նաեւ նրանք իրավասու են ուսումնասիրելու ապրանքները եւ կատարելու դրանց փորձաքննություն (ուսումնասիրություն)՝ սույն Դաշնային օրենքով նախատեսված ձեւերով եւ կարգով:

6. Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանն ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավագրության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքներում եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության սահմաններում ապրանքների օգտագործման, ինչպես նաեւ ապրանքների

կարգավիճակի վերաբերյալ ստուգումներ իրականացնելու ընթացքում այդ ապրանքները, անհրաժեշտության դեպքում, կարող են տեղավորվել ժամանակավոր պահպանման համար նախատեսված պահեստներում կամ սահմանափակվել այլ միջոցներով, որոնք նախատեսված են սույն Դաշնային օրենքով: Մաքսային մարմիններն իրավասու են պահանջել ներկայացնելու նշված ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի վճարման երաշխիքներ:

7. Ստուգում իրականացնելու կարգը եւ այն անցկացնելու ընթացքում ապրանքների օգտագործման սահմանափակման միջոցները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից:

8. Այն դեպքերում, երբ Մաքսային միության ապրանքների համար Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսվում է, որ այդ ապրանքները Ռուսաստանի Դաշնությունից Մաքսային միության այլ անդամ պետություններ արտահանելու համար պետք է վճարվեն արտահանման մաքսատուրքեր, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանվող այլ դեպքերում, այդ ապրանքների նկատմամբ Ռուսաստանի Դաշնությունից Մաքսային միության այլ անդամ պետություններ արտահանելու ժամանակ կիրառվում է մաքսային ձեւակերպումների իրականացման, մաքսային հայտարարագրման, մաքսային ընթացակարգով ձեւակերպման, մաքսային ընթացակարգի եզրափակման, ապրանքների բացթողման, մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունների առաջացման ու դադարեցման, մաքսատուրքերի հաշվարկման (ներառյալ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով բազայի (հարկման բազա) որոշումը, հայտարարումն ու վերահսկումը), հաշվեգրման, ապահովման, վերադարձման (հաշվանցման), մաքսային վճարների բռնագանձման, մաքսային հսկողության իրականացման այն պահանջը, կարգը եւ պայմանները, որոնք սահմանված են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով, այնպես, ինչպես դա կկատարվեր, եթե նշված ապրանքները Ռուսաստանի Դաշնությունից արտահանվեին Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս:

9. Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից կարող են սահմանվել լրացուցիչ պայմաններ եւ կարգ Ռուսաստանի Դաշնության տարածքում այն ավտոմեքենաների օգտագործման եւ (կամ) տնօրինման, ինչպես նաեւ գրանցման համար, որոնք ֆիզիկական

անձանց կողմից երրորդ երկրներից ներմուծվել են Բելառուսի Հանրապետության կամ Ղազախստանի Հանրապետության տարածք 2010 թվականի հունվարի 1-ից հետո եւ որոնց նկատմամբ կիրառվում են «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար նախատեսվող ապրանքների տեղափոխման կարգի եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային ձեւակերպումների իրականացման մասին» համաձայնագրի 5-րդ հավելվածում սահմանված մաքսատուրքերից, հարկերից բացի այլ մաքսատուրքեր, հարկեր՝ մինչեւ Մաքսային միության ապրանքների կարգավիճակ ստանալը: Ընդ որում՝ ավտոմեքենաներ ասելով հասկացվում են հիմնականում մարդկանց տեղափոխման համար նախատեսված եւ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8703 ապրանքային դիրքում դասակարգված մարդատար ավտոմեքենաները եւ այլ՝ շարժիչով տրանսպորտային միջոցները, բացառությամբ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8703 ապրանքային դիրքում դասակարգված ընդհանուր օգտագործման ճանապարհներով շարժվելու համար չնախատեսված կվադրոցիկների, ձնագնացների եւ այլ մարդատար տրանսպորտային միջոցների:

Հոդված 322. Անցումային դրույթներ

1. Մինչեւ Մաքսային միության Մաքսային օրենսգրքով նախատեսվող՝ Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերի եւ Մաքսային միության հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ մտնելը՝ կիրառվում են Ռուսաստանի Դաշնության այն դաշնային օրենքները եւ այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են համապատասխան իրավահարաբերությունները մաքսային գործի բնագավառում:

2. Եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով մաքսային գործի բնագավառում սահմանված են սույն Դաշնային օրենքով նախատեսված կանոններից բացի այլ կանոններ, ապա կիրառվում են Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրի այն կանոնները, որոնք սահմանվել են՝ նախքան Մաքսային միության Մաքսային օրենսդրության մակարդակով համապատասխան իրավահարաբերությունների հաստատումը, դադարեցումը (այդ թվում՝ չեղյալ հայտարարումը) կամ միջազգային պայմանագրի գործողության կասեցումը:

3. Ռուսաստանի Դաշնության նախագահի, Ռուսաստանի Դաշնության Կառավարության եւ գործադիր իշխանությունների դաշնային մարմինների կողմից ընդունված նորմատիվ

իրավական այն ակտերը, որոնք ընդունվել են մինչև սույն Դաշնային օրենքն ուժի մեջ մտնելը, գործում են մասամբ՝ չհակասելով մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը, մինչ այն պահը, երբ դրանք կճանաչվեն ուժը կորցրած կամ կընդունվեն համապատասխան նորմատիվ իրավական ակտեր: Նշված նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեցվեն սույն Դաշնային օրենքի դրույթներին մինչև 2011 թվականի հունվարի 1-ը:

4. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը, հայտարարատուի ընտրությամբ, մաքսային հայտարարագրումն իրականացվում է գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով՝ մաքսային հայտարարագրի միջոցով:

5. Մինչև սույն Դաշնային օրենքն ուժի մեջ մտնելը՝ Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող ապրանքների կարգավիճակը մաքսային նպատակների համար, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնություն ապրանքների ներմուծման կամ Ռուսաստանի Դաշնությունից ապրանքների արտահանման, փոխադրման եւ պահեստավորման, մաքսային ձեւակերպումներ իրականացնելու եւ մաքսատուրքերի, հարկերի վճարման հետ կապված՝ անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 8-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

6. Մաքսային բրոքերը (ներկայացուցիչը), մաքսային փոխադրողը, ժամանակավոր պահպանման համար նախատեսված պահեստի տիրապետողը, մաքսային պահեստի տիրապետողը, անմաքս առետրի խանութի տիրապետողը, որոնք մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց համապատասխան ռեեստրում գրանցվելու համար դիմում են ներկայացրել, մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը իրավունք ունեն, մինչև այդ անձանց՝ համապատասխան ռեեստրում գրանցվելը, շարունակելու իրենց գործունեության իրականացումը որպես մաքսային բրոքեր (ներկայացուցիչ), մաքսային փոխադրող, ժամանակավոր պահպանման համար նախատեսված պահեստի տիրապետող, մաքսային պահեստի տիրապետող, անմաքս առետրի խանութի տիրապետող՝ սույն Դաշնային օրենքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դրույթները, կամ մինչև նշված անձանց համապատասխան ռեեստրում գրանցումը մերժելը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված անձանց համար, մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը համապատասխան ռեեստրում գրանցելու մասին որոշումներ կայացնելու

դեպքում, չեն կիրառվում սույն Դաշնային օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 5-րդ մասով, 76-րդ հոդվածի 4-րդ մասով, 82-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանները, նրանց՝ համապատասխանաբար մաքսային ներկայացուցիչների, մաքսային փոխադրողների, ժամանակավոր պահպանման համար նախատեսված պահեստի տիրապետողների, մաքսային պահեստի տիրապետողների, անմաքս առետրի խանութի տիրապետողների ռեեստրներում գրանցվելու ժամանակ:

8. Եթե մինչև 2010 թվականի դեկտեմբերի 1-ն ուժի մեջ չի մտել սույն Դաշնային օրենքի 54-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն ընդունված նորմատիվ իրավական ակտը, որով սահմանվում է մաքսային մարմինների կողմից իրականացվող գործողությունների կարգը՝ լիազորված տնտեսական օպերատորների, անձանց ռեեստրում գրանցման ժամանակ, որոնց նկատմամբ, Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի համաձայն, սահմանվում են մաքսային ձեւակերպման հատուկ պարզեցված ընթացակարգեր, եւ որոնք՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը, մաքսային գործի ոլորտում իրավասություն ունեցող գործադիր իշխանության դաշնային մարմինն գրավոր տեղեկացրել են լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցված լինելու իրենց համաձայնության մասին՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով նախատեսվող կարգով ու պայմաններով, կարող են նշված նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 90 օրյա ժամկետում օգտվել Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի համաձայն՝ լիազորված տնտեսական օպերատորին տրամադրվող հատուկ պարզեցված ընթացակարգերից:

9. Եթե մինչև 2010 թվականի դեկտեմբերի 1-ը ուժի մեջ չի մտել սույն Դաշնային օրենքի 54-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն ընդունված նորմատիվ իրավական ակտը, որով սահմանվում է լիազորված տնտեսական օպերատորների, անձանց ռեեստրում գրանցման ժամանակ մաքսային մարմինների կողմից իրականացվող գործողությունների կարգը, որոնց նկատմամբ, Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի համաձայն, սահմանվում են մաքսային ձեւակերպման հատուկ պարզեցված ընթացակարգեր, եւ որոնք՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը, մաքսային գործի ոլորտում իրավասություն ունեցող գործադիր իշխանության դաշնային մարմինն գրավոր տեղեկացրել են լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցված լինելու իրենց համաձայնության մասին՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Դաշնային օրենքով նախատեսվող կարգով ու

պայմաններով, կարող են նշված նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 90 օրյա ժամկետում օգտվել լիազորված տնտեսական օպերատորին տրամադրվող հատուկ պարզեցված ընթացակարգերից՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի:

10. Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, 2012 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ, ապահովում է սույն հոդվածի 8-րդ եւ 9-րդ մասերում նշված նորմատիվ իրավական ակտերի ընդունումը :

11. Մինչեւ 2011 թվականի հոկտեմբերի 1-ը մաքսային ձեւակերպումների համար սահմանված մաքսավճարները վճարվում են մաքսային ձեւակերպման համար մաքսավճարների գանձման նպատակով սահմանված դրույքաչափերով՝ Ռուսաստանի Դաշնության մաքսային օրենսդրությանը համապատասխան:

12. Բանկային երաշխիքները, ապրանքների ու այլ գույքի գրավադրման մասին պայմանագրերը եւ երաշխավորության պայմանագրերը, որոնք ընդունվել են որպես մաքսային վճարների ապահովման գրավական՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի, կիրառվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը հաստատելու համար՝ համապատասխան պարտավորություններով, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ եւ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ՝ մինչեւ դրանց գործողության ժամկետի լրանալը:

13. Մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը Ռուսաստանի Դաշնությունն ներմուծվող եւ Ռուսաստանի Դաշնությունից արտահանվող էլեկտրաէներգիայի հայտարարագրումն իրականացվում է մաքսային հայտարարագիր ներկայացնելու միջոցով՝ մինչեւ ապրանքների փաստացի մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը:

14. Սույն Դաշնային օրենքի 279-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները կիրառվում են Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից ապրանքների ցանկը կազմելու օրվանից, որը նշված է սույն Դաշնային օրենքի 279-րդ հոդվածի 4-րդ մասում:

15. Ուղեւորների եւ (կամ) Մաքսային միության մաքսային տարածքում բեռնված եւ այդ տարածքի սահմաններից դուրս բեռնաթափման ենթակա կամ Մաքսային միության մաքսային

տարածքի սահմաններից դուրս բեռնված եւ այդ տարածքում բեռնաթափման ենթակա ապրանքների փոխադրումն իրականացնելու համար օգտագործվող օդանավերի տեղափոխումը Մաքսային միության մաքսային սահմանով կարող է իրականացվել տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգի կիրառմամբ՝ համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի: Սույն մասի դրույթները կիրառվում են մինչեւ 2011 թվականի դեկտեմբերի 31-ը:

16. Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավագործության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքներ արտահանվող Մաքսային միության ապրանքների նկատմամբ իրականացվող մաքսային ձեւակերպումներն իրականացվում են Ռուսաստանի Դաշնության տարածքից արտահանելու վայրերում, իսկ այդ ապրանքները նշված տարածքներից ներմուծելու դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության տարածք ներմուծելու վայրերում:

17. Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավագործության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքների եւ Ռուսաստանի Դաշնության տարածքների միջեւ տեղափոխվող Մաքսային միության ապրանքները չեն ենթարկվում մաքսային հայտարարագրման եւ տեղափոխվում են առանց մաքսատուրքերի ու հարկերի վճարման, ինչպես նաեւ առանց ենթարկվելու արգելքների ու սահմանափակումների:

18. Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավագործության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքների եւ Ռուսաստանի Դաշնության տարածքների միջեւ տեղափոխվող Մաքսային միության ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունն իրականացվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից սահմանված կարգով:

19. Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Ռուսաստանի Դաշնության իրավագործության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների ու կառույցների տարածքների եւ Ռուսաստանի Դաշնության տարածքների միջեւ տեղափոխվող Մաքսային միության ապրանքների

նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք պարտավոր են, մաքսային մարմինների կողմից պահանջի դեպքում, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

20. Հաստատել, որ բռնագանձման համար անհուսալի է ճանաչվում 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին» 2001 թվականի օգոստոսի 8-ի թիվ 129-ՂՕ դաշնային օրենքով սահմանված՝ չգործող իրավաբանական անձանց հատկանիշներ ունեցող եւ անվճարունակության (սնանկության) գործում կիրառվող ընթացակարգեր չանցնող կազմակերպությունների, ինչպես նաեւ այն կազմակերպությունների մաքսային վճարների (ապառքների) տուժանքների, տոկոսների պարտքի վճարումը, որոնց նկատմամբ դատական ակտերի հարկադիր կատարողը որոշում է կայացրել մաքսային վճարների (ապառքների) տուժանքների, տոկոսների վճարման մասով առկա պարտքերի բռնագանձման անհնարինության հետ կապված կատարողական վարույթի դադարեցման մասին: Սույն հոդվածում նշված մաքսատուրքերի (ապառքների), տուգանքների, տոկոսների վճարման պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման վերաբերյալ որոշումը կայացնում է մաքսային մարմինը, որի նկատմամբ մաքսատուրքերի (ապառքների), տուգանքների, տոկոսների վճարման պարտք կա կամ որպես պարտք է հաշվարկվում: Փաստաթղթերի ցանկը, որոնց առկայության դեպքում որոշում է կայացվում սույն հոդվածում նշված մաքսատուրքերի (ապառքների), տուգանքների, տոկոսների վճարման պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման վերաբերյալ, ինչպես նաեւ դուրսգրման կարգը հաստատվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

Հոդված 323. Անցումային դրույթներ՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց նյութատեխնիկական ապահովման եւ սոցիալական երաշխիքների վերաբերյալ

323-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները կիրառվում են՝ նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու օրը, որով սահմանվում է Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական դաշնային ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ՂՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ՂՕ դաշնային

օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն փաստաթղթի 323-րդ հոդվածը):

1. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց տրվում է համազգեստ: Նշված հագուստի ձեւը, դրա տրամադրման կարգը, տարբերանշաններն ու մաքսային մարմինների պաշտոնատար անձանց հանդերձանք մատակարարելու կարգը սահմանում է Ռուսաստանի Դաշնության կառավարությունը: Համազգեստ կրելու կարգով սահմանվում է մաքսային գործի բնագավառում լիազորված՝ գործադիր իշխանության դաշնային մարմինը:

2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ԴՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ սույն փաստաթղթի 323-րդ հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների աշխատակիցների նկատմամբ՝ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում մաքսային մարմնի պաշտոնատար անձի զոհվելու դեպքում՝ մահացած մաքսային ծառայողի ընտանիքին եւ նրա խնամքի ներքո գտնվող անձանց վճարվում է նրա տարեկան դրամական վաստակի 10-ապատիկի չափով միանվագ գումար, որն ըստ նրա կողմից մաքսային մարմնում զբաղեցրած վերջին պաշտոնի է հաշվարկվում: Մաքսային մարմնի մահացած պաշտոնատար անձի խնամքի ներքո գտնվող անչափահաս անձանց լրացուցիչ վճարվում է ամսական նպաստ՝ մահացածի ամսական դրամական վաստակի չափով, որը հաշվարկվում է որպես մահացածի տարեկան դրամական վաստակի մեկ տասներկուերորդ մասը (այսուհետ՝ ամսական դրամական վաստակ)՝ ըստ նրա կողմից մաքսային մարմնում զբաղեցրած վերջին պաշտոնի, մինչեւ նրա խնամքի ներքո գտնվող անձանց չափահաս դառնալը կամ եկամտի անկախ աղբյուրի ի հայտ գալը, իսկ մասնագիտական ուսումնական հաստատություններում եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսուցմամբ սովորող ուսանողների դեպքում՝ մինչեւ ուսման ավարտը:

(2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 185-ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ՂՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ սույն փաստաթղթի 323-րդ հոդվածի 3-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների աշխատակիցների նկատմամբ՝ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ մարմնական վնասվածք ստանալու դեպքում, որը բացառում է հետագայում ծառայողական պարտականություններ կատարելու հնարավորությունը, նշված անձին վճարվում է նրա տարեկան դրամական վաստակի 5-ապատիկի չափով միանվագ գումար, որը հաշվարկվում է ըստ նրա կողմից մաքսային մարմնում զբաղեցրած վերջին պաշտոնի, ինչպես նաև կենսաթոշակ 10 տարվա համար՝ նրա զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած ամսական դրամական վաստակի եւ նշանակված կենսաթոշակի չափերի միջև տարբերության չափով: Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից այլ մարմնական վնասվածք ստանալու դեպքում նրան վճարվում է նրա ամսական դրամական վաստակի հնգապատիկի չափով միանվագ գումար:

2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ՂՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ սույն փաստաթղթի 323-րդ հոդվածի 4-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների աշխատակիցների նկատմամբ՝ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

4. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ծառայողական պարտականությունների իրականացման ընթացքում մաքսային ծառայողին կամ նրա մոտ բարեկամներին պատկանող գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ լրիվ ծավալով:

2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ՂՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ սույն փաստաթղթի 323-րդ հոդվածի 5-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների

աշխատակիցների նկատմամբ՝ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

5. Սույն հոդվածում նշված գումարների վճարումն ու գույքին հասցված վնասի հատուցումը իրականացվում են դաշնային բյուջեյի միջոցների հաշվին՝ հետագայում այդ գումարները մեղավոր անձանցից գանձելու պայմանով:

323-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու օրը, որով սահմանվում է Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական դաշնային ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն փաստաթղթի 323-րդ հոդվածը):

6. Սույն հոդվածում նշված գումարների վճարման մասին որոշումը, ըստ տուժածի ծառայության վայրի, կայացնում է մաքսային մարմնի ղեկավարը՝ դատավորների, քննչական մարմինների եւ նախաքննություն իրականացնող մարմինների համապատասխան կարծիքների, որոշումների, դատավճիռների եւ վճիռների հիման վրա:

(6-րդ մասը՝ 2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

323-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու օրը, որով սահմանվում է Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական դաշնային ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն փաստաթղթի 323-րդ հոդվածը):

7. Գույքին պատճառված վնասի հատուցումն իրականացվում է դատարանի որոշմամբ (դատավճռով):

2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ՂՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ սույն փաստաթղթի 323-րդ հոդվածի 8-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների աշխատակիցների նկատմամբ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

8. Սույն հոդվածում նշված գումարների չափը հաշվարկելու համար օգտագործվող՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի տարեկան դրամական վաստակը ներառում է դրամական վճարների բոլոր այն տեսակները, որոնք նշված անձը պետք է ստանար իր մահվան կամ իր առողջությանը վնաս հասցվելու տարվա ընթացքում:

2012 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 283-ՂՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ սույն փաստաթղթի 323-րդ հոդվածի 9-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների աշխատակիցների նկատմամբ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

9. Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից սահմանված կարգով ինդեքսավորվում են մաքսային մարմնի՝ մահացած պաշտոնատար անձի խնամքի ներքո գտնվող անչափահաս անձանց վճարվող ամսական գումարի եւ մաքսային մարմնի պաշտոնատար անձին՝ նրա զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած ամսական դրամական վաստակի եւ նշանակված կենսաթոշակի չափերի միջեւ տարբերության չափով վճարվող գումարի չափը, որը նշված անձին վճարվում է մարմնական այնպիսի վնասվածք ստանալու առնչությամբ, որը բացառում է հետագայում ծառայողական պարտականություններ կատարելու հնարավորությունը:

323-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու օրը, որով սահմանվում է Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական

դաշնային ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն փաստաթղթի 323-րդ հոդվածը):

10. Գույքային վնասի փոխհատուցման նպաստների եւ գումարների վճարումն իրականացվում է այն մաքսային մարմնի կողմից, որում աշխատում էր տուժածը նախքան մահը վրա հասնելու, մարմնական վնասվածք ստանալու կամ գույքին վնաս հասցվելու պահը, իսկ այդ մաքսային մարմնի վերակազմավորվելու կամ լուծարվելու դեպքում՝ դրա իրավահաջորդի կամ վերադաս մաքսային մարմնի կողմից:

2012 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 283-ԴՕ դաշնային օրենքով սահմանվում է, որ տվյալ փաստաթղթի 323-րդ հոդվածի 11-րդ մասը չի կիրառվում մաքսային մարմինների աշխատակիցների նկատմամբ նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:

11. Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ մաքսային մարմնի հանգուցյալ պաշտոնատար անձի խնամքի տակ գտնվող անձինք են համարվում նրա ընտանիքի անդամները եւ այլ անձինք, որոնք գտնվել են նրա լրիվ հոգածության ներքո, կամ նրանից ստացել են այնպիսի օգնություն, որը նրանց գոյատեւման միջոցների մշտական եւ հիմնական աղբյուրն էր:

323-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

12. Սույն հոդվածում նշված գույքային վնասի փոխհատուցման գումարները եւ նպաստները վճարելու կարգը սահմանվում է մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից:

323-րդ հոդվածի 13-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

13. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք դաշնային բյուջեի միջոցների հաշվին ենթակա են պարտադիր պետական անձնական ապահովագրության: Պարտադիր պետական անձնական ապահովագրության օբյեկտները մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կյանքն ու առողջությունն են:

323-րդ հոդվածի 14-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքը ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

14. Պարտադիր պետական անձնական ապահովագրության պայմանագրով ապահովագրության պատահարներ են համարվում՝

1) մաքսային մարմնի պաշտոնատար անձի (այսուհետ՝ ապահովագրվածի) մահը, որը վրա է հասել մաքսային մարմիններում իր ծառայության ժամանակ կամ իր ծառայողական

պարտականությունները կատարելիս վիրավորվելու (կոնտուզիայի ենթարկվելու), այլ մարմնական վնասվածքներ ստանալու եւ հիվանդության հետեւանքով մաքսային մարմիններում ծառայությունից հեռացվելուց հետո մինչեւ մեկ տարին լրանալը,

2) իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված ապահովագրվածին հաշմանդամության խմբի սահմանումը՝ մաքսային մարմիններում ծառայելու ժամանակահատվածում կամ մաքսային մարմիններում ծառայությունից հեռացվելուց հետո մինչեւ մեկ տարին լրանալը,

3) մաքսային մարմիններում իր ծառայողական պարտականությունները կատարելու առնչությամբ ապահովագրվածի կողմից ծանր կամ պակաս ծանր մարմնական վնասվածք ստանալը:

323 հոդվածի 15-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքը ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

15. Ապահովագրական գումարները վճարվում են ապահովագրական պատահարները վրա հասնելիս, հետեւյալ չափերով՝

1) մաքսային մարմիններում ծառայելու ժամանակահատվածում կամ մաքսային մարմիններում իր ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում վիրավորվելու (կոնտուզիայի ենթարկվելու), այլ մարմնական վնասվածքներ ստանալու եւ հիվանդության հետեւանքով ծառայությունից հեռացվելուց հետո մինչեւ մեկ տարին լրանալը՝ նրա ժառանգներին (ժառանգության իրավունքի մասին վկայագիր ներկայացնելիս)՝ տարեկան դրամական օգնության 12,5-պատիկի չափով,

2) մաքսային մարմիններում ծառայելու ժամանակահատվածում կամ մաքսային մարմիններում ծառայությունից հեռացվելուց հետո մինչեւ մեկ տարին լրանալը իր

ծառայողական պարտականությունները կատարելու առնչությամբ ապահովագրվածին հաշմանդամության խումբ սահմանելիս.

ա) I խմբի հաշմանդամին՝ տարեկան դրամական օգնության 7.5-պատիկի չափով,

բ) II խմբի հաշմանդամին՝ տարեկան դրամական օգնության 5-պատիկի չափով,

գ) III խմբի հաշմանդամին՝ տարեկան դրամական օգնության 2.5-պատիկի չափով,

3) մաքսային մարմիններում իր ծառայողական պարտականությունները կատարելիս ապահովագրվածի կողմից ծանր մարմնական վնասվածք ստանալու դեպքում՝ տարեկան դրամական օգնության չափով, իսկ պակաս ծանր մարմնական վնասվածք ստանալու դեպքում՝ կիսամյակային դրամական օգնության չափով:

323-րդ հոդվածի 16-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

16. Ապահովագրության տվյալ տեսակի ապահովագրական գծով գումարը վճարվում է՝ անկախ այլ տեսակի ապահովագրությունների գծով վճարվող գումարներից եւ վնասի փոխհատուցման վճարներից:

323-րդ հոդվածի 17-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

17. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի տարեկան դրամական օգնությունը, որն օգտագործվում է ապահովագրական վճարները հաշվարկելու համար, սահմանվում է ըստ այդ պաշտոնատար անձի կողմից մաքսային մարմնում ստանձնած վերջին պաշտոնի եւ ներառում է դրամական վճարների այն բոլոր տեսակները, որոնք նշված անձը պետք է ստանար ապահովագրական պատահարը վրա հասնելու տարվա ընթացքում:

323-րդ հոդվածի 18-րդ մասի դրույթները կիրառվում են նախքան այն դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որով սահմանվում են Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգն ու պայմանները եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ ու 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարումը (սույն Փաստաթղթի 323-րդ հոդվածը):

18. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց պարտադիր պետական անձնական ապահովագրության այլ պայմաններ եւ դրանց իրականացման կարգը սահմանվում են մաքսային գործի ոլորտում լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի (ապահովագրվածը) եւ ապահովագրական կազմակերպության (ապահովագրողի) միջեւ կնքված պայմանագրով: Նշված պայմանագրի մեջ ներառվում են դրույթներ ապահովագրական վճարների չափերի, պայմանագրի գործողության ժամկետի, ապահովագնի (ապահովագրավճարի) չափերի, վճարման ժամկետի եւ կարգի, ապահովագրվածի ու ապահովագրողի իրավունքների, պարտավորությունների եւ պատասխանատվությունների մասին:

19. Սույն հոդվածի 1-18-րդ մասերի դրույթները կիրառվում են նախքան Ռուսաստանի Դաշնությունում որպես պետական ծառայության տեսակ իրավապահ ծառայություն անցնելու կարգը եւ պայմանները սահմանող դաշնային օրենքն ուժի մեջ մտնելը եւ 1997 թվականի հուլիսի 21-ի թիվ 114-ԴՕ եւ «Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքացիական ծառայության մասին» 2004 թվականի հուլիսի 27-ի թիվ 79-ԴՕ դաշնային օրենքներում

համապատասխան փոփոխությունների կատարումը:

Հոդված 324. Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերը (օրենսդրական ակտերի առանձին դրույթները) ուժը կորցրած ճանաչելը

1. Սույն Դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել՝

1) Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի 1-357.9 հոդվածները, 357.10 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը, 358-439-րդ հոդվածները (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2003 թվական, թիվ 22, էջ 2066, 2004 թվական, թիվ 46, էջ 4494, 2009 թվական, թիվ 30, էջ 3733),

2) «Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու եւ պետական կառավարման բարեփոխումների գծով միջոցառումներ իրականացնելու առնչությամբ Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» 2004 թվականի հունիսի 29-ի թիվ 58-ԴՕ դաշնային օրենքի 19-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2004 թվական, թիվ 27, էջ 2711),

3) «Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում եւ Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2004 թվականի օգոստոսի 20-ի թիվ 118-ԴՕ դաշնային օրենքի 2-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2004 թվական, թիվ 34, էջ 3533),

4) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2004 թվականի նոյեմբերի 11-ի, թիվ 139-ԴՕ դաշնային օրենքի 1-ին հոդվածի 1-7-րդ կետերի, երրորդից-վաթսունվեցերորդ պարբերությունները եւ 8-րդ կետի յոթանասունից-յոթանասունյոթերորդ պարբերությունը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2004 թվական, թիվ 46, էջ 4494),

5) «Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխությունների կատարելու մասին» 2005 թվականի հուլիսի 18-ի թիվ 90-ԴՕ դաշնային օրենքի 9-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2005 թվական, թիվ 30, էջ 3101),

6) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի 147-րդ եւ 388-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի, դեկտեմբերի 31-ի թիվ 204-ԴՕ դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2006 թվական, թիվ 1, էջ 15),

7) «Կալինինգրադի մարզում հատուկ տնտեսական գոտու մասին եւ Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2006 թվականի հունվարի 10-ի թիվ 16-ԴՕ դաշնային օրենքի 26-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2006 թվական, թիվ 3, էջ 280),

8) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2006 թվականի փետրվարի 18-ի թիվ 26-ԴՕ դաշնային օրենքի 1-ին հոդվածը եւ «Ապրանքների ներմուծման ժամանակ կիրառվող հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցների մասին» դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2006 թվական, թիվ 8, էջ 854),

9) «Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի անցակետերում պետական հսկողության համակարգի բարելավման առնչությամբ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2006 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 266-ԴՕ դաշնային օրենքի 11-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2007 թվական, թիվ 1, էջ 29),

10) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի 177-րդ հոդվածում փոփոխությունների կատարելու մասին» 2007 թվականի, հունիսի 6-ի թիվ 88-ԴՕ դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2007 թվական, թիվ 24, էջ 2831),

11) ««Ռուսաստանի Դաշնության հատուկ տնտեսական գոտիների մասին» դաշնային օրենքում եւ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 240-ԴՕ դաշնային օրենքի 5-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2007 թվական, թիվ 45, էջ 5417),

12) ««Ձկնորսության եւ ջրային կենսաբանական ռեսուրսների մասին» դաշնային օրենքում

եւ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 333-ԴՕ դաշնային օրենքի 12-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2007 թվական, թիվ 50, էջ 6246),

13) «Մաքսային գործի ոլորտում պետական կառավարման համակարգի բարելավման առնչությամբ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2008 թվականի հունիսի 26-ի թիվ 103-ԴՕ դաշնային օրենքի 7-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2008 թվական, թիվ 26, էջ 3022),

14) ««Ձկնորսության եւ ջրային կենսաբանական ռեսուրսների մասին» դաշնային օրենքում եւ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2008 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 250-ԴՕ դաշնային օրենքի 18-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2008 թվական, թիվ 49, էջ 5748),

15) «Ռուսաստանի Դաշնության Հարկային օրենսգրքի երկրորդ մասում եւ ձկնային տնտեսության համալիրի հարկման արդյունավետությունը բարձրացնելու մասով Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2008 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 314-ԴՕ դաշնային օրենքի 3-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 1, էջ 22),

16) «Ռուսաստանի Դաշնության Բյուջեի օրենսգրքում եւ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի ապրիլի 9-ի թիվ 58-ԴՕ դաշնային օրենքի 2-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 15, էջ 1780),

17) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի, հուլիսի 24-ի թիվ 207-ԴՕ դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 30, էջ 3733),

18) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի 69-րդ եւ 119-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի, հոկտեմբերի 13-ի թիվ 231-ԴՕ

դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 42, էջ 4859),

19) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի 138-րդ եւ 325-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 232-ԴՕ դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 42, էջ 4860),

20) «Քաղաքացիների առողջության պահպանման վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության Օրենսդրական հիմունքներում եւ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 267-ԴՕ դաշնային օրենքի 14-րդ հոդվածը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 48, էջ 5717),

«Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքի 334-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 290-ԴՕ դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2009 թվական, թիվ 48, էջ 5740):

2. 2011 թվականի հոկտեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել՝

1) Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2003 թվական, թիվ 22, էջ 2066),

2) «Ռուսաստանի Դաշնության Մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2004 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 139-ԴՕ դաշնային օրենքը (Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների ժողովածու, 2004 թվական, թիվ 46, էջ 4494):

Հոդված 325. Սույն Դաշնային օրենքն ուժի մեջ մտնելու կարգը

1. Սույն Դաշնային օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման ամսաթվից սկսած մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ այն դրույթների, որոնց համար սույն հոդվածով սահմանվում են ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ:

2. Սույն Դաշնային օրենքի 130-րդ հոդվածի 1-4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2011 թվականի հոկտեմբերի 1-ից:

3. Սույն Դաշնային օրենքի 189-րդ, 190-րդ հոդվածները եւ 191-րդ հոդվածի 2-10-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

(2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 409-ԴՕ դաշնային օրենքի խմբագրությամբ)

4. Սույն Դաշնային օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթների գործողությունը տարածվում է 2010 թվականի հուլիսի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Ռուսաստանի Դաշնության Նախագահ

Դ. ՄԵԴՎԵԴԵՎ
Մոսկվա, Կրեմլ
2010 թվականի նոյեմբերի 27
թիվ 311-ԴՕ